

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ Ա Ն Բ Ե Ր  
Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

13

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԾՐԵՎԱՆ

1980

Խ մ ք ա գ ր ա կ ա ն մ ա ր մ ի ն

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ (գլխավոր խմբագիր), Բ. ԶՈՒԳԱՍՉՅԱՆ, Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ,  
Ք. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Հ. ՓԱՓԱՉՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ  
(պատասխանատու ֆաբրիկա)



Բ  $\frac{5000000000}{703 (02) - 80}$  91-80

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980

Հ Ո Ռ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԼԵՎՈՆ ԽԱԶԻԿՅԱՆ

## ՀԱՅԵՐԸ ՀԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ՄՈՍԿՎԱ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ

Մոսկվայի մասին հնագույն գրավոր տեղեկությունը պահպանվել է 1147 թ., սակայն հնագիտական նյութերի հիման վրա ոմանք հանգել են այն եզրակացության, որ տակավին X—XI դդ. հին Մոսկվայի տարածքի վրա գոյություն է ունեցել առևտրա-արհեստագործական մի բնակավայր, որը տընտեսական սերտ կապերի մեջ է եղել եվրոպական երկրների (հատկապես՝ Գերմանիայի), Միջին Ասիայի և Հայաստանի հետ<sup>1</sup>։

Մոսկվայի բարգավաճումը կատարվում է շատ արագ։ Շուտով այն դառնում է Վլադիմիրո-Սուզդալյան Ռուսիայի նշանավոր քաղաքներից մեկը։ XIII դ. սկզբներին ստեղծվում է Մոսկովյան ինքնուրույն իշխանությունը, որը հմտորեն հաշվի առնելով մոնղոլական գերիշխանության տակ ստեղծված քաղաքական իրավիճակը և օգտագործելով կենտրոնական Ռուսաստանի միմյանց դեմ մաքառող ուսական իշխանությունների հակամարտությունները՝ ընդարձակում է իր սահմանները հարևանների հաշվին, և XIV դ. կեսերին արդեն դառնում ողջ Ռուսաստանի քաղաքական ու եկեղեցական ճանաչված կենտրոն։ Նույն դարի երկրորդ կեսին Մոսկովյան մեծ իշխանությունը դիսավորում է ուսժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական տիրապետության դեմ։ 1380 թ. ուսական զորքերը, Մոսկվայի մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի դիսավորությամբ, պարտության են մատնում մոնղոլական բանակին, հաջող սկիզբ դնելով օտար բռնակալական լծից հայրենի երկրի ազատագրության և միմյանց դեմ պայքարող ուսական իշխանությունների միավորման։

Այսպիսով, Մոսկվայի մեծ իշխանները XIV—XV դդ. ընթացքում օտար տիրապետության ու ֆեոդալական մասնատվածության դեմ համառ պայքար մղելով, վերամիավորում են ուսական հողերի մեծագույն մասը և Մոսկվան դարձնում նոր Ռուսաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն<sup>2</sup>։

Մոսկվայի և արևելյան երկրների տնտեսական սերտ կապերն իրականացվում էին միջազգային նշանակություն ձևեր բերած երեք հիմնական մայրուղիներով։ Դրանցից կարևորագույնը Վոլգյան մայրուղին էր. Վոլգայի վրայով Մոսկվան կապված էր Անդրկովկասյան երկրների, Իրանի, Միջին Ասիայի,

<sup>1</sup> М. Г. Рабинович. Раскопки в Москве в 1950 году. «Краткие сообщения ИИМК», XLIV, М.—Л., 1952, էջ 117: Մ. Տիխոմիրովը կասկածի տակ է առնում նոր հայտնաբերված նյութերի՝ Մ. Ռարինովիչի առաջարկած ժամանակագրությունը, այն տեղաշարժելով XII—XIII դդ. М. Н. Тихомиров. Древнерусские города, М., 1956, էջ 408—409):

<sup>2</sup> «Очерки истории СССР», период феодализма, IX—XV вв. в двух частях, II, М., 1953, էջ 271—332:

Հնդկաստանի և Չինաստանի հետ: Հին այդ ճանապարհի ողջ երկայնքով՝ Վուլգայի գետաբերանից սկսած մինչև ակունքները, պատմական տարբեր ժամանակաշրջաններում ծաղկում էին առևտրա-արհեստագործական խոշոր նշանակություն ունեցող նավահանգիստ-քաղաքներ, որոնցում միջազգային աշխույժ ապրանքափոխանակություն էր կատարվում:

VIII—X դդ.՝ Խազարական խաքանաթի տիրապետության ժամանակաշրջանում, բացառիկ դեր էր կատարում Իթիլ մայրաքաղաքը՝ Հազարան կոչվող առևտրա-արհեստագործական իր թաղամասով (գտնվում էր ներկայիս Աստրախան քաղաքից 15 կմ հյուսիս)<sup>3</sup>: Խազարական պետության քայքայումից հետո մերձվոլգյան երկրամասերի տերը դարձան Վուլգայի բուլղարները, որոնց նշանավոր մայրաքաղաքը՝ Բուլղարը, կառուցված Վուլգա և Կամա գետերի հատման շրջանում, հինգ դար շարունակ պահպանեց իր բացառիկ դերը որպես միջազգային ապրանքափոխանակության կարևոր մի հանգուցակետ:

Մոնղոլական արշավանքներից հետո այս երկրամասերն ընկան Ոսկե Հորդայի տիրապետության տակ. գետի ողջ երկայնքով, կարևոր անցուղիներին առընթեր, ստեղծվեցին ու բարգավաճեցին վարչական ու տնտեսական նոր կենտրոններ՝ Սարայ-Բերքեն (Հին Սարայը), Սարայ-Բաթուն (Նոր Սարայը), Ուլյակը կամ Ուկեկը և Ղազանը:

Վուլգայի ուսական տիրապետության տակ գտնվող հատվածում կարևորագույն տնտեսական դեր էր կատարում 1221 թ. հիմնադրված Նիժնի-Նովգորոդը, որ 1392 թ. դարձավ Մոսկովյան մեծ իշխանության վաճառաշահ քաղաքներից մեկը: Ճիշտ է, պատերազմական գործողությունների, ավաղակային արշավանքների և այլ անբարենպաստ հանգամանքների հետևանքով հրրեմն ժամանակավորապես դադարում էր հաղորդակցությունը Վուլգայի ողջ երկայնքով կամ նրա առանձին հատվածներում, սակայն կարճատև էր լինում այդ դադարը: Ավերված կենտրոնների փոխարեն ստեղծվում էին նորերը և նույնիսկ թշնամի ուժերն աջակցում էին միմյանց (անշուշտ՝ յուրաքանչյուրն իր շահերից ելնելով)՝ տնտեսական վիթխարի նշանակություն ունեցող մայրուղու վերականգնման ու բարգավաճման համար, և այն շարունակում էր կատարել իր բացառիկ դերը միջազգային ապրանքափոխանակության բնագավառում:

Վոլգյան մայրուղին ծանոթ էր հայերին մեր պատմության հնագույն ժամանակներից ի վեր. որոշակի տվյալներով տակավին մ. թ. ա. I դ. մարերն ու հայերը ցամաքային ճանապարհով Միջագետքից արևելյան ապրանքներ էին հասցնում Կասպից ծովի հյուսիսային շրջանները<sup>4</sup>:

Տնտեսական այդ կապերն, անշուշտ, ավելի լայն ծավալ էին ստացել Արշակունյաց և մարգպանական շրջաններում: VII դ. մեծանուն դիտնական Անանիա Շիրակացին իր «Աշխարհացույցի» մեջ<sup>5</sup> խաղարների պետության ու նրա տիրապետության տակ գտնվող ցեղախմբերի մասին այնպիսի ուշագրավ և

<sup>3</sup> Խազարների մայրաքաղաքը սկզբնական շրջանում Բալանշարն էր, որն ավերվեց արաբների կողմից 722 կամ 723 թթ.: Դրանից հետո մայրաքաղաք դարձավ Իթիլը (В. В. Бартольд, Арабские известия о русах. «Советское востоковедение», I, М.—Л., 1940, էջ 18):

<sup>4</sup> В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 16:

<sup>5</sup> Կ. Լ. Դանիելյանի «Армянские космографические труды VII века о строении вселенной» (Ереван, 1978), աշխատության տպագրությունից հետո «Աշխարհացույցի» Ան. Շիրակացուն պատկանելու հարցը կարելի է վերջնականապես լուծված համարել:

ստույգ տվյալներ է հաղորդում, որ կասկած չի մնում այն մասին, որ նա ունեցել է հայազգի տեղեկատուներ: Այդ մասին նա նույնիսկ որոշակի ակնարկ ունի: Հունական (Սև) և Կասպից ծովերի մասին իր ձեռքի տակ ունեցած նյութերի շարադրությանն անցնելուց առաջ, նա ուղղակի գրում է. «Քանզի զՅունականան և զԿասքիականան մերոց իսկ արանց պատահեաց շուրջ անցանել...»<sup>6</sup>: Եվ, հավանաբար, հենց «մերոց իսկ արանց» հաղորդած տեղեկությունների հիման վրա, նա տեղյակ էր, որ Վոլգան (Աթրլ գետը) յոթանասուն վտակներ կաղմելով է թափվում Կասպից ծով, մի գիտելիք, որ նրանից դարեր հետո է միայն տեղ գտել Ռուսական առաջին (Լավրենտիևյան) տարեգրության մեջ, ինչպես և արար աշխարհագիրներ Իրն-Հաուբալի, ալ-Քարնաաթիի, Յակուբի և այլոց գրվածքներում<sup>7</sup>:

VII դ. վերջերին Արևելից Հայոց կաթողիկոսական աթոռը, որ ավելի հայտնի է Աղվանից կաթողիկոսություն անունով, քարոզչական լայն գործունեություն էր ծավալել Խաղարական խաքանաթի սահմաններում և, մանավանդ, նրա հարավային երկրամասերում (Հյուսիսային Կովկասի Կասպից ծովին առափնյա շրջաններում): Ճիշտ է, ի վերջո խաղարական հասարակության վերնախավը պետական կրոն է հայտարարում հուդայիզմը (կարաիմյան դավանանքը), սակայն հայ քրիստոնեական եկեղեցին նույնպես այնտեղ ունեցել է մեծաքանակ հետևորդներ<sup>8</sup>: X դ. արար պատմագիր Մասուդին վկայում է, որ Իթիլ քաղաքի բնակչության մեջ կային մեծ թվով քրիստոնյաներ<sup>9</sup>, իսկ Իրն-Հաուբալը խոսում է խաղարական Սրմբդըռ ծովափնյա քաղաքի մասին, նշելով, որ «այնտեղ բնակվում էին մուսուլմաններ և ուրիշներ, որոնք ունեին իրենց մզկիթները, քրիստոնյաներն իրենց եկեղեցիները, հրեաները՝ սինագոգները»<sup>10</sup>:

X դ. կեսերին Հյուսիս-արևմտյան Ղազախստանից դեպի արևմուտք շարժվելով և անցնելով Վոլգան, Կովկասի ու Սև ծովի Հյուսիսային տափաստանները ներխուժեցին Ղազախ (նաև պոլովցի, կուման) կոչվող թուրքական լեզվաբնույթի պատկանող բոշվոր ցեղերը: Աշխարհագրական այդ միջավայրում հաջորդելով խաղարներին, նրանք դարեր շարունակ՝ մինչև մոնղոլական արշավանքները, իրենց հսկողության տակ պահեցին Արևելքն Արևմուտքի հետ կապող Հյուսիսային մայրուղիները: Այդ ցեղերը, սակայն, միասնական պետություն չկարողացան ստեղծել: Նրանք ցրված էին Գեշտ-ի Ղազախ կոչվող

6 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 339: տե՛ս նաև էջ 347—348, ուր հետաքրքրական տեղեկություններ կան խաղարների, նրանց խաքանի (հական), թագուհու (խաթուն) մասին և թվարկված են Մարմատիայում ապրող 50 ցեղախմբերն ու ցեղերը (խաղիրք, բուխք, բարսիք, աղշեզք... և այլն):

7 Б. Н. Заходер. Из истории волжско-каспийских связей древней Руси. «Советское востоковедение», 1955, № 3, էջ 118: Արար աշխարհագիրների երկերում տարբեր աշխարհամասերի վերաբերյալ անկա տեղեկությունների զգալի մի մասը փոխ է անված իրենց տիրապետության տակ գտնվող հին մշակույթ ունեցող ժողովուրդներից, որոնց շարքում հայերը նույնպես գրավել են պատվավոր տեղ:

8 Խաղարական պետության սահմաններում հայ հոգևորականների ծավալած քարոզչական գործունեության ու ձեռք բերած հաջողությունների մասին պատմում է Մովսես Կաղանկատվացին (տե՛ս Մովսեսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մ., 1860, II, զբլուխը I՞—ևն, հատկապես՝ էջ 197—198):

9 В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 24—25:

10 Նույն տեղում, էջ 34—35:

անծայրածիր տափաստաններում՝ բաժանված լինելով մի շարք կիսանկախ ցեղախմբերի. Գանուրի և Դնեպրի միջև հաստատվել էին Լուկոմորյան կոչվող զփշախները, ապա՝ արևմուտքից-արևելք դալով, նրանց հարևանությամբ ապրում էին Մերձդնեպրյան կամ Զապարոժյան, Մերձձովյան (ներքին Դոնից միջև Ազովի ծովափերը), Դոնեցկի, Դոնի, Արիմի, Հյուսիսային Կովկասի զփշախական զանգվածները<sup>11</sup>:

Խաղարական պետության մայրաքաղաք Իթիլի անկումից (995 թ.) հետո հավանաբար հենց նույն վայրում ստեղծվեց ու բարդավաճեց զփշախական տնտեսական կենտրոն Սաքսին քաղաքը<sup>12</sup>: Տնտեսական կարևոր նշանակություն ստացավ նաև Սարկել քաղաքը՝ կառուցված Դոն գետի մեծ աղեղի այն մասում, որ առավել մոտ էր գտնվում Վոլգային<sup>13</sup>:

Հայերը, որ աշխույժ հարաբերություններ էին ստեղծել այս երկրամասերի հետ պատմական նախորդ ժամանակաշրջանում, բնականաբար, պահպանել էին իրենց տնտեսական դիրքերը զփշախական իշխանություններում, զգալի դեր կատարելով Դեշտ-ի Ափշախի ճանապարհներով կատարվող միջազգային առևտրի մեջ: Պետք է խոստովանել, սակայն, որ այդ մասին պահպանվել են միայն սակավաթիվ նյութեր, որոնցից մի քանիսը՝ ըստ ինքյան պերճախոս:

1180 թ. տեղի է ունենում Վրաց պետության գահակալի՝ Քամար Քագուհու ամուսնությունը Վլադիմիրի մեծ իշխան, XII դ. կեսերին Ռուսաստանի պատմության մեջ խոշոր դեր կատարած Անդրեյ Բոգոլյուբսկու որդու՝ Յուրի (Գեորգի) Բոգոլյուբսկու հետ: Յուրին, իր հորեղբայր Վսեվոլոդի կողմից հալածվելով, հյուրընկալվել էր զփշախների թագավորի մոտ, ըստ երևույթին, Սաքսին քաղաքում (մեծ հավանականությամբ նրա մայրը զփշախական իշխանուհիներից է եղել): Երբ վրացական արքունիքում քննության նյութ է դառնում ջահել Քագուհու համար պատշաճ ամուսին գտնելու հարցը, թրխիսցի ոմն Քավադ՝ Աբուլ-Հասանը առաջարկում է իրեն քաջածանոթ Յուրի Բոգոլյուբսկու թեկնածությունը: Վրաց դարբաղը (պետական խորհուրդը) ընդունում է այդ առաջարկը: Ռուս իշխանին հրավիրելու պարտականությունը դրվում է Թրխիսի բնակիչ, վաճառական Զանբան Զորարաբելի վրա, որը, ավելի

11 К. В. Кудряшов. Половецкая степь, М., 1948, էջ 134: Պարտվելով մոնղոլ-թաթարներից և ընդունելով նրանց գերիշխանությունը, զփշախները ոչ միայն չզազարեցին գոյություն ունենալուց, այլև իրենց մեջ ձուլեցին թաթարներին. վերջիններս, ըստ XIV դ. առաջին կեսի առար հեղինակ էլ-Օմարիի՝ «Զուլվեցին և խնամիացան նրանց (զփշախների) հետ... և նրանք բոլորը դարձան կատարյալ զփշախներ, այնպես որ կարձես նույն ցեղից լինելին» (В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. I. Извлечения из сочинений арабских, СПб., 1894, էջ 235):

12 «Очерки истории СССР», период феодализма, IX—XV вв., в двух частях, I, М., 1953, էջ 202:

13 К. В. Кудряшов, նշվ. աշխ., էջ 9—34 (այստեղ հատուկ գուրխ է նվիրված Սարկելի տեղադրությանը): Վոլգայի և Դոնի ջրավազանները միմյանցից բաժանող և ընդամենը 60 կմ տարածություն ընող ջրբաժան այդ շրջանը դարեր շարունակ վիթխարի դեր է կատարել, լինելով Սև ծովը Կասպից ծովի հետ կապող տնտեսական դարկերակի անխափան մասը և ունենալով ուղղմատրատեգիական կարևոր նշանակություն: Դեռևս XVI դ. թուրքական սուլթան Սելիմ II-ը անհաջող փորձ կատարեց Դոնը Վոլգային ջրանցքով միացնելու: Այսպիսի ծրագրեր առաջ բաշխեցին նաև Պետրոս I-ի ժամանակ:

արագ, բան ակնկալվում էր, ճեպում է Ղփչախ թագավոր Սեվինչի մոտ և Քրիլիսի հասցնում փեսացուին<sup>14</sup>:

Ո՞վ էր Վրաստանի քաղաքական կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող խնամիական այս կապի ստեղծման նախաձեռնողը: Այս հարցը հուզել է շատ պատմաբանների՝ XVIII դ. կեսերից սկսած մինչև մեր օրերը<sup>15</sup>: Եվ ինչպես հաճախ է պատահում բանասիրության մեջ, տարբեր ու հակասական տեսակետներից հավանականը բնավ էլ վերջին ուսումնասիրողներին չի պատկանում: Այսօր էլ ուժի մեջ է արքայազն Վախուշտի հաղորդած տվյալն այն մասին, որ Աբուլ-Հասանը թրխիսցի մի վաճառական է եղել, ինչպես նաև պրոֆ. Ա. Խախանովի կարծիքը, թե ազգությանը նա հայ է եղել և առևտրական սերտ կապեր է ունեցել տարբեր երկրների, ըստ որում նաև՝ Գեշտի-ի Ղփչախի հետ<sup>16</sup>:

Ղփչախում բնակություն հաստատած հայերը սերտ կապեր են ունեցել Հայոց բնաշխարհի և հայկական հեռավոր գաղթօջախների հետ: Ուշագրավ է այն փաստը, որ 1193 թ. ոմն Աղբարիկ՝ որդի Առչուծի, Ղփչախում (ցավոք, տեղը որոշակի չի նշված) գնել է մեկ դար դրանից առաջ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում բնօրինակված հայերեն մի Ավետարան<sup>17</sup>:

Ղփչախների հետ միասին, Խաղաբախյան պետության ժառանգորդները դարձան միջին Վոլգայի առափնյա երկրամասերում հաստատված բուլղարները, որոնք հայտնի են գիտության մեջ՝ Վոլգայի բուլղարներ անունով:

Բացի գետային մայրուղուց, բուլղարներն արևելյան երկրների հետ առևտրական աշխույժ կապեր էին պահպանում ցամաքային այն ճանապարհով, որ Մեծ Բուլղար քաղաքից՝ տափաստաններով ձգվում էր դեպի Յաիկ, իսկ այդտեղից էլ, անցնելով Ղազախական անապատով, դեպի Խորեզմ: Այս ճանապարհի նշանակությունն ըստ երևույթին մեծացավ XII—XIII դդ.՝ Խորեզմշահների պետության ծաղկման ժամանակաշրջանում<sup>18</sup>:

X դ. արաբ ուղեգիր Իբն-Ֆադլանի վկայությամբ բուլղարների արքայական վրանի հատակին փռված էին մեծ մասամբ հայկական դորգեր<sup>19</sup>: Հնագիտական պեղումներից հայտնաբերված ուշագրավ նյութերի հիման վրա ապացուցված է արդեն, որ Բուլղար քաղաքի պարիսպներից դուրս գոյություն է ու-

<sup>14</sup> «История и восхваления венценосцев». В кн. «Картлис цховреба», т. II, Тбилиси, 1959, էջ 36: նաև՝ С. Т. Еремян. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. «Научные труды Ереванского ун-та», т. XXIII, 1946, էջ 395—396 և З. В. Папаскири. Эпизод из истории русско-грузинских взаимоотношений. «История СССР», 1977, № 1, էջ 135:

<sup>15</sup> Արքայազն Վախուշտի, Ա. Խախանով, Ս. Երեմյան, Պ. Ինգորովա, Ի. Յինցաձե, Ն. Բերձենիշվիլի, Շ. Մեսիթա. ահա հարցին անդրադարձած գիտնականների ոչ լրիվ ցանկը (սրանց, հաճախ իրարամերձ, տեսակետների համառոտ շարադրանքը տե՛ս 2. Պապասկիրիի վերոհիշյալ հոդվածի մեջ):

<sup>16</sup> А. С. Хаханов. Положение армян в грузинском царстве. «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897, էջ 55:

<sup>17</sup> Կառեզին Ա. կարողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, № 255, սյուն. 569—570. С. Т. Еремян. նշվ. աշխ., էջ 393:

<sup>18</sup> А. П. Новосельцев, В. Т. Пашуто. Внешняя торговля древней Руси (до середины XIII в.). «История СССР», 1967, № 3, էջ 106:

<sup>19</sup> Ибн-Фадлан. Путешествие на Волгу, перевод с комментариями, под редакцией акад. И. Ю. Крачковского, М., 1939, էջ 73: Բարկին Ասաֆյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., 2, Երևան, 1964, էջ 39:



նեցել հայկական առևտրա-արհեստագործական մի թաղամաս, որը հիմնադրված լինելով դեռևս IX դ., իր զարգացումն է ապրել ու բարգավաճել հատկապես XIII—XIV դդ., դառնալով Ոսկե Հորդաշի վաճառաշահ բնակավայրերից մեկը: Այդ թաղամասում, նախկին փայտածածկ եկեղեցու փոխարեն, XIV դ. կառուցվել է երկհարկանի քարաշեն թաղակապ մի շքեղ եկեղեցի, որի ավերակները, թյուրիմացաբար «հունական դահլիճ» անվանումն ստանալով, երկար ժամանակ հնագետների ուշադրության կենտրոնում էին գտնվում<sup>20</sup>: Հատուկ նշանակություն ունեն Բուլղարի հայկական գերեզմանատան արձանագիր տապանաքարերը, որոնցից պահպանվել են միայն շնչին հիշատակներ (4-ը հասել են մեզ ամբողջական կամ թերի, իսկ 3-ից պահպանվել են միայն արձանագրությունների անհաջող ընդօրինակություններ): Դրանց մեջ կան թվակիր արձանագրություններ, որոնք առանց բացառության պատկանելով XIV դ. առաջին հիսնամյակին (1308—1337 թթ.)՝ խոսում վկայություններ Խաչիկ շրջանում Բուլղարի հայկական թաղամասի ծաղկուն վիճակի մասին<sup>21</sup>:

Հետաքրքրական արդյունքներ են տվել նաև հայկական գերեզմանատան պեղումները: Այստեղ հայտնաբերվել են ոսկե և արծաթե զարդեր, մետաքս և դիպակ՝ հյուսված ոսկեհուռ թելերով: Մասնագետները մեծ նմանություն են տեսնում սրանց և Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Անիում և Դվինում արտադրված գործվածքների միջև, միաժամանակ նշելով, որ պեղածո նյութերը վկայում են հայ վաճառականների բարեկեցիկ վիճակի մասին<sup>22</sup>: Մեծ Բուլղար քաղաքի հայկական համայնքը՝ առաջին հերթին Մոսկվայի հետ էր զարգացնում անտեսական իր կապերը: Սակայն, ելնելով այն փաստից, որ Բուլղարի մոտակայքում, Կամա գետի վրա ևս եղել են հայկական փոքրիկ դաղթօջախներ<sup>23</sup>, պետք է հետևեն, որ տեղի հայ վաճառականները սերտ հարաբերությունների մեջ էին նաև հյուսիսային և հյուսիս-արևելյան հեռավոր անտառատունգրային շրջաններում թափառող որսորդական և եղջերվապահ ցեղերի հետ:

20 А. П. Смирнов. Армянская колония города Болгар. «Материалы и исследования по археологии СССР» (МИА), вып. 61, М., 1958, էջ 330—359.

21 Լ. Զանփոլադյան, Վոլգայի ափին հայտնաբերված հայկական արձանագրությունները («Թանրեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 211—222): Տեղին է այստեղ նշել, որ Մերձվոլգյան երկրամասերում հայկական վիճագրական հուշարձանների և այլ նյութերի հայտնաբերման հնարավորությունները պետք չէ սպառված համարել: Այս ասումով ուշադրության արժանի է անդլիացի վաճառական Քրիստոֆեր Բուրոյի 1579 թ. իր հորեղորը հասցեագրած մի նամակը, որից հայտնի է դառնում, թե հայերեն արձանագիր տապանաքարեր են եղել նաև Ուկեկ կամ Ուվեկ քաղաքի մոտ (արդի Սարատովի մերձակայքում): «Այս վայրում, — գրել է նա, — եղել է շատ նուրբ քարից շինված մի բերդ, և նրան կից կար մի քաղաք... մնում են մինչև այսօր բերդի ավերակների մի մասը և որոշ թվով գերեզմաններ, որոնց մեջ թվում է թե աղնվական մարդիկ են թաղված, որովհետև գերեզմանաքարերի վրա տեսնվում են ձիու պատկեր, որի վրա նստել է մի մարդ աղեղը ձեռքին և մեջքին նետի գոտի: Գերեզմանաքարերից մեկի վրա վահանի մի կտոր կար, որի վրա տառեր էին փորված, որոնց մեկ մասը եղծված էր և մնացյալը դարձել էր պակասավոր. բայց մնացորդի ձևերից դատելով հայկական տառեր էին» (տե՛ս Լով. Զակարյան, Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1932, էջ 436—437):

22 М. Фехнер. Великие Булгары, Казань, Свияжск. М., 1978, էջ 47—48. Р. М. Джанполадян. О двух тканях из Ани и Болгарах. «Краткие сообщения инст. археологии АН СССР (КСИА), вып. 132, էջ 221:

23 Կրասնայա-Պոլյանա և Կիրիսկայա գյուղերում հայտնաբերվել են հայերեն արձանագիր տապանաքարեր (տե՛ս Լ. Զանփոլադյան, նշվ. հոդվածը, էջ 219):

1431 թ. ուսաները գրավեցին և ավերեցին Բուլղար քաղաքը. ըստ երևույթին հենց այս շրջանում էլ դադարեց գոյություն ունենալուց Բուլղարի հայկական թաղամասը. ինչ վերաբերում է թաղամասի բնակչությանը, պետք չէ տարակուսել, որ նրանց մեծագույն մասը, վերաբնակվելով նույն մայրուղու վրա գտնվող այլ կենտրոններում, շարունակեց գործուն դեր կատարել Վուլգայի վրայով կատարվող միջազգային առևտրի բնագավառում:

XIII դ. 30-ական թթ. մերձվուլգյան երկրամասերը բռնագրավվում են մոնղոլների կողմից ու տեղականորեն մտնում Ռսկե Հորդայի կազմի մեջ: Հորդայի տիրակալները, դառնալով Արևելքն ու Արևմուտքը կալող տնտեսական հսկայական նշանակություն ունեցող այդ ճանապարհի տերը, անհրաժեշտ քայլեր են կատարում միջազգային ավանդական ապրանքափոխանակության վերականգնման ուղղությամբ: Նրանց տիրապետության սկզբնական շրջանում ստեղծվում ու բարգավաճում է Սարայ-Բաթու կամ Հին Սարայ քաղաքը՝ Վուլգայի գետաբերանից ոչ հեռու (արդի Աստրախանի նահանգի Սելիտերնոյն գյուղի շրջանում): Սարայ-Բաթուն, որպես Ռսկե Հորդայի մայրաքաղաք և արհեստագործության ու առևտրի խոշոր կենտրոն, գոյատևում է ընդամենը մեկ դար: Բայց այդ կարճ ժամանակամիջոցում այստեղ հայերի թիվն այնքան է աճում, որ կառուցվում են եկեղեցիներ (Սուրբ Աստվածածին և Սուրբ Նշան), հիմնադրվում է Գանձասարի կաթողիկոսությանը ենթակա արքեպիսկոպոսական թեմ<sup>24</sup>, որի հոգևոր վարչության տակ էին գտնվում, անտարակույս, նաև Ռսկե Հորդայի այլ շրջաններում բնակություն հաստատած հայերը: Պահպանվել է մի Ավետարան, ընդօրինակված 1319 թ. «ի մայրաքաղաքիս Սարայ... մերձ առ ծովուն Կասպիականի»: Այդ ժամանակ Սարայում արքեպիսկոպոս էր «քաջ հովուապետ» կոչված տեր Պողոսը:

Ըստ երևույթին Հին Սարայի հայ բնակչության կազմում մեծ դեր են կատարել նաև արհեստավորները: Պեղումներից հայտնաբերվել են երկու կավե թաղարների բեկորներ, որոնց վրա պահպանվել է միևնույն վարպետի,

<sup>24</sup> Գիտենք արդեն, որ տակավին VII դ. հյուսիսային Կովկասում և Խազարների պետության այլ շրջաններում քարոզչական լայն գործունեություն էին ծավալել Հայոց Արևելից կողմանց կամ Աղվանից կաթողիկոսները: Նրանց հոգևոր ազդեցությունն աշխարհագրական այս միջավայրում հարատևել է մինչև XVIII դ. վերջերը, երբ էջմիածնի կաթողիկոսներին հաջողվել է իրենց ենթակայության տակ առնել այդ երկրամասում գտնվող հայերի հոգևոր առաջնորդությունը:

Սարայ Բաթու քաղաքում ընդօրինակված Ավետարանի գրիչ Խաչատուր քահանան, իր հիշատակարանի այն հատվածում, ուր ընդունված էր նշել, թե ի՞նչ և ո՞ր կաթողիկոսի գահակալության տարիներին են ավարտվել ընդօրինակման աշխատանքները, տարբերվելով իր ժամանակակից գրիչներից, կողք-կողքի հիշատակում է միաժամանակ հայոց երկու կաթողիկոսների. «Յամս աստուածապատիւ եւ հոգևոր տեառն Ստեփանոսի՝ Արևելեան կաթողիկոսի Հայոց, և տեառն Կոստանդեա՝ Կիլիկեցոյ կաթողիկոսի» («ԺՂ դարի... հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 155—156): Սկզբից հիշատակված «Արևելեան կաթողիկոս հայոց»-ը ոչ այլ ոք է, եթե ոչ 1261—1323 թթ. գահակալած Ստեփանոս Գ Աղվանից կաթողիկոսը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 639): Սրան «Արևելյան կաթողիկոս հայոց» անվանելով և այդ ժամանակվա Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդինից առաջ հիշատակելով, Խաչատուր քահանան անժխտելի վկայություն է բողոք այն մասին, որ Ռսկե Հորդայի հայկական գաղթավայրերը մտել են Գանձասարի թեմի մեջ և Գանձասարի կաթողիկոսները շատերի կողմից ճանաչվել են որպես «Արևելեան հայոց կաթողիկոսներ»:

նույն կնիքով դրոշմված արաբերեն հետևյալ արձանագրությունը. «Ինանիկ որդի Սարգսի»<sup>25</sup>:

XIV դ. 20-ական թթ. Սարայ-Բաթուն վայրէջքի շրջան էր թեակոխել, իր տեղը զիջելով Սարայ-Բերքեին (Նոր Սարային), որը կառուցվել էր Բերքե խանի (1257—1266 թթ.) ժամանակ՝ հաճելի կլիմայով ու բարեբերությամբ հռչակված Վոլգա-Ախտուրիայի հովտամասում (Վոլգոգրադից ոչ հեռու): Ուզբեկ խանի ժամանակ Սարայ-Բերքեն դարձավ Ոսկե Հորդայի մայրաքաղաքը: Տնտեսական ու վարչական կենտրոնների այս փոփոխության համար, անշուշտ, կային հիմնավոր պատճառներ: Մոնղոլական երկու աշխարհածավալ պետությունների՝ Իլխանության և Ոսկե Հորդայի ստեղծման հենց առաջին տարիներից, քաղաքական ու տնտեսական անհաշտելի հակադրությունների դուռ բացվեց նրանց միջև: Ոսկե Հորդայի տիրակալները ձգտում էին իրենց ազդեցության ոլորտի մեջ պահել Կասպից ծովով և ծովափնյա շրջաններով դեպի հյուսիս՝ Մոսկվա ու Նովգորոդ (ապա հյուսիսային Սվրոպա) և Ղրիմի վրայով դեպի միջին և հարավային եվրոպական երկրներ տանող առևտրական բանուկ ճանապարհները: Իսկ իլխանները, վճռականորեն հակադրվելով նրանց, փորձում էին խցել այդ ուղիները, իրենց երկրում արտադրվող և հեռավոր արևելյան երկրներից ստացվող ապրանքների առաքումը դեպի Սվրոպա իրականացնելու համար Սև և Միջերկրական ծովերի, մասնավորապես Տրապիզոնի և Կիլիկյան հայկական թագավորության Այաս նավահանգստի վրայով<sup>26</sup>:

Իլխանների այդ քաղաքականությունը ժամանակավորապես պակասեց հաջողությամբ: Ոսկե Հորդան, իհարկե, չէր կարող հայեցողի դերով բավարարվել: Եվ XIII դ. 60-ական թթ. սկսած մինչև իլխանության քայքայման շրջանը, մոնղոլական երկու այդ պետությունների միջև տեղի ունեցան արյունահեղ պատերազմներ (1262—63, 1265, 1288, 1290, 1318—19, 1324—25, 1335—36 թթ.), որոնց հետևանքով ծայր աստիճանի ավերվեցին Դեբրենդի ու Շիրվանի երկրամասերը, ժողովուրդը լրեց իր հայրենի բնակավայրերը, երկիրն ամայացավ<sup>27</sup>: Սարայ-Բաթուի կամ Հին Սարայի տնտեսական հետադիմությունն ու անկումը, առաջին հերթին, անխղելիորեն կապված էր պատմական այս անցուդարձերի հետ:

25 ՏԵ՝ Մ. Գ. Крамаровский. Гончар-армянин из Сарая ал-Джедид. «Труды Гос. Эрмитажа», XIX, II., 1978, էջ 102—105: Կնքադրոշմի առաջին անվան վերձանությունը դժվարությունների առջև է կանգնեցրել հոգվածագրին. նա առաջարկել է Անանդ, Անանալ, Ինանալ, Անանկ, Ինանակ ընթերցումները, ավելի հավանական համարելով «Անանդ»-ը: Մեր կարծիքով բրուտագործ-վարպետի իրական անունը եղել է Ինանիկ՝ XIV դ. Հայաստանում գործածվող մի անուն (ինչպես հայանի է, այդպես էին կոչում Բուրթեյ Օրբելյանի որդի Իվանեին): Զի բացաված նաև «Անանիկ»-ը՝ Անանիա անվան փաղաքչական ձևը:

26 Առկանովելու համար կենսական նշանակություն ունեցող այս մայրուղիները, առաջին իլխանները սիրաշահում էին հայ և ասորի վաճառականներին, արտոնություններ շնորհում նրանց, նույնիսկ զորավիգ կանգնում հայկական որոշ իլխանությունների (նկատի ունենք հատկապես Երզնկայի, Համշենի և Մակվի իլխանությունները), հաշվի առնելով դրանց գրաված հանդուցային դիրքը միջազգային նշանակություն ունեցող ճանապարհների վրա:

27 А. А. Али-заде. Борьба Золотой орды и государства ильханов. «Сборник по истории Азербайджана», вып. I, Баку, 1949, էջ 57—94: Արժեքավոր այս հոգվածի հեղինակի կարծիքով Ոսկե Հորդայի տիրակալների պայքարի նպատակն էր գրավել Ադրբեջանն ու իշխել այդ երկրով անցնող ճանապարհներին: Սակայն թվում է, թե նրանց մտահոգության հիմ-

Ի՞նչ եղավ Սարայ-Բաթուի հայ բնակչությունը: Մի մասը, անտարակույս, փոխադրվեց Ղրիմ՝ նոր շունչ հաղորդելով այդ թերակղզու հայկական հին գաղթօջախներին: Հավանաբար զգալի թիվ են կազմել նաև այն հայերը, որոնք խարխախ նետեցին Հին Սարայից ոչ հեռու կյանք առած ու հետագայում միջազգային նշանակություն ստացած Աստրախան քաղաքում: Սարայի հայերի երրորդ զանգվածը, պետք է ենթադրել, որ բնակություն է հաստատել Ոսկե Հորդայի նոր մայրաքաղաքում՝ Սարայ-Բերքեում, որը, ինչպես ասվեց, 1330-ական թթ. դարձավ հսկայածավալ մոնղոլական հյուսիսային կայսրության վաճառաշահ կենտրոնը:

1333 թ. Սարայ այցելած հոշակավոր արաբ ճանապարհորդ իբն-Բատուտան, ողջ աշխարհը ոտնատակ արած մի անձնավորություն, հիացումով է խոսել այդ քաղաքի մասին. «Սարայ քաղաքը, — գրել է նա, — կառուցված հարթ տարածության վրա և վիթխարի շափեր ընդունած՝ մեկն է գեղեցկագույն քաղաքներից. այն լի է մարդկանցով, ունի գեղեցիկ շուկաներ ու լայն փողոցներ... այնտեղ բնակվում են տարբեր ժողովուրդներ... ամեն մի ժողովուրդ ապրում է առանձին՝ իր թաղամասում, որտեղ և գտնվում է նրա շուկան»<sup>28</sup>:

Այս և արաբ այլ հեղինակների տվյալներով Սարայում բնակվել և առևտրով ու արհեստներով են զբաղվել Կովկասից, Պարսկաստանից, արաբական տարբեր երկրներից (Սիրիա, Իրաք, Եգիպտոս), Ռուսաստանից, Հունաստանից, Իտալիայից ներգաղթածներ: Ինչպես տեսնում ենք, նրանց շարքերում հայերը հանվանն չին հիշատակված, սակայն կարելի է առանց դուշըն ինչ կասկածի հավաստել, որ տնտեսական դերով ու բազմամարդության մեջ այստեղ ևս հայերն առաջավոր տեղ են գրավել: Այդ են վկայում, օրինակ, նոր Սարայում հայտնաբերված և Սարգիս անունով հայ վարպետի ստորագրությունը կրող անոթներն<sup>29</sup> ու հայերեն արձանագրություններով տապանաքարերը: Նկատված է նաև, որ տեղական ջնարակված թասերից շատերը խիստ նման են Հայաստանում արտադրված ամաններին<sup>30</sup>:

Սարայ-Բերքե քաղաքի հայկական համայնքը 1370-ական թթ. եղել է կազմակերպված գաղութ, ունեցել է իր եկեղեցին. հավանաբար այստեղ՝ թեմական առաջնորդի հանգամանքով, նստել է հայ եպիսկոպոս, որը Սեի կաթողիկոսների կողմից դիտվել է որպես «Ամենայն Հոսաց և Աւախաց» կոչվող և կոչվում հաստատված արքեպիսկոպոսի ենթակայության տակ գտնվող եկեղեցական պաշտոնյաներից մեկը: Պետք է ենթադրել, սակայն, որ Սարայի և մերձվոլգյան երկրամասերի հայկական մյուս համայնքները առաջվա պես ենթարկվել են Գանձասարի հայ կաթողիկոսներին, որոնք դարեր շարունակ իրենց ազդեցության ոլորտի մեջ են պահել Կովկասից հյուսիս գտնվող հայ-

նական առարկան Կասպ-Վոլգյան ճանապարհի միջազգային դերի պահպանումն էր: Պետության եկամուտների մեջ հսկայական տեղ էին գրավում այդ ճանապարհով ներմուծվող ու արտահանվող ապրանքներից գանձվող մաքսատուրքերը:

<sup>28</sup> В. П. Тизенгаузен, *Узл. аш.*, I, էջ 306:

<sup>29</sup> А. Якубовский. Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой в X—XV вв. «Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР», Ленинград, 1933.

<sup>30</sup> Т. А. Измайлова. Керамика из раскопок Амберда. «Труды отдела Востока Гос. Эрмитажа», т. IV, Л., 1947, էջ 188: Բարկեն Ասաբեյան, Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հատ. 2, Երևան, 1964, էջ 39—40:

կազմի գաղթօջախները: Սաի կաթողիկոսները, բնականաբար, եռանդուն քայլեր էին կատարում իրենց ազդեցությունն այս երկրամասերի հայկական համայնքների վրա տարածելու և ամրապնդելու ուղղությամբ, այնտեղ առաքելով բարձրաստիճան նվիրակներ: Պահպանվել է կաթողիկոսական անթվակիր մի կոնդակ, շարադրված Ռսկե Հորդաչի Ջանիբեկ խանի իշխանության տարիներին (1342—1357 թթ.), հավանաբար Մխիթար Գոնեբցի կաթողիկոսի կողմից: Կոնդակը ավյալներ է սլարունակում Ռսկե Հորդաչի տարածքով մեկ սփռված հայ զանգվածների, նրանց բնակության կենտրոնների և ունեցած եկեղեցիների մասին: Հասցեագրված է Ղրիմ (Սուլխաթ), Ազախ (Ազով, Տանա), Սարայ քաղաքների հայկական համայնքների բնակչությանը և բոլոր նրանց, ովքեր ցրված են «շուրջ դրոշոր էթիլ գետով, և որք զՋահուն գետով, դոր Ամոյն կոչեն ակումբ առեալ և ընդարձակ տարածեալ, այսինքն մինչև ի ծովն Կասբից»<sup>31</sup>: Այս ուշադրավ վկայությամբ ոչ միայն ընդարձակվում են մեր գիտելիքները Վոլգա գետով և Ազովի ու Սև ծովերի վրայով կատարվող միջազգային առևտրի բնագավառում հայ վաճառականների կատարած դերի մասին, այլև հնարավորություններ են ստեղծվում հանգելու այն եզրակացության, որ նրանք շատ ավելի լայն շափերով, քան ենթադրվում է առ այսօր՝ իրենց գործունեության շրջանակների մեջ են առել նաև Միջին Ասիայի երկրամասերը: Այս փաստերի լույսի տակ ավելի կարևոր նշանակություն են ստանում Բալխաշ լճի ավազանում հայտնաբերված Հովհան Հայոց եպիսկոպոսի տապանաքարը (1323 թ.) և Իսսիկ-կուլ լճից հարավ Սուրբ Մատթեոսի անունով հայկական վանքի գոյության մասին 1375 թ. եվրոպական մի քարտեզի ավյալը<sup>32</sup>:

Միջին Ասիայից դեպի հեռավոր Հնդկաստան ու Չինաստան ձգվող ճանապարհներին հայ վաճառականների քաջածանոթության մասին վստահելի տրվյալներ կան նաև հայ միջնադարյան գեղարվեստական գրականության էջերում: XVI դ. նշանավոր բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին, իր «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն» ստեղծագործության մեջ, տեղեկություններ է գրանցել Մխիթար Բաղիշեցի անունով մի հայ վաճառականի մասին, որ հեռագնաց ճանապարհորդությամբ, անցնելով Ատրպատական, Ղում, Իրաղ, Խորասան՝ հասել է Միջին Ասիա (Սամարղանդ և Բուխարա), այնտեղից անցել Հնդկաստան և «հռչակավոր քաղաքն Խաթայ» («մերձ սահմանացն Չինումաչինայ»): Ավարտելով իր առևտրական գործերը, նա հայրենիք է վերադարձել ընտրելով մի այլ ուղի: Միջին Ասիայից անցել է Կասպից ծովի հյուսիսային շրջանները, ապա՝ հյուսիսային Կովկաս և՛ Ալանաց աշխարհով իջել հարավ ու հասել իր հայրենի երկիրը՝ Հայաստան<sup>33</sup>:

1380 թ. Կուլիկովյան ճակատամարտում Ռսկե Հորդաչի կրած պարտությունից հետո սկսվում է բռնությամբ ստեղծված արհեստական այդ պետական կազմակերպության մայրամուտը: 1395 թ. Ռսկե Հորդան ծանր հարված

31 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9622, էջ 671:

32 Н. Я. Марр. Надгробный камень из Семиречья с армяно-сирийской надписью 1323 г. ЗВОАО. т. VIII, էջ 344—349: В. В. Бартольд. Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, էջ 45: Լ. Խաչիկյան, Հայ պատմագրության անհայտ էջերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 243—244:

33 Գրիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրություն, բնական բնագիր և ծանոթագրություններ Մալխա Ավդալբեկյանի, Երևան, 1963, էջ 121—123:

է կրում և նկ Քեմուրից: Քեմուրյանները գրավում և ավերում են Սարայ-Բերքեն, Աստրախանը, որոնցից առաջինը այլևս բնավ չի վերականգնվում որպես խոշոր քաղաք, իսկ երկրորդը շունչ է առնում տասնամյակներ հետո: Զգալի չափով տուժում են նաև Ղրիմի քաղաքները: Մեծ հարված է հասցվում միջազգային նշանակություն ունեցող կարավանային առևտրին: Շուտով ավելի են սրվում բուլղարական տարբեր խմբավորումների հակամարտությունները, և իշխանության համար մղվող պատերազմները տարեցտարի ավելի արյունահեղ են դառնում: Ոսկե Հորդայից անջատվում և առանձին խանություն է դառնում Ղազանի խանությունը (1445 թ.): Քիչ հետո՝ 1449 թ., հիմնադրվում է Ղրիմի ինքնուրույն խանությունը, իսկ 1450—64 թթ. միջոցին՝ Աստրախանի խանությունը: Այսպիսով, Ոսկե Հորդան, զրկված բարերեր, զարգացած և նստակյաց բնակչություն ունեցող հիմնական շրջաններից, իր հոգեվարքն է ապրում, այլևս կարևոր դեր չկատարելով միջազգային տարանցիկ առևտրի բնագավառում<sup>34</sup>:

Վոլգայի ցամաքային ու գետային ճանապարհները, ինչպես նաև Ղրիմից դեպի Միջին Ասիա ձգվող կարավանային մայրուղին (որ հատում էր Վոլգան Սարայ-Բերքե քաղաքի մոտակայքում), ամբողջապես ընկնում է Ղազանի խանի տիրապետության տակ:

Քաղաքական ու սոցիալ-տնտեսական նոր այս պայմաններում մերձվողյան հայկական գաղթօջախների բնակչությունն արագորեն հաղթահարում է ստեղծված զմայրությունները և շարունակում կատարել փորձված վաճառականի և հմուտ արհեստավորի իր դերը Ղազանի խանության նշանավոր քաղաքներում՝ Բուլղարում, Սուլարում և, հատկապես, խանության տնտեսական կենտրոնում՝ Ղազան մայրաքաղաքում: Ամեն տարի մայիսի վերջերին քաղաքի մերձակայքում գտնվող «Վաճառականների կղզում» (Гостинный остров) կազմակերպվում էր միջազգային նշանակություն ունեցող մեծ տոնավաճառ, որին մասնակցում էին Ռուսաստանից և արևելյան երկրներից ժամանած քաղամաթիվ վաճառականներ<sup>35</sup>: Ղազանի դերը, որպես Ռուսաստանի և արևելյան երկրների առևտրի կարևոր հանգուցակետ, հատկապես մեծանում է XV դ. կեսերին, երբ Ստորին Վոլգայի տափաստաններով անցնող ճանապարհները խափանվել էին և դեռևս չէին կարգավորվել Թուրքիայի հետ տնտեսական կապերը<sup>36</sup>: Հենց այս ժամանակ քաղաքի մերձակայքում կազմակերպվել է հայկական կայուն գաղթօջախ, որի աղոտ հիշատակները հասել են մեզ՝ «Արմյանսկայա» կոչվող դուշգ փողոցների անուններով<sup>37</sup>:

Ղազանի հայերն ունեցել են իրենց եկեղեցին և գերեզմանատունը, որից պահպանվել է միայն 4 սող արձանագրությամբ մի տապանաքար<sup>38</sup>:

<sup>34</sup> Б. Д. Греков, А. Ю. Якубовский. Золотая орда и ее падение, М.—Л., 1950, էջ 407—416:

<sup>35</sup> Այդ տոնավաճառի մասին «Ղազանյան տարեգրքի» մեջ գրված է. «На тот же день съезжались в Казань изо всея Руския земля богаты купцы и многия иноземцы дальния и торговаху с Русью великими драгими товары.» «Полное собрание русских летописей», (այսուհետև ПСРЛ) т. XIX, էջ 23:

<sup>36</sup> «Очерки истории СССР», т. II, М., 1953, էջ 432:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 432: նաև՝ Б. М. Мюллер. Об армянских надписях в Болгарах и Казани. ИРАИМК, 4տ. IV, էջ 69:

<sup>38</sup> Հս. Ջանիդուղյան, նշվ. աշխ., էջ 221: Հայերեն արձանագրությամբ տապանաքարերի



Պետք է ենթադրել, որ Ղազանցի հայերի մեծամասնությունը աշխատում էր առևտրի ոլորտում, սակայն նրանց մեջ, անշուշտ, եղել են նաև հմուտ արհեստավորներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ: «Ղազանյան տարեգրքի» մեջ պահպանված է հետաքրքրական մի վկայություն՝ Ղազանի խանի բանակում ծառայող հայ թնդանոթաձիգների մասին: Երբ 1552 թ. ռուսական ցար Իվան Ահեղի զորքերը պաշարել էին Ղազանը, հայ թնդանոթաձիգները ըստ Էրևույթին հրաժարվել են կռվել ռուսների դեմ. թաթարները հայերին շղթայել են թնդանոթներին, և մերկ սրերով նրանց գլխավերև կանգնած՝ հարկադրել կրակ բացել ռուսների վրա: Հայերը, սակայն մահվան վտանգն իսկ արհամարհելով, այնպես են արձակել արկերը, որ ռուսական զորքերին որևէ վնաս չհասնի: Այդ կապակցությամբ տարեգիրը վկայում է. «Лестно и худо бияху и не улучаху, аки неумеючи, и ядра черес все перепущаху или не допущаху, едва кого убиваху»<sup>39</sup>.

Թաթարները, միաժամանակ, բանտարկել և խիստ հսկողության տակ էին պահում հինգ հազար օտարերկրյա վաճառականների, «բուխարացիների, և շամախեցիների, և թուրքերի, և հայերի, և ուրիշների» («...Бухар, и Шемахей, и Турчан, и Армян, и инех»), — անշուշտ տեղյակ լինելով նրանցից շատերի ռուսասիրության մասին<sup>40</sup>: Այս թվարկման մեջ, չնայած հատուկ տեղ է հատկացված հայերին, բայց պետք է ենթադրել, որ հայազգի են եղել նաև շամախեցի և նույնիսկ «թուրքիացի» (Турчан) կոչվածներից ոմանք:

Իվան Ահեղի այս պատերազմով ոչ միայն Ղազանի խանությունն անցավ ռուսական տիրապետության տակ, այլև նախապատրաստվեց Աստրախանի նվաճումը (1556 թ.): Նույն այս տարիներին ռուսական գերիշխանությունը ճանաչեցին նաև Սիրիբի խաները և Նողայի իշխանները: Վոլգյան մայրուղին, այսպիսով, մեկ ծայրից մյուսը, իր ամբողջությամբ՝ անցավ ռուսական տիրապետության տակ, Վոլգյան մեկընդմիջտ դարձավ ռուսական գետ՝ «Матушка Волга»:

Ղազանի հայկական գաղթօջախի մասին որոշ փաստեր կան նաև միջնադարյան հայկական աղբյուրներում: Գիտենք, օրինակ, որ այդ քաղաքում ևս ապրել են զրասեր հայեր, որոնց պատվերով ընդօրինակվել ու բազմացվել են հայերեն ձեռագիր մատյաններ: Այսպես, XVII դ. 40-ական թթ. այստեղ աշխատել է Վասիլ անունով մի գրիչ, որը խոշա Ավետիսի պատվերով ընդօրինակել է երկու Ավետարան<sup>41</sup>:

Ղազանի խանության վերացումից հետո Ռուսաստանի ներքին և արտաքին առևտրի համար անհամեմատ մեծ նշանակություն ստացավ ռուսական հնամենի քաղաք Նիժնի-Նովգորոդը: Այն հիմնադրվել էր 1221 թ. և, արագ զար-

աակայությունը, նույնիսկ այն դեպքում, երբ հայտնաբերվել են միայն մեկ-երկու նմուշ կամ թերի բնկոտներ, երբեմնի շին գաղթօջախի գոյության խոստով փաստ պետք է համարել:

<sup>39</sup> ПСРЛ, т. XIX, էջ 130: К. Н. Григорьян. Из истории русско-армянских культурных связей X—XVII веков. «Труды отдела древнерусской литературы», IX, М.—Л., 1953, էջ 334:

<sup>40</sup> М. В. Фехнер. Торговля русского государства со странами Востока в XVI веке, М., 1952, էջ 56:

<sup>41</sup> Մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի № 3004 ձեռագիրն է, ընդօրինակված 1642 թ., մյուս ձեռագիրը պահվում է Ղազանի համալսարանում:

գանալով, դարձել ուսղմական նշանակություն ունեցող կարևորագույն հենակետ՝ ընդդեմ նախ Վոլգյան բուլղարների, ապա՝ Ղազանի թաթարների: Այստեղ էին խաչաձևվում Ռուսաստանից դեպի Արևելք տանող հիմնական ճանապարհները: 1350 թ. Նիժնի-Նովգորոդը դարձավ Մուզդալյան-Նիժնեգորոդյան միացյալ իշխանության մայրաքաղաքը. իսկ XIV դ. վերջերին Մոսկվայի մեծ իշխան Վասիլի I-ը իր տիրապետությունը տարածեց հին Ռուսիայի արևելյան այս շրջանների վրա, և Նիժնի-Նովգորոդը՝ բարգավաճելով, դարձավ օրավուր հզորացող Մոսկովյան իշխանության կարևորագույն տնտեսական կենտրոններից մեկը: 1525 թ., ի հակադրություն Ղազանի, Մոսկվայի մեծ իշխան Վասիլի III-ը, Նիժնի-Նովգորոդի մոտակայքում հիմնադրեց Մակարևյան նշանավոր տոնավաճառը: Իսկ Ղազանի անկումից հետո, Նիժնի-Նովգորոդը ավելի ընդարձակելով տնտեսական իր կապերը, դառնում է Ռուսաստանի առևտրական կենտրոնը՝ հսկայական դեր կատարելով համառուսական շուկայի ձևավորման գործում: Հատուկ ուսումնասիրության նյութ կարող է դառնալ Նիժնի-Նովգորոդյան առևտրի բնագավառում հայ վաճառականների կատարած դերի համակողմանի քայահայտումը: Մենք, սակայն, կբավարարվենք, հիշատակելով հետևյալ փաստը. 1368 թ. Մեծ Նովգորոդի կողմից կազմակերպվող և Վոլգյան գետուղու վրա դործող զինված ջոկատները, որ հայտնի են ուշկույնիկներ անունով<sup>42</sup>, հարձակում են գործել Նիժնի-Նովգորոդում գտնվող մահմեդականների ու հայերի վրա («бесерман и армен»)<sup>43</sup>, ոչնչացրել նրանց նավակներն ու կողոպտել նրանց պատկանող մեծաքանակ ապրանքները («Товар их безчисленно весь пограбиша»)<sup>44</sup>.

\*\*\*

Նիժնի-Նովգորոդից Մոսկվա էին հասնում երկու ճանապարհով. մեկն Օկա գետով տանում էր Կոլոմնա, իսկ Կոլոմնայից՝ Մոսկվա գետով՝ Մոսկվա. մյուս ճանապարհը Վոլգայով շարունակվում էր մինչև Յարոսլավլ, ապա Մոսկվա՝ ցամաքային ճանապարհով<sup>45</sup>:

Մենք կարող էինք այս երկու ճանապարհներից մեկն ընտրելով ուղևորվել դեպի Մոսկվա՝ այդ մեծ քաղաքում հայկական հիշատակներ որոնելու նպատակով, սակայն, դանդաղեցնելով մեր ընթացքը, փորձենք համառոտակի ծանոթանալ Մոսկվայից դեպի արևելյան երկրներ ձգվող մյուս կարևոր մայրու-

42 Մեծ Նովգորոդի բոյարների կողմից կազմակերպվող ուշկույնիկների ավազակային այս արշավների նպատակն էր Վոլգյան մայրուղուց դուրս մղել արևելյան երկրներից ժամանող վաճառականներին, իրենց ձեռքում կենտրոնացնելու համար նաև տնտեսական փթխարի նրշանակություն ունեցող այդ ճանապարհով կատարվող առևտուրը: Ուշկույնիկների արշավանքները նվազեցին XV դարի ընթացքում և վերջ գտան 1478 թ. հետո, երբ Մոսկվայի գերիշխանությունը տարածվեց Մեծ Նովգորոդի վրա:

43 Ակադ. Մ. Տիխոմիրովը նշել է, որ հաճախ «бесерман» էին կոչվում մուսուլմանական երկրներից ժամանած բոլոր վաճառականները, անկախ դավանանքից և ազգային պատկանելիությունից (М. Н. Тихомиров, Средневековая Москва в XIV—XV вв., М., 1957, էջ 131—132):

44 ПСРЛ, т. XVIII, էջ 104:

45 Н. Костомаров. Очерк торговли московского государства в XVI и XVII столетиях, СПб., 1862, էջ 100—101:



դուն, որի տնտեսական նշանակությունը փոքր-ինչ գերազնահատված է որոշ ուսումնասիրողների կողմից:

Պիմեն մետրոպոլիտի՝ Մոսկվայից Կոստանդնուպոլիս կատարած ճամփորդության ուղեգրությունը (շարադրված XIV դ. 90-ական թթ.)<sup>46</sup> հնարավորություն է բնօրինակում ճշգրիտ հետևելու Մոսկվա—Օկա—Դոն—Ազախ—Ղրիմ—Փոքր Ասիա գետային-ցամաքային-ծովային ճանապարհի ուղեգծին<sup>47</sup>:

Ուսումնասիրելով այդ մայրուղու ընթացքը և պարզելով դրան առնչվող և գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, մեծանուն գիտնական Մ. Ն. Տիխոմիրովը հակված էր կարծելու, թե մոնղոլական արշավանքներից հետո, մինչև XIV դ. կեսերը, այս ճանապարհը շատ ավելի բանուկ է եղել, քան Մոսկվայից դեպի Սև ծով տանող Դնեպրյան կամ Վոլգա-Դոնյան ճանապարհը: Թվում է, թե այս եզրակացությունը կարոտ է ավելի համոզիչ փաստարկների: Միջազգային ապրանքափոխանակության համար Դոնը, անտարակույս, այս շրջանում կարևոր դեր կատարում էր, սակայն, հիմնականում իր ստորին հոսանքով, սերտորեն շաղկապված լինելով Վոլգայի հետ: Դոնի գետաբերանում գտնվող Ազով քաղաքը, որ եվրոպական աղբյուրներում հայտնի է Տանա անունով, իսկ հայերի կողմից կոչվել է Ազախ, կարևոր նշանակություն է ունեցել ոչ միայն որպես միջազգային համբավ ձեռք բերած նավահանգստային քաղաք, այլև որպես ցամաքային ճանապարհների հանգուցակետ: Ազովից էր սկսում հյուսիսային Կովկասով դեպի Վոլգայի գետաբերանը՝ Սարայ-Բաթու և Աստրախան, այստեղից էլ դեպի Միջին Ասիա, այնուհետև դեպի Չինաստան ձգվող այն ճանապարհը, որն այնքան հանգամանորեն նկարագրված է Ֆլորենտացի վաճառական Ֆ. Բ. Պեգոլոտտիի կողմից՝ XIV դ. սկզբներին<sup>48</sup>:

Ղրիմի արևելյան ծովափում հաստատված և Կաֆայի տիրը դարձած շենովացիները մեծ ջանքեր թափեցին Ազովը ևս իրենց հենակետը դարձնելու համար, և այդ նրանց հաջողվեց 1316—1332 թթ.: Սակայն քիչ անց շենովացիների մրցակից վենետիկցիները, անշուշտ, նյութական մեծ միջոցներ վատնելով, կարողացան Ոսկե Հորդայի տիրակալ Ուզբեկ խանից հրովարտակ ստանալ Ազովում մշտական ներկայացուցիչ ունենալու և այդտեղ անարգել ու անմարս առևտուր անելու համար: Ազովը փաստորեն դարձավ վենետիկցիների միջնաբերդը: Նրա տնտեսական նշանակությունը շատ մեծ էր. երբ 1343 թ. մոնղոլները ներխուժելով՝ ավերածություններ գործեցին այստեղ, և Զանյրեկ

<sup>46</sup> «Хождение Пимина в Царьград» (ПСРЛ, т. XI, էջ 95 և հտ.),

<sup>47</sup> Մոսկվա և Օկա գետերով նավարկելով և անցնելով Կոստանա, Պերեյասլավ (Ռյազան) քաղաքներով, ուղևորները դուրս էին գալիս ցամաք և շարժվում դեպի Դոնի ափամասերը: Դուրսի քաղաքի մոտ կրկին նավակներ էին վերցնում և նավարկելով դեպի հարավ հասնում Դոնի գետաբերանի մոտ կառուցված Ազով (Տանա) քաղաքը: Մոսկվայից Ազով ճանապարհը տևում էր շուրջ 40 օր: Ազովից նավարկելով՝ 5 օրում հասնում էին Կաֆա, այստեղից էլ նույնքան ժամանակում՝ Սինոպ, իսկ Սինոպից 18 օրում Կ. Պոլիս (տե՛ս Մ. Ն. Тихомиров, Пути из России в Византию в XIV—XV вв. «Византийские очерки» (Труды советских ученых к XIV конгрессу византинистов), М., 1971, էջ 4—7; նույնի Россия и Византия в XIV—XV столетиях. «Сборник Радова Византологического института», № 7, էջ 23—38:

<sup>48</sup> Francesco Balducci Pegolotti. La pratica della mercatura. Ed. by A. Evans. The Medieval Academy of America, Cambridge (Mass.), 1936, էջ 21:

խանը ժամանակավորապես դադարեցրեց իտալացիների հետ առևտուրը, Իտալիայում կրկնակի բարձրացան մետաքսի և արևելյան համեմունքի գները<sup>49</sup>։

Արևելյան ապրանքները Ազովից արտահանվում էին ոչ միայն Իտալիա և հարավային Եվրոպայի ուրիշ երկրներ, այլ նաև Գերմանիա։ Նյուրնբերգցի մի վաճառական՝ Ուլման Շարումերն իր հետաքրքրական նոթերի մեջ արձանագրել է, որ իր հայրենի քաղաքը՝ Լվովի ճանապարհով արևելյան ապրանքներ է ստացել Տանա (Ազով) քաղաքից<sup>50</sup>։

Ազովը, ինչպես նշել է Հայդը, ծովային ճանապարհով կապված էր Աղբերմանի հետ։ Աղբերման հասցված ապրանքները Գնեստրի վրայով փոխադրվում էին Լվով, իսկ այնտեղից էլ՝ կենտրոնական Եվրոպայի շրջանները։ Եվ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ բոլոր քաղաքներում (Աղբերման, Լվով և այլն) հայ վաճառականները կազմում էին բնակչության մի զգալի մասը, ապա կարելի կլինի առանց կասկածի հետևյալի, թե Ազովում ևս գոյություն է ունեցել կազմակերպված հայ գաղթօջախ։

Ազովը որպես շրային ու ցամաքային ճանապարհների հանգուցակետ, իր բացառիկ դերը պահպանեց մինչև XV դ. սկզբները՝ երբ 1418 թ. մոնղոլները գրավեցին ու ավերեցին քաղաքը. վենետիկցիները վերջնականապես դուրս մղվեցին Սև և Ազովի ծովերից<sup>51</sup>։ Դոնի նշանակությունը ավելի նվազեց նույն դարի կեսերից, երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը, իսկ այնուհետև տեր զարձան Ղրիմին ու Դոնի գետաբերանին։

Անշուշտ, իրավացի էր ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, երբ Թուրքիայի առաջխաղացումն ու գրավումները մեծ աղետ էր համարում ոչ միայն վենետիկի ու Ջենովայի, այլև Ռուսաստանի համար, որը Կաֆայի և Ազովի անկումից հետո կորցրեց դեպի Եվրոպա բացված և իր տնտեսական զարգացման համար վճռական նշանակություն ունեցող «պատուհանը»<sup>52</sup>։

Ազովի հայկական գաղութի ու նրա տնտեսական դերի մասին աննշան տեղեկություններ են պահպանվել, սակայն, կասկածի ենթակա չէ, որ այնտեղ, քաղաքի ծաղկման շրջանում, ապրել են մեծ թվով հայեր, ունենալով համայնքային իրենց մարմինները և առնվազն մեկ եկեղեցի (Գրիգոր Լուսավորչի անունով)<sup>53</sup>։ 1341 թ. Տերտեր Երևանցի թափառական գրիչը այստեղ՝

49 В. Е. Сыроечковский. Гости-сурожане. М.—Л., 1935, էջ 1։

50 В. Василевский. Древняя торговля Киева с Регенсбургом. ЖМНП, 1888, июль, էջ 148։

51 Е. С. Зевакин и Н. А. Пенчко. Очерки по истории генуэзских колоний на западном Кавказе в XIII и XIV вв. «Исторические записки», 1938, № 3, էջ 76։ Г. Губ-бонс. История торговли Европы. СПб., 1901, էջ 52։

52 Մեջ ենք բերում Մ. Տիխոմիրովի խոսքերը. «Донской путь и связи с Судаком, Кафой и Константинополем в XIV веке были своего рода «окном в Европу», непосредственной связью русских земель с богатым Среднеземноморьем. Захват итальянских колоний в Крыму турками надо считать большим бедствием не только для итальянских торговых республик, в первую очередь для Венеции и Генуи, но и для России» (М. Н. Тихомиров. Средневековая Москва, էջ 131)։

53 Ասում ենք «առնվազն», նկատի ունենալով, որ 1341 թ. նախաթուն անունով մի կին, իր հանգուցյալ որդու հիշատակին մի Ավետարան է նվիրել Ազովի Ս. Գրիգոր եկեղեցուն. հիշատակարանում գրված է. «Ճառս ի սուրբ Գր[իգոր] լկաթի քաղաք՝ եկեղեցին տէր Մանուէլի» («Թ՛ Գարի... հիշատակարաններ», էջ 330)։ Այստեղից կարելի է հետևյալի, որ տեր Մանուէլի եկեղեցուց բացի, թերևս, Ազովում եղել է նաև մի ուրիշ հայկական եկեղեցի։ Ուշագրավ է

«աննման Ազախում» ընդօրինակել է բովանդակալից մի ժողովածու, հիշատակարանի մեջ գրելով նաև մեզ հետաքրքրող հետևյալ տողերը. «Գրեցաւ գիրքս յաշխարհիս ամենաւրհնեալ խան Աւղայէկին և բարեհամբաւ սրգոյ իւրոյ Գինիպէկին, ի բաղաքս յԱզախս, առ դրան սուրբ Գրիգորոյ Լուսաւորչին, ի յայսիսկոպոսութեանն աէր Ստեփաննոսի՝ սրգոյ Գրիգորի քահանայի Սուղտացոյ, և յաւագիրիցութեանն Սարգսի՝ սրգոյ Մանուիէլ քահանայի»<sup>54</sup>:

1328—1365 թթ. Ղրիմում գրված ձեռագրերի մեջ բազմիցս հիշատակված է Հայաստանյայց եկեղեցու Ամենայն հյուսիսական կողմանց կոչվող թեմի առաջնորդ Ստեփանոս կաթսկոպոսը կամ արքեպիսկոպոսը<sup>55</sup> Կարծում ենք, որ այստեղ ևս նույն գործչի անունն է տրված, ուստի Ազովը Ղրիմի հայ կաթսկոպոսի ենթակայության տակ եղող գաղթավայրերից է եղել: Եպիսկոպոսի կողքին հիշատակված է Մանվիլի սրգի Սարգիս ավագերեցը, որպես Ազախի հայ գաղթօջախի հոգևոր առաջնորդ: Ավագերեցի գոյությունն իսկ ենթադրել է տալիս մի քանի քահանաների առկայությունն այդ կենտրոնում, իսկ այդ հանգամանքն ինքնին Ազովի հայկական համայնքի բազմամարդության ստույգ վկայությունն է հանդիսանում: Ըստ այդմ պետք չէ տարակուսել, որ Ազովի հայ վաճառականները գործոն դեր են կատարել վենետիկյան հասարակապետության տնտեսական խոշոր նշանակություն ունեցող այդ գաղութի կյանքում. ի թիվս այլ երկրների (Ռսկե Հորդա, Միջին Ասիա, Անդրկովկաս և այլն), նրանք սերտ կապեր պետք է հաստատած լինեին նաև կենտրոնական Ռուսաստանի բաժնետիրական իշխանությունների և, մասնավորապես, Մոսկովյան մեծ իշխանության հետ:

\*\*\*

Որքան էլ կարևոր լինեք Ազովի դերն ու տնտեսական նշանակությունը եվրոպական երկրների առևտրական կապիտալի համար, այն չէր կարող մըրցակցել Ղրիմի նշանավոր կենտրոն, ջենովական առևտրական կապիտալի խարսխակայան Կաֆայի հետ, որը XIII—XV դդ. (մինչև Թուրքիայի կողմից նվաճվելը) Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության հիմնական կետն էր և մի շարք կողմերով առաջ էր անցել նույնիսկ եվրոպայի ու Ասիայի ոսկե կամուրջը համարվող Կոստանդնուպոլսից:

Այստեղ անհրաժեշտություն է զգացվում նշելու, որ IX դ. սկսած արևելյան առևտրի հռչակավոր ճանապարհն անցնում էր Ղրիմի վրայով, և Սև ծովը միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում հաջողությամբ մըրցում էր Միջերկրականի հետ: Հայաստանի պատմության համար այդ բախտորոշ ժամանակաշրջանն էր. դարավոր սպառաբան օտար բռնակալության դեմ պսակվեց հաջողությամբ և ժողովուրդը, թոթափելով արաբական ծանր լուծը, վերստեղծեց իր նոր պետականությունն ու տնտեսական բարգավաճման ընթացքի մեջ մտավ: Դրան նպաստեց նաև Հայաստանի աշխարհագրական դիրքը: Հայ վաճառականները, ամենայն հավանականությամբ հենց այդ ժամանակ, տնտեսական սերտ կապեր հաստատեցին Ղրիմի վաճառաշահ քաղաք-

նաև, որ 1339 թ. այստեղ մի ձեռագիր է ընդօրինակել Մկրտիչ քահանան (նույն տեղում, էջ 321). ըստ այդմ Ազովը եղել է հայ գաղթաշխարհի գրչության կենտրոններից մեկը:

<sup>54</sup> «ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 328—329:

<sup>55</sup> Մեկ անգամ միայն, 1328 թ. մի հիշատակարանի մեջ, կոչված է «արքեպիսկոպոս... երիմի աշխարհին» («ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 208):

ների հետ, բազմամարդ գաղթավայրեր հաստատելով նրա տարրեր մասերում: Թուրք-սելջուկների աշխարհավեր արշավանքները և հայրենի երկրի անտն-սական կյանքի հետադիմությունը, անշուշտ, ժամանակավորապես խզեցին այդ կապերը: Ղրիմի ու ողջ Սև ծովի առևտուրն ամբողջովին իրենց ձեռքն առնելու համար հրապարակ իշան իտալական երկու առևտրական հասարակապետություններ՝ Վենետիկն ու Ջենովան: Դրանց մրցակցությունը դարավոր պատմություն ուներ: Վենետիկը, տակավին 1082 թ., Բյուզանդական կայսրության սահմաններում անմաքս առևտուր անելու առանձնաշնորհումներ էր ստացել: Երբ Խաչակրաց IV արշավանքի հետևանքով 1204 թ. Բյուզանդական կայսրությունը բզկավեց և Կոստանդնուպոլիսը գրավվեց եվրոպացիների կողմից, Վենետիկը տեր դարձավ կայսրության տարածքի երեք-ութերորդ մասին<sup>56</sup> և փորձեց իր ձեռքում կենտրոնացնել սեծովյան ողջ առևտուրը: Այստեղ, սակայն, նա համառ դիմադրության հանդիպեց ջենովացիների կողմից, որոնք նույնպես գաղութատիրական մեծ ախորժակներ ունեին: 1169 թ. Մանվել Ա կայսեր հետ կնքած պայմանագրով, որը վերահաստատվեց Իսահակ Անգելոս կայսեր կողմից 1192 թ., ջենովացիները ստացել էին Սև ծովում առևտուր անելու բացառիկ առանձնաշնորհումներ<sup>57</sup>: 1260 թ. Ջենովան ռազմական օգնություն ցույց տվեց Միքայել Պալեոլոգին՝ լատինների դեմ նրա մղած պայքարում: Ի տրիտուր այդ օգնության նա ստացավ Կ. Պոլսի Պերա և Գաղատա արվարձանները: 1266 թ. ջենովացիները, թուլլովություն ստանալով Մանգու խանից, նախկինում քիչ հայտնի ծովափնյա մի բնակավայրում հիմնադրեցին իրենց առևտրական կենտրոնը՝ հետագայում մեծ հռչակ ստացած Կաֆա քաղաքը<sup>58</sup>: Կան հիմքեր ենթադրելու, որ ջենովացիներից առաջ այդ վայրում հաստատված են եղել հայ գաղթականներ: Շուտով Կաֆան դարձավ միջազգային առևտրի կարևորագույն կենտրոն: Կաֆայեցի վաճառականները, ծովային ու ցամաքային ճանապարհներով, տնտեսական սերտ կապեր ստեղծեցին մերձավոր ու հեռավոր շատ երկրների հետ: Առանց շափազանցության կարելի է ասել, որ սկսած XIII դ. վերջերից արևելյան ապրանքների հոսքը դեպի Եվրոպա մեծ շափով կատարվում էր Կաֆայի վրայով, և միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում Սև ծովը հաջողությամբ մրցում էր Միջերկրականի հետ<sup>59</sup>: Բացառիկ նշանակություն ուներ Կաֆան Ռուսաստանի և, մասնավորապես, Մոսկովյան մեծ իշխանության համար: Ռուսական բաժնետիրական իշխանությունների մեծագույն մասը ջենովական Կաֆայում էր անմիջական շփման մեջ մտնում կենտրոնական Եվրոպայի և Միջերկրածովյան ավազանի երկրների հետ:

Անշուշտ, իրավացի է ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, երբ գրում է. «Նովգորոդն ու Մոսկվան իրենց առևտրական ջանքերն ուղղում էին տարրեր կողմեր: Նովգորոդյան առևտուրը կողմնորոշված էր դեպի հյուսիս, իսկ մոսկով-

<sup>56</sup> Վենետիկի տիրապետության տակ անցան էպիրոսը, Ակարնանիան, էտոլիան, Հոնիական կղզիները, Պելոպոնեսը, Արխիպելագի հարավային և արևմտյան կղզիները, Գարդանելի նեղուցի և Մարմարայի ծովի մի շարք քաղաքներ, Թրակիայի քաղաքներից շատերը (Ադրիանապոլիս և այլն), Կ. Պոլսի արվարձան Պերան, Կրետե կղզին և այլն (տե՛ս Вернер Зомбарт. Современный капитализм, т. I, М., էջ 311):

<sup>57</sup> А. Л. Якобсон, Крым в средние века, М., 1973, էջ 79 և հտ.:

<sup>58</sup> Е. С. Зевакин и Н. А. Панчко, Եզվ. աշխ., էջ 75:

<sup>59</sup> «История стран зарубежной Азии в средние века», изд. «Наука», М., 1970,

յանը՝ դեպի հարավ: Նովգորոդը ապրանք էր մատակարարում դերմանական Հանդյան քաղաքներին, իսկ մոսկովյան առևտրական գործարքների մասնակիցները՝ իտալական հասարակապետություններն էին՝ Ջենովան և Վենետիկը»<sup>60</sup>:

1475 թ. Թուրքերը նվաճեցին Ղրիմը և հետագա տասնամյակների ընթացքում իրենց հսկողության տակ առան Սև ծովի ողջ ավազանը: Ղրիմի խանը դարձավ սուլթանի հսկողության տակ: Անցնելով Թուրքական տիրապետության տակ, ղրիմյան առևտրական մայրուղին կորցրեց իր նախկին նշանակությունը: Թուրքերը ոչ միայն Սև ծովից դուրս շարտեցին իտալացիներին, այլև ծանր հարված հասցրին Ռուսաստանի արտաքին առևտրին: Հետագայում, տասնամյակների մաքառումից հետո, կիսակործան Կաֆան սկսեց կենդանության նշաններ ցույց տալ: Կաֆայիցիների համառ ջանքերով հնարավոր եղավ մասամբ վերականգնել դարերի ընթացքում ամրապնդված անտեսական առևտրությունները՝ մեկ կողմից հյուսիսային Կովկասի, Իրանի և Թուրքիայի, մյուս կողմից՝ Ահաստանի և Ռուսաստանի հետ:

Միջնադարյան Ղրիմի տնտեսական նշանակության մասին հանրահայտ գիտելիքների համառոտ այս շարադրանքից հետո՝ անհրաժեշտություն է առաջանում թուրքիկ մի ակնարկով վերաշարադրելու ղրիմահայության պատմության մասին գիտությունը հայտնի փաստերը, բայց հնարավորի սրտը լրացումներ ու ճշգրտումներ կատարելով: Բայց մինչև այդ հարկ ենք համարում մեր վերաբերմունքը ճշգրտել ղրիմահայության պատմության կարևորագույն սկզբնաղբյուր համարված Հիշատակարանի նկատմամբ: Այն գրանցված է 1690 թ. Ղրիմում ընդօրինակված մի Հայամավուրթի մեջ<sup>61</sup>: Հայագիտական շրջաններին Հիշատակարանի բովանդակությունը հայտնի է եղել XVIII դ. վերջերից, բայց այն՝ գրեթե ամբողջությամբ, գիտական շրջանառության մեջ է դրվել Մ. Բժշկյանի կողմից՝ 1830 թ.<sup>62</sup>:

Այդ Հիշատակարանի հիմնական աղբյուրը՝ XVII դ. անվանի բանաստեղծ ու եկեղեցական գործիչ Մարտիրոս Ղրիմեցու շափածո Պատմությունն է, որ հենց հեղինակի ուղղակի վկայությամբ՝ հորինված է բանավոր գրույցների հիման վրա.

Քանզի պատմագրաց շունիմք նախնական  
Գրեալ վասն նորին պարզ և յայտնի բան,

60 М. Н. Тихомиров. Средневековая Москва... էջ 136:

61 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7442, էջ 280ա—283ա:

62 Տե՛ս Մ. Բժշկյան, Ըանապարհորդութիւն ի Ահաստան եւ այլ կողմանս բնակեալս ի հայազանց, սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք, Վենետիկ, 1830, էջ 335—342: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ իր աշխատության խորագիրը Մ. Բժշկյանը կաղմել է հավատ ընծայելով Հիշատակարանի այն վկայությանը, որի համաձայն Ղրիմի, Ահաստանի և շատ այլ երկրների հայկական գաղթօջախների բնակչությունը սերունդն է հանդիսանում Անի մայրաքաղաքից արտագաղթած հայերի: Բնականաբար, բոլորովին այլ հարցերի նվիրված այս ուսումնասիրության մեջ, մենք անկարող ենք հանգամանորեն անդրադառնալ այդ գրվածքի բոլոր մասերին: Մեզ համար կարևոր է պարզել, թե որոնք են նրա աղբյուրները և թե որչափ են նրանք արժանահավատ: Հիշատակարանի ամբողջական հրատարակությունն իրականացրել է Գյուտ Աղանյանցը. տե՛ս «Դիվան Հայոց պատմության», գիրք Թ, Թիֆլիս, 1911, սյուն. 489—496:

Այլ անդիր գրուցաց՝ յարմար և սլատկան  
Առեալ՝ կամիմ լինել նորա պատմարան<sup>63</sup>։

Մարտիրոս Ղրիմեցին «անդիր գրուցներին» հետամուտ է եղել XVII դ. երկրորդ հիսնամյակում (հավանաբար 70-ական թթ.), այսինքն՝ պատմական մի ժամանակաշրջանում, երբ Ղրիմի հայկական գաղթօջախները բոլորել էին իրենց պատմական գոյությունն առնվազն շորրորդ շրջափուլը<sup>64</sup>։

Տնտեսական ու քաղաքական բազմապիսի ազդակների (աշխարհավեր պատերազմներ, ծանր հարկապահանջություն, միջադաշին ապրանքափոխանակության ուղիների փոփոխություն և այլն) հետևանքով, ինչպես Ղրիմում, այնպես էլ այլ երկրներում հաստատված հայկական գաղթավայրերը ոչ միայն ապրում էին տնտեսական աշխուժացման և փլուզման միմյանց հաջորդող շրջաններ, այլև փոխում էին իրենց բնակչության կազմը. գաղթօջախների հին բնակիչները (մանավանդ տնտեսական մեծ կարողություն ունեցող վաճառականները) տնտեսական գործունեության ավելի բարենպաստ պայմաններ գտնելու հույսով, զանգվածաբար արտագաղթում էին այլ երկրներ։ Ղրիմի հայկական գաղթին այսպիսով, ինչպես վկայում են շատ ազբյուրներ, շարունակաբար գրկվել է իր նախկին բնակիչներից, որոնք արտագաղթել են այլ երկրներ, ստեղծելով հայկական նոր գաղթօջախներ (Լվով, Կամեննեց-Պոդոլսկ և այլն)։ Հին բնակիչների տեղը, հետագայում, գրավել են տնտեսական ու քաղաքական զարհուրելի պայմանների հետևանքով իրենց հայրենի տները լքած նոր գաղթականներ, որոնք ինչ-որ չափով շենացրել են Ղրիմի անշքացած հայկական բնակավայրերը, հայկական թարմ շունչ հաղորդելով նրանց։ Հասկանալի է, որ այդ փոփոխությունների հետևանքով խամրում էին պատմական հիշատակները, մոռացվում պատմական դեպքերի հաջորդական օղակներից շատերը, գունազարդվում շատ եղելություններ։ Այս բոլորից հետո գծվար չէ համոզվել այն բանում, որ XVII դ. երկրորդ կեսերին զրիմահայերի միջավայրում պատմվող «անդիր գրուցները» հավաստի շինանյութ չէին կարող լինել ստույգ պատմություն կերտելու համար։

Եվ այսպես, ձեռքի տակ շունենալով պատմական ստույգ ազբյուրներ, և հավատ քնծալելով զրիմահայության որոշ շրջաններում տարածված դրուցներին, Մարտիրոս Ղրիմեցին հանգել է այն եզրակացության, որ զրիմահայության հիմնական զանգվածն Անի մայրաքաղաքից է արտագաղթել Ղրիմի թերակղզի ու հաստատվել Կաֆա քաղաքում 1331 թ.՝ մինչև այդ երկար

63 Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 143։

64 Ղրիմահայ գաղթօջախների պատմությունը կարելի է բաժանել չորս հիմնական շրջափուլերի. ա) Բագրատունյանց շրջան. այս շրջանում ստեղծված տնտեսական կապերը Ղրիմի թերակղզու հետ խզվում են, և հայկական գաղթօջախները խամրում են սելջուկյան արշավանքների ու տիրապետության առաջին շրջանում։ բ) Կրկին աշխուժանում են XII դ. վերջերին և XIII-ի սկզբներին, երբ պատմական Հայաստանի մի զգալի մասն ազատագրվում է սելջուկյան լծից։ գ) նոր թափ են ստանում Իլխանության շրջանում, երբ Զենոբյայի ու Վենետիկի առևտրական կապիտալի ջանքերով՝ Ան ծովը առաջնային նշանակություն է ստանում՝ միջադաշին չափանիշներով։ դ) Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի և Կաֆայի նվաճումը ծանր հարված է հասցնում Ղրիմի առևտրական կենտրոններին։ Մի քանի տասնամյակ հետո միայն Կաֆան ուշքի է գալիս, վերականգնվում են նրա տնտեսական աշխարհատարած կապերի մի մասը, սակայն քաղաքն այլևս երբեք չի հասնում իր նախկին բարգավաճ վիճակին։

ժամանակ ապրած լինելով Վոլգայի գետաբերանի մերձակայքում գտնվող Աղսարայ կոչված քաղաքում:

Չափածո այս գրվածքը Մարտիրոս Ղրիմեցուց մեկ-երկու տասնամյակ հետո (1690 թ.), ավելի ընդարձակելով, ճոխացնելով և պատմական հիշատակարանի ձև տալով, մուծել է Հայսամավուրբի մեջ Դավիթ Ղրիմեցի անունով մի գրիչ: Նրա պատկերացումով Անի մայրաքաղաքի բնակչությունը, մոնղոլների կողմից քաղաքը գրավվելուց հետո (այդ դեպքը կատարվել է 1236 թ.), ցրվել է աշխարհով մեկ. «Ոմանք գնացին ի Ճուղայ,— գրում է նա,— ոմանք ի Վան, և այլք ի Սիս. և այլք Ախսարայ եկին, հրաման առեալ ի թաթար խանէն բնակեցան անդ ոչ քաղում ժամանակս, որ էր զայս Չեֆ (1299) թուին»:

Անիի բնակչության արտագաղթի և Ջուղայում, Վանում, Սսում կամ պատմական Հայաստանի մի այլ կենտրոնում խարխիս նետելու մասին այս հայտարարությունը չի հաստատում XIII դ. մեր արժանահավատ սկզբնաղբյուրների՝ պատմագիրների և հիշատակարանների հաղորդած տվյալներով: Չեֆ (1299) թվականը աղաղակող անախրոնիզմի արգելու է: Եվ եթե դրան ավելացնենք նաև Աղսարայ քաղաքի գտնվելու վայրի մասին Մարտիրոս Ղրիմեցու և Հիշատակարանի հեղինակի պատկերացումների իրարամերձ բովանդակությունը (ըստ Մ. Ղրիմեցու Աղսարայը գտնվել է Վոլգայի գետաբերանում, իսկ ըստ Հիշատակարանի՝ «ի մէջ Հաշտարխանու և Ղաղանու»), ապա պարզ կլինի, որ երկու հեղինակներն էլ ո՛չ բավարար գիտելիքներ են ունեցել և ո՛չ էլ վստահելի նյութ՝ զրիմահայություն քիչ թե շատ հավաստի պատմություն շարադրելու համար:

Միանգամայն անհիմն ու հեքիաթային է նաև այդ դույզ աղբյուրների պնդումն այն մասին, որ Աղսարայում հաստատված հայերը («իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք»), պայման կապելով ջենովացիների իշխանի հետ, որ բնակվում էր «ի Ծոսնկհիսարին Ծէօտոսիու» Ղրիմ են փոխադրվում ճեղքելով հսկայական այդ տարածությունը՝ Աղսարայից մինչև Կաֆա, գինված պայքար մղելով թաթարների դեմ («վառեալք գինու, պատերազմելով ընդ թաթարացն, ճեղքեալ գան ի Ղոիմ»):

Ջենովացիների և հայերի բարգավաճ վիճակը և կարևոր դերը միջազգային առևտրի մեջ XIII—XV դդ., սերտորեն առնչված էր Ռսկե Հորդայի հետ ունեցած նրանց տնտեսական կապերի հետ: Թաթարների դեմ հայերի դիմված ընդհարումը XIV դ. 30-ական թթ. բացառված է, քանի որ հայերը Կաֆայում և Ղրիմի մյուս կենտրոններում բնակություն էին հաստատում հաշվի առնելով հենց այդ կենտրոնների դերը միջազգային առևտրի մեջ, իսկ այդ առևտուրը չէր կարող բարգավաճել առանց Ռսկե Հորդայի վրայով անցնող առևտրական մայրուղիների:

Նկատի ունենալով այս և մի շարք այլ փաստեր, կարելի է եզրակացնել, որ Հիշատակարանի հիման վրա անհնարին է ճիշտ պատկերացում կազմել միջնադարյան հայկական ամենախոշոր ու նշանակալից գաղթօջախի՝ Ղրիմի հայոց պատմության հանգամանքների մասին:

Մարտիրոս Ղրիմեցու Պատմության և Հիշատակարանի մեջ շատ մեծ տեղ է հատկացված XVII դ. երկրորդ կեսերին զրիմահայ գաղութում տնտեսական զիրքով ու փարթամությամբ հռչակված մեծահարուստ ընտանիքների ծագման հարցերին: Այդ հեղինակները, նույնիսկ տարրական գիտելիքներ

շունենալով միջնադարյան Հայաստանի ֆեոդալական տների ծննդաբանության և պատմական աշխարհագրության վերաբերյալ, ազնվական ծագում են վերագրել Պատմության պատվիրատուներին, մեկ հարվածով նրանց շաղկապելով միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր իշխանական տների հետ: Զավեշտական երանգ ունեն Հիշատակարանի այն տողերը, որոնք կոչված են բացահայտելու Բագրատունիների և Պահլավունիների հետ շաղկապվել հրազոդ Աբրահամի որդի Տրդատի գերդաստանի տոհմաբանական շղթայի հին օղակները:

Հիշատակարանի հեղինակը տեղեկություն ունի, որ նրա նախնիները 1602 թ. Զալալիների խժոժությունների հետևանքով Ղրիմ են ներգաղթել Պարսից աշխարհից: Սրանց ազնվական ծագումը «հաստատելու» համար հարկ է եղել վերաբարձել ունիթոուների երգվյալ հակառակորդ Մազաբիա Ղրիմեցու հիշատակը, նրա հետ Ղրիմից դեպի Հայաստան առաքել նրա ազգականներից մեկին («պապու եղբոր որդուն»), որպեսզի սա, ինչ-որ հրաշքով, առնչվի Սյունյաց ոմն իշխան Իվանեի հետ, լինի նաև Աղթամարում և Նախիջևանում, սերունդներ ունենա, որոնցից սերված Աբրահամը կրկին վերադառնա Ղրիմ, Բագրատունի-Պահլավունի նորածիլ գերդաստանի հիմնադիրը հանդիսանալու համար<sup>65</sup>:

Ի՞նչ բանի համար է ստեղծված այս հերթաթիվ: Այս հարցի պատասխանը դյուրություն չէ, երբ հաշվի ենք առնում, որ «ազնվական» այս գերդաստանի բարեհիշատակ շառավիղ Տրդատ «Պահլավունին», իր բրոշ՝ Աննայի հետ միասին կառուցել է տվել Կաֆայի Ս. Նիկողայոս եկեղեցին, հանդիսացել է միաժամանակ այն անձնավորությունը, որի պատվերով Հիշատակարանի վերջում տեղադրվել է նրա իսկ ցանկությամբ կազմված աղգաբանական ծառը, և հրահանգ է տրվել գալիք սերունդներին՝ աճեցնել ծառի ճյուղերը հետագա ժառանգների անուններով<sup>66</sup>:

Ըստ այդմ Բագրատունի և Պահլավունի կոչվել ցանկացող Տրդատ Կաֆայեցու և նրա նախնիների հիշատակը հավերժացնելու անսրող մտահոգությամբ ստեղծված Պատմությունն ու Հիշատակարանը շին կարող համարվել արժանահավատ այնպիսի աղբյուրներ, որոնց հիման վրա կարելի լիներ շարադրել զրիմահայ գաղթօջախների ստույգ պատմությունը: Հանգելով այս եզրակացությանը, մենք բնավ էլ այն կարծիքին չենք, թե նրանց մեջ դույզն

65 Մեջ ենք բերում Հիշատակարանի այդ հատվածն ամբողջությամբ: «Տէր Մազաբիայն ընդ պապու եղբոր թոռոյն Պետրոսի ելեալ ի Ղրիմոյ գնացին ի յԱղթամարայ (այսպէս — և. ե.) առ Յօհաննէս վարդապետն, որ էր պապու եղբոր որդի տէր Մազաբիային և եղբայր Պետրոսի՝ հօրն Անանիային, որք էին որդիք Իվանայ, ի տօհմէ Պալհաւունեանց, ի գաւառէն Որոտնայ, ի քաղաքէն Վանանդու: Զի Պետրոսըս այս ծնաւ ի Նախիջևան քաղաքի գ՛Դաւիթ, Դաւիթ զՍեղրակ, Սեղրակ զՄարգար. Մարգար զՍակի, Սակի զԱբրահամ...» և այլն (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7442, էջ 282բ): Այս տողերի հեղինակը պարզ երևում է, որ Թովմա Մեծոփեցոց և Հայսմավուրբից բացի ուրիշ «աղբյուր» չի ունեցել: Տարբեր աղբյուրներով այնտեղ պատմված առանձին դրվագներ (Մազաբիա Ղրիմեցու Հայաստան գալը, Իվանե Օրբելյանի հետ կապված անցուղարձեբը և այլն) շաղկապելով միմյանց, նա «ստեղծել» է իրենից ակնկալվող տոհմաբանական ծառը, ճիշտ այն հիմունքներով, ինչպես դրանք ուշ միջնադարում ստեղծվում էին ամենուրեք:

66 Այս մասին դեռևս մեր դարի առաջին թվականներին հետաքրքրական ու ճիշտ դատողություններ է արել Երվանդ Շահազիզը (տե՛ս «Նոր-Նախիջևանը և նոր-Նախիջևանցիք», Թիֆլիս, 1903, էջ 26—27):



խակ շափով շկան պատմական անցուդարձերի իրական հիշատակներ: Հավատացած ենք, օրինակ, որ զրիմահայերը իրենց շաղկապել են Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի հետ ոչ միայն փառավոր անցյալով պնդելու համար, այլև հենվելով պատմական հիմք ունեցող որոշ իրողություն վրա: Անիի մեծահարուստ վաճառականներն էին առաջին հերթին (Արծնի, Կարսի և հայկական այլ քաղաքների վաճառականների հետ միասին), որ գործարար կապեր հաստատեցին Ղրիմի ծովափնյա քաղաքների հետ, նրանցից շատերում ստեղծեցին հենակետեր, պահեստներ ու մշտական կայաններ, որոնք հետագայում դարձան կենսունակ գաղթօջախներ<sup>67</sup>:

Պատմական ենթահող է նկատվում նաև XIV դ. 30-ական թթ. Աղսարայ քաղաքից մեծ թվով հայերի դեպի Կաֆա և Ղրիմի այլ քաղաքներ կատարած գանդավածային ներգաղթի զրույցի մեջ: Մարտիրոս Ղրիմեցու կարծիքով Աղսարայը Ոսկե Հորդանյի հին մայրաքաղաք Սարայ-Բաթուն է: Իսկ ինչպես գիտենք, 1330-ական թվականներին էր հենց, որ գաղաքից գոյություն ունենալուց Սարայ-Բաթուն, նշանավոր այն քաղաքը, ուր ապրում էին մեծ բանակություններ հայեր, ունենալով իրենց եկեղեցին (գուցե՝ եկեղեցիները) և թեմական առաջնորդը: Սարայ-Բաթուի անկման և Կաֆայի ծաղկման թվականների զարմանալի համընկնումները դժվար կլինի պատահականության արդյունք համարել: Ըստ այդմ զրիմահայերի միջավայրում գոյություն ունեցող անդիր զրույցներից քաղված տվյալը 1330 (կամ 1331 կամ 1340) թվականին Աղսարայից Ղրիմ կատարված մեծ ներգաղթի մասին՝ որոշակի արժեք է ներկայացնում. ոչ այն առումով, որ զրիմահայ գաղթօջախներն ստեղծվել են հենց այդ ներգաղթի հետևանքով (ինչպես կարծել են շատերը), այլ այն լուսաբանությամբ, թե այդ տարիներին, իրոք, Ղրիմի քաղաքներում բնակություն են հաստատել վոլգայի գետաբերանից գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ, որոնք նոր շունչ են հաղորդել վաղ ժամանակներից գոյություն ունեցող զրիմահայ գաղթօջախներին:

Այսպիսով պարզ է դառնում, որ վաղուց ի վեր գիտական շրջանառության մեջ դրված Հիշատակարանը (Մարտիրոս Ղրիմեցու շափածո Պատմության հետ միասին) ուշադրության արժանի խիստ անբավարար տեղեկություններ է պարունակում ի նպաստ զրիմահայ գաղթօջախների ստեղծման ժամանակագրական հարցերի և վաղ շրջանի պատմության ուսումնասիրության: Այդ

67 Այս առիթով ընթերցողների ուշադրություն ենք հրավիրում մի փաստի վրա, որը համոզիչ համարվելով կարող է լրացուցիչ կուլան դառնալ Անիի և Ղրիմի միջև XIII դ. և նրանից առաջ գործարար տնտեսական կապերի առկայությունը հաստատելու համար: XIII դ. սկզբներին Անի քաղաքում տնտեսական բացառիկ դիրքի էին հասել Հոնենց կոշվոզ գերդաստանի անդամները, հատկապես Սմբատորենց Սուլեմայի որդի Տիգրան Հոնենցը, որը հսկայական հարստություններ էր դիզել՝ զբաղվելով առևտրական ու վաշխառուական բնորոշ գործարքներով: Նրա գործունեության մասին հետաքրքրական տեղեկություններ են գրանցված իր իսկ կողմից Անիում կառուցված եկեղեցու պատին փորագրված բնորոշ արձանագրության մեջ (տե՛ս «Իիվան հայ վիմագրության», սրբակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 63): Միջնադարյան հայկական շատ աղբյուրներում (հատկապես ձեռագրական հիշատակարանների մեջ) Ղրիմի արևելյան ծովափը կոչվում էր Հոնաց աշխարհ. հաշվի առնելով այդ իրողությունը, կարելի է հետևել, որ Հոնենց գերդաստանի անունն առնչվում է հենց Հոնաց աշխարհի հետ: Նրանք, ըստ երևույթին, տնտեսական սերտ կապեր են ունեցել առաջին հերթին Հոնաց աշխարհի (Ղրիմի) հետ, կամ էլ Անիում բնակություն են հաստատել՝ մինչ այդ ապրած լինելով Ղրիմում:

բացը վերացնելու համար այլ կարգի սկզբնաղբյուրների կարիք է զգացվում: Բարեբախտաբար, այդպիսի ստույգ աղբյուրներ՝ դիվանական փաստաթղթեր (նկատի ունենք հատկապես Զենովայի արխիվներում պահպանված նյութերը), ձեռագրական հիշատակարաններ, ժամանակագրական տվյալներ և այլն՝ գոյություն ունեն բավարար քանակությամբ, և դրանց ժողովման, դասդասման ու մասնագիտական քննարկման գծով տարվող աշխատանքները նոր են միայն լայն ծավալ ստանում:

Հայկական հիշատակների անբավ շտեմարան է հանդիսանում նաև Ղրիմի թերակղզին՝ վերգետնյա ու ստորգետնյա իր հուշարձաններով: Զեռնարկելով դրանց համակողմանի ուսումնասիրությանը, ղրիմահայ գաղթօջախների պատմության հարցերը քննարկող մասնագետները կարողացել են ամբողջական պատկերն ուրվագծել եվրոպական որոշ աղբյուրներում «Մովսիսի Հայաստան» կոչված այդ թերակղզու հայկական գաղթօջախների պատմության<sup>68</sup>:

Ստորև փորձելու ենք համառոտակի վերաշարադրել այդ պատմության հիմնական դրվագները, կատարելով որոշ ճշգրտումներ ու լրացումներ:

\* \* \*

IX—X դդ. հայ ժողովուրդը, Բագրատունիների գլխավորությամբ տեղական և համառ սլաշքար մղելով արաբական բռնատիրության դեմ, թոթափեց օտար տիրապետության դարավոր լուծը և մտավ սոցիալ-քաղաքական ու տնտեսական բարգավաճման ընթացքի մեջ: «Շնորհիվ միջազգային առևտրի գլխավոր ճանապարհներից մեկի վրա ունեցած իր դիրքի,— դրել է ակադ. Հ. Մանանդյանը,— Բագրատունյաց Հայաստանը... դառել էր իդեալական շեղք երկիր տարանցիկ առևտրի և միջազգային հարաբերությունների համար»<sup>69</sup>:

Հեռավոր արևելյան երկրներից ցամաքային ու ծովային ճանապարհներով Պարսկաստան ներմուծվող և այդտեղից Հայաստանի վրայով դեպի Բյուզանդիա ու եվրոպական երկրներ արտահանվող ապրանքները (հում մետաքս, մետաքսե ոսկեհուռ գործվածքներ, համեմունք, բուրումնավետ նյութեր, թանկագին քարեր և այլն), ինչպես նաև հենց Հայաստանի քաղաքներում (մասնավորապես Գվինում և Անիում) արտադրվող ապրանքներ (գորգեր, բրդե զգեստներ, օթոցներ, ժանյակներ, գոտիներ, մետաքսե գործվածքներ, արծաթագործության և ոսկերչության արտադրանք, բարձրորակ ներկեր

68 Նկատի ունենք հատկապես Խ. Փորթոյանին և Վ. Միքայելյանին, որոնց արժեքավոր ուսումնասիրությունները բազմիցս վկայակոչելու ենք հաջորդ էջերում:

69 Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, 2-ое изд., Ереван, 1954, էջ 203: Հ. Մանանդյանը վկայակոչում է Վ. Գուրկո-Կրյաժնին, որը նույնպես շեշտել է Հայաստանի բացառիկ նշանակությունն այդ շրջանում՝ «իրրև միակ տարանցիկ ճանապարհ, երկու կողմից կողմերի (իմա՝ Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայի—Լ. Խ.) առևտրական հարաբերությունների համար» (տե՛ս В. Гурко-Кряжин. Прошлое и настоящее Советской Армении. «Новый Восток», кн. 16—17, 1927, էջ 206):

և այլն)<sup>70</sup>, Հայաստանով անցնող կարավանային ճանապարհներով<sup>71</sup>, մեծ մասամբ հենց հայ վաճառականների ջանքերով, հասցվում էին Սև ծովի հարավ-արևելյան նավահանգիստները, այնուհետև դեպի Կոստանդնուպոլիս, դեպի Գանուրի գետաբերան ու դեպի Ղրիմ:

Միջազգային առևտրի մեջ ներգրավված հայկական քաղաքների տնտեսական զարգացման ու հեռավոր երկրների հետ հաստատված կապերի մասին բավարար տեղեկություններ չեն պահպանվել: Ուշագրավ են հատկապես Արիստակնս Լաստիվերցու տվյալները Անի, Կարս և Արծն «հոյակապ», «ականավոր» ու «տիզերահոշակ» քաղաքների մասին, որոնք «ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»՝ փարթամացել էին «բազում բնչեղութեամբ» և մեծ հոշակ ձեռք բերել ամբողջ աշխարհում<sup>72</sup>:

Ղրիմը, անտարակույս, այն երկրամասն էր, ուր ամենից շատ էին այցելում հայ վաճառականները: Հնադիտական շատ նյութեր, որ հայտնաբերվել են Ղրիմի տարբեր վայրերում (հատկապես Խերսոնեսում), հայկական մշակույթի անվիճելի ազդեցության հետքեր են կրում՝ վկայելով հայ տարրի գոյությունն այդ երկրամասում տակավին IX—XII դդ.<sup>73</sup>: Այդ իրողությունը հաստատող գրավոր աղբյուրները, սակայն, XIII դ. երկրորդ հիսնամյակից

70 Հայաստանի քաղաքներում արտադրվող ու հեռավոր երկրներ արտահանվող ապրանքների տեսակների ու բարձր որակի մասին բազմաթիվ տեղեկություններ են գրանցված արաբական (ալ-Իսթախրի, իրն-Հաուկալ, ալ-Մուկադդասի և այլն) և պարսկական (Հուզուդ ալ-Ալամ) աղբյուրներում: Դրանց մեծագույն մասը գիտական շրջանառության մեջ է դրել Ն. Լ. Կարաուլովը: Տե՛ս Н. А. Караулов. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX (Тифлис, 1901), вып. XXXI (1902), вып. XXXVIII (1903). Այս նյութերը լայնորեն օգտագործվել ու մեկնարանվել են Հ. Մանանդյանի, Բ. Առաքելյանի և այլոց աշխատություններում:

71 Այդ ճանապարհի ակունքները գտնվում էին հեռավոր արևելյան երկրներում՝ Զինաստանում, Հնդկաշինում, Հնդկաստանում, Արաբական և Աֆրիկյան երկրամասերում: Մովսիսի ճանապարհներով այդ երկրների արտադրանքը հասցվում էր Պարսից ծոցի Բասրա նավահանգիստը, իսկ այդտեղից՝ դեպի Բաղդադ ու Քավրիդ (Փ. И. Успенский, Морское и сухопутное движение из центральной Азии в Европу и обратно в XIII—XIV вв. «Византийский временник», т. II (XXVII), էջ 271 և հտ.):

Քավրիդից Հայաստան էր մտնում բանուկ այն ճանապարհը, որ հայկական Մարանդ քաղաքում բաժանվում էր երկու ճյուղի: Մեկ ճյուղն անցնում էր Նախճավան—Գվին—Անի գծով, ուղղություն վերցնում Կարսի և Արտանուշի վրայով դեպի Ճորոխի գետաբերանը կամ էլ Կաղզրվանի, Վաղարշակերտի, Արծնի ու Բարերդի (ինչպես նաև Կարինի ու Երզնկայի) վրայով՝ դեպի Տրապիզոն: Մյուս ուղեգիծը Մարանդից՝ Հերի (Խոյ) վրայով մտնում էր Վասպուրական, անցնում Վան, Բերկրի, Արճեշ քաղաքներով և Վաղարշակերտում միանում Նախորդ ուղեգծին: Կարևոր նշանակություն ունեւր նաև Բաղդադից սկիզբ առնող այն ճանապարհը, որ Մերզինի ուղեգծով մտնում էր պատմական Հայաստանի հարավային շրջանները, անցնում հիմնականում հայ բնակչություն ունեցող Ամիդ—Խարբերդ—Մելիտինե—Սերաստիա—Նվդակիա (Քոխաթ)—Ամասիա քաղաքներով և կապվում էր Սև ծովի Սամսոն և Մինոպ նավահանգիստներին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն, 3-րդ հատորի (Երևան, 1976) մեջ տեղադրված «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» շատ արժեքավոր քարտեզը):

72 Հմմտ. «Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցու», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 74, 75, 83, 133 և այլն: Ուշագրավ է նաև բյուզանդական պատմագիր Միրայել Ատտալիատեսի վկայությունն Արծն քաղաքի մասին, ըստ որի այնտեղ վաճառվում էին Պարսկաստանից, Հնդկաստանից և Ասիական այլ երկրներից ներմուծվող ապրանքներ (Я. А. Манандян, նշվ. աշխ., էջ 215—216):

73 А. П. Яковсон, նշվ. աշխ., էջ 86—103:

են սկսում բազմանալ, կապված լինելով ջենովական արխիվներում պահպանված նյութերի հետ:

Ե՛րբ են հայերը հաստատվել Ղրիմում. այս հարցը հուզել է շատ ուսումնասիրողների: Դեռևս անցյալ դարի 80-ական թթ. Ֆ. Բրունը, քննարկելով հարցին առնչվող սկզբնաղբյուրները, հանգել է այն եզրակացության, որ այդ կատարվել է ջենովացիների ու թաթարների Ղրիմում հաստատվելուց շատ առաջ<sup>74</sup>:

Ավելի հանգամանորեն հարցի գիտական քննությամբ զբաղվել է Խ. Փորբշևյանը: Ջենովայի սուրբ Գևորգ բանկի արխիվում պահվում են 1290, 1313 և այլ թվականներին շարադրված փաստաթղթեր, որոնց մեջ հիշատակություններ կան Կաֆայի հայոց եպիսկոպոսին պատկանող ջրմուղի մասին: 1316 թ. Կաֆայի ջենովական հյուպատոսին հասցեագրված մի գրության մեջ հրահանգված է հեռու մնալ քաղաքի այն հողամասից, որի վրա գտնվում են երեք հայկական եկեղեցիներ, երկուսը՝ գործող, մեկը՝ կիսակործան: 1281—1290 թթ. գրանցված առևտրական մի շարք պայմանագրեր անհերքելիորեն հաստատում են, որ հայերը մեծ դեր են կատարել Ղրիմի տնտեսական կյանքի տարրեր ուղղորտներում: Նրանց մեջ տարրեր առիթներով հանվանե հիշատակված են կաֆայեցի բազմաթիվ հայեր. Տրապիզոն ցորեն փոխադրելու համար նաև վարձողներ, Սիրիա դրամ փոխադրողներ, Սինոպ ապրանք առաքողներ, իրենց արհեստի արտադրանքը վաճառքի հանողներ և այլն:

Մեջ բերելով այս կարգի ծանրակշիռ այլ փաստեր ևս, Խ. Փորբշևյանը վերջնականորեն ապացուցել է, որ հայերը Ղրիմում (մասնավորապես նրա արևելյան ծովափերին) հաստատվել և կարևոր դեր են ստանձնել՝ ջենովացիներից շատ առաջ<sup>75</sup>: 1316 թ. Կաֆայում կիսակործան հայկական եկեղեցու գոյության փաստն ինքնին զորավոր ապացույց է այդտեղ կազմակերպորեն ձևավորված հայկական դադութի առկայության՝ այդ տարեթվից առնվազն 2—3 հարյուրամյակ առաջ (հայկական քարաշեն տաճարները շատ ավելի երկար ժամանակ էին կանգուն մնում):

Ղրիմի հայկական գաղթօջախների ժամանակագրական հարցերին անդրադարձել է նաև Վ. Միրայելյանը<sup>76</sup>:

Ղրիմի հայկական գաղթօջախներից շատերը և հատկապես Կաֆան ու Սուրխաթը եղել են հայ գրչության ու մանրանկարչության նշանավոր կենտրոններ<sup>77</sup>: Նրանցում քնդորինակված հայերեն ձեռագրերից շատերը պահպանվել ու հասել են մեզ՝ փառահեղ վկաները. հանդիսանալով հայկական գաղթօջախների բնակչության գեղագիտական բարձր ճաշակի ու գրասիրության: Ժամանակագրական առումով դրանք շատ հին չեն. Ղրիմում ստեղծված և մեզ

74 Փ. Брун. Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 137 և հտ.:

75 Խ. Ա. Փորբշևյան, Ե՛րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 104—117: Հարկ է նշել, որ հանձինս Խ. Փորբշևյանի մենք ունեցել ենք հայ գաղթավայրերի (ղրիմահայության, շերքեզահայության, նոր-նախիշևանի հայության) պատմության հարցերի հմուտ ու խորազնին մի ուսումնասիրող, որի վաստակն ըստ արժանվույն չի գնահատվել:

76 Վ. Ա. Միրայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 41—66 ևն:

77 «Ժ՛ դարի ...հիշատակարաններ» ժողովածուի մեջ տեղ են գտել Ղրիմի տարրեր վայրերում քնդորինակված 70-ից ավելի ձեռագրերի հիշատակարաններ, դրանցից 42-ը հաստատապես շարագրված են Սուրխաթում, 20-ը՝ Կաֆայում, մյուսները այլ բնակավայրերում ու վանքերում:

հայտնի հնագույն հայերեն ձեռագիրն ընդօրինակված է 1328 թ., XIV դ. 30-ական թթ. սլահավանվել են 2, 40-ական թվականներից՝ 6 ձեռագիր: Երբ ուշադրությամբ ծանոթանում ենք դրանց հիշատակարաններին, դարձյալ հանգում ենք այն եզրակացության, որ Ղրիմում հայկական գաղթօջախներ գոյություն են ունեցել XIV դ. շատ առաջ: 1328 թ. շարադրված հիշատակարանի մեջ, օրինակ, որպես Ղրիմի հայ արքեպիսկոպոս հիշատակված է Ստեփանոսը՝ եղբայրը սարոն Տուրաչի, որ անվանված է «վերադիտող Խրիմին»<sup>78</sup>: Մեկ ուրիշ հիշատակարանից տեղեկանում ենք, որ այս Ստեփանոսը որդին է Սուղդացի (Սուրոժցի) Գրիգոր քահանայի: 1320-ական թթ. արդեն եպիսկոպոս դարձած Ստեփանոսը անտարակույս ծնված սեռ է լինել դրանից առնվազն 30 տարի առաջ, ուստի XIII դ. վերջերին: Պարզ է, ուրեմն, որ այդ ժամանակ Սուղդայում (Սուրոժում) ապրել է ոմն Գրիգոր քահանա՝ հայրը սարոն Տուրաչի և Ստեփանոսի, այլ խոսքով՝ Կաֆայի և Սուրոժի հայկական գաղութների գոյությունը XIII դ. հաստատվում է նաև հայերեն հիշատակարանների տրվյալներով:

1334 թ. Կաֆայում շարադրված մի հիշատակարանի մեջ<sup>79</sup> թվարկված են մի քանի կաֆայացի հայեր, որոնք իրենց կարողության համեմատ նպաստել են մի ձեռագիր Հայսմավուրքի ընդօրինակության աշխատանքներին: Հատկապես նշանակալից է մանկավազ Կաղուրի հիշատակությունն այդ ձեռագրի մեջ. եթե վերհիշենք, որ մանկավազ կամ մանկավազ էին կոչվում հայկական միջնադարյան քաղաքների երիտասարդ առևտրականներին ու արհեստավորներին միավորող կազմակերպությունների՝ կտրիճվորաց եղբայրությունների ղեկավարները<sup>80</sup>, ապա սարգ կլինի, որ 1334 թվականին արդեն հայկական Կաֆան օժտված է եղել միջնադարյան հայկական քաղաքներին բնորոշ հասարակական կազմակերպություններով, ուստի որպես համայնք կազմակերպվել է XIV դ. 20-ական թթ. շատ առաջ:

Նույն այդ ձեռագրում, որի մեջ հիշված է մանկավազ Կաղուրը, տվյալ կա նաև Կաֆայի մերձակայքում գոյություն ունեցող Գամճակ (կամ Քամճակ) հայկական վանքի մասին, որի շրջակայքում կառուցվել է Աստվածածնի անվան մի նոր եկեղեցի: Վանական հաստատության առկայությունն իր հերթին այդ գաղթավայրի հնության, բազմամարդության և նյութական բարօրության պիտի վկայություն պիտի համարել:

Նույնը կարելի է ասել նաև Սուրխաթի մասին (հին հիշատակարանների քաղաքն ավելի շատ կոչված է Սուլխաթ կամ Ղրիմ): Մեծ հավանականությամբ այստեղ՝ XIV դ. 40-ական թթ. բազմավաստակ գրիշ նատերի կողմից ընդօրինակված է մի ճաշոց գիրք՝ բազմաթիվ մանր հիշատակագրություններով: Դրանց մեջ որպես գրքի ընդօրինակության գործին նյութապես օժանդակողներ հիշված են մի քանի տասնյակ քաղաքացիներ՝ տղամարդ ու կին, որոնցից շատերը ծանուցվել են իրենց մասնագիտությունը նշող անվանումներով: Ըստ այդմ սարգ է դառնում, որ այդ քաղաքում ապրել են հետևյալ արհեստի

78 «ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 208:

79 ՏԷՍ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենագրանին մխիթարանց ի վեներտիկ, Բ, 1924, էջ 511—512 (նաև «ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 265—266): Այդ ձեռագրի գրության թվականը որոշ չէ. կարող է լինել նաև 1305-ը:

80 Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը», «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 79—81:

տեր մարդիկ՝ կոշկակար, բազազ, ճոն, ջուլհակ, սկերիչ, ներկարար, դանկրար-դանակագործ, կտավագործ, քթանագործ, ապրեփեց, հուս (հյուան), թավկիր, դերձակ, դարբին, գինեծախ, սանրագործ, այգեպան (թվարկումն կատարում ենք բստ ձեռագրի համապատասխան գրանցումների հաջորդականության)<sup>81</sup>։ Այսպիսով, Սուրխաթի հայ գաղութում ապրել ու աշխատել են բազմապիսի արհեստների տեր անձինք, իսկ այդ կարող էր լինել գաղութի սկզբնավորումից առնվազն մի քանի տասնամյակ (եթե ոչ հարյուրամյակ) հետո։

Ղրիմահայ գաղթօջախների հնության վկայություններ են նաև վիճական բազմաթիվ այն արձանագրությունները, որոնք տակավին նախանցյալ դարի կեսերին պահպանված են եղել Կաֆայի և այլ բաղաբների հայկական եկեղեցիների պատերին, կամ խաչքարերի վրա (գրանցից մի քանի տասնյակ միավորներ կաֆացիներն իրենց հետ փոխադրել են Նոր Նախիչևան և երկյուղածությամբ օգտագործել նոր եկեղեցիների կառուցման ժամանակ)։

Որոշ ուսումնասիրողներ (նկատի ունենք հատկապես Խ. Քուչուկ-Հովհաննիսյանին), բավարար գիտելիքներ շունենալով հայ վիճագրությունից, հրատարակել են հայկական մի շարք վիճական արձանագրություններ, որոնցից շատերն ամենցել են ստույգ տարեթիվ։ Եթե դրանք ճիշտ վերծանված լինեն, մենք հնարավորություն կունենայինք այսօր խոսք բացելու նաև Կաֆայի հայ բնակչության մասին տակավին XI դ., բայց ինչպես ասված է արդեն<sup>82</sup>, վերծանումների զգալի մասը եղել է սխալ կամ հույժ կասկածելի։ Ըստ այդմ Ղրիմահայ վիճագրական նյութերի ուսումնասիրության արդի վիճակը թույլ չի տալիս դրանք ևս օգտագործելու ժամանակագրական հարցերի պարզաբանման համար։

Ղրիմի վերը հիշատակված վաճառաշահ կենտրոններում, ինչպես նաև այլ բաղաբներում (Խերսոնես, Մանգոսպ և այլն) XIII դ. առաջ հայ բնակչության առկայության մասին պատմագիտական գրականության մեջ արդեն հավաքված բոլոր տվյալների թվարկումով՝ մենք շատ պիտի հեռանայինք առաջադրված նպատակից։ Ժամանակագրական հարցերից ավելի կարևոր նշանակություն ունեն Ղրիմի նշանավոր տնտեսական կենտրոններում (հատկապես Կաֆայում) հայերի կատարած դերի, բնակչության թվական կազմում նրանց գրաված տեղի ճշգրտման հետ առնչվող հարցերը։

Բարեբախտաբար հարցերի այս փունջը լուսաբանող շատ փաստաթղթեր արդեն դրված են գիտական շրջանառության մեջ։ Կարևոր նշանակություն ունի այս առումով ջենովական հյուպատոսին առնթքեր գործող խորհրդի 1455 թ. մի արձանագրությունը, որի մեջ ուղղակի ասված է, որ Ղրիմը «մեծ մասով բնակեցված է հայերով, որոնք հանդիսանում են մեր (այսինքն՝ ջենովացիների—Լ. Խ.) հավատարիմ վաճառականները»<sup>83</sup>։ Մի այլ փաստաթղթի համաձայն, թուրքերի կողմից բաղաբի գրավման նախօրեին Կաֆան ունեցել

<sup>81</sup> «ժ՛՛ գարի... հիշատակարաններ», էջ 359—367։

<sup>82</sup> И. А. Орбели. Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями. «Избранные труды», Ереван, 1963, էջ 214։

<sup>83</sup> Е. С. Зевакин и Н. А. Пенчко, նշվ. աշխ., «Исторические записки», 1938, № 3, էջ 127. Հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մարտի պատմության, Բ, Երևան, էջ 431։

է 70 հազար բնակիչ, որի երկու-երրորդը (այսինքն 46 հազարը)՝ հայեր<sup>84</sup>, նույնն են հաստատում նաև թուրքական տվյալները (70 հազարից 65 տոկոսը՝ հայ)<sup>85</sup>:

Այսպիսի ճշգրիտ տվյալներ մյուս քաղաքների վերաբերյալ չեն պահպանվել, բայց ըստ որոշ հետազոտությունների, հայերը մեծամասնություն են կազմել նաև Սուրխաթ և Սուրոժ քաղաքներում<sup>86</sup>: Եվ եթե, այնուամենայնիվ, հետազայում պարզվի, որ տնտեսական որոշ կենտրոններում հայերից ավելի մեծ թիվ են կազմել թաթարները, հույները կամ այլ ազգության պատկանող բնակիչներ, անփոփոխ պետք է մնա այն հիմնական եզրակացությունը, թե տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում հայերը զրավել են առաջատար բնագծեր:

Այս առումով խիստ հետաքրքրական է Ղրիմի հարավային ծովափնյա քաղաքների տնտեսական պատմության հմուտ ուսումնասիրողներ Ե. Չևակինի ու Ն. Պենշկոյի տեսակետը. «Թաուլական սկզբնաղբյուրների հիման վրա Ղրիմի հարավային ծովափի միջնադարյան քաղաքների մասին նյութի մշակումը մեր կողմից թույլ է տալիս հաստատելու, որ գլխավոր դերը Ղրիմում, ըստ երևույթին կատարել է հայկական առևտրական բուրժուազիան: Սև ծովի ջինովական կենտրոն Կաֆայում հաստատապես հայերը կազմում էին քաղաքային բնակչության երկու-երրորդը, և հայ վաշխառուների ոչ մեծ խումբը (XV դ.)՝ իր ձեռքում էր պահում քաղաքի տնտեսական հանգույցները: Այս հանգամանքը նույնիսկ անհանգստություն է պատճառել ջինովական կառավարչությանը՝ Կաֆայում քաղաքական իշխանությունը պահպանելու առումով»<sup>87</sup>:

\* \* \*

Այստեղ անհրաժեշտություն է առաջանում մի հայացք նետել նաև Ղրիմի տնտեսական զարկերակներից մեկի՝ Քամանյան թերակղզու և Հյուսիսային Կովկասի արևմտյան շրջանների վրա, որոնք հնագույն ժամանակներից որոշակի դեր են կատարել Անդրկովկասյան երկրների և Ռուսաստանի միջև տնտեսական կապերի իրականացման բնագավառում:

Քամանյան թերակղզին դարեր շարունակ տնտեսապես եղել է Ղրիմի անբաժան մասը, քաղաքականապես ևս հաճախ շղկապված լինելով նրա հետ: Հնդկաստանից, Միջին Ասիայից, Իրանից և Անդրկովկասից դեպի Ղրիմ տանող ցամաքային ճանապարհները խաչավորվում էին Քամանում: Ընդամենը 4—15 կմ լայնություն ունեցող Կերչյան նեղուցը արդելք չէր հանդիսանում

<sup>84</sup> Vigna. Codice diplomatico, t. I, էջ 365 (տեղեկությունը քաղել ենք Վ. Միքայելյանի վերը նշված աշխատությունից):

<sup>85</sup> Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 102:

<sup>86</sup> Տես օրինակ Փ. Брун, Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 140: (հմմ. և. Փորքչեյան, նշվ. հոդվածը, էջ 109):

<sup>87</sup> «Разработка нами на основании итальянских первоисточников темы о средневековых городах южного берега Крыма позволяет установить, что главную роль в Крыму, по-видимому, играла армянская торговая буржуазия. По крайней мере, в генуэзском центре на Черном море—Каффе—армяне составляли 2/3 городского населения и небольшая кучка армян—ростовщиков (в XV в.) держала в своих руках экономические нити города; это даже вызвало опасения генуэзской администрации за политическое господство в Каффе» («Исторические записки», 1938, № 3, էջ 127):

արևելքից արևմուտք և հակառակ ուղղությամբ կատարվող միջազգային նշանակություն ունեցող ապրանքափոխանակության համար: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Քամանյան թերակղզին, իր հարևան շրջանների հետ միասին, երկար դարեր շարունակ կովախնձոր է հանդիսացել հյոսր պետությունների միջև: X դ. կեսերին լուրջ քայլեր կատարվեցին Քամանյան թերակղզին Կիևյան Ռուսիային ենթարկելու ուղղությամբ: Կիևի մեծ իշխան Սվյատոսլավ Իգորևիչը Դոնի գետաբերանում 965 թ. ջախջախիչ հարված հասցրեց խաղարներին, վոնդեց նրանց այդ վայրերից, այնուհետև շարժվելով դեպի հարավ, հարձակվեց խաղարներին ենթակա յասերի ու կոսոխների վրա և իր տիրապետության տակ առավ բնդարձակ մի երկրամաս, որը ձգվում էր մինչև Կովկասյան լեռնաշղթա: Ռազմական այս հաջողությունների հետևանքով X դ. 80-ական թթ. Քամանյան թերակղզում և նրան կից շրջաններում ստեղծվեց Տմուտարականի բաժնեկալվածային ուսական իշխանությունը, որը պահպանեց իր գոյությունը մեկ դարից ավելի՝ զգալի դեր կատարելով հին Ռուսիայի պատմության մեջ<sup>88</sup>:

Առատ տվյալներ՝ նորանվաճ ուսական այս երկրամասում հայ գաղթավայրերի գոյության և նրա տնտեսական կյանքում հայերի կատարած դերի մասին, ցավոք, չեն պահպանվել: Վաղուց ի վեր գիտական շրջանառության մեջ է դրված Գալիցիայի ուս իշխան Թեոդոր Դմիտրևիևիչի 1062 թ. մի հրովարտակր՝ ուղղված կոսոխացի հայերին (kosochackim Armenam), որով նրանք հրավիրվել են մշտական բնակության՝ Գալիցիա՝ երեք տարի հարկերից ազատ լինելու արտոնությամբ<sup>89</sup>: Բազմաթիվ փորձեր են եղել որոշելու, թե ում է հասցեագրված այդ հրավեր-հրովարտակր և արդյոք այն XI դ. հավաստի փաստաթուղթ է, թե՞ ստեղծվել է հետագա դարերում Գալիցիայի հայերի կողմից, իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով<sup>90</sup>:

Ում է հասցեագրված այդ հրովարտակր, այս հարցին տրված բազմաթիվ պատասխաններից ամենից հավանականը պետք է համարել Խ. Փորբշեյանի առաջադրած և բազմաթիվ փաստերով ու նկատառումներով հիմնավորված պատասխանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տմուտարականի բնակիչները բյուզանդական, ուսական և այլ հին աղբյուրներում կոչված են կասոխ կամ կոսոխ<sup>91</sup>, Խ. Փորբշեյանը հանգում է այն հավանական եզրակացության, որ ուս իշխան Թեոդոր Դմիտրևիևիչը Գալիցիա է հրավիրել հենց

<sup>88</sup> «Очерки истории СССР», т. I, 1953, էջ 400—406: Խ. Փորբշեյան, երբ և որտեղից են հայերը գաղթել Չերքեզիա, ՊՐԶ, 1959, № 2—3, էջ 235:

<sup>89</sup> Մ. Բժշկյան, Ճանապարհորդություն, էջ 85:

<sup>90</sup> Վերջերս այս տեսակետը հիմնավորելու մի անհաջող փորձ կատարեց ուկրաինահայ գաղթավայրերի վաստակավոր ուսումնասիրող Յա. Գաշկևիչը (տե՛ս նրա «Грамота Феодора Дмитриевича 1062 г.» հոդվածը, տպագրված հետևյալ պարբերականում. «Научно-информационный бюллетень Архивного управления УРСР», Киев, 1962 № 4, էջ 9—20): Հանգամանորեն քննարկելով Յա. Գաշկևիչի բոլոր առարկությունները, Վ. Միրայեկյանը «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» (Երևան, 1964, էջ 54—63) իր արժեքավոր մենագրության մեջ արդեն ցույց է տվել, որ բավարար հիմքեր չկան այդ հրովարտակր հետագա դարերի կեղծիք համարելու: Ընդհակառակը, հին ու հավաստի փաստաթուղթ լինելու մի շարք հատկանիշներ ունենալով՝ հրովարտակր արժանի է վստահության: Մենք բաժանում ենք այդ տեսակետը:

<sup>91</sup> Ըստ Խ. Փորբշեյանի՝ այդ անվանումը ալանական ծագում ունի. ալանների հետնորդ սերն այժմ էլ չերեզեզներին անվանում են «կաշեկներ»:



Տմուտարականի իշխանության սահմաններում բնակություն հաստատած և իրենց առևտրական գործարքներով ողջ հին Ռուսիայում հռչակված հայերին:

XI դ. վերջին տասնամյակներին Տմուտարականը դառնում է արյունալի բախումների թատերաբեմ, որի դիսավոր դերերը ստանձնում են ինչպես ուսական մրցակից իշխանները, այնպես էլ Բյուզանդական կայսրության պատական պաշտոնյաները: XII դ. այդ շրջանները գտնվում են Բյուզանդիայի տնտեսական ու քաղաքական ազդեցության ոլորտի մեջ, իսկ այնուհետև տեղական ցեղապետների իշխանության ներքո, որոնք ընդունել էին ղփչախների գերիշխանությունը:

XIII դ. երկրորդ հիսնամյակում Կաֆայում հաստատված ջենովացիներն աստիճանաբար իրենց ազդեցությունը տարածում են Ղրիմի թերակղզու արևելելյան ծովափնյա քաղաքների վրա, ապա ամուր հենակետեր ստեղծում Սև և Ազովի ծովերի Կովկասյան առափնյա շրջաններում: Դրանի դետաբերանից մինչև Սուխում ընկած տարածքի վրա, ըստ մի շարք հին քարտեզների, XIV դ. ընթացքում գոյություն են ունեցել 39 իտալական առևտրական հենակետեր: Դրանց մեջ բացառիկ նշանակություն ունեին հատկապես երկուսը՝ Մատրեզան և Կոսյան<sup>92</sup>:

Մատրեզան պատմական գրականության մեջ հայտնի է տարբեր անուններով՝ Մատրախա, Տամատարխա, Տմուտարական և այլն: Այն գտնվել է Կուրանի դետաբերաններից մեկում, որն այժմ գոյություն չունի: Նրա նավահանգրստում խարխախ էին նետում առևտրական խոշոր նավեր, որոնք Ազովի ծովի ծանծաղույթյան պատճառով անկարող էին հասնել Ազով: Մեծ էր նրա նշանակությունը ոչ միայն որպես միջազգային ապրանքափոխանակության հանգրվան, այլև որպես Հյուսիսային Կովկասի արևմտյան շրջանների տնտեսական կենտրոն: Շրջակա ցեղերն այստեղ աշխույժ փոխանակություն էին կատարում, իրենց արտադրանքը՝ ձուկ, ձկնկիթ, մեղր, մեղրամոմ, տարբեր տեսակի փայտանյութ (հատկապես՝ տոսախ)՝ փոխանակելով արևելյան և արևմտյան երկրներից ստացվող ապրանքների հետ: Ջենովացիները Մատրեզայում ունեին հյուպատոսարան և առևտրական հաստատություններ:

Իր նշանակությամբ երկրորդ տեղն էր գրավում Կոսյա (նաև Լակոպա, Կոսյարնո) կոչվող քաղաքը, որի տեղադրությունը տակավին չի որոշված: Այստեղ ևս եղել է ջենովական հյուպատոսարան, կառուցվել են եկեղեցիներ, գոյություն են ունեցել առևտրական գրասենյակներ, շափ ու կշռի կետեր և տոնավաճառ, որն սկսվել է ապրիլի վերջերին ու տևել մինչև մայիսի 15-ը: Կոսյայի վաճառականները մեծ քանակությամբ ձուկ և ձկնկիթ են արտահանել Կոստանդնուպոլիս: Տնտեսական որոշակի նշանակություն են ունեցել նաև Անապան, Գելինջիկը և այլ նավահանգիստներ:

Ջենովացիների ազդեցության ժամանակաշրջանում կարգի էին բերվել Հյուսիսային Կովկասով անցնող կարավանային ճանապարհները<sup>93</sup>: Կաֆա

<sup>92</sup> E. C. Зевакин и Н. А. Пенчко, նշվ. աշխ., էջ 78—86:

<sup>93</sup> Գլխավոր ճանապարհը Կուրանի աջ ափով ձգվում էր դեպի արևելք և Թերեքի ափերով հասնում մինչև Կասպից ծով: Կովկասյան լեռնականների հետ ստեղծված տնտեսական աշխույժ կապերին նպաստում էր Անապայից սկսվող ճանապարհը, որը Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսով անցնում էր դեպի արևելք և կտրելով Կուրանի լեռնային վտակները (Կեֆար, Մեծ Զելինջուկ, Մարտիսա, Թերեքա) հասնում մինչև գետի վերին հոսանքները, ապա Կուրաչայ:

քաղաքը միջազգային հռչակ էր ձեռք բերել ոչ միայն որպես անգերազանցելի նավահանգիստ, այլև կիզակետն էր դարձել բոլոր այն ճանապարհների, որոնցով հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդները Քամանյան թերակղզու վրայով հաղորդակցվում էին Ղրիմի, իսկ նրա միջնորդությամբ Ռուսաստանի և եվրոպական երկրների հետ:

Արդ, բուն նյութին անցնելով, նշենք, որ հյուսիս-արևմտյան Կովկասի վերոհիշյալ կենտրոններում և այդ կենտրոնները Անդրկովկասի ու Իրանի հետ շաղկապող ճանապարհների բոլոր հանգուցակետերում՝ հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները հենակետեր էին ստեղծել և տնտեսական աշխույժ գործունեություն ծավալել ջենովացիների բեմելից դարեր առաջ:

Հայկական աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ կան այդ մասին: XIX դ. սկզբներին եղել են ինչ-որ տվյալներ, որոնց հիման վրա Հովհաննես Ղրիմեցին գրել է այսպիսի տողեր. «...Այլ եւ աշխարհն Ափխազաց, եւ աշխարհն Եգերացոց, այսինքն Չէրքեզաց, ի նախկին ժամանակս, յորս էին հայր բաղումք ի հնումն, ըստ ակնարկելոյ պատմութեանց. եւ այժմ իսկ ի հիւսիսային ծագս այսորիկ աշխարհաց գտանին ոչ սակաւ տունք հայոց՝ ի հին ժամանակաց անտի մնացեալք»<sup>94</sup>:

Ցավով պետք է նշել, որ առ այսօր ծրագրված աշխատանք չի կատարված հնագույն այդ դաղթավայրերի հետքերը որոնելու ուղղությամբ: Սակայն պատահականորեն հայտնաբերված նյութերն իսկ հնամենի ու սերտ կապերի առկայության օգտին են վկայում:

Դեռևս անցյալ դարի վերջերին Մայկոպի շրջանում, Բելայա գետի ափին, Բելորեչենսկայա և Խանսկայա ստանիցաների մերձակայքում հայտնաբերվել էին քառանկյուն (9×5,7 մետր) հատակադիժ և կիսաշրջան արսիդ ունեցող բարակոփ մի եկեղեցու ավերակներ: Այդ եկեղեցու բարավորը, որ այժմ պահվում է Վրացական ՍՍՀ Պետական թանգարանում, կրում է անվարժ-ուռուցիկ տառերով փորագրված այսպիսի արձանագրություն. ԿԱՏԱՐԵՅԱԻ ԵԿԵՂԵՅԻՍ ՉԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾԻՍ ԽՐԸՄՊԷԻՆ ԿԱՑԱՅՈՒՆ<sup>95</sup>:

Այստեղ ճանապարհը բաժանվում էր երկու ուղղության. մեկը կտրելով Կովկասյան լեռնաշղթան, մտնում էր Անդրկովկաս, մյուսը՝ Թերեքի ափերով հասնում Կասպից ծով: Այս ճանապարհի հետքերը պահպանվել էին մինչև անցյալ դարի 60-ական թվականները (տե՛ս «Исторические записки», 1938, № 3, էջ 87—88):

<sup>94</sup> Յովհաննես Ղրիմեցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. նշանի, հրատարակեց Հ. Համադասյ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 92:

<sup>95</sup> Այս արձանագրության զարմանալի սխալ վերծանությունը տպագրել է դեռևս 1893 թ., հայ բանասիրության մեջ բազմաթիվ թյուրիմացությունների դուռ բացած Խ. Քուչուկ-Հովհաննիսյանը: Ըստ նրա՝ արձանագրությունը պետք է կարդալ այսպես. ԿԱՏԱՐԵՅԱԻ ԵԿԵՂԵՅԻՍ ՉԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾԻՍ Մ... ԲՊԷԻՆ. ՀԱՅՈՅ... ՈՒՆ, և պետք է թարգմանել այսպես. Церковь построена каменщиком (имя неразборчиво)... в 620 году армянской эры, т. е. в 1171 году (տե՛ս Խ. Կուչուկ-Иоаннесов. Христианская надпись XII столетия. «Материалы по археологии Кавказа, собранные экспедициями московского археологического общества», вып. III, М., 1893, էջ 106—109):

Արձանագրությունը փորագրված համարելով 1171 թ., Քուչուկ-Հովհաննիսյանը գիտական արժեքից զուրկ դատողություններ է արել հյուսիսային Կովկասի այդ շրջաններում հայկական եկեղեցու գոյության պատմական պատճառների մասին: Նույն արձանագրության վերծանության և արժեքավորման մի փորձ էլ կատարվեց վերջերս: Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ սիմպոզիումին զեկուցումով հանդես եկավ հնագետ Մ. Լոժկինը, որը, սակայն, էական առարկություններ չարեց Խ. Քուչուկ-Հովհաննիսյանին (տե՛ս Михаил Ложкин, Об армянской церкви XII века в Белореченске, Ереван, 1978, էջ 2 և 8):

XVII դ. 80-ական թթ. Ղրիմում ստեղծագործել է Սիմեոն Կաֆացի անունով մի տաղասաց, որի հոր անունը եղել է Խրմպէյ<sup>96</sup>: Նույնացնելով քարգործ (իմա՝ ճարտարապետ վարպետ) Խրմպէյ Կաֆացուն տաղասացի հոր հետ, որ շատ հավանական է (արձանագրության տառաձևերը բնորոշ են հենց այդ ժամանակաշրջանին), կարող ենք եկեղեցու կառուցման ժամանակը համարել, մերձավորապես, 1650-ական թվականները: Բայց չի բացառված, որ այստեղ հայեր են հաստատված եղել այդ ժամանակից շատ դարեր առաջ, իսկ որ նրանք սերտորեն կապված են եղել Ղրիմի հետ, այդ երևում է այն իրողությունից, որ եկեղեցու կառուցման համար հրավիրվել է կաֆայեցի մի վարպետ: Ինչպե՞ս է կոչվել հայկական այդ բնակավայրը, չգիտենք: Եվ եթե հետազոտում գիտական պեղումներ կատարվեն եկեղեցուց ոչ հեռու գտնվող տարածություններում, թերևս հնարավոր լինի պարզել, որ հենց այստեղ է գտնվել միջնադարում շատ հայտնի վերոհիշյալ Կոպա քաղաքը<sup>97</sup>:

Ժամանակագրական առումով շատ ավելի հին կարող են լինել պատմական Չերքեզիայի մի այլ անկյունում՝ Կարաչայ-չերքեզների ինքնավար մարզում, Մեծ Զելենուկ գետի միջին հոսանքից ոչ հեռու գտնվող երեք եկեղեցիները: Դրանցից ամենամեծը, որ գտնվում է շատ խարխուլ վիճակում, երեք տասնամյակ առաջ ենթարկվել է հնագիտական հետախուզման: Եկեղեցու հատակի մի անկյունում հայտնաբերված 1,5 մետր խորություն ունեցող փոսից դուրս են բերվել ոսկեղեն առարկաներ, մատանիներ, օղեր, զարդասեղներ, թանկագին քարեր և, որ ամենակարևորն է, Աշոտ Ա Բագրատունի Հայոց թագավորի (885—890 թթ.) մատանի-կնիքը, արաբերեն հատակ ընթերցվող՝ «Աշոտ բն Մնբատ» (այսինքն՝ «Աշոտ Սմբատի որդի») մակագրությունը<sup>98</sup>:

Ցավոք, հայտնաբերված առարկաները առ այսօր մասնագիտական քննության բովով չեն անցել: Մեծ հավանականությամբ նրանք, կնիքի հետ միասին, բերվել ու պահվել են եկեղեցու դարաններից մեկում Բագրատունյաց հարստության անկումից հետո՝ XI դ. կեսերին, խոսուն վկաները լինելով Հա-

96 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1948, էջ 517:

97 Իտալական աղբյուրների տվյալներով Կոպան գտնվել է Կուրանի գետաբերանից 280 մղոն (շուրջ 400 կմ) հեռավորության վրա՝ գետափին: Եթե քաղաքի հեռքերը փնտրելու համար նկատի առնվի Կուրան մայր գետը և անտեսվեն նրա խոշոր վտակները, ապա որոնումները պետք է կենտրոնացվեն ներկայիս Կրապոտկինի շրջանում, բայց եթե Կուրան գետի հետ շաղկապենք նրա խոշոր վտակներից՝ Բելայա կոչվածը, ապա Կոպայի ավերակների հեռքերը կարող են հայտնաբերվել վերոհիշյալ եկեղեցու մերձակայքում: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև այն փաստի վրա, որ Բելորեչենսկայա ստանիցայի մոտ գտնվող հին գերեզմանատան պեղումներից ևս հայտնաբերվել են հայկական նյութեր: Մասնավորապես արժեքավոր են մի գոտու արծաթե ճարմանդները, որոնք անտարակույս միջնադարյան հայկական արհեստագործության զեղեցիկ նմուշներից են: Դրանց հրատարակիչ Կ. Ա. Ռոկտինան (К. А. Роктина. Группа серебряных украшений из кубанских могильников XIV—XV вв. «Труды отдела истории культуры и искусства Востока Гос. Эрмитажа», т. III, Л., 1940, էջ 211 և II, 4, 5 պատկերներ) հայտնել է այն կարծիքը, որ դրանք արտադրվել են Կիլիկյան Հայաստանում XV դ.: Մեր կարծիքով, սակայն, ոչ մի արգելք չկա դրանց ժամանակը մի քանի դարով ետ տանելու և դրանք կենտրոնական Հայաստանի հետ կապելու համար:

98 В. А. Крачковская. Печать Багратида Ашота с арабской надписью. «Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры», XII, М.—Л., 1946, էջ 112—117: նաև Հ. Օ. Լալայանով, Աշոտ Բագրատունու կնիքը («Տեղեկագիր», 1955, № 2, էջ 97—98), որը նորություն չի պարունակում:

յաստանի և Հյուսիսային Կովկասի միջև գոյություն ունեցած տնտեսական սերտ առնչությունների:

Հյուսիս-արևմտյան Կովկասի վաճառաշահ կենտրոնների բնակչության ազգային կազմի մասին աննշան տեղեկություններ են պահպանվել: Ն. Զևյակինն ու Ն. Պենչկոն իրենց վերոհիշյալ հոդվածում ոչ միայն տարբեր առիթներով խոսել են Մատրեգայում և Կոպայում հայ բնակչության առկայության մասին, այլև հանգել են այն եզրակացության, որ հավանաբար հայ առևտրական կապիտալն է այդ գաղթավայրում կատարել առաջնային դեր<sup>99</sup>:

Այս երկրամասում հայկական հիշատակների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակել, օգտագործելով ինչպես մայրենի լեզուն մոռացած շերքեղահայերի մասին դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված աղբյուրները (այդպիսիք պետք է որ լինեն ուսական արխիվներում), այնպես էլ հայկական մատենագրության մեջ գոյություն ունեցող ակնարկները:

Այս առումով ուշադրության արժանի են Քաշտ կոչվող երկրամասի և ցեղանվան մասին առկա ցաքուցրիվ տեղեկությունները: Կիևյան Ռուսիայի տարեգիրները, ինչպես նաև բյուզանդական որոշ հեղինակներ, խոսելով Տմուտարականի ուսական իշխանության բուն բնակիչների՝ հին շերքեղների մասին, դրանց միշտ անվանում են կասոխներ կամ կոսոխներ (касоги կամ косоги): Այդ ցեղանունը տարբեր ժողովուրդների կողմից ու տարբեր ժամանակներում արտաբերվել է իրարից շատ տարբերվող ձևափոխություններով. կոսոխ, կոսոդ, կասախ, խաղուխ, քեշակ, քաշայի, քաշոտ<sup>100</sup>: Այս վերջին (քաշոտ) ձևը կամ ստեղծվել է հայերի միջավայրում, կամ էլ գերադասվել նրանց կողմից՝ որպես ավելի հարազատ ու դյուրալուր ձև:

Կաֆա քաղաքի պարիսպներից դուրս XV—XVII դդ. գոյություն է ունեցել հայկական մի թաղամաս Քաշոտ անունով<sup>101</sup>: Մեծ հավանականությամբ կարելի է հետևցնել, որ այդ վայրի հայ բնակչության մեծամասնությունը գաղթել է այստեղ Թամանյան թերակղզուց կամ պատմական Չերքեզիայի Թամանից ոչ հեռու գտնվող շրջաններից, կամ էլ տնտեսական սերտ կապերի մեջ է եղել նույն այդ շրջանների (այսինքն՝ բուն Քաշոտի) հետ:

<sup>99</sup> Նրանք բառացի գրել են. «Без сомнения армянский торговый капитал проник и на Западный Кавказ и быть может играл в тамошних колониях первенствующую роль» («Исторические записки», 1938, № 3, էջ 127):

<sup>100</sup> «История Кабарды с древнейших времен до наших дней», М., 1957, էջ 22—25: Տեղեկությունը բաղել ենք Խ. Փորբշիյանի վերահիշյալ հոդվածից:

<sup>101</sup> «Այլ արտաքոյ (Կաֆայ) քաղաքին մէկ մահալա թաղ հայր կային, որ Քաշոտ ասեն», — գրում է նրա մասին Գր. Գարանազցին (տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Գարանազեցոյ», հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 80):

1458 թ. Կաֆայում դիմեծախ Ավդուլը ընդօրինակել է տվել մի ձեռագիր՝ Քաշոտի սուրբ Գեորգ զորավարի եկեղեցուն նվիրարեղելու համար («Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 112): Խաշատուր Կաֆայեցի տարեգիրը 1649 թ. դեպքերի կապակցությամբ հայտնում է, որ ապրիլի 15-ին Գրիգոր պարոնտերը ոմն Սիմեոնի քահանա է ձեռնադրել «ի վերայ Քաշոտին» («Մանր ժամանակագրութուններ 13—18-րդ դդ.», հատոր I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 225): Ըստ այդմ Կաֆայի Քաշոտ կոչվող թաղամասի գոյությունը հաստատվում է XV—XVII դդ. աղբյուրներով:

Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրության մեջ, 1624 և 1628 թթ. կատարված դեպքերի առնչությամբ, Քաշուտի մասին գտնում ենք երկու կարևոր դրանցում.

1. «Քվին ՌՀԳ (1624)... ապրիլի ԺԱ. (11) կիրակին Քաշուտի յուռուսն կոխեց Խրիմին վերի մահալան և բրիստոնեայքն գերեցուց, և պարծանքնրն բրիստոնէից՝ Սուրբ Նշանն գերի վերուց, և խաւարեցուց վանքն տէր Մովսէսի»<sup>102</sup>;

2. «Քվին ՇՀԷ (1628), ապրիլի Ի (20), աւր կիրակի, Քաշուտի ուռուսն Կաֆան կոխեց, մահալան Համբարձրման: Անիծածն, որ է որդի Քումանպէին, Եկաւ գերեցուց, ոմանս թալլեց, ոմանս ի սուր մաշեց, և այլ շատ շարիր գործեց»<sup>103</sup>;

Այս կարևոր տեղեկությունները, անտարակույս, վերաբերում են Դոնի կազակների դեպի Ղրիմ (Սուրխաթ, Կաֆա) կատարած արշավանքներին<sup>104</sup>:

Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ կազակներն այստեղ կոչված են «Քաշուտի ուռուս». սրանից կարելի է հետևցնել, որ Դոնի կազակները արդեն XVII դ. իրենց ազդեցությունը տարածել էին Ազովի ծովի արևելյան ափերը եզերող պատմական Չերքեզիայի շրջանների վրա, ու թերևս, այդ կողմերում ունեին իրենց հենակետերը, որոնք կորիզը հանդիսացան ավելի քան մեկ դար հետո Կուբանի շրջանում ձևավորված կազակական զորքերի<sup>105</sup>:

102 «Մանր ժամանակագրություններ», I, էջ 212:

103 Նույն տեղում, էջ 217:

104 Քաշուտի տեղագրությունը որոշելու անհաշող ու երկշտ մի փորձ է կատարել Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրության» հրատարակիչը, տալով այսպիսի բացատրություն. «Արդյո՞ք Կազուսը չէ, Անապայի և Նովորոսիյսկի մոտերքը, թերևս ավելի հյուսիս» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ» I, էջ 231):

Հունգարացի վաստակավոր արևելագետ է. Շյուցը, որ իրագործել է Տարեգրության դրամաներին թարգմանությունը, օժտել է այն շատ արժեքավոր ծանոթագրություններով ու ճշգրիտել նրա անհասկանալի բազմաթիվ հատվածները, զատել է միմյանցից Կաֆայի հայկական թաղամաս Քաշուտը «Դոնի կազակների բնակավայր» Քաշուտից: Այս բնակավայրի տեղագրությունը որոշելու նպատակով նա որոնումներ է կատարել, անդրադարձել է Կուբան գետի Կոնստի վտակի անվանը, ինչպես նաև Վոլգայի կամիկների Կոշուտ կոչվող բնակավայրին և այլն (տե՛ս E. Schütz. Eine Armenische Chronik von Kaffa aus der ersten Hälfte des 17. Jahrhunderts. „Acta Orientalia Academia Scientiarum Hungaricae“, 1975. Hung. Tomus XXIX, Fasc. 2, էջ 167—181):

Մեր կարծիքը Քաշուտի մասին՝ շարադրված է վերը:

Շեղվելով բուն նյութից, անդրադառնալու ենք Խաչատուր Կաֆայեցու Տարեգրության մեջ «հայ» բառի տարօրինակ գործածությանը, որ տարակուսանքների տեղիք է տվել: Ըստ Տարեգրության, օրինակ, 1628 թ. Ղրիմ է ներխուժել 12 հազար հայ, մեկ տարի հետո՝ 40 հազար հայ և նոզայ և այլն (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», I, էջ 214, 215 և այլն): Խաչատուրը խոսում է թուրքերի՝ Մալթայում տարած հաղթանակի մասին, ասելով, որ «վեզիրն հայն սպանել է ի կռիւն», նկարագրում է Ազովի հերոսական պաշտպանությունը Դոնի կազակների կողմից, դերակատարներին դարձյալ «հայ» անվանելով և այլն (տե՛ս նույն տեղում, էջ 223):

Կենդանի հարթվում է դյուրությունը: Մեր հեղինակը «հայ» բառը գործածում է նաև «բրիստոնեյա» բառի փոխարեն. «հայ» են կոչվում և՛ Չապորոթյան կազակները, և՛ Դոնի կազակները, և՛ Մալթայի պաշտպան վենետիկցիները, և՛ այլ բրիստոնյա ժողովուրդներ:

105 Քաշուտը Տմուտարական ոռոսական բաժնետիրական իշխանության տարածքն էր ձիածամանակ: Կարելի՞ է, արդյոք, այս հանգամանքը նկատի առնելով մտածել, թե աշխար-

Սրանք են, ահա, մեզ հասած տեղեկությունները Ղրիմի հետ տնտեսապես շաղկապված Քամանյան թերակղզում և պատմական Չերքեզիայի այլ շրջաններում երկար դարեր գոյատևած հայկական գաղթօջախների մասին: Դրանք ցաք ու ցրիվ են ու աղբատիկ, բայց, այնուամենայնիվ, հնարավորություն են բնօրում հանգելու այն եզրակացության, որ այս վայրերում խարխախ նետած հայերը ևս կարևոր դեր են կատարել Ղրիմի վրայով Ռուսական իշխանությունների և Արևմտյան Եվրոպայի այլ երկրների հետ տնտեսական կապերի ստեղծման ու իրականացման բնագավառում:

\* \* \*

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ղրիմը կապված է եղել Անդրկովկասի, Իրանի, Միջին Ասիայի և Հեռավոր Արևելքի հետ միջազգային նշանակություն ունեցող ծովային ու ցամաքային մի շարք ճանապարհներով: Հայաստան—Ղրիմ կապերն իրագործվել են ա) Սև ծովի հարավային և արևելյան նավահանգիստներից՝ ծովային ճանապարհով, բ) Սև ծովի արևմտյան եզրերով և Կովկասյան լեռնաշղթան հատող կաժաններով, որոնց հանգրվանն էր Քամանյան թերակղզին, գ) Դերբենդի կիրճով դեպի հյուսիս ուղղված ճանապարհով, որը Հյուսիսային Կովկասում երկճյուղվում էր. ճյուղերից մեկն ուղղություն էր վերցնում դարձյալ դեպի Քաման, մյուսը՝ դեպի Վոլգայի գետաբերան, դ) Ռուսաստանից և Միջին Ասիայից, տարբեր ճանապարհներով արևելյան ապրանքներ էին հասցվում Ազով, այնտեղից էլ՝ Ղրիմ. այս ուղի-գծի վրա ևս հայերը որպես տնտեսապես շահագրգռված կողմ, ունեին իրենց գաղթօջախները:

Կաֆա քաղաքն այս ճանապարհներով ստացվող ապրանքների վիթխարի մի պահեստ էր դարձել:

Այդ ապրանքների մի զգալի մասը արտահանվում էր Արևելյան Եվրոպա կարավանային բանուկ այն ճանապարհով, որ կտրում էր Ղրիմի թերակղզին հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք և, անցնելով Պերեկոպը (հայկական միջնադարյան աղբյուրներում՝ կոչված Օր, Օրինբերան)՝ ուղղություն էր վերցնում դեպի Կիև:

Պետք է ենթադրել, որ Պերեկոպում, առնվազն XIV դ. սկզբներից գոյություն է ունեցել հայկական կաշուն գաղթօջախ, որի մասին, ցավոք, հին տեղեկություններ չեն պահպանվել: Այստեղ հաստատված հայերն ունեին իրենց եկեղեցին. քաղաքում կային հայերին պատկանող կարավանատներ, պահեստներ և այլն<sup>106</sup>: XVIII դ. 30-ական թթ. ռազմական գործողությունների հետևանքով տուժած Պերեկոպի դերն իր վրա է վերցնում նրա մոտակայքում հայերի կողմից հիմնադրված և Արմյանսկի բազար (Հայկական շուկա) անունն ստացած բնակավայրը, որը հռչակված էր իր շուկայով, անընդմեջ ծը-

հազրական այդ միջավայրում, Տմուտարականի իշխանության անկումից դարեր հետո ևս պահպանվել էին ռուսական համայնքներ, որոնք աշխուժացել էին Դոնի գետաբերանի շրջակայքում հաստատված կազակների աղղեցությունը կրելով:

<sup>106</sup> Վ. Միխայլյան, նշվ. աշխ., էջ 114 (վկայակոչված է «Заседания Одесского общества истории и древностей», т. I, 1844, էջ 602):

խացոզ խոհանոցներով, որոնցում ընտիր կերակուրներ էին պատրաստվում անցնող ու դարձող ճանապարհորդների համար<sup>107</sup>:

Պերեկոպից հյուսիս, մինչև Կիև ձգվող ճանապարհը միշտ էլ եղել է շատ վտանգավոր, ենթակա լինելով հարավային Ռուսաստանի տափաստաններում մեկը մյուսին հաջորդող վաշկատուն ժողովուրդների շարունակական ավազակային հարձակումներին: Հայտնի է, որ 915—1036 թթ. ընթացքում Կիևի իշխանները մարտնչել են պեչենգների դեմ, մանր միջադեպերը շահաված 16 անգամ<sup>108</sup>: Եվ այդ պարբերականությունը պահպանվել, նույնիսկ ավելի հաճախակի է դարձել հաջորդ դարերում, երբ թաթարները, ապա նաև թուրքերը, գրեթե ամեն տարի ներխուժում էին ռուսական երկրամասերը, ավերում բնակավայրերը, ամայացնում երկիրն ու իրենց հետ տանում հաղարավոր գերիներ<sup>109</sup>:

Այս պայմաններում կարավանային առևտրի ասպարեզում առաջնային դիրք զբաղած հայ վաճառականները միաժամանակ հանդիսանում էին զինվոր-մարտիկներ: Մենք դեռևս առիթ կունենանք ավելի հանգամանորեն շոշափելու այս հարցը, բացահայտելով հայերի դերը Դնեպրի աջափնյա տարածություններում ստեղծված նշանավոր բերդ-քաղաքների տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր ասպարեզներում:

\* \* \*

Հին Ռուսիայի նշանավոր Կիև մայրաքաղաքը դարեր շարունակ եղել է հայ-ռուսական տնտեսական ու մշակութային կապերի դարբնոց, ուստի նրա ներսում ծաղկած հայկական գաղթօջախի պատմությունն արժանի է ավելի հանգամանալից քննության:

Կիևի հին պատմությունը լուսաբանող գրավոր աղբյուրներ գրեթե չեն պահպանվել: Մեծ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու գործած ավերածություններին (1169 թ.), մոնղոլական զույգ արշավանքներին (1240 և 1263 թթ.), ինչպես և բազմիցս կրկնվող ամենակուլ հրդեհներին՝ զոհ են գնացել նաև քաղաքի պատմության ձեռագրական սկզբնաղբյուրները:

Հնագիտական նյութի ուսումնասիրությունը մասնագետներին բերել է այն համոզման, որ մերձդնեպրյան շրջանները Կովկասի ու Սև ծովի ափամերձ հունական գաղթօջախների հետ տնտեսական որոշ կապեր են ունեցել տակավին մ. թ. ա. V—IV դդ.: Մեր թվարկության առաջին հարյուրամյակների ընթացքում տեական տնտեսական կապեր են հաստատվել Հռոմեական կայսրության, իսկ III—IV դդ. նաև գոթերի հետ:

VIII դ. միջազգային ասլրանքափոխանակության համար մեծ նշանակություն է ստանում Բալթիկ և Սև ծովերը միմյանց շաղկապող գետային այն մայրուղին, որ հայտնի է պատմագրության մեջ «Վարյագներից դեպի Հունաստան» («Из Варяг в Греки») անունով: Այդ մայրուղու շնորհիվ բարգավաճում են Ռուսաստանի պատմության մեջ հսկայական դեր կատարած մի շարք քաղաքներ, մասնավորապես Մեծ Նովգորոդը և «ռուսական քաղաքների մայր» Կիևը:

<sup>107</sup> Նույն տեղում, էջ 114—115:

<sup>108</sup> Б. Д. Греков. Киевская Русь, М., 1949, էջ 463:

<sup>109</sup> «Очерки истории СССР», т. II, էջ 556:

Կիևը դառնում է արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն հենց այն ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը, Բագրատունիների գլխավորությամբ թոթափելով արաբական լուծը, քաղաքական ու տնտեսական առաջադիմության ընթացքի մեջ էր մտել՝ դառնալով «իդեալական շեղոք երկիր տարանցիկ առևտրի և միջազգային հարաբերությունների համար» (Հ. Մանանդյան):

Հայաստանի քաղաքներից շատերը, մասնավորապես՝ Գլինը, Անին, Կարսը, Արծնը ոչ միայն դարձել էին տարբեր ճանապարհներով արևելյան երկրներից Հայաստան ներմուծվող, այստեղից էլ եվրոպական երկրներ արտահանվող ապրանքների ապահով պահեստատեղիներ ու փոխանակային առևտրի կենտրոններ, այլև մասնակցում էին միջազգային առևտրին իրենց սեփական արտադրանքով:

«Ի ծովէ և ի ցամաքէ» ճոխացած հայ վաճառականները ամենայն հավանականությամբ տնտեսական կապեր էին ստեղծել նաև «Վարյագներից դեպի Հունաստան» ճանապարհի նշանավոր կանգառներում: Գոտլանդ կղզում, Լադոգայում, Նովգորոդում, Մոգիլևում և Կիևում հայտնաբերված հազարավոր դրամների մեջ կան նաև Գլինում VIII—X դդ. կոփված դրամների բաղմաթիվ նմուշներ, որոնք տնտեսական այդ կապերի խոստն վկաներն են<sup>110</sup>: Կիևի մերձակայքում գտնվել են նաև ականջօղեր և այլ զարդեր, որոնք, մեծ նմանություն ունենալով Գլինից հայտնաբերված ոսկերչական իրերի հետ, ըստ մասնագետների՝ դարձյալ իրեղեն վկայություններ են Հայաստանի և Կիևի միջև գոյություն ունեցած առևտրական կապերի<sup>111</sup>:

Ավելի պերճախոս են սակավաթիվ գրավոր աղբյուրները և, մասնավորապես, Կիևի Պեչորյան վանքի նշանավոր Հարանց վարքը: Ռուսական հին գրականության մեծարժեք այդ հուշարձանի մեջ ուրույն տեղ է գրավում վանքի նշանավոր միաբաններից մեկի՝ երանելի Ազապիտի կյանքի պատմությունը<sup>112</sup>, որի մեջ արժեքավոր տվյալներ են գրանցված Վսեվոլոդ Յարոսլավիչի և, մանավանդ, նրա որդու՝ Վլադիմիր Մոնոմախի իշխանության տարիների, այսինքն XI դ. վերջերի և XII դ. առաջին տասնամյակների մասին: Այստեղ, մասնավորապես, ասված է, որ այդ ժամանակ Կիևում բնակվել է հմուտ ու ճարտար մի հայ բժիշկ. երբ Չերնիգոլում հիվանդացել է Մոնոմախը, «նրան ջանադրությամբ բուժել է այդ հայը»: Այստեղ խոսք կա և այն մասին, որ Կիևում բնակվել են նաև հայ բժշկի բաղմաթիվ հավատակիցները: «Հարանց վարքի» մի այլ հոդվածից պարզվում է, որ վանքի միաբան-

<sup>110</sup> Գիտական մեծ նշանակություն ունի 1913 թ. Կիևում հայտնաբերված դանձր, բաղկացած VIII—X դդ. կոփված 2760 արծաթե դրամներից: Դրանց մեջ կան Հայաստանում կոփված արքայան դրամներ: Այս նյութերը խնամքով հավաքել և գիտականորեն արժեքավորել է անվանի դրամագետ Խ. Մուշեղյանը (տե՛ս X. A. Мушегян, Денежное обращение Двина, по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 160—165):

<sup>111</sup> Տե՛ս Н. П. Кондаков. Русские клады. Исследование древностей великокняжеского периода, т. I, СПб., 1896, էջ 128: Կ. Ղաֆադաշյան, Գլին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 176:

<sup>112</sup> Патерик Киево-Печерского монастыря, СПб., 1911 («Памятники славяно-русской письменности», т. 2): Տե՛ս նաև՝ Л. Меликсет-Бек. Древняя Русь и Армения. («Сборник трудов Института языка АН Арм. ССР», Ереван, 1946, էջ 122), Լ. Խաչիկյան, Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16—17-րդ դարերում («Տեղեկագիր»), 1954, № 4, էջ 47) և այլն:



ներից մեկ ուրիշը հաճախակի այցելել է Կիևի այն թաղը, ուր ապրել են հայերը, և դավանաբանական հարցերի շուրջ բուն վեճեր բորբոքել նրանց հետ<sup>113</sup>: Այս տվյալներն ի նկատի ունենալով ակադ. Մ. Տիխոմիրովը հանդել է այն եզրակացության, որ Կիևում «եղել է լիակազմ հայկական մի գաղութ»<sup>114</sup>:

Կիևի Պեչորյան վանքն իր հիմնադրման օրից լինելով ուսական եկեղեցու շահերի արտահայտիչ, մաքառել է բյուզանդական եկեղեցու քաղաքական ու մշակութային ճնշումների դեմ: Այստեղ են ստեղծվել ուս պատմագրության և վարքագրության առաջին ինքնուրույն ստեղծագործությունները, որոնց մեջ, ի հակադրություն հունարենից կատարված թարգմանական երկերի, փառաբանվել են հանուն Ռուսաստանի և ուս եկեղեցու նահատակված հերոսները: Այդ բնույթի ստեղծագործությունների առաջնեկը «Բորիսի և Գլեբի վարքն» էր («Сказание о Борисе и Глебе»): Ռուսաստանում բարձր եկեղեցական պաշտոններ զբաղված հույն կղերականները հարկադրված էին ճանաչել այս գործիչների «սրբությունը»: Ավելի բացահայտ կերպարանք ստացավ ուս-բյուզանդական հակամարտությունը, երբ փորձեր կատարվեցին սրբերի շարքը դասելու ազգությամբ ուս այլ նահատակների<sup>115</sup>:

Խիստ ուշադրավ է, որ նույն այս ժամանակաշրջանում բյուզանդական եկեղեցու ոտնձգությունների դեմ համառ պայքար մղող հայ եկեղեցին՝ առանց հապաղումի, ճանաչեց Բորիսի և Գլեբի (նրանց քրիստոնեական անուններն էին՝ Ռոման և Գավիթ) «սրբությունը». նրանց վարքը վերաշարադրվեց հայերեն և մուծվեց հայկական Հայամավուրքի մեջ: Վարքի հայերեն խմբագրության վերջում ասված է, որ այդ սրբերի մասունքները նորանոր սբանչեկագործությունների աղբյուր են հանդիսանում և նոր հրաշքներ գործում, որոնց «բազում[ք] ի մերոյ աշխարհէս տեսողը եղեալ, պատմեն մեզ»<sup>116</sup>: Այս արդեն որոշակի փաստ է այն մասին, որ «ի մերոյ աշխարհէս», այսինքն՝ Հայաստանից շատ-շատերը այցելելով Կիև և վերադառնալով հայրենիք, վարքի հայ խմբագրողին վկայություն են տվել ուսական սրբերի նոր «հրաշագործությունների» մասին:

Ըստ Մ. էմինի, որ առաջին անգամ ուշադրություն դարձրեց այս բնագրի վրա՝ ուսումնասիրեց և հրատարակեց նրա ուսերեն թարգմանությունը, վարքի հայկական խմբագրությունն ստեղծվել է XII դ. Կիլիկյան Հայաստանում<sup>117</sup>: Որոշակի փաստեր ի հիմնավորումն այս ենթադրության չկան, ուստի բացառված չի կարելի համարել և այն վարկածը, որ այդ աշխատանքը կատարվել է մայր երկրի այն շրջաններից մեկում, որը տնտեսական սերտ կապեր է ունեցել Ղրիմի ու Կիևյան Ռուսիայի հետ:

113 Изложение веры церкви Армянской, историко-догматическое исследование И. Троицкого, СПб., 1875, էջ 245—247:

114 М. Н. Тухомиров. Древнерусские города, М., 1956, էջ 293: Անվանի գիտնականից առաջ և հետո նույն եզրակացությանը հանդել են և այլ բազմաթիվ ուսումնասիրողներ:

115 Б. Д. Греков, նշվ. աշխ., էջ 406—408:

116 Յայտնաբերք ըստ կարգի ընտրելագոյն արիւնակի Յայտնաբերաց տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834:

117 Н. О. Эмин. Сказание о святых Романе и Давиде (Борисе и Глебе) и о кончине русского епископа св. Фомы. По армянским четые-минеем. «Русский архив», М., 1877, I, էջ 273—288: նաև «Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859—1882 гг.). апокрифы, жития, слова и др.» М., 1899, էջ 150—167:

Այս առնչությամբ տեղին է հիշել Գրիգոր Տղա կաթողիկոսի և Հյուսիսային Հայաստանի նշանավոր եկեղեցական գործիչ Գրիգոր Տուտեորդու 1170-ական թթ. թղթակցությունը: Նամակներից մեկում Տուտեորդին ջերմ խոսքերով մեծարում է ուսական եկեղեցին, կոչելով այն «քրիստոննէութեամբ պատուեալ մեծափառ եկեղեցիս Ըսուզաց»<sup>118</sup>: Քաղկեդոնականության դեմ անհաշտ պայքարի քաղաքականության ջատագով սանահինցիների գաղափարական դեկավարը երկարնակ դավանանքի որևէ եկեղեցի «քրիստոննէութեամբ պատուեալ» կամ «մեծափառ» կարող էր կոչել այն դեպքում միայն, եթե նա չուր ունենար հունական ճնշումների դեմ նույն այդ եկեղեցու ընդվզումների մասին: Դավանանքով տարբեր, բայց գոյավիճակով նման հայ և ուս եկեղեցիների շահերն այս հարցում համընկնում էին:

Մրանք են, ահա, սակավաթիվ այն նյութերը, որոնք լույս են սփռում կիևահայ գաղթօջախի պատմության հնագույն շրջանի վրա:

XII դ. կեսերից Կիևի պատմության համար սկսվում է նոր շրջան՝ ի հետևանս, նախ, ուսական բաժնեկալվածային իշխանությունների միջև ծայր առած զգվոտոցների, և ապա ավելի մեծ չափով, միջազգային ապրանքափոխանակության մայրուղիների փոփոխության:

Սելջուկ-թուրքերի աշխարհավեր արշավանքները և Իրանի, Անդրկովկասի ու Փոքր Ասիայի բռնագրավումը, Խաչակրաց արշավանքները՝ դեպի մերձավոր արևելյան երկրներ, Երուսաղեմի, Անտիոքի, Կիպրոսի խաչակիր իշխանությունների ստեղծումը Միջերկրականի ամերին, Կիլիկիայի հայկական պետության տնտեսական ու քաղաքական հաջողությունները և, մանավանդ, բյուզանդական կայսրության ամենազարգացած շրջանների բռնագրավումը խաչակիրների կողմից և լատինական կայսրության ստեղծումը այդ

118 Ա. Տեր-Միքելյան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խաղաղության համար («Արարատ», 1893, № 4, էջ 349), նաև՝ Աս. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում («Տեղեկագիր», 1948, № 3, էջ 49): Գրիգոր Տուտեորդուց վկայակոչված հատվածը ճիշտ մեկնաբանելու համար պետք է խորամուխ լինել թղթի գրության հանգամանքների ու բովանդակության մեջ: Գրիգոր Տղա կաթողիկոսը Տուտեորդուն հասցեագրած իր երկու նամակներով անդրադառնում է բյուզանդացիների հետ եկեղեցական միություն ստեղծելու նպատակով տարվող բանակցությունների ընթացքին: Նրա միտք բանին այս է. հայերը Քրիստոսի բնության մասին հույների հետ վիճարանելիս՝ ամուր դիրքի վրա չեն գտնվում, ուստի ստիպված են որոշ զիջումներ կատարել: Իր պատասխան թղթով, Տուտեորդին, ամենայն վճռականությամբ մերժում է ավանդական դիրքերից զույգն իսկ զիջում կատարելու հնարավորությունը: Վերջում, շեղարցնելով նուրբ հեղանքը, նա խորհուրդ է տալիս եկեղեցական միությունը գլուխ բերել՝ հայոց գավանանքը պարտադրելով մյուս եկեղեցիներին, այսինքն վճռականորեն մերժում է միության գաղափարն իսկ, քաջ գիտակցելով, որ հույներն ու ֆրանկները միության կոչիք են անում Հայաստանում և հայկական գաղթավայրերում իրենց ազդեցությունն ուժեղացնելու նպատակով: Սանահինցիների առաջնորդը գրում է. «Ի Հոռմս երթիցես, տուր առ նոսա հաւանութիւն և ամենայն ազգին ֆրանկաց, առ ասորիս և քրիստոննէութեամբ պատուել մեծափառ եկեղեցիս Ըսուզաց, խնդրեալ զպատշաճս ի նոցանէ. և միով հաւանութեամբ թէ տայցեն՝ ճանապարհորդեա ի քաղաքն Կոստանդնուպօլիս, տուր զմկրտութիւն լուսաւորութեան, և ըստ օրինաց՝ նախնի քոց հարցն՝ օրհնութեամբ պսակեա զսուրբ Սոփիա, որեարք (տպված է՝ որ է այրք—Լ. Խ.) նոցա, և քրիստոսազարդ փառօրն զարդարեալ, յարևմտից ծագեալ ընդ հիւսիսի կոչել յորդեգրութիւն հաւատոյ սրբոյ աւազանին ծննդեամբ զբարեյաղթ քրիստոսապսակեալ Թագաւորս մեր՝ զսիրելի ամենեցուն, այսպէս հաստատեալ պարծանս առ աստուած, ասելով. «Ահա ես և մանկունք իմ» («Արարատ», 1893, էջ 349):

երկրամասերում, հսկայական ու հեղաբեկիչ հետևանքներ ունեցան Արևելքի ու Արևմուտքի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում:

Մենք արդեն առիթ ենք ունեցել անդրադառնալու իտալական, քաղաքապետությունների՝ Ջենովայի ու Վենետիկի, դեպի Սև ծովի ավազանը կատարած առաջխաղացման և միջազգային նշանակություն ունեցող ճանապարհների հանգույցներում հենակետեր ստեղծելու պատմական դրվագներին: Այդ երկու թշնամի քաղաքների հակամարտությունից, ի վերջո, հաղթանակով դուրս եկավ Ջենովան. մինչև Կաֆայի գրավումը թուրքերի կողմից (1475 թ.), նրա հսկողության տակ էին գտնվում Ղրիմից և Կովկասի հյուսիս-արևմուտքյան շրջաններից դեպի Եվրոպական երկրներ ձգվող ծովային ու ցամաքային գլխավոր ճանապարհները, որոնց երթուղիների մեջ ևս կատարվեցին փոփոխություններ: Կիևահայ գաղթօջախի պատմության անշուքյամբ առաջին հերթին անհրաժեշտ է հիշատակել, որ «Վարյացիներից դեպի Հունաստան» տանող հին ճանապարհը կորցրեց իր երբեմնի նշանակությունը, և նրա դերն իր վրա առավ նախկին ուղեգծից դեպի արևմուտք ձգվող այն նոր մայրուղին, որը Բալթիկ ծովը շաղկապում էր Սև ծովին՝ Վիսլա—Արևմտյան Բուդ—Գնեսար գետերի միջնորդությամբ<sup>119</sup>:

Այս նոր ճանապարհի տարբեր հատվածներում բարգավաճեցին առևտրաարհեստագործական մեծ նշանակություն ունեցող նոր քաղաքներ. Ադրբեյջանը՝ Գնեսարի գետաբերանի ծովախորշում, Կամենեց-Պոդոլսկը՝ Ռուսաստանից դեպի Մոլդավիա և դեպի Հարավային Եվրոպայի այլ երկրներ տանող ճանապարհների վրա և մանավանդ՝ Լվովը, որը երկու նշանավոր ճանապարհներով (via nova և via antique) կապված էր Լեհաստանի ու կենտրոնական Եվրոպայի երկրների հետ: Միջազգային ճանաչում ստացան նաև Լուցկ և Վլադիմիր (հայկական աղբյուրներում՝ Օլատեմիր) քաղաքները, որոնց վրայով աշխույժ ապրանքափոխանակություն էր կատարվում Լիտվայի, հյուսիսային Լեհաստանի, Մագդեբուրգի և Հանզայի մեջ ընդգրկված մերձբալթյան քաղաքների հետ<sup>120</sup>:

Կամենեց-Պոդոլսկ և Լվով քաղաքների հայկական ինքնավար մարմինների մեծաքանակ արձանագրությունները և հայերեն, ղիշախերեն, լեհերեն լեզուներով պահպանված դիվանական բազմաթիվ փաստաթղթերն ու այլ սկզբնաղբյուրներ հնարավորություն են ընձեռում հանգամանորեն լուսաբանելու հայկական այդ խոշոր գաղթօջախների և նրանց հետ կապված մյուս բնակավայրերի պատմության հետ կապված շատ դրվագներ, բացահայտելու նրանց կատարած դերը հարավային Ռուսաստանի (մասնավորապես Գալիցյան և Վոլինյան երկրամասերի) տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում:

Առանց չափազանցության կարելի է հաստատել, դրել է այդ մասին պրոֆ. Ի. Լիննիչենկոն, որ հարավային Ռուսիայի ամենանշանավոր հայկական կենտրոնները՝ Լվովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստությամբ, փարթամությամբ և նշանակությամբ՝ մեծ մասամբ ու հատկապես պարտական են

119 В. Т. Пашуто. Очерки по истории Галицко-Волынской Руси, 1950, էջ 167:

120 Я. Д. Исаевич. Культура Галицко-Волынской Руси («Вопросы истории», 1973, № 1, էջ 94—95):

հայերին: Այս ճարպիկ, աշխույժ և բոլոր ասպարեզներում հաջողակ ժողովրդի շնորհիվ էր հատկապես, որ հարավային Ռուսիայի առևտրական կենտրոնները միջնորդի դեր կատարեցին Արևելքի և Արևմուտքի առևտրի ասպարեզում<sup>121</sup>:

Հարավային Ռուսաստանում և Լեհաստանում այնքան էին սովոր հայերին տեսնել միայն արևելյան ապրանքներ վաճառողի մենաշնորհային դերում, որ մի ամբողջ շարք արևելյան ապրանքներ՝ «հայկական ապրանք» էին կոչվում<sup>122</sup>:

Քաղաքական ու տնտեսական այս տեղաշարժերի հետևանքով XII դ. վերջին տասնամյակներից սկսած Կիևը դադարեց ուս իշխանների աթոռանիստ կենտրոն լինելուց և զրկվեց դարերի ընթացքում հաստատած միջազգային իր կապերի մի մասից: 1240 թ. մոնղոլական հորդաները գրավեցին Կիևը ու այնպիսի ծանր հարված հասցրին նրա տնտեսությանը, որ քաղաքն այլևս անկաթող եղավ վերահաստատելու իր դերագահությունը միջնադարյան ուսական քաղաքների շարքում<sup>123</sup>: Շուտով ուսական եկեղեցու հոգևոր պետը մետրոպոլիտական իր աթոռը Կիևից փոխադրեց Մոսկվայից ոչ հեռու՝ Կլյազմայի վրա գտնվող Վլադիմիր բարգավաճ քաղաքը:

1362—1471 թթ. Կիևը գտնվում էր Լիտովյան մեծ իշխանության տիրապետության տակ, իսկ այնուհետև, մինչև Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ (1654 թ.) ենթակա էր Լեհաստանին, հանդիսանալով Կիևյան վոյեվոդության վարչական կենտրոնը:

Պատմական ձախորդ այս հանգամանքների հետևանքով, ինչպես ասացինք, Կիևը մեծապես տուժել էր ու զրկվել իր երբեմնի փառքից, սակայն սրբխալ կլինեի կարծել, թե երկարատև այդ դարերի ընթացքում քաղաքը չի ապրել վերելքի ու ծաղկման պահեր: Կան որոշակի փաստեր այն մասին, որ շնայած տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, XIV դ. վերջերին վերականգնվել էին Կիևի կապերը Մոսկվայի հետ, և Լեհաստանից Ռուսաստան ձգվող հիմնական ճանապարհն այդ ժամանակ ևս անցնում էր նրա վրայով: Լեհ անվանի գիտնական Մ. Մալովիստի կարծիքով XV դ. Կիևը Մոսկվայից դեպի Կաֆա տանող հիմնական ճանապարհի կարևորագույն հանգրվանն էր: Մոսկվայից Կիև էին ժամանում պատմական նախորդ շրջանից հայտնի ուղիներով, այնուհետև անցնում էին Կանև ու Չերկասս և միշտ երկյուղ կրելով թաթարական հարձակումներից՝ սայլերով ու բեռնակիր անասուններով կրտրում էին տափաստանը, Պերեկոպով մտնում էին Ղրիմ: Ըստ նույն գիտնականի այս երթուղին, շնայած իր վտանգավորությունը, ավելի բանուկ էր, քան այն ճանապարհները, որոնք Մոսկվան կապում էի Կաֆայի հետ Վոլգայի կամ Դոնի վրայով<sup>124</sup>:

121 Տե՛ս Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի և արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 3 (հմմտ. Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, էջ 37—38):

122 Մ. Мелуксет-Бек, նշվ. աշխ., էջ 113:

123 Б. Д. Греков, նշվ. աշխ., էջ 501—507; В. Васильевский, նշվ. հոդված, ЖМНП, 1888, июль, էջ 148:

124 Marian Malowist, Kaffa-kolonia genuëska na Krymie i problem wschodni w latach 1453—1475, Warszawa, 1947 (հմմ. М. Н. Тухомиров, Пути из России в Византию, էջ 18—19):

Այս ճանապարհի տնտեսական նշանակության և Կիևի արտաքին կապերի ընդլայնման մասին ուշագրավ տվյալներ է հաղորդում նաև Միխայիլ Լիտվինը՝ լավատեղյակ մի անձնավորություն (Լիտվայի դիվանագիտական ներկայացուցիչը Ղրիմում), որը հեղինակն է 1548—1551 թթ. ընդգրկող մի հուշագրության. «Կիևը,— գրում է նա,— լի է օտարերկրյա ապրանքներով, քանի որ շկա ավելի սովորական մի ճանապարհ, քան այն հին ու հանրահայտ ճանապարհը, որը տանում է... դեպի Դնեպրի Տավանյան գետանցքը, իսկ այնտեղից էլ տափաստանով դեպի Կիև: Այս ճանապարհով Ասիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Արարիայից, Սիրիայից առաքվում են դեպի Մոսկվա, դեպի Պսկով ու Նովգորոդ... արևելյան բոլոր ապրանքները, այսինքն՝ թանկարժեք քարեր, մետաքս, մետաքսե գործվածքներ, խունկ, բուրավես նյութեր, դաֆրան, պղպեղ և այլ համեմունք: Այս ճանապարհով հաճախ ուղևորվում են օտարերկրյա վաճառականներ. նրանք կազմում են կարավան կոչվող խմբեր, երբեմն բաղկացած 1000 մարդուց և շարժվում են բազմաթիվ բարձրած սալերի և բեռնավորված ուղտերի ուղեկցությամբ»<sup>125</sup>:

Այստեղ թվարկված ապրանքներն են հենց, որ «հայկական ապրանք» անունն էին ստացել. ուստի պետք չէ տարակուսել, որ Կիևի վրայով դեպի հյուսիս ու, մասնավորապես, դեպի Մոսկվա ուղևորվող «օտարերկրյա վաճառականների» շարքում հայերը կենտրոնական տեղ են զբաղեցրել:

Այս ժամանակաշրջանի Կիևի հայկական գաղթօջախի մասին համեմատաբար ավելի առատ տեղեկություններ են պահպանվել: Հայ-ուկրաինական հարաբերությունների վաստակաշատ ուսումնասիրող Յա. Դաշկևիչը Լվովի հնադարաններում պահվող մի քանի տասնյակ փաստաթղթերի վրա հայտնաբերեց Կիևի հայկական գաղութի ինքնավարության ղեկավար մարմնի՝ տանուտերերի խորհրդի կնքադրոշմը. ԱՅՍ է ՄՈՂՐՆ ՄԱՆԳԵՐՄԱՆԻ ՏԱՆՈՒՏԵՐԱՅԻ մակադրությամբ: Կնիքը բոլորած է. կենտրոնում պատկերված է դառն աստուծո՝ խաչակերպ վերջավորությամբ մի դրոշ պարզած<sup>126</sup>: Այս գյուտով հաստատվեց, որ կիևահայերը կազմակերպված են եղել և ճանաչվել պետության կողմից որպես առանձին համայնք, ունենալով իրենց ինքնավար մարմինները:

Ինչպիսի՞ իրավունքներով է օժտված եղել տանուտերերի այս խորհուրդը հարցին կարելի է պատասխանել հաշվի առնելով այն տվյալները, որոնք վերաբերում են Ուկրաինայի մյուս հայկական գաղթօջախների ինքնավար մարմիններին: 1572—1619 թթ. Լվովի հայկական համայնքի դատարանում որպես

<sup>125</sup> «Мемуары, относящиеся к истории Южной Руси», т. I, Киев, 1890, էջ 51 (հմմ. М. Фехнер. նշվ. աշխ., էջ 19—20):

<sup>126</sup> Я. Р. Дашкевич. Армянские общественные печати на Украине. «Թանրեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 240:

Կնիքի դրոշմը կրող փաստաթղթերի ծայրային թվականներն են 1648—1730 թթ.: Այդ շրջանում Կիևի հայկական համայնքը, ինչպես տեսնելու ենք ստորև, այլևս գոյություն չունի. քաղաքում ապրում էր միայն մի քանի հայ ցնտանիք: Սակայն Լվովի հայ տանուտերերը տնօրինում էին եկեղեցուն պատկանող կալվածքների հասույթները և շեն էին պահում եկեղեցին: Կնիքը դորձածում էին հաստատելու համար այն փաստաթղթերը, որոնք առնչվում էին մարած գաղթօջախի եկեղեցուն պատկանող կալվածքներին ու հասույթներին: Այդ հանգամանքը, սակայն, կնիքի իրավական ուժի վրա չի ազդել. պետական մարմինները, քաջ տեղյակ լինելով, որ կիևահայ գաղութը ունեցել է իր ինքնավար մարմինը, նրա մարումից հետո էլ վավերական են ճանաչել այդ մարմնի կնիքը կրող փաստաթղթերը:

գրագիր աշխատող Մինաս Թոխաթեցի բանաստեղծը հայ դատավորների իրավունքների մասին գրել է այսպիսի տողեր.

ՉՀայոց ազգն դոքա դատեն,  
Ուխտ և դաշինք կու հաստատեն,  
Չապստամբեալսն խրատեն,  
Չկարգ և զսահմանքն կու պընդեն:  
Երկոտասան դատաւորք են,  
Չծուռն և զշիտակն դոքա բնեն,  
Չմեղապարտսն վիրաւորեն  
Եւ զուղիղսն ադատեն<sup>127</sup>:

«Այսոքիկ դատաւորք,— ասում է նրանց մասին Մ. Բժշկյանը,— կոչէին տանուտեարք, և ամենայն ինչ, թէ աշխարհական և թէ եկեղեցական, նոցին վճռաւ որոշեալ լինէր»<sup>128</sup>:

Համայնքին վերաբերող հարցերով նրանք իրավասու էին դիմելու պետական իշխանություններին, անմիջական հարաբերությունների մեջ մտնելու պետական բարձրագույն ատյանների, նույնիսկ թագավորի հետ, տնօրինելու համայնքի ներքին գործերը, ղեկավարելու բարեգործական հաստատությունները և այլն<sup>129</sup>: Այդպիսի իրավունքներով էր օժտված, անշուշտ, նաև կիևահայերի տանուտեարքի խորհուրդը:

Ստույգ հայտնի է, որ Պոդոլ թաղամասում կիևահայերն ունեցել են համայնքի միջոցներով կառուցված ու շին պահվող հիվանդանոց, որի գոյությունն իսկ առհավատչյան է համայնքի ինքնավար մարմինների աշխույժ գործունեության և նյութական միջոցների առատության<sup>130</sup>:

Հաշվի առնելով Հայաստանի խոշոր քաղաքների և Արևելյան Եվրոպայի հայկական մի շարք գաղթավայրերի մասին առկա տվյալները, կարելի է պընդել, որ Կիևի հայկական ինքնավար մարմինները ևս մեծ շափով մասնակցել են քաղաքի ինքնապաշտպանության աշխատանքներին. ամբուսությունների կառուցման համար նյութական միջոցներ ու աշխատուժ են տրամադրել, աշխարհագորային ազմունակ ուժեր են կազմակերպել ու վտանգի պահին դրանք ազմի դաշտ առաջնորդել<sup>131</sup>: Կիևահայերի գործունեության այս կողմը լուսաբանելու համար ևս հարկադրական մի շեղում ենք կատարելու:

127 Ն. Ակիեյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 80. հմմտ. Վ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկի քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963, էջ 56:

128 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 216:

129 Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56—57:

130 Д. И. Мышко. О жизни армян в Киеве в XV—первой половине XVII вв. «Исторические связи и дружба украинского и армянского народов». Киев, 1965, էջ 113—121:

131 Հայտնի է, օրինակ, որ Կամենեց-Պոդոլսկի հայերն իրենց միջոցներով կառուցել ու դարերի ընթացքում հաճախ վերանորոգել են քաղաքի պարիսպների մի հատվածը, որ հայտնի է Հայկական ամբուսություն (Армянский редут) անունով: Պարիսպների այդ հատվածի պաշտպանությունը հայերի պարտականությունն է եղել, և նրանք քաղաքը են կատարել իրենց քաղաքացիական պարտքը (հմմտ. Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 135, Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 34 և այլն):

Հարավային Ռուսաստանի Կիևյան, Վոլինյան և Պոդոլյան երկրամասերի աշխարհագրական դիրքն ու դարավոր հարևանությունը միմյանց հաջորդող վաչկատուն ժողովուրդների՝ պեչենեգների (IX—XI դդ.), ղփչախների (XI—XIII դդ.), թաթար-մոնղոլների (XIII—XVIII դդ.) հետ՝ իր խորը կնիքն էր դրել նրանց բնակչության կյանքի ու կենցաղի վրա: Արևելյան երկրների հետ հաղորդակցվելու խոշոր գետային ու ցամաքային ճանապարհները՝ «Վարյագներից դեպի Հունաստան» ձգվող գետային ուղին և, մանավանդ, Կիևից Ղրիմ տանող կարավանային ճանապարհը՝ անցնում էին քոչվորների հսկողության տակ գտնվող երկրամասերով. և նրանք ոչ միայն դարանակալ հարձակումներ էին գործում անցնող ու դարձող կարավանների վրա, այլև պարբերաբար, զինական մեծ ուժերով, հարձակվում էին ռուսական քաղաքների վրա՝ ավարում, ավերում, գերեվարում: Այդ արշավանքներն ավելի հաճախակի էին դարձել XV դ. 80-ական թթ. հետո, երբ թուրքերին հպատակված Ղրիմի խաները, գրեթե ամեն տարի, իսկ երբեմն նույնիսկ տարին մի քանի անգամ, արշավում էին դեպի Կիև ու հարևան շրջանները՝ հսկայական նյութական կորուստներ պատճառելով խաղաղ բնակչությանը<sup>132</sup>:

Ավազակային այս ներխուժումների առաջն առնելու համար Կիևի իշխանության հարավային շրջաններում տակավին XI դ. կառուցվել էին մի շարք բերդ-ամրոցներ, որոնք՝ հետագա դարերում ավելի ընդարձակվելով՝ վեր էին ածվել ռազմական ու տնտեսական խոշոր կենտրոնների: XV—XVI դդ. Դրենսկի աշափնյա տարածություններում քոչվորների դեմ մարտնչում էին Կիևը, Կանևը, Չերկասը, Ժիտոմիրը, Բրասլավը, Վիննիցան, Կրիմեևեցը, Կամենեց-Պոդոլսկը, Լվովը, Գալիչը<sup>133</sup> և այլ քաղաքներ: Այդ ամրոց-քաղաքներում էին պատսպարվում նաև շրջակա գյուղերի բնակիչները, որոնք դաշտային աշխատանքների էին դուրս գալիս զինավառ: Քաղաքացիները իրենց ձիերով ու զեն-

132 «Очерки истории СССР», II, էջ 556. М. Грушевский. Иллюстрированная история украинского народа, СПб., 1913, էջ 154:

133 Հին Գալիչի հայկական գաղութի պատմության համար զգալի հետաքրքրություն են ներկայացնում վերջերս այդ քաղաքի սուրբ Պանտելիմոն եկեղեցում հայտնաբերված հայերեն արձանագրությունները, որոնց գծագրությունները բերված են Օ. Խալիֆալյանի «Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении» հետաքրքրական աշխատության մեջ: Ամրոցային պահպանված և լավ ընթերցվող միակ արձանագրությունը վերծանվում է այսպես (վերծանությունն առաջարկում ենք ձեռքի տակ ունենալով հաջող մի լուսանկար, որ ժամանակին մեզ ուղարկել էր Յա. Գալիչը). «Ես Ասվատուրս Քալային որդին գիրեց գիրս. թվ. ՊՂԳ (1444)»: Օ. Խալիֆալյանը Քալայի անձնանունը վերծանել է «Թուլայզ» (Тулайт) սխալ ձևով, մինչդեռ ճիշտ ձևն ուղադրավ է՝ առնչվելով թոնդրակեցիներին տրված թուլայեցի անվանը:

Օգտվելով առիթից, առաջարկում ենք ևս մեկ ճշգրտում:

Օ. Խալիֆալյանն իր այս ուսումնասիրության մեջ, ինչպես նաև «Պատմա-բանասիրական հանդեսի» 1971 թ. № 2-ում (էջ 254—262) տպագրած հոդվածում, վերատույլ է Սերբիայի Պեարովիցի քաղաքից 10 կմ արևելք գտնվող Վիտովիցի վանքի եկեղեցիներից մեկի հայերեն կառուցողական արձանագրությունը, որը պատմական կարևոր արժեք է ներկայացնում լինելով հավասարի փաստ այդ երկրամասում հայկական հին գաղթավայրի գոյության: Ճավոր պետք է նշել, սակայն, որ Օ. Խալիֆալյանը (ինչպես և նրանից առաջ ուրիշներ) ճիշտ չի վերծանել արձանագրության ամենակարևոր մասը՝ տարեթիվը: Արձանագրության վերջին փակագիր «Ամէն» բառից առաջ պարզ կարգացվում է «ՈՒՆ» (1178) թվականը: Տասնավոր «Ը» թվի ձախակողմյան ուղղահայաց գծի ներքևի հատվածը կարճ է փորագրված, ճիշտ այնպես, ինչպես կարճ են այդ տառի բոլոր գրությունները նույն արձանագրության մեջ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, «Ը»-ի փոխարեն հարգելի զիտնականը «Կ» է կարգացել, որի հետևանքով եկեղեցու կառուցման թվականը, 1178-ի փոխարեն համարել է 1218-ը:

քերով պարտավոր էին մասնակցել ինչպես պաշտպանական մարտերին, այնպես էլ թշնամուն, հակահարված տալու նպատակով կազմակերպվող արշավներին: Այս պայմաններում քաղաքացիներից յուրաքանչյուրը (արհեստավոր կամ առևտրական) միաժամանակ զենքի սովոր ունենալի էր<sup>134</sup>: Առավել շահով ունենալի էին վաճառականները, որոնք ստիպված էին զենք կրելու և ըստ հարկի այն օգտագործելու առևտրի նպատակով ձեռնարկած իրենց ուղևորությունների ժամանակ: Ըստ ինքյան հասկանալի է, որ կիևահայերը բացառություն չէին կազմում: Նրանք էին հենց կարավաններ կազմած մշտապես երթևեկում վերը հիշատակված վտանգավոր ճանապարհներով: Ուստի հարաժամ պատրաստ պիտի լինեին կողոպտիչներին դիմադրավելու, իրենց անձնու գույքը պաշտպանելու<sup>135</sup>:

Այս անհրաժեշտ ներածականից հետո դյուրավ պիտի հասկանանք և ըստ արժանվույն գնահատենք Միմենն Լեհացու հաղորդած խիստ արժեքավոր տրվյալը Մանքերման-Կիևի հայերի մասին: Վերհիշելով հայկական այդ հին գաղութի փառավոր անցյալը, հայրենասեր հեղինակը ցավով է արձանագրում, որ իր սպրած ժամանակներում, այսինքն XVII դ. սկզբներին՝ նախկին բազմամարդ ու շեն գաղութից պահպանվել են միայն տխուր հիշատակներ: Նագրում է. «Եւ մեծն Մանքերման ասին թէ յորժամ սէֆէր լինէր, հինգհարիւր հոգի կելէր Հայոց ի պատերազմ, եարար պահատուրնի (այսինքն՝ արի դուցազուններ— է. Խ.). եւ այժմ շորս տուն հայի մնացել է, բայց շատ խանութնի, վախճֆ տներ, ջաղացք, արտեր, պախշանի և այլք դեռ հայոց ձեռքն է»<sup>136</sup>: Ըստ այսմ կիևահայերը վտանգի պահին թշնամու դեմ դուրս էին բերում 500 ուղամիկ-քաղաքացիներ: Այս ուղադրավ տվյալը, գրանցված արժանահավատ ու ճշմարտախոս հեղինակի կողմից, բացառիկ արժեք ունի XV—XVI դդ. Կիևվում բնակություն հաստատած հայերի մոտավոր թիվը որոշելու համար: Եթե նույնիսկ ենթադրենք, որ կիևահայ ընտանիքներից յուրաքանչյուրն ի վիճակի էր աշխարհազորային ունենալու, ապա ընտանիքների թիվը պետք է առնուվազն 500 լիներ, իսկ հայ բնակիչների թիվը՝ 2500-ից ոչ պակաս (ամեն մի ընտանիք 5 անձից բաղկացած համարելով)<sup>137</sup>: Բայց նկատի պետք է առնել և այն հանգամանքը, որ քաղաքում կային նաև երիտասարդ որդի կամ հասուն տղամարդ շունեցող բազմաթիվ ընտանիքներ. եթե նրանց նվազագույն թիվը 100 հաշվենք, ապա կիևահայություն թիվը կավելանա ևս մի քանի հարյուրով:

<sup>134</sup> Առավել կամ նվազ շահով ունենալիներ էին միջնադարյան բոլոր քաղաքների բնակիչները, և արևմտյան, և արևելյան երկրներում: Հայտնի է, որ XIII դ. 30-ական թթ. Հայաստան ներխուժած մոնղոլական նվաճողների դեմ հերոսաբար մարտնչեցին հենց քաղաքացի-աշխարհազորայիները՝ Դանձակի, Անիի, Կարսի, Երզնկայի և այլ քաղաքների աշխատավոր բնակչությունը:

<sup>135</sup> Լեհ պետական պաշտոնյաները վկայել են, որ Կիևի ու մյուս սահմանամերձ քաղաքների բնակիչները սղինված են հրացաններով և զիտեն զիպուկ կրակել» (М. Грушевский, Եզդ. աշխ., էջ 154): Կիևցիները 1523 թ. բողոքագիր են ներկայացրել լեհ իշխանություններին ու մեղադրել իրենց վոյեվոդ Անդրեյ Նեմիրովիչին այն բանում, որ նա անօրեն քայլեր է կատարում, բռնադատում է իրենց ձիերն ու զենքերը, ստիպում արշավի դուրս գալ հեռիտան և այլն (Н. Костоморов. Богдан Хмельницкий, историческая монография, т. I, СПб., 1884, էջ 11):

<sup>136</sup> Միմեննի գույրի Լեհացույ Ուղևորութիւն, ուսումնասիրեց և հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1936, էջ 347—348:

<sup>137</sup> Այս հաշվով են առաջնորդվում միջնադարյան քաղաքների բնակչության թիվը մերձավորագույն որոշել ցանկացող ուսումնասիրողները:



Քվական այս արդյունքը դուցիս և փոքր-ինչ շափազանցված, արտահայտել է իրական պատկերը: Հայտնի է, որ նույն այդ ժամանակներում Լուցի քաղաքում բնակվել է 800 հայ ընտանիք (այսինքն շուրջ 4000 անձ)<sup>138</sup>, 1566 թ. հայերը Կամենեց-Պոդոլսկում ունեցել են 900 տուն (ընտանիքների թիվը հասել է մինչև 1200-ի)<sup>139</sup>, բազմամարդ է եղել նաև Լվովի հայկական գաղութը: Մուդավիայի Սուլավա մայրաքաղաքում հայերի թիվն անցել է 3000-ից<sup>140</sup> և այլն:

Իրականին մոտ համարելով Սիմեոն Լեհացու տվյալները, կարող ենք հետևցնել, որ Կիևի հայ աշխարհազորայիները պատկանելի ուղղմական թե՛ լինելով՝ ի վիճակի էին ոչ միայն արժանավայել տեղ գրավելու քաղաքի պաշտպանական համակարգում, այլև ապահովելու կիևահայ վաճառականների բոլոր ուղղութուններով շարժվող կարավանները հափշտակիչների հարձակումներից:

Ի լրումն վերոհիշյալի հարկ է նշել, որ մեջբերված փաստերի լույսի տակ այլևս կասկածելի չեն կարող համարվել գերմանական, ասպետական միաբանությունների և թուրք-թաթարական զավթիչների դեմ ուսև, լիտվացի և լեհ ժողովուրդների մղած կենաց ու մահու մարտերին հայերի բերած մասնակցության մասին առկա տեղեկություններն ու ակնարկները<sup>141</sup>:

Կիևի հայոց ինքնավար մարմնի՝ «Տանուտիրաց խորհրդի» հետ միասին, գաղութի կյանքում մեծ դեր է կատարել հայ եկեղեցին՝ միջնադարյան այն միակ կազմակերպությունը, որը սերտ կապեր պահպանելով հայրենի երկրի հետ ու իր հսկողության տակ պահելով գաղափարական ազդեցության բոլոր զսպանակները՝ հսկայական ազդեցություն է ունեցել մայր երկրից ծովերով ու ցամաքներով բաժանված գաղթօջախների բնակչության բոլոր խավերի վրա:

Շուրջ 3000 բնակիչ ունեցող գաղթօջախում, անշուշտ, պետք է գոյություն ունենային մի քանի հայկական եկեղեցիներ, որոնցից միայն մեկի՝ Աստվածածնի վերափոխման եկեղեցու մասին ունենք ստույգ տեղեկություն: Այն կառուցվել է XV դ կեսերին<sup>142</sup>: Տվյալներ կան նաև Կիևի մերձակայքում Գրիգոր Լուսավորչին նվիրված մի տաճարի վերաբերյալ, բայց հայտնի չէ, հայերի՞ն է պատկանել այն, թե եղել է ուսական տաճար<sup>143</sup>: Ուշագրավ է, որ կիևահայերը, մանավանդ ուրիշ վայրերից Կիև ժամանած հայ վաճառականները, հողեր իրենց կարիքները բավարարելու համար օգտվել են նաև ուսական եկե-

138 Սիմեոն Լեհացի, էջ 347:

139 Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 19:

140 «Ученые записки Молдавского филиала АН СССР», том VI (серия историческая), Кишинев, 1957, էջ 262:

141 Նկատի ունենք, մասնավորապես, 1410 թ. Գրոնովալդի և 1444 թ. Վառնայի ճակատամարտերը:

142 Н. Закревский. Описание Киева, том II, М., 1868, էջ 859, том I, М., էջ 453—454 (օգտվել ենք Գ. Միշկոյի վերոհիշյալ հոդվածից):

143 Л. Меликсет-Бек, նշվ. աշխ., էջ 120: Ռուսաստանի տարբեր վայրերում եղել են Գրիգոր Լուսավորչին նվիրված տաճարներ և, ավելի մեծ քանակությամբ՝ առանձին խորաններ. օրինակ Նովգորոդի մոտ գտնվող և 1198 թ. կառուցված Փրկչի եկեղեցու (Спас Нередицы) խորանի արտիզի վրա նկարված են Գր. Լուսավորչի, իսկ հյուսիսային պատին՝ Հոսիսիմյան կույսերը: Գր. Լուսավորչի պատկերված է նաև Խուսիսի վանքի հենց Լուսավորչի անվամբ 1445 թ. կառուցված եկեղեցում և այլն (տե՛ս Օ. X. Халпахчосян, նշվ. աշխ., էջ 12—13):

ղեցիներից: Այդ եկեղեցիների մայրը համարվող Սբ. Սոֆիայի տաճարում՝ Սբ. Անտոնի և Սբ. Թեոդորոսի խորանի հյուսիսային պատին, պահպանվել են Գրիգոր Լուսավորչի և Հովհաննիսի որմնանկարները. դրանց՝ ինչպես և տաճարի այլ մասերի որմնանկարների վրա վերջերս հայտնաբերվեցին Ղրիմից, Աղքերմանից և այլ վայրերից Կիև այցելած հայ վաճառականների և հոգևորականների կողմից խազված 24 հիշատակագրություններ<sup>144</sup>. Հայերեն տառերի հետքեր նկատվում են նաև տաճարում գտնվող Յարոսլավ Իմաստունի սարկոֆագի կափարիչի վրա<sup>145</sup>:

Վերջերս հայտնի դարձավ, որ Կիևո-Պեչորյան վանքի ստորգետնյա նորահայտ լաբիրինթոսներում ի հայտ են բերվել բացառիկ արժեք ունեցող ուսսերեն, լեհերեն և հայերեն արձանագրություններ: Յավոք, դրանք դեռևս չեն հրատարակվել, ուստի հայտնի չէ, թե երբ են գրվել և ինչ բովանդակություն ունեն<sup>146</sup>:

Կիևում մեկից ավելի հայկական եկեղեցիներ լինելու մեր ենթադրությունն ուժ է ստանում լեհական աղբյուրներից քաղված մի վկայությամբ, ուր խոսք կա 1371—1378 թթ. Կիևում հայ եպիսկոպոսության առկայության մասին<sup>147</sup>: Մի նոր շեղում կատարելով, փորձենք լուսարանել այս հարցը:

1328 թ. մի հիշատակարանի մեջ, առաջին անգամ լինելով, հիշվում է Սուղդացի (Սուրոժցի) Գրիգոր քահանայի որդի Ստեփանոս եպիսկոպոսը, որպես «երջանիկ արքեպիսկոպոս... Խրիմի աշխարհին»: Նրա թեմի կենտրոնն է Կաֆա քաղաքը: Չի անցնում երկու տասնամյակ և նույն այդ հոգևոր գործիչը հիշատակվում է իր ժամանակակիցների կողմից՝ արդեն որպես «Ամենայն հիւսիսային (կամ հիւսիսակա՛ն) կողմանց» կոչվող թեմի առաջնորդ<sup>148</sup>: Դժվար չէ կուսհել, որ այն ժամանակ Կաֆայում նստող հայ արքեպիսկոպոսին էին ենթարկվում Ղրիմից հյուսիս ընկած երկրամասերը, ուստի նաև Կիևում քնակություն հաստատած հայերը: Կացությունն, ըստ երևույթին, փոխվել է 1360—1370-ական թթ., երբ, ինչպես ասացինք վերը, Կիևում հայտնվում է ինչ-որ հայ եպիսկոպոս: Այդ մասին լուր ունի նաև Ալոյիսիոս Պիդուն. «զԿիև ասին լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին հայոց, ուրանոր

<sup>144</sup> Այս կարևոր արձանագրությունների մեծ մասը թվագրված է. կան 1507, 1510, 1514, 1537, 1545, 1556, 1557, 1551, 1575, 1577, 1605, 1607 թթ. հիշատակագրություններ, որոնք խնամքով հրատարակել է արձանագրագետ Գ. Գրիգորյանը (տե՛ս նրա «Армянские надписи Киевского собора святой Софии» հոդվածը՝ «Լրարեր», 1979, № 4, էջ 85—93): Գրանց մեջ Կիևը հիշատակված է իր Մանրուման (նաև՝ Մանրուման) անունով, ճիշտ այնպես, ինչպես կոչվում էր այդ քաղաքը միջնադարյան պարսկերեն, արաբերեն, լատիներեն, հայերեն մի շարք աղբյուրներում (տե՛ս Լ. Ս. Խաչիկյան. Новые материалы о древней армянской колонии Киева. «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, էջ 110—120):

<sup>145</sup> Վ. Հառարյունյան, Հայկական մի արձանագրության մասին («Տեղեկագիր», 1956, № 5, էջ 110):

<sup>146</sup> Е. Оберемок. Встреча с легендой. «Комсомольская правда», 1979 г. 30 июня, էջ 4:

<sup>147</sup> Я. Р. Дашкевич, նշվ. հոդվածը, «Բաները Մատենադարանի», № 11, 1973, էջ 241:

<sup>148</sup> «ՓՊ դարի... հիշատակարաններ», էջ 208, 350, 370, 397, 400, 410:

պատրիարք կոչէր արքեպիսկոպոսն և էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին... այլ և իրաւունս ունէր ձեռնարդրելոյ եպիսկոպոսունս», — գրում է նա<sup>149</sup>:

Լվովի հայկական առաջնորդարանում անցյալ դարի վերջերին պահվում էին Հայոց կաթողիկոսների կողմից առաքված բազմաթիվ կոնդակներ. դրանք խնամքով հրատարակված են Ղ. Ալիշանի կողմից: Կոնդակներից առաջինը՝ արված Մեսրոպ կաթողիկոսի կողմից, կրում է 1364 թվականը և ծանուցում է Լվով կենտրոնով եկեղեցական մի նոր թեմ ստեղծելու վճիռը<sup>150</sup>: Այնտեղ միաժամանակ ասված է, որ տարիներ առաջ, նույն այդ կողմերում եղել են ուրիշ առաջնորդ-եպիսկոպոսներ, որոնք, սակայն, գործել են «առանց մերոյ աթոռոյս հրամանի»: Ինչպիսի հասկանալի այս տեղեկությունը: Արդյո՞ք Գանձասարի կաթողիկոսներն են առաջին քաջերը կատարել այս երկրամասերում հայկական եկեղեցական թեմ հաստատելու ուղղությամբ, թե՞ ինքնազուտի ինչ-որ եկեղեցականներ են հրապարակ իշել, ենթակա չլինելով որևէ կաթողիկոսի: Այս հարցերին առայժմ չենք կարող հիմնավոր պատասխան տալ:

Հաշվի առնելով, ահա, այդ հանգամանքը, Մեսրոպ կաթողիկոսը եպիսկոպոս է օծում Գրիգոր անունով մի հոգևորականի և թեմական առաջնորդի պաշտոնով ուղարկում Լվով: Կոնդակի մեջ նորաստեղծ թեմի սահմանները նշված են այսպես. «Այլ և մերով բարձր առաքելական և հայրապետական ամենեքեկի հրամանաւո պարգևացար զձեզ՝ ըզլաւոյդ, և ըզԱւլայտէմիր, իւր սահմանեալ վիճակադ՝ Լուցկայի», այսինքն՝ Գալիցիայի և Վոլինիայի նշանավոր քաղաքները՝ Լվովը, Վլադիմիրը և Լուցկը<sup>151</sup>: Կիևն այստեղ չի հիշատակված և գուցե այն պառճառով, որ Կիև կենտրոնով եղել է հայ եկեղեցու մի ուրույն թեմ: Պետք է նշել, սակայն, որ մի քանի տարի անց փոխվում է իրավիճակը. 1379 թ. պարոն Նասրատինի որդի Հովհաննես կրոնավորը, հավանաբար Կաֆա քաղաքից մեկնում է Սիս՝ ինչ-որ թեմի (բացառված չէ, որ հենց Կիևի) եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Կաթողիկոսը, գծաված լինելով Լվովի առաջնորդ վերոհիշյալ Գրիգոր եպիսկոպոսի հետ, այս Հովհաննեսին եպիսկոպոս է կարգում ոչ միայն Լվով, Վլադիմիր ու Լուցկ քաղաքներն

149 Ա. Պիդու, Կարճատու տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ և ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ և մերձակայ աշխարհաց (տե՛ս «Բնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցոյն Հոռովմայ, ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 16): Կիևի հայ եպիսկոպոսի մասին Ա. Պիդուի հաղորդած տվյալները՝ գրավոր հիմք չեն ունեցել (նա գրում է «...ասեն լինել...»): Կարելի է կարծել, որ նա կամ իր տեղեկատուն Կիևի երբեմնի հայ եպիսկոպոսին օժտել է պատրիարքական իջավունքներով (այդ եպիսկոպոսն, իբր, իրավունք է ունեցել նույնիսկ ինքնազուտու կերպով ուրիշ եպիսկոպոսներ ձեռնադրելու...), փորձելով «փաստերով» հիմնավորել նիկոյ Քորոսովիչի անօրինական գործողութիւնները և պայքարը Հայոց եկեղեցու գերագահութեան դեմ (հիշենք, որ Ա. Պիդուն կաթոլիկ կղերական էր, որ միջոցների առջև կանգ չէր առնում, նիկոյ Քորոսովիչի հետ միասին, Լվովի հայերին բռնի կաթոլիկ դարձնելու համար):

150 Ղ. Ալիշան, Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ հաւատաշէայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 5—8:

151 Լուցկի հայոց եկեղեցին սուրբ Ստեփանոսի անվան էր. գոյություն է ունեցել 1445-ից շատ առաջ: Այդ թվականին Լիտվական իշխան Ավիգրիգայուն հայկական այդ եկեղեցուն նվիրել է ձեպերով գլուղը. հետագայում եկեղեցին ձեռք է բերել նաև այլ կալվածքներ («Հայ ժողովրդի պատմություն», հատոր IV, Երևան, 1972, էջ 362: Տե՛ս նաև Ե. Բ. КОЛОСОК, П. П. Мах, Л. П. Сажаров. Луцьк, Київ, 1972, էջ 17, որ գրված է «Գալիցո-Վոլինյան առևտրի բնագավառում հայերի կատարած դերը փոքր չէ: Վոլինում նրանք հաստատվել են արդեն XIII դ.: XIV—XV դդ. նրանք Լուցկում կառուցել են եկեղեցի»):

ընդգրկող թեմի վրա, այլև մեծապես ընդարձակում է հայ դաղթաշխարհի այդ առաջնորդության սահմանները՝ նրան հնթակա դարձնելով հին Ռուսիայի և Մոլդավիայի բոլոր հայկական դաղթօջախները: Թեմական նոր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը մի կարևոր հիշատակարանի մեջ կոչված է «Ամենայն Ըոսաց և Ալախաց աշխարհի» հայոց առաջնորդ<sup>152</sup>, իսկ նրա գլխավորած ընդարձակ թեմի սահմանները 1388 թ. կաթողիկոսական կոնդակի մեջ թվարկված են այսպես. «...գրեմք ի յամէնօրհնեալ և յաստուածապահ, յանուանի և յականաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լովն և յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Չիչովն, ի Կամենեցն, ի Լուցկայն, ի յԱլատէմուրն, ի Մանքրման, ի Վըլախաց երկիրն, և ի Պտինն, ի Ընկի-Սալայն, և ի յայլ ամենայն թեմն իւր առ հասարակ»<sup>153</sup>:

Այստեղ հիշատակված են, առաջին հերթին, Մոլդավական, ապա Գալիցիայի և Վոլինիայի ամենանշանավոր ու բազմամարդ հայկական դաղթօջախները: Թվարկումը կատարված է հաշվի առնելով նրանց աշխարհագրական դիրքը՝ հարավից հյուսիս. նախ Մոլդավիայի Սերաթ և Սեչով (գրված՝ Չիչով) քաղաքները, ապա Կամենեց-Պոդոլսկը, Լուցկը, Վլադիմիրը, Կիևը (Մանքրման)<sup>154</sup>. այնուհետև հիշատակված է Վլախաց երկիրը՝ միջնադարյան Վալախիան, որի նշանավոր քաղաքներում ևս (Տրգովիշտեում, Բուխարեստում և այլն) վաղ ժամանակներից բնակվել են հայ դաղթականներ: Որոշ դժվարությունների ենթահանդիպում վերջին երկու՝ Պտին և Ընկի-Սալայ տեղանունների ճշգրտման ճանապարհին:

Ղ. Ալիշանը, կասկածանքով, Պրտինը նույնացրել է Հունգարիայի մայրաքաղաք Պուտա-Քէշտի (իմա՝ Բուդապեշտ) հետ<sup>155</sup>: Կարծում ենք, որ կասկածների հիմք չկա, քանի որ Կամենիցյան «Տարեգրքում», 1526 թ. վերաբերող մի գրանցման մեջ այդ մասին ասված է շատ որոշակի. «զՊուտին քաղաքն՝ որ էր դախթն Մաճարաց» (այսինքն՝ «Պուտին քաղաքը, որ Մաջարների աթոռանիստն էր»)<sup>156</sup>:

Մնում է պարզել Ընկի-Սալայ կոչված բնակավայրի տեղագրությունը: Մեր կարծիքով կաթողիկոսական կոնդակը հարդարող գրագիրը կամ Ղ. Ալիշանի համար արտագրող անձնավորությունը՝ այս տեղանունը սխալ է վերծանել. բնագրում, մեծ հավանականությամբ, եղել է Ընկի-Սարայ, այսինքն՝ Ենկի (նոր) Սարայ. հայտնի է, որ այդպես էր կոչվում Ոսկե Հորդայի նոր մայրաքաղաքը՝ Սարայ-Բերքեն, ուր, ինչպես ասել ենք արդեն, հաստատվել էին մեծ քանակությամբ հայ դաղթականներ:

Կրկին դառնալով հայ եկեղեցու «Ամենայն Ըոսուցաց և Ալախաց» կոչվող թեմին, պետք է եզրակացնենք, որ այդ թեմի առաջնորդի հոգևոր իշխանությունը, ընդգրկելով անձայրածիր տարածություններ, իր մեջ է առել Ոսկե

152 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1527, էջ 7ա, 667բ (հմտ. «ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 529):

153 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 9. տե՛ս Թեոդորոս կաթողիկոսի կոնդակը:

154 Մանքրմանի կապակցությամբ Ղ. Ալիշանը գրել է. «համարիմք Ագրեման», այսինքն՝ նույնացրել է Գնեստրի գետաբերանի նշանավոր նավահանգիստ, վաճառաշահ Ագրեմանի հետ: Արդեն ապացուցել ենք, որ Մանքրմանը Կիևն է (տե՛ս մեր «Новые материалы о древней армянской колонии Киева», վերահրշյալ հոդվածը):

155 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 4:

156 նույն տեղում, էջ 17:

Հորդայի մայրաքաղաքից սկսած մինչև Հունգարիայի մայրաքաղաքն ընկած երկրամասերի հայկական գաղթօջախները:

Կիև-Մանրերմանը, եթե նույնիսկ չի եղել երբևէ աթոռանիստ կենտրոն, ապա, անտարակույս, նշանակալից դեր է կատարել՝ որպես այս թեմի ամենաբազմամարդ հայկական գաղթօջախներից մեկը:

Լիտվայի մեծ իշխան, նշանավոր Կազիմիր IV-ի<sup>157</sup> կողմից տրված հրովարտակներով կիևահայերը քաղաքի բուն բնակիչներին համահավասար իրավունքներ են ձեռք բերել տնտեսական գործունեության բոլոր մարզերում. ազատորեն զբաղվել են առևտրով ու արհեստներով, կառուցել են տներ, ունեցել բանջարանոցներ և այլն:

Հայերի բնակության հիմնական վայրը եղել է Պոդոլ թաղամասը՝ Դնեպրի ափին. այստեղ նրանք ունեցել են իրենց հավաքատեղին, բազմաթիվ բնակելի տներ, արհեստանոցներ, խանութներ ու պահեստներ<sup>158</sup>: Գաղթօջախի բնակչության մեծամասնությունն, անշուշտ, զբաղված է եղել առևտրով: Եղել են մեծահարուստ վաճառականներ, որոնք մտել են քաղաքի արտոնյալ դասի մեջ և օգտվել Մագդեբուրգյան իրավունքից<sup>159</sup>: Կարելի է ենթադրել, որ այդ դասի մեջ էին մտնում նաև հայազգի սակավաթիվ պետական պաշտոնյաները<sup>160</sup>, ինչպես նաև թարգմանի պաշտոն ունեցող անձինք, որոնք հաճախ կատարում էին դիվանագիտական հանձնարարություններ: Հայեր են եղել նաև բերդաբնակ քաղաքացիների մեջ, բայց հայերի մեծամասնությունը, ինչպես ասվեց, բնակվել է Պոդոլ թաղամասում. այստեղ է կառուցված եղել նաև Աստվածածնի վերափոխման եկեղեցին:

Վաճառականներից և առևտրի հետ աղերսվող այլ զբաղմունքի տեր քաղաքացիներից բացի, կիևահայերի մեջ եղել են մեծ թվով արհեստավորներ. կաշիզործներ, մուշտակագործներ, կոշկակարներ, գինեգործներ, ջրաղացալաններ և այլն:

Հայկական գաղթօջախների պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, ինչպես և սպասելի էր, կենտրոնական տեղ է հատկացվում առևտրական դասի գործունեության հարցերին: Արհեստագործության տարրեր ճյուղերի զարգացման գործում հայերի կատարած դերի մասին նույնպես որոշ նյութեր են գրվել շրջանառության մեջ: Գրեթե անտեսված է, սակայն, գյուղատնտեսության բնագավառը: Միջնադարյան քաղաքների բնակչության մի զգալի մասն զբաղվել է գյուղատնտեսությամբ: Անվարան կարելի է նշել, որ գրեթե բոլոր երկրներում, ուր ստիպված խարխախ են նկատվում տարագիր հայ զանգվածներ, նրանց մեջ եղել են հմուտ ալգեզործներ և բանջարաբույծներ:

<sup>157</sup> Մեծ իշխան է եղել 1440—1447 թթ., այնուհետև դարձել է Լեհաստանի թագավոր. մահացել է 1492 թ.:

<sup>158</sup> Դ. Մ. МЫШКО, նշվ. աշխ., էջ 115—116:

<sup>159</sup> Մագդեբուրգյան իրավունքից օգտվող, ուստի հայկական ինքնավար մարմինների իրավասությունից զուրս գտնվող մեծահարուստ բոլոր հայ վաճառականներին ճանաչելն անհնարին է. նրանցից շատերի անուն-ազգանունները առևտրականացված են այն աստիճան, որ հայկական ծագման հետքերն իսպառ ջնջվել են: Անկասկած հայեր են ստորև հիշատակվողները. Իլյա Օրմենին, Յուլյեյ Օրմենին, Մորոզին Օրմենին, Կիրկոս Օդիրկովիչ, Ֆեդկո Սերկիզեն (տե՛ս Դ. Մ. МЫШКО, նշվ. աշխ., էջ 117):

<sup>160</sup> Այդպիսի բարձրաստիճան մի պաշտոնյա է եղել Փիլիպպոս Հայր, որը երկարամյա ծառայությունների դիմաց 1540 թ. Լիտվայի մեծ իշխան Սիգիզմունդից կալվածքներ է ստացել Կիևի շրջակայքում (Դ. Մ. МЫШКО, նշվ. աշխ., էջ 115):

Եվ նրանք մեծ ջանքեր են գործադրել իրենց նոր բնակավայրերում արմատավորելու գյուղատնտեսական բարձր կուլտուրաների մշակութունը: Նույնը պետք է ասել նաև կիևահայերի մասին: Քաղաքից դուրս՝ շրջակա գյուղերում<sup>161</sup>, և քաղաքի տարրեր թաղամասերում՝ Շչեկավիցայում, Օբոլոնում, Վիշգորոդի մոտակայքում, և, մանավանդ, իրենց բնակության բուն վայրում՝ Պոդոլում, հայերն ունեցել են այգիներ, ստեղծել են գինեգործարաններ, և իրենք էլ վաճառքի են հանել իրենց սլատրաստած գինիները: «Հայերը, — իրավացիորեն նշել է Դ. Միշկոն, — որպես գինեգործության բնագավառի մասնագետներ, եռանդուն կերպով նպաստել են խաղողագործության զարգացմանը Կիևում»<sup>162</sup>:

Գաղթած լինելով դաշտավարական և այգեգործական մշակույթի հազարամյա ավանդույթներ ունեցող մի երկրից, գյուղատնտեսության մարդում աշխատող կիևցի հայերը, անտարակույս, կիրառելու էին երկրագործության մշակույթի իրենց նախնիներից ժառանգած արդյունավետ եղանակները, հայ-

161 «Պատմական փաստաթղթերը, — գրել է Դ. Միշկոն, — վկայում են, որ այդ ժամանակ (XV դ.) հայերը Կիևի մոտակայքում՝ Կուրեննկայում, Սիրեցում, Փխոտմիրյան ճանապարհի երկայնքով՝ ունեցել ու մշակել են բանջարանոցներ և այգիներ» (նշվ. աշխ., էջ 114):

162 Այս առիթով հարկ ենք համարում, մի փոքր շեղում կատարելով, հարևանցիորեն անդրադառնալ միջնադարյան Ղրիմի խաղողագործության զարգացման գործում հայերի կատարած դերին, որ երբեմն անտեսվում է որոշ ուսումնասիրողների կողմից (տե՛ս, օրինակ, М. К. Старокадомская. Русское торговое население гегуэзской Каффы. «История и археология средневекового Крыма», М., 1958, էջ 154): Վ. Միրալեյանն արդեն լույս է սփռել այս հարցի վրա (տե՛ս «Ղրիմի հայկական գաղութի պատմություն», I, էջ 201): Ավելացնենք, որ Սուրխաթում և Կաֆայում բնօրինակված հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրանցված են մի շարք հայ այգեգործ-գինեգործների անուններ. հիշատակված են, օրինակ, Գրիգորիս և Տուրք այգեպանները, Աղբարշահ, էվատշահ և Օղուլ գինեգործ-գինեծախները (տե՛ս «ՓԳ դարի... հիշատակարաններ», էջ 366, 367, 576, «ՓՆ դարի... հիշատակարաններ», Բ, էջ 112):

Գոնի տափաստանում, ինչպես և Հյուսիսային Կովկասի մի շարք շրջաններում ևս (մասնավորապես Ղզլարում և Մոզդզեկում)՝ խաղողագործության զարգացումն անխզելիորեն կապված է հայերի անվան հետ (Վ. Բ. Բալխուպաշյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, էջ 146): Ըստ որոշ տեղեկությունների, Ֆրանսիայի Փիլիպպոս Հանդուզն թագավորը (1342—1402) Հայաստանից հրավիրել է հայ գինեգործներ, որոնց գործածած հնձանները ցարդ պահվում են Դիժոնի գինու գործարանում (Ա. Ալպոշաճյան, Պատմություն հայ գաղթականության, Բ, Գահիրե, 1955, էջ 618): Տեղեկություններ կան Աֆղանըստանի Քարուլ քաղաքում գինեգործությամբ զբաղված հայերի մասին և այլն: Ի լրումն այս ամենի հիմքեր կան ենթադրելու, որ հայերը խաղողագործությամբ և գինեգործությամբ ըզրադվելու որոշ փորձեր են կատարել նույնիսկ հեռավոր Չինաստանում, տակավին Թան գինաստիայի տիրապետության զարաշրջանում, այսինքն՝ 618—907 թթ. միջոցին: Պահպանվել են այդ ժամանակ պատրաստված հախճապակե գունազարդ արձանիկներ՝ տարբեր ազգի մարդկանց՝ ույզուրների, թոխարցիների, կաշգարցիների, խորեզմցիների, պարսիկների, սեմական ժողովուրդների և այլոց դիմորոշ պատկերներով: Գրանց շարքում ուշագրավ տեղ են գրավում հայի արտաքին հատկանիշներով (արծվակտուց-կեռ թիթ, սև բևի ու մորուք) օժաված անձանց արձանիկները, որոնք կերտված են ծալապատիկ նստած և յուրաքանչյուրը մեկական է ՝ ինով լի տիկ բանած (The werteners among the figurines of the t'ang dynasty o China, by Jane Gaston Mahler, Roma, 1959. գունավոր ներդիրը՝ զբված 94—95 էջերի միջև և պատկերների բաժնի III a, b, c, d սև-սպիտակ լուսանկարները):

Այս մի քանի փաստերը հիշատակեցինք այն հույսով, որ առաջիկայում որևէ տնտեսագետ-պատմաբան, խնամքով հավաքելով ցարուցրիվ բոլոր նյութերը, հատուկ հետազոտություն է գրելու տարբեր երկրների գյուղատնտեսության զարգացման գործում հայ գաղթականների կատարած դերի մասին:

րենիքից բերած կամ հայրենի ավանդույթներով ստեղծած արտադրական գործիքները՝ նպաստելով դրանց տարածմանն ու արմատավորմանը աշխարհագրական այդ նոր միջավայրում<sup>163</sup>։

Այս առումով հետաքրքրական են նաև Կիևի հայկական համայնքին պատկանող ջրաղացների մասին առկա տեղեկությունները։ Միմեոն Լեհացին իր «Ուղեգրության» մեր կողմից արդեն մեջբերված հատվածում հավաստում էր լուկ, որ Կիևում հին ժամանակներից մինչև իր օրերը, գործում էին հայերին պատկանող ջրաղացներ։ Դրանց մասին տեղեկություններ կան նաև օտար աղբյուրներում։ Փաստաթղթերը վկայում են, գրել է Դ. Միշկոն, որ հայերը Միրեց գետի վրա ունեցել են ամբարտակ, արհեստական լճակ ու ջրաղաց, որից ստացվող եկամուտը հատկացված է եղել եկեղեցու կարիքներին<sup>164</sup>։ Հիշատակված ամբարտակն ստեղծվել է, անշուշտ, Միրեց գետի ջուրը ջրաղացի թափանիվն աշխատացնելու համար անհրաժեշտ մակարդակի բարձրացնելու նպատակով։ Պետք է ենթադրել, որ Հայաստանում լայն տարածում գտած ջրաղացների նմանողությամբ Կիևի մերձակայքում կառուցված ջրաղացներն ընդօրինակվել են տեղացիների կողմից, տարածվել շրջակայքում, և իրենց նպաստը բերել հացահատիկի աղացման տաժանակիր աշխատանքի դյուրացման գործին։

Տնտեսության տարրեր բնագավառներում կիևահայերի ծավալած գործունեության բնագավառները վերոհիշյալով շին կարող սպասված նկատվել։

Որոշ ուսումնասիրողներ, օրինակ, հարևանցիորեն նկատել են, որ հայ ճարտարապետության ու որմնանկարչության ազդեցության հետքեր են նրկատվում սուրբ Սոփիայի տաճարի, Միքայել հրեշտակապետի ոսկեզմբեթվանքի և Կիևի ճարտարապետական հնագույն այլ հուշարձանների վրա<sup>165</sup>։ Կա՞ն արդյոք հիմնավոր փաստեր այսպիսի եզրահանգումների համար, չբնութենք։ Հարցը կարևոր է և կարոտ մասնագիտական անկանխակալ հետազոտությունների։

Ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում ևս մի հարց։ Հայտնի է, որ կլովում՝ Գալիցյան Ռուսիայի հայաշատ այդ մայրաքաղաքում, հայ վարպետների կողմից, թերևս հենց հայ վաճառականների նախաձեռնությամբ, կոփվել են սեփական արծաթե դրամներ<sup>166</sup>։ Արծաթե նման դրամներ հատվել են

163 Նշանավոր հնագետ Ա. Վ. Արցիխովսկին, որ շեշտում է արտադրական գործիքների զարգացման փուլերի ուսումնասիրության սոցիոլոգիական կարևոր նշանակությունը, ձեռքի տակ շունենալով վստահելի աղբյուրներ, հեռամեծ դատողություններ է անում բնարկման նյութ դարձնելով Հոռոմի երկրագործական մշակույթի մասին հայտնի նյութերը, որոնք Ռուսաստանի հետ անմիջական առնչություն չունեն (տե՛ս А. В. Арциховский, Социологическое значение эволюции земледельческих орудий. «Труды социологической секции РАНИОН», 1927, էջ 133)։ Պետք է հուշել, որ շոշափելի արդյունքներ կարելի է ստանալ հայկական նյութի օգտագործման ճանապարհով, նկատի առնելով հայկական բազմաթիվ գաղթօջախների գոյությունն ու հայ երկրագործների և այգեգործների գործունեությունը ռուսական այդ երկրամասերում։

164 Д. Мышко, նշվ. աշխ., էջ 115։

165 Նույն տեղում, էջ 114։

166 Я. Д. Исаевич, նշվ. աշխ., («Вопросы истории», 1973, № 1, էջ 95)։ Այստեղ ասված է, որ Մոլդավական դրամակշտային համակարգը ձևավորվել է Գալիցյան համակարգի օրինակով։ Նկատի ունենալով մոլդավական բաղաճներում հայ առևտրական կապիտալի կատարած մեծ դերը, կարելի է հետևել, որ դրամակոփության գործն այստեղ ևս հայերի մենաշնորհն է եղել։

նաև Կիևում՝ X դ. վերջերին—XI-ի սկզբներին (դրանից հետո, երկար ժամանակ, շրջանառության մեջ են գտնվել Կիևում պատրաստված որոշակի կշիռ ունեցող արծաթե կշռաչափերը)<sup>167</sup>: Դրամագետների գործն է, առաջիկայում հատուկ ուսումնասիրության նյութ դարձնելով այս հարցը, պարզել, թե Կիևյան դրամների ու կշռաչափերի արտադրության մեջ ինչ դեր է վիճակված եղել հայ վարպետներին:

Լուծման կարոտ հարցերի այս շարքը կարելի է չբացնել նոր կետերով, որոնք, վերը թվարկվածներին դումարվելով, հաստատելու են այն միտքը, թե կիևահայ գաղթօջախի պատմության ամբողջական պատկերը ուրվագծելու համար հաղթահարվելու են դեռևս շատ դժվարություններ:

Լեհաստանի և Լիտվական մեծ իշխանության միջև կնքված Լյուբլինյան դաշնագրից հետո (1569 թ.) Կիևի վիճակը ավելի է վատթարանում: Լեհ ազնվականությունն ու կաթոլիկ եկեղեցին սկսում են բռնազրավել ուկրաինացիներին և հայերին պատկանող քաղաքամերձ կալվածքները: Ըստ երևույթին հենց այս ժամանակ մեծ ծավալ է ստանում կիևահայերի արտագաղթը հարավ-արևելյան Եվրոպայի վաճառաշահ այլ կենտրոններ: Արտագաղթի հոսքը չի դադարում նաև այն բանից հետո, երբ Բեչչոսպոլիտայի թագավոր Ստեփան Բատորին (1575—1586) հատուկ հրովարտակով վերահաստատում է հայերի իրավունքը՝ Կիևում կալվածքներ, խանութներ, արհեստանոցներ ունենալու 1596 թ. կնքվում է Բրեստի եկեղեցական ունիան. Ուկրաինական եկեղեցին ստիսորդարար միավորվում է կաթոլիկ եկեղեցու հետ և բնգունում Հռոմի պապի գերիշխանությունը: Դրանից հետո, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Միշկոն, կիևահայերը շատ ավելի անզուսպ ճնշումների են ենթարկվում: Կաթոլիկ և ունիթոն հոգևորականները կանգ չեն առնում միջոցների առջև՝ հայերին ևս կաթոլիկ դարձնելու և հայ եկեղեցուն պատկանող կալվածքները բռնազրավելու ճանապարհին: Կիևը չլքած սակավաթիվ հայերը, Լվովի հայկական մագիստրատի օժանդակությամբ, փորձում են դիմադրավել այդ ճնշումներին, իրենց ձեռքում պահել համայնապատկան կալվածքները, սակայն այդ պայքարն, ի վերջո, անհաջող վախճան է ունենում:

Եվ այսպես, XVII դ. կեսերին կիևահայ գաղութը՝ շուրջ վեց հարյուրամյակ գոյություն ունենալուց հետո եզրափակում է իր պատմության միջնադարյան շրջանը: Խամրում է գաղթօջախը՝ հսկայական դեր կատարելով հայ և ուրա ժողովուրդների միջև տնտեսական ու մշակութային կապերի ստեղծման ու ամրապնդման բնագավառում, մի քանի տասնամյակ հետո, պատմական ու սոցիալ-տնտեսական նոր պայմաններում նորից վերակենդանանալու հեռանկար ունենալով:

Իրենց հաջաքը դեպի Ռուսաստան ուղղած հայերի համար Կիևի տեղը բռնում է համայն Ռուսիայի նոր ու հզոր մայրաքաղաք Մոսկվան:

Ինչ ճանապարհով էին հայ վաճառականները Կիևից ուղևորվում Մոսկվա, առաջիկա այդ հարցին պատասխանելու հնարավորություն չունենք: Ամենակարճ ուղին Գեմնա գետի եզերքով էր բնթանալու և կանգառներ էր ունենալու Նովգորոդ-Սևերսկ ու Բրյանսկ քաղաքներում: Սակայն չի բացառված նաև Գնեսլայից ուղին՝ Լյուբեչ, Գոմել, Սմոլենսկ կանգառներով: Սրանցից սրն է

<sup>167</sup> В. Л. Янин. Денежно-весовые системы русского средневековья. Домонгольский период, М., 1956.



ավելի բանուկ եղել և երբ, կարելի կլինի սլարզել մանրակրկիտ հետազոտություններ կատարելուց հետո:

Հայտնի է, որ XV դ. սկսած Պուտիվլ քաղաքը դառնում է տնտեսականաշխույժ կապերի աչքի ընկնող կենտրոն: Արիմից ու Քուրքիայից Պուտիվլ են ժամանում օտարազգի (նաև հայ) մեծաքանակ վաճառականներ, որոնք այստեղ հանգիստում են Մոսկվայի մեծ իշխանության Կոլոմնա ու Մոժայսկ քաղաքներից եկած ուս վաճառականների հետ<sup>168</sup>:

Հայտնի է միաժամանակ, որ XVII դ. սկզբներից որոշակի դեր է սկսում կատարել նաև ուկրաինական կաղակական ամենախոշոր զորամիավորման՝ Նեժինյան գնդի կենտրոնը հանդիսացող Նեժին քաղաքը: Վերջերս գիտական շրջանառության մեջ դրվեցին մի շարք արխիվային փաստաթղթեր, որոնք հետաքրքրական տեղեկություններ են պարունակում XVIII դ. 30-ական թթ. այդ քաղաքում մշտական բնակություն հաստատած կամ առևտրական գործերով եկող ու գնացող բազմաթիվ հայ վաճառականների մասին<sup>169</sup>:

Նկատի ունենալով այդ փաստերը, մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հայ վաճառականները Կիևից Մոսկվա երթևեկել են Պուտիվլ—Բրյանսկ ուղեգծով, սակայն այդ վայրերի քաղաքներում մշտական ու կայուն գաղթօջախներ չեն ստեղծել:

• • •

1380 թ. սեպտեմբերի 8-ին ուսական 150-հազարանոց բանակը, որի մեջ միավորվել էին գրեթե բոլոր բաժնետիրական իշխանությունների զնդերը, սլարտության մատնեցին Ոսկե Հորդայի կրկնապատիկ զորքերին, որոնք թումանբեկ Մամայի գլխավորությամբ արշավանքի էին դուրս եկել Մոսկվայի վրա: Այդ առաջին խոշոր հաղթանակն էր 150 տարի ուսական հողը կեղեքող դաժան թշնամու դեմ: Հաղթանակը ցույց տվեց, որ ուսական իշխանությունների կոտորակված ուժերի միավորումն զրավականն է լինելու մոնղոլական անարգ լծի թոթափման, մի լուծ, որը «ոչ միայն ճնշում, այլև անպատվում ու ցամաքեցնում էր իր դոճը դարձած ժողովրդի հոգին իսկ» (Կ. Մարքս): Կուլիկովյան փառավոր հաղթանակով Մոսկովյան մեծ իշխանությունը վերջնականապես իր ձեռքն առավ ուսական հողերի միավորման հայրենանվիր գործի ղեկավարությունը և դուրս եկավ տնտեսական ու քաղաքական զարգացման լայն ասպարեզ:

Հստ երևույթին հենց այս ժամանակաշրջանում էր, որ հայերը հաստատվեցին Մոսկվայում և սկսեցին զգալի դեր կատարել տարեցտարի հզորացող ուսական այդ իշխանության տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ արտաքին առևտրի բնագավառում:

Բազմիցս վկայակոչվելով համընդհանուր ճանաչում է գտել ուսական տարեգրություններից քաղված այն տեղեկությունը, որի համաձայն 1390 թ. Մոսկվայում ծագած հրդեհն սկսվել ու տարածվել է Աբրահամ անունով մի հայի բնակարանից. «Загорелся посад за городом от Аврама некоего ар-

168 М. В. Фехнер. Եզվ. աշխ., էջ 62.

169 Վ. Ա. Միխայլան, Արիմի հայկական գաղութի պատմություն, I, էջ 187—193. Вардкес Микаелян, Ваграм Мартиросян. Материалы по истории армянского купечества в России (30-ые годы XVIII в.). «Լրաբեր» 1978, №4, էջ 79—99.

менина»<sup>170</sup>, Մասնագետների կարծիքով, տարեգիրը «քաղաքից դուրս՝ առևտրա-արհեստագործական արվարձան» ասելով նկատի է ունեցել նշանավոր Կիտայգորոդը, որի Վարվառկա կոչվող ամենաբանուկ փողոցի վրա՝ դեռևս XVII դ. կար մի հատված, ուր «տեղավորվում էին հայերն ու հույները»<sup>171</sup>։ Ուրիշ հավաստի տեղեկություններ՝ Մոսկվայում բնակություն հաստատած կամ Մոսկվայի հետ տնտեսական սերտ կապեր ստեղծած հայերի մասին այս դարաշրջանից չեն պահպանվել։ Եվ այն կարծիքն է տիրապետում, որ հայերի համակողմանի կապերը համայն Ռուսիայի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն դառնալու ընթացքի մեջ մտած Մոսկվայի հետ՝ տնտեսանելիորեն ուրվագծվում են այս դեպքերից առնվազն մեկ դար հետո։ Այսուհանդերձ, սկզբնաղբյուրների մեջ առկա որոշ ակնարկներ հնարավորություն են ընձեռել ուսումնասիրողներին Մոսկվայի հայկական գաղութի պատմության ակունքները որոնել հենց այս ժամանակաշրջանում։

XIV—XV դդ. սահմանագլխին Մոսկվայի մետրոպոլիտն էր Կիպրիանոսը, որը կատաղի հարձակումներ էր գործում հայերի դեմ՝ նրանց դավանանքը համարելով խոտելի հերձված։ Նա խստիվ պատվիրում էր բոլոր ուղղափառներին՝ շփում շունենալ հայերի հետ, տոներին ու պասուց օրերին շքնդունել նրանց իրենց հարկի տակ, շահաստակ նրանց հետ մտերմական կապեր և այլն։ Մետրոպոլիտն այսպիսի խիստ հրահանգներ չէր արձակի, և թե կյանքում հակառակը տեղի շունենար։ Ռուս հասարակ մարդիկ, — ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը, — էական տարբերություններ չէին տեսնում ռուս-ուղղափառ և հայ-լուսավորչական դավանանքների միջև, հաճույքով մտերմանում էին հայերի հետ, ընդունում էին նրանց իրենց եկեղեցիներում, խնամիրական կապեր հաստատում և այլն։ Դրանց դեմն առնելու նպատակն էին հետապնդում Կիպրիանոսն ու նրա հետնորդները։ 1423 թ. հաստատված եպիսկոպոսների ձեռնադրության ծեսի մեջ հատուկ կետ սահմանվեց այն մասին, որ պետք է խստագույնս արգելվեն հայերի և ուղղափառների (ռուսների) միջև տեղի ունեցող ամուսնությունները, խնամիրությունը և այլն<sup>172</sup>։

Այս կարգի կողմնակի վկայությունները, որքան էլ հետաքրքրական համարվեն և արժանի լինեն ուշադրության՝ անկարող են բավարարել մեր հարցասիրությանը։ Հին Մոսկվայի հայկական գաղութի պատմության գիտական լուսաբանության համար նոր նյութեր են պետք։

Բարեբախտաբար, այդպիսի նյութեր կան. բայց դրանք կարող են օգտագործվել մեր առջև ծառայած խնդիրների լուծման համար այն բանից հետո միայն, երբ նախօրոք հարթված լինի Մոսկվայի միջնադարյան պատմության կնճիղներից մեկը՝ կապված Մոսկվայի տնտեսական կյանքում մեծ դեր կատարած «սուրճցի հյուրերի» ազգային պատկանելության և գործունեության բնագավառների հետ։

<sup>170</sup> «Троицкая летопись», էջ 436, ПСРЛ, т. XVIII, էջ 140. В. Е. Сыроечковский. Гости-Сурожане, М., 1935, էջ 23 և այլն։

<sup>171</sup> М. Н. Тихомиров. Средневековая Москва..., էջ 215։ Մ. Տիխոմիրովը Վարվառկա (նախկին Վարսկայա) փողոցի մասին գրում է. «Улица быстро стала оживленной артерией великого посада. Одним концом она входила к торговым рядам, и Кремлю, другим — к городскому рву» (նույն տեղում, էջ 47—48)։

<sup>172</sup> М. Н. Тихомиров, նշվ. աշխ., էջ 216։

\* \* \*

XIV դ. ընթացքում Մոսկվան բարգավաճել և դարավերջին դարձել էր Արևելյան Եվրոպայի ամենախոշոր տնտեսական կենտրոններից մեկը: Մեծ էին նրա կապերը ինչպես թաթարական տափաստանների, այնպես էլ եվրոպական երկրների հետ: Նովգորոդն ու Մոսկվան մրցակիցներ էին ուսական իշխանությունների և Եվրոպայի միջև տեղի ունեցող ու շարունակ ափելի լայն ծավալ ընդունող ապրանքափոխանակության բնագավառում: Եվ եթե Նովգորոդը ուսական ապրանքներ էր մատակարարում Հանգայի քաղաքներին, Մոսկվան իր հիմնական ուշադրությունը սևեռել էր հարավի վրա, կապված լինելով Իտալական նշանավոր քաղաք-պետությունների՝ Ջենովայի ու Վենետիկի հետ: Տնտեսական այդ կապերի հանգուցակետը Ղրիմի նշանավոր ծովափնյա քաղաքներն էին՝ նախ Սուրոժը, ապա Կաֆան: Մինչև XV դ. 70-ական թթ., այսինքն՝ մինչև Ղրիմի գրավումը թուրքերի կողմից, այդ քաղաքները (մասնավորապես՝ Կաֆան) վիթխարի դեր էին կատարում Ռուսաստանի համար՝ լինելով միջերկրածովյան հարուստ երկրների հետ տնտեսական կապերի հանգուցակետ, դեպի Եվրոպա բացված լայնարձակ հորիզոն ունեցող մի պատուհան:

Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ Կաֆայում հայերը մեծամասնություն են կազմել, իսկ Սուրոժում շատ ազդեցիկ դիրք գրավել: Հարցի ուսումնասիրության արդի վիճակում կարելի է ապացուցված համարել, որ հիմնականում այդ քաղաքների հայ վաճառականներն էին զբաղված արևելյան երկրներից ներմուծվող ապրանքների՝ մասնավորապես մետաքսե շքեղ գործվածքների, համեմունքի, բուրումնավետ նյութերի և թանկագին քարերի առևտրով: Մոսկվայում արևելյան այդ ապրանքների առևտրի մենաշնորհը գտնվում էր վերոհիշյալ «սուրոժցի հյուր» («гости сурожане») կամ ուղղակի «սուրոժցի» («сурожанин») կոչվող վաճառականների ձեռքում<sup>173</sup>:

Եվ այսպես, «սուրոժցի հյուր» կամ «սուրոժցի» էին կոչվում Մոսկվայի բարձրագույն դասի վաճառականները, ի տարբերություն «սուկոննիկների» (մահուղավաճառների) և մյուս առևտրականների: Սրանք իրավական իրենց գոյավիճակով հավասարեցված էին բոյարներին և հոգևորականությանը, ազատված էին մի շարք հարկերից ու մաքսերից, իրավասու էին առանց տուրք վճարելու իրենց տներում ոգելից խմիչք պահելու և, որ ամենակարևորն է, անմիջապես ենթակա էին մեծ իշխանի դատական ատյանին<sup>174</sup>:

173 Նշենք այստեղ, որ միջնադարյան տարբեր երկրներում լայնորեն գործածվել են որևէ քաղաքի անվան հետ աղերսված ուրիշ համանման տերմիններ: Այսպես՝ օրինակ, Միջին Ասիայում արտաքին առևտուրը եղել է բուխարացի վաճառականների մենաշնորհը, և ըստ այն մարդիկ, որոնք զբաղվել են այդ գործով, կոչվել են «բուխարայուրտուչի» («Очерки истории СССР», т. II, էջ 431): Թուրքական սուլթանները երկար ժամանակ Բարձր դասն թարգմանիչների պաշտոնին էին կոչում և Մոլդավիայի ու Վալախիայի գոսպոդոթներ էին կարգում Կ. Պոլսի Ծանար թաղամասի հույներին, ըստ այդմ վերոհիշյալ պաշտոնները զբաղված անձինք կոչվում էին «ֆանարիտաներ»: XVI դ. Մոսկվայում կար վաճառականների մի դաս, որին պատկանող անձինք կոչվում էին «սմոլենցի» («смоляне»), սրանք Սմոլենսկ քաղաքի բնակիչներ էին (Б. Н. Флоря. Привилегированное купечество... «История СССР», 1977, № 5, էջ 149): Այս կարգի փաստերի թիվը կարելի է կրկնապատկել:

174 М. Н. Тухомиров. նշվ. աշխ., էջ 160:

«Սուրոժցի հյուր» կամ «սուրոժցի» տերմինները լայնորեն գործածական լինելով առանին կենցաղում՝ կիրառվում էին նաև տարեգրիների կողմից, սակայն պաշտոնական հանգամանք չէին ստացել: XIV—XV դդ. Մոսկվայի մեծ իշխանների ստորագրած պաշտոնական փաստաթղթերի մեջ վաճառականների այս դասը հիշատակվում է «հյուր» («гость») անունով միայն, մի տերմին, որ վաղ ժամանակներից հատկացվում էր «օտար երկրներից կամ այլ քաղաքներից ժամանած այն վաճառականներին, որոնք բնակվում կամ առևտուր էին անում ոչ այն վայրերում, ուր գրանցված էին»<sup>175</sup>, այլ խոսքով «սուրոժցի» վաճառականները, շնայած Մոսկվայի տնտեսական կյանքում մեծ դեր էին կատարում, բայց իրենց գործունեության սկզբնական շրջանում, եթե նույնիսկ տարիներ շարունակ մնում էին Մոսկվայում՝ չէին համարվում այդ քաղաքի մշտական բնակիչներ:

Արդ՝ ո՞րն է եղել «սուրոժցիների» բուն բնակավայրը: Այսպիսի հարց, որքան մեզ հայտնի է, չի էլ դրվել բանասիրության մեջ: Ուսումնասիրողները տարակույս չեն ունեցել, որ «սուրոժցյան հյուրերը» ժամանել են Ղրիմի թերակղզու վաճառաշահ համանուն քաղաքից—Սուրոժից, որը գտնվել է Կաֆաչի և Ալուշտայի մեջտեղում ու մինչև Կաֆաչի ծաղկումը հսկայական դեր է կատարել՝ որպես փոխանակային առևտրի միջազգային նշանակություն ունեցող կենտրոն: Հույները քաղաքն անվանել են Սուզգայա, Սուզգեա, նաև Սուզգիա, արևմտաեվրոպական աղբյուրներում այն կոչվել է Սուզայա, ռուսական աղբյուրներում՝ Սուրոժից բացի, նաև Սուզակ, արաբական աղբյուրներում՝ Սուդադ, Սուրդակ կամ Սոդդադիա, Շոդդադիա. հայերը կոչել են Սուդդա կամ Սուդտա<sup>176</sup>:

«Սուրոժցյան հյուրերին» անվերապահորեն Սուրոժ քաղաքի հետ շաղկապողները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ կան աղբյուրներ, որոնք այդ քաղաքի անունով Ղրիմի թերակղզին ամբողջությամբ կոչել են Սուրոժցյան թերակղզի, իսկ արաբական (թերևս նաև ռուսական) որոշ աղբյուրներում ողջ Սև ծովն է ճանաչվել Սուրոժի անունով<sup>177</sup>:

Այս փաստերը ստիպում են ուսումնասիրողին շրջահայաց լինել այդ տեղանվան հետ առնչվող պատմաբանասիրական հարցերը մեկնաբանելիս: «Սուրոժ» ասելով՝ Մոսկվայի բնակիչները, ամենայն հավանականությամբ, նկատի են ունեցել ոչ թե մասնավորապես Սուրոժ քաղաքը, այլ Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան ծովափն ամբողջությամբ, ներառյալ ամիսներձ շրջանները, ուր XIII—XV դդ. Սուրոժից բացի և Սուրոժից ավելի ծաղկուն քաղաքներ էին դարձել Կաֆան, Սուրխաթը, Մանգուպը և այլ կենտրոններ:

Իսկ ի՞նչ կարող ենք ասել այդ «հյուրերի» ազգային պատկանելիության մասին: Այս հարցը հուզել է մի շարք պատմաբանների: Նրանց հայտնած

175 Вл. Даль. Толковый словарь, I, էջ 386:

176 Հայկական անվանման մասին տեղեկությունների աղբյուրը հայերեն ձեռագրերի հիշատակարաններն են, իսկ մյուս տվյալները քաղված են Վ. Վասիլևսկուց (տե՛ս В. Г. Васильевский. Труды, III, Петроград, 1915, էջ CLVI):

177 Այս մասին տե՛ս А. Н. Веселовский, Южно-русские былины, СПб., 1884 («Сборник отделения русского языка и словесности Академии Наук, т. XXXVI, № 3, էջ 69—70):

Պետք է ենթադրել, որ ռուսները Սուրոժցի անունով կոչել են Ղրիմին առափնյա ծովը և ոչ (կամ ոչ միայն) Ազովի ծովը, ինչպես ենթադրել են ոմանք (տե՛ս В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 17):

տարրեր տեսակետներին անդրադառնալուց առաջ անհրաժեշտություն է զգացվում ծանոթանալ «սուրոժցի» տերմինի գործածության պատմությանը: Առաջին անգամ այն հիշատակված է Իպատեյան տարեգրության մեջ՝ 1288 թ. տակ: Այստեղ ասված է, որ Վոլինյան երկրամասի իշխան Վասիլյոկ Վլադիմիրովիչի մահվան և թաղմանական արարողությունների ժամանակ Վլադիմիր քաղաքում ներկա են եղել և ողբացել տարրեր ազգերի ներկայացուցիչներ. «Плакашеса над ним все множество Володимерцев, мужы и жены и дети, Немци и Сурожвце, Новогородцы, Жидове»<sup>178</sup>: Այս տվյալը Մոսկվայի հետ որևէ առնչություն չունի և հենց այս առումով զգալի արժեք է ներկայացնում: Դրա գոյությունը ժխտվում է այն տեսակետը, թե «սուրոժյան հյուր» տերմինը գործածական է եղել միայն Մոսկվայում:

Տեղին է այստեղ վերհիշել, որ Վոլինյան Վլադիմիր նշանավոր քաղաքում բնակվել են բազմաթիվ հայեր, որոնք ունեցել են իրենց կազմակերպված համայնքն ու եկեղեցին: Մահացած իշխանի հուղարկավորությանը քաղաքի բուն բնակիչներից՝ ռուսներից բացի, իհարկե, մասնակցել էին նաև ազգային փոքրամասնությունները, որոնցից հանվանե հիշատակված են գերմանացիները, հրեաները և «սուրոժցիները»:

Հյուսիսային ռուսական տարեգրությունների մեջ 1318 թ. առաջին անգամ հիշատակություն ենք գտնում «Սուրոժյան ծովի» մասին, իսկ 1356 թ. տակ տարեգրությունը ծանուցում է, որ Հորդայից Մոսկվա է ժամանել Իրընչեյ անունով մի դեսպան, «սուրոժցի հյուրերի» ընկերակցությամբ: Մասնագետները նշում են, որ այդ «առաջին ուղղակի վկայությունն է Մոսկվայի և Ղրիմի իտալական գաղթօջախների միջև առևտրական կապերի առկայության մասին»<sup>179</sup>:

Այսպիսով, XIV դ. կեսերից առաջ որևէ տվյալ չի պահպանվել «սուրոժյան հյուրերի» Մոսկվայում ծավալած տնտեսական գործունեության մասին:

Վերը շարադրվածից պարզ է, որ տարեգրության հեղինակը «սուրոժյան հյուրեր» ասելով նկատի է առել ընդհանրապես Ղրիմի թերակղզուց և մասնավորապես Կաֆա քաղաքից ժամանած վաճառականներին:

Սակայն մի վայրկյան մոռանանք մեր այս տեսակետը և փորձենք հարցին մոտենալ այն ուսումնասիրողների հայեցակետից, ովքեր «Սուրոժ» տերմինի տակ բառացիորեն հասկացել են հենց Ղրիմի Սուրոժ-Սուղակ-Սուղա քաղաքը: Բնակչության ազգային պատկանելիության առումով ի՞նչ պատկեր էր ներկայացնում այդ քաղաքը XIV դ. կեսերին:

Սուրոժի պատմության հարցերով հետաքրքրված բոլոր ուսումնասիրողներն էլ, միաբերան վկայում են, որ քաղաքի բնակչության կազմում հայերը զգալի թիվ են կազմել, իսկ մի քանի մասնագետներ էլ (օրինակ, Յ. Բրունը)<sup>180</sup>, թերևս փաստերը շափազանցնելով, հանգել են այն եզրակացության, որ հայերը կազմել են քաղաքի բնակչության մեծամասնությունը: Քաղաքի հանգամանալից պատմությունը շարադրել է վ. Գ. Վասիլևսկին «Սուրբ Ստեփանոս Սուրոժցու վարքի» ներածականում<sup>181</sup>: Նշանավոր գիտնականը պար-

178 ПСРЛ, т. II, էջ 920; «Летопись по Илатскому списку», СПб, 1871, էջ 605.

179 В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 17:

180 Ф. К. Брун, Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 140:

181 Տե՛ս Труды В. Г. Васильевского, том третий, Петроград, 1915. Русско-Византийские исследования. Жития св. Георгия Амастридского и Стефана Сурожского, §2 CLVI—CCVII («Исторические сведения о Суроже»):

դել է, որ XIII—XIV դդ. Սուրոժի կառավարիչները կոչվել են սերաստոսներ, գրանցից շատերի անունները գրանցվել են քաղաքի հունական եկեղեցուն պատկանած Սինաքսարի (Հարանց վարքի) լուսանցքներին: Հիշատակված սերաստոսների մեծ մասին վ. վասիլևսկին հույն է համարել, նշելով միաժամանակ, որ հանդիպում են նաև այնպիսի անուններ, որոնց մեջ կան հունարենին խորթ հնչյուններ: 1305 թ. հիշատակված է, օրինակ, սերաստոս Թոփաին՝ իր Թամար տիկնոջ հետ միասին: Հիմք ընդունելով տիկնոջ անունը, ուսումնասիրողն անորոշ դատողություններ է արել նրա (նաև նրա ամուսնու) վրացական ծագման մասին, անշուշտ, տեղյակ չլինելով, որ Թամար անունը, սկսած X դ. խիստ տարածված էր հայոց մեջ և որ Ղրիմում, շատ վաղ ժամանակներից, գոյություն է ունեցել Թոփոսի դուռ հայաբնակ խոշոր գյուղը (ունեցել է երկու եկեղեցի), որն այդպես է կոչվել թերևս կառուցված լինելով այդ նշանավոր սերաստոսի կողմից, կամ մի այլ կերպ առնչված լինելով նրա անվան հետ: Այդ նույն Սինաքսարում հիշատակված են Սուրոժի պատմության մեջ նշանակալի դեր կատարած մի քանի այլ հայազգի անձնավորություններ ևս. Սամատ հայի տիկինը, Սմբատի որդի Դավիթը և ուրիշներ: 1292 թ. սուրոժցի հայերը զատիկը կատարել են ոչ թե հույների հետ՝ ապրիլի 6-ին, այլ նրանցից մեկ շաբաթ հետո: Այս կապակցությամբ, ինչպես միշտ ծոազատիկների ժամանակ, քաղաքում վեճեր են բորբոքվել հայ և հույն համայնքների միջև<sup>182</sup>, մի հանգամանք, որ իր հերթին վկայում է Սուրոժում հայ հոծ բնակչության առկայության մասին:

1322 թ. Սուրոժի պատմության համար դարձակետային նշանակություն է ունեցել: Ուզբեկ խանի զորահրամանատար Կարա-Բուլատը զրավել է քաղաքը և հալածանքներ սկսել քրիստոնյաների նկատմամբ. փակվել են շատ եկեղեցիներ, կործանվել խաչեր և սրբատեղիներ, ցած բերվել եկեղեցական դանգակներ և այլն: Քրիստոնյա բնակչության մեծ մասը լքել է քաղաքը: Իրն-Բատուտան 1334 թ. այցելելով Սուրոժ, գտել է այնտեղ միայն մի քանի հույն արհեստավորներ: Որոշ աշխուժություն է սկսվում 1365 թ. հետո միայն, երբ ջննովացիներին հաջողվում է իրենց տիրապետությունը տարածել նաև Սուրոժի վրա, սակայն քաղաքն այլևս ինքնուրույն տնտեսական նշանակություն ձեռք չի բերում, և վերականգնվում է միայն Կաֆայի շնորհիվ՝ դառնալով նրա երկրորդական կցորդը:

Մեջբերված այս թվականներն արժանի են սեփական ուշադրության: Սուրոժը, այսպիսով, 1322—1365 թթ. իր պատմության ողբերգական շրջանն էր ապրում: Բայց հենց այս շրջանում, ավելի որոշակի՝ 1356 թ., ուսական տարեգրությունների մեջ առաջին անգամ գրանցում է կատարվում «սուրոժյան հյուրերի» Մոսկվա ժամանելու մասին: Ինչպե՞ս բացատրել այս առեղծվածը:

Առաջին հերթին՝ մեր կողմից արդեն բացատրված ձևով. «Սուրոժյան հյուրեր» տերմինը տարեգրի կողմից օգտագործվել և ժամանակակիցների կողմից ընկալվել է՝ «Ղրիմից ժամանած վաճառական» (ավելի ճիշտ՝ «ղրիմահայ վաճառական») իմաստով: Իսկ եթե, այնուամենայնիվ, «Սուրոժ» ան-

<sup>182</sup> В. Г. Васильевский, *նշվ. աշխ.*, էջ CLXXXVIII: Այս տեղեկությունների մի մասը, նույն այս աշխատությունից բաղկելով, օգտագործել են նաև ուրիշ հայագետներ (տե՛ս Ե. Ա. Փոլեշչյան, Մրբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, №2, էջ 108, Վ. Միխայլյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1, էջ 50):

վանումը պետք է վերագրվի ոչ ամբողջ Ղրիմին, այլ որոշակի մի բնակավայրի: Այդ դեպքում կա միայն հետևյալ բացատրությունը. Կաֆա քաղաքը բարգավաճելով և բռնելով Սուրոթի տեղը, կատարելով տնտեսական այն վիթխարի դերը, որը վիճակված էր նախկինում Սուրոթ քաղաքին, ինչ-որ ժամանակ սեփականալ է նաև իր նախորդի աշխարհասփյուռ անունը:

Աշխարհագրապես այդ երկու քաղաքներն այնքան մոտ էին գտնվում միմյանց և այնքան նույնական էր նրանց դերը որպես միջազգային ապրանքափոխանակության հանգրվան, որ հեռավոր երկրամասերում, Ղրիմի թերակղզու նոր կենտրոնի՝ Կաֆա քաղաքի պատմության իրողությունները, շփոթումով կամ սովորույթի ուժով, վերագրում էին Սուրոթ քաղաքին:

Ի հաստատումն այս բացատրության մեջ բերենք մի բնորոշ փաստ: 1298 թ. նոդայ ամիրի զորքերը գրավում են Կաֆան և այստեղ հսկայական ավերածություններ գործում: Այս լուրը վաճառականները հասցնում են Եգիպտոս, ուր և գրանցվում է, բայց արդեն ոչ թե որպես Կաֆայի հետ կատարված դեպք, այլ Սուրոթ-Սուդտայի<sup>183</sup>:

Այսպիսով, կարելի է վստահորեն հայտարարել, որ Մոսկվայի ֆաղափափների առաջին խոսակցության մեջ «սուրոթցի հյուր» կոչված վաճառականները, որ հիշատակվել են սկսում XIV դ. կեսերից, իրականում սուրոթցի շէին, այլ Մոսկվա էին ժամանում Ղրիմի քերակղզու վաճառաշահ կենտրոններից՝ Սուրխաքից, Մանգուպից, Սուրոթից և այլ ֆաղափներից, բայց առաջին հերթին և մասնավորապես՝ հռչակավոր Կաֆա (Քեդդոսիա) ֆաղափից:

Արձանագրելով այս հետևությունը, պետք է կրկին վերհիշենք այն փաստը, որ Կաֆայի բնակչության մեծամասնությունը հայերից էր բաղկացած և, որ կաֆայեցի հայերի ձևորում էր կենտրոնացված արևելյան ապրանքների առևտրի գերակշիռ մասը:

Այս անհրաժեշտ բացատրություններից հետո տեսնենք այժմ, թե ինչպիսի կարծիքներ են արտահայտվել «սուրոթցի հյուրերի» ազգային պատկանելիության մասին:

Մոսկվա քաղաքի պատմության անվանի ուսումնասիրողներից Ի. Զարեկինը այդ կասկածներն զրկել է. «Մոսկվան, հենց այն պահից, երբ սկսեց պատմական իր ապրելաշրջանը, ի հետևանս մեր (Ռուսաստանի) հարավային երկրամասերում ծավալված առևտրական, մասնավորապես իտալական բարեպատեհ հարաբերությունների, ըստ երևույթին կարողացավ իր կողմը ձգել հատուկ մի գաղութ իտալական վաճառականների, որոնք սուրոթցի անվան տակ, ռուսների հետ միասին, շատ ակնառու և ազդեցիկ դիրք զբրավեցին [Մոսկովյան] մեծ իշխանության մայրաքաղաքի ներքին կյանքում, և հետագայում մեծապես նպաստեցին իտալական-ֆրանկական Եվրոպայի հետ նրա առնչություններին ու կապերին»<sup>184</sup>:

183 В. Г. Васильевский, *Նշվ. աշխ.*, էջ СХСІ:

184 «Москва, как только начала свое историческое поприще, по счастливым обстоятельствам торгового и именно итальянского движения в наших южных краях, успела привлечь к себе, по-видимому, особую колонию итальянских торговцев, которые под именем сурожан, вместе с русскими заняли очень видное и влиятельное положение во внутренних делах великокняжеской столицы и впоследствии много способствовали ее сношениями и связями с итальянской, фряжскою Европою» (Иван Забелин. История города Москвы, ч. I, М., 1905, էջ 86):

Այսպիսով, ըստ Ի. Զաբելինի «սուրոժյան հյուրեր» կոչվող վաճառականները հիմնականում եղել են իտալացիներ, և նրանք են, որ մեծ դեր են կատարել Մոսկվայի և եվրոպական երկրների հետ տնտեսական կապերի ստեղծման ու ամրապնդման գործում: Պետք է նշել, որ այս տեսակետի հեղինակը հաշվի չի առել երկու հանգամանք. նախ՝ որ ռուսական աղքատներում իտալացիները հիշատակվում են որպես «ֆրյագ» կամ «ֆրյագին» (համապատասխանում է հայկական «ֆրանկ» բառին), և որևէ ցուցում չկա «սուրոժյան հյուր» ու «ֆրյագ» տերմինների նույնացմանն ի նպաստ, և այնուհետև՝ արևելյան ապրանքները ներմուծվում էին շենովացիների տիրապետության տակ անցած Արիմյան նավահանգիստներն ու այնտեղից էր արտահանվում Ռուսաստան ոչ թե իտալացի վաճառականների, այլ հենց հայերի կողմից:

Ի. Զաբելինի նշած ճանապարհով է ընթացել նաև «սուրոժյան հյուրերի» մասին շատ արժեքավոր ու փաստալից մենագրության հեղինակ Վ. Սիրոյեչկովսկին՝ իտալացիներից բացի «սուրոժցի» բաղաբային դասի շարքում տեղ հատկացնելով նաև հույն վաճառականներին: Իր տեսակետը Վ. Սիրոյեչկովսկին հիմնավորում է երկու «սուրոժցիների»՝ ներամատի և Սալարևի, անունազգանունների յուրովի ստուգաբանությամբ. ներամատ անունը (ըստ երևույթին նույնացնելով հունական նիկոմեդես անվան հետ), նա համարում է հունական, ուստի այդ «սուրոժցուն» հույն է համարում, իսկ Սալարև ազգանունը (հավանաբար առնչելով լատիներեն *salarius* բառի հետ, որ նշանակում է «աղացած ձկան վաճառական») իտալական հռչակելով՝ այդ «սուրոժցուն» էլ իտալական ծագում է վերագրում:

Մեր կարծիքով, սակայն, մեկ-երկու անունների շհիմնավորված ստուգաբանությունների վրա հենվելով հնարավոր չէ պարզաբանել պատմաբանասիրական այնպիսի բարդ հարցեր, որոնցից է «սուրոժյան հյուրերի» ծագումնաբանության հարցը: Ըստ այդմ հավատ չի ներշնչում նաև Վ. Սիրոյեչկովսկու եզրակացությունը, որ շարադրված է այսպես. «Մոսկովյան վաճառականների մեջ առկայությունը դրիմեցի նշանավոր հույների և իտալացիների, որոնք հաստատվել էին Մոսկվայում ֆեոդալական այդ կենտրոնի բուռն զարգացման հետևանքով, օգնելու է մեզ բացատրելու «սուրոժցիներ» տերմինի առաջացումը: Արիմից ներգաղթած վաճառականների խմբի նշանավոր անդամները, որոնք շարունակ երթևեկում էին դեպի հարավային շուկաները, կարող էին սուրոժցի անվանումը տարածել բովանդակ դասի վրա»<sup>185</sup>:

Մտազանաբանական այս հարցին հպանցիկ անդրադարձել է նաև ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը: Հստակ տեսակետ նա չի առաջադրել, սակայն, ըստ երևույթին, հանգել է այն եզրակացության, որ «սուրոժցի» կոչվող և Մոսկվա բաղաբի հետ առնչված վաճառականները ազգությամբ ռուս են եղել, բայց կոչվել են «սուրոժցի», որովհետև նրանց գործունեությունը խարսխված է եղել Սև ծովի հարավային նավահանգիստների հետ: «Մոսկվայի վաճառականների ձևերում դրամական միջոցների կուտակումը սերտորեն կապված էր սևծովյան առևտրի հետ: Այդ պատճառով, — գրել է մեծանուն գիտնականը, —

<sup>185</sup> «Наличие среди московских купцов видных греков или итальянцев из Крыма, привлеченных в Москву пышным ростом этого феодального центра помогло бы нам объяснить появление термина «сурожане». Выходцы из Крыма, видные члены группы купцов, постоянно отправлявшихся к южным рынкам, могли сообщить всей группе наименование сурожан» (В. Е. Сыроечковский, *նշվ. աշխ.*, էջ 24):



վաճառականների առաջատար խումբը Մոսկվայում ստացել էր սուրոճցի հյուր մականունը»<sup>186</sup>։ Սակայն այս բացատրությունը ևս խնդիրը չի լուծվում, քանի որ 1356 թ. անդրանիկ վկայության մեջ «սուրոճցի հյուրեր» են կոչված ոչ թե մոսկվացի, այլ Ղրիմից ժամանած օտարերկրացի վաճառականները։

Այս հարցին անդրադարձել է նաև Վ. Միքայելյանը և հանգել այն եզրակացության, որ ազգային կազմով «սուրոճցի» կոչվող վաճառականները միատարր չեն եղել. «Նրա մեջ առաջին հերթին մտնում էին ուսաներն ու հայերը, ապա նաև իտալացիներ և ղրիմաբնակ հույներ»<sup>187</sup>, — գրել է նա՝ փորձելով միավորել ու հաշտեցնել վերոհիշյալ տեսակետները՝ հայերի համար ևս տեղ ապահովելով «սուրոճցիների» շարքում։

«Սուրոճցի հյուր» տերմինի իմաստը բացահայտելու փորձեր կատարելիս պետք չէ անտեսել, որ այդպես են կոչվել արևելյան ապրանքների վաճառականները ոչ միայն միջնադարյան Մոսկվայում, այլև ուրիշ քաղաքներում, մասնավորապես Վոլինյան Վլադիմիրում (այդ մասին խոսք եղավ արդեն), Կիևում, Սուդզալում, Մեծ Նովգորոդում (ղրանց մասին՝ ստորև), գուցե և ուրիշ քաղաքներում։ Ըստ այդմ «սուրոճցի հյուր» տերմինը գործածվելով Մոսկվայի բնակչության առանձին կենցաղում և գրանցվելով տարեգրությունների մեջ՝ ենթադրել է տալիս ուրիշ մի վայրից ժամանած և տվյալ վայրում «հյուրի», այսինքն օտարերկրյա վաճառականի գոյավիճակ ունեցող վաճառականների մի դասի առկայություն։ Այդ վաճառականների հետագա սերունդները, տասնամյակներ շարունակ ապրելով ու գործելով Մոսկվայում, դառնալով այդ քաղաքի մշտական բնակիչ, խնամիանալով ուսաների հետ, ի վերջո՝ դավանափոխ լինելով՝ պետք է որ փոխելին ազգային իրենց դիմապատկերը և հանգես գային որպես ուս վաճառականներ։ Բայց այդ վերաբերում է արդեն «սուրոճցիների» հետագա պատմությանը և ոչ նրանց պատմական ասպարեղ իջնելու հանգամանքներին։ Ուստի, հետևելով վերոհիշյալ ուսումնասիրողներին, տեսնենք, թե ինչ արդյունքներ կարող ենք ստանալ «սուրոճցի» վաճառականներից մի քանիսի անուն-ազգանունների անկանխակալ քննության ճանապարհով։

Սկսենք հենց Ներամատի (ոսլոական աղբյուրներում գրված է Некомат) մասին տվյալների քննությունից։ Կուչիկովյան ճակատամարտին նախորդող տարիներին Մոսկվայում հանրահայտ էր այս «սուրոճցին»։ Նա լայն կապեր էր հաստատել մի կողմից Մոսկվայի ու Տվերի իշխանների, մյուս կողմից Ոսկե Հորդայի տիրակալների հետ։ Նրա շանքերով 1375 թ. Դմիտրի Դոնսկոյի քաղաքական հակառակորդ Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը Ոսկե Հորդայից, երկրորդ անգամ լինելով, Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսն ստացավ։ Դմիտրի Դոնսկոյը «со всей силою собрався, и со всеми князи русскими совокупяся», պարտության մատնեց իր քաղաքական հակառակորդին և ըստիպեց նրան՝ անվերապահորեն ենթարկվել Մոսկվայի մեծ իշխանությանը<sup>188</sup>։ «Սուրոճցի» Ներամատը հետագայում մասնակցեց Դմիտրի Դոնսկոյի դեմ Մոսկվայի վերջին հաղթարարական (тысяцкий) որդու զլխավորությամբ նյութվող դավադրությանը, իսկ ավելի ուշ՝ 1383 թ. մահապատժի ենթարկվեց. նր-

186 «Накопление капиталов в руках московских купцов было тесно связано с черноморской торговлей. Поэтому ведущая купеческая группа получила в Москве прозвание гостей-сурожан» (М. Н. Тихомиров, *Եզ. աշխ.*, էջ 150)։

187 Վ. Միքայելյան, *Եզ. աշխ.*, էջ 184—185։

188 ПСРЛ, т. XI, էջ 15; «Очерки истории СССР» II, էջ 217։

բան պատկանած գյուղերն ու կալվածքները՝ Մոսկվայի մեծ իշխանի սեփականությունը դարձան<sup>189</sup>: «Կարելի է շտաբակուսել այն բանում, — գրել է այդ կապալիցությունը ակադ. Մ. Տիխոմիրովը, — որ Նեքամատը կողմնակիցներ է ունեցել առևտրական շրջանակներում և որ շոշափված են եղել առևտրական բարձր շահեր, մեր կարծիքով՝ Սուրոժի հետ առևտուր անող հյուրերի շահերը, որոնց համար Ոսկե Հորդայի հետ խաղաղություն պահպանելը շափազանց կարևոր գործ է եղել, քանի որ Մոսկվայից դեպի Սև ծով տանող ճանապարհներից անցել են Ոսկե Հորդայի տարածություններով»<sup>190</sup>:

Քիչ առաջ ասացինք, որ Վ. Սիրոյեչկովսկին Նեքամատին համարել է հույն վաճառական: Անվանի պատմաբանը, անշուշտ, ավելի շրջահայաց կլիներ, եթե ձեռքի տակ ունենար միայն վերջերս գիտական շրջանառության մեջ դրված միջնադարյան հայկական ձեռագրերի հիշատակարանները՝ հայերի մեջ տարածված անձնանունների մասին բազմաբովանդակ նյութերով: Այդ աղբյուրների համաձայն, հենց Նեքամատի գործունեության շրջանում կամ նրանից ընդամենը մի քանի տասնամյակ հետո, պատմական Հայաստանի մի շարք նահանգներում ու հայկական գաղթավայրերում սիրված ու տարածված է եղել Նեքամատ անձնանունը, որն ըստ Հ. Աճառյանի պարսկերենից է փոխառված և նշանակում է «բարի եկավ», այսինքն «բարի գալուստ» («բարեբախտ»)՝<sup>191</sup>: Նեքամատ անունն էին կրում Ամիրգի Ս. Թեոդորոս կաթողիկե եկեղեցու կառուցող ճարտարապետը, Խարբերդի հայ ուսուցիչը, խլաթեցի մի տանուտեր, Խուլայոս վանքի դպիրներից մեկը և նրանց ժամանակակից մի քանի այլ հայ անձնավորություններ<sup>192</sup>:

Այսպիսով, «սուրոժցի» Նեքամատը, իր անունից դատելով, եղել է ոչ թե հույն, այլ հայ վաճառական՝ մեկը դրիմահայ հարյուրավոր այն վաճառականներից, որոնք XIV—XV դդ. մրցակից շունեին դեպի Ռուսաստան և արևելյան Սվրոպայի այլ երկրներ արևելյան ապրանքների ներմուծման ընդգրկված:

«Սուրոժցի» Նեքամատի կյանքի դրվագների համառոտակի շարադրանքից պարզ դարձավ, որ նա, բարձր դիրք զբաղեցնելով Մոսկովյան մեծ իշխանության կառավարող շրջաններում, պատկանում էր այն կուսակցությանը, որի ներկայացուցիչները գործում էին ի նպաստ Ոսկե Հորդայի հետ անտեսական կապերի զարգացման, ի վնաս Մոսկվայի մեծ իշխանության անկախության ջանքերի: Սակայն «սուրոժյան հյուրերի» մեծամասնությունը կանգնած էր Դմիտրի Դոնսկոյի կողքին, նպաստում էր ուսական երկրամասերի միավորման ուղղությամբ ծավալված նրա հայրենասիրական գործունեությանը, գործունե դեր էր կատարում Ոսկե Հորդայի դեմ նրա զլխավորած պայքարում:

Նրջանիկ պատահականությունը պահպանվել են Դմիտրի Դոնսկոյի կուսակից մեկ տասնյակ այն «սուրոժցի հյուրերի» անունները, որոնք ուղեկցել են Մոսկվայի մեծ իշխանին Կուլիկովյան ճակատամարտում: Նախ մեջբերենք Նիկոնովյան տարեգրության այն հատվածն իր ամբողջությամբ, որի մեջ տե-

189 ПСРЛ, т. XXV, էջ 190, 211, ПСРЛ, т. XII, էջ 45, ПСРЛ, т. XVIII էջ 135, В. Г. Васильевский, նշվ. աշխ., էջ ССII, М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 161 և այլն:

190 М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 173:

191 Հ. Աճառյան, Հայ անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1948, էջ 71:

192 «Փն դարի... հիշատակարաններ», Ա, էջ 553, 629, Բ, էջ 34, 73, Գ, էջ 31, 383, 527: Նեքամատ կամ Նեքամատիկ անունով մի ծեր դպիր էլ հիշված է Հ. Հաղարյանի հավաքածուի XV դ. ընդօրինակված № 9 ձեռագրում՝ որպես թղթի կոկոզ և թանաք եփող (այս անդեկությունը մեզ հաղորդել է Ս. Եզանյանը, որին հաշտնում ենք շնորհակալություն):

ղեկութուններ են գրանցված այդ վաճառականների կատարած դերի մասին. «Поять же тогда князь велики с собою десять мужей сурожане гостей, видения ради: аще что Бог случит, имут поведати в дальных землях, яко сходници суть з земли на землю и знаеми всеми и в Ордах и в Фрязах; и другая вещь: аще что приличитя, да сии сътворяют по обычаю их: си же суть имена их...»<sup>193</sup>. Այնուհետև թվարկված են նրանց անունները, որոնք տարբերակներով են նշված ձեռագրերի մեջ և Կուլիկովյան ճակատամարտի մասին պահպանված մյուս աղբյուրներում: Ստորև տալիս ենք ցանկը, յուրաքանչյուր անվան առընթեր նշելով տարբերակներն ու լրացուցիչ տվյալները.

1. Վասիլի Կապիցա (Պալիցա),
2. Սիրգոր Ելֆերև (Ելուֆերև, Օլուֆերև, Օլֆերև),
3. Կոստանտին (Պետրենով, Վոլկ, Բոլկ, Բոլկով, Բելցա),
4. Կուզմա (Կոզմա) Կովերյա (Կովիրյա, Կովիր, Կովրյա, Խովրին),
5. Սեմյոն Օնտոնով (Անտոնով. հոր անունն է՝ Անտոն Վերբլյուզին), կոչված նաև Կորտոնոս,
6. Միխայիլ (Միխայլո) Սալարև (Սարաև, Սամարև),
7. Տիմոֆեյ Վեսյակով (Վասկով, Վեզյակով),
8. Դմիտրեյ Չեռնոյ (Չեռնի, Չերմնոյ),
9. Դեմենտեյ (Դմիտրի) Սալարև (Սարաև),
10. Իվան Շիխ<sup>194</sup>:

Թվարկելով այս անունները, Վ. Վասիլևսկին հայտնում է այն կարծիքը, որ գրանց մեծամասնությունը ուսներ են, սակայն «առաջինները (որոնք — Լ. Խ.) կարող են համարվել նաև հույներ»<sup>195</sup>:

Սալարև ազգանունը կրող զույգ անձինք (չնայած դրանք ձեռագրերում կոչված են նաև Սարաև կամ Սամարև) ըստ Վ. Սիրոյեչկովսկու՝ հավանաբար Ղրիմում հաստատված իտալացիներ են եղել<sup>196</sup>: Ցանկի մեջ հիշատակված Սիմեոն Օնտոնովի մասին խոսում է Մ. Տիխոմիրովը: Մեջբերելով մի վարքաբանական գրվածքի մեջ առկա տվյալն այդ մեծահարուստ վաճառականի մասին (այնտեղ ասված է, որ նա եղել է «от великих купець и славных господствующему граду Москве»<sup>197</sup>, — մեծանուն գիտնականը գրում է. «Սիմեոն Օնտոնովի անունն ու հայրանունը թվում է, թե վկայում է նրա ուսական ծագման մասին»<sup>198</sup>:

Եվ այսպես, միայն անուններից ելնելով, ռուսամասիրողները փորձել են որոշել Դմիտրի Դոնսկոյի կուսակից «սուրոժյան հյուրերի» կամ նրանց մի մասի ազգային պատկանելիությունը: Հենց սկզբից պետք է ասել, որ այդ ճա-

<sup>193</sup> ПРСЛ, т. XI, էջ 54: Հմմ. «Куликовская битва и подъем национального самосознания» Л., 1979, էջ 234:

<sup>194</sup> Անվանացանկը ներկայացնում ենք Հ. Զարեիինի, Վ. Վասիլևսկու, Վ. Սիրոյեչկովսկու, Մ. Տիխոմիրովի, Գ. Մոխսեևայի վերը հիշատակված աշխատությունների մեջ առկա ցանկերի համադրությամբ:

<sup>195</sup> В. Г. Васильевский, նշվ. աշխ., էջ ССІІ:

<sup>196</sup> «Было бы допустимо и Саларевых считать выходцами из итальянских колоний Крыма», — գրում է նա (տե՛ս В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 24):

<sup>197</sup> Н. Тихонравов. Древняя жития Сергия Радонежского, М., 1892, էջ 90:

<sup>198</sup> Н. М. Тихомиров, նշվ. աշխ., էջ 151:

նապարհով հնարավոր չէ քիչ թե շատ վստահելի արդյունքի հասնել, քանի որ կարելի է վկայակոչել տասնյակ ու հարյուրավոր օտարազգի անձնավորությունների անուններ, որոնք հիշատակվել են ուսական պաշտոնական փաստաթղթերում կամ տարեգրություններում այն աստիճանի ձևափոխված, որ հեռավոր հետք նույնիսկ չի մնացել նրանց նախնական ու հարազատ ձևերից: Գյուլնազար Օռուխենցը, օրինակ, դարձել է նազար Օրեխովիչ, Հովհաննեսի որդիներ Աթանասն ու Բարսեղը՝ կոչվել են Աֆանասի և Վասիլի Իվանովներ, Պողոս Զենենցը՝ Պավել Զինովև, Աստվածատուրի որդի Եղիան՝ Իլյա Բոգդանով և այլն և այլն<sup>199</sup>: Թվարկված այս անձնավորությունների ազգության մասին ստույգ տեղեկություններ ունենալով, անվարան կարող ենք հայտարարել, որ նրանք հայ վաճառականներ կամ քաղաքական-գինավորական գործիչներ են եղել: Սակայն տարբեր բնույթի միջնադարյան աղբյուրների մեջ հիշատակված են հայազգի (ինչպես և ուրիշ ազգությունների պատկանող) բազմաթիվ անձնավորություններ՝ առանց ծանուցիչ տեղեկությունների: Ինչպե՞ս վարվել նրման դեպքերում: Պատմաբանասիրական այս բարդ հարցին հնարավոր չէ գտնել դյուրին պատասխան: Ինքնըստինքյան հասկանալի է, որ ուսական աղբյուրներում հիշատակված ուսական անուն-ազգանուններ կրող անձանց ճշտող մեծամասնությունը ազգությամբ ուս է եղել. այդ մասին երկու կարծիք չի կարող լինել: Սակայն խնդիրն այսպես դյուրությունամբ լուծված չենք կարող համարել, երբ տվյալներ կան այս կամ այն անձնավորության մի ուրիշ երկրից ժամանած լինելու մասին: Եվ նույնն է պարագան «սուրոթյան հյուրերի», այսինքն՝ Ղրիմի հետ կապված և արևելյան ապրանքների առևտրով զբաղված վաճառականների: Գերզուցությունը նախապայման է լինելու նրանց ազգությունը որոշելու ուղղությամբ կատարվող բոլոր փորձերի:

Այս բացատրությունից հետո հարկ չկա հատուկ շեշտելու, որ «սուրոթյան հյուրերի» հարցով զբաղված վերոհիշյալ ուսումնասիրողների եզրակացություններն այն մասին, որ այդ վաճառականները եղել են իտալացիներ, հույներ, ուսներ, կամ էլ այդ բոլորի հետ միասին՝ նաև հայեր, շատ հեռու են հիմնավորված լինելուց: Առաջին հերթին հենց այն պատճառով, որ բազմապիսի աղբյուրների միաբերան վկայությամբ՝ հայ վաճառականների մեծաշնորհն է եղել արևելյան ապրանքների ներմուծումը Արևելյան Եվրոպայի երկրներ (որոշ աղբյուրներում դրանք նույնիսկ կոչվել են «հայկական ապրանքներ»):

Ուսումնասիրողներից ոմանք փորձել են «սուրոթցիների» ազգության հարցը լուծել նրանց հետագա սերունդների մասին ուսական աղբյուրներում առկա տվյալների համադրումով: Նրանց հաջողվել է ուշագրավ տեղեկություններ հավաքել XV—XVI դդ. ապրած Սալարենների, Օնտոնովների, Վեսյակովների, Շիխովների մասին, պարզել, որ նրանք նույնպես զբաղվել են իրենց պապերի արհեստով՝ արևելյան ապրանքների առևտրով<sup>200</sup>: Անկարելի է թե-

199 Այս մի քանի տվյալները քաղել ենք պատահականորեն ընտրված մի գրքից («Армяно-русские отношения в XVIII веке», сборник документов, т. III, Ереван, 1978). Հենց այդ հատորի անվանացանկից դյուրությամբ կարելի է դուրս գրել Ռուսաստան այցելած հայ վաճառականների և այլ զբաղմունքի տեր անձանց անձանաչելի ձևափոխված—ուսականացված մի քանի տասնյակ ուրիշ անուններ՝ Իվան Մակարով, Դավիդ Գրիգորև, Վասիլ Մակարով, Բոգդան Բոգդանով, Սերգեյ Իվանով, Մակսիմ Յիլիպով, Պետր Իվանով և այլն, և այլն:

200 Տե՛ս, օրինակ, М. В. Тухомиров, նշվ. աշխ., էջ 151—153:

բազմահատել շատ արժեքավոր այդ աշխատանքը: Եվ կարելի է անվերապահորեն համաձայնվել, որ վերոհիշյալ վաճառականներից շատերի թոռներն ու թոռնորդները, անբակտելիորեն մերվելով ռուսական միջավայրին, հետագայում փոխել են իրենց ազգային դիմագիծը: Մեզ, սակայն, տվյալ դեպքում դբաղեցնում է «սուրճյան հյուրերի» ծագումնաբանության հարցը, ուստի կրկին լանդրադառնանք Դմիտրի Դոնսկոյի հետ Կուլիկովյան ճակատամարտ մեկնած «սուրճյաններին»:

Նախ, անհրաժեշտ է ի մի բերել ռուսական աղբյուրներում առկա տեղեկությունները նրանց գործունեության մասին:

«Сказание о Мамаевом побоище» ասքի խմբագրություններից մեկում ասված է, որ «սուրճյանները» «яко гости хозяева быша»<sup>201</sup> Մեջբերելով այս հատվածը, Վ. Սիրոյեչկովսկին փորձում է բացատրել անձանոթ այդ ХОЗЯЕВԵ բառը, առնչելով այն թաթարական ХОЗЯ—պարոն բառի հետ: Ըստ այդմ, խնդրո առարկա նախադասությունը նա մեկնաբանում է այսպես. «Այդ հյուրերը եղել են «առաջընթաց հյուրեր», այսինքն առևտրական կարավանների գլխավորողներ (իմա՝ «քարվանթաշիններ»—Լ. Խ.)<sup>202</sup>: Այս բացատրությունը արամաբանված է և ընդունելի, բայց կարող են լինել նաև այլ առաջարկներ: Ելնելով այն փաստից, որ ռուսական միջնադարյան աղբյուրներում իրանա-հայկական «խոջա» տերմինը տառադարձվում էր ХОЗЯ (խոզի) ձևով<sup>203</sup>, ավելի հավանական է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք հայ մեծատուն վաճառականների համար շատ սովորական «խոջա» հորջորջման հետ: Ասքի հեղինակը այդ վաճառականներին խոջա կոչելով՝ ըստ երևույթին ցանկացել է շեշտել նրանց մեծահարուստ լինելը, նրանց առևտրական կապերի հսկայական ծավալ ունենալը և այլն:

Շատ ուշագրավ է նաև Տարեգրության ցուցումն այն մասին, որ այդ տասը «սուրճյանները» «сходници суть з земли на землю и знаеми всеми и в Ордах и в Фрязах», այսինքն՝ «ճանապարհորդում էին երկրից երկիր ու ծանոթ էին բոլորին և՛ Հորդայում, և՛ Ֆրանկստանում»: Մենք, որ գիտենք արդեն հայկական կայուն գաղթօջախների գոյության մասին Ոսկե Հորդայի քաղաքներում և եվրոպական բազմաթիվ կենտրոններում, լրացուցիչ կովան ենք ստանում այդ «սուրճյանների» հայկական ծագման մասին:

Ի՞նչ նպատակով էր Դմիտրի Դոնսկոյն իր հետ ռազմաձևակատ տարել այդ տասը վաճառականներին: Այս հարցին անդրադարձել են մի շարք ռուսամասիրողներ: Ստորև համառոտ ծանոթանալու ենք այդ մասին արտահայտված կարևոր տեսակետներին, տեղեկությունները քաղելով հիմնականում Վ. Սիրոյեչկովսկու վկայակոչված աշխատությունից:

«Сказание о Мамаевом побоище» ասքում այդ մասին գրված է. «Поведания ради дальних земель», այսինքն,— ըստ Վ. Վասիլևսկու, «սուրճյանները»՝ աշխարհ տեսած ու փորձառու այդ մարդիկ, կատարելու էին հետախույզի, ուղեցույցի և սննդամթերք հայթայթողի դեր: Վ. Սիրոյեչկովսկին սխալ

201 С. Шамбинаго. Повести о Мамаевом побоище. «Сборник отдела русского языка и словесности», LXXXI, էջ 51:

202 В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 70:

203 Խոզի-Մարում էր կոչվում, օրինակ, վրաց Ալեքսանդր թագավորի Ռուսաստան առաջած դեսպաններից մեկը (տե՛ս Վ. Բաբխուրաջյան, Վ. Կ. Ոսկանյան, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 27):

է համարում այս բացատրությունը՝ նշելով, որ սաղմական հետախույզի դեր կատարողներին միջնադարյան սուլթանական աղբյուրներում сторож կամ страж էին անվանում: Այս տեսակետից հետաքրքրական է հետևյալ փաստը: Ասրի որոշ ձեռագրերում ստված է, որ տափաստաններում Մամայի զորքերի շարժումներին ուշադիր հետևում էր ոմն «твердый страж»—Սիմեոն Մելիքով կամ Սեմյոն Մելիք անունով. սա առաջինն էր, որ լուր հասցրեց թաթարական հորդայի Մոսկվայի վրա հարձակում սկսելու մասին: Անկախ մեղնից եղել են ուսումնասիրողներ, որոնք այս Սիմեոն Մելիքովին հավանաբար հայ են համարել<sup>204</sup>:

Նիկոնովյան տարեգրության մեջ, ինչպես հիշում ենք, ստված էր, որ «սուրոժցի» վաճառականները ուղեկցում էին Գմիարի Դոնակոյին,— «видения ради», «аще что Бог случит, имут поведати в дальных землях», այսինքն՝ նրանց դերն էր պատերազմի հաջող ելքի լուրը տարածել աշխարհով մեկ, քանի որ առևտրական իրենց գործերով նրանք լինում էին ամենուրեք: «Ձադոնշչինա» կոչվող գրվածքի մեջ, ուղղակի ստված է, որ Կուլիկովյան ճակատամարտում սուլթանների տարած փառավոր հաղթանակի լուրը, արագությունը տարածվեց աշխարհի շրջա ծագերում. «Шибла слава к Железным вратам, к Риму и к Кафы по морю и к Торнаву и оттоле к Царюграду на похвалу: Русь великая одолета Мамай на поле Куликове»<sup>205</sup>:

Այստեղ հիշատակված են Դերբենտը (Երկաթի դուռ), Հոմեր, Կաֆան, բուլղարական երկրորդ թագավորության Տրոնովո մայրաքաղաքը, Կոստանդնուպոլիսը,— դարձյալ այն վայրերը, որոնց հետ ամենասերտ անտեսական կապերի մեջ էին հենց հայ վաճառականները:

Նիկոնովյան տարեգրությունն այս վաճառականների դերի մասին առաջ է բաշում ևս մի վարկած. «и другая вещь: аще что приличится да сии сътворяют по обычаю их». Նշանավոր պատմաբան Վ. Օ. Կլյուշևսկին գրծվար հասկանալի այս նախադասությունը բացատրում է այսպես. սուրոժցի վաճառականները «որպես մեծ փորձ ունեցող ու աշխարհատես մարդիկ, ծանոթ լինելով հեռավոր երկրների—Հորդայի և Ֆոանկաստանի անցուղարձերին ու սովորություններին, կարող էին արշավանքի ժամանակ օգտակար խորհուրդներ տալ»<sup>206</sup>:

Ա. Շախմատովի կարծիքով Մեծ իշխանն իր հետ վերցրել է «սուրոժցի վաճառականներին» հավանաբար դիվանագիտական հնարավոր հանձնարարությունների համար: Վ. Սիրոյեչկովսկին ճիշտ է համարում հենց այս կոահումը, նկատելով, որ թշնամու հետ բանակցելու անհրաժեշտությունը սկսեց է ծագեր և՛ հաղթանակի դեպքում, և՛ պարտության, իսկ «սուրոժցի վաճառականներն» իրենց լեզվագիտությամբ և Ոսկե Հորդայի կառավարող վերնախավի հետ ունեցած իրենց անտեսական սերտ կապերով՝ ամենահարմար թեկնածուներն էին դիվանագիտական ծառայություններ մատուցելու: Հարկ չկա այս-

204 Վ. Բ. Բաբխուպոյան, Վ. Կ. Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 22: Նրանք վկայակոչել են «Хрестоматия по истории СССР», т. I, М., 1949, էջ 219, որ տպագրված է «Ասր Մամայի շարդի մասին» գրվածքի մի փոփոխակ:

205 М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 258—259: Հմմ. В. П. Адрианова-Перетц, Задонщина. Текст и примечания («Труды отдела древнерусской литературы», V, М.—Л., 1947, էջ 202):

206 В. О. Ключевский. Опыты и исследования, 1912, էջ 464:

տեղ թվարկելու բաղձաթիվ այն դեպքերը, երբ հայ վաճառականներին դիվանագիտական բարդ ու նուրբ հանձնարարություններ էին առաջադրում լեհ թագավորները, Ղրիմի խաները, Պարսից շահերը, Վրաստանի գահակալները և այլ իշխանավորներ: Մոսկվայի մեծ իշխաններն այս առումով բացառություն չեն կազմել:

Այս անհրաժեշտ բացատրությունից հետո, կրկին անդրադառնանք վաճառականների ցանկին: Տեսանք, որ տվյալ դեպքում անուն-ազգանունները ազգային պատկանելիությունը որոշելու անվստահելի աղբյուրներ են: Սալարե ազգանվանը մենք արդեն հպանցիկ անդրադարձել ենք. ելակետ բնդունելով այն վարկածը, որ ազգանունը «ավելի դյուրությամբ բացատրվում է ռոմանական լեզուներով, քան ռուսերենով», Վ. Սիրոյեչկովսկին, ինչպես տեսանք վերը, մի ամբողջ տեսություն է զարգացրել «սուրոժյան հյուրերից» շատերի իտալական ծագման և իտալական վաճառականների Մոսկվայում կատարած խոշոր դերի մասին: Բայց չէ՞ որ միջնադարյան Հայաստանում գործածական է եղել Սալար անձնանունը (առաջացած պարսկերեն «սալար» — «զորավար» բառից)<sup>207</sup>, ուստի, ավելի մեծ վստահությամբ կարող ենք այդ ազգանունը կրող երկու «սուրոժցիներին» նույնպես առնչել հայերի հետ:

Ցանկի հինգերորդ տեղում հիշատակված է Սիմեոն Օնտոնովը՝ Օնտոն Վերբլյուզինի որդին: Երբ վերհիշում ենք Միխայիլ Լիտվինից մեջբերված տողերը՝ արևելյան երկրներից Կիևի վրայով դեպի Մոսկվա կատարվող աշխույժ առևտրի մասին և այն մասին, որ արևելյան ապրանքները «օտարերկրյա վաճառականները (մեծ մասամբ հայերը—լ. Խ.) Մոսկվա էին փոխադրում սալ-լերով և բեռնավորված ուղտերով»<sup>208</sup>, այս անձնավորության Վերբլյուզին մականունը իմաստավորվում է ըստ ամենայնի: Տասնյակ և հարյուրավոր ուղտերից բաղկացած կարավաններում (որոնց մասին խոսում է Մ. Լիտվինը), անշուշտ, եղել են նաև ուղտապաններ: Եվ, ըստ երևույթին այդպիսիներից մեկն է եղել Օնտոն Վերբլյուզինը՝ «սուրոժցի» Սիմեոնի հայրը:

Ցանկի ութերորդ տեղում հիշատակված է Չեռնոյ կամ Չեռնիյ (այսինքն՝ Սև) մականունը կրող Դմիտրի վաճառականը: Հարկավ, անհնարին է պնդել, թե այդպիսի մականուն ունեցող անձն անպատճառ հայ է եղել, բայց մեծ հավանականությամբ կարելի է հետևեցնել, որ նա իր մաշկի գույնով խիստ տարբերվել է շրջապատի ռուս մարդկանցից:

Ցանկի չորրորդ հորիզոնականում հիշատակված է Կուզմա (Կողմա) Կովերյա (Կովիր, Կովրյա, Խովրին) «սուրոժցի», որից սկիզբ են առնում ռուսական պատմության մեջ խոշոր դեր կատարած Խովրին, Գոլովին և Տրետյակով իշխանական գերդաստանները<sup>209</sup>: XVI դ. կազմված իրենց տոհմաձառը Խովրիններն սկսում են Ստեփան անունով մի նախապապից, որը Դմիտրի Դոնսկոյի մոտ է եկել «из своей вотчины с Судака, да из Манкупа, да из Кафы»: Այդ Ստեփանը (եթե հորինովի և անգո մեկը չէ) ըստ երևույթին եղել

207 Հ. Անտոյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 347: Անունն առաջին անգամ գործածված ենք գտնում Բարձրաբաշ վանքի 1247 թ. մի արձանագրության մեջ, ուր ասված է. «ես Սումբա որդի Սալարին միարանեցա սուրբ ուխտս և ըստ կարի ազնեցի տանս» (Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, Երևան, 1978, էջ 296):

208 Մ. В. Фехнер, Եզվ. աշխ., էջ 19—20:

209 Փ. К. Брук, Черноморье II, էջ 236:

է վերոհիշյալ Կոզմա Կովերյայի մերձավոր ազգականը: «Սուրոժցի» վաճառականների այս ընտանիքը, իր ծագումը կապելով Սուդակի (Սուրոժի), Մանգուլի և Կաֆայի հետ, ուսական միջավայրում ներկայացել է որպես Ղրիմի թերակղզում XIII դ. սկզբներից գոյություն ունեցող Թևոզորո ֆեոդալական իշխանության (Մանգուլ կենտրոնով) հայազգի տիրակալների՝ Գավրասների ազգական<sup>210</sup>: Իրական է եղել ազգակցական այդ կապը, թե հորինված, այժմ դժվար է որոշել: Մի բան, սակայն, պարզ է, Գավրասները, լինելով խոշոր ֆեոդալներ, միաժամանակ խոշոր վաճառականներ էին: Այդպիսիք էլ եղան Խովրինները Մոսկվայում հաստատվելուց հետո: Վերոհիշյալ Ստեփանի թոռը՝ Վլադիմիր Գրիգորևիչ Խովրինը 1450 թ. հիշատակված է որպես «Гость да и боярин великого князя». հայտնի է միաժամանակ, որ նա եղել է Մոսկվայի մեծ իշխան Վասիլի II-ի գանձապետ<sup>211</sup>:

Կիևի հայկական գաղթօջախի պատմությանը հատկացված էջերում ասել ենք արդեն, որ միջնադարյան բաղաբնների պաշտպանության մարտերում բոլոր բաղաբացիները, մասնավորապես առևտրա-արհեստավորական խավերը, միշտ էլ առաջավոր դիրքերում են գտնվել: Այս առումով Մոսկվան, իհարկե բացառություն չէր կազմում: «Մոսկվայի աշխարհագորը» (МОСКОВСКАЯ РАТЬ), կազմված «սուրոժցիներից», մահուգավաճառներից (СУКОННИКИ), մյուս վաճառականներից և արհեստավորներից, գործելով մեծ իշխանի կողմից նշանակվող վոյեվոդի հրամանատարության ներքո, զգալի դեր է կատարել բաղաբի պաշտպանության համար մղվող մարտերում: «Մոսկվայի աշխարհագորը» գործուն մասնակցություն է ունեցել նաև Կուլիկովյան ճակատամարտում: Նկատի ունենալով այս հանգամանքը, բացառված չենք համարում, որ Դմիտրի Դոնսկոյի հետ պատերազմի դաշտ դուրս եկած վերոհիշյալ տասը «սուրոժցիները», ինչպես նաև բազմաթիվ ուրիշներ, որոնց անունները չեն պահպանվել, եղել են հայ աշխարհագորայինների ղեկավարներ, և բացառիկ դիրք են գրավել՝ ծառայելով մեծ իշխանին իրրև մատակարար, դիվանագետ և լրարեր:

<sup>210</sup> Ֆեոդորա իշխանության հայազգի տերերի գործունեության, ֆեոդալական այդ տիրույթի անտեսական դերի ու բաղաբական պատմության մասին առկա տեղեկությունները հավաքված են Ա. Լ. Յակոբսոնի կողմից (տե՛ս А. Л. Якобсон, Крым в средние века, М., 1973, էջ 128—133):

Նրանց հայկական ծագման մասին գրել են Ն. Աղսնցը, Ա. Վասիլևը (որոշ վերապահումներով) և ուրիշներ: Բյուզանդագետ Ա. Կաթանը, հենվելով Ա. Բրայերի մի հոդվածի վրա (A. A. M. Bryer. A Byzantine Family te Gabrades... „University of Birmingham historical Journal“ 12, 1790), հանդուժ է այն կարակացության, որ „сколько-нибудь определенных свидетельств в пользу армянского происхождения этой семьи не существует“, բայց ընդունում է, որ նրանք արևելյան ծագում ունեն (А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975, էջ 88—89):

Մեր նպատակից դուրս ենք համարում Գավրասների ծննդաբանական բարդ հարցի քննարկումը, սակայն խիստ թերահավատ ենք Ա. Բրայերի ուսումնասիրության արդյունքների նրկատմամբ: Մի գիտնական, որ հնարավոր է համարում ֆեոդալական հզոր մի գերզատանի ազգանունը շաղկապել արար. «գյավուր» (անհավատ) վիրավորական բառի հետ, ենթադրելով, որ նրանք սեփականել են մահմեդականների կողմից իրենց «հատկացված» այդ հայհոյանքը և այն դարձրել ազգանուն, վստահություն չի կարող ներշնչել: Գյուվեր, Գովրիկյան, նաև Կորվին հայկական ազգանունների գոյությունն Արևելյան Սվրոպայի հայկական գաղթօջախներում Գովրասների, ուստի և Խովրինների հայկական ծագման օգտին է խոսում:

<sup>211</sup> М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 155—156:



«Ասր Կուլիկովյան ճակատամարտի մասին» գրվածքի մեջ հիշատակված են մի քանի իշխանների, բոյարների և վոյեվոդների անուններ, որոնք զոհվել են Կուլիկովյան ճակատամարտում: Գրանց շարքում հիշատակված է նաև Անդրեյ Սերկիզովիչ անուն-հայրանունը կրող մի անձնավորություն<sup>212</sup>, որն ըստ ոմանց Ոսկե Հորդայի թաթարներից է ծագում<sup>213</sup>: Հռովմեական ծագում ունեցող Սերգիուս անունը միջին դարերում լայն տարածում էր գտել ողջ բրիտանական աշխարհում, ընդունելով տարբեր ձևեր. Սերգիոս (Հունաստանում), Սերգեյ (Ռուսաստանում) և այլն: Անունն ամենից շատ զործածական է եղել Հայաստանում՝ հիմնականում Սարգիս, բայց նաև Սերգիս ձևերով<sup>214</sup>: Ռուսական միջնադարյան աղբյուրներում հիշատակված են այդ անունը կրող մի քանի հայազգի անձնավորություններ՝ այսպես, օրինակ, կաֆայիցի հայ վաճառական Սերկիզը<sup>215</sup>, կիևցի հայ Ֆեդկո Սերկիզյանը (Федко Серкизен)<sup>216</sup> և այլք: Կուլիկովյան ճակատամարտում զոհված Անդրեյ Սերկիզովիչ զորահրամանատարի ազգանվան -ովիչ (-եվիչ) վերջավորությունը շատ բնորոշ է Լեհաստանում և հարավային Ռուսաստանում հաստատված հայերի համար. այս միջավայրում նշանավոր վաճառականներ և պետական ու եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաներ են եղել Զաքար Իվաշկևիչը, Նիկոլայ Բեռնատովիչը, Բեդրոս Զախարիասևիչը, Պյոտր Գրիգորևիչը, Սեֆեր Մուրատովիչը, Նիկոլ Թորոսովիչը և տասնյակ ու տասնյակ այլ հայեր:

Այս տեղեկությունների լույսի տակ հանգում ենք այն եզրակացության, որ մեծ հավանականությամբ հայ է եղել նաև խիզախ հրամանատար Անդրեյ Սերկիզովիչը, որը զոհվել է Կուլիկովյան ճակատամարտում<sup>217</sup>:

Սրանք են, ահա, մեզ հայտնի տվյալները XIV դ. վերջին տասնամյակներում Մոսկվայում հաստատված և այդ նշանավոր քաղաքի տնտեսական ու քաղաքական ոլորտներում կարևոր դեր կատարած հայերի մասին: Մինչ այժմ հայտնի էր այդ տեղեկությունների փոքր մասը միայն. դրանք բաղմապատկիցին «սուրոժցի հյուրերի» ազգային պատկանելիությունը պարզելու ուղղությամբ կատարված քննություններով և ստացված նոր արդյունքներով: Ինչպես տեսնելու ենք ստորև, կան և ուրիշ հնարավորություններ այդ արդյունքներն ամրապնդելու:

\* \* \*

XV դ. Մոսկվայի տնտեսական կապերը Ղրիմի հետ ավելի են ծավալվում: «Սուրոժցի» բառը զործածությունից գրեթե դուրս է մղվում և նրան փոխարի-

212 «Воинские повести Древней Руси», под ред. члена-корр. АН СССР В. П. Адриановой-Перетц, М.—Л., 1949:

Բերում ենք ստորև մեզ հետաքրքրող հատվածը. «Не тури възрыкают на поле Куликове, побеженн у Дону великого,azoleша посечены князи руския и бояры и воеводы великого князя и князи белозерстии, посечени от поганых татар: Федор Семенович, Тимофей Волуевич, Семен Михайлович, Микула Васильевич, Ондрей Серкизович, Михайло Иванович и иния многия дружина, а иные лежат посечены. у Дона на брезни» (էջ 37):

213 Նույն տեղում, էջ 305:

214 Հ. Ահառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, էջ 402:

215 Հիշատակված է XIV դ. երկրորդ հիմնամյակում (В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 46):

216 Հիշատակված է 1552 թ. (Д. М. Мышко, նշվ. աշխ., էջ 117):

217 Այս մասին ակնարկ կա նաև Վ. Բարխուդարյանի և Վ. Ոսկանյանի վերջ հիշատակված աշխատության մեջ:

նկու է դալիս գոյություն ունեցող իրավիճակը ճշգրտորեն արտահայտող «կաֆայեցի» («кафинец» կամ «кафеанин») տերմինը<sup>218</sup>: Կաֆան նշանավոր այն կենտրոնն էր դարձել, ուր կանգ էին առնում և նախապատրաստվում Մոսկվա մեկնելու՝ Անդրկովկասի, Թուրքիայի և Իրանի քաղաքներից ժամանող հայ վաճառականներից շատերը: Չնայած ռուսական փաստաթղթերի մեջ նրանք բոլոր մեծի մասին գրանցվում էին որպես «թուրքական» («турецкие»), «սլավոնական» («азамляне», այսինքն աճեմցի—իրանցի), «թոխաթցի» («токатяне»), «բուրսացի» («бурсяне») վաճառականներ, սակայն կան տվյալներ նրանցից շատերի հայ լինելու մասին:

Հոծ հայ բնակչություն ունեցող Կաֆա քաղաքն էր այն հանգուցակետը, որտեղ օտարերկրյա վաճառականների հետ գործարար կապեր էին հաստատում Ռուսաստանի տարբեր իշխանություններից այստեղ ժամանող վաճառականները: Առանց ասելու էլ հասկանալի է, որ «սուլթոցի» կամ «կաֆայեցի» կոչվողները միջազգային նշանակություն ունեցող այդ ապրանքափոխանակության կազմակերպիչների շարքում պատվավոր տեղ էին գրավում:

1475 թ. թուրքերը գրավում են Կաֆան: Զենովացիներն այդ վայրերից վճնդվում են անվերադարձ: Այդ դեպքերը կատարյալ աղետ են դառնում բոլոր այն երկրների համար, որոնց միջազգային հաղորդակցության ուղիները Սև ծովի հետ էին շաղկապված: Մանր հարված է ստանում նաև զրիմահայ առևտրական կապիտալը: Հարյուրավոր ընտանիքներ լքում են իրենց նոր հայրենիքը, և ապահով կյանքի և շահութաբեր գործունեության քիչ թիվ շատ նպաստավոր պայմաններ գտնելու հույսով՝ արտագաղթում ուրիշ երկրներ: Սակայն երկու-երեք տասնամյակ շանցած՝ Կաֆա քաղաքն սկսում է կենդանության նոր նշաններ ցույց տալ և քայլ առ քայլ վերականգնել առևտրական իր հին կապերը, որոնք այլևս երբեք նախկին ծավալը չեն ստանում, բայց այնուամենայնիվ, հսկայական նշանակություն են ձեռք բերում Ռուսաստանի և արեւելյան երկրների միջև դարերի ընթացքում հաստատված ապրանքափոխանակության աշխուժացման համար:

Անվարան կարելի է հայտարարել, որ Ղրիմի տնտեսական զահավիժումի առաջն առնում են հիմնականում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, թարմ ուժեր ստանալով մայր երկրից (մասնավորապես Տրապիզոնի, Բաբերդի, Նրզնկայի շրջաններից): Այդ ժամանակաշրջանում աշխարհագրական այդ միջավայրում գոյություն չունեի մի այլ ուժ, որ ի վիճակի լիներ կենդանություն ներարկելու կիսակործան Կաֆա քաղաքին:

Կաֆայի վերակենդանացումը տեղի ունեցավ XV դ. վերջին տասնամյակներին, այն ժամանակ, երբ Մոսկվայի մեծ իշխանությունը բուռն զարգացման շրջան էր ապրում: Նրան էին ենթարկվել Նովգորոդը, Ռյազանը և Կենտրոնական Ռուսաստանի բոլոր իշխանությունները: Պետության սահմանները հյուսիսից տարածվել էին մինչև Մառուցյալ օվկիանոս, հարավից մոտեցել էին Ղրիմին, արևմուտքից՝ սահմանակից էին դարձել Լիվոնյան ուխտի հողերին (ասպետները պարտավորվել էին հարկ վճարել): 1480 թ., երկդարյա համառ պայքարից հետո, Մոսկվան թոթափում է նաև Ռսկե Հորդայի նկատմամբ ունեցած հպատակային բոլոր պարտավորությունները և փաստորեն դառնում հզոր մի միապետություն՝ ունենալով Իվան III-ի պես ականավոր առաջնորդ:

<sup>218</sup> ПСРЛ, т. XVIII, էջ 178: М. Н. Тухомиров. Пути из России в Византию, էջ 19—20:

Իվան Վասիլևիչի իշխանության տասնամյակներին, այսինքն՝ 1462—1505 թթ., զգալի առաջընթաց է ապրում նաև Ռուսաստանի տնտեսությունը. զարգանում են քաղաքները, ծավալվում է առևտուրը հարևան երկրների հետ, մայրաքաղաք Մոսկվան զարդարվում է ճարտարապետական գեղեցիկ կառույցներով, ընդարձակվում է Կրեմլը և այլն:

Քաղաքական ու տնտեսական բուռն զարգացման այս տասնամյակներին հայերի գործունեությունը Մոսկվայում պետք է որ ավելի մեծ ծավալ ընդուներ: Ի հաստատություն այս եզրակացության այսօր հնարավոր է մեջբերել բազմաթիվ փաստեր. դրանք, թերևս, երևան կհանվեն հետագայում, երբ այս տեսանկյունից քննության ենթարկվեն Մոսկվայի պատմության բոլոր գրավոր աղբյուրները՝ տպագիր ու ձեռագիր: Մեզ հայտնի նյութերը քանակով շատ շեն, բայց ուշադրության արժանի են իրենց բովանդակությամբ:

Իվան III մեծ իշխանը 1469 թ. արշավանք կազմակերպեց Ղազանի խանության դեմ. արշավողների շարքում, ինչպես գրված է տարեգրության մեջ, գտնվում էին նաև «սուրոժցիները, մահուդավաճառներն ու առևտրի մարդիկ»<sup>219</sup>: Այսպիսով, «սուրոժցիները», Մոսկվայի ողջ բնակչության հետ մեկտեղ, կանգնած էին Իվան III-ի կողքին և նպաստում էին ռուսական հողերի միավորման ու Մոսկվայի մեծ իշխանության զարգացմանն ի նպաստ ծավալած նրա գործունեության իրականացմանը:

Մոսկվային նոր միացված իշխանությունների վարչա-տնտեսական կենտրոններում արմատավորվելու նպատակով, Իվան III-ը հաճախ բռնի տեղահանում և ուրիշ վայրեր էր փոխադրում տեղի բոյարներին ու խոշոր վաճառականներին, նրանց փոխարին այդ քաղաքներն ուղարկելով իր մոսկվացի կուսակիցներին: 1471 թ. Շելոն գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Մեծ Նովգորոդը կորցնում է իր անկախությունը, իսկ մի քանի տարի անց՝ 1478 թ., վերացվում են այդ նշանավոր քաղաքի «հանրապետական կարգերը». քաղաքն՝ իր լայնատարած շրջաններով մտնում է ռուսական կենտրոնական իշխանության կազմի մեջ<sup>220</sup>: Նովգորոդ մշտական բնակության են փոխադրվում Մոսկվայի վաճառականների ամենաբարձր խավի մի շարք ներկայացուցիչներ, որոնցից էին մեզ ծանոթ Սալարև գերդաստանին պատկանող մի քանի անհատներ և այլ «սուրոժցիներ»: Սրանք նովգորոդում XVI դ. սկզբներին ունեին «Сурожский двор» կոչվող իրենց վաճառատունը, ձեռք էին բերել գյուղեր ու կալվածքներ և այլն<sup>221</sup>: Նովգորոդում սկսում են հայտնվել նաև արևելյան երկրներից ժամանած հայ վաճառականներ. նրանց քանակն այնքան է մեծանում, որ դարի վերջերին (1486 թ.) հրապարակված հրովարտակով սահմանվում է լիտովցիներից, թուրքերից և հայերից դանձվելիք հարկերի շափը. «а с иноземцев, с Литвы и с Турчан, с Армен и с иных иноземцев, опричь Немец, явки с головы с человека имати по 2 алтына»<sup>222</sup>:

219 «Купчие люди» — «առևտրի մարդիկ». այսպես էին կոչվում Մոսկվայի շարքային առևտրականները:

220 «Очерки истории СССР», II, էջ 276—283: Նովգորոդից վանդվում են Համզայի վաճառականները, որոնք այստեղ մեծ արտոնություններ էին ձեռք բերել (այդ մասին տե՛ս Н. А. Казакова. Из истории торговой политики русского централизованного государства XV в. («Исторические записки», № 47, 1954, էջ 259—290):

221 В. Е. Сыроечковский նշվ. աշխ., էջ 111—118:

222 М. В. Фехнер. նշվ. աշխ., էջ 61:

Իվան III-ի մերձավոր գործակիցների շարքում հանդիպում ենք նաև հայազգի վաճառականների, որոնք կատարում են նաև դիվանագիտական դանազան հանձնարարություններ: Կարևոր տեղ է զբաղում հատկապես դրիմահայ վաճառական Բոգդանը: Նախ այդ գործիչը Մոսկվա է ժամանում Քամանի իշխան Զախարիայի Մոսկվա փոխադրվելու ցանկությունը Իվան III-ին փոխանցելու, իսկ 1488 թ. մեկնում է Ղրիմ այդ գործը գլուխ բերելու համար<sup>223</sup>: Շատ ավելի նշանավոր դեր է կատարել կաֆայեցի վաճառական Կակոսը, որի մասին տվյալներ կան Ղրիմի խանությունը վերաբերող արխիվային գործերի մեջ: Նա հիշատակված է իր «Ժիդովին» մականունով, որ հայերեն կարելի է թարգմանել «ջհուղանման», «ջհուղատիպ» իմաստով: Այս նույն բովանդակությունն ունի ռուս առևտրաարդյունաբերողների նշանավոր գերդաստան Եվրեխնովների աղգանունը: Ինչպես այս, «Ժիդովինը», այնպես էլ Եվրեխնովների նախահայրը, հավանաբար այդպիսի մականուն-աղգանուն է վաստակել իր ժլատ բնավորությամբ, կամ էլ վաշխատուական լայնածավալ գործարքներ կատարելով: Նկատի ունենալով այդ հանգամանքը, կարծում ենք, որ կաֆայեցի վաճառական Կակոսին հրեա ծագում վերագրելու հիմքեր չկան: Այդ Կակոս անունը միջնադարյան Հայաստանում ամենից շատ տարածված ու սիրված Կիրակոս անվան փաղաքշական ձևն է, որ բաղմիցս վկայված է միջնադարյան աղբյուրներում և շատ զործածական է նաև այսօր<sup>224</sup>:

Կակոսը հանրահայտ անձնավորություն է եղել Մոսկվայում: Նրա օժանդակությամբ Իվան III-ը հարաբերությունների մեջ է մտել և դաշինք կնքել Ղրիմի խան Մենգլի-Գիրեյի հետ (այս առթիվ Կակոսը մեծ իշխանից պարգև է ստացել): Հարթելով Կաֆայի հետ առաջացած տարածայնությունները, Իվան III-ը 1474 թ. պահանջել է խանի դեսպանից՝ վերջ տալ Մոսկվայի վաճառականների նկատմամբ կիրառվող ճնշումներին. իսկ Կաֆա ուղևորվող իր դեսպանին հրահանգել է այդ հարցի մասին խորհրդակցել Կակոսի և այլ կաֆայեցիների հետ: Նույն այս Կակոսը 1475 թ. ստանձնել է խնամախոսի դեր. նա բանակցություններ է վարել Մանգուլի իշխանի դստերը Իվան III-ի որդու հետ ամուսնացնելու խնդրով: Գտնվելով մեծ իշխանի «ծառայություն» մեջ, փրկագնել է Ղրիմի թաթար իշխանների կողմից գերի վերցված ռուս վաճառականների, գնել է նրանց համար զգեստներ և ճանապարհել հայրենիք: 1486 թ. Իվան III-ը, հիշեցնելով Կակոսին նրա նախկին ծառայությունները, առաջարկել է շարունակել իր ջանքերն ի նպաստ Մոսկվայի մեծ

<sup>223</sup> «Сборник русского исторического общества», т. 41, СПб., 1844, էջ 72—73: Այս փաստը քաղել ենք Վ. Միրայելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» աշխատությունից (տե՛ս էջ 160—161):

<sup>224</sup> Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» (հատոր Բ, էջ 576—577) հիշատակված են Կակոս անունը կրող մի շարք անձինք: Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական ինքնավարության մարմնի 1567 թ. հիշատակված դատավորներից մեկը նույնպես այդ անունն է կրել (տե՛ս Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 96, 212, 267 և այլն):

Փաստաթղթերի մեջ Կակոս անունը գրանցված է Կոկոս ձևով. «ա» և «ո» հնչյունների այս փոփոխությունը դյուրություն բացատրվում է օտար բառերի ու անունների՝ ռուսական ուղղագրության կանոններին համապատասխան գրություններով: «Կաոոլ» (թագավոր) բառը, որ ծագել է Կառլ անձնանունից, ռուսները գրում են «ո»-ով, բայց արտաբերում «Կաոոլ»։ հայկական Փանոս (Ստեփանոսի փաղաքշական ձևը) անունը ռուսական աղբյուրներում գտնում ենք տառադարձված Понос (Պոնոս) ձևով, որ անշուշտ արտասանվել է «ա»-ով (Панос). գրում էին կոզակ, մանետա, Օնտոն, Օլեքսանդր, բայց արտասանում՝ կազակ, մանետա, Անտոն, Ալեքսանդր և այլն:

իշխանություն. «Как еси наперед того нам служил и добра нашего смотрел, и ты бы и ныне нам служи, а мы, аж даст бог, хотим тебя жаловать». — գրել է իշխանը<sup>225</sup>:

Այս շրջանի մոսկովյան դիվանագիտական փաստաթղթերի մեջ հիշատակվում են նաև կաֆայեցի մի շարք այլ հայ վաճառականներ՝ Խաչերեսը (գրված է Качерис), Խարանգուլը (ըստ երևույթին Խերան անվան հետ է կապված), Պողոսը (գրված է Богос), Կուլին, Սարգիսը (գրված է Серкиз), Բարեկը, Ավետիքը և ուրիշներ<sup>226</sup>:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում, հատկապես, Պողոսի մասին Իվան III-ի, Ղրիմի խանի ու Կաֆայի թուրք փառայի միջև փոխանակված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է ղրիմահայ գաղութի պատմության մասնագետ Վ. Միրայելյանը<sup>227</sup>: Այս գրազրույթունը հնարավորություն է ընձեռում շատ ավելի հստակ պատկերացում կազմելու «սուրոժցի» կոչվող վաճառականների գործունեության տարրեր կողմերի մասին: Պողոսը եղել է մեծահարուստ վաճառական: XV դ. 90-ական թթ., 5—6 տարի անընդմեջ, նա գտնվել է Մոսկվայում. 1498 թ. ծանր հիվանդացել է. նրա հարազատները, մասնավորապես եղբայրը, խոշա Կուլին, անհրաժեշտ քայլերի են դիմել Պողոսին Կաֆա փոխադրելու համար: Սակայն հիվանդը կնքել է իր մահկանացուն Մոսկվայում, թողնելով թանկարժեք ապրանքներ: 1499 թ. Իվան III-ը Կաֆա և Կոստանդնուպոլիս մեկնող իր դեսպանորդին հրահանգներ է արժեք, թե վերջինս ինչ պետք է ասի սուլթանական և խանական արքունիքներում Պողոսի ու նրա ժառանգության մասին. ստորև մեջ ենք բերում այդ հրահանգների կարևոր մասի հայերեն թարգմանությունը.

«Համայն Թուսիայի մեծ իշխան Իվան Վասիլևիչից՝  
Օլեշ Գոլոխովստովին:

Այստեղ (Մոսկվայում) կար մի կաֆայեցի Պողոս անվամբ հայ. այժմ նա այլևս չկա. և ես կարգադրել եմ նրա իրերը հավաքել ու կնքել: Եթե Կաֆայում կամ Ցարգրադում... Պողոսի իրերի մասին քեզ հարցնեն, ապա դու նրանց պատասխանելու ես աշտպես. այդ մարդը եղել է մեր թագավորի երկրում և այժմ մահացել է. և մեր թագավորի մաքսահավաքներին հրաման է արվել պահպանել ու կնքել նրա ապրանքները. եթե այդ մարդն ունի զավակներ կամ որևէ զարմիկ, ապա, առաջնորդվելով արդարությամբ, մեր թագավորն այդ ապրանքը կհանձնի այն մարդուն, որին կուղարկի ձեր թագավորը մեր թագավորի մոտ»<sup>228</sup>:

Բանակցությունները ձգձգվում են. երկուստեք գրվում են բողոքներ ու բացատրություններ, մինչև որ 1502 թ. ապրիլին հանգուցյալ Պողոսի գույքը հանձնվում է Կաֆայից ժամանած դեսպանորդներին և հարթվում այդ վիճել:

<sup>225</sup> Կակոսի մասին այս բոլոր տեղեկությունները բաղել ենք Վ. Միրայելյանից մեր կողմից բազմիցս հիշատակված աշխատությունից (էջ 40—41):

<sup>226</sup> В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 45—46:

<sup>227</sup> Վ. Ա. Միրայելյան, նշվ. աշխ., էջ 45—46: Փաստաթղթերը ապագրված են «Сборник русского исторического общества», т. 41, СПб., 1884 ժողովածուի մեջ (էջ 271—305):

<sup>228</sup> Վ. Միրայելյան, նշվ. աշխ., էջ 162: Վավերագրի թարգմանությունը մեջ ենք բերում փոքր-ինչ սրբագրելով:

Ըստ այս նյութերի Պողոսը հանդես է գալիս որպես մեկն այն «սուրոժցիներից», որոնք տարիներ շարունակ առևտուր անելով Մոսկվայում՝ չէին դարձել Մոսկվայի բնակիչ: Հայտնի է, որ Պողոսի մայրը, կինը, երկու դուստրերը, եղբայրը և, հավանաբար, ուրիշ շատ ազգականներ բնակվում էին Կաֆա քաղաքում, և հանդես էին գալիս որպես Ղրիմի խանի հպատակներ:

Պետք է ենթադրել, որ «սուրոժցիների» մեծամասնությունը իրենց բնակիչ սկզբնական շրջանում եղել են Պողոսի նման. Մոսկվայում առևտրական աշխույժ գործունեություն են ծավալել, բայց եղել են ոչ թե Մոսկվայի քաղաքացի (գործ ենք ածում նորագույն ժամանակներին հարմար այս տերմինը), այլ ղրիմեցի—«սուրոժյան հյուր»: Սակայն բաղմաթիվ ղրիմահայեր էլ՝ տակավին XIV դ. կեսերին, իսկ ավելի մեծ շափով XV-ի ողջ ընթացքում, այնպիսի սերտ անտեսական կապեր էին ստեղծել Մոսկվայի հետ, հաստատվել այդ քաղաքում տեղականորեն, տուն ու տեղ ստեղծել իրենց համար, ձեռք բերել շարժական ու անշարժ կալվածքներ, խնամիական կապեր հաստատել ռուսների հետ, որ «սուրոժցի» կոչումը նրանց համար դարձել էր արդեն ազգային պատկանելիությունից ավելի տոհմի ծագումը բացահայտող մի ցուցանիշ: Պետք չէ անտեսել և այն հանգամանքը, որ «սուրոժցիներից» սերված և Մոսկվայի քաղաքացի դարձած վաճառականներից շատերը, տեղի տալով ռուսական եկեղեցու ճշնշումներին, խզում էին իրենց կապերը մայր եկեղեցուց և դառնում ուղղափառ Այսպիսով նրանք ավելի էին մերվում ռուսական միջավայրին, մոռացություն տալով իրենց գերդաստանի ծագման հիշատակները:

\* \* \*

Ի՞նչ հիշատակներ է պահել Մոսկվայի միջնադարյան պատմությունը «սուրոժցի» կոչվող հայ վաճառականների առկայության ու գործունեության մասին: Հնագույն տեղեկությունը, գրանցված 1599 թ. մի փաստաթղթի մեջ, վերաբերում է «Հայկական կարավանատանը» («Армянский двор»), որն քստ երևույթին գոյություն է ունեցել այդ թվականից շատ առաջ<sup>229</sup>: Միջնադարյան քաղաքների ներքին կյանքի մասին առկա տեղեկություններից դատելով, հայ վաճառականները իջևանում էին իրենց այս կարավանատանը, և հենց այստեղ էլ զբաղվում մեծածախ առևտրով: Կարավանատունը գտնվում էր Սրետենսկի փողոցի վրա<sup>230</sup>:

Մոսկվայի քաղաքային շուկան գտնվում էր Կրեմլի առջևի հրապարակում և զետափին, բաղկացած էր բաղմաթիվ շարքերից, որոնց մեջ կենտրոնական տեղ էր գրավում «Սուրոժյան մետաքսի վաճառաշարքը» («Суроожский шелковый ряд»), որը սկիզբ էր առնում Կրեմլի Սպասսկի կոչվող դարպասի մոտակայքից և ձգվում մինչև Իլլինկայի եկեղեցին: 1626 թ. մեծ հրդեհից հետո, երբ գրեթե ամբողջապես հրո ճարակ դարձան Կիտայ-Գորոդի բոլոր շինությունները, Մոսկվայի առևտրական այդ կենտրոնն սկսեց վերաշինվել հիմնովին. տերություն և մասնավոր անձանց նախաձեռնությամբ այստեղ սկսեցին կառուցվել վաճառատներ, պետական հիմնարկներ և եկեղեցիներ: Վաճա-

<sup>229</sup> Н. М. Карамзин. История государства российского, изд. Н. Эйнерлинга, т. X, СПб., 1843, էջ 155; М. В. Фехнер, Կշվ. աշխ., էջ 60:

<sup>230</sup> Н. Костомаров. Очерк торговли Московского государства в XVI—XVII столетиях, СПб., 1862, էջ 86:

աատներից հիշատակվում են երեքը՝ «Հինը», «Նորը» և «Պարսկականը». այս վերջինն իր մեջ բովանդակում էր 200 թաղակապ կրպակներ, որոնք վարձու էին տրվում արևելյան ապրանքներ վաճառող հայերին, պարսիկներին, ռուսներին<sup>231</sup>:

Հայկական կարավանատան, «Սուրժյան մետաքսի վաճառաշարքի», իսկ հետագայում «Պարսկական» վաճառատան գոյությունը Մոսկվայի կենտրոնական հրապարակում և Սրետենսկի փողոցի վրա՝ խոսուն փաստեր են նախ դրիմահայերի, ապա նաև այլ վայրերից ժամանող հայ վաճառականների Մոսկվայում կատարած տնտեսական կարևոր դերի մասին:

\* \* \*

Մոսկվայի հայ գաղութի մասին մեր գիտելիքները կրնդարձակվեին, եթե հնարավոր լիներ պարզել, թե երբվանից են հայերն այստեղ ունեցել իրենց եկեղեցին՝ միջնադարյան այն հաստատությունը, որի գոյությունն իսկ կարելի է զորեղ առհավատոյա համարել բազմամարդ ու կազմակերպված գաղթօջախի առկայության: Նախորդ էջերից մեկում անդրադարձել ենք արդեն Մոսկվայի մետրոպոլիտ Կիպրիանոսին ու նրա՝ հայերի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կեցվածքին: Հոգևոր այդ առաջնորդը պատվիրում էր ռուս հավատացյալներին մտերմական կապեր չստեղծել «հերձվածող» հայերի հետ, արգելել նրանց մուտքը եկեղեցիներ և այլն:

Այս «հորդորներից» հետո, եթե ոչ հասարակ ժողովուրդը, ապա՝ անտարակույս կղերական դասը, պետք է, որ խեթ աչքերով նայեր «կասկածելի» դավանանք ունեցող հայ քրիստոնյաների վրա: Եվ նրանք, անկախ եկեղեցու պաշտոնյաների կողմից պարտադրվող անբարյացակամ այս կեցվածքի, եթե, իհարկե, պատկառելի թիվ էին կազմում, պետք է, որ ստեղծեին իրենց աղոթքի տունը, իրենց համայնքի ներքին գործերը տնօրինող հաստատությունը: Եվ իրոք, կան աղոտ հիշատակներ այն մասին, որ «սուրժյի վաճառականները» տակավին XIV դ. վերջերին, Մոսկվայում ունեցել են իրենց եկեղեցին:

1479 թ. Իվան III-ը քանդել տալով փայտաշեն ու խարխուլ մի եկեղեցի, որը գտնվում էր Մոսկվայի առևտրատարհեստավորական արվարձանում՝ Պոսարում, նույն տեղում հիմք է դնում քարաշեն մի եկեղեցու՝ Հովհան Ռսկերբրանի անունով: Այդ մասին տարեգրության մեջ գրանցում կատարողը նշել է, որ նախկին փայտաշեն եկեղեցին կառուցված է եղել Մոսկովյան «հյուրերի», այսինքն «սուրժյի վաճառականների» կողմից, պատկանելիս է եղել նրանց («бе же та церковь изначала гостей московских строение») <sup>232</sup>. Բայց մեծահարուստ ու փարթամ «սուրժյի» վաճառականները կարո՞ղ էին, արդյոք, իրենց հոգևոր հաստատությունը պահել վերին աստիճանի լքված ու խարխուլ վիճակում, եթե XV դ. վերջերին ունեցած շինեին մեկ ուրիշ տաճար: Թվում է, թե չէր կարող այդպես լինել: Եվ, իրոք, տարեգիրը այդ խարխուլ եկեղեցին անվանում է «бывшей гостинной деревяной», այ-

231 М. Н. Тихомиров, նշվ. աշխ., էջ 130, 147; Н. Костомаров, նշվ. աշխ., էջ 85:

232 ПСРЛ, т. XI, էջ 221. В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 39:

սինքն՝ «Հյուրերին պատկանող փայտաշեն եկեղեցի»<sup>233</sup>, ակնարկելով թերևս այն մասին, որ Իվան III-ի կողմից նոր եկեղեցու հիմքերը դնելու ժամանակ Մոսկվայի «հյուրերն» ունեցել են արդեն մեկ այլ՝ ոչ փայտաշեն, այլ քարաշեն տաճար<sup>234</sup>:

Ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել այդ տաճարի կառուցման ժամանակի, վայրի և գոյատևման մասին: 1753 թ. մի փաստաթղթում՝ գրված Օթար Թումանովի և այլ հայերի կողմից, տվյալ կա այն մասին, որ վաղ ժամանակներում Կիտայ-Գորոդում հայերն ունեցել են եկեղեցի, որը հետագայում լքվել է, այդ շինությունների տեղում մետաքսի արհեստանոց կառուցվելու հետևանքով: Մեկ ուրիշ վկայությամբ այդ եկեղեցին գտնվելիս է եղել Կիտայ-Գորոդի այն հատվածում, որն ընկած էր Վարվառկա և Իլյինկա փողոցների միջև, ուր տակավին XVIII դ. գոյություն են ունեցել հայերին պատկանող ինչ-որ շինություններ՝ պիտանի հայկական եկեղեցու կարիքների համար<sup>235</sup>:

Իվան IV Ահեղի հրամանատարության ներքո գործող ռուսական բանակը, երկարամյա համառ պայքարից հետո, 1552 թ. գրավեց Ղազանի խանությունը: Մենք արդեն ասել ենք, որ Ղազանում բնակվող հայերը ռուսական զինքի հաղթանակի շերտ կողմնակիցներն էին: «Ղազանի տարեգրությունը» տեղեկություն է պարունակում այն մասին, որ պատերազմից հաղթանակով վերադարձող ցարին ու զորքերին Մոսկվայում ցնծազին դիմավորողների շարքում եղել են բազմաթիվ հայեր<sup>236</sup>: Ի նշանավորումն այս հաղթանակի, Իվան Ահեղը Մոսկվայի կենտրոնում կառուցել է տվել ռուս ճարտարապետության հրաշալիքներից մեկը՝ Վասիլի Երանելու փառահեղ տաճարը, բաղկացած միմյանց հետ շաղկապված ինը փոքր եկեղեցիներից: Գրանցից մեկը նվիրվել է Հայոց Լուսավորիչ Գրիգոր Պարթևին: Եթե Մոսկվայի հայերը Ռուսաստանի տընտեսական կյանքում զգալի դեր կատարած շինեին, այս փաստը կմնար առանց բացատրության: Եվ, անշուշտ, ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք հայերին սիրաշահելու խորհուրդ են տեսնում այս փաստի մեջ: Մոսկվայի հայ գաղթօջախի բնակչությանը, ինչպես և տարբեր ճանապարհներով ու տարբեր գործերով Մոսկվա ժամանող հայազգի բոլոր մարդկանց հնարավորություն է տրվում իրենց անկյունն ունենալու համառուսական նշանակություն ստացած նորակառույց այդ տաճարի մեջ:

<sup>233</sup> Այս արտահայտությունը բաղում ենք Մ. Տիխոմիրովից (նշվ. աշխ., էջ 158), որը մեջ է բերել՝ վկայակոչելով ПСРЛ. т. VIII, էջ 201, ПСРЛ. т. XXIII, էջ 193:

<sup>234</sup> Այս եզրակացությունը պատկանում է Մ. Տիխոմիրովին (տե՛ս նշվ. աշխ., էջ 158): Նշենք, սակայն, որ «սուրճյան հյուրեր» կոչվող վաճառականներին համարելով մոսկվացի ռուս վաճառականներ, որոնք առևտուր էին անում Ղրիմի հետ, ակադ. Մ. Տիխոմիրովը այս փաստի հիման վրա խոսք է բացել Մոսկվայում վաճառականական միությունների կամ արհեստակցական կազմակերպությունների սաղմերի առկայության մասին: Այժմ, երբ պարզ է արդեն, որ «սուրճի» են կոչվել ոչ թե ազգությամբ ռուս վաճառականները, այլ զրիմահայերը՝ վերանայման կարոտ են դառնում «սուրճիներին» պատկանող եկեղեցիների մասին փաստի այս կարգի հեռամետ մեկնարանությունները:

<sup>235</sup> Материалы для истории, археологии и статистики города Москвы, собр. И. Е. Забелиным, ч. I, էջ 1009, ч. II, էջ 1154 (տե՛ս Մ. Տիխոմիրով, նշվ. աշխ., էջ 216):

<sup>236</sup> «Казанская история», М., 1957, էջ 154. «Հայ ժողովրդի պատմություն», IV, էջ 422:



\* \* \*

XVI դ. երկրորդ հիսնամյակը Ռուսաստանի և մերձակա երկրների հայկական գաղթօջախների պատմության համար դարձակետային ժամանակաշրջան է եղել: Հայ առևտրական կապիտալն ընդարձակել է իր գործունեության շրջանակները: Ինչպես միշտ զբաղված լինելով հիմնականում արևելյան ապրանքների առևտրով, հայ վաճառականներից շատերը մուտք են գործել այդ երկրների տնտեսական կյանքի տարբեր բնագավառները, զբաղվել նաև տեղական ու եվրոպական ապրանքների մեծածախ առևտրով, ստեղծել արհեստանոցներ և այլն: Քիչ չեն եղել նաև մեծահարուստ այն վաճառականները, որոնք ձեռք բերելով գանձագին խոշոր կալվածքներ, տեղ են գրավել այդ երկրների կալվածատերերի շարքում: Բարգավաճ այս վիճակն արդյունք էր, առաջին հերթին, արևելաեվրոպական երկրների տնտեսական կյանքի բուռն զարգացման, սակայն որոշիչ դեր էին կատարում նաև քաղաքական նոր պայմաններն ու միջպետական հարաբերությունները:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև դեռևս XVI դ. սկզբներին ծայր առած դոտեմարտերն ավելի սուր բնույթ էին ստացել դարիս երկրորդ հիսնամյակի ընթացքում: Սյուննի և շիա դավանանքին պատկանող մուսուլմանների միջև հակամարտությունները բացարձակ պայքարի ձևեր էին ընդունել: Թուրքիայի սահմաններից վճռվել էին բոլոր իրանցի շիաները. իրանցի վաճառականների առջև փակվել էին Ատրպատականից Թուրքիայի կենտրոնական քաղաքները և սևծովյան նավահանգիստները ձգվող բանուկ ճանապարհները: Հակառակ քաղաքական անբարենպաստ այս պայմանների, ապրանքափոխանակությունը չէր դադարել մրցակից պետությունների միջև: Առանց կանգառի Իրանում արտահանվող հում մետաքսի բեռները և իրանական ու հեռավորարևելյան այլ ապրանքներ, մեղ ծանոթ ճանապարհներով, մուտք էին գործում Թուրքիա՝ դառնալով հումք Թոխաթում, Բուրսայում և այլ քաղաքներում զարգացող մետաքսագործության համար: Պատերազմող կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ մեծ շափերի հասնող այդ առևտուրը կատարվում էր Իրանի և Թուրքիայի տիրապետության տակ անցած հայկական նահանգներում բնակվող և այդ երկրների տնտեսական կենտրոններում հաստատված հայ վաճառականների միջոցով<sup>237</sup>: Նույն այս վաճառականներն էին, հիմնականում, որ վերոհիշյալ արևելյան ապրանքները և դրան ավելացված նաև Թուրքիայում արտադրվող թանկարժեք գործվածքեղենը մեծ քանակությամբ հասցնում էին Արիմ, Լեհաստան, Մոսկվա և ուրիշ մերձակա երկրներ:

Տևական պատերազմները և սազմական բախումներն անպակաս էին նաև Արևելյան Եվրոպայի երկրներում: Բայց ապրանքափոխանակությունը շահութաբեր էր բոլորի համար հավասարապես: Ուստի հայ վաճառականներն այստեղ ևս դիտվում էին որպես շեղոք տարր և իրավունք էին ստանում կարավաններ կազմելով երթևեկել մի երկրից մյուսը՝ նույնիսկ պատերազմական գործողությունների ժամանակ: Եվ այսպիսի երթևեկը կատարվում էր ոչ դեպքից դեպք կամ բացառիկ պայմաններում, այլ օրենքի ուժ էր ստացել Լեհաստանի

237 Հ. Փափագյան. Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը, «Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 242—244:

Քաղաքը Սիգիզմունդ Օգոստոսի 1570 թ. հրապարակած մի հրովարտակով<sup>238</sup>:

Այս ժամանակաշրջանում Լեհաստանում բնակվող կամ առևտուր անող հայ վաճառականներն ստացել էին նաև այլ առանձնաշնորհումներ, և այն աստիճանի ամրապնդել իրենց տնտեսական դիրքերը, որ տեղական առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչների նախանձն էին շարժում: Վերջիններս, զանազան բողոքագրեր ներկայացնելով կենտրոնական իշխանությունը, փորձում էին սահման դնել հայերի տնտեսական բարգավաճման առջև: Լվովի քաղաքային համայնքն, օրինակ, Սիգիզմունդ Օգոստոս Քաղաքին հասցեագրած բողոքագրի մեջ ասում էր. «Հայերն այժմ առևտուրը տարածել են ողջ Քաղաքությունից մեջ, նաև Պրուսիայում, Լիտվայում և Մոսկվայում, երկրներ, ուր իրենց նախնիները բավարարվում էին սոսկ արևելյան ապրանքների վաճառքով: Իրենց ստացած արտոնագրից հետո,— շարունակում են բողոքագրի հեղինակները,— հայերի վիճակն այնքան երջանիկ է դարձել, որ ծովից ծով (այսինքն՝ Սև ծովից Բալթիկ ծով—Լ. Խ.) են հասցնում իրենց առևտրի ապրանքները, առիթ չեն կորցնում գյուղեր և ավաններ վարձակալելու, բաղամացնում են իրենց պարտեզները քաղաքի արվարձաններում, և իրենց ձեռքն են առնում քաղաքի (իմա՛ Լվովի—Լ. Խ.) գրեթե բոլոր վաճառատները»<sup>239</sup>:

Մոսկվայի հայ վաճառականների մասին պահպանված տեղեկությունները, ինչպես տեսանք արդեն, անհամեմատ աղքատ են, սակայն, հիմքեր կան ենթադրելու, որ մեծ չափերի է հասել նաև նրանց առևտուրը: Մոսկվայի և արևելյան երկրների միջև կատարվող առևտրի մասին հատուկ մենագրության հեղինակ Մ. Ֆեխները, սկզբնաղբյուրների հիման վրա ցույց տալով, որ արեւմտյան (առաջին հերթին՝ հայազգի) վաճառականները մշտապես առևտուր էին անում Մոսկվայում, Մեծ Նովգորոդում, Պուտիլյում, այսինքն՝ Ռուսաստանի սահմանափակ կենտրոններում, ուշադրություն է հրավիրում հետևյալ հարցերի վրա: Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը սահմանափակել էր արևելյան վաճառականների գործունեության վայրերը, այդուամենայնիվ, Արևելքից ներմուծված ապրանքները Ռուսաստանում լայն տարածում էին գտնում: Ռուս վաճառականները հայերից ձեռք բերելով այդ ապրանքները, դրանք վաճառքի էին հանում ոչ միայն Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, այլև հասցնում էին պետության հյուսիսային և հյուսիս-արևելյան ամենահեռավոր շրջանները. «Այս հանգամանքը,— եզրակացնում է ուսումնասիրողը,— ակնառու կերպով հաստատում է, որ ռուսական ներքին շուկայի համար արևելյան առևտուրն ունեցել է ոչ փոքր նշանակություն»: Այնուհետև հաստատելով, որ հայ վաճառականների առևտրի հիմնական առարկան XVI դ. եղել է մետաքսը, Մ. Վ. Ֆեխները շեշտում է, որ այդ ապրանքներից բացի «հայերը թանկագին քարերի, մորթիների, կաշվի և մամի մեծ չափերի հասնող առևտուր են արել»<sup>240</sup>:

Բարվոք և հավասարակշիռ այս վիճակը խախտվում է XVI դ. վերջերին և XVII-ի սկզբներին, երբ Թուրքական կայսրությունն արևելոժվում էր շալալինե-

<sup>238</sup> Հրովարտակում պարզ ասված է, որ հայ վաճառականներն իրավունք ունեն կարավաններով Թուրքիայից լեհական պետության սահմանները մանել և Կիևից ուղևորվել Մոսկվա նաև պատերազմի ժամանակ («Архив юго-западной России», ч. VII, т. V. 1907, էջ 187—190):

<sup>239</sup> Պիշչոֆ, Լեհաստանը հին իրավունքը, Վիեննա, 1890, էջ 36—37:

<sup>240</sup> М. В. Фехнер, նշվ. աշխ., էջ 60—63:

րի հուժկու ապստամբություններից: Փոքր Ասիայի արհեստագործության և առևտրի նշանավոր կենտրոնները կողոպտվում ու ավերվում էին այն աստիճանի, որ տասնամյակներ պետք է անցնեին նախկին վիճակին հասնելու համար:

Մոսկվայի հետ տնտեսական ամենասերտ կապեր ստեղծել էին, հատկապես, թոխաթեցի հայ վաճառականները: 1602 թ. ջալալիները գրավեցին և ավերեցին նշանավոր այս կենտրոնը: Ստեփանոս Թոխաթեցի տարագիր բանաստեղծը գովերգում է իր հայրենի քաղաքը, նկարագրում նրա ծաղկուն ու բարգավաճ վիճակը մինչև ջալալիների կողմից ավերվելը: Ի վերջո, սրտի խոր կսկիծով նա արձանագրում է, որ ամեն ինչ այդտեղ հողին է հավասարեցվել, իսկ բնակչության մեծամասնությունը լքել է քաղաքն ու ցրվել աշխարհով մեկ<sup>241</sup>:

Թուրքիայի քաղաքական կյանքի անկայուն վիճակի և կենտրոնական շրջանների տնտեսական փլուզման այս նույն ժամանակաշրջանում, ինչպես ասել ենք արդեն, ուսական պետությունը վերելք էր ապրում և ընդարձակում իր սահմանները՝ բոլոր տեղություններով: Ղազանի և Աստրախանի խանությունների գրավումից հետո միջազգային ապրանքափոխանակության Կասպ-Վոլգյան հին մայրուղին շատ ավելի մեծ նշանակություն է ստանում հզորացող Ռուսաստանի համար: 1584 թ. հյուսիսային Դվինայի գետաբերանում՝ Սպիտակ ծովի ափին հիմնադրվում է հետագայում Արխանգելսկ կոչված նավահանգստային քաղաքը, որով ուսական պետությունը ծովային ճանապարհով անմիջական հաղորդակցության մեջ է մտնում հյուսիսեվրոպական երկրների հետ: Իրանից և Անդրկովկասյան երկրներից Կասպից ծովի ու Վոլգայի վրայով դեպի Մոսկվա ձգվող տնտեսական զարկերակն սկսում է բարախել լիարյուն, և դրան համընթաց արյունաբամ է լինում զրիմյան մայրուղին:

Համայն Ռուսիայի մայրաքաղաք դարձած Մոսկվայում ավելի են բազմանում հայ վաճառականներն ու տարբեր զբաղմունքի տեր մարդիկ, որոնցից շատերը մշտական բնակություն են հաստատում այստեղ: Սակայն նրանք, իրենց մեծամասնությամբ, այլևս զրիմահայեր կամ թուրքական տիրապետության տակ անցած հայկական նահանգների հետ կապված հայեր չէին, այլ Արևելյան Հայաստանից, Վրաստանից և Իրանի տիրապետության տակ զրտնրվող Անդրկովկասյան խանություններից տեղափոխվածներ:

Մոսկվան այդ շրջանում շատ էր ընդարձակվել. Սպիտակ քաղաքից (Белый город) դուրս գտնվող թաղամասերը, որ հողե պարիսպների ծիրի մեջ էին գտնվում, արդեն անբավարար էին արագորեն աճող բնակչության կարիքների համար, ուստի այդ պարիսպներից դուրս ստեղծվում էին նոր թաղամասեր<sup>242</sup>: Քաղաքային կյանքի զարգացման հետևանքով մարդահամար կատարելու փորձեր էին արվում. 1620, 1638, 1665—1672, 1690-ական թթ. կատարված բնակչության ցուցակագրությունների տվյալներից ելնելով, ուսումնասիրողները հանգել են այն եզրակացության, որ XVII դ. հայերը Մոսկվայում շեն ունեցել հատուկ թաղամաս, այլ բնակություն են հաստատել օրավուր ընդարձակվող քաղաքի տարբեր մասերում<sup>243</sup>: Կան, սակայն, որոշ տրվ-

241 Ղ. Ալիջան, Հայաստանում, հատոր Բ, Վենետիկ, 1901, էջ 606—609:

242 П. В. Сытин. История планировки и застройки Москвы, материалы и исследования, том первый, 1147—1762 гг., М., 1950:

243 Нина Молева. Иван Салтанов и его школа. «Литература», 1977, № 10, էջ 75:

յալներ, որոնք խոսում են հօգուտ այն ենթադրության, թե բազմաթիվ հայեր գերադասում էին Պրեսնյա թաղամասը, ուր ըստ ստուգելի որոշ տվյալների XVII դ. սկզբներին կառուցվել է Հայոց Սուրբ Աստվածածնի քարաշեն եկեղեցին<sup>244</sup>։ Քաղաքի այս մասում բազմաթիվ հայերի առկայությունը է բացատրվում նաև այն հանգամանքը, որ հայերի ազգային գերեզմանատուներ նույնպես ստեղծվել է այստեղ. Վազանկովյան թաղի հայկական այս գերեզմանատանը 1801 թ. կառուցվեց հայկական մի մատուռ, որը կանգուն է առ այսօր և Մոսկվայի հայերի միակ գործող եկեղեցին է հանդիսանում։

1729 թ. Պետրոս II-ի հրովարտակով Պրեսնյայի թաղամասում գտնվող Վոսկրեսենսկայա կոչվող թագավորական կալվածքը տրվում է իր ընտանիքով Մոսկվա փոխադրված Վրաց թագավոր Վախթանգ VI-ին։ Թագավորի հետ միասին Պրեսնյայի այս նոր թաղամասում բնակություն են հաստատում Պետրոս Մեծի անդրկովկասյան արշավանքից հետո հայրենիքից հեռացած բազմաթիվ վրացի և հայ ազնվականներ, առևտրականներ, զինվորականներ և հասարակ մարդիկ՝ շուրջ 3000 անձինք։ Սրանց ջանքերով շինանում է քաղաքի այդ մասը, որը հայտնի է դառնում Գրուզինի անունով և որի հիշատակները մնում են նաև այսօր՝ Մեծ և Փոքր Գրուզինսկի փողոցների շրջափակում։ Եթե ճիշտ է այն տեղեկությունը, թե Պրեսնյայում հայեր են հաստատվել ու եկեղեցի կառուցել այս դեպքերից շուրջ մեկ դար առաջ, կարելի է ենթադրել, որ ուսական կառավարությունը Վրաց թագավորի և նրա հետ ժամանած վրաստանցի գաղթականների համար բնակության վայր ընտրելիս հաշվի էր առել նաև այդ հանգամանքը։ Գրուզինի կոչված նորաստեղծ թաղամասի բնակչության կազմում կարելի է հաստատապես պնդել, որ զգալի թիվ էին կազմում հայազգի մարդիկ, ըստ մեծի մասին վաճառականներ<sup>245</sup>։

244 Բարձրագույն հրովարտակը և արձանագրությունը վերաբերեալը առ եկեղեցիս դաւանութեան լուսաորչական Հայոց, որ ի Ռուսաստան, Մոսկվա, 1842, էջ 119. Մ. Մաքեւան, Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց կազարեան տոհմի, Մոսկվա, 1856, էջ 18։

Մոսկվայում բնակություն հաստատած մի խումբ հայերի կողմից 1753 և 1760 թթ. խուսական պետական մարմիններին ներկայացրած խնդրագրերի մեջ խոսք կա այն մասին, որ Կիտայ-Գորոդի հայկական եկեղեցու վերացումից և ժամանակավոր ժողովատեղիների փոփոխությունից հետո, հայերն իրենց աղօթատեղին փոխադրել են Պրեսնյա, որտեղ Վախթանգ թագավորի կողմից նրանց հատկացված հողամասի վրա, նրանք կառուցել են փայտաշեն մի եկեղեցի 1753 թ. փաստաթղթում գրված է. «...А как тот Волков двор хозяином продан, то оную церковь принуждено перенести в деревянной покой, состоящей за землянным городом, близ самого поля, за Преснею рекою, месте которое отдано выехавшим покойным прузинским царем Вахтангом Леонтевичем армянской нации князьям и дворянам и протчего звания людям с фамилиями для поселения» («Арм.-русские отношения в XVIII в.», 3, էջ 276, հմմ. նաև էջ 337)։

ըստ երևույթին հիմնավոր չեն այն տվյալները, որոնց համաձայն Պրեսնյայում հայկական քարաշեն եկեղեցի է եղել տակավին XVII դ.։ Հավանաբար այդ թաղամասում հայկական եկեղեցական առաջին շինությունը հենց այն փայտաշեն եկեղեցին է, որի մասին խոսք կա վերոհիշյալ փաստաթղթի մեջըրբված հատվածում։

245 Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ ինչպես վաղ միջնադարում, այնպես էլ հետագա դարերում (մինչև XIX դ.), «վրացի» տերմինը հայ և օտարազգի բազմապիսի ազգյուրներում լայնորեն օգտագործվել է «Վրաստանի բնակիչ» իմաստով, հատկացվելով հավասարապես Վրաստանի և՛ վրացիներին, և՛ հայերին։ Այս հաստատվում է բազմաթիվ փաստերով, որոնցից մի քանիսի հետ արժե ծանոթանալ։ 1691 թ. հայերեն մի հիշատակարանի մեջ «վրացի» է կոչվել Սպահանում առևտուր անող Կուտէնց Մաթոսի որդի պարոն Ռամազը (եղբայրն է՝ Ղազար, բույրը՝ Խաթուն և այլն)։ Զաքարիա Ազուլեցին իր «Օրագրության» մեջ

\* \* \*

Հին Մոսկվայի հետ հայերի ունեցած անտեսական կապերի ստվերազրծվող պատկերն ավելի հստակ կզատնա, եթե մենք հպանցիկ մի հայացք նետենք այն երկու նշանավոր կենտրոնների վրա, որոնք երկար ժամանակ եղել են մոսկվացի ուս վաճառականների կողմից ոչ հաճախ կազմակերպվող հետազնայ առևտրական ճամփորդությունների վերջնական հանգրվանները: Խոսքը վերաբերում է Փոքր Ասիայում՝ Թոխաթին, Անդրկովկասում՝ Շամախում:

Նախ Թոխաթի մասին: Թուրքական մի բարձրաստիճան նահանգապետի 1498 թ. գրած նամակում բառացի ասված է, «որ Մեծ իշխան Իվանի վաճառականներից (ГОСТЬ) շատերը գալիս են մեր Թոխաթ քաղաքը»<sup>246</sup>: Դժվար է ասել, թե այստեղ խոսք կա ազգություններ ուս վաճառականների մասին, և ավելի հավանական է ենթադրել, որ թուրք պաշտոնյան նկատի է ունեցել Մոսկվայում հաստատված հայերին, որոնք հաճախ էին այցելում Թոխաթ: Անկախ

խոսում է երկու հայերի մասին, որոնք իրենց սնանկ հայտարարելով՝ շատ վաճառականների անտեսական մեծ հարված են հասցրել. «Այս Բ. բինադարս,— գրում է նա,— վրացի են, ազգու հայ, ի քաղաքին Քլվխու, անունն Շահվերդի, միուն Գասպար» («Օրագրություն», էջ 72): Ժիշտ այդպես վրացի են կոչված նաև «Աբրահամի որդի վրացի պարոն Կարապետը» (Բրիտանական գրադարան, Օ.Ր.Յ. № 1048, էջ 77), «վրացի Զորարեզը» (Մատենադարան, Արխիվային բաժին, Լազարյանների ֆոնդ, վավ. 1, էջ 126), «վրացի պրն Մխիթարը» (ձեռ. № 6240, էջ 44ա), «վրացի Սողոեանց Ալահվերտին» («Եղիա Կարենցու դիվանը», էջ 68) և բազմաթիվ այլ հայ վաճառականներ, անշուշտ, այն բանի համար, որ դրանք բոլորն էլ եղել են Քիֆիսեցիներ կամ վրացահայեր: Երուսաղեմի հայերեն ձեռագրերից մեկում ընդօրինակված է զվարճալի մի պատմություն, որի մեջ հակադրվում են իրենց կենցաղով շատ տարբեր վրաստանցի (առատաձեռն ու «քեֆչի») և պարսկաստանցի (սակավապետ) հայերը: Այնտեղ գրված է. «Հայ ոմն վրացի ճանապարհորդնալ ի Պարսկաստանէ զնայր ի Բասրա ընդ միում պարսկահայի, որ էր փարթամ յոյժ, բայց կերակուր իւր էր իբրև յեփին չբատրի...»: Երբ այս հարուստ վաճառականը դիտողություն է անում վրացահային՝ կերուխումի համար շատ գրամ ծախսելու կապակցությամբ, վերջինս նրան պատասխանում է. «Պարոն, մինչ ունիմ, այսպէս փարթամօրէն կեամ, և յորժամ պակասեսցին ինձ, յայնժամ կեցից իբրև զքեզ» (Ն. Պողոսյան, Տուցակ..., Գ, էջ 561): «Ընտիր պատմութիւն Գալիթ-բեգին» (Վաղարշապատ, 1871, էջ 5) ծանոթ գրվածքի մեջ Վրաստանից Այունիք ժամանած հայ դինվորները «վրացի» են կոչվել. «Սորա վրացի ասին,— բացատրում է հեղինակը,— ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ ի յազգէ նոցա»: Խոսելով Քիֆիս քաղաքի մասին, Մ. Թաղիադյանն իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ ուղղակի նշում է, որ «քնակիչը նորա հայր և զիրք առ այլազգիս միահաղոյն զուռչիս անուանեալ [են]» («Գրական ժառանգություն», հատոր 9, Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1975, էջ 169) և այլն: Այս նույն պատկերը նկատվում է նաև սուսերեն գրված բազմաթիվ փաստաթղթերում: Լուկա Շիրվանով հայ վաճառականը, օրինակ, թվարկելով իր գերդաստանի հետ սերտորեն կապված անձնավորություններին, գրանց շարքում հիշատակում է Բարսեղի որդի Պոզոսին, նրան կոչելով «гилянец грузинец Павел Василев, уроженец города Тефлиса» («Арм.-русские отношения XVII в.», 3, էջ 180): Զուրաբ Զալրիեր, պետական մարմիններին ներկայացրած իր մի գրության մեջ, ներկայանում է որպես «грузинской нации армянского закона дворянин Зураб Завриев», Օթար Թումանյանը ներկայանում է որպես «армянской нации в Москве обретающееся житель грузинской князь гусарского полку капитан Отар Туманов» (նույն տեղում, էջ 275) և այլն:

Այսպիսով ստացվում է նույն պատմությունը. XIV դ. Մոսկվայի բնակչությունը շփվում է Ղրիմից ժամանող հայերի հետ՝ կոչելով նրանց «Սուրածցի» կամ «Կաֆացի», հաշվի առնելով Ղրիմի վաճառաշահ այն քաղաքները, որտեղից ժամանում էին այդ հայերը. իսկ XVI—XVII դդ. «վրացի» («գրուզին») անունով են հայտնի դառնում շատ հայեր, քանի որ նրանք Մոսկվա էին ժամանում այս անգամ արդեն ոչ թե Ղրիմից, այլ Վրաստանից:

246 В. Е. Сыроечковский, Եզվ. աշխ., էջ 51:

այս վկայությունից, կան իսկապես ուրա մարդկանց թոխաթ այցելելու մասին ուրիշ, ավելի վստահելի տվյալներ:

Արդ՝ ի՞նչ էր իրենից ներկայացնում թոխաթ քաղաքը մինչև շալալիների կողմից ավերվելը (1602 թ.) և հետագայում, երբ բուժվեցին նրա վերքերն ու այն նորից վերակենդանացավ: Ստեփանոս թոխաթեցին հայտնում է, որ քաղաքի յոթ թաղերը եղել են զուտ հայաբնակ և ամեն մեկն ունեցել է իր եկեղեցին: Սուրբ Սարգսի թաղի մասին, օրինակ, բանաստեղծն ասում է.

Շատ բրիտանեայր կայր յայն թաղին,  
Ամենքըն ճոխ տանուաէրնի,  
Կարդացողներ, հասկըցողնի,  
Առատաձեռն խօճանի:

Այս վաճառականներն էին, որ իրենց առևտրական գործերով լինում էին ամենուրեք.

Գնային Շիրվան և Շամախի,  
Շամ, Հալէպ և Ըստամպուլի,  
Պուրսայ, և այլ բազում տեղի:

Անշուշտ, այս «բազում տեղիի» մեջ էին մտնում նաև Ղրիմը, Լեհաստանը և Մոսկովյան պետությունը՝ տնտեսական իրենց նշանավոր կենտրոններով: Բանաստեղծը նկարագրում է թոխաթի շուկան՝ «բարով իլի» խանութներով.

Վաճառականաց էր նա տեղի.  
Չորս կողմանց գայր պաղրրկնի,  
Ծախէր բեռնով ապրուշումնի,  
Չուխայ, բրթան և այլ զումաշնի:

Քաղաքը եղել է նաև արհեստագործության նշանավոր կենտրոն. արտադրվել են «գոյնըզդունաց ամեն ցեղի» մետաքսե ծաղկադարձ գործվածքներ, բեհեզ, քաթան և այլ կտորեղեն: Բանաստեղծը խոսում է սսկերչական գեղեցիկ ապրանքների, սղնձե «թաս-թափախների», «վարպետաբան» կողպեքների և շատ այլ «զարմանալի բաների» արտադրության մասին<sup>247</sup>:

Մեկ ուրիշ թոխաթեցի՝ Հակոբ Բաթուկենցը, լրացնելով նախորդին, տեղեկություններ է հաղորդում իր հայրենի քաղաքի «ընտիր խաների», այսինքն՝ կարավանատների մասին, ուր տարբեր երկրներից ժամանած վաճառականները «օթէին բազում օրեր», զովերզում է տեղի «տուլվաթաւոր խօճաներին», որոնք մեծահամբավ, փարթամ ու անվանի էին<sup>248</sup>:

XVII դ. սկզբներին կրած հարվածներից մի քանի տասնամյակ հետո, երբ հաղթահարվում են ներքին դժվարությունները և Իրանի ու թուրքիայի միջև վերականգնվում են բնականոն հարաբերությունները, թոխաթը կրկին դառնում է նշանավոր քաղաք, բայց երբեք այլևս չի հասնում իր նախկին փառքին: Տրանսխայի ճանապարհորդ Հ. Բ. Տավերնիեն, թոխաթը համարելով դեպի Արևելք երկարող տարանցիկ ճանապարհների խոշոր կայաններից մեկը, վկա-

247 Ղ. Ալիշան, Հայագատում, Բ, էջ 606—607:

248 Նույն տեղում, էջ 609:

յում է այն մասին, որ «այնտեղ անընդհատ կարավաններ են ժամանում Պարսկաստանից, Դիարբեքիից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Սինոպից և այլ վայրերից»: Անդրադառնալով Թոխաթից մինչև Թավրիզ ընկած երկրամասին, նա նշում է, որ ընդարձակ այս տարածությունը՝ հների կողմից Հայաստան կոչված երկիրն է, բնակեցված է գրեթե միայն քրիստոնյաներով. և պետք չէ դարմանալ, — շարունակում է նա, — որ «քաղաքների ու գյուղերի մեջ մեկ մահմեդականի դիմաց գտնվում են հիսուն հայեր»<sup>249</sup>:

Նկատի առնելով Թոխաթի տնտեսական կյանքում հայերի գրաված դիրքը և այն հանգամանքը, որ արևելյան Եվրոպայի երկրամասերի հետ հենց նրանք էին սերտ կապեր հաստատել, դժվար չէ եզրակացնել, որ Թոխաթ ժամանող սակավաթիվ ուս առևտրականները մեծ մասամբ հենց հայերի հետ էին առընչվում և ապրանքափոխանակություն կատարում:

Նույնը կարելի է ասել նաև Շամախի քաղաքի մասին: XV դ. 70-ական թթ. ճամփորդելով արևելյան երկրներում, Ջ. Բարբարոն եղել է նաև Շամախիում և նշել, որ այն «շատ լավ քաղաք է, ունի շորս հազարից հինգ հազար տուն, և արտադրում են մետաքս, կտավ և ուրիշ բաներ իրենց եղանակով», գտնվում է Մեծ Հայքում և բնակիչների մեծ մասը հայ են<sup>250</sup>: Ա. Կոնտարինին հայտնում է, որ «այդ քաղաքում պատրաստում են մեզ մոտ տալամանյան (իմա՛ ղեյլեմյան — լ. Խ.) անունով հայտնի մետաքսը և բացի այդ արտադրում են մետաքսե գործվածքներ, ըստ մեծի մասին անպաճույճ և ոչ շատ բարձրորակ»<sup>251</sup>: Ռուս վաճառական Ֆ. Կոտովը, որ երկարամյա շփումներ ունենալով հայերի հետ, լավ սովորել է մեր լեզուն, Շամախիում եղել է 1623—1624 թթ.: Մանոթանանք նաև նրա հաղորդած հետաքրքրական տվյալներին. «А Шамаха стоит промеж высокими горами в услоне, город каменной и посады каменные... а посад и ряды и гостиные дворы стоят за городом. А в Шемахе семь гостиных дворов все каменные... а стоят гостиные дворы промеж рядами: Тезичей, Арменьской, на том русские люди торгуют, Лязгинской, Гилянской и иные дворы, и местом велик»<sup>252</sup>:

<sup>249</sup> Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, t. I, Paris) 1679, էջ 11, 12, 20, 47—48:

<sup>250</sup> Հովհ. Հակարյան, Ուղեգրություններ, հատոր Ա, ԺԳ—ԺԶ դար, Երևան, 1932, էջ 199:

<sup>251</sup> И. П. Петрушевский. Государства Азербайджана в XV в. «Сборник статей по истории Азербайджана» вып. I, Баку, 1949, էջ 195:

<sup>252</sup> М. В. Фехнер, Եզդ. աշխ., էջ 32 (վկայակոչում է «Хождение на Восток Ф. А. Котова в первой четверти XVII в. «Известия отдела русского языка и словесности императорской Академии Наук», 1907, т. XII, кн. 1): Տալիս ենք այստեղ մեջքերված ոռանրեն հատվածի թարգմանությունը. «Եսկ Շամախին կառուցված է բարձր լեռների միջև՝ թերթյան վրա. բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից... Եվ բնակավայրը և կրպակների շարքը և կարավանատները կառուցված են բերդից դուրս: Շամախիում կան յոթ կարավանատներ, բոլորն էլ կառուցված քարից, և գտնվում են կրպակների շարքերի միջև. կան տաճկական (тезичей), հայկական, — ուր առևտուր են անում նաև ոռանները, — լեզգիների, գիլանցիների և այլ կարավանատներ. և [քաղաքն] ընդարձակ է»:

Շամախու արհեստագործությունը հարատևել է ընդհուպ մինչև XIX դ. վերջերը. Մակար Բարխուտարյանցն այդ մասին գրել է. «Շամախում ծաղկած է մանավանդ մետաքսագործության արվեստն. ուղաններով գործում են մետաքսյա ընտիր կերպաս, վերմակների երեսներ, կանացի հագուստեղեն, զանազան գունով և մեծությամբ թաշկինակներ, դարդեր և այլն» («Աղբյուրից երկիր և դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 159):

Այսպիսով, ուստի վաճառականները առևտրական գործերով ժամանելով Շամախի (ավելի հարավ ընկած պարսկական քաղաքներ նրանք, որպես կանոն, չէին ճամփորդում), իջևանում էին հայկական կարավանատանը, և հենց այստեղ էլ կատարում առևտրական իրենց գործարքները, շփվելով հիմնականում իրենց հավատակից հայ վաճառականների հետ:

\* \* \*

Ինչպես արդեն վաղուց հայտնի, այնպես էլ նոր միայն շրջանառության մեջ դրված փաստերը, լրացնելով միմյանց, հնարավորություն են ընձևում հանգելու այն եզրակացության, որ հայերի ծանոթությունը Մոսկվայի հետ տեղի է ունեցել այդ քաղաքի պատմության հնագույն շրջանում. XIV դ. վերջերից հայերի երթևեկը Մոսկվա այնքան է ընդարձակվել ու ծավալվել, որ նրանցից շատերը մշտական բնակություն հաստատելով այնտեղ, ուշագրավ դիրքեր են գրավել Մոսկվայի մեծ իշխանության տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում: Հասնելով այս արդյունքներին, մեզ գտնում ենք կանգնած քաղմազան ու բարդ նոր հարցերի ու խնդիրների առջև, որոնցից յուրաքանչյուրի լուծման համար անհրաժեշտ են լինելու երկար տարիների համառ ջանքեր: Կարևորագույն հարցերից է, օրինակ, հետևյալը. հայկական էթնիկական տարրի առկայությունը Մոսկվայում որևէ հետք չի՞ թողել նոր Ռուսիայի մայրաքաղաքի մշակութային կյանքի տարբեր ոլորտներում: Պետք է նշել, սակայն, որ այս հարցին հիմնավոր պատասխանելու ժամանակը չի հասունացել. առ այսօր բիշ բան է արված հայկական ու ռուսական միջնադարյան մշակույթի տարբեր բնագավառների՝ ճարտարապետության, մանրանկարչության, կիրառական արվեստի և գրականության փոխադարձ առնչությունների ու ազդեցությունների բարդ ու դժվարին հարցերի քննարկման ուղղությամբ: Իսկ թե այս առումով ինչ դեր է վիճակված եղել Մոսկվային, այս հարցը քննարկման նշույթ իսկ չի դարձել:

Ռուսական նշանավոր միջնադարյան տարեգրություններից երկուսը տեղեկություն են պահպանել այն մասին, որ Վլադիմիրո-Սուզդալյան մեծ իշխանության տիրակալ՝ նշանավոր Անդրեյ Բոգոլյուբսկին (1157—1174)՝ փառահեղ քարաշեն տաճարներ կառուցելու համար օտար երկրներից հրավիրել է մեծ թվով վարպետներ: «Приведе ему Бог из всех земель мастера», — կարդում ենք Լավրենտիևյան տարեգրության մեջ, իսկ Նիկոնովյան տարեգրությունը հաղորդում է նաև, որ Բոգոլյուբսկու կողմից հրավիրվածների մեջ եղել են «мастера всякия»<sup>253</sup>: Ո՞ր երկրներից են ժամանել այդ վարպետները. այս հարցին փորձել են պատասխան գտնել շատ մասնագետներ, և առաջ են քաշվել իրարամերժ տեսակետներ: Շատերը Վլադիմիրո-Սուզդալյան ճարտարապետական հուշարձանների վրա նկատել են ռոմանական ոճի նշանակալից հետքեր, բայց եկել են այն համոզման, որ այդ ազդեցությունը եղել է միջնորդարար՝ Գալիցիայի և Վոլինյայի վրայով (երկրամասեր, որոնց քաղաքների զարգացման գործում հայ գաղթականները զգալի դեր են կատարել): Մի շարք ուսումնասիրողներ հատուկ ուշադրություն են դարձրել հուշարձանների որմնադարձերի վրա՝ արևելյան ոսկերչական իրերի և գործվածքների զարդած-

253 Օ. X. Халпахчьян, նշվ. աշխ., էջ 28:



վերի ուշադրավ նմանություններ գտնելով նրանց մեջ: Սովետական անվանի պատմաբաններ Բ. Գրեկովն ու Ա. Յակուբովսկին, նկատի ունենալով հատկապես Վլադիմիր քաղաքի Դմիտրևյան և Յուրև-Պուսկի քաղաքի Գեորգիևյան տաճարի ճարտարապետական հարդարանքը, կովկասյան արվեստի ազդեցության հետքեր են նշմարել դրանցում և այլն: Ճարտարապետ Հ. Խարիտաշյանը հանգամանորեն քննարկել է այս խնդրի շուրջ արտահայտված տեսակետները և հանգել այն եզրակացության, որ անհնարին է անտեսել արևելյան տարրեր երկրներից և, մասնավորապես, Հայաստանից ժամանած ճարտարապետների ու քարգործ վարպետների դերը Վլադիմիրո-Սուզդալյան բաժնետիրական իշխանության ճարտարապետական հնագույն հուշարձանների կառուցման և հարդարման գործում<sup>254</sup>: Այս տեսակետի հիմնավորման համար գիտնականը հետաքրքրական այնպիսի զուգադրություններ է կատարել, որոնք, անտարակույս, խոստումնալից են:

Սկզբնաղբյուրներում առկա որոշ ակնարկներից կարելի է հետևցնել, որ Մոսկվա քաղաքում քարաշին-կամարակապ առաջին բնակելի շենքեր կառուցողները «սուրոժցի» կոչվող մեծահարուստ վաճառականներն են եղել. նրանցից, մասնավորապես մեզ հայտնի են Վեսյակովները և Տարոկան (զուցն՝ Թարխան) անունով վաճառականը: Մրանց տներն իրենց շինանյութով ու արտաքին տեսքով այժմյան տարրեր էին XIV դ. Մոսկվայի մյուս շենքերից, որ գրավում էին բոլորի ուշադրությունը և տարեգրություններում գրանցվելու նյութ դառնում<sup>255</sup>:

1485 թ. կրեմլում քարաշին ապարանք ու դարպասներ է կառուցում թագավորի գանձապետ «սուրոժցի» Վլադիմիր Խովրինի որդի Դմիտրին, որին հետևում է նրա ավագ եղբայր Իվանը: Այս Իվան Խովրինը հայտնի էր Գոլովա մականունով (նրանից է սերում ռուսական պատմության մեջ մեծ դեր կատարած Գոլովինների ընտանիքը)<sup>256</sup>:

Հատուկ ուշադրության արժանի է Վասիլի III մեծ իշխանի ժամանակակից Վասիլի Դմիտրևիչ Նրմոլինի գործունեությունը: Այս «սուրոժցին» ներկայացուցիչն էր Մոսկվայի ամենափարթամ վաճառական ընտանիքներից մեկի և հայտնի էր որպես կապալառու-ճարտարապետ: Սա է վերականգնել կրեմլի պարիսպները և Համբարձման տաճարը, վանքերից մեկում կառուցել է քարաշին սեղանատուն, վերականգնել Յուրև-Պուսկի քաղաքի կործանված տաճարը (հայտնի իր արևելյան ռճավորմամբ զարդաքանդակ քարերով), և կառուցել ու վերակառուցել է բազմաթիվ այլ շինություններ<sup>257</sup>:

Պետք է ենթադրել, որ օտարազգի շինարար-վարպետների մասնակցությամբ առաջին հերթին կառուցվում էին փառահեղ վանքերն ու եկեղեցիները: Եվ եթե մանրակրկիտ ուսումնասիրվեն Մոսկվայում տակավին կանգուն քարաշին հին տաճարները, ապա, մեծ հավանականությամբ, դրանց շարքում կարող են երևան զալ հայկական միջնադարյան ճարտարապետական արվեստի

<sup>254</sup> Նույն տեղում, էջ 31—44.

<sup>255</sup> М. Н. Тухомиров, *նշվ. աշխ.*, էջ 151: Տարոկանի տան մասին, օրինակ, տարեգրության մեջ գրված է. «Того же лета (իմѡ 1471ѡ.) Тарокан купецъ заложил себе полаты кирпичны во граде Москве, у градной стѣны, у Фроловскихъ ворот» (ПСРЛ, т. VI, էջ 191).

<sup>256</sup> П. В. Сытин, *История планировки...*, էջ 43.

<sup>257</sup> М. Н. Тухомиров, *նշվ. աշխ.*, էջ 154.

տին, մանավանդ՝ կառուցողական ավանդույթներին հարազատ մի շարք կառույցներ: Մասնագետների ուշադրությանն ենք հանձնում մասնավորապես Մոսկվայի Անդրոնիկյան վանքի սուրբ Փրկչի տաճարը, կառուցված շուրջ 1427 թ.: Չնայած տակ ունենք նրա գմբջարդ ավազ խորանի և որմնասյուներից մեկի պրոֆիլավոր խարիսխի լուսանկարները, որոնք շափազանց նման են միջնադարյան հայկական տաճարների համապատասխան մասերին:

Այժմ մի քանի խոսք կերպարվեստի և կիրառական մշուս արվեստների բնագավառում նկատվող հայկական հետքերի մասին:

Երբ 1660 թ. Չարար Շահրիմանյանը Սպահանից ժամանեց Մոսկվա ու Ալեքսեյ Միխայլովիչ ցարին մատուցեց նշանավոր ադամանդյա գահը, բանակցություններ տեղի ունեցան պետական բարձրաստիճան պաշտոնեությունների և մեծահարուստ այդ վաճառականի միջև՝ շուղահայ առևտրականների գործունեության ընդարձակման հարցի շուրջ: Ընդառաջելով թագավորի ցանկությունը, Չարարը, իր հոր՝ Սահրադ Շահրիմանյանի և անձամբ իր անունից պարտավորվեց հայազգի արվեստագետ-վարպետներ ուղարկել Մոսկվա՝ թագավորի հրամանի ներքո աշխատելու համար. «А великому государю всякими узорочьи и мастеровыми людьми отец ево и он (Захарий) промышлять готовы для его великого государя милости», — ասված է այդ բանակցությունների առթիվ կազմված փաստաթղթի մեջ<sup>258</sup>:

Չի անցնում մի քանի տարի, և նոր Զուղայից Մոսկվա է ժամանում Թանդրիվերան անունով հայ վարպետը, որը ուսսական միջավայրում ճանաչվում է Իվան կամ Բոգդան Սալթանով անուն-ազգանունով և հսկայական դեր կատարում Ռուսաստանի մայրաքաղաքի մշակութային կյանքի տարբեր մարզերում, մեծապես նպաստում ուսսական արվեստի զարգացմանը: 1667 թ. հունիսի 15-ի թագավորական հրովարտակով նա նկարչի պաշտոնով և բարձր աշխատավարձով ընդունվում է աշխատանքի Զինասպալատում: Սալթանովի հետ աշխատանքի են անցնում նաև հայազգի մի քանի արվեստագետներ՝ Մատյուշկա և Իվաշկա Բոգդանով եղբայրները և Մարչկա Օստաֆեր: Նրանց անուն-ազգանունները ուսսականացված են անձանաչելի աստիճանի, և եթե հատուկ ուսումնասիրություն կատարված չլիներ, մենք այսօր որևէ կովան չէինք ունենա նրանց հայ լինելը հաստատելու համար<sup>259</sup>: Սալթանովի այս հայազգի աշակերտներն օգնել են իրենց անվանի ուսուցչին, հետազայում կատարել ինքնուրույն աշխատանքներ: Նրանցից շատ ավելի մեծ ճանաչում է ստացել մեծ վարպետի նշանավոր աշակերտ Լադար Իվանովիչ Բելյսկի նկարիչը՝ նահապետը Բելյսկի ազգանունը կրող հայազգի նկարիչների գերդաստանի, որի անդամները մեծ դեր կատարեցին XVII դ. ուսսական գեղանկարչության ձևավորման գործում<sup>260</sup>:

Կերպարվեստի բնագավառում հայ-ուսսական կապերի մասին պերճախոս այս փաստերը՝ վերաբերելով XVII դ. երկրորդ հիսնամյակին, դուրս են գտնվում մեր ուսումնասիրության ժամանակագրական սահմաններից: Դրանց անդրադառնալու անհրաժեշտությունն զգացվեց նախորդ դարի որոշ երևույթներ պարզաբանելու համար:

258 «Армяно-русские отношения в XVII веке». Сборник документов под редакцией проф. В. А. Парсамяна, Ереван, 1953, էջ 26:

259 Нина Молева. Иван Салтанов и его школа. «Լրաբեր», 1977, № 10, էջ 79:

260 Н. М. Молева. О художниках Бельских. «Լրաբեր», 1974, № 8, էջ 38—52:

Նկատված է արդեն, որ XV—XVI դդ. Մոսկվայում աշխատել է նշանավոր մի վարպետ կամ ավելի ճիշտ՝ նույն դպրոցին պատկանող արվեստագետների մի խումբ, որի ջանքերով պատրաստվել են գեղարվեստական բարձր հատկանիշներով օժտված մի շարք իրեր, նկարազարդվել են տաճարներ և այլն: Ա. Յակոբսոնը, մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարելով ի մի է բերել այդ դպրոցին պատկանող արվեստի առարկաները, որոնց համառոտ ցանկը ներկայացնում ենք ստորև.

1. Բորովսկու Ս. Պաֆնուտիի վանքի «Յագավորական դարպասները» («Царские врата», այսպես էին կոչվում ռուսական եկեղեցիների ավագ խորանի սրբապատկերներով զարդարված գեղազարդ դռները).

2. Կիրիլո-Քելոզերսկի վանքի Ս. Սերգեյի և Ս. Հովհան Լեսովիչնիկի եկեղեցիների «Յագավորական դարպասները».

3. Նույն վանքի պանակեններից մեկը.

4. Նույն վանքի Ս. Կյուրեղի սրբապատկերի դրվագյալ շրջանակը.

5. Նովգորոդի թանգարանում պահվող Բորիսի և Գլեբի սրբապատկերի դրվագյալ շրջանակը.

6. Մոսկվայի Կրեմլի Ավետման տաճարի սրբապատկերներից մեկի դրվագյալ շրջանակը.

7. Նույն տաճարի 1508 թ. որմնանկարները.

8. Զինապալատում պահվող 1499 թ. մի Ավետարանի արծաթե կազմը.

9. Իվան Ահեղի սաղավարտը և այլն:

Համոզիչ համեմատություններ կատարելով և զուգահեռներ անցկացնելով մեկ կողմից վերոհիշյալ գեղարվեստական առարկաների զարդաձևերի ու ոճի, մյուս կողմից հայկական համապատասխան հուշարձանների (մանրանկարչության, ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, արծաթյա իրերի և այլ առարկաների) զարդաքանդակների միջև, Ա. Յակոբսոնը հանգել է այն եզրակացության, որ դրանք միևնույն ակունքներից են բխում: Այդ բոլոր առարկաները, — նշում է նա, — դուրս են եկել միևնույն արհեստանոցից, այդ արհեստանոցը, հավանաբար, գոյություն է ունեցել Մոսկվայի Զինապալատին առնթեր, և նրա արտադրած եկեղեցական սպասքն ու առարկաները, նվիրաբերվելով տարբեր վանական ու եկեղեցական հաստատությունների՝ տարածվել են մայրաքաղաքում և նրա սահմաններից դուրս<sup>261</sup>: Իսկ թե ինչպե՞ս բացատրել այդ հուշարձանների «մերձավորարևելյան» կամ «կովկասյան» հատկանիշները<sup>262</sup>, այս հարցին որոշակի պատասխան չգտնելով, Ա. Յակոբսոնը զանազան ենթադրություններ է անում: Այստեղ աշխատող ռուս վարպետներն ինչ-որ ժամանակ ապրելով արևելյան երկրներում, դաստիարակվել են տեղական ավանդույթներով, յուրացրել իրենց ուսուցիչների գեղագիտական սկզբունքները: Իսկ եթե Մոսկվայից նրանք դուրս չեն եկել, այդ դեպքում կա՞մ

261 Հարկ է նշել, որ Ա. Յակոբսոնը իր կողմից բնարված ու մասնագիտական խոր վերլուծությամբ՝ հայկական նյութերի հետ զուգադրած առարկաների ոճը բնորոշելու համար խուսափում է «հայկական» տերմինից. նրան ավելի դուր են գալիս «կովկասյան», «մերձավոր արևելյան» որոշակիությունից զուրկ տերմինները, որոնք զուցե և ավելի հարմար են: Բայց անգոր բացահայտելու պատմամշակութային իրական եղելություններ:

262 А. Л. Якобсон. Художественные связи московской Руси с Закавказьем и Ближним Востоком в XVI в. «Материалы и исследования по археологии СССР», № 167. «Древности московского Кремля», М., 1971, էջ 245—246:

իրենց ձեռքի տակ ունեցել են «արևելյան երկրներում» պատրաստված համանման գեղարվեստական իրեր ու ընդօրինակել են դրանք, կա՛մ էլ օգտվել են զարդանախշերի ինչ-որ ալրոմեններից<sup>263</sup>:

Քիչ է ասել, թե այս պատասխանները գոհացուցիչ չեն: Բազմաթիվ հայ արվեստագետ-վարպետների առկայությունը Մոսկվայի Զինապալատում XVII դ. 60-ական թթ. ու հետագայում, հմուտ արհեստավորների Ռուսաստան հրավիրելու մասին ուս պետական պաշտոնյաների հարցապնդումները, որոնք արտահայտություն են գտել հայ-ռուսական տնտեսական կապերի մասին առկա փաստաթղթերում<sup>264</sup> և, վերջապես, մեծաքանակ հայ վաճառականների ու արհեստավորների առկայությունը Մոսկվայում XV—XVI դդ. այնպիսի նախադրյալներ են, որ հնարավորություն են ընձեռում հանգելու շատ ավելի հիմնավոր այսպիսի եզրակացության. հայ արվեստագետ-վարպետներ աշխատել են Մոսկվայի Զինապալատում ոչ միայն XVII դ., այլև դրանից շատ առաջ՝ Իվան III մեծ իշխանի ժամանակներում: Նրանց ջանքերով են պատրաստվել բազմաթիվ գեղարվեստական իրեր, որոնց մի մասն արդեն դրված են գիտական շրջանառության մեջ, իսկ շատերն էլ, թերևս, սպասում են իրենց հայտնաբերողներին:

Այդ հմուտ արվեստագետ-վարպետների արտադրած իրերի շքեղ զարդապատկերները սիրվել ու լայնորեն տարածվել են Մոսկովյան պետության սահմաններում, թարմ շունչ հաղորդել տեղական արվեստին, դարձել մոդայիկ և օգտագործվել ինչպես փայտափորագրության և ոսկերչության, այնպես էլ Հարտարապետության և, նույնիսկ, գրատպության ասպարեզում<sup>265</sup>:

\* \* \*

Ի՞նչ հուշ-հիշատակներ են պահպանվել Մոսկվա քաղաքի և Մոսկվայի հայ գաղթօջախի մասին միջնադարյան հայկական ու ռուսական գեղարվեստական ստեղծագործություններում: Այս հարցին մասամբ պատասխան է տրված տարիներ առաջ, երբ Ա. Մնացականյանի ջանքերով գիտական շրջանառության մեջ դրվեց բազմաթիվ միջնադարյան ձեռագրերով ավանդված և տարբեր խմբագրությունների ենթարկված հայկական այն պոեմը, որի մեջ Մոսկվան հիշատակված է աշխարհի շքեղագույն ու նշանավոր քաղաքների շարքում՝ որպես

<sup>263</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>264</sup> Զարար Շահրիմանյանը 1660 թ. պատասխանելով ռուս պաշտոնյաների հարցումներին, նրանց ասել է նաև հետևյալը. «А мастеровых де всяких людей в шахове области много и он де (Захарий) к великому государю в московское государство призывать ушет». Իսկ նույն Զարարի 1666 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարին ուղղած գրության մեջ ասված է, որ ցարը ծանոթացած լինելով խորհրդավոր ընթերցող պատկերող մի փորագրության, պահանջել է Մոսկվա ուղարկել այդ պատկերը պատրաստող արվեստագետին «Армяно-русские отношения в XVII в.», էջ 26, 41):

«Էստի յառաջ փորք ծառէդ մին պղնձէ թանուրի վերայ աւագ խինդ շարաթ օրէն տնօրինականքն քաշած մեծ թագաւորին զուխ ինք տրւել, շաւղաթ էր արարել, նորա շինողն ուղեցել էր. էն քարթանումն որ շինվել էր մի զապիլ ուստայ կէր, անունն Բուղտան, որ նորայ հունարն ամենու վերայ առաւել էր, ուղարկեցինք քրիստոսաշէն Մոսկովն, զոն մեծ թագաւորին զուլաղն տեղն կատարին» (նույն տեղում, էջ 41):

<sup>265</sup> А. П. Якобсон, նշվ. աշխ., էջ 247:

ամենափառավորն ու մեծագինը<sup>266</sup>: Պոեմը սիրային բովանդակություն ունի, նվիրված է մի «գյուղալի» (գեղեցկուհու) բարեմասնությունների գովերգությանը, այնպիսի հմայք ունի այդ գեղեցկուհին, որ նրա երեստեսնուքի համար փեսացուն շոայրորեն «նվիրարեբում» է Սելանիկն ու Ատրնան, աչքերի համար՝ Սկյուտարն ու Ղալաթիան, քաղցրիկ զրույցի համար Բաղդադն ու Բասրան և այն: Հիշատակվում են նաև Թոխաթ, էրզրում, Գյանջա, Կաֆա, Վենետիկ քաղաքները, Մըսը (Եգիպտոս), Շամ (Սիրիա), Հնդուստան, Սպանիա երկրները և այլն, այսինքն գլխավոր այն վաճառաշահ կենտրոնները, որոնք մեծ դեր էին կատարում միջազգային առևտրի մեջ մինչև աշխարհագրական նոր հայտնագործությունները:

Ինչպես ասվեց, Մոսկվան կենտրոնական տեղ է զբաղում վերոհիշյալ քաղաքների ու երկրների շարքում, երգիչը շեշտված մեծարանքով է հիշատակում այդ քաղաքի անունը<sup>267</sup>:

Միանգամայն իրավացի է Աս. Մնացականյանը, երբ բավարար փաստեր մեջբերելով հանգում է այն եզրակացության, որ պոեմը ստեղծված պետք է լինի XIV—XV դդ.: Եվ պետք չէ տարակուսել, որ այն հորինվել է այնպիսի խոշոր հայկական կենտրոններից մեկում, ուր գոյություն ուներ միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքներում և նշանավոր գաղթավայրերում վկայված «Կարիճվորաց եղբայրություն» կոչվող կազմակերպություններից մեկը: Պոեմի հնագույն փոփոխակներում պահպանված են այսպիսի տողեր.

Մանկունք, մի մեղադրէք

Սէրն արաւ զիս տիւանայ...

Աժէ, ինչ տուաք, եղբաւք,

Կուղելին իսկի գին շկայ.

«Մանկունք», «եղբարք» կոչվող հասցեատերերը հիշատակված են նաև մի շարք հայրեններում: Կոստանդին Երզնկացին ևս իր բանքերի մի մասը հորինել է քաղաքաբնակ «եղբայրների» հոգևոր պահանջները բավարարելու համար<sup>268</sup>: Նկատի ունենալով այս հանգամանքը, կարելի է հանգել այն եզրա-

266 Աս. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում, «Տեղեկագիր», 1948, № 3, էջ 49—64:

267 Նույն տեղում, էջ 53: Աս. Մնացականյանը ցույց է տվել նաև, որ այս պոեմը դրախտագրություն է գործել հայ մի շարք բանաստեղծների, որոնց թվում նաև Նազաշ Հովնաթանի վրա. վերջինս ունի այսպիսի տողեր.

Քաղաք ես Խուֆայի Մոսկով,

Խելքս տարար անուշ խօսքով:

«Ըստ այս տողերի,— գրել է Մնացականյանը,— Մոսկվան գտնվում է Խուֆայում—Չինաստանում», ուստի միջնադարյան դուստներն ու հորինողները, մեծ մասամբ պատկերացում էլ չեն ունեցել իրենց գործածած վայրերի ուր գտնվելու մասին (տե՛ս նշվ. աշխ., էջ 50—51):

Կարծում ենք, սակայն, որ Խուֆայի-Մոսկով ասելով Նազաշ Հովնաթանը, մի բանաստեղծ, որ ապրել է հայ վաճառականների միջավայրում ու ստեղծագործել նրանց համար, նրկատի է ունեցել Մոսկվայի առևտրական կենտրոն Կիտայ-Գորոզը, և բնավ էլ չի կարծել, թե Մոսկվան գտնվում է Չինաստանում:

268 Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը», «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 84:

կացության, որ «Քաղուհի մի ես տեսայ» սկսվածքով խնդրո առարկա պոեմը նույնպես ստեղծվել է հայկական վաճառաշահ կենտրոններից մեկում (Ֆերևա հենց Կաֆա քաղաքում), որի բնակիչները անտեսական սերտ կապեր են ունեցել Մոսկվայի հետ:

Այժմ անդրադառնանք միջնադարյան ռուս գրականությանը:

Մոսկվայում ստեղծված գրական հուշարձանների շարքում որոշակի տեղ է գրավում «Պատմություն Վրաց թագուհի Գինարի մասին, ինչպես հաղթեց Պարսից թագավորին» («Повесть о грузинской царице Динаре, како победи перского царя») խորագրով ստեղծագործությունը: Նրա ստեղծման հանգամանքների ու ժամանակի մասին ռուս և վրաց գրականության պատմաբանները տարբեր կարծիքներ են հայտնել: Արդեն հաղթահարված պետք է համարել անհիմն այն ենթադրությունը, թե ռուսական այս գրվածքը՝ թարգմանությունն է Քամար թագուհու գործունեությանը նվիրված բյուզանդական շափածո մի ստեղծագործության<sup>269</sup>: Հունարեն լեզվով այդպիսի մի գրվածքի հրքեմնի գոյության մասին որևէ փաստ հայտնի չէ. իսկ Քամար թագուհին այնպիսի հռչակավոր գործիչ է եղել, որ նրա անունը չէր կարող գուրս նկատվել ու փոխարինվել իրենից դարեր առաջ ապրած և շատ համեստ պատմական դեր կատարած Գինար թագուհու անունով:

Ուսումնասիրողներից մի մասի կարծիքով (Ն. Կ. Գուդզի, Կ. Վ. Բազիլևիչ) «Պատմությունը» գրվել է Մոսկվայում XV դ. վերջին քսանհինգամյակի ընթացքում, իսկ ըստ ուրիշների (Մ. Սպերանսկի, Յա. Յինցաձե)՝ XVI դ. կեսերին<sup>270</sup>: Մեզ համար էական նշանակություն չունի, թե այս տեսակետներից որն է ի վերջո ճիշտ համարվելու: XV դ. վերջերին և XVI-ի առաջին հիսնամյակի ընթացքում ոչ միայն ավելի լայն ծավալ էին ստանում անտեսական կապերը Մոսկվայի ու Վրաստանի միջև, այլև ծայր էին առել դիվանագիտական բանակցություններ. վրաց գահակալների կողմից Մոսկվա առաքվող բանագնացները (որոնց շարքում գրեթե միշտ լինում էին հայազգի գործիչներ) Մոսկվայի մեծ իշխանների օգնությունն էին խնդրում թուրքական և իրանական զավթիչների դեմ հաջող պայքար մղելու համար:

Ուսումնասիրողներն իրավացիորեն նշել են, որ այդպիսի բանակցությունների ժամանակ վրաստանցի դիվանագետներն առիթը բաց չէին թողնելու շեշտելու համար վրացիների և ռուսների դավանակից-քրիստոնյաներ լինելու հանգամանքը: Նրանք, իրենց երկրի ու եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու նպատակով կարող էին նաև նշել՝ հենվելով «Քարթլիս ցխովրեբայի» վրա, որ իրենց ժողովուրդը Քրիստոսի ուսմունքին հաղորդակից է դարձել անմիջապես Աստվածամոր քարոզչության շնորհիվ: Կարող էին պարծենալ նաև սուրբ Նունեով և վրաց հին եկեղեցու այլ սրբություններով: Այսպիսի դատողությունները շարունակելով, ոմանք հնարավոր են համարել «Գինար թագուհու պատմության» հորինման հանգամանքները նույնպես առնչել վրաց դիվանագետների և ռուսական պետական պաշտոնյաների միջև տեղի ունեցած բանակցություններին: Նրանց կարծիքով վրացի բանագնացներն անբավարար են նկատել վերոհիշյալ «փաստերը» և ռուսներին պատմել են նաև Գինարի

<sup>269</sup> Այս տեսակետը տեղ է գտել նույնիսկ «Վրաց պատմության» դպրոցական դասագրքում («История Грузии», ч. I, Тбилиси, 1946, էջ 237:

<sup>270</sup> Л. С. Шепелева. Культурные связи Грузии с Россией в X—XVII веках. «Труды отдела древнерусской литературы», IX, М.—Л., 1953, էջ 310—311:

պատմությունը՝ «ուղղափառության հաղթանակի համար Վրաստանի վաստակը մի ավելորդ անգամ ընդդժեխու նպատակով»<sup>271</sup>։

Եվ ահա այդ ճանապարհով «արևելյան Վրաստանի» շրջաններից մեկի տիրակալ իշխանի կին Գինարը՝ ճանաչվել է ուսական միջավայրում և գրական մի ուշադրավ ստեղծագործության հերոսուհի դարձել<sup>272</sup>։

Մենք չենք կարող բավարարվել այսպիսի բացատրությամբ։

IX դ. կեսերին արարական լուծը թոթափելուց հետո՝ Բագրատունյաց Հայաստանը մի քանի տասնամյակ միայն գոյություն ունեցավ որպես միասնական պետություն։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով երկիրը շուտով մասնատվեց մի շարք մանր-կիսանկախ թագավորությունների։ Վասպուրականը, Սյունիքը, Լոռին, Կարսը և այլ նահանգներ՝ անջատվեցին Բագրատունյաց կենտրոնական իշխանությունից։ Այդպիսի մի իշխանություն էլ ստեղծվեց պատմական Հայաստանի Արցախ նահանգում, որը հայտնի է սկզբնաղբյուրներում Աղվանից թագավորություն անունով։ Այս իշխանության կազմի մեջ էր մտնում նաև Կուր գետից հյուսիս գտնվող պատմական Կամբջանի շրջանը, որ ապրում էին նաև բաղմահազար հայեր, որոնք դավանանքով լուսավորչական էին։ Հայկական փոքր այս թագավորության նշանավոր գահակալը եղավ Համամ Արևելցի անվանի մատենագիրն ու բանաստեղծը, որն իր արժանի տեղն է գրավել հայ գրականության պատմության մեջ։ Նրան հաջորդեց Ատրնեբսեհը։ Վերջինս ամուսնացած էր Վրաց իշխանաց իշխան Գուրգենի քրոջ՝ Գինարի հետ. այս թագուհին X դ. կեսերին, իր իշխանիկ անունով որդու հետ միասին, եռանդուն գործունեություն ծավալեց և հաջողություններ ունեցավ Հերեթ-Կախեթի հայերին քաղկեդոնական դարձնելու գործում<sup>273</sup>։ Ահա այս Գինարի գործունեության որոշ դրվագներ են, որ գունազարդվելով հիմք են հանդիսացել նկարագրվող դեպքերից կես հազարամյակ հետո հյուսված ուսական «Պատմության» համար։

Այդ ստեղծագործության հորինման հնարավոր գրդասպատճառները բացահայտելու նպատակով պատասխան պետք է գտնել հետևյալ հարցին. հասարակական և էթնիկական ի՞նչ շերտեր կային Մոսկվայում XVI դ. կեսերին, որոնց համար օգտակար կարող էին լինել մի հեռավոր երկրամասի հայ ազգաբնակչության դարեր առաջ տեղի ունեցած դավանափոխության և ուղղափառ եկեղեցուն հարելու մասին հին պատմությունները։ Ուրիշ առիթով նշել ենք արդեն, որ XIV դ. վերջերին և հետագայում, ուսական եկեղեցու բարձրատիճան ղեկավարներից շատերը օտարադավան հայերի նկատմամբ որդեգրել էին անհանդուրժողական կեցվածք։ Կրոնական անհանդուրժողականությունը հրքեմն այնպիսի շափերի էր հասնում, որ ոմանք ստիպված էին լինում ընդունել ուղղափառություն, խզելով իրենց կապերը մայր եկեղեցուց։

271 Նույն տեղում, էջ 309։

272 Նույն տեղում։

273 Այս հարցի մասին հանգամանորեն խոսում է Ա. Ե. Մնացականյանը «Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը» (Նրևան, 1966) արժեքավոր աշխատության մեջ (տե՛ս էջ 204—213)։ Ուշադրավ է, որ վերջինս հայտնաբերվեցին Աղվանից մի շարք իշխանների և այս Գինար իշխանուհու տապանաքարերը Ղափանի շրջանում գտնվող Վահանավանքի շրջափակում (Պ. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները. «Արարիք», 1970, № 10)։

«Գինար թագուհու պատմության» հորինման շրջանում հաճախացել էր վրաստանցի հայերի երթևեկը Մոսկվա: Նրանցից շատերը մշտական բնակություն էին հաստատում այստեղ և, բնականաբար, հնարավոր ամեն ինչ անում էին թարեմաբար ու բնականոն պայմաններ ստեղծելու իրենց և հարազատների համար: Գավանաբանական անհանդուրժողականությունը դիմադրելով ելու միջոցներից էին նաև անցյալի հիշատակները. դարեր առաջ ապրած մի թագուհու շանքերով հաղարավոր հայեր բնգունել էին ուղղափառ եկեղեցու դավանանքը, այսինքն հրաժարվել էին «հայկական հերձվածից», դարձել «խսկական», «ուղղափառ» քրիստոնյաներ: Այդ հայերի հեռավոր հետնորդները նոր Ռուսիայի մայրաքաղաքում վերարժարժելով հին այս պատմությունը, հույս կարող էին ունենալ ավելի բարեհամբույր վերաբերմունքի: Իսկ պաշտական պաշտոնիության շրջանակներում կային արդեն գրագետ մարդիկ, որոնք ի շահ Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական կապերի բնդարձակման, ոչ միայն ունկնդրում էին այդպիսի պատմությունները, այլև գրի առնում, տարածում՝ դարձնելով միջոց հասարակական կարծիքի մշակման:

Պետք է հուսալ, որ հայ-ուսական հնամենի մշակութային առնչությունների մասին ի մի բերված այս տվյալները հետադաշում բազմապատկվելու են ճարտարապետական հուշարձանների, գրական ժառանգության ու դիվանական նյութերի խորազնին ուսումնասիրության հանապարհով:

\* \* \*

Հետագա ուսումնասիրությունների ժամանակ պետք չէ անտեսվեն նաև ուսական միջնադարյան բանահյուսության բնձնած նյութերը, մասնավորապես վիպական գրականության գլուխ-գործոցներ հանդիսացող բիլինաները: Նկատված իրողություն է արդեն, որ բիլինաների մի շարք ճյուղեր, ի մասնավորի Չուրիլա Պլենկովիչի, մեծահարուստ վաճառական Սադկոյի, վաճառականի որդի Իվանի մասին պահպանված երգերի մեջ՝ արաացուվել են քաղաքային կյանքի շատ հետաքրքրական երևույթներ: Սադկոյի մասին բիլինայի մեջ, օրինակ, հենց վիպական հերոսի անունից ասված է հետևյալը.

Что де я гулял по Волге двенадцать лет,  
Со вершины знаю и до устья ее,  
А и нижняя царства Астраханскова.

Կամ՝

Я сам, Садко, знаю—ведаю:  
Бегаю по морю двенадцать лет,  
Тому царю заморскому  
Не платил я дани—пошлины,  
И во то сине море Хвалинское  
Хлеба с солью не опускал<sup>274</sup>.

Ըստ այդմ Սադկոն պատկանում էր ուսական այն վաճառականների դասին, ովքեր Վոլգայի և Կասպից ծովի վրայով աշխույժ առևտուր էին անում

<sup>274</sup> Древние российские стихотворения, собранные Киршею Даниловым, М.—Л., 1958, էջ 185, 231:



Իրանի ու Անդրկովկասյան երկրների հետ: Նախորդ էջերում քանիցս անհրաժեշտութուն է առաջացել նշելու, որ միջազգային նշանակություն ունեցող վոլգ-կասպյան մայրուղին ոչ միայն դարեր շարունակ ծանոթ է եղել հայ վաճառականներին, այլ եղել են ժամանակներ, երբ նրանք դրավել են այդ ճանապարհով կատարվող արտաքին առևտրի հրամանատարական զիրքերը: Պարզ է, ուրեմն, որ բիլինայի ծանոթ հերոսը՝ «Մեծահարուստ վաճառական Սադկոն» իր տասներկուամյա թափառումների ժամանակ՝ բազմիցս հանդիպած պետք է լիներ հայ վաճառականների և համագործակցեր նրանցից շատերի հետ՝ նյութական անսպառ միջոցների տեր դառնալու համար:

Մոսկվայի տնտեսական զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող մյուս զարկերակի՝ Դնեպրյան մայրուղու հետ է կապված բիլինաների վաճառական հերոսներից Չուրիլա Պլենկովիչը: Սրա հայր Պլենկոն, բիլինայի մեջ ուղղակի կոչված է «սուրոժցի» («старый Пленка Сароженин»):

Ակադ. Ա. Ն. Վեսելովսկին, որ 22 ամբողջական պատումների համագրությամբ հանդամանորեն ուսումնասիրել է Չուրիլայի մասին բիլինան<sup>275</sup>, անդրադարձել է նաև գլխավոր հերոսների անուններին: Չուրիլա անունը Կիրիլ-Կյուրեղ անվան ժողովրդական փոփոխակն է, իսկ նրա հոր՝ «սուրոժցի» Պլենկոյի անունը Վեսելովսկին, անշուշտ, ելակետ ունենալով այն իրողությունը, որ Ղրիմի թերակղզու վաճառաշահ ափերը XIII—XIV դդ. գտնվում էին իտալացիների (Ջենովայի և Վենետիկի) տիրապետության տակ, արտածում է «Ֆոանկ» (եվրոպացի, իտալացի) բառի հետ և, այդպիսով, իտալական ծագում է վերագրում բիլինաների այս հերոսներին: Հարկ չկա այստեղ նորից անդրադառնալու «սուրոժցի» կոչվող վաճառականների ազգային պատկանելիության մասին նախկինում արտահայտած տեսակետներին, մանավանդ, որ անձնանունների բնադրոսիկ այսպիսի բացատրությունները արդեն իսկ կասկածների տեղիք են տվել ուսական բանասիրության մեջ<sup>276</sup>:

Չուրիլային վերաբերող բիլինայի մի այլ փոփոխակի մեջ, որ վերամբշտակված պետք է լինի ուշ ժամանակներում, «սուրոժցիների» մասին գտնում ենք ուշագրավ այսպիսի տողեր.

Как жил на Руси  
Суровец—молодец,  
Суровец—богатырь, он Суроженин,  
По роду города Суздаля,  
Сын отца—гостя богатого<sup>277</sup>.

Այստեղ նրանք առնչվում են Սուրդավի հետ՝ միջնադարյան Ռուսաստանի նշանավոր այն քաղաքի, որը Վլադիմիր-Սուրդավյան իշխանության բարգա-

275 А. Н. Веселовский. Южно-русские былины, V, Богатыри-сурожицы. Суровец Суздалец и Чурила Пленкович. «Сборник, отделения русского языка и словесности императорской Академии Наук», том XXXVI, № 3, СПб., 1884.

276 А. И. Соболевский. Заметки о собственных именах в великорусских былинах. «Живая Старина», вып. II, 1890, էջ 96:

277 Летописи русской литературы и древности. изд. Н. Тихонравов, IV, М., 1862, էջ 12—14:

վաճման շրջանում միջազգային իր կապերով բացառիկ դիրք գրաված լինելով՝ անտարակույս ծանոթ էր «սուրոժցի» վաճառականներին<sup>278</sup>:

Չուրիլա Պլենկովիչը ուսական էպոսի հանրաճանաչ դեմքերից է: Ամբողջովին նրան է նվիրված երկու գրույց. դրանցից բացի՝ նա հիշատակված է և այլ բիլինաներում: Առաջին գրույցի մեջ Չուրիլան ներկայացված է որպես մարտական ջոկատի պետ. այնքան բազմաթիվ են նրա կտրիճները, որ Կիևի իշխանը տեսնելով նրանց բազմությունը, կարծում է, թե ժամանել է Ռսկե Հորդայի խանը կամ որևէ երկրից հզոր դեսպան:

Едет ко мне король из Орды  
Или какой грозен посол.

Զրույցի մեջ հատուկ տեղ են գրավում Չուրիլայի ու նրա «սուրոժցի» հոր առանձնատան արդուլարդի, շքեղության և նրանց ունեցած մեծաքանակ թանկարժեք ապրանքների մասին պերճախոս տողերը: Ահա Չուրիլան իջնում է խորունկ իր նկուղները, բացում է դուռը ոսկե բանալիով, և գանձեր է հանում՝ Վլադիմիր իշխանին մատուցելու համար:

Взял золоту казну  
Сорок сороков черных соболей,  
Другую сорок печерских лисиц,  
И брал же камку белокрушету.  
А цена камке сто тысячей,  
Принес он к князю Владимиру.

Չուրիլան հրավիրվում է արքունիք: Ապրակսենա իշխանուհին հափշտակվում է Չուրիլայի գեղեցկությամբ և խնդրում ամուսնուց նրան անկողնապետի պաշտոնին կոչել: Վլադիմիր իշխանը դայրանում է այդ առաջարկից և դարձնում է նրան գդիր (зазыватель):

Պերճորեն զարդարված Չուրիլան զրոսնում է Կիևի փողոցներում՝ իր գեղեցկությամբ գրավում կանանց ուշադրությունը.

Загляделись на Чуриву все люди—те:  
Где девушки глядят—заборы трешшат,  
Где молодушки глядят—лишь оконенки звенят..

<sup>278</sup> Չի բացառված, սակայն, որ Սուլդայի հիշատակությունն այստեղ հետսամուտ մի հավելում է, զուրկ իրական ու պատմական անընթացների հիմքից: Այս կապակցությամբ ակադ. Ա. Վեսելովսկին գրել է. «Суровец наших былии не что иное, как дублет к Сурожанину; Суровец-Суздадец, очевидно, тавтология, вторая часть которой была искажена или подновлена по созвучию с Суздадем, более известным в северном периоде нашего эпоса: Суздадец вместо Судалец, Согдалец; в одной песне он—«богатого гостя заморенин сын» (այսուր կոչված են նաև քուսի ամուսնուհիները—Լ. Խ.), что едва ли идет к Суздадею, но быть может, не относится непосредственно и к Сурожу» (А. Н. Веселовский, նշվ. աշխ., էջ 70—71):

Երկրորդ զրույցը հիմնականում նվիրված է Չուրիլայի և մի ծեր վաճառականի՝ Բերմյատա Վասիլիչի<sup>279</sup> երիտասարդ կնոջ՝ գեղեցիկուհի Կատերինայի սիրավեպին: Որոշ պատումներում այս զրույցը ողբերգական վախճան է ունենում, խանդոտ ամուսինը սպանում է Չուրիլային:

Բիլինայի մի ուրիշ պատումի մեջ Չուրիլան (Шурилушка Шапленкович) ապրել ու գործել է ոչ թե Վլադիմիր իշխանի ժամանակներում, այլ ծառայել է Լիտվայի թագավորին, այսինքն՝ զրույցն աղերսվել է պատմական այն ժամանակաշրջանին, երբ Կիևը գտնվում էր Լիտվայի մեծ իշխանության տիրապետության տակ (1362—1471 թթ.) և երբ կիևահայ գաղութն ապրում էր իր զարգացման բարձրագույն շրջանը: Այս պատումի համաձայն Չուրիլայի սիրավեպի կին հերոսուհին՝ Լիտվայի թագավորի դուստրն է. Չուրիլան պարծենում է իր սիրային կապով արքայադստեր հետ, բռնվում է հանցանքի մեջ և պատժվում<sup>280</sup>:

Չուրիլայի հոր՝ Պլինկոյի «սուրոժցի» վաճառական լինելու հանգամանքն ինքնին մի կովան է բիլինաների այս հերոսին Կիևի հայկական գաղթօջախի և Կիևում բնակություն հաստատած «սուրոժցի» հայ վաճառականների հետ շաղկապելու համար: Թվում է, սակայն, որ կան ավելի հիմնավոր հիմքեր այսպիսի ենթադրության:

Ասացինք արդեն, որ Չուրիլան առաջին զրույցի մեջ ասպարեղ է իջնում որպես մեծահարուստ վաճառական, բայց միաժամանակ իր հրամանի ներքո ունի բաշ երիտասարդներից բաղկացած մարտական մի ջոկատ: Նախորդ էջերում մենք արդեն անդրադարձել ենք Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» այն նշանավոր տողերին, որոնց համաձայն կիևահայությունը, գաղթօջախի շեն տարիներին, թշնամու դեմ կովի է հանել 500 արի դյուցազունների («յորժամ սէֆէր լինէր, հինգհարիւր հողի կելէր հայոց ի պատերազմ եարար պահատուրնի»)՝<sup>281</sup>: Նրանք, անշուշտ, խաղաղ օրերին, իրենց հրամանատարների գլխավորությամբ, երբեմն դուրս էին գալիս քաղաքամերձ տարածությունները, զբաղվում որսորդությամբ, զինավարժություններով, կերուխումով: Պատմական հենց այսպիսի իրողությունների հիշատակներ են պահպանված Չուրիլա Պլինկոյիչի բիլինայի մեջ:

<sup>279</sup> Այս վաճառականի անունը բիլինայի տարբեր պատումներում տարբեր տառադարձությամբ է ներկայացված՝ Бермята, Пермьяна, Бурмяна, Вельма, Берма, Ерма և այլն (տե՛ս А. Н. Василевский, նշվ. աշխ., էջ 103):

Հետևելով Ա. Վեսելովսկու օրինակին, որը Պլինկո անունը անշուշտ «Ֆոանկ» էթնիկական անվան հետ, Չուրիլային և նրա հորը խաչակալական ծագում է վերագրում, մենք ևս կարող էինք այս վաճառականի անվան փոփոխականների հիման վրա վերականգնել նրա նախնիին ձևը «ВЕРМЯНА» (ուկրաիններեն՝ «հայ») ձևով, և նրան հայկական ծագում վերագրել: Սակայն կարծում ենք, որ անձնանունների այս կարգի մեկնարանությունների պատմական հիմքերը շատ խախտա են:

Ըստ Ա. Սորոլակու (տե՛ս «Живая старина», вып. II, էջ 103) այս վաճառականի անվան նախնական ձևը պետք է եղած լինի Բերնյատա՝ Բերն անվան փաղարջական փոփոխակը:

280 И услышали тут короля да литовского,

А слуги ведь да и верные,

Да сковали-то ему да ножки резвыи,

И завесили ему да очи ясныи,

И хочут вести на поле Куликовое.

(А. Ф. Гильфердинг. Онежские былины, II, М.—Л., 1950, էջ 359—364):

281 «Սիմեոնի դպրի Լեհացույ ուղեգրութիւն», էջ 347—348:

Երբ վլադիմիր իշխանը Պլենկոյի շքեղ տանը հյուրընկալվելիս պատուհանից տեսնելով տանը մոտեցող մեծ ջոկատը, զարմանքով հարցնում է, թե ովքե՞ր են նրանք. «սուրոժցի» Պլենկոն հանդատացնում է իշխանին, ասելով. նրանք թշնամիներ շեն, այլ իր որդի Չուրիլայի ջոկատն է.

Изволь ты, осударь, Владимир—князь со княгинею  
И со всеми своими князи и бояры кушати!  
Что-де едет не король из Орды  
И не грозен посол,  
Едет-те дружина хоробрая сына моего  
Молода Чурила сына Пленковича<sup>282</sup>.

Չուրիլայի կերպարի մյուս կարևոր կողմը՝ պճնասիրություն, կնամեծարություն, թեթև ժամանցի հակամետություն, նույնպես բնորոշ է միջնադարյան քաղաքների առևտրա-արհեստագործական դասի երիտասարդ ներկայացուցիչների համար:

Ինչ վերաբերում է կիևահայությունը կամ Կիև այցելող հայ վաճառականներին, ապա այդ հանգամանքը զարմանալի որոշակիություն արտացոլվել է 1494 թ. իշխանական մի հրովարտակի մեջ, որով դրամական տուգանք է սահմանվել այն հայ վաճառականների համար, ովքեր, խախտելով քաղաքի սովորույթները, կապեր կհաստատեն միայնակ կանանց հետ, այլ խոսքով՝ կըրոնվեն անբարոյական արարքների մեջ<sup>283</sup>:

Տասնյակ այդպիսի դեպքեր պետք է եղած լինեին՝ նման հրովարտակի անհրաժեշտությունը նախապատրաստելու համար: Եվ Չուրիլա Պլենկովիչի պարագան (ծեր վաճառականի երիտասարդ կնոջ կամ կիտվայի իշխանի դստեր հետ սիրային կապեր ունենալը, իշխանուհի Ապրակսենային դուր գալը և այլն), ըստ երևույթին հեռավոր մի վերհուշ է պատմական ինչ-որ իրողության, որն ավարտվել է «սուրոժցի» երիտասարդ վաճառականի սպանությամբ:

Այսպիսով կարելի է եզրափակել հին Մոսկվայի հայկական գաղութի պատմության մասին մեր ուսումնասիրության արդյունքները՝ արձանագրելով, որ «սուրոժցի» կոչվող հայ վաճառականներն այնքան նշանակալից դեր են կատարել Մոսկվայի ու Կիևի տնտեսական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտներում, որ ժողովրդական հրդիչները հորինել են նույնիսկ նրանց կեցության ու բնավորության որոշ գծերով օժտված հավաքական կերպարներ, որոնք իրենց պատվավոր տեղն են գրավել ռուսական միջնադարյան վիպական լավագույն ստեղծագործությունները հանդիսացող բիլինաների մեջ:

\*\*\*

Աշխարհագրական մեծ գյուտերը, որ ծայր առան XV դ. վերջին տարիներին և հաջորդ դարի ընթացքում հեղափոխիչ դեր կատարեցին ողջ մարդկության համար, իրենց անմիջական անդրադարձն ունեցան նաև Մոսկովյան պետության տնտեսական կյանքի վրա:

<sup>282</sup> Древние российские стихотворения, էջ 114:

<sup>283</sup> Акты, относящиеся к истории западной России, т. 1, СПб, 1848, էջ 194, 195. հմտ. Д. М. Мышко, նշվ. աշխ., էջ 118:

Միջազգային հաղորդակցության դարավոր ավանդույթներ ունեցող մայր-ուղիները կամ կորցրեցին իրենց երբեմնի դերը՝ դարձան տեղական նշանակություն ունեցող ճանապարհներ, կամ էլ նոր ոգի ու բովանդակություն ստանալով՝ դուրս եկան հին ու անձուկ սահմաններից, ձգվեցին դեպի նոր աշխարհամասեր:

«Սուրոժցի» վաճառականների կենսական զարկերակը լիարյուն սնունդ էր ստանում Ղրիմի ակունքներից. իսկ Ղրիմի վրայով անցնող ճանապարհներն էին հենց, որ կորցրեցին իրենց վիթխարի միջազգային նշանակությունը, ուստի և կարևոր դերը Մոսկովայի տնտեսական կյանքի զարգացման համար: Սակայն խնդիրը միայն ճանապարհների փոփոխության հետ չէր առնչվում: Փոփոխվել էին ժամանակներն ըստ ամենայնի: Բաժնետիրական ժամանակաշրջանի ծնունդ հանդիսացող «սուրոժցի» վաճառականը, որը ինքնուրույն ձևներեցությամբ, հաղթահարելով ֆեոդալական մասնատվածության արդյունք հանդիսացող հազար ու մեկ սահմանափակություններ, ամեն քայլափոխի դանազան մարսատուրքեր վճարելով՝ Մոսկվա էր հասցնում մի քանի բեռ արևելյան ապրանքներ ու դրա դիմաց օտար երկրներ արտածում Ռուսաստանի արտաքին առևտրի նյութերը, այլևս չէր կարող քայլ պահել ժամանակի հետ: XVI դ. կեսերից Հյուսիսային և Սպիտակ ծովերի վրայով Ռուսաստան էին ներթափանցել արդեն անզլիացի վաճառականները, որոնք փորձում էին իրենց տնտեսական գերիշխանությունը հաստատել Կասպ-Վոլգյան հին մայրուղու վրա, մեկ ծայրից մյուսը՝ Իրանից սկսած մինչև Հյուսիսային Եվրոպայի երկրներ: Այս ճանապարհի հին բաժնետերերը՝ հայ վաճառականները, կամ պետք է դուրս գային ասպարեզից, կամ էլ համառ պայքար մղելով իրենց մրցակիցների դեմ, պետք է բարձրանային նրանց աստիճանին՝ ընդարձակեին իրենց գործունեության շրջանակները, օգտվեին վարկի նոր եղանակներից, շաղկապեին առևտուրը արտադրական գործունեության հետ և այլն:

Նոր ժամանակի առաջադրած այդ խնդիրները հաջողությամբ լուծեցին «սուրոժցի» կոչվող հայ վաճառականներին հաջորդած «չուղայեցի» հայ վաճառականները: 1667 թ. մայիսի 31-ին, ջուղահայ առևտրական բուրժուազիայի լիազոր ներկայացուցիչների և Մոսկովյան պետական պաշտոնյաների մեկ տարուց ավելի տևած բանակցությունները պսակվեցին հաջողությամբ: Կընքվեց նշանավոր այն պայմանագիրը, որի զորությամբ ջուղահայ վաճառականները (հետագայում այն տարածվեց նաև այլ վայրերից Ռուսաստան այցելող հայ վաճառականների վրա) իրավունք էին ստանում արտոնյալ պայմաններով Ռուսաստանում առևտուր անելու, Ռուսաստանի վրայով եվրոպական երկրներ արտահանելու հում մետաքս և Անդրկովկասյան երկրներից ու Իրանից բերվող այլ ապրանքներ: Այս պայմանագիրը շրջադարձային նշանակություն ունեցավ ոչ միայն հայ-ռուսական տնտեսական կապերի հետագա ընդարձակման և Ռուսաստանի քաղաքներում դարերից ի վեր գոյություն ունեցող հայկական համայնքների բարգավաճման համար:

Օտար լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի զույգ հատվածների առաջադեմ ներկայացուցիչները, ավելի սերտ տնտեսական կապեր հաստատելով Ռուսաստանի հետ, հանգեցին միակ ճիշտ այն եզրակացությանը, որ ռուսական հզոր պետությունն է քաղաքական այն ուժը, որն ի վիճակի է օգնելու հայ ժողովրդին իր հայրենի երկրի ազատագրության համար մղվող պայքարում: Եվ այսպես, հարյուրամյակների պատմություն ունեցող տնտեսական ու մշակութա-

յին կապերն ու անընթացությունները՝ վերաճեցին, հզորացան և քաղաքական քաղաքականություն ստացան: Դրան զուգընթաց սկսվեց Մոսկվայի հայ գաղթօջախի պատմության նոր դարաշրջանը՝ հարուստ հայ և ուրա ժողովուրդների բարեկամությունը զոգող փաստերով և անտեսական կապերի նոր դրսևորումներով, որոնք արժանի են հանգամանալից ու խորազնին նոր ուսումնասիրությունների:

Л. С. ХАЧИКЯН

## АРМЯНЕ В ДРЕВНЕЙ МОСКВЕ И НА ПУТЯХ, ВЕДУЩИХ В МОСКВУ

Уже с первых веков своего существования Москва поддерживала тесные экономические связи с восточными странами. Эти связи осуществлялись в основном по Волго-Каспийскому пути, а также через Киев и Крым. Заметную роль в этой области играли армянские купцы. Армянами были созданы значительные колонии в столице Хазарского каганата—Итиле, а впоследствии—в половецких административно-экономических центрах, в столице волжских болгар—Великих Болгарах, в Казани, Нижнем-Новгороде и т. д. Еще большего расцвета армянские колонии достигли с конца XIII века. В старой и новой столицах Золотой Орды—Сарай-Бату и Сарай-Берке, на Северном Кавказе (особенно на Таманском полуострове и в других районах исторической Черкесии), в юго-восточных приморских центрах Крыма, в Киеве и в других городах южной России появились многолюдные кварталы, населенные армянами.

В XIV—XV вв. армяне составляли две трети населения города Кафы (около 45 тыс. чел.), являвшейся экономическим центром Крыма; они поставляли восточные товары в Россию и в другие страны Восточной Европы.

Подытоживая имеющиеся в наличии сведения об упомянутых выше армянских колониях, автор статьи делает попытку по новому осветить место армян в экономической жизни Москвы XIV—XVI вв. Значительную роль в жизни Москвы этого периода играли купцы, называемые «гостями-суроужанами» или «суроужцами». Высказывались различные точки зрения относительно их национальной принадлежности: по мнению некоторых исследователей среди «гостей—суроужан» ведущая роль принадлежала итальянским (особенно генуэзским) или греческим купцам; другие считали их русскими московскими купцами, существует также точка зрения, согласно которой среди «суроужан» были и армянские купцы.

Приводя данные о месте армян во внешней торговле России и делая имена десяти «гостей-суроужан», участвовавших вместе с Дмитрием Донским в Куликовской битве, а также других (например, Некамата суроужанина) предметом специального рассмотрения, автор статьи приходит к выводу, что «гостями-суроужанами» назывались крымские, в основном, кафинские армянские купцы.

В новом свете предстают также данные о крымских армянах—сподвижниках Ивана III—Какосе, Богдане, Погосе и других, материалы о существовавшем в средневековой Москве армянском дворе, сурожском шелковом ряде и торговом доме, называвшемся «персидским» и т. д. Доказывается, что у армян в Москве была церковь еще с конца XIV в.; следовательно, организованная армянская колония в Москве существовала гораздо раньше, чем было принято считать.

Специальные разделы в статье посвящены тем памятникам культуры (архитектурные памятники, произведения изобразительного искусства, ювелирные изделия, литературные произведения), в создании или реставрации которых, по всей вероятности, принимали участие армянские мастера. По мнению автора, воспоминания об армянских купцах нашли отражение и в произведениях устного народного творчества, в частности, в былине о Чуриле Пленковиче.

L. S. KHATCHIKIAN

## LES ARMÉNIENS DANS MOSCOU MÉDIEVALE ET SUR LES ROUTES MENANT À MOSCOU

### (R é s u m é)

Dès les premiers siècles de son existence Moscou a entretenu d'étroites relations économiques avec les pays orientaux. Ces relations se sont réalisées principalement par la voie Volgo-Caspienne, la Crimée et Kiev. Les commerçants arméniens ont joué un rôle considérable dans ce domaine. Les Arméniens avaient des colonies stables à Itile, capitale de la Khazarie, puis dans les centres économiques et administratifs des Polovtzes, dans la capitale des Bulgares de la Volga, à Véliky Bolgary, de même qu'à Kazan, à Nijni-Novgorod, etc. Les colonies arméniennes ont fleuri encore plus après le XIII<sup>e</sup> siècle. Des quartiers populeux d'Arméniens existaient dans l'ancienne et la nouvelle capitales de la Horde d'Or, à Saraï-Batou et à Saraï-Berké, au Caucase du Nord (en particulier sur la presqu'île de Taman et dans les autres régions de la Circassie historique), dans les centres littoraux du sud-est de la Crimée et dans les autres régions de la Russie méridionale.

Aux XIV<sup>e</sup>—XV<sup>e</sup> siècles les Arméniens constituaient les deux tiers de la population de la ville de Kafa (environ 45 mille habitants), qui était le centre économique de la Crimée, et fournissaient des marchandises orientales à la Russie et aux autres pays de l'Europe Orientale.

Réunissant tous les renseignements existant quant aux colonies arméniennes mentionnées plus haut, l'auteur de l'article s'efforce d'éclairer d'une manière nouvelle le rôle des Arméniens dans la vie de Moscou aux XIV<sup>e</sup>—XV<sup>e</sup> siècles. A cette époque les commerçants nommés "marchands sourojiens" ou "sourojtsy" ont joué un rôle important dans la vie

économique de Moscou. Différentes suppositions ont été faites quant à leur appartenance nationale: finalement on en est venu à la conclusion que parmi eux le rôle prépondérant revenait aux commerçants italiens (surtout génois) et grecs; d'autres ont considéré que les "marchands sourojiens" étaient des commerçants russes moscovites; d'autres encore sont de l'opinion que parmi les "sourojiens" il y avait également des Arméniens.

Mentionnant les données existant quant au rôle joué par les Arméniens dans le commerce extérieur de la Russie et rendant les noms de dix "marchands sourojiens" ayant participé avec Dmitri Donskoï à la bataille de Koulikovo, de même que d'autres noms (par exemple celui de Nékomat Sourojien) l'objet d'un examen spécial, l'auteur de l'article en vient à la conclusion qu'on nommait "marchands sourojiens" les commerçants arméniens de Crimée et surtout de Kafa.

L'auteur examine sous un jour nouveau également les données relatives aux Arméniens de Crimée—compagnons d'armes d'Ivan III—Kakos, Bogdan, Poghos, etc., les matériaux concernant l'existence à Moscou d'un caravansérail arménien, de galeries de soirées de Sourojiens et d'une maison de commerce dite "persane". Il est démontré que les Arméniens ont eu une église à Moscou dès la fin du XIV<sup>e</sup> siècle et que, par conséquent, une colonie arménienne organisée y a existé bien avant qu'on ne le croyait.

Des passages spéciaux de l'article sont consacrés aux oeuvres d'art (monuments, tableaux, joaillerie, oeuvres littéraires) à la création ou à la restauration desquelles des artistes arméniens ont participé. Selon l'auteur de l'article les souvenirs relatifs aux commerçants arméniens se sont reflétés également dans la création populaire orale, en particulier dans la chanson épique de Tchourila Plenkovitch.



ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՉՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ  
ԵՐԳԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Համարը իստոնեական երգարվեստը բազմազան կապերի մեջ է միջնադարյան տարբեր, այդ թվում և այլազան ժողովուրդների աշխարհիկ երգերաժշտության հետ<sup>1</sup>: Ունենալով ընդհանուր արմատներ, քրիստոնեական արվեստը մ. թ. երկրորդ հազարամյակից զարգացել է արևելյան և արևմտյան երկու խոշոր ճյուղերով: Ու դրանցից յուրաքանչյուրի շրջանակներում էլ՝ իրար հետ որոշակի հարաբերությունների մեջ գտնվող ազգային այլազան դպրոցներով: Այս բոլոր տեսակետներով քրիստոնեական երգարվեստը համեմատական ուսումնասիրությունների հարուստ նյութ է տրամադրում հետազոտողին:

Մեր խնդիրն է՝ ցույց տալ հայկական և ռուսական հոգևոր երգարվեստների համար բնորոշ մի քանի երևույթների ընդհանրությունը:

Քննարկվող երկու երգարվեստներն էլ վերաբերում են արևելյան քրիստոնեական երաժշտությանը: Վերջինս մեծ ու տարողունակ երևույթ է: Իր տարածական զարգացմամբ այն ընդգրկում է աշխարհագրական հսկայածավալ մի սահման՝ հարավային Հնդկաստանից ու Եթովպիայից, Մերձավոր Արևելքի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի վրայով, մինչև Բալկաններ և Ռուսաստան: Նշված վիթխարի տարածքների վրա մինչև այժմ էլ ապրող և կամ միջնադարում ծաղկած մի ամբողջ շարք քրիստոնյա ժողովուրդներ ստեղծել են պաշտամունքային բազմահազար երգեր ու մեղեդիներ:

Դրանք ներկայացնում են արևելյան զգացողության ու (վերջինիս՝ հետ այս կամ այն շափով ու ձևով ընդհիլուզված) արևմտյան մտածողության այլազան զուգորդումներ. ցեղային, դավանական, բայց ավելի (ու գլխավորապես) ազ-

1 Տակավին 50-ական թվականներին Ա. Շահվերդյանը խոսելով, մասնավորապես, միջնադարյան ութ-ձայնի տեսության մասին, գրում էր. «Ինչպես հայտնի է, ութ-ձայնը ընդունված էր Արևմուտքի և Արևելքի բոլոր եկեղեցիներում (կաթոլիկական և բյուզանդական-ուղղափառ): Ութ-ձայնն ընդունված է եղել նաև արաբների, պարսիկների և թուրքերի մոտ: Սակայն, ինչպես երևում է, դավանելով հնում առաջացած մեկ ընդհանուր դոգմա, ժողովուրդներից յուրաքանչյուրն իր պատմական-մշակութային զարգացման ընթացքում լիովին ինքնուրույն և ազգային ինքնատիպ բովանդակություն է տվել ութ-ձայնի տեսությանը, որը հանդիսանում է մեկուդիկ հարստությունների համակարգման հիմքը»: Տե՛ս Ա. Շահվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX—XX դդ. (մինչև սովետական շրջան), Երևան, 1959, էջ 343—344:

Այստեղ հատուկ շեշտված է ժողովուրդներից յուրաքանչյուրի մշակած ազգային ինքնատիպ ավանդույթների հարցը: Անկախ դրանից, բերված խոսքերից ավելի քան պարզ է, որ, տվյալ դեպքում՝ ութ-ձայնի տեսության կարևոր առումով նույնիսկ քրիստոնյա ու մահմեդական ժողովուրդների երաժշտարվեստները համեմատության եզրեր ունեն:

գային լեզուների ու ճաշակի տարբերություններով պայմանավորված արվեստի յուրատիպ գործեր<sup>2</sup>:

Դրանց ամբողջությունը կազմում է արևելյան քրիստոնեական երգ-երաժրշտությունը, որ արևմտյանից տարբերվում է նաև՝ միաձայնային (մոնոդիկ) կոթողների մեղեդիական հանգամանալի մշակումով, ելևէջի գունագեղությունը և կշռույթի իմաստալից ազատությունը<sup>3</sup>:

Ժամանակային դարգացման առումով արևելյան քրիստոնեական արվեստի ստեղծագործական բարգավաճումը տևում է նույնիսկ մինչև XVII հարյուրամյակի կեսերը: Մասնավորապես ռուսական հոգևոր երգի մշակները, X—XII դարերում յուրացնելով բյուզանդական և ընդհանուր սլավոնական երգ-երաժրշտության կենսունակ տարրերը, XIII—XV հարյուրամյակներում լիովին հաղթահարում են բոլոր օտարաբանությունները, ամեն տեսակետով ամրապնդում կապերը սեփական ժողովրդի բանահյուսության հետ: Եվ Բյուզանդիայի անկումից հետո իրենց ձեռքում կենտրոնացնելով արևելյան քրիստոնեական արվեստի ապագա առաջընթացի կարևորագույն լծակները, այն բարձրացնում են դարգացման նոր աստիճանի<sup>4</sup>:

Իս արևելյան քրիստոնեական երաժշտության ուշ միջնադարյան ծաղկումն է: Հայկական հոգևոր արվեստի վերելքն ու ծաղկումը վերաբերում են նույն երաժշտության պատմական դարգացման դասական այն շրջանին, որի վերին սահմանը հասնում է, առ առավելն, մինչև Կ. Պոլսի անկումը<sup>5</sup>:

Եվ սակայն, հայկական և ռուսական հոգևոր երգարվեստները կարևոր ընդհանրություններ են ի հայտ բերում, ինչպես գործնական երգեցողության, այնպես և տեսության բնագավառներում: Ընդհանրություններ, որոնք բացատրվում են ոչ այնքան աշխարհագրական մոտիկությամբ և կամ դարգացման փո-

2 Ի տարբերություն արևմտյանի, արևելյան քրիստոնեական երգ-երաժշտությունն ավելի երփներանգ ու բաղմազան է: Հատկապես այն պատճառով, որ Արևելքում պաշտամունքն ու պաշտոնեղբայրությունը ձևավորվելով, զարգացել են ազգային լեզուների հիման վրա: Եվ սակայն, նույնական կամ գրեթե նույնական ձայնեղանակներ, «թափառող» մեղեդիներ, մեղեդիական հատվածներ ու դարձվածքներ և այլն սովորական երևույթ են արևելյան քրիստոնեական արվեստի շրջանակներում ևս:

3 Այժմ խոր հասկացողություն դոյություն ունի արևելյան միաձայնային երաժշտության մեղեդիական արտահայտչականության ուժի և տիպի, նրա գեղարվեստական ինքնահատուկ արժանիքների նկատմամբ: Արդեն ընդունված ճշմարտություն է, որ բազմաձայն արվեստում, ուր ստեղծագործական լարումը տարածվում է մի քանի ձայնագծերի վրա (մեկի մեջ կենտրոնանալու փոխարեն), բնականաբար, շքանում են հիշյալ արժանիքներից կարևորագույնները: Այն է՝ ելևէջի հարուստ նրբերանգավորումը (որ արդյունք է հնչյունային հիմքի ոչ հավասարեցված նկարագրի). զարգուղորումների հմուտ կիրառումը (որ կոչված է մշտանորոգ հոսունություն հաղորդելու մեղեդիին, ի հարկին նշանակալի ուղղումներ մտցնելով համաչափ կառուցվածքների փոխհարաբերության մեջ). և արվեստական հատածներից (տակտերից) բոլորովին անկախ, ազատ շնչող ու ճախրող կշռույթը (որը, նայած տեղին, կարող է և համաձայնեցված լինել գրական բնագրերի և կամ այլազանորեն չափված մարդկային տարբեր շարժումների կառուցվածքի հետ): Հմտ. Grove's Dictionary of Music and Musicians, vol. II (5th ed.), New York, 1960, p. 860 (Eastern Church Music).

4 Н. Успенский, Древнерусское певческое искусство, М., 1971. М. Бражников, Древнерусская теория музыки, Л., 1972.

5 Տե՛ս մեր հոդվածը՝ Խաղաղության արվեստն իր պատմական դարգացման մեջ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, № 12, 1977:

խաղարձ ուղղակի կապերով<sup>6</sup>, որբան արևելյան քրիստոնեական արվեստի հեղաշրջման հիմնական օրինաչափություններով, նրանում բյուզանդականություն<sup>7</sup> կատարած մերձեցնող դերով:

Ստորև մենք կանդ կառնենք հիշյալ ընդհանրություններից մի բանխօսի վրա: Հասկանալի է, որ ընդ նմին պետք է շոշափենք նաև տարբերությունների խնդիրը, որով փաստորեն ավելի ցայտուն կդառնան մեզ զբաղեցնող ընդհանրությունները: Նախ նշենք, որ միջին դարերում տարբեր են եղել երգչային ձայնի, նրա որակի ու գեղեցկության մասին իդեալները Հայաստանում և Ռուսաստանում:

Ինչպես մի ամբողջ շարք հյուսիսային երկրներում, այնպես և Ռուսաստանում, որպես ընդհանուր կանոն, հարգվել են տղամարդկանց թավ (basso, baritono տիպի) ձայները, ի տարբերություն հարավային երկրների, ուր նախընտրել են տղամարդկանց բարձր (tenore տիպի) ձայները: Ահա թե ինչ է դրում Մակար Անտիոքացի պատրիարքը, XVII դարի կեսերին Ռուսաստան կատարած ճանապարհորդության անթիվ. «Նրանց մոտ լավագույն երգչային ձայնը՝ հաստ, թավ, բասային [ձայնն] է, որը ունկնդրին բավականություն չի պատճառում: Ինչպես որ մեզ մոտ դա՝ թերություն է համարվում, այնպես էլ նրանց մոտ մեր բարձր [հնչող] մեղեդին անպատշաճ է նկատվում»<sup>8</sup>: Մակար Անտիոքացու ասածը՝ բարձր հնչող մեղեդիի մասին, պատշաճում է ողջ Մերձավոր Արևելքին, ու նաև, մասնավորապես, Հայաստանին: Մեր միջնադարյան երգարաններում ոչ հազվադեպ ուղղակի պահանջվում է, որ երգիչն ունենա «բաղցր» և «բարակ» ձայն: Գանձարաններում, օրինակ, հանդիպում ենք.

«Թէ ձայն ունիս քաղցր ու բարակ,  
Զգանձս ասա դու համարձակ.  
Ապա թէ հաստ է և խառնակ,  
Ասկի ի զատ կացիր յերակ» և այլն<sup>9</sup>:

<sup>6</sup> Թեպետև եղել են նաև ուղղակի շփումների համար հնարավորություններով լեցուն տևական այնպիսի կենտրոններ, ինչպիսիք են Կ. Պոլիսն ու Երուսաղեմը (վերջինս մինչև այժմ էլ չի կորցրել իր նշանակությունը):

<sup>7</sup> Ինչպես ընդհանուր, այնպես և երաժշտական մշակույթի պատմության մեջ բյուզանդականությունը (византизм) բնութագրվում է որպես հունական, ասորական, հայկական, սլավոնական և արևելյան քրիստոնեական քաղաքակրթությանը մոտիկ կանգնած էթնիկական այլ ակունքներից ներհոսած տարրերի օրգանական զուգորդում: Տե՛ս Փ. Ի. Успенский, «Византизм»; Нов. энци. слов. Брокгауза—Ефрона, т. X, стр. 461—462.

<sup>8</sup> Ըստ որում, բյուզանդականությունը ոչ միայն սնվել է հիշյալ ժողովուրդների հոգևոր հարստություններից, այլև ներթափանցել դրանց մեջ:


<sup>9</sup> П. Алеппский, Путешествие антиохийского патриарха Макара в Россию в половине XVII века, вып. 2, М., 1897, стр. 166.

<sup>9</sup> Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2736, էջ 1բ. № 424, էջ 8բ և այլուր: Մեր ձեռագրերում հանդիպում են երգչային ձայնը «սրեցնելու» կերպը բացատրող գործնական խորատներ ևս, որոնցից մեկը ավելորդ չի լինի առաջ բերել այստեղ.

«Առ սալորի խէժ որչափ և կամիս,— կարդում ենք մի գրչագիր տաղարանում,— և դիր ի շուրն որ դբժի. և թող շորս օր, և հարէ զնա մատովըդ, և թող որ առաղի. և քաշէ յերեսացն զսաֆին, և զթորթն յես թափէ, և խառնէ ի շուրն պաղ շաքարով, թող որ հալի և մասուրով խմէ»: Գրիչը բացատրում է նաև, որ ստացված հեղուկը պետք է խմել պակկելուց առաջ և ավելացնում, որ առավոտյան՝ «սրանայ ձայնս հրամանաւն աստուծոյ»: Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9271, էջ 48ա:

Այս պարագան արտաքինապես զգալի հեռացնում է կարծես քննարկվող երկու երգարվեստները: Բայց երբ ծանոթանում ենք վերջիններիս ներքին ծալքերին, որոշակի երևում են նաև դրանց մի ամբողջ շարք ընդհանուր կողմերը: Այն է՝ մասնավորապես՝ օգտագործվող հիմնական հնչյունաշարերի քառունակային (կվարտային) կառուցվածքը. այդ հնչյունաշարերը արտահայտչական ու տեքնիկական առումներով տարբեր գոտիների բաժանելու միտումը. տարեկան շրջանի երգերը ըստ ութ ձայնեղանակների ու դրանց նրբությունները ցուցանող այլևայլ շափանմուշների բաժանելու նմանօրինակ հիմունքները. երաժշտական նշանագրության համատեսակ տարերքը. և գործնական երգեցողությունը ձեռնավարության (χειρονομία) միջոցով կանոնավորելու ավանդույթը:

Հայկական և ռուսական միջնադարյան երգարվեստներում հիմնական հնչյունաշարերը տարբեր ծավալ ունեն, որ դարձյալ պայմանավորված է՝ դրանցում ընդունված երգչային տարբեր ձայների հանգամանքով: Այդ հնչյունաշարերը, սակայն, կառուցվածքով համանման են.



Ինչպես տեսնում ենք, երկու ձայնաշարերն էլ դեպի վեր ուղղված են կիսվարների (բեմոլների) կողմը. երկուսն ևս բաղկացած են շղթայված քառալարերից այնպես, որ նախորդ քառալարի շորրորդ աստիճանը միաժամանակ հանդիսանում է հաջորդի առաջինը. ուստի երկու ձայնաշարերում էլ կան տարբեր բարձրության երեք տիպի ձայնաստիճաններ (օրինակներում դրանք ցույց

Անկասկած շահեկան է այստեղ ևս ծանոթանալ նաև Կոմիտասի բազմամյա հետազոտությունների արդյունքներին՝ հայ գեղջուկ երգեցողության վերաբերյալ: «Գյուղերում, — գրում է նա, — թե իզական և թե արական ձայները դեպի բարձր են զարգացած. ցած ձայները, երկու սեռի մեջ էլ, հազվադեպ են:

Իզական ձայների տեսակներն են՝

1. Soprano
2. Mezzo soprano
3. Alto բարձր


Արական ձայների տեսակներն են՝

1. Tenore բարձր
2. Tenore ցած

3. Baritono բարձր (տե՛ս ՉԱԳԱԹ, Կոմիտասի դիվան, նյութ N 676—Հայ գեղջուկ երաժշտություն, 1906, ներածություն, երգական երաժշտություն):

են տրված 1, 2 և 3 թվանշաններով), որոնցից համապատասխանաբար սկիզբ են առնում ձայնային երեք կարգեր<sup>10</sup>:

Քննարկվող երգարվեստներում հիմնական ձայնաշարը գիտակցվել է որպես բաղադրյալ մի կառույց, բաղկացած արտահայտչական ուրույն հատկություններով օժտված առանձին տեղամասերից կամ գոտիներից: Այդ գոտիները երկու ժողովուրդների մոտ, բնականաբար, որոշվել են ուրույն բնկալումների հիման վրա: Ուշագրավ է, սակայն, որ երկու դեպքում էլ հիմնական ձայնաշարերը բաժանված են շրջական տեղամասերի (սուսերեն՝ *сортасне*), զատ-զատ անվանակոչություններով, որոնց նշանակությունների մեջ ընդհանուր է՝ համապատասխան հնչամասերի գունային առանձնահատկությունների տարրերացումը, այսպես<sup>11</sup>:



Ինչպես բրիտոնական մյուս բաղադրակրթություններում, այնպես էլ հայկական և ուսական միջնադարյան կյանքում, տեսության մեջ և զործնականում մեծ տեղ է հատկացվել ութ-ձայնի համակարգին: Բացի հոգևոր թվերգից ու դրան աղգակից սաղմոսասացությունից, երկու եկեղեցիներում էլ բոլոր սաղմոսերգություններն ու շարականերգությունների մեծ մասն<sup>12</sup> իրենց բնույթով եղել են ձայնեղանակային<sup>13</sup>, ընթացել են՝ ութ-ձայնի աղգային հա-

10 Ռուսական միջնադարյան երաժշտության հիմնական ձայնաշարի (обиходный звукоряд) մասին տե՛ս Н. Финдейзен, Очерки по истории музыки в России, т. I, М., 1928, և И. Способин, Лекции по курсу гармонии, М., 1969. Հայ երաժշտության հիմնական ձայնաշարի ուրույն կազմության մասին առաջին անգամ խոսել է Կոմիտասը (տե՛ս նրա՝ Հողվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 138—140), իսկ նրա մանրամասն վերլուծությունը տվեց պրոֆ. Քուչնարյանը (տե՛ս վերջինիս՝ Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, էջ 323—338):

11 Հմմտ. Н. Сахаров, Исследования о русском церковном песнопении, «Журнал министерства народного просвещения», ч. LXIII, СПб, 1849, стр. 95—98 և մեր հոգվածը՝ Ջայնի մասին ուսմունքը հին և միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 157—160:

12 Ասում ենք՝ մեծ մասը, որովհետև երկու եկեղեցիներում էլ ստեղծվել են ութ-ձայնի համակարգից անկախ եղանակներ ևս, որոնք ժամանակի ընթացքում նույնպես ստացել են ուրույն շափանմուշների նշանակություն:

13 Երգեցողությունը, ավելի լայն՝ երաժշտությունը ձայնեղանակային է լինում, երբ ծավալվում է տրված շափանմուշ եղանակների հունով: Վերջիններս բնութագրվում են՝ որոշակի համաձայնույթով (լադով) և վերջավորող ու դիմող ձայների հարաբերությամբ, ինչպես և մեղեդիական տիպական դարձվածքների (պատույտների) կազմով: Ռուսական երաժշտագիտության

մակարդերով նախատեսված ձայնեղանակներից մեկի կամ նրան ստորադասորե է այլ շափանմուշ եղանակի հունով: Թե՛ հայկական, և թե՛ ռուսական հոգևոր երգարվեստներում կենցաղավարել են ութ-ձայնի մի քանի համակարգեր: Գլխավորներն են՝ սաղմոսականոններին կապված ութ-ձայնը, հոգևոր ինքնուրույն երգերին վերաբերող ութ-ձայնը, ու երկուսի միջև անհրաժեշտ կապ ստեղծող՝ «սկսուածքների» համակարգը (система погласиц), որ կարող է համարվել ութ-ձայնի առավել ընդհանրացված, առաջնային, մանրակերտ դրուժյունը<sup>14</sup>:

Ամբողջապես առած, հայկական և ռուսական ութ-ձայնի համակարգերի տեսական ձևավորումներն իրագործվել են բյուզանդական հոգևոր երգարվեստի ներկայացուցիչների շրջանակներում VII—VIII դարերում բյուրեղացած համապատասխան դրուժյունների ազդեցության ներքո: Վերջիններիս համաձայն՝ եկեղեցական տարվա գրեթե բոլոր երգերի եղանակները ութ խմբի են բաժանվում՝ ըստ դրանց վերջավորող և դիմող ձայների փոխհարաբերության ու դրանց հատուկ մեղեդիական տիպական դարձվածքների (երգն սկսելու, ծավալելու և ավարտելու բանաձևերի): Հետո՝ հիշյալ ութ խմբերը ներկայացնող շափանմուշներից շորսը «բուն», գլխավոր կամ առաջնային ձայնեղանակներ են, իսկ մնացած շորսը՝ «կողմ», ածանցյալ կամ երկրորդային. վերջապես՝ ճիշտ այս դրվածքն էլ (այսինքն՝ «բուն» և «կողմ» ձայնեղանակների համաստորադասույթյունը) պետք է ունենա համաքրիստոնեական նշանակույթյուն:

Հայկական և ռուսական եկեղեցիներն իրենց մեղեդիական հարստությունները սլալամանականորեն ենթարկելով դասակարգման նշված սկզբունքին<sup>15</sup>, միաժամանակ լիովին արդյունավետ ջանքեր են գործադրել՝ հանուն շափանմուշ եղանակների մեղեդիական ազգային բովանդակության ու ինքնատիպ նկարագրի հաստատման. ընդառաջելով սեփական երգեցողությունների բնական դարգացման սլահանջներին, փաստորեն վավերացրել են դրանց շատ ավելի բազմաեղանակ բնույթը, քան այն, ինչ ենթադրվել է ութ-ձայնի դրուժյամբ. և նույնիսկ ութ-ձայնի սկզբնական համակարգում ձևականորեն սլահանելով «բուն» և «կողմ» անվանակոչությունները, բնավ չեն տարվել դրանք բյուզանդականի օրինակով զույգ-զույգ համաստորադասելու գաղափարով:

մեջ տարբեր ժամանակներում կարևորվել են հիշյալ կետերից մեկը կամ մյուսը: Այսպես, Ռազումովսկին իր ուսումնասիրություններում կանգ է առել գլխավորաբար ռուսական եկեղեցական երաժշտության ձայնեղանակների համաձայնույթային հիմքի ու դրանց վերջավորող ու դիմող ձայների հարաբերության վրա (Д. В. Рязумовский, Церковное пение в России, вып. 1—3, М., 1867—1869). Մետալովը ընդգծել է մեղեդիական տիպական դարձվածքների նշանակության հարցը (В. М. Металлов, Осмогласие знаменного распева, М., 1899):

14 Հմմտ. Т. Владышевская, К вопросу об изучении традиций древнерусского певческого искусства (Из истории русской и советской музыки, выпуск 2, М., 1976, стр. 44) և մեր հոդվածները՝ Հասարակ օրերի կանոնադրույթները, «էջմիածին», 1971, № 4: Ութ-ձայնի սկզբունքները, «էջմիածին», 1972, № 2: Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարություն ավագ օրհնությունները, «էջմիածին», 1973, № 3:

15 Հայկական հոգևոր երաժշտության տեսության մեջ՝ առաջին ձայն-առաջին կողմ (աձ-ակ), և նույն օրինակով՝ Բձ-Բկ, Գձ-Գկ ու Դձ-Դկ կերպով. իսկ ռուսականում՝ առաջին ձայն-հինգերորդ ձայն (1-5), ու նմանապես՝ 2-6, 3-7 և 4-8 ձևով (որ փաստորեն նույն բանն է):

Ահա, օրինակ, երրորդ ձայնի ու երրորդ կողմի հետևյալ սկզբածրները հայկական և ռուսական եկեղեցական երաժշտությունից<sup>16</sup>:

Погласица 3-го гласа




Го - ре нам не - по - ка я - вшии ся ждст нэс



му - ка вс - на - а.

Погласица 7-го гласа



Ох, у - ви мнс ду - ше у слы - ши -



мк го - спо ди.

92 Չափաւոր (սկսուածք)



Մե - ծա - ցուս ցե աճճճ իմ ըզ սեր եւ ցըն - ծաս - ցե հո .



- գի իմ Աս - տու - ծով փըրկ - չաւ ի - մով:

94 Չափաւոր սկսուածք



Մե - ծա - ցուս - ցե աճճճ իմ ըզ - սեր

եւ ցըն - ծաս - ցե



հո - գի իմ Աս - տու - ծով փըրկ - չաւ ի - մով:

Հայկական Գձ-ի և Գկ-ի տարրերությունները շափաղանց ակնհայտ են: Առաջին հայացքից կարող են ազգակից թվալ ռուսական 3-րդ ձայնն ու 7-րդ: Ու թեև ազգակցությունն այլ բան է, բան համաստորադասությունը<sup>17</sup>, սակայն տվյալ դեպքում դա էլ երևութական է: Ինչպես հիշտ բացատրում է Ն. Ուսպենսկին, ռուսական հոգևոր երաժշտությունից առաջ բերված 3-րդ ձայնի

16 Н. Успенский, Древнерусское певческое искусство, М., 1965, стр. 63, 66.

Н. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, стр. 172.

17 Ինչպես ռուսական, այնպես և հայկական հոգևոր երաժշտության մեջ կան նաև ըստ էության մտաիկ, ազգակից ձայնեղանակներ, բայց բոլոր դեպքերում դրանք կիրառվում են որպես ինքնուրույն, այլ ոչ թե համաստորադասված կազմավորումներ:

սկսվածքը պատվում է զորիական ձ'-ի՛ եռյակի շուրջ. մինչդեռ 7-րդ ձայնի սկսվածքը, որն ըստ տեսության պետք է ածանցված լիներ 3-րդից, հիմնված է իոնական Շ'-ի՛ (տես մեղեդիի առաջին կեսը), և զորիական ձ-ձ՛ քառյակների վրա:

Հայկական և ռուսական հոգևոր երգարվեստների բաղմանդանակ բնույթը, և կամ, որ նույնն է, այդ երգարվեստներում ընդունված ութ ձայների բաղմաթիվ ու բաղմազան տեսակներն ու տարատեսակները ցուցանող նյութերի կարգում հատկորոշ զուգահեռներ են ներկայացնում, մի կողմից՝ հայկական միջնադարյան խազդրբերի կամ մանրուսման գրքերի «Ուղիցիք միահամուռ» (երբեմն ևս՝ «Կարգ ուղիցեաց») բաժինը. և մյուս կողմից՝ ռուսական միջնադարյան երաժշտատեսական «Азбука» կոչված մատյանների «Фитник» անվանվող հատվածները: «Фитник»-ներում ամփոփված են լինում մեղեդիական տիպական ու բավական ծավալուն կաղմավորումներ՝ фита-ներ<sup>18</sup>:

Դրանք տարբերվում են ըստ ութ ձայնեղանակների, ըստ որոշակի երաժշտական նշանագրության, ու նաև՝ իրենց հատկացված դատ-զատ անվանակոչություններով, որոնք ունեն միջնադարյան տիպի գեղագիտական բնութագրումների նշանակություն: Այդ կաղմավորումներն օգտագործվելով ութ-ձայնի ընդունված շափանմուշներում, նրանցից յուրաքանչյուրին հաղորդում են մեղեդիի վարդաքման մի նոր հուն, որով և, ի վերջո, ստեղծում երաժշտական նոր կերպար: Նախնական կարգով դրադվելով դրանց հավաքման, համեմատության և դասակարգման գործով, Սախարովը ժամանակին կաղմել է фита-ների անվանակոչությունների այբբենական բավական ընդարձակ (բայց ոչ անշուշտ, լիակատար ու ճշգրտված) մի ցանկ, ուր մեկտեղված է 127 հիմնական անուն<sup>19</sup>: Շահեկան է ծանոթանալ դրան<sup>20</sup>:

Բերված անուններից երկուսի մասին («О како!» և «О колико!»), ինքը Սախարովը տեղեկացնում է, որ դրանք երգերի սկզբնաբառեր են: Ընդհանուր

<sup>18</sup> Հմմտ. Д. Разумовский, Церковное пение в России, вып. 2, М., 1868, стр. 150. В. Металлов, Азбука крюкового пения, М., 1899, стр. 67.

<sup>19</sup> См. И. Сахаров, Исследования о русском церковном песнопении, «Журнал министерства народного просвещения», СПб, 1849, часть LXIII, стр. 21—23.

<sup>20</sup> Ահա այն.

—Азовка	светлая, гром большой, громозельная
—Баран	—Грунка
—Безлетного	—Гугнивая
—Бог бо	—Давидова
—Большая	—Двоестрельная, тристрельная
—Взнос последний	—Двоечельная; большая, меньшая, средняя, звездочельная Адамля
—Волянка	—Дикая
—Возвод, борзовозводная	—Дикоплов
—Высокая, высокогласная, высоко-светлая	—Досадительная
—Венец	—Дрочена
—Вязовка	—Душеполезная
—Галилейская	—Девическая (девственная)
—Главизна	—Заводная
—Глубокая	—Заградная
—Грановитка	—Загрянка
—Греков ключ	—Закилка
—Громлая, громогласная, промо-	



առմամբ շոշափելով առաջին ֆիտա-ների անվանակոչությունների հարցը, Բրաժնիկովը նշում է, որ դրանցից մի քանիսը ծագումով հունական են: Մի քանի այլ բառեր (ինչպես օրինակ՝ «Дикоплов») անհայտ ծագում ունեն: Մյուսները առաջին խոսքեր են, որոնք ցուցանում են՝ տվյալ եղանակի

- |  |                                 |
|--|---------------------------------|
| —Зилотная  | —Полукобылие                    |
| —Зингерка  | —Постоянная                     |
| —Златокрыльная   | —Поездная                       |
| —Зельная: большая, меньшая, от-<br>метная, с сорочьей ногою, со свет-<br>лым отметом | —Правильная                     |
| —Змейца  | —Преложительная                 |
| —Избавитель  | —Пречистая                      |
| —Иудейская   | —Просодия                       |
| —Каруна  | —Пуга                           |
| —Качевка   | —Пужная                         |
| —Кладница  | —Пятогласие                     |
| —Князи   | —Радуйся                        |
| —Кобыла, или ослица  | —Растица                        |
| —Красная   | —Роговая                        |
| —Кудрявая, с кудрями   | —Рука десная                    |
| —Лугвица   | —Свириха                        |
| —Мечик великий   | —Светлая, трисветлая            |
| —Мириная   | —Снятельная                     |
| —Мрачная: мраковидная, мрачно-<br>светлая  | —Скамна                         |
| —Надейка   | —Сковородка                     |
| —Недопевная  | —Скорбная                       |
| —Нескверная  | —Сложитная                      |
| —Непостоянная  | —Смирная                        |
| —Обадка  | —Снедию                         |
| —Облая   | —Солка                          |
| —Обрадованная  | —Соломенка                      |
| —О како!   | —Спускная                       |
| —Око сердца  | —Спутная                        |
| —О кояко!  | —Степенная                      |
| —О окаянный!   | —Страшная                       |
| —Палактос  | —Струя                          |
| —Пелефт  | —Тихая: без свода, меньшей свод |
| —Перевязка большая   | —Торжество царское              |
| —Перекос   | —Тресложная                     |
| —Переплет  | —Трисолнечная                   |
| —Плач: Аннин, Петров, плачень,<br>матерни слезы, полуслезная, слез-<br>ная           | —Тристрельная                   |
| —Плифа: плинфон великий, средний   | —Троицкая                       |
| —Плитка  | —Ужасная                        |
| —Поводная, трясоподводная  | —Усольская                      |
| —Подвижная   | —Успенская                      |
| —Подчашная   | —Утешительная и утешитель       |
| —Полковка  | —Хабува                         |
| —Положительная   | —Хамиловидная                   |
| —Полукулизменная   | —Хареса                         |
|  | —Хатева                         |
|  | —Хламида                        |
|  | —Храпная                        |
|  | —Хромец                         |
|  | —Царская                        |

բարձրությունը («Высокая»), բնույթը («Скорбная») գույնը («Светлая», «Мрачная»), ծիսական նշանակությունը («Успенская»), և կամ կազմված են եղանակի նշանագրության մեջ տեղ գտած բնորոշ խաղի անվանումից («Хамилловидная») և այլն<sup>21</sup>: Վերջապես իմանալի է նաև, որ երաժշտատեսական տիպի մատյաններում ևս ֆիտա-ները զուգորդվում են գրական տարբեր խոսքերի հետ<sup>22</sup>:

Հայկական մանրուսման եղանակները, բոլորն էլ, զուգորդված են գրական միևնույն խոսքերի՝ Դավթյան Ճե սաղմոսի Բ տան հետ<sup>23</sup>, որտեղից է և նրանց «Ուղիցիք» անվանումը: Մանրուսման եղանակներն ևս բավականին ծավալուն կտորներ են, որոնց երաժշտական նշանագրումները բաղկացած են քսան և նույնիսկ ավելի խաղախմբերից<sup>24</sup>: Դրանք նույնպես ճանաչվել են այլազան, երբեմն արտասովոր, զարմանալի պատկերավոր անուններով ու դասակարգվել՝ հիմնականում ըստ ութ-ձայնի, առանձին դեպքերում՝ նաև անկախ այդ բաժանումից:

Հատուկ խնդիր է՝ մանրուսման եղանակների ճիշտ (կամ մոտավորապես ճիշտ) թվաքանակը որոշելը: Դրանով առաջին անգամ զբաղվել է Ղ. Ալիշանը: Հետազոտելով մի ամբողջ շարք խաղաքեր, «Ուղիցեաց» կարգերից նա քաղել է ավելի քան 70 եղանակների անուններ և կազմել դրանց այբբենական տախտակը՝ «Ի զքօսանս բանասիրաց»<sup>25</sup>: Ալիշանից հետո խաղաքերով զբաղվեց երիտասարդ Կոմիտասը, և իր անդրանիկ հոգվածում առաջ բերելով մանրուսման եղանակների 46 այլ անուններ, արեց շահեկան մի շարք դիտողություններ: «Եղանակների տեսակների զատ-զատ անվանակոչությունը, — նրկատեց նա, — շատ վաղ ժամանակներից է հայտնի. մի սովորություն, որ հատուկ է եղել միշտ արևելյան ազգերին՝ հայերին, պարսիկներին, քրդերին, արաբներին, տաճիկներին և այլն, որոնք մինչև այժմ ևս գործածում են՝ բացի հայերից»: Այնուհետև՝ «այս եղանակների մեջ կան՝ տեղերի, երաժիշտների կամ սոցա մականունների, տոհմերի, երգի սկզբնաբառի, տերունական տոների, նվագարանների, հանքի, կենդանիների, գործիքների, եղանակի բնավորությունը պատկերացնող բույսերի և մի քանի անհասկանալի բառերի անուններ»: Ու նախնական կարգով ի մի բերելով բաղմաթիվ խաղաքերից հավաքված տվյալները, բարձրացրեց ձևագրերից յուրաքանչյուրի մեջ զետեղված եղանակների համեմատության անհրաժեշտությունը, բայց այդ գործը թողեց «մի այլ անգամվան»<sup>26</sup>:

—Челюстка

—Чертожная

—Черная

—Юница

21 М. Бражников, Древнерусская теория музыки, Л., 1972, стр. 155.

22 Նույն տեղում, էջ 131 և 155:

23 Ուղիղ եղիցին աղաթք իմ,  
որպէս խունկ առաջի քո տէր.

Համբարձումքն ձեռաց իմոց՝  
պատարազ երեկոյի:

24 Կամ, ավելի ճիշտ՝ յուրատեսակ «տակտերի» մեջ ամփոփված խաղային հաշորդականություններից: Տե՛ս մեր հոգվածը՝ Հիմնական խաղերի միակցությունը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, № 9, էջ 116:

25 Ղ. Ալիշան, Սիսուան և Լևոն մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 254:

26 Կոմիտաս, Հայոց եկեղեցական եղանակները, «Արարատ», 1894, № 7—8. նաև՝ Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 105:

Մեր ուսումնասիրությունները ևս ցույց տվեցին, որ մեկ, առանձին առած խաղաղքի հիման վրա անհնարին է որոշել մանրուսման եղանակների թվաքանակը<sup>27</sup>: Խաղաղքեր կան, որոնցում նույնիսկ խաղաղ բացակայում է «Ուղիցիք միահամուռ» բաժինը<sup>28</sup>: Իսկ այն խաղաղքերում, որոնցում հիշյալ բաժինը առկա է, վերջինս հաճախ ներամփոփում է շատ տարբեր քանակությամբ միավորներ՝ 12—13-ից<sup>29</sup> մինչև 63<sup>30</sup>, 75<sup>31</sup> և այլն: Այսուհանդերձ, խաղաղքերի մեծ խմբից օգտվելն էլ այն անպատեհությունն առաջ է կանգնեցնում, որ, ինչպես պարզվում է, միանման խաղաղաված և, հետևաբար, միևնույն եղանակներ՝ տարբեր գրչագրերում երբեմն տարբեր անուններ են կրում<sup>32</sup>: Ուստի պետք է կատարվեն համեմատական իրոք հիմնավոր աշխատանքներ:

Մենք առաջիկա կանգ ենք առել մի խաղաղքի՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 7157 ձեռագրի վրա: Գաղափարված է Սկեռայում, 1349-ին (գրիչ՝ Գրիգոր քահանա): Նրա մեղ հետաքրքրող բաժինը ամենահարուստներից մեկն է՝ ամփոփում է 86 անուն, դասակարգված ըստ ութ-ձայնի, հետևյալ կերպ: Չայնեղանակներից յուրաքանչյուրի սահմաններում նախ բերվում է, ըստ երևույթին, մի գլխավոր եղանակ՝ ած (առաջին ձայն), ակ (առաջին կողմ) և այլն, հին տիպի նշումներով, որից հետո՝ վերջինիս ստորադաս եղանակների խումբը, դատ-դատ անվանակոչություններով: Գատելով խաղաղքության արտաքին տվյալներից, հին տիպի նշումների տակ բերվող եղանակները ևս հավանաբար նոր են<sup>33</sup>, ուստի, տվյալ կապակցության մեջ, այդ նշումներն էլ պետք է դիտվեն որպես յուրահատուկ անուններ: Այնուհետև, մի քանի կտորներ կան, որոնց անունները գրիչը չի իմացել և լուսանցքում մի գծիկով է անջատել դրանք նախորդ և հաջորդ միավորներից: Այդ կտորները, որոնք մենք «անանուն» ենք կոչում, անպայման մտնում են եղանակների ընդհանուր թվաքանակի մեջ: Գարձյալ՝ հանդիպում են նաև համանուն կտորներ՝ տարբեր ձայնեղանակներում (օրինակ, «փողն» դձ-ում և նույն անունը՝ դկ-ում), որոնք փաստորեն տարբեր եղանակներ լինելով, նմանապես՝ առանձին ենք համարակալել: Եվ ընդհակառակը՝ մեկ ընդհանուր (3-րդ) համարի տակ ենք բերել միևնույն եղանակի զույգ անվանակոչությունները (ակ-ում՝ «Վոզտատէք» և «Աղանեկն»)<sup>34</sup>:

Հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ է, որ հրատարակվում է մանրուսման եղանակների բացարձակ մեծամասնությունը՝ ըստ մի ձեռագրի: Նկատի առնելով այդ պարագան, ստորև մենք առաջ ենք բերում բնարկվող եղանակների ցանկը, նախ այնպես, ինչպես դա առկա է միջնադարյան գրչա-

27 Ն. Քահմիզյան, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, «Կոմիտասական», № 1, Երևան, 1969, էջ 191—205:

28 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 760:

29 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7209, էջ 163բ:

30 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2453, էջ 134ա:

31 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8587, էջ 190ա:

32 Հմմտ., օրինակ, բկ շարքից «Կողեսն» և «Չորուկ» կոչվող կտորները, XIII դարում գաղափարված և այժմ Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող հետևյալ երկու խաղաղքերում. համապատասխանաբար՝ № 630, էջ 81ա և № 759, էջ 146բ:

33 Այդպես է ենթադրել Կոմիտասը ևս:

34 Գրչագրում եղանակիս երկրորդ անվանումը («Աղանեկն»), հաստատագրված է առաջինի հիշտ տակը, կարմիր թանաքով (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7157, էջ 194ա):

գրում: Իսկ տողատակում էլ՝ նույն անունների նաև այբբենական ցանկը, մոտիկ ապագայում կատարվելիք համեմատական աշխատանքները թե՛ մեզ, և թե՛ ընթերցողի համար առավել դյուրացնելու նպատակով:

### Ուղիցիք միանամուտ

- Աձ
- Գզած
- Մաստնակն
- Խաւտղ
- Չազն
- Մամկոն
- Չազն
- Հիւանդ
- Գուսնակ
- Հոռոմ
- Զուլահակն
- Փորակ
- 
- 

- Ակ
- Գոուզ
- Յինա
- Եկեղեցոյ
- Քնքշակ
- Գոճնակ
- Վոզտատէք (Աղաւնեկն)
- Ծովցին
- Զահրիկ

- Բձ
- Կատուն
- Զորէքայշ
- Արծիւ
- Չազն
- Հովիւն
- Լալկան
- Անձեղն
- Չիտն

- Բկ
- Շնորհազարդն
- Հաւրնձին
- Մեղուն
- Սուրբ նշանեցին
- Կարմիրվանեցին
- Ուղտն
- Կողեոն

- \* — Գձ
- Զաւճտող
- Գայլ
- Չազ[ն]
- Սայլն
- Տոպտոպայն
- Առեղն
- Արջն
- Մշեցին

- Գկ
- Տարածումն
- Խեղեփն
- Մատն
- Առաւատերզն
- Տանուորակ
- Յանեղն
- Յետքայշ
- Գոյնիկն
- Գարրիէլն
- Մառեղն
- Չազն
- Մակեղոնացի

— Դձ  
 — Ռըմվարն  
 — Փողն  
 — Դարբին  
 — Աշկերտն  
 — Տակատ  
 — Այսաւր մտանէ  
 — Ակնջատն  
 — Հեղինատն  
 —

— Դկ  
 — Աղաշանքն  
 — Կաղն  
 — Կ[ի]ւրակոս իրէց  
 — Սարկաւազն  
 — Խեղեփ  
 — Մատն  
 — Փողն  
 — Քաղվորն  
 — Գալս[տեան]  
 — Խաշի  
 —  
 —  
 — Ով է սալ-ն է<sup>35</sup>

35 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 7157, էջ 189բ—208բ

## Այբբենական ցանկը

- |                                 |                          |
|---------------------------------|--------------------------|
| 1. Ակնջատն (դձ)                 | 34. Լալկան (բձ)          |
| 2. Աղաշանքն (դկ)                | 35. Խաշի (դկ)            |
| 3. Աղաւնեկն (կամ՝ Վոզտատէք, ակ) | 36. Խաւտող (աձ)          |
| 4. Այսաւր մտանէ (դձ)            | 37. Խեղեփ (դկ)           |
| 5. Անանուն (աձ)                 | 38. Խեղեփն (դկ)          |
| 6. Անանուն (աձ)                 | 39. Մոլցին (ակ)          |
| 7. Անանուն (դձ)                 | 40. Կաղն (դկ)            |
| 8. Անանուն (դկ)                 | 41. Կատուն (բձ)          |
| 9. Անանուն (դկ)                 | 42. Կարմիրվանեցին (բկ)   |
| 10. Անձեղն (բձ)                 | 43. Կ[ի]ւրակոս իրէց (դկ) |
| 11. Աշկերտն (դարբին, դձ)        | 44. Կողուն (բկ)          |
| 12. Առաջին կողմ (ակ)            | 45. Հաւրնձին (բկ)        |
| 13. Առաջին ձայն (աձ)            | 46. Հեղինատն (դձ)        |
| 14. Առաւատեբզն (դկ)             | 47. Հիւանդ (աձ)          |
| 15. Առեղն (դձ)                  | 48. Հոտոմ (աձ)           |
| 16. Արծիւ (բձ)                  | 49. Հովին (բձ)           |
| 17. Արջն (դձ)                   | 50. Զագն (արծիւ, բձ)     |
| 18. Գարբիէն (դկ)                | 51. Զագ[ն] (դալի, դձ)    |
| 19. Գալս[տեան] (դկ)             | 52. Զագն (խաւտողի, աձ)   |
| 20. Գալլ (դձ)                   | 53. Զագն (Մամկոնի, աձ)   |
| 21. Գղած (աձ)                   | 54. Զագն (Ճառեղնի, դկ)   |
| 22. Գոռու (ակ)                  | 55. Մակեղոնացի (դկ)      |
| 23. Գոճնակ (ակ)                 | 56. Մամկոն (աձ)          |
| 24. Գոչնիկն (դկ)                | 57. Մառեղն (դկ)          |
| 25. Գուանակ (աձ)                | 58. Մատանակն (աձ)        |
| 26. Դարբին (դձ)                 | 59. Մատն (դկ)            |
| 27. Եկեղեցոյ (ակ)               | 60. Մատն (դկ)            |
| 28. Երկրորդ կողմ (բկ)           | 61. Մեղուն (բկ)          |
| 29. Երկրորդ ձայն (բձ)           | 62. Մշեցին (դձ)          |
| 30. Երրորդ կողմ (դկ)            | 63. Յանեղն (դկ)          |
| 31. Երրորդ ձայն (դձ)            | 64. Յետքալլ (դկ)         |
| 32. Զաւտող (դձ)                 | 65. Ծնորճազարդն (բկ)     |
| 33. Քաղվորն (դկ)                | 66. Ով է սալ-ն է (դկ)    |

Երաժշտական խաղաղություն (նեմագրություն) երևույթը ծագումով բյուզանդական է: Մասնավորապես արևելյան քրիստոնեական քաղաքակրթության շրջանակներում բյուզանդական երաժշտական մշակույթի ազդեցության ներքո ձևավորված խաղաղային մի քանի ազգային համակարգերի շարքում կարևորագույն նշանակություն ունեն նախ և առաջ ռուսականն ու հայկականը, ինչպես նշել ենք այլ առիթով ևս<sup>36</sup>:

Քննարկվող երկու համակարգերում էլ երաժշտական նշանադրերի գծագրաձևերը արտաքին մի քանի նմանություններ պահելով բյուզանդական նեմերի հետ, ըստ էության խորապես ազգայնացված, ավելին՝ լայնորեն տեղայնացված են: Քե՛ հայկական և թե՛ ռուսական երգարվեստներում երաժշտական խաղաղերին տրվել են մեղեդիական ինքնուրույն (արտաքին նմանությամբ ուշադրություն գրավող բյուզանդական համապատասխան նեմերի զորությունից անկախ) նշանակություններ. այլև միջնադարյան կերպարային մրտածողությունը կապված, պատկերավոր անվանակոչություններ: Ինչպես «крюк»<sup>37</sup>, «паяк», «змеѣца», «стрела», «палка», «сорочья ножка» և այլն ռուսականում. և «փուշ» (կամ «հարուկ»), «սուր» (կամ «լարն»), «խունձ» (կամ «շերիփ»), «թուր», «ծունկ», «խաղ» և այլն հայկականում: Առավել կարևորն այն է, սակայն, որ հայկական և ռուսական խաղաղությունները, զարգանալով նաև հին (մինչև XIII-դարյան) բյուզանդական նեմագրությունը հատուկ՝ շեշտադրական-զաղափարազրային-սղազրական տիպի երաժշտական նշանագրության շրջանակներում<sup>38</sup>, ժամանակի ընթացքում զարձել են իրենց ազգային լեզուների (վերջիններիս շեշտադրության, ելևէջին ու կշռույթին), ութ-ձայնի դրություններին, ինչպես և սեփական միջավայրում կենցաղավարող երաժշտական հանկարծաբանության (իմպրովիզացիայի) տարբեր հնարանքների հետ սերտ առնչակցված նշանների ու դրանց փոխհարաբերությունների ինքնատիպ համակարգեր:

Պետք է ասել, որ ռուսական միջնադարյան երաժշտական նշանագրությունը պատմական զարգացման ընթացքում անընդմեջ վայելելով հզոր պե-

67. Ուղտն (բկ)

68. Զիտն (բձ)

69. Զորբորդ կողմ (դկ)

70. Զբբորդ ձայն (դձ)

71. Զահրիկն (ակ)

72. Զորէբայշ (բձ)

73. Զուլահակն (աձ)

74. Ռբմվարն (դձ)

75. Սայն (զձ)

76. Սարկաւազն (դկ)

77. Սուրբ նշանեցին (բկ)

(3) Վողտատէր (կամ Ազաւնէկն, ակ)

78. Տանուտրակ (զկ)

79. Տարածումն (զկ)

80. Տաւկատ (դձ)

81. Տոպտոպայն (զձ)

82. Յինա (ակ)

83. Փողն (դձ)

84. Փողն (զկ)

85. Փորակ (աձ)

86. Քնքշակ (ակ)

36 Ն. Քահմիդյան, Հիմնական դրույթներ խաղաղություն արվեստի վերաբերյալ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, № 10, 1971, էջ 132:

37 «Крюк»-ը թեև մեկ, առանձին առած նշանի անունն է, բայց, ավելի լայն առումով, ռուսական հոգևոր երգարվեստում крюки կամ знамена (знамя=նշան խոսքից) կոչվում են երաժշտական նշանագրերը (խաղաղերն) ընդհանրապես. ու խաղերով երգեցողությունն էլ՝ крюковое пение կամ знаменный распев.

38 Հայկականը՝ ընդհուպ մինչև XIX դարը: Ռուսականը՝ մինչև XVII դարը, երբ Իվան Շայգուրի նախաձեռնությամբ կիրառության մեջ մտան ձայների ձշգրիտ բարձրությունը ևս ցույց տվող «киноварные пометы» կոչված հավելյալ նշաններ:

տականություն և նյութապես հարուստ եկեղեցու նշանակալի աջակցությունը, ժամանակին հասել է մշակվածության ավելի բարձր աստիճանի<sup>39</sup>, և նոր ժամանակներում էլ ուսումնասիրվել է ավելի բազմակողմանի կերպով<sup>40</sup>:


Այստեղ որոշակի նյութի բավականին լայն ընդգրկմամբ պարզաբանված է արդեն երաժշտական հին նշանագրության մի կարևոր առանձնահատկությունը. մեղեդիական այս կամ այն ծավալի պտույտներ, դարձվածքներ, բանաձևվեր՝ պայմանական մի նշանի օգնությամբ՝ ամբողջական շրջագծերով (մասնավորապես՝ բաղադրիչ ձայնաստիճանները դատ-դատ շնշիլով) գրանելու սկզբունքը:

Ահա, օրինակ, Стрела простая с облачком կոչվող նշանը, որ ներկայացնում է մեկ աստիճանով վարընթաց շարժում, երկյակի սահմաններում, կշռությամբ 3 + 1 պատկերով.

Կամ՝ Змейца со статьею կոչվող նշանը, որ ցուցանում է մեկ աստիճանով վեր և վար շարժում, դարձյալ երկյակի սահմաններում, 1 + 1 + 2 կշռությամբ.



Եվ կամ Паук անվանվող նշանը, որի իմաստն է՝ սահուն շարժում բնույթի (դիատոնիկ) հնչյունաշարի աստիճաններով, նախ դեպի վեր՝ մինչև եռյակը, հապաղում այնտեղ, և էջը՝ մինչև մաքուր բառյակը<sup>41</sup> (և այլն).



Ընդհանուր առմամբ երաժշտական նշանագրության այս սկզբունքն է, որ կիրառվել է միջնադարում, ինչպես այլուր, այնպես և հայ իրականության մեջ: Ընդհանուր առմամբ լուսարանվում է մեղանում ևս (ճիշտ է, նկատելիորեն անշտապ մի ընթացքով)<sup>42</sup>: Մի քանի տարի առաջ հանդես էինք եկել պարզագույն խաղավորումների վերծանությանը նվիրված հոդվածով<sup>43</sup>. ու բոլորովին վերջերս էլ՝ պարզ խաղավորումների վերծանությանը նվիրված գիտական զե-

39 Այսպես, ուսական իրականության մեջ եկեղեցական երգեցողությունը զարգացավ ավելի լարված ընթացքով (ավելի բազմազան ձևերի սահմաններում, բարձրանալով մինչև բազմաձայնության կիրառումը: Համապատասխանաբար՝ ավելի մանրամասն մշակվեց այդ երգեցողության տեսությունը, շրջանառության մեջ դրվեցին ավելի բազմատեսակ երաժշտածիսական մատյաններ, ստեղծվեցին երաժշտական նշանագրության մի շարք տիպեր և այլն:

40 Երաժշտական միջնադարագիտությունը բարձր զարգացում է ապրել Ռուսաստանում, տակավին նախահնդափոխական շրջանում (XIX դարի երկրորդ կեսից), առինքնելով մի ամբողջ շարք պատրաստված մասնագետներ՝ իշխան Վ. Յ. Օղոսկուց մինչև Ա. Վ. Պրեոբրաժենսկի: Սովետական իշխանության տարիներին այս բնագավառում արդյունավետ աշխատեցին, մասնավորապես, Վ. Բելյանը, Մ. Բրաժնիկովն ու Ն. Ուսպենսկին: Ընդհանուր առմամբ ևս մի շարք երիտասարդ գիտնականներ արդեն իսկ սկսել են ինքնուրույն աշխատանքներ ծավալել սույն սպարեզում՝ Մոսկվայում, Լենինգրադում և այլ քաղաքներում:

41 М. Бражников, Древнерусская теория музыки, Л., 1972, стр. 37, 75, 108.

42 Հմմտ. մեր հոդվածը՝ Ութ-ձայնի սկզբունքները, «Էջմիածին», 1972, № 2, էջ 31—33 (ծանոթ. 27):

43 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 145:

կուցումով<sup>44</sup>: Օգտվելով վերջինից, այստեղ կարող ենք կատարել առաջընթաց հերթական քայլը: Նախ ասենք, որ մեր պարզ անվանած խաղավորումները լիովին ընդգրկում են նաև պարզագույն խաղավորումներին հատուկ հինգ նըշանները («շեշտ», «բուժ», «պարոյկ», «երկար» և «փուշ»): Այնպես որ այստեղ ի մտի պետք է ունենալ պարզագույն խաղավորումների վերաբերյալ ողջ ասվածը (այն կրկնելն անհնարին է պարզապես): Հետազոտությունը կատարել ենք նույն մեթոդով<sup>45</sup> և օգտագործել նույն աղբյուրները<sup>46</sup>: Պարզ խաղավորումները գոյացնող բուն նշաններն են՝ «սուղը», «թաշտիկը», «ծունկը», «խունճը», «թաշտն» ու «ոլորակը»: Փորձը ցույց է տալիս, որ պարզ խաղավորումների հաջող վերծանման պայմանն է՝ հստակել, նախ, հիշյալ նշաններից երեքի՝ «խունճի», «ծունկի» և «ոլորակի» հարաբերությունը: Սկսենք առաջինից:

«Խունճ»: Այս խոսքը պարսկական ծագում ունի: Բառացի նշանակում է «նազանք»<sup>47</sup>: Որպես երգչային նշանի անուն, կարող է վերաբերվել մեղեդիական որևէ «նազանի», այն է՝ նրբագեղ դարձվածքի կամ պտույտի<sup>48</sup>: «Խունճի» մասին կան մի շարք հին ու ավելի նոր տվյալներ, որոնք ընդհանուր առմամբ համաձայնելով խաղաղբիս վերորերյալ անվանակոչության իմաստի հետ, միաժամանակ իրար լրացնում են և բնականորեն հանգեցնում նրա մեղեդիական-գծային զորության ըմբռնմանը:

44 1977 թվականի հոկտեմբերին՝ ՍՍՀՄ ԳԱ հնագրագիտական հանձնաժողովի և Մաշտոցի անվան Մատենադարանի կազմակերպած՝ գիտական նստաշրջանին, ուր լայնորեն քննարկվեցին միջնադարյան դպրության ու գրքի պատմատեսական հարցերը: Պարզագույն և պարզ խաղավորումները՝ նախ և առաջ հյուսվածքով տարբերվող նշանագրություններ են: Ընդհանրապես ասած՝ այլազան երգերի խաղազրույթունները միջնադարյան ձեռագրերում դատորոշվում են նշանների ամենատարբեր քանակով՝ 3—4-ից մինչև 30—40 և ավելի: Մեր դիտումները ցույց են տվել, որ նշանների քանակը հիշյալ երգերում ավելանում է՝ նրանց մեղեդիներում ձայննդանակային նորանոր դարձվածքների ընդգրկման, տեմպի դանդաղեցման, կշռույթի կտորակման և առհասարակ՝ երաժշտական բաղկացուցչին հատկացված ձևակառուցողական դերի մեծացման դուրսնթաց: Որպես հետևանք՝ գոյանում են խաղավորումներին հատուկ հյուսվածքի (ֆակտուրայի) տարբեր տիպեր: Ուսումնասիրությունը աստիճանաբար հնարավորություն է տալիս բացահայտելու այդ տիպերից յուրաքանչյուրի պաշտոնը (ամբողջապես առած) ու՝ ի վերջո՝ նաև դրանց մեջ մտնող ամեն մի խաղանշանի դորությունը:

45 Ընդհանրապես ասած, խաղազրույթյան արվեստի մասնահատուկ խնդիրներին նվիրված միջնադարյան որևէ ամբողջական գրվածքի բացակայության պայմաններում, հայկական խաղաբանության բնագավառում հետազոտության ընդունելի մեթոդը, լայն իմաստով, ուրիշ բան չի կարող լինել, քան եթե՝ հայ երաժշտության դարավոր դարգացմանը կապված պատմատեսական հարցերի ողջ միակցության պատշաճ լուսարանությունը, երաժշտական միջնադարագիտության համաշխարհային փորձի յուրացման հիման վրա: Ավելի նեղ իմաստով, սակայն, խնդրո առարկա մեթոդը ենթադրում է խաղավոր գրչագրերի համակողմանի ուսումնասիրություն՝ դրանցում կիրառված երաժշտական նշանագրության ներքին օրինաչափությունների բացահայտման նպատակով. առանձին խաղազրերի վերաբերող միջնադարյան ասույթների հայտնաբերումն ու դրանց գիտական մեկնաբանությունը. և խաղավոր գրչագրերում ու ձայնագրյալ երգարաններում հանդիպող միևնույն երգերի համեմատական վերլուծությունը:

46 Այն է՝ Մաշտոցյան Մատենադարանի № 1576 գրչագիր բնաիր շարակետը (Երազարկ, 1328 թ.), և անցած հարյուրամյակի վերջերին էջմիածնում Ն. Քաշճյանի կազմած ձայնագրյալ ժողովածուները («Ձայնագրեալ Շարակետ», Վաղարշապատ, 1875 թ. և «Երգը ձայնագրեալք ի ժամագրոց», Վաղարշապատ, 1877):

47 Հր. Անտոյան, Հայերեն արձատական բառարան, հտ. Բ, Երևան, 1973, էջ 421:

48 «Խունճն» ունի մի այլ անվանակոչություն էլ՝ «շերեփ», որն ակնհայտաբար ծագել է խաղազրի գծագրական ձևի ու շերեփի արտաքին նմանության հիման վրա:



Գրիչ Հովհաննեսը 1407-ին իր գաղափարած Հայսմավուրքի հիշատակարանում գրում է. «Իսկ արդ, ով հոգի իմ և քաղցրիկ եղբայր, իմացիր և գայս, զի զխունջն որ եղի ի սմայ, զխոնարհ և զքաղցր բանն ցուցանէ»<sup>49</sup>:

Շրյոդերը «Արամեան լեզուի գանձ» արժեքավոր գրքում առաջ բերելով նաև հիմնախաղերի մի ցուցակ և Ամստերդամում գտնված հայ կղերականների օգնությամբ աշխատելով պարզել իրեն համար տարօրինակ այդ նշանների գործությունը, «խունճը» թարգմանում է «trinodium»<sup>50</sup>: Լատիներեն այս նորք բաղկացած է երկու խոսքից. très = երեք և pès = ոտք<sup>51</sup>, և խաղազրի ու դրան համապատասխանող դարձվածքի վերաբերությամբ պետք է նշանակի՝ «եռուտանի», կամ, առավել ևս, «եռահնչյուն»:

Շուրջ հարյուր տարի վերջ Վիլոտոն, հայկական խաղերի մասին խոսելով ըստ Կահիրեի հայոց մայր տաճարի սարկավազապետի տված բացատրության, ու նաև ըստ նրա համար հատկապես ցուցադրված (երգված) համապատասխան օրինակների, «խունճի» վերաբերյալ տեղեկացնում է հետևյալը. «Օրինակը, — գրում է նա, — որ մեզ համար երգվեց այս նշանի կապակցությամբ, բաղկացած է մեկ, ապա և կես աստիճանով անշտապ և բնուղիղ (դիատոնիկ) կերպով իջնող երեք հնչյուններից»<sup>52</sup>:

Անցած հարյուրամյակում, Կ. Պոլսի հայ եկեղեցական երաժիշտների շրջանակներում «խունճը» դասվել է պարզ, այսինքն շափական մեկ միավոր ցուցանող խաղազրերի շարքը: Այդպես է վարվել, մասնավորապես, Ե. Տընտեսյանն էլ, որ հատուկ ուսումնասիրել էր խաղազրություններում շափի և կշռույթի նշանակման հարցերը<sup>53</sup>:

Ամփոփելով, գալիս ենք մի հետևություն, որ հաստատվում է նաև մեր կատարած համեմատական վերլուծման արդյունքներով<sup>54</sup>: Ըստ այդմ, «խուն-

49 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 4684, էջ 530ր: Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, ժն գարի հայերեն ձեռագրերի՝ հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 68:

50 J. Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amstelodami, 1711, էջ 243:

50 A. Малинин, Латинско-русский словарь. М., 1952.

52 M. Villoteau, Description de l'Égypte, t. XIV, Paris, 1826, p. 330.

53 Ե. Տնտեսյան, Նկարագիր երգոց Հայաստանեայց եկեղեցու, Կ. Պոլիս, 1874, էջ 21:

54 Անհրաժեշտ է նշել, որ համեմատության համար բնորոշված աղբյուրները՝ ինչպես խաղազր գրչագրերը (նույնիսկ փորձված գրիչների ձեռքով գաղափարվածները), այնպես և ձայնազրյալ ժողովածուները, պահանջում են զգաստ, գործուն-ստեղծագործական մտեցում: Հիշենք, թե առատարակ ինչքան հազվադեպ են պատահում բնազրի տարբեր աղձատումներից, զան երաժշտական ձեռագրերի դեպքում ևս, որոնց մեջ գրեթե չկան խաղերի ավելորդագրություններից, թերագրություններից և ամեն տեսակ պատահական սխալներից զերծ մատյաններ, չխոսելով ավելի լուրջ խաթարումների մասին: Հետևաբար, խաղազրության արվեստի ներքին օրինաչափությունների բացահայտմանը զուգընթաց, անհրաժեշտ է, հենվելով դրանց վրա, ըստ հարկին սրբագրել այս համայն ձեռագրում նկատվող անհշտությունները: Նմանապես, պետք է վերացնել ձայնազրյալ ժողովածուներում տեղ գտած վրիպակները, որ համեմատաբար դուրին իրագործելի է:

Շատ ավելի դժվար է հետևյալը: Հայ իրականության մեջ խաղազրության արվեստը կատարելագործվել է մինչև XIV—XV դարերը, այն դեպքում, երբ բուն երգեցողությունը, իրեն հատուկ հանկարծարանական նախասկիզբով, շարունակել է զարգանալ հետագա հարյուրամյակներում ևս, մշակութային անկման պայմաններում: Այդ պատճառով, ձայնազրյալ ժողովածուներում, որոնք ներկայացնում են հայ եկեղեցական երգեցողության ուշմիջնադարյան վիճակը, խաղազր գրչագրերի համեմատությամբ, գրեթե յուրաքանչյուր քայլափոխին պա-

ճի՞ մեղեդիական-գծային զորությունն է՝ երկու աստիճանի սահուն էջք, որ գոյացնում է երեք հնչյունից բաղկացած եռյակ ձայնամիջոցը շափական մեկ միավորի սահմաններում: Նրա կշռույթային ձևավորումը ազատ է, և կարող է հանգել հետևյալ տարրերակներից մեկին<sup>55</sup>.



Խաղազրիս գծային զորության քննության կապակցությամբ Ռ. Աթայանը ևս գալիս է վերորերյալ հետևության: Նա տատանվում է «խունճի» շափական արժեքի վերաբերմամբ: Դա բացատրվում է նրանով, որ «խունճին» համապատասխանելիք մեղեդիական դարձվածքների մեծ մասում, որոնք նա ընտրել է ձայնագրյալ Շարակնոցից, շափական արժեքը ակներևաբար գերազանցում է մեկ միավորից<sup>56</sup>: Սակայն քննությունը ցույց է տալիս, թե տվյալ դեպքում մենք գործ ունենք պատմական դարգացման ընթացքում կայունացած փոփոխություններից մեկի հետ, որ անցել է ձայնագրյալ Շարակնոցին:

Նրանում «խունճին» համապատասխանող միջնադարյան հարազատ մեղեդիական ձևերը քանակային առումով թեև քիչ են, բայց խիստ ցուցանշա-

տահում են երկու կարգի անհամապատասխանություններ: Դրանց մի մասը պետք է բացատրվի՝ այս կամ այն խաղանշանին վերաբերող մեղեդիական դարձվածքների պատմական դարգացման (փոփոխության) փաստով: Մնացածը՝ նրանով, որ համեմատություն կատարելիս, մենք իրականում ամեն անգամ բաղդատում ենք մի կողմից՝ որևէ առանձին, որոշակի տեղի ու ժամանակի հետ կապված, հետևաբար և Մայր - Հայաստանի թեկիլիկիայի տարրեր կենտրոններին հատուկ երգեցողության տեղական ավանդույթներն անդրադարձնող խաղավոր ձևադիր. և մյուս կողմից՝ ամփոփիչ բնույթ կրող մի ձայնագրյալ ժողովածու, որը յուրատեսակ հանրագումարային պատկերացում է տալիս այն մասին, թե ինչ վիճակում է հասել մեզ ավանդապահ երաժիշտների հիշողության մեջ դրոշմված հայ հոգևոր երգերի կորստից փրկված միակցությունը:

55 Փորշլազներ, նախշլազներ և նման դարգարաններ, որոնք հայ միաձայնային երաժրշտարվեստի պայմաններում կատարվում են զգալի կշռական, և որոնք շափավոր ընթացքի և այս կամ այն աստիճան թափանցիկ հյուսվածքի օտեղծագործություններում հաշվի են առնվում որպես «խունճը» կազմող երեք հնչյուններից մեկը. ծանր երգեցողություններում կիրառվում են ավելի ազատ և քննարկվող դարձվածքում կարող են հայտնվել որպես հավելյալ դարգարաններ, փաստորեն գոյացնելով շորս-հինգ և նույնիսկ վեց հնչյունի պատույտներ:



56 Տե՛ս նրա՝ Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 245—249: Հիշեցնենք, որ աշխատության մեջ (էջ 157) հեղինակը հատուկ բարձրացրել է ձայնագրյալ արգի ժողովածուները խաղավոր միջնադարյան ձևադիրի հետ համեմատելու որոշակի սկզբունք կամ եղանակ մշակելու հարցը, սակայն զգուշացել է որևէ պատասխան ձևակերպելուց: Ուշադիր քննելով իր կատարած համեմատությունները, նկատեցինք, որ նա լռելիայն կիրառել է համեմատության՝ վիճակագրական մեթոդը: Այսինքն հաշվի է առել այն, թե տվյալ խաղանշանին ձայնագրյալ ժողովածուներում առավել հաճախ ինչն (ո՞ր ձայնաստիճանը կամ փոքրածավալ պատույտն) է համապատասխանում: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ համեմատական վերլուծությունը անպայման արդյունավետ է լինում, երբ զուգահեռ քննվում են հնարավորին շափ մեծ կազմավորումներ (երգի ամբողջական տունը, կամ կիսատունը և կամ տողը), և երբ գիտակցվում է, որ վիճակագրական տվյալները կարող են ունենալ օժանդակ, մասնավոր, բայց ոչ հիմնական նշանակություն:

նական են: Գրանցից մեկը հանդիպում է Մենդելսոնի «Խորհուրդ մեծ» շարականի առաջին կիսատան մեջ<sup>57</sup>:



Մեծատաղանդ Խորենացու վառ, ինքնատիպ ստեղծագործություններից մեկը՝ շարականս մեզ հասել է նվազագույն աղճատումներով<sup>58</sup>, որոնք, բարեբախտաբար, չեն տարածվել «խունճի» վրա, չնայելով երգի «ծանր» ընթացքին, որն առհասարակ առիթ կարող էր տալ քննարկվող նշանի հետ զուգորդված վանկը ևս երկարաձգելու:

«Ծունկ»: Զուտ հայկական խոսք է, և նկատի է առնված նրա բառարանային նշանակությունը: Այստեղից պարզ է, որ սույն անվանակոչությունը (ինչպես և մի ամբողջ շարք այլ խաղանուններ), կաղմված է համապատասխան նշանի գծագրաձևի արտաքին նմանության հաշվառման սկզբունքով: Ըստ Խաչատուր էրզրումեցու, տվյալ դեպքում այդ նմանությունը վերաբերում է նաև «ծունկ» նշանը կրող վանկի հնչողության ձևին, այսինքն՝ ձայնի շարժման ձևովին<sup>59</sup>: Դա նշանակում է, որ, ըստ էրզրումեցու, այստեղ մենք նույնպես գործունենք ելևէջային վարընթաց քայլի հետ: Ասենք՝ այդ մասին պետք է դատել նաև հետևյալ փաստից. «ծունկը», որի շափական արժեքը նույնպես հավասար է մեկ միավորի, շատ մոտիկ է արդեն քննարկված «խունճին», ինչպես իր գծագրաձևով, նույնպես և, ոչ հազվադեպ, կիրառման պայմաններով:

Անցյալում դրա վրա հատուկ ուշադրություն է դարձրել Կոմիտասը: Նրա խաղագիտական ձեռագրերից մեկում հիշյալ երկու նշանների փոխադարձ կապն այնպես է լուսաբանվում, որ «ծունկի» երգչային նշանակությունը նույնիսկ առաջնային է համարվում «խունճի» վերաբերությամբ, որը մեկնաբան-

<sup>57</sup> ՏԷՍ  $\frac{14p}{66}$  (այստեղ և ստորև գծիկով բաժանված թվանշանները ցույց են տալիս

վերն հիշատակված գրչագիր-խաղափոր և տպագիր-ձայնագրչալ շարակնոցների համապատասխան էջերը. ձայնագրչալ ժողովածուն ժամագիրք լինելու դեպքում գծիկից ցած գրվող թվանշանի կողքին ավելացնում ենք «ծ» տառը. բերված օրինակում «խունճը» դրված է վերջին խոսքի առաջին վանկի վրա):

<sup>58</sup> Այստեղ չենք ուղղել դրանք, նպատակ ունենալով մոտ տպագրված անդրադառնալու շարականիս ամբողջ տան խաղագրությանը:

<sup>59</sup> Ն. Քահնիզյան, Խաչատուր էրզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 11, էջ 72:

վում է որպես նույն «ծունկը», ցածից ավելացված գծիկով: Այս դիրքերից՝ կոմիտասը առաջ է բերում «խունճի» գծագրաձևի բաղկացուցիչները («ծունկը»

և դրան ավելացված գծիկը)



և բացատրում. «խունճ»—ծնկի

իջման ընթացքը<sup>60</sup>: Այսինքն, թե «խունճի» դեպքում ևս մենք ունենք փաստորեն «ծունկին» հատուկ ելևէջային վարընթաց նույն քայլը, որն այստեղ ընդգրկում է մի երրորդ հնչյուն էլ դեպի ցած: Եթե դա այդպես է, ապա «ծունկը», ի տարբերություն «խունճի», բաղկացած է պարզապես երկու հնչյունից, որոնք գոյացնում են վարընթաց սահուն մի պտույտ, այս դեպքում՝ մեծ կամ փոքր երկյակ ձայնամիջոցը, շափական մեկ միավորի սահմաններում: «Մունկի» մեղեդիական-գծային զորությունը այսպես է հասկանում Պ. Վազները ևս<sup>61</sup>: Եվ իրոք, համեմատական վերլուծության տվյալներով էլ՝ հատկապես սույն տիպի պտույտներն են (այն բոլորից, որոնք հանդիպում են ձայնագրյալ ժողովածուներում), որ առավել համողիչ են, որպես «ծունկը» հարազատորեն արտահայտողներ: Ահա օրինակ<sup>62</sup>.

ԱԿ Չափաւոր



«Ոլորակ»: Հայերեն խոսք է՝ ոլորել քայից<sup>63</sup>, իր գծագրաձևով ու մեղեդիական-գծային նշանակությամբ շատ մոտիկ է պարզագույն խազագրություններից արդեն ծանոթ «պարոյկ» խազագրին: Արմաքնապես վերջինից տարբերվում է փոքր-ինչ ավելի ոլորուն հանդույցով:

Պետք է ասել, որ մեր ուշ-միջնադարյան գրիչներն ու երգիչները շատ հեղ «ոլորակը» շփոթել են, մի կողմից՝ «ծունկի», մյուս կողմից՝ հիշյալ «պարոյկի» հետ<sup>64</sup>: Եվ դա, բնականաբար, անդրադարձել է ձայնագրյալ ժողովածուներում: Այդ (և ուրիշ) խազագրերի որոշ խառնաշփոթումը զլխավորապես նրանից է առաջացել, որ ծանր և ստեղծի տիպի ստեղծագործություններում, դանդաղեցված ընթացքի և կոտորակված կշռույթի պայմաններում, այս կամ այն նշանին համապատասխանած մեղեդիական պտույտները ուռձացել են փոքր

60 ՉԱԳԱԹ, Կոմիտասի դիվան, ծրար. N 639, էջ 18:

61 P. Wagner, Neumenkunde (Paläographie des Liturgischen gesanges), Leipzig, 1912, s. 74 (շահեկան է դիտել, որ ըստ Վազների, մեր «ծունկը» իր յուրահատուկ զուգահեռներն ունի թե՛ բյուզանդական և թե՛ լատինական նեմագրության մեջ. համապատասխանաբար՝ Ἀπόστροφος և Apostropha).

62 Տե՛ս  $\frac{286p}{924}$  («ծունկը» գրված է վերջին խոսքի առաջին վանկի վրա):

63 Մրա ռուսական բուն զուգահեռն է «Крюк» անվանակոչությունը երաժշտական նշանագրության մեջ, որ դարձյալ գալիս է закручивать (= ոլորել) քայից:

64 Դրան նպաստել է, օրինակ, մի շարք գրիչների կողմից արագագրությամբ տարվելը, որպիսի դեպքում ակամայից արհամարհվում են շատ խազագրերի գծագրաձևերի տարբերակիչ մանրամասները:

տեղումների նոր հնչյուններով, անցիկ և օժանդակ ձայնաստիճաններով, տարբեր զարդարանքներով, որոնք բողբոջելով այդ պտույտների սկզբնական շրջագծերը, դրանք զգալիորեն մոտեցրել են իրար:

Բայց «ոլորակը» շափական երկու միավոր (երբեմն ևս ավելին) է ցուցանում, որով հատակ տարբերվում է «ծունկից» (ինչքան էլ որ վերջինս արտաքինապես նման լինի առաջինին): «Ոլորակի» և «պարոյկի» տարբերություններն ավելի նուրբ են, բայց որսալի են: Ինչպես ցույց են տալիս դիտողությունները, «ոլորակը»՝ «պարոյկի» մեղեդիական-զծային իմաստի հետագա խորացումն է ներկայացնում<sup>65</sup>: «Ոլորակին» համապատասխանող մեղեդիական պտույտը զգալիորեն ավելի ոլորուն է, և կամ, առնվազն՝ պետք է կատարվի ավելի ոլորուն: Դա պարզ երևում է՝ հետևյալ օրինակում, որ բնագրվում է թե՛ «պարոյկ», և թե՛ «ոլորակ» նշանները<sup>66</sup>:

Դև Չափաւոր .

Այ-սօր հրեշ-տակք ի բար - ծուն. ու -  
րա - րա . ցան ընդ մարդ - կան.

«Ոլորակը», ինչպես և մի շարք այլ նշաններ, կարող է ցուցանել նաև վանկի ավելի բնորոշակ երկարաձողումներ, երբ երգը ծանր ու հանկարծաբանական տիպի է, և կամ երբ այն (երգն) աչքի է ընկնում կատարման ընթացքում հանկարծաբանական արտահայտիչ ազատություն պահանջող տարբեր հատվածներով: Ընդհանրապես ասած, նման հատվածներն համընկնում են հատուկ բնագծով, լայնարձակ վերջնահանգաձևերի, սկզբնական ծաղկեցված բանաձևերի, այլև ստեղծագործությունների մեջ հանդիպող և բարձրակետային բնույթ կրող մեղեդիական հարուստ կազմավորումների հետ<sup>67</sup>: Դրան դեռևս կվերադառնանք:

«Քաշա»: Սթե բնորոշներ, որ այս խոսքը, գրության ու արտասանության ձևով «տաշտի» մեկ տարբերակն է, ապա այն՝ պահլավական ծագում ունի, նշանակում է «առաջան, կոնք, տաշտ, թաս, բաժակ»<sup>68</sup>:

65 Դա նկատել է տակավին Իգն. Կյուրեղյանը: Տե՛ս նրա՝ Լուսարանութիւն խազից և երգեցողութեան շարականաց, «Բազմավէպ», 1904, № 3, էջ 128:

130ր

66 Տե՛ս  $\frac{130ր}{446}$  (հարկ է նկատել, որ օրինակում «պարոյկի» մեղեդիական պտույտը խց-

տացված է շափական մեկ միավորի մեջ):

67 Պարզ (շափական մեկ միավորի արժեքով) վանկերի տարբեր շեշտումները, մեծ և մեծագույն (երկու և ավելի շափական միավորի արժեքով) վանկերի երաժշտական ցցուն մասնավորումներն ու արձակ ոլորումները, որոնց միջոցով բնագծվում են վերոհիշյալ հատվածները, այս ամենը տրամաբանորեն դանդաղ է կազմավորվել միջնադարյան արվեստի մեկ հարթության վրա:

68 Ըր. Սևառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Երևան, 1932, էջ 778: Անդրադառնալով խոսքիս՝ որպես խաղաղի անվանակոչության, Աճառյանը հիշեցնում է նրա գրու-

Խաչատուր էրգրումեցին քննարկվող խոսքը հասկանում է նրա բառարանային իմաստով և բացատրում, որ «թաշտ» կրող վանկի հնչյունավորման ժամանակ երգչի ձայնը կարծեք զծագրում է պղնձյա տաշտի ընդհանուր շրջագծերը (այսինքն ձայնը նախ իջնում, ապա բարձրանում է): Հիմնախաղերի շարքում «թաշտը» համարելով տասներորդը, տեսաբանը գրում է. «Եւ նա թաշտ անուանակոչի, որ տասերորդ ենթակայի: Զվանգ նմանեցուցանէ այնմիկ, որ պղնձեայ տաշտ է»<sup>69</sup>:

Սակայն, նախ՝ ձայնի նման շարժումը այս կամ այն ձևով կապված է նաև այլ խաղաղերի դորությունը: Երկրորդ, այդ շարժումը «թաշտի» մեղեդիական-զծային նշանակության գլխավոր, կայուն կողմը չէ: Եվ առհասարակ՝ «թաշտ» և «տաշտ» խոսքերը նույնացնելն էլ տակավին համոզեցուցիչ չէ:

Առ այսօր հստակ պատկերացում չկա խաղաղերի շափական արժեքի մասին ևս: Ըստ Տնտեսյանի, այն շափական երկու միավորի արժեք ունի<sup>70</sup>, ըստ Աթայանի՝ մեկի<sup>71</sup>: Վերջինիս դիտումների համաձայն, «թաշտը» կարճ վանկ ցուցանող «սուղի» հետ միասին, որպես ընդհանուր կանոն, հանդես է գալիս երգերի մեղեդիական սկզբնական դարձվածքներում, և հաջորդելով «սուղին», համընկնում է բառաշեշտի հետ: «Թաշտի» մեղեդիական նշանակությունը, ըստ Աթայանի, հանդում է քառյակային թռչիլին, ֆունկցիոնալ առումով լադի որոշակի ձայնաստիճանների կիրառումով: Պետք է ասել, որ այս բացատրությունը ևս վերաբերում է «թաշտի» մեղեդիական դորության լոկ մեկ կողմին:

Մեր որոնումները հնարավորություն են տալիս առաջընթաց նոր քայլ կատարել՝ «թաշտի» երաժշտական միջնադարյան բմբռնումը բացահայտելու գործում: Ամենից առաջ՝ նշանիս անվանակոչության մասին: Ըստ բոլոր տրվյալների, այն Täschdid կոչվող տարբերիչ (դիակրիտիկ) նշանի անվան հայացված ձևն է. նշանի, որ պարսկաարաբական գրականության մեջ ցույց է տալիս տվյալ տառի, նրա հնչումի սուսակացումը՝ կրկնապատկումը<sup>72</sup>: Համենայնդեպս, «թաշտի» երգչային նշանակության մեջ ամենակարևոր և ամենակայուն երևույթը՝ երաժշտական (տոնիկական) շեշտի ու հայերենի բառային (դինամիկ) շեշտի համընկնում-գումարումն է:

Մեզ հաջողվեց հաստատել, առաջին հերթին, «թաշտ» խաղաղերից սերված, «թաշտիկ» (այն է՝ փոքր «թաշտ») կոչվող և ինքնուրույնաբար գործող

մյան «դաշտ» ձևն էլ (տե՛ս նաև հատ. Ա, էջ 624), որ շատ հազվադեպ է պատահում, և կանգ առնում «թաշտ» ձևի վրա, որ ամենարնգհանրացածն է: Այս կապակցությամբ նա տալիս է հետևյալ ծանոթությունը ևս, որ մեկնության կարոտ է. *jaštgar*, — գրում է նա, — «անուն երաժշտի միոջ»: Պարզվում է, որ այդ անունն էլ ծագում է *jašt* «կոնք» բառից, իսկ վերջինս էլ՝ *jaš* «տաշելով շինել» արմատից: Հիշեցնենք, որ Պետերմանն էլ ժամանակին հակված է եղել «թաշտը» հայերեն «թաշել» (հառաչել, հեծել) բառի հետ կապելու (հմտա՝ *H. Petermann, Über die Musik der Armenier, ZDMG, Band V, Leipzig, 1851, s. 365*);

69 Հայկ. ՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 11, էջ 72:

70 Ե. Տնտեսյան, նշվ. աշխ., էջ 21:

71 Ռ. Արայան, նշվ. աշխ., էջ 233—239:

72 Նաֆիսի-Ֆարխանգե Նաֆիսի, հատ. 2, Թեհրան, 1318—19 (÷ 662 = 1940—41) (պարսկ.):

նշանի առկայությունը<sup>73</sup>: Նրա շափական արժեքն է՝ մեկ միավոր, որով և տարբերվում է «թաշտից»: Բայց վերջինիս նման, «թաշտիկը» ևս (նրան համապատասխանող հնչումը), կարող է լինել ոլորումով կամ առանց ոլորումի: Դիմենք հետևյալ օրինակին<sup>74</sup>:

Աս Ջափաւոր կամ Միջակ

Ինչպես տեսնում ենք, «թաշտիկը» ընկնում է շեշտվող վանկի վրա: Ընդ նմին, նույն այդ վանկի վրա ձայնը բարձրանում է<sup>75</sup>: Այսպիսին են նաև ոլորում ենթադրող «թաշտիկի» կիրառման պայմանները:

«Թաշտը» իր կրկնակի (երկու միավորի) տևողությամբ զգալիորեն ավելի է ընդգծում շեշտակիր վանկը, նույնիսկ, երբ կատարվում է առանց ոլորումների: Օրինակ<sup>76</sup> (տես էջ 131):

Անշուշտ, այս բոլոր դեպքերում շեշտակիր վանկի հետ փաստորեն ընդգծվում է նաև տվյալ խոսքն ամբողջապես: Դա առավել ակնառու դրսևորվում է, երբ «թաշտը» ոլորումով է կատարվում: Եվ այդ դեպքում «թաշտին» հատկացվող տևողությունը կարող է զգալի գերազանցել շափական երկու

73 Հմմտ. մեր հոդվածը՝ Հիմնական խաղերի միակցությունը, «Բանբեր Մատենագարանի», № 9, Երևան, 1969, էջ 117—118:

273ա  
74 Տե՛ս  $\frac{273\text{ա}}{\text{ժ. 318}}$ :

75 Իսկ «սուղ» նշանի զորության ոլորտին վերաբերող առաջին երեք վանկերն էլ շատ զործուն նախաշեշտ են գոյացնում, որով շափակչությունից միջոցներով ևս առանձնացվում է և բաժշտականորեն (բարձրությամբ) և ուժականորեն (բառաշեշտով) աչքի ընկնող վանկը: «Թաշտիկի» (ու նաև «թաշտի») հետ զուգորդվող «սուղ» նշանի կիրառման այս ձևերում ուշադրություն է հրավիրում մի հանգամանք ևս: «Սուղը» նման զուգորդություններում դրվում է լոկ մեկ անգամ, գրական բնագրի առաջին վանկի վրա, և մյուս բոլոր վանկերը (ինչքան էլ լինեն), մինչև «թաշտիկի» (կամ «թաշտի») հանդես գալը, մեկնաբանվում են որպես կարճ վանկեր:

122բ  
76 Տե՛ս  $\frac{122\text{բ}}{\text{ժ. 130}}$ :

ՀԱՂ ՅՈՐՅՈՐ ՄԻՋԱԿ




Տա - րած եւլ ձեռք ընդ ձե - ուաց ոտք ընդ ո - տից ըն րա - նալ - եաց,



փայտ ընդ փայտի դա - ուրն պըտ - դոյն, կեանք ընդ մա - հու փո - խար կե - լով.



ի մէջ եր - կուց ա - նօ - թի - նաց կայր մեր - կա - ցեալ տուօղն օ - թի նաց,



3. *Львов*. Ж. Дени в своем переводе армяно-кыпчакской так называемой «Венецианской хроники» писал, что в 1505 г. «король Александр разрешил армянам Львова печати» (в оригинале *տաճաղապարհ*)<sup>133</sup>. В действительности среди декретов, изданных польским королем Александром (1501—1506) в пользу львовских армян, нет документа подобного содержания. В данном конкретном случае Ж. Дени снова допустил ошибку, переводя термин *տաճաղա* как печать. Как показывает ознакомление с источниками, Александр 6 мая 1505 г. освободил львовских армян от таможенной пошлины (= армяно-кыпчакское *տաճաղա*)<sup>134</sup>, что, конечно, и имел в виду анонимный составитель «Венецианской хроники». Несомненно, львовская печать (как институт) гораздо старше 1505 г.

Путем логических рассуждений можно считать, что львовская печать (как институт) появляется одновременно с возникновением армянской общины во Львове во второй половине XIII в. В источниках этот институт упоминается, по-видимому, впервые только в 1519 г. (в тексте Львовского судебника). Данное упоминание, однако, совершенно явно относится к периоду до 1469 г., т. е. до ликвидации поста армянского войта и независимого армянского суда в городе. В львовском судебнике (статья 88) говорится о том, что документы о продаже недвижимого имущества должны заверяться «печатью судьи армян» («sigillum iudicis Armenorum») <sup>135</sup>. К статье 88 приложен комментарий, указывающий, что в «настоящее время» (1519 г.) роль армянского судьи выполняет войт города. Основной текст статьи 88—вместе с упоминаниями о «печати судьи армян»—соответствует, таким образом, условиям, господствовавшим во Львове до 1469 г.

Конечно, вопрос о том, идентична ли печать, описанная под № 3, печати, существовавшей до 1469 г., остается открытым.

Решение королевских комиссаров, разбиравших в 1647 г. конфликт между двумя группировками старейшин—приверженцами армяно-григоринской церкви и приверженцами унии—очень хорошо иллюстрирует вопросы, связанные со значением печати и той ролью, которую хранители печати играли в общественной жизни львовской колонии. В своем

<sup>131</sup> Ստեփանոսի Ռոշկայ. Ժամանակագրութիւն կամ տարեկանը եկեղեցականը, հրատ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1964, էջ 105.

<sup>132</sup> Мы обратили внимание на эту ошибку в статье Les historiens arméniennes en Ukraine au XVIII-e siècle, „Revue des études arméniennes“, N. S., t. 9, Paris, 1972, стр. 389.

<sup>133</sup> J. Denu, указ. соч., стр. 39; армяно-кыпчакский текст смотри там же, стр. 38, а также Ղ. Ալիշան, Կամենից, Տարեգիրք հայոց Անատոանի և Ռումելիոյ հաւաստեալ շախտածոք, Վեննայի, 1896, էջ 117.

<sup>134</sup> См. публикацию декрета в кн. F. Blischoff, Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg, Wien, 1864, стр. 34—36.

<sup>135</sup> Corpus iuris Polonici... стр. 452, 514—515.

решении от 12 декабря 1647 г., которое из-за важного значения для рассматриваемого вопроса приводим в обширной выдержке, комиссары отметили, что «в отношении выборов примариев—старейшин для хранения печати армянской нации, привилегий [и] духовных актов, по древней традиции и согласно привилегиям (особенно согласно декрету покойного короля Сигизмунда-Августа<sup>136</sup>, польского короля, и других) ясно, что общественные акты и реестры всегда хранились в общественном месте, называемом «хуц»<sup>137</sup>. Также из судебного-процессуального кодекса<sup>138</sup> берется [и то], что из двенадцати постоянно проживающих старейшин нужно избирать двух, которые бы заведовали порученной им печатью. В связи с тем, что сейчас их лишили этого вышеуказанного места, в котором должен был бы находиться архив упомянутых общественных актов и реестров, печать не может находиться у двух [старейшин], избранных согласно указанному праву [...]

Что касается печати. По ее (комиссии.—Я. Д.) распоряжению [необходимо], чтоб возможно скорее из числа 12 старейшин избрали двух (а подобные выборы согласно судебному-процессуальному кодексу или же юридическому уставу должны в дальнейшем проводить ежегодно), соблюдая, однако при том, чтоб избирали на этот пост людей серьезных, охраняющих общественную пользу и проживающих постоянно [в городе]. Они должны восседать в общественной резиденции на подобающих им местах в соответствии со временем своего избрания в старейшины. А если бы когда-нибудь случилось так, что [те] оба, верности которых поручили печать, до окончания года ушли из этого мира, или если бы ушел в отставку один из них—тогда, не дожидаясь обычного срока выборов, должны на протяжении шести недель приступить к избранию других, которым разрешалось бы [хранить] печать. О таких выборах должны заранее получить привилегию е[го] м[илости] короля. А потому, что в настоящее время много людей армянской нации различным образом оторвано от святой католической римской церкви, до тех пор, пока будут держаться различного понимания религии, должны избирать до печати одного, а до [совета] старейшин шесть человек, фактически объединенных с католической церковью»<sup>139</sup>.

*За. Львов.* По литературе известна еще одна львовская печать, описана О. Бальцером, оттиск которой нам пока не удалось рассмотреть в оригинале. Из публикации (осуществленной без репродукции)<sup>140</sup> берем следующие данные.

<sup>136</sup> Имеется в виду декрет Сигизмунда-Августа от 13 июня 1549 г. В тексте декрета об армянской печати не говорится. Оригинал декрета в ЦГИА УССР во Львове, ф. 131, л. д. 467; публикацию см. *F. Bischoff*, указ. соч., стр. 59—61.

<sup>137</sup> По армяно-кыпчакски «квартира, помещение, комната»; в данном случае—резиденция львовского армянского совета старейшин.

<sup>138</sup> Имеется в виду процессуальный кодекс львовских армян 1604 г. (см. *Я. Р. Дашкевич*, *Армянские общественные печати...*, стр. 244).

<sup>139</sup> ЦГИА УССР во Львове, ф. 52, оп. 1, д. 144, л. 20.

<sup>140</sup> *Corpus iuris Polonici...*, стр. 402.



Агнец, который держит передней лапой крест из трехраменным (так в публикации!) знаменем. В легенде надпись латинскими буквами:

+SIGIL+IVRIS+ARMENORVM+LEOP,

т. е. „*Sigillum iuris Armenorum Leopoliensium*“ („печать права львовских армян“). Круглая. Диаметр 23 мм. Бумажно-сургучный оттиск. (Других данных нет).

Хранение: Ягеллонская библиотека в Кракове, рукопись № 12, л. 30 (1619 г.).

Печать эта действительно уникальна. В больших залежах львовского документального материала нет даже малейшего намека на существование печати львовского армянского суда с латинской легендой (для сравнения—известно 34 оттиска львовской печати с армянской легендой и 17 оттисков киевской печати с армянской легендой, употребляемой в функции львовской печати). По-видимому, печать с латинской легендой употреблялась только в исключительно торжественных случаях как «особая печать» (как в данном случае—для засвидетельствования копии Львовского судебника) и не вводилась в ежедневный обиход. Так или иначе, приведенная выше длинная выдержка из документа 1647 г. явно касается только одной печати, той, которая играла практическую роль («обыкновенная печать») в делопроизводстве, т. е. печати с армянской легендой.

4. *Замостье*. Найден еще один бумажно-восковый оттиск замостской печати на документе, хранимом в ЦГИА УССР во Львове, ф. 52, оп. 2, д. 587, л. 1079 (1731 г.). Печать сохранилась очень плохо.

Эта находка позволяет передвинуть время существования армянского войтовства, по крайней мере, по 2 октября 1731 г. (тогда был составлен указанный выше документ). Ранее считалось, что армянское самоуправление в Замостье просуществовало только по 1730 г.

В Замостье печать называлась (в корроборационной формуле): „*pieczęć sądu wójtowskiego ormiańskiego zamojskiego*“ („печать войтовского армянского замостского суда“)<sup>141</sup> или же „*zwykła pieczęć urzędu naszego*“ („обыкновенная печать нашего присутствия“)<sup>142</sup>.

5. *Станислав*. Новые находки позволяют более точно изложить материал, касающийся армянских печатей из Станислава. В настоящее время выявлено две разновидности печатей, отличающихся одна от другой размерами и, в некоторой степени, изображением. Итак:

5а. Агнец, обращенный фигурой влево, с головой, повернутой вправо. Фигура агнца перекрывает расположенное косо и заканчивающееся крестом древко со знаменем с кавалерским крестом на нем, развернутым вправо. Агнец стоит на покрытом дворянской короной квадратном, округленном внизу щите с гербом «Пилява» (тройной крест без правого ниж-

<sup>141</sup> М. Zakrzewska-Dubasowa, *Ormianie Zamojscy i ich rola w wymianie handlowej i kulturalnej między Polską a Wschodem*, Lublin, 1965, стр. 274 (1628 г.).

<sup>142</sup> Там же, стр. 285 (1648 г.).

него конца). По сторонам щита пальмовые ветви. Пунктирный ободок. Легенда армянскими буквами:

+ ՄՈՂՈՒՐՍՍ ՍՏԱՆԻՍՏԱՎՈՎՍ ԲԱՂԱՔԻՆ  
ՀԱՅՈՅ Դ[Ա.]Տ[Ա.]ՍՏԱՆԻ Է

т. е. печать армянского суда города Станислава<sup>143</sup>. Вокруг надписи пунктирный ободок. Рис. 5а. Овальная. Диаметр 32×37 мм. Бумажно-восковый оттиск, воск зеленый.

Хранение: ЦГИА УССР во Львове, ф. 52, оп. 2, д. 192, стр. 675 (1686 г.); там же, д. 196, стр. 2184 (1695 г.).

В корроборационной формуле печать называется „pieczęć zwykła pasza mieyscka“ („наша обыкновенная городская печать“)<sup>144</sup>.

Фотокопия рисунка этой же печати (несколько больше оригинала и не особенно точного) экспонируется в Ивано-Франковском краеведческом музее— инвентарный номер 514 (СКМА № 93). Происхождение экспоната неизвестно, так как старые (периода до 1939 г.) инвентарные книги не сохранились. Во всяком случае, печать, из которой был сделан рисунок, датировалась XVII в., что отмечено на обороте фотокопии.

Согласно привилегии киевского воеводы Андрея Потоцкого (собственностью которого являлся Станислав) от 14 января 1677 г. печать армянского присутствия («urzedu») должна была употребляться в определенных случаях одновременно с печатью станиславского замка. Армянской и замковой печатями нужно было опечатывать ящики, в которых складывали имущество армянских купцов, происходивших из-за пределов города, но умерших в Станиславе<sup>145</sup>.

В дальнейшем, по-видимому, была изготовлена вторая печать, известная по репродукции Ч. Хованца и по уже опубликованной нами в 1974 г. находке. Дополняем это описание, оставляя за ним прежнюю нумерацию.

5. Агнец, обращенный фигурой влево, с головой, повернутой вправо. Фигура агнца перекрывает расположенное косо древко со знаменем, развернутым вправо. Агнец стоит на квадратном с округлением внизу щите с гербом «Пилява». По сторонам щита пальмовые ветви; скрещенные под щитом. Пунктирный ободок. Легенда армянскими буквами не поддается прочтению, вверху печать начинается с +. Пунктирный и линейный ободки. Рис. 5<sup>146</sup>. Овальная. Размер 40×47 мм. Бумажно-клеевой оттиск.

Хранение: Библиотека Национального института им. Оссолинских во Вроцлаве, отдел рукописей, № 1361 II, стр. 467 (1727 г.).

Возможно, впрочем, что данная печать являлась (в соответствии со

<sup>143</sup> За уточнение расшифровки легенды автор приносит благодарность академику АН Армянской ССР Л. Хачикяну.

<sup>144</sup> ЦГИА УССР во Львове, ф. 52, оп. 2, д. 196, стр. 2184.

<sup>145</sup> *Cz. Chowaniec*, Ormianie w Stanisławowie w XVII i XVIII wieku, Stanisławów, 1928, стр. 50.

<sup>146</sup> Я. Р. Дашкевич, Армянские общественные печати..., стр. 248.

своими большими размерами) второй, употребляемой в более торжественных случаях.

Обе печати (рис. 5а и 5) не соответствуют тому описанию, которое в свое время дал С. Баронч.

8. *Язловец*. Впервые удалось найти конкретное указание на существование печати армянского присутствия («uzzedu») в Язловце. В книге каменецкого армянского суда упоминается, что один «заграничный» армянин предложил суду «подлинный документ, выписанный из армянских язловецких актов, написанный по-армянски и засвидетельствованный печатью этого же присутствия»<sup>147</sup>. Язловецкий документ датирован 1627 г.

9. *Григориополь*. Стоит упомянуть и о том, что русский царь Павел I жалованной грамотой от 28 октября 1799 г. «на права, преимущества и вольности обществу армян города Григориополя», расположенного на украинско-молдавской этнической границе, пожаловал григориопольскому «суду или магистрату, равно и духовному правлению, печать оно-го» с изображением герба города Григориополя<sup>148</sup>.

Оттиск этой печати нам пока найти не удалось.

На основании произведенных дополнительных разысканий в области изучения армянских общественных печатей, можно, по-видимому, утверждать, что в некоторых колониях (Замость, Станислав) существовало по две печати—одна обыкновенная и вторая «торжественная». Только во Львове употреблялась, кроме печати с армянской легендой, также другая печать с латинской легендой. Область применения «торжественных» печатей, как и печати с латинской легендой,—из-за скудости дипломатического материала—остается неясной.



<sup>147</sup> ЦГИА УССР в Киеве, ф. 39, оп. 1, т. 32, л. 41.

<sup>148</sup> Полное собрание законов Российской империи с 1649 г., т. 25, СПб., 1830, стр. 836.



1



2



3



4




5 a



7



6





10



15



16



17



18



19



20



21



22



23



10



15



16



17



18



19



20




21



22



23





24



25



26



27



28



29



30



31



32



33



24



25



26



27



28



29



30




31



32



33







34



35



37



38



39



40



42



43



44



45



46



47





34



35



37



38



39



40



42



43



44



45



46



47



48



49



50



53



54



55



57



58



59



48



49



50



53



54



55




57



58



59





62



63



65



66




67



68



69





62



63



65



66



67



68



69



I



II



III



IV



V



VI



VII



VIII



IX



X



XI



XII



XIII




XIV



XV




XVI



XVII



XVIII




XIX



XX



XXI



XXII



XXIII



XXIV



XXV



XXVI



XXVII



XXVIII



XXIX



XXX



XXXI



XXXII



XXXIII



XXXIV



XXXV



XXXVI



XXXVII



XXXVIII



XXXIX



XL



XLI



XLII



XLIII



XLIV



XLV



XLVI



XLVII



XLVIII



XLIX



L



LI



LII



LIII



LIV



LV



LVI



*Инициалы на печатях и их расшифровка*

ч/	неизвестный, I пол. XVI в., № 10
з/	неизвестный, 1544 г., № 74
AB	неизвестный, 1702 г., № 58
АН	Анастас Голубович, 1626 г., № 27
АК	Аксент Киворович, 1576 г., № 15
BB	Венедикт Бернатович, 1631, № 34
BF	неизвестный, 1628 г., № 30
BN	Богдан Норсесович, 1629 г., № 31
BP	Бопдан Пиотрович, 1666 г., № 47
CH	неизвестный, 1670 г., № 48
CZIZ	Христофор-Захария Захнович, 1656 г., № 46
DH	Давид Голубович, 1576 г., № 15
DN	Доминик Никорович, 1756 г., № 66
GB	неизвестный, 1712 г., № 60
GH	Григорий Норсесович, 1620—1630 гг., № 32
GKA	Гавриил К. Аведикович, 1670 г., № 49
HI	Голуб Ивашкович, 1623, № 24
HZ	неизвестный, 1615 г., № 22
IB	Иван Бернатович, 1642 г., № 38
IM	Яков Мытникович, 1564 г., № 11
IMT	Иван Торосович, 1650 г., № 44
IP	Ивасько Пилипович, 1635 г., № 35
JB	Яков Бохосович, 1685 г., № 53
KN	Христофор Голубович, 1644 г., № 39
KKPS	неизвестный, 1723 г., № 61
KM	Христофор Минасович, 1686 г., № 54
KP	неизвестный, 1606 г., № 77
KS	неизвестный, 1687 г., № 56
KT	Хачко Томанович, 1615 г., № 23
KW	Христофор Василевич, 1570 г., № 75
LA	Лазарь Аведикович, 1606 г., № 78
LA	Лазарь Аксентович, 1680-е гг., № 50
MA	Николай Аведик, 1611 г., № 18
MB	Матвей Бкач, 1564 г., № 12
MB	Николай Богданович, 1623 г., № 25
MH	Миљкон Гаджиович, 1650 г., № 42
MI	Мисько Якубович, 1650 г., № 45
MKH	Николай Гадзеевич, 1706 г., № 59
MN	Николай Норсесович, 1648 г., № 40
SA	неизвестный, 1613 г., № 21
SA	Симеон Аведик, 1613 г., № 20
SK	Шимко Каспарович, 1626 г., № 28
SL	неизвестный, 1606 г., № 79
SL	Степан Лазарович, 1609 г., № 17

SL	Сергий Леонович, 1654 г., № 13
SM	Шимко Муратович, 1626 г., № 29
THN	Торос Голубович, 1626 г., № 26
TI	Теодор Яськевич, 1685 г., № 54
ZB	Захария Иван Богданович, 1688 г., № 57

Յ. Ռ. ԴԱՇԿԵՎԻՉ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՆԻՔՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ  
(XIV—XVIII ԴԴ.)

(Ա մ փ ո փ ու մ)

Ուկրաինայի հայկական մասնավոր կնիքները մինչև այժմ չեն ենթարկվել կանոնավոր ուսումնասիրության: 70 մատանի—կնիքների նկարագրությունը (որոնցից 60-ը անձամբ տեսած) հնարավորություն է տալիս ստեղծել հայ միջնադարյան կնքագիտության մի նոր բնագավառ: Սույն աշխատության մեջ տեղեկություններ են տրվում կնիքների պատրաստման համար օգտավոր ծաված նյութի, դրոշմների ստացման եղանակի և մասնավոր կնիքների՝ որպես իրավական ինստիտուտի դերի մասին: Հրատարակվում են հիմնականում Լվովի, Կամենեց-Պոդոլսկի և Տիսմենցայի հայ վաճառականների և արհեստավորների կնիքները, իսկ որպես համեմատության առարկա՝ նաև Վարշավայինը: Բուն կնքագրողները պահվում են Լվովի, Կրակովի և Վրոցլավի հավաքածուներում: Կարևոր նշանակություն ունի հատկապես կնիքների այն խումբը, որի խորհրդանիշերի հիմքում ընկած են հայկական համառոտագրություններ: Հեղինակի համոզմամբ, Ուկրաինայում գործածված հայկական փակագիր խորհրդանիշերը շարունակությունն են հանդիսանում փակագրության զարգացման այն ավանդների, որոնք հայտնի են սկսած VII դարից հայ քարակույրների նիշերի ձևով: Որպես խորհրդանիշեր հաճախ օգտագործվում էին նաև երկրաչափական պատկերները, շատ ավելի հազվադեպ՝ լատիներեն փակագրերը, կենդանական մոտիվները և կնիքների ձևական պաճուճանքները: Խորհրդանիշերը փոխանցվում էին սերնդից սերունդ տոհմի ներսում, երբեմն ազնվականական զինանշանների հիմք դառնալով: Սկսած XVII դարի առաջին կեսից կնիքները ձևավորվում են XVII—XVIII դդ. լեհական ազնվականական կնիքներից ընդօրինակված զարդարանքներով: Հայկական զլխագրերը (ոչ փակագրերը) XVI դարի երկրորդ կեսում փոխարինվում են լատինականով: XVIII դարում Ուկրաինայի կնիքները զգալիորեն տարբերվում են Անդրկովկասյան Հայաստանում գործածվող նույն տիպի կնիքներից: XIV—XVIII դդ. Ուկրաինայի հայկական կնիքների զարգացումը պատմամշակութային տեսակետից հանդիսանում է Ուկրաինայի և Լեհաստանի հայկական դադույթներում տեղի ունեցող բարդ ազգային պրոցեսների արտացոլումը:

Հոդվածին կցված են լրացուցիչ տեղեկություններ Ուկրաինայի հայերի նույն ժամանակաշրջանի հասարակական կնիքների մասին (որոնք լրացնում են «Բանբեր Մատենադարանի» № 11, էջ 233—251» համարում հրատարակ-

ված տվյալները): Առաջին անգամ կնրագիտական գրականության մեջ տեղեկություններ են հաղորդվում Լվովի (1619 թ.), Սաանիսլավի (1686—1695 թթ.), Ինչպես նաև Յադլովիցի (1627 թ.) և Գրիգորոպոլի (1799 թ.) կրփքների նոր տարատեսակների մասին: Ավագների խորհրդի կնիքների շարքը ծագող պայքարը (օրինակ Լվովում XVII դ. 40-ական թթ.) ցույց է տալիս նրանց նշանակությունը որպես հասարակական և իրավական ինստիտուտի:

Y. DACHKÉVITCH

LES SCEAUX PRIVÉS ARMÉNIENS EN UKRAINE  
(XIV<sup>e</sup>—XVIII<sup>e</sup> SIÈCLES)

Les sceaux privés arméniens de l'Ukraine n'ont pas fait jusqu'à présent l'objet d'une étude systématique. La publication de données sur 70 sceaux de bagues (dont 60 ont été décrits de visu) donne la possibilité de créer un nouveau domaine dans la sphragistique médiévale arménienne. L'auteur communique des données sur les matériaux dont on fabriquait les sceaux, sur la technique de la fabrication des empreintes et sur le rôle du sceau privé comme institution juridique. Il publie principalement les sceaux des commerçants et des artisans arméniens de Lvov, de Kamenec-Podolsk, de Tismenica et, comme matériau de comparaison, ceux de Varsovie. Les empreintes originales des sceaux sont conservés dans les collections de Lvov, de Cracovie et de Wroclaw. Une importance particulière est accordée à un groupe considérable de sceaux, à la base des emblèmes desquels se trouvent des monogrammes-ligatures arméniennes. L'auteur considère que les emblèmes monogrammiques arméniennes usités en Ukraine constituaient une étape déterminée dans le développement de la monogrammistique connue sous forme des signes des tailleurs de pierres à partir du VII<sup>e</sup> siècle. En guise d'emblèmes on utilisait souvent des symboles géométrisés, plus rarement des monogrammes latins, des motifs animalistes et des combinaisons formelles héraldiques. Les emblèmes étaient transmis de génération en génération dans les familles, parfois ils constituaient la base des armoiries aristocratiques. A partir de la première moitié du XVII<sup>e</sup> siècle les sceaux sont ornés de décors imitant les sceaux aristocratiques polonais des XVII<sup>e</sup>—XVIII<sup>e</sup> siècles. A la seconde moitié du XVI<sup>e</sup> siècle les initiales (non les monogrammes!) arméniennes sont remplacées par des initiales latines. Au XVIII<sup>e</sup> siècle les sceaux de l'Ukraine différaient sensiblement des sceaux de même type utilisés en Arménie transcaucasienne. L'évolution des sceaux privés arméniens en Ukraine aux XIV<sup>e</sup>—XVIII<sup>e</sup> siècles a été du point de vue historique et culturel le miroir des processus ethniques compliqués ayant lieu à cette époque dans les milieux des colonies arméniennes d'Ukraine et de Poïogne.

Des renseignements supplémentaires concernant les sceaux publics des Arméniens d'Ukraine de la même époque (complétant les données publiées précédemment dans ce même recueil, t. 11, p. 233—251) sont

jointe à l'article. Pour la première fois dans la littérature sphragistique l'auteur parle de nouvelles variétés de sceaux de Lvov (1619) et de Stanislav (1686—1695), de même que des sceaux de Yazlovec (1627) et de Grigoriopole (1799). La lutte qui se déployait parfois autour des sceaux du conseil des doyens (comme, par exemple, à Lvov aux années 40 du XVII<sup>e</sup> siècle) montre leur importance en tant qu'institution sociale et juridique.

ՅՈՒ ՎԱՐԳԱՆՅԱՆ

ԳԵՈՐԳ ԽՈՒԲՈՎԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿՐ ԻԲՐԵՎ XVIII—XIX ԳԱՐԵՐԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՆԱԳՐՅՈՒՐ

XVIII—XIX դարերի հայ հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչ Գեորգ Մելիքսեղեկյան Խուրով-Խաղբակյան-Պառչյան-Արշակունի Երևանցին (սա նրա ինքնանվանումն է), որ Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ թուրք-պարսկական լծից ազատագրելու գաղափարի ու գործի ամենաեռանդուն մարտիկներից մեկն էր, իր անձով և գործով հայագիտության ուշադրությունը գրավել է դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին<sup>1</sup>։

Մնվել է 1764 թ.<sup>2</sup> Երևանում, 1771—1780 թթ. իր հորեղբայր Սիմեոն Երեվանցի կաթողիկոսի (1763—1780) հսկողության տակ սովորել է էջմիածնում։ Հորեղբոր մահից հետո երկու տարի ևս մնացել է այնտեղ, ապա՝ դուրս եկել, մասնակցել Երևանի հայ հասարակության բանակցություններին նախ Վրաստանի, ապա՝ Ռուսաստանի պետական գործիչների հետ։ Ավելի ուշ դարձել է Երևանի Մահմադ խանի խորհրդատուն և միջնորդը՝ Ատրպատականում գրտնրվող ռուսական զորքի հրամանատար Կորսակովի հետ ունեցած բանակցություններում։

1803 թ. գններալ Յիցիանովի զորքերի կողմից Երևանը պաշարելու նախօրյակին պարսիկները Խուրովին կասկածում են լրտեսության մեջ, իսկ երբ Յիցիանովի հարձակման ժամանակ հայ բնակչությունը մեծապես օգնում էր ռուսական բանակին, Խուրովն էլ իր հերթին անձամբ մասնակցում է այդ բանակի պարենավորմանը։ Պարսիկները, ձգտելով ամեն կերպ վնասել ռուս-

1 Տե՛ս «Արարատ», 1868, էջ 115, ուր տպագրված է Խուրովի «Երգարան երգեցիկ մանգանց և յորդորակ սիրահար զեռավարժից» ժողովածուի (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 491) № Իէ երգը՝ «Ողբ Գեորգեայ իշխանի Խուրով Մելիքսեղեկեան ի վրդովմունս Հայաստանի սղբալով սղեալ»։ Նույն տեղում «Արարատը» խոստանում է ապագայում տպագրել «Երգարանից» այլ տաղեր ևս և՛ հեղինակի «Ձեկուցումը», բայց խոստումը մնացել է անկատար։ Այդ երգը տպագրվել է նաև՝ «Գալիթ-Բեզ, Ընտիր պատմություն Գալիթ-Բեզին և պատերազմաց Հայոցն Խախանու», Վաղարշապատ, 1871, էջ 87—88։

2 Մենդյան և մահվան թվականները Խուրովի ինքնակենսագրության և Մառաշիությունների ցուցակի տվյալների համաձայն ճշգրտել է բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանը («Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», Երևան, 1978, էջ 208), իսկ կենսագրական մյուս տեղեկություններն առաջին անգամ շարադրված են Լ. Մելիքսեղեկի կողմից. «Գեորգ Մելիքսեղեկյան Խուրով (նյութեր և նոթեր)», Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1950, №№ 1—2, էջ 55—84 (այսուհետև՝ Լ. Մելիքսեղեկ, Գեորգ Խուրով) և «Գեորգ Մելիքսեղեկյան Խուրովը (1762—1829)» և նրա «Գալազանազրքի» ակրոստիքոսները», «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1963, № 2, էջ 101—110։

վաճան» հայերին, ի թիվս այլ բարբարոսությունների, այրում են նաև Խուրովի այգիներն ու դուշբը: Նա ստիպված է լինում ոչ այնքան դյուրին եղանակով, ընտանիքը տեղափոխել Քիֆլիս: 1805 թ. գեկտեմբերին ուղևորվում է «օրհնյալ Ռուսաստան» և հաստատվում Մոզդոկում: 1810 թ. Մոզդոկից գրելում է Պետերբուրգ, 1811 թ. այստեղ ավարտում «1178—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը», թարգմանել տալիս Հովսեփ Հովհաննիսյանին և ուսերեն լեզվով տպագրում նրա իսկ տպարանում<sup>3</sup>:

1814 թ. Պետերբուրգում ավարտել է 9 տարի առաջ սկսած<sup>4</sup> «Գաւաղանագիրք Հայոց ազգի» աշխատությունը և նույն շրջանում ձգտել հասնել ուսական պետական մարմինների կողմից իր իշխանական տիտղոսի ճանաչմանը (այս նպատակն իրականացել է 1816 թ. հոկտեմբերի 30-ին): 1814 թ. գնացել է Ղզլար, դարձել տեղի հայկական դավառական դպրոցի ուսուցիչ, 1827 կամ 1828 թթ.<sup>5</sup> հրավիրվել է Աստրախան և, Սերովբե Պատկանյանից հետո, ստանձնել Աղաբարյան վարժարանի տեսչությունը: 1830 թ. հետո նրա մասին տեղեկությունները պակասում են:

Ռուսասեր և Ռուսական կայսրության շնորհիվ Հայաստանը թուրքպարսկական լծից ազատագրված տեսնել փափագող այս հեռաբրբիր գործչի անձի և գրական ժառանգության մասին հայագիտության մեջ եղած առաջին խոսքի հեղինակը Գյուտ Աղանյանցն է: «Գիւան Հայոց պատմութեան» շարքի մի քանի գրքերում նա մեծապես օգտագործել է Խուրովի երկասիրությունները: Սիմեոն Երևանցու կենսագրությունը շարադրելիս անգրադարձել է նրա ուսերեն գրքին, հիշատակել էջմիածնի մատենադարանում պահվող նրա «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից» ժողովածուն և քննել Խուրովի կազմած սեփական տոհմագրական աղյուսակը, ըստ որի նա իրեն համարում է Պոռչյան իշխանական տան շառավիղը<sup>6</sup>: Նույն հատորի գրականության ցանկում, Խուրովի ուսերեն գործից բացի, Աղանյանցը հիշատակել է նաև անհեղինակ մի աշխատության անուն. «Պատմութիւն ժամանակագրական դկաթուղիկոսաց ցվերչին աւուրս Եփրեմայ. սկսեալ ի Ղաղարէ վերջնոյ (գրչագիր Մատենադարանի Սրբոյ էջմիածնի)»<sup>7</sup>: Այս ձևագրին ավելի հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

<sup>3</sup> Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1778 г.) до 1809 года. Сочинение князя Егора Хубова. С армянского перевел Армянской церкви архидиакон Иосиф Иоаннесов. Печатано на основании Высочайшего повеления в Санкт-Петербурге, 1811 г.

<sup>4</sup> Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի զիվան, Հազարյանների թողոն, թղթապանակ 104, գործ 7, վավ. 51 և 132:

<sup>5</sup> Լ. Մելիքսեթ-Քեկի ուսումնասիրած փաստաթղթերի համաձայն Խուրովը Աստրախան է գնացել 1827 թվականին, իսկ 1829 թ. հուլիսի 14-ին Հազարյաններին դրած նամակներում Խուրովը հայտնում է, որ «յանցեալ ամն» է հրավիրվել Աստրախան (տե՛ս Հազարյանների թողոն, թղթ. 104, գործ 7, վավ. 51 և 132):

<sup>6</sup> Տե՛ս Գիւան Հայոց պատմութեան, զիրք Գ. Սիմեոն կաթուղիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ և յանելուածներով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Քիֆլիս, 1894, էջ ԽԳ—ԿԱ (այսուհետև՝ Գիւան):

<sup>7</sup> Գիւան, Գ, էջ ԼԲ: Սիմեոն Երևանցի կաթուղիկոսի կենսագրության շարադրանքի ընթացքում Աղանյանցն ազատորեն քաղումներ է արել այս ձևագրից, բայց միայն երկու դեպքում է մատնացույց արել իր աղբյուրը: Տե՛ս Գիւան, Գ, էջ ԿԵ և ԺԻԶ:

1945 թ. լ. Մելիքսեթ-Բեկը Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի համար ձեռք է բերել Խուրովի «Գաւազանագրքի» մի օրինակ<sup>8</sup>: Այդ առիթով փնտրել և նույն արխիվում գտել է նրան վերաբերող 6 փաստաթուղթ-դրանց և «Գաւազանագրքի» ու ուսուցիչի տվյալներն ի մի գումարելով, նա առաջին անգամ հյուսել է Խուրովի կենսագրութունը, բնութագրել նրա պատմագիտական և բանաստեղծական ժառանգութունը<sup>9</sup>:

1963 թ. լ. Մելիքսեթ-Բեկը հրատարակել է «Գաւազանագրքի» այդ օրինակում եղած 76 երկտող (կամ 38 քառատող) ունեցող մի ձոն, որի սկզբնատառերը հոգում են. «Աշխատասիրեալ ի հայկազուն Գէորգ Մելիքսեղեկեան Խուրով Խաղբակեան յիշխանահազն Արշակեանա է»: Նույն առիթն օգտագործելով հրատարակել է Եփրեմ կաթողիկոսի կնիքով ու 12 հոգևոր և աշխարհիկ անձանց ստորագրությամբ վավերացված՝ Խուրովի իշխանական կոչումը հաստատող մի փաստաթուղթ: Այս հրատարակումներին, որպես առաջաբան, լ. Մելիքսեթ-Բեկը կցել է 1950 թ. իր հյուսած Խուրովի կենսագրության մեկ էջանոց համառոտումը<sup>10</sup>:

Տեղին է նկատել, որ Մաշտոցյան Մատենադարանի № 3755 գրչագրում (գրված 1829 թ. Աստրախանում), որտեղ Գավազանագրքի բնագիրն ունի ուսուցիչն զուգահեռ թարգմանութուն, հիշյալ ձոնը շարունակված է և հասցրված 108 երկտողի (կամ 54 քառատողի): Ծայրակապն այստեղ շարունակվում է հետևյալ բառերով. «...որ և մեծազննին յիշատակարան է բանս այս»<sup>11</sup>: № 3755 ձեռագիրը պետք է համարել հեղինակի վերջնական խմբագրման ենթարկած օրինակը, քանի որ Խուրովն այն ուղարկել է Լազարյաններին՝ տպագրել տալու խնդրանքով: Լ. Մելիքսեթ-Բեկն այս ձեռագրին ծանոթ չի եղել, որովհետև մինչև 1950-ական թվականները այն դեռևս գտնվել է Մատենադարանի արխիվային բաժնում և որպես առանձին ձեռագիր պահպանված չի եղել:

Խուրովին անդրադարձած հաջորդ բանասերը Հարութուն Քյուրտյանն է: 1954 թ. կոնդոնում «Անզլիայի և Իսլանդիայի արքունի Ասիական ընկերության» կենտրոնատեղիի գրադարանում նրան ցույց են տվել «սակեղրուագ կարմիր կաշեկողքով հատոր մըն, որուն կոնակը երկաթագիր դրոշմուած էր. «Գաւազանագիրք թագաւորացն Հայոց ի բնեազ Խուրովէ»: Քյուրտյանը ծանոթ չի եղել Մելիքսեթ-Բեկի հոգվածին, բնականաբար՝ նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 3755 գրչագրին, ուստի իր տեսած օրինակը համարել է միակը: Նա տպագրել է «Գաւազանագրքի» մյուս օրինակներում բացակայող և միայն այստեղ պահպանված «Առ նորուն արքայական բարձութին աղէրս» խորագրով 18 երկտողանոց մի ձոն, որի սկզբնատառերը, երկու իրարից առանձին շարքերով, ծայրակապի կարգով հոգում են. «Առ Գիորգ տիեզերակալը», իսկ վերջնատառերը, նույն կարգով՝ «Բ Գէորգ իշխան է է

8 Ձեռագրի նկարագրութունը տե՛ս լ. Մելիքսեթ-Բեկ, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի, «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 414—415, ձեռ. № 49 (= 705), այժմ՝ ՄՄ, № 10359:

9 լ. Մելիքսեթ-Բեկ, Գեորգ Խուրով, էջ 55—84:

10 լ. Մելիքսեթ-Բեկ, Գեորգ Մելիքսեղեկյան Խուրովը (1762—1829) և նրա «Գավազանագրքի» աղբյուրները, ԲՀԱ, 1963, № 2, էջ 101—110:

11 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3755, էջ 12բ—119բ:

խնդիր»։ Լ. Քյուրտյանը կարծում է, որ Խուրովն այս գործը նվիրել է Վրաց վերջին թագավոր, Հերակլի որդի Գևորգին, որը գահ բարձրացավ 1798 թ.<sup>12</sup>։

Ուշագրավ է այս ձեռագրի վրա եղած անդրերեն մակագրությունը. «Presented to the Oriental Translation Com. by the Author Prince Hubboff» — Նուիրեալ Արևելեան թարգմանութեանց ընկերութեան՝ հեղինակէն. իշխան Խուրով»։ Ի դեպ, Խուրովը 1829 թ. հոկտեմբերի 7-ին, Ալեքսանդր Հումբոլդտի միջոցով, իր հորեղբայր Սիմեոն Երևանցուց նվեր ստացած երեք ձեռագիր (1462, 1620 և 1698 թվականներին գրված ժողովածուներ) Աստրախանում նվիրել է Բեռլինի արքայական գրադարանին<sup>13</sup>։

Վերջերս լույս տեսավ Պ. Հակոբյանի կազմած «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» ժողովածուն, որտեղ Խուրովի «Երգարան մանկանց» ժողովածուից տպագրվել են «Վասն սրախողխող առմանն Գանձակու» և «Վասն հանդիսավհճութեան քաջայաղթ մեծ զօրապետ Ալէքսէյ Պետրովիչ Երմօլովին ներբողեալ» երգերը<sup>14</sup>։ Հակոբյանը ձեռքի տակ ունեցել է Խուրովի «Ինքնակենսագրութիւնն» ու «Մառայացուցակը» (որոնց պահպանման վայրը, սակայն, չի հայտնել), և այդ փաստաթղթերի շնորհիվ ճշգրտել է մեր հեղինակի ծննդյան և մահվան թվականները՝ 1764—1830 թթ. (լ. Մելիքսեթ-Բեկի 1762—1829 թթ. փոխարենն)<sup>14ա</sup>։ Մելիքսեթ-Բեկին հայտնի «Երգարանից», «Գաւազանագրքից» և ուսերեն գրքույկից բացի, Պ. Հակոբյանը նկատել է, որ Աղանյանցի «Գիւանի» որոշ հատորներում հղումներ և քաղումներ կան նաև Խուրովի մի այլ գործից. «Պատմութիւն ժամանակագրութեան կաթողիկոսաց ցվերջին աւուրս Եփրեմայ կաթողիկոսի» և կարծում է, որ սա ուսերեն գրքույկի «մշակված ու ընդարձակված տարբերակն է թերևս, և որի ձեռագիրը մինչև հեղափոխութիւնը պատկանելիս (թե՛ պահվելիս) է եղել Գյուտ Աղանյանցի մատենագարանում։ Որտե՞ղ է պահվում ներկայումս, չենք պարզել»<sup>15</sup>։

«Գիւանի» Ա.—Բ հատորները պատրաստելիս Գ. Աղանյանցը ձեռքի տակ չի ունեցել Խուրովի վերահիշյալ երկը, շնայած այն մեծապես օգտակար կարող էր լինել իր աշխատության համար։ Երկրորդ գրքի («Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը») գրականության ցանկում նշանակված է. «Պատմութիւն ժամանակագրական զկաթողիկոսաց ցվերջին աւուրս Եփրեմայ, սկսեալ ի Ղազարէ վերջնոյ», իսկ կողքը, փակագծերում տեղեկություն է տրված, որ դա էջմիածնի մատենագարանում պահվող գրչագիր է<sup>16</sup>։ Չնայած հատորի առաջարանում այս ձեռագրից քաղումներն ու նրա օգտագործում-

12 Յ. Քիրտեան, նորագիտ նիւթեր Պոռշեանց կամ Խաղրակեանց մասին, «Բազմավէպ», 1956, էջ 101—106։

13 Տե՛ս Եփեղոս Քարամեանց, Յուցակ Պեռլինի արքայական մատենագարանի հայ ձեռագրաց, «Բազմավէպ», 1886, էջ 185։ Նաև՝ Verzeichniss der Armenischen Handschriften der Königlighen Bibliothec zu Berlin, von dr. N. Karamianz, zehnter Band, Berlin, 1888, էջ 15—16, 55—56, 81, 85։

14 Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ, բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Պ. Հ. Հակոբյանի, Երևան, 1978, էջ 8—10 (այսուհետև՝ Պ. Հակոբյան)։

14ա Մեղ անհայտ աղբյուրի չիման վրա Լ. Խաչատրյանը Խուրովի կյանքի տևողությունը նշանակել է «1762—1833-ից հետո», ավելացնելով նաև, թե 1833 թ. նա վերագրվել է Ղզարտն՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 97։

15 Պ. Հակոբյան, էջ 208։

16 Գիւան, Գ, էջ 18։



ները բազմաթիվ են, բայց տողատակերում գործը հիշատակված է ընդամենը երկու անգամ<sup>17</sup>:

Իսկ նույն «Գիւանի» Գ հատորում («Ղուկաս կաթողիկոս»), երբ Աղանյանցն արդեն պարզած է եղել այդ երկի հեղինակի անունը, վերնագրել է հետևյալ կերպ. «Խուրեանց, Պատմութիւն կաթողիկոսաց, Գրչագիր մատենադարանի Սրբոյ էջմիածնի»<sup>18</sup>:

Գեորգ Խուրովի այս գործը պարունակող ձեռագրին<sup>19</sup> մենք ուշադրութուն դարձրինք բոլորովին պատահաբար՝ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի ցանկերում եղած մի վրիպակի շնորհիվ: Առաջին հանգամանքը, որի միջոցով հայտնի դարձավ անվերնագիր այդ երկի հեղինակի ինքնութունը, ձեռագրի 1բ—84ա էջերի ստորին լուսանցներում, դրադաշտից դուրս դրանցած 162 երկտող (կամ 81 քառատող) ունեցող երկարաշունչ ներբողն էր, որը, ինչպես «Գաւազանագրքի» համանման ներբողը, համառոտ ներկայացնում է ողջ հատորում պատմված դեպքերն ու դեմքերը: Այս ներբողն էլ, որ հեղինակի շափածո գործերի շարքում ամենածավալունն է, մյուս բոլոր երգերի ու տաղերի նման, ծայրակապ ունի. «Ի Գէորգ Մելքիսեղէկեան Խուրով Խաղբակեան հայկազն ի իշխանէ լալով սգալով ժողովեալ անպատեհ սրբազնագ»: Հետագայում, շարադրանքի ընթացքում, հեղինակը կամա թե ակամա, բազմիցս հայտնում է իր ով լինելը: Բայց քանի որ Խուրովը բավական խրթին և անընթեռնելի ձեռագիր ունենալով հանդերձ, սիրել է նաև շափաղանց շատ և յուրօրինակ համառոտագրութուններ գործածել, ուստի քարտագրման և ցուցակագրման ժամանակ շի պարզվել գործիս հեղինակը:

Մայր քարտը ձեռագիրը բնութագրում է իբրև «Հակաճառութիւն ընդդէմ կաթողիկոսութեան Հայոց էջմիածնայ: Քննադատութիւն գործոց աթոակալ կաթողիկոսաց. Ղաղարու, Դաւթի-Դանիէլի և Եփրեմի: Մանրամասն նկարագիր էջմիածնայ կաթողիկոսաց և մատնութեանն և լափշտակութեանն նոցին: Կայ և մանրամասնութիւն ի մասին արտաքին յարաբերութեանց յիշեալ կաթողիկոսաց: Գրեալ անյայտ հեղինակէ»<sup>20</sup>: Իսկ ձեռագրացուցակը Խուրովի երկասիրութունը վերնագրել է «Յաղագս վարուց և գործոց կաթողիկոսաց էջմիածնայ (1737—1857 թթ.)» ձևով<sup>21</sup>: Քանի որ Խուրովի աշխատութեան վերջին մասում բավական լուսաբանված է ներսես Աշտարակեցի կաթողիկոսի վարդապետութեան շրջանի բուն գործունեութունը, ուստի թվացել է որ դա նրա կաթողիկոսութեան ժամանակվա իրադարձութունների նկարագրութունն է: Ուղղելով ձեռագրացուցակի այս թյուրիմացութունը կամ վրիպակը, կարելի է նրա առաջարկած վերնագիրն ընդունել անվերապահ

17 Նույն տեղում, էջ 46, ՃԻԶ:

18 Գիւան, Գ, Քիֆլիս, 1899, էջ Ի: Նույն անվանումը կրկնում է նաև առաջարանի երկ այլ մասում. կաթողիկոս ընտրվելու կարգի մասին (էջ 1Գ—1Դ), Ղուկաս Կարնեցու խոհմութեան մասին գրելիս (էջ ԽԳ) և 1795 թ. էջմիածնի 6 սալ կայքը Քիֆլիս տարած և սալերը Աղա-Մահմադ խանի զինվորներին զերի բնկած Մարտիրոս Անկոթ եպիսկոպոսի փրկագնման վերաբերող հատվածում (էջ Մէ): Մի խոսքով, Խուրովի երկի հիշատակման բոլոր դեպքերում Աղանյանցը շեշտում է, որ այն էջմիածնի մատենադարանի գրչագրերից մեկն է:

19 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2766:

20 Մաշտոցի անվան Մատենադարան, № 2766 ձեռագրի քարտը:

21 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Երևան, 1965, էջ 371:

րեն, որովհետև այն ավելի ճիշտ է արտահայտում գործի բովանդակությունը. քան քարտի երկարաշունչ բացատրությունը կամ Գ. Աղանյանցի «Պատմութիւն կաթողիկոսացր»:

Չեռագիրն ունի 22,3×18 մեծության կապույտ թղթի 192 թերթ, կազմը ստվարաթուղթ է, միասուն գրադաշտով և հեղինակի ինքնագիր շղաղրով (ի միջի այլոց, Խուրովի մեզ հասած բոլոր ձեռագրերը ինքնագիր են): Ամենայն հավանականությամբ, գրվել է 1827—1830 թթ., Աստրախանում:

Հեղինակն իր աշխատությունը բաժանել է 131 գլխի, կամ, ինչպես ինքն է վերնագրել, պրակի: Ծավալի 13 տոկոսը, իր իսկ խոստովանությամբ, գրել է այլ աղբյուրներից քաղելով (հիմնականում Մ. Չամչյանից) կամ ձեռերից լսելով, իսկ իր հորեղբայր Սիմեոն Երևանցու շինարարական գործունեության նկարագրությունից սկսած, գործը դառնում է ականատեսի շարադրանք<sup>22</sup>: Այս հանգամանքը, անկասկած, մեծացնում է Խուրովի պատմագիտական երրորդ գործի արժեքը: Բոլորովին այլ աշխատություն է, տարբեր՝ ուսերեն գրքույկից, որը սրա շարադրանքում մի քանի անգամ հիշատակվում է, գրված է այլ ծրագրով և նպատակադրումով:

Ինչպես արդեն ասացինք, այս երկը էջմիածնի կաթողիկոսների վարքու բարքի, կենցաղավարության, գործունեության և, ըստ այդմ, նաև հայ եկեղեցու կենտրոն էջմիածնի պատմությունն է, բայց հատուկ ծրագրով չի գրվել. հեղինակը կյանքի վերջին շրջանում թղթին է հանձնել այն ամենը, ինչ հիշել է և արժանի համարել գրառելու և ինչ որ գրանցված չի եղել նրա ուսերեն գրքույկում: Ի դեպ, 1800 թ. այս կողմ նա իր պատմած դեպքերի մեծ մասի կենտրոնում է:

«Յաղագս վարուցն» սկսվում է «Սգալի զարթուցիչ» խորագիր ունեցող պրակով, որն ըստ էության մի ողբ է՝ քաղաքական բախումների, օտար բռնակալների հարստահարումների, դարասկզբին սկսված դավլիթ-գանիելյան պայքարի և էջմիածնի խեղճ ու ավեր վիճակի մասին: Ստորև մեջ ենք բերում աշխատության պրակներից մի քանիսի վերնագրերը. «Վանոն և կարգ կաթողիկոսի ընտրութեան, Յաղագս որպիսի ընտրութեան Ղազար կաթողիկոսի, Վասն սպանման նատր շահի և թագաւորելոյ Շահաուհի և Ատլշահի, Վասն մատնելոյ Ղազարու զիշխանսն Երևանու Հայոց, Վասն արքորելոյն զՂազար և նատուցանելոյն զՔիթիւր, Վասն կուրացուցանելոյ զԱտլշահ և թագաւորելոյ Իբրահիմայ և ելումն Ղազարու ի Սեանայ, Վասն առաջին նուիրակի աշխարհն Հնդկաց, Վասն վախճանմանն Ղազարու և կաթողիկոսութեան Մինասայ, Վասն որպիսութեան վարուց Յակոբայ կաթողիկոսի, Վասն ընտրութեան և օժման Սիմէօն կաթողիկոսի Երևանցու, Վասն ընծայամատոյց գոլոյ Սիմէօն հայրապետին կայսրուհւոյն և շահին, Վասն որպիսի բարեկարգելոյ նորա զկարգ ուսմանց աթոռայնոցն, Վասն աւերմանն Հերակլի զԵրևան և տառասպանաց Սիմէօն հայրապետի, Վասն վարուց Ղուկասու կաթողիկոսի, Վասն որբանութեան աշակերտաց մերոց և զի՞նչ ուսմանց նոցին, Վասն աւերման Թիֆլիզու և աւարմանն զարդուց Աթոռոյն, Վասն ծագման հակառակութեանց հակառակաթոռ կաթողիկոսացն Դանիէլի և Դաւթի և իսպառ նուազելոյ և (ո՞ գիտէ) որպէս նշմարի և վերջանալոյ ևս կաթողիկոսութեան Հայոց և լքեալ խանգարելոյ Աթոռոյն էջմիածնի, Վասն գողանալոյ Դաւթի զգե-

<sup>22</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 2766, էջ 25ա:

դարդն աստուածամուխ ընդ այլ դարդուց, Վասն ամենաողորմածարար շքնորհելոյ զկրամատ Դանիէլ կաթողիկոսին, Վասն գալստեանն Յիցիանովի և առարկայից Շարիֆ փաշայի, Վասն յԱրցախ զնալոյ կաթողիկոսին և մերկանալոյ ի կաթողիկոսութենէն, Վասն վերադառնալոյ Կարբեցւոյն ի վիճակացն Պօլսոյ և գերելոյն, Վասն պատասխան գրելոյ շահաւատային առ Ներսէսն»<sup>23</sup> և այլն:

Խուրովի նորահայտ երկր գրված է էջմիածնի և Հայաստանի կրած տառապանքները նկարագրելու միտումով, բայց նրա մեջ կան նաև հայ-ուսական հարաբերութիւնների պատմութիւնը վերաբերող ուշագրավ հատվածներ: Այսպես, հանգամանորեն պատմում է Սիմեոն Երևանցու՝ Եկատերինա Բ կայսրուհուն ուղարկած կոնդակի և սրբոց մատենքները կայսրուհուն մատուցելու հանգամանքների մասին: Ռուսաստանի կողմից Դանիէլի կաթողիկոսութիւնը հաստատելու իրողութիւնը պատմում է հետևյալ բաներով. «Յամենուստ կուսէ վիշտը և վտանգը և աղաղակը ազգի մերոյ բարձրացան. և յառանել տոշորմանց սրտից բողոքողացն ևս պատկառանք բարձան, առ ի համարձակիլ լնուլ զաշխարհամուտ սրահ ամենողորմ աթոռոյ մեծի և ինքնակալի կայսերն ամենայն Ռուսաց՝ օգոստոսափառագունի Ալէկսանդր Պաւլովիչին աղէքսարկու խնդրագրովք: Որ և նորին կայսերականի մեծութեան աստուածագութ ողորմածութեամբ զթացեալ յողորմելութիւն անտիրացեալ, անայցելու, անտէր, անտէրունչ ազգին, զիջեալ յաղերսանս մերայնոց, բազմաց, հետևողութեամբ մերայնոց բազմաց, հետևողութեամբ Եփրեմայ առաջնորդին Ռուսաստանու և մանաւանդ Մինաս Եղիազարեան ազգասէր իշխանին, յայց առնել բարեհաճեցաւ, շնորհելով զամենաբարձր զրամատն Դանիէլ պատրիարզին, զոր ստանալ ի Բայազէտ, բախտաւորեցաւ»<sup>24</sup>:

Խուրովի աշխատութիւն մեջ առանձին տեղ է հատկացված նաև 1803 թ. Յիցիանովի Հայաստան կատարած արշավանքի նկարագրութիւնը: Պատմելով հայերի խանդավառութիւն և ոգևորութիւն մասին, նա հատուկ ուշադրութիւն է հրավիրում ուսական զորքին ցույց տրված բազմակողմանի օգնութիւն վրա: Իսկ մանրամասներ իմանալ ցանկացողին ցույց է տալիս իր ուսերին զբնույլի համապատասխան մասը<sup>25</sup>: Պատմում է, որ այդ դեպքերի ժամանակ Դավիթ կաթողիկոսը էջմիածնի ունեցվածքի և գանձերի մեծ մասը բարձել էր 26 սայլի և տեղափոխում էր Բայազէտ. ինքն իմանալով այդ մասին, Երևանի սարդարի միջոցով խափանել է տալիս Դավթի մտադրութիւն իրագործումը, ապա մեծ ուրախութեամբ նկարագրում է գններալ Նեսվեանովի զորքերի կողմից այդ նույն գույքի Թիֆլիս տանելը<sup>26</sup>:

Ոգևորութեամբ է խոսում նաև Ալեքսանդր Ա-ին Եփրեմ կաթողիկոսի այցելութիւն, կաթողիկոսութիւն հաստատման հրովարտակը ստանալու, ստացած պարգևների և ընդունելութիւն ջերմութիւն ու փառահեղութիւն մասին<sup>27</sup>: Այստեղ շատ արժեքավոր հաղորդումներ կան նաև Պետերբուրգի հայ-

<sup>23</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 2766, էջ 3բ, 4բ, 7բ, 8ա, 8բ, 9բ, 10բ, 15բ, 19ա, 20բ, 22ա, 32բ, 40ա, 48ա, 51ա, 54ա, 62ա, 86բ, 99ա, 114բ, 185ա, 188ա, 190ա:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 99ա:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 114բ:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 133բ—136բ:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 172բ—174ա:

կական շրջանակների կյանքի և առօրյայի մասին. պատմվում է, ի թիվս այլոց, նաև Մարգար Խոջենցի, Հովակիմ Լազարյանի, Մանվել Կյումուշխանեցու մասին: Ուշագրավ է նաև կաթողիկոսի Պետրբուրգից Թիֆլիս կատարած ճամփորդության նկարագրությունը<sup>28</sup>:

Խուրովի այս գործում կարևոր հաղորդումներ կան դարասկզբի Երևանի հասարակական կյանքի, խաների բռնությունների, կաշառակերության և հարստահարումների մասին: Այսպես. մի գող մահմեդականի սպանվելու առիթով պարսիկ դատավորը հրապարակում է այսպիսի մի օրենք. մահմեդականի արյան դիմաց պետք է սպանել նրան սպանող քրիստոնյային՝ իր ողջ ընտանիքով, իսկ եթե ընտանիք չունենա՝ նրա յոթ մերձավոր ազգականի: Իսկ եթե ազգականներ էլ չունենա, մեղավորը «հատուցէ 700 թուման արծաթ դրամ, 30 սպիտակ ուղտ, որոց աչք և ծունկըն միայն սեաւ լիցին և ոչ այլ ուրէք, 5 թասպահ մարգարիտ, 40 թասպահ մարջան, 20 խալվար ցորեան, 5 խալվար բրինձ, 50 լիտր իւղ և այլ զանազան գոյք, որոց երկարելն աւելորդ վարկանեմ: Զայսոսիկ հատուցեալ և եօթն ամ ևս ծառայեալ, ազատ լիցի ի մահապարտութենէն»<sup>29</sup>:

Քննվող երկասիրության մեջ մինչև այժմ անհայտ բազմաթիվ կենսագրական տեղեկություններ կան նաև հեղինակի մասին:

Այժմ անդրադառնանք Աստրախանից 1829 թ. հուլիսի 14-ին Խուրովի՝ Լազարյաններին գրած նամակի մի ուշագրավ հաղորդմանը. «Ապա, ի 1820 թուոջ մինչ ի Ղլլար կառավարեաք զուսումնարանն կայսերական, էհաս մեզ բարձրագոյն հրաման՝ ընդ ենարալի ուրումն գնալ շրջիլ յութուտասան վանօրայս Հայաստանեայց, և գտեալ բերել զհին ձեռագիր պատմութիւնս թագաւորաց Հայոց և այլոց. խոստացեալ շնորհել զտարեկան պարէնս գերդաստանի մերոյ վեց հազար ուրլիս մեծամեծ պարգևօք, զոր ծախուցն քանակ ց70 հազար նկատէին և այլն: Եւ երկիցս ի հրաժարեալ կալնուլ խնդրելս մեր անկարելի գրեցաւ:

Ապա դրեկտորն ուսումնարանի ծանոյց գրաք Ռումեանցովին վասն գոյնոյ Գաւազանագրոցդ և այլոց հնգեաասան հատորոց մերոց նորոգ շարադրելոց, զոր և երկցս գրեալ խնդրեաց բերել առ ինքն, զի թարգմանեցուցեալ նորին Կայսերական մեծութեանն ընծայեսցէ և զայլսն տպագրեցուցեալ մեզ շնորհեսցէ»<sup>30</sup>:

Մինչև այժմ հայտնի էր, որ Ն. Պ. Ռումյանցեր, իր թանգարանի համար հայերեն ձեռագրեր հավաքելու նպատակով, ներսես Աշտարակեցուն խընդրել էր իրեն ուղարկել հայ պատմագիրների երկերի ձեռագրերի ընդօրինակություններ<sup>31</sup>: Խուրովի միջոցով հայոց վանքերից հին գրչագրեր հավաքելու մտադրություն ունեցած լինելու մասին առաջին անգամ իմանում ենք այս նամակից: Բայց առավել ուշագրավն այն է, որ, ըստ այս նամակի, «Գաւազանագրքից» և ուսերեն գրքույկից (արդեն տպագրված էր), «Երգարանից»

28 Նույն տեղում, էջ 174ա—178ա:

29 Նույն տեղում, էջ 60ա:

30 Մաշտոցի անվան Մատենադարանի գիվան, Լազարյանների թողոն, թղթ. 104, գործ 7, վավ. 51 և 132:

31 ՏԼՆ Օ. Ս. Եզանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները—Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 22—23:

և «Վասն վարուց և գործոց կաթողիկոսացն էջմիածնայ» երկասիրությունից բացի, Խուրովն ունեցել է ևս 13 աշխատություն, որոնց մասին նրան վերաբերող մասնագիտական գրականության մեջ տեղեկություն չկա:

Դրանցից հինգի տնունները մեզ հայտնի են.

1. «Վանոնք կուսանաց նշան օրհնելոյ, օրհնութիւն աշակերտաց արուեստաւորաց, նորոգ հիմնարկութեանց տանց կամ խանութից և այլն»<sup>32</sup>;

2. «Նախագգուշութիւն վասն Մոսկատկի»<sup>33</sup>;

3. «Վկայութիւնք Աստուածաշնչական և աստուածարանական վասն Յղութեան և Մննդեան Քրիստոսի»<sup>34</sup>;

4. «Մեկնութիւն Պարզատումարի, յերկուս հատորս», 1814, Ի Ղզլար<sup>35</sup>;

5. «Բառարան Գէորգ Խուրով Խաղրակեանց Երևանցոյ, յերկուս հատորս»<sup>36</sup>;

Վերջին երկուսը 1903 թ. վառվել են Պետերբուրգում՝ Մկրտիչ Սանասարյանի ձեռագրական հավաքածուի մեջ, ուր կային նաև «Գաւազանագրքի» և «Երգարանի» մեկական ձեռագիր օրինակներ<sup>37</sup>:

Այս ամենը ցույց է տալիս, որ Երևանի, Քրիլիսիի, Մոզղոկի, Ղզլարի, Աստրախանի, Մոսկովայի և Լենինգրադի արխիվներում կարելի է գտնել Գեորգ Խուրովին վերաբերող փաստաթղթեր և, զուցե նաև, նրա մյուս դեռևս անհայտ գործերը: Դրանցից հետո միայն կարելի կլինի ամբողջական բնութայան ենթարկել Գեորգ Խուրովի գրական ժառանգությունը:

Ю. ВАРДАНЯН

## ВНОВЬ ОБНАРУЖЕННОЕ ПРОИЗВЕДЕНИЕ ГЕОРГА ХУБОВА (ХУБЯНЦ) КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЕНИИ И АРМЯНО-РУССКИХ ОТНОШЕНИЙ В XVIII—XIX вв.

(Резюме)

Георг Хубов (1764—1830), сын брата католикоса Симеона Ереванци (1763—1780), был видным общественно-политическим деятелем своего времени и одним из самых энергичных борцов за идею и дело освобождения Армении от турецко-персидского ига с помощью России. Борьба за восстановление независимости Армении была одним из

<sup>32</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9262. 1829 թ., Աստրախան, տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, էջ 898:

<sup>33</sup> Երուսաղեմի Ս. Հակոբյանց ձեռ. № 2097, 1823 թ., Ղզլար. տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Արբոց Յակոբեանց, հատոր եօթներորդ, կազմեց՝ Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1974, էջ 144:

<sup>34</sup> Երուսաղեմի Ս. Հակոբեանց ձեռ. № 2108. նույն տեղում, էջ 153:

<sup>35</sup> Յուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սանասարեան, կազմեց՝ Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան, խմբագրեց և ցանկերը կազմեց՝ Յ. Զ. Վարդանեան, ձեռ. 113 և 114 (տպագրվում է):

<sup>36</sup> նույն տեղում, ձեռ. № 117:

<sup>37</sup> նույն տեղում, ձեռ. №№ 118 (1822 թ., Ղզլար) և 116:

основных направлений его научно-педагогической и общественной деятельности в Эчмиадзине, Ереване, Тифлисе, Моздоке, Санкт-Петербурге, Москве, Кизляре и Астрахани. До сих пор из литературного наследия Хубова были известны: изданная в русском переводе книга «Описание достопамятных происшествий в Армении... от патриаршества Симеонова (1778) до 1809 г.... С.-Петербург 1811», сборник «Песенник (для) поющих юношей и правоучение (для) неопытных влюбленных» и произведение «Хронография армянского народа». В начале данной статьи дается краткий обзор трудов филологов-арменоведов Г. Аганянца, Л. Меликсет-Бека, А. Кюртяна, П. Акопяна, посвященных жизни и известным произведениям Г. Хубова.

В рукописи Матенадарана им. Маштоца № 2766 автором статьи выявлено новое историографическое сочинение Г. Хубова, которое в конце прошлого столетия было использовано в нескольких томах труда Г. Аганянца «Архив истории Армении»; впоследствии, однако, в силу каких-то обстоятельств оно не привлекло к себе внимания и было предано забвению. Следуя каталогу рукописей Матенадарана им. Маштоца, автор статьи озаглавил это новое сочинение: «О нравах и деяниях католиков Эчмиадзинских (1737—1827)». Указаны несколько содержащихся в этом сочинении сведений, важных для изучения вопросов истории армяно-русских отношений в XVIII—XIX вв., Эчмиадзина и его католиков, Еревана, армянских общин в России и других.

Благодаря одному письму Г. Хубова, хранящемуся в Матенадаране им. Маштоца, выясняется, что кроме известных ныне произведений у него было еще 13 работ. Отмечая названия и места хранения пяти из них, автор выражает в заключение надежду, что остальные произведения Хубова могут быть обнаружены в архивных учреждениях Еревана, Тбилиси, Моздока, Кизляра, Астрахани, Москвы и Ленинграда.

Y. VARDANIAN

L'OEUVRE NOUVELLEMENT DÉCOUVERTE DE GEORGES  
KHOUBOV (KHOUBIANTZ) COMME SOURCE DE L'HISTOIRE  
D'ARMÉNIE ET DES RELATIONS ARMÉNO-RUSSES DES  
XVIII<sup>e</sup> ET XIX<sup>e</sup> SIÈCLES

(R é s u m é)

Georges Khoubov (1764—1830), fils du frère du catholicos Siméon Erévantsi (1763—1780), a été l'un des hommes politiques éminents de son époque et l'un des plus énergiques lutteurs pour l'idée et la cause de la libération de l'Arménie du joug turco-persan avec l'aide de la Russie. La lutte pour la restauration de l'indépendance de l'Arménie a été l'une des directions principales de son activité scientifique, pédagogique et sociale à Etchmiadzine, Erévan, Tiflis, Mozdok, Saint-

Pétersbourg, Moscou, Kizlar et Astrakan. De l'héritage littéraire de Khoubov on connaissait jusqu'à présent: le livre „Descriptions des événements notables de l'Arménie... du patriarcat de Siméon (1778) jusqu'à 1809... Saint—Pétersbourg 1811“, le recueil „Chansonnier pour les enfants et morale pour les amoureux inexpérimentés“ et l'ouvrage intitulé „Chronographie du peuple arménien“. Au début de l'article l'auteur donne un bref résumé des ouvrages des philologues arménistes G. Aghāniantz, L. Mélikset-Bek, A. Kurtian et P. Hacopian consacrés à la vie et aux oeuvres connues de G. Khoubov.

Dans le manuscrit № 2766 du Maténadaran Machtotz l'auteur de l'article a découvert un nouvel ouvrage historique de G. Khoubov que G. Aghaniantz a utilisé à la fin du siècle dernier dans plusieurs tomes de ses „Archives de l'histoire d'Arménie“; cependant, plus tard, par suite de certaines circonstances, cet ouvrage n'a plus attiré l'attention et a été oublié. Suivant le catalogue des manuscrits du Maténadaran Machtotz l'auteur de l'article a intitulé ce nouvel ouvrage: „Sur les moeurs et les faits des catholicos d'Etchmiadzine (1737—1827)“. Il cite certains renseignements contenus dans cette oeuvre et présentant de l'importance pour l'étude des questions de l'histoire des relations arméno-russes des XVIII<sup>e</sup>—XIX<sup>e</sup> siècles, de l'histoire d'Etchmiadzine et de ses catholicos, d'Erévan, des communautés arméniennes de la Russie, etc.

D'une lettre de G. Khoubov conservée au Maténadaran Machtotz nous apprenons qu'outre les ouvrages connus à présent il en a eu encore 13 autres. Mentionnant le titre et le lieu de conservation de cinq d'entre eux, l'auteur exprime l'espoir que les oeuvres de Khoubov puissent être découvertes dans les archives d'Erévan, de Tiflis, Mozdok, Kizlar, Astrakan, Moscou ou Léninegrad.

ԿԱՐԻՆԵ ՄԱՐԶԱՆՅԱՆ

ՀԱՅ ԿԵՆՍՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՂՆԹԱՅՐ XIX ԳԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՀԻՄՆԱՄՅԱԿՈՒՄ\*

Հայաստանի միացումը Ռուսաստանին մեծ հնարավորություններ ստեղծեց գիտության տարրեր բնագավառների առաջընթացի համար: Սկսեցին զարգանալ բնական գիտությունները՝ հատկապես բժշկությունը և այդ շրջանում նրա հետ սերտ կապի մեջ գտնվող կենսաբանությունը, որը որպես առանձին գիտություն դեռ չէր ձևավորվել:

Կենսաբանության զարգացման մինչ նախասովետական շրջանը Հայաստանում կարելի է սլատկերացնել հոսատիճան շրջափուլի ձևով: Առաջին աստիճանում այս բնագրկուն գիտությունը, ինչպես Հայաստանում, այնպես և Ռուսաստանում կրել է նկարագրական բնույթ: Զարգացման երկրորդ աստիճանում իրավիճակն այնպիսին էր, որ բուսաբանական և կենդանաբանական արդեն կուտակված բազմաթիվ նյութերը դասակարգման կարիք էին դգում: Եվրոպայում և Ռուսաստանում շրջանառության մեջ են դրվում մի շարք դասակարգումներ, որոնցից ամենակայուն տեղը գրավեց Կ. Լիննեյի առաջարկածը: Հայաստանում բնագիտության զարգացման այդ աստիճանը կապված է Ս. Շահրիմանյանի անվան հետ: Երրորդ աստիճանն արդեն առնչվում է Չ. Գարվինի նոր էվոլյուցիոն ուսմունքի հետ, մի ուսմունք, որը պատշաճորեն ընդունվեց Հայաստանում:

Մենք կանգ կառնենք առաջին երկու աստիճանների վրա:

Հարուստ և բազմազան հայ հին դրականության մեջ հաճախ են հանդիպում կենսաբանությանը վերաբերող հետաքրքիր տեղեկություններ և տրվյալներ: Սկսած Բարսեղ Կեսարացու աշխատություններից, որոնք դեռ վաղ միջնադարում թարգմանվել էին նաև հայերեն, կենսաբանության հարցերը գրավել են գիտնականների ուշադրությունը: Բազմապիսի կենսաբանական դիտումներ ենք հանդիպում Եզնիկ Կողբացու, Ազաթանգեղոսի, Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Ա. Շիրակացու աշխատություններում: Նշանավոր «Աշխարհացույցում» բերվում են բավական հետաքրքիր տեղեկություններ պատմական Հայաստանի գավառների բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ: Հարկավոր է նշել Գրիգոր Տաթևացու միջնադարյան հանրագիտարանը՝ «Հարցմանց գիրքը» և XVII դարի սկզբի հեղինակ Աբրահամ Պոլսեցու «Պատմութիւն անասնոց» աշխատությունը: Վերջինս, ըստ Ա. Տեր-Պողոսյանի, համարվում է հայ առաջին կենդանաբանական ձեռնարկը և իր մակար-

\* Ձեկուցում՝ կարգացված Մաշտոցի անվան Մատենադարանի հորելյանական նստաշրջանում՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:



դակով չի դիջում այն ժամանակվա եվրոպական գիտական կենդանաբանությունը նվիրված գործերին<sup>1</sup>:

XVIII—XIX դարերում լույս են տեսնում կենսաբանական տեղեկություններ պարունակող գրքեր: Հատկապես ուշագրավ է 1810 թ. Վենետիկում հրատարակված Հ. Ստեփանյան Վարատնեցու «Տեսարան աշխարհի բովանդակիչ բնական և բարոյական գիտություն» խորագրով աշխատությունը:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կենսաբանական հարցերը որոշակի տեղ են գրավում եվրոպական և ռուսական համալսարաններում կրթություն ստացած հայ բժիշկների՝ Պետրոս Քալանթարյանի, Հովակիմ Օղուլուխյանի, Միրայել Ռեստենի (Պատկանյանի), Ստեփանոս Շահրիմանյանի աշխատություններում:

Մինչ Հայաստանը գտնվում էր օտարերկրյա լծի տակ, Ռուսաստանում աշխուժորեն զարգանում էին բնական գիտությունները: Բժշկության աճող պահանջներին զուգորդված՝ զարգացման ընթացքի մեջ էին մղել կենսաբանության որոշ մասնաճյուղեր, հատկապես բուսաբանությունը և առաջին հերթին դեղաբույսերի ուսումնասիրությունը: Ավելանում էր գիտական գրականության թիվը, լույս էին տեսնում տարբեր երկրամասերի «Ֆլորաներ»՝ բուսաբանական բառարաններ: 1781 թ. Մոսկվայում հրատարակվեց Անդրեյ Մեյերի «Բուսաբանական մանրամասն բառարանը կամ տրամբլիկը»<sup>2</sup>, որտեղ տրված են նկարագրված բույսերի բուժական նպատակով օգտագործելու ձևերը: Իսկ Պետերբուրգում 1804 թ. լույս տեսավ Ն. Ս. Մարսիմովիչ-Ամբոգիկի «Նոր բուսաբանական բառարանը» լատիներեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով<sup>3</sup>, ապա Ն. Ա. Անենկովի «Ռուսական բույսերի ռամկական առումները»<sup>4</sup> (1858 թ.) աշխատությունը և այլ բառարաններ:

Կազմակերպվում էին բազմաթիվ արշավախմբեր դեպի Ռուսաստանի տարբեր ծայրամասերը բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով:

1829 թ. Պասկևիչի հանձնարարությամբ Հայկական մարզի վիճակը նրկարագրելու նպատակով, Հայաստան է գալիս Ի. Ի. Շոպենը: Բավական կարճ ժամանակում հավաքելով բազմաթիվ հետաքրքիր նյութեր և հանգամանորեն ուսումնասիրելով Հայաստանի պատմության, աշխարհագրության, կենդանաբանության և բուսաբանության մասին առկա տեղեկությունները, Ի. Ի. Շոպենը ստեղծեց կոթողային մի աշխատություն՝ «Հայկական մարզի պատմական վիճակը նրա Ռուսաստանին միացման շրջանում»<sup>5</sup> գիրքը, որը լույս տեսավ 1852 թվականին: Գրքում հատուկ գլուխ է նվիրված Հայաստանի կենդանական աշխարհին, որի մեջ հետաքրքրական տեղեկություններ կան վայրի և ընտանի կենդանիների մասին: Հայաստանի տարածքում եղել են մեծ քանակությամբ եղջերուներ, այծյամներ, վայրի ոչխարներ, վարազ, արջ, լուսան, կզաքիս և շատ ուրիշ կենդանիներ. կան նաև տեղեկություններ թրո-

1 Ա. Տեր-Պաղոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960:

2 А. Мейер, Ботанический подробный словарь или травник, М., 1781.

3 Н. Максимович-Амбодик, Новый ботанический словарь, СПб., 1804.

4 Н. Анненков, Простонародные названия русских растений, М., 1858.

5 И. Шопен, Историческое состояние Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852.

շունների, ձկների (հատկապես իշխանի) որդան կարմրի մասին, ըստ որում բերվում են նաև դրանց լատիներեն անունները:

Ինչ վերաբերում է բուսական աշխարհին, ապա պետք է նշել հետևյալը. Ի. Շոպենը մեջ է բերում բազմաթիվ բույսերի անուններ հայերեն (ոուսերեն տառադարձությամբ), ոուսերեն ու լատիներեն լեզուներով, հայտնելով, որ այդ տեղեկությունները քաղված են Ս. Ա. Տեր-Ղուկասովի կողմից իրեն տրամադրված Հայկական բուսաբանական մի հին բառարանից: Մենք առիթ ենք տնեցել արդեն նշելու, որ այդ ցուցակն ամբողջությամբ համընկնում է Ս. Շահրիմանյանի «Տնկաբանություն կամ Ֆլորա Հայաստանի» աշխատության առաջին խմբագրության (Մատենադարան, ձեռ. № 9856) մեջբերված բույսերի ցուցակի հետ<sup>6</sup>:

1835 թ. Ռուսական կայսերական ակադեմիայի կողմից գիտական առաջադրանքով, մասնավորապես որդան կարմիրը ուսումնասիրելու համար, Հայաստան է գալիս ակադեմիկոս Համելը. նրա աշխատությունը լույս է տեսնում 1853 թ.՝ «Արարատյան որդան կարմրի մասին» վերնագրով: Ակադեմիկոս Կարլ Բերրը, իր արշավախմբի հետ ուսումնասիրում է Սևանա լիճը, նբայտակ ունենալով հետազոտել ձկների ֆաունան, նրանց տեսակային կազմը:

Այս ժամանակաշրջանն արդյունավորվեց գիտական մի քանի աշխատությունների ոուսերենից հայերեն կատարված թարգմանություններով: Արժեքավոր էին հատկապես Նեստոր Մաքսիմովիչ Ամբողիկի «Բժշկական իրախոսություն»<sup>8</sup> և «Բնազնություն կամ բնութենական հանգամանք մարդկայինը»<sup>9</sup> գրքերի Սրապիոն Առաքելյանի կատարած թարգմանությունները:

Հ. Արզանյանցը թարգմանել և 1834 թ. Թիֆլիսում հրատարակել է «Առձեռն բժշկարանի պէտս գիւղականաց կամ բժշկական խրատք վասն արքունի գիւղականաց»<sup>10</sup>:

Թարգմանություններին զուգընթաց որոշ քայլեր են կատարում հայ հեղինակները սևիական ուսումնասիրություններ ներկայացնելու ուղղությամբ: Սակայն, ինչպես և սպասելի էր, նման աշխատանքները ծավալվում էին Հայաստանի սահմաններից դուրս: Ինչպես իրավացիորեն նշում է բժշկական գիտության խոշոր պատմաբան Լ. Ա. Հովհաննիսյանը, 1800—1860 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում Հայաստանում չի հրատարակվել ոչ մի բժշկական պարբերական կամ գիրք<sup>11</sup>: Բժշկական աշխատություններ գրվում էին միայն այն հայ մասնագետների կողմից, որոնք ապրում էին իրենց հայրենիքից հեռու: Նույնն էր կացությունը և կենսաբանության բնագավառում:

1793 թ. նոր նախիջևանում լույս է տեսնում Պետրոս Քալանթարյանի

<sup>6</sup> К. Марджанян, О рукописях труда С. Шаримаяна «Ботаника, или флора Армении», Вестник общественных наук, 8, 1972, 66—74.

<sup>7</sup> Гамель, Об Араратской кошенили, Петербург, 1853.

<sup>8</sup> Н. М. Амбодик, Медицинская сущность, СПб., 1833.

<sup>9</sup> Н. М. Амбодик, Физиология или естественная история о человеке, СПб., 1814.

<sup>10</sup> Ա. Լալայան, Ռուսերենից հայերեն թարգմանված մի տպագիր բժշկարանի մասին ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (բիոլ. և գյուղատնտ. գիտ), հ. 7, № 10, 1954 թ. էջ 93—97. «Сельский домашний лечебник или врачебные наставления для государственных крестьян».

<sup>11</sup> Л. Оганесян, История медицины в Армении, т. IV, 1947, стр. 23.

(1735—1798 թթ.) «Բժշկարան համառոտ» գիրքը: Հեղինակի կրթության մասին կան տարբեր կարծիքներ: Վ. Թորգոմյանը<sup>12</sup> և Լ. Հովհաննիսյանը<sup>13</sup> գրտնում են, որ նա ստացել է եվրոպական կրթություն, իսկ Ա. Արշարունին<sup>14</sup> հիմնավոր կարծիք է հայտնում Պ. Քալանթարյանի Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտած լինելու մասին: Նա Պ. Քալանթարյանին համարում է Մոսկվայի համալսարանի առաջին հայ սանը: 1803 թ. 12 հայ և վրացի երիտասարդներ մեկնում են Մոսկվա, համալսարանի բժշկական ֆակուլտետն ընդունվելու նպատակով. դրանց թվում էր նաև Թիֆլիսում հայտնի բժիշկ Թաթուլի որդին<sup>15</sup>: Ժ. Մանուկյանի վերջերս հայտնաբերած արխիվային տվյալների համաձայն, դեռևս 1802 թ., Պետերբուրգի բժշկավիրարուժական ակադեմիա է ընդունվել Սողոմոն Հարությունի Ակիմովը, որն ալարտել է այդ հաստատությունը 1808 թ. և աշխատանքի անցել Թիֆլիսում<sup>16</sup>:

Այսպիսով, բանի դեռ անառարկելի փաստեր չեն հայտնաբերված Պ. Քալանթարյանի կրթության վայրի մասին, ուստի բժշկագիտության դոկտորի առաջին հայ սանը պետք է համարել Ս. Ակիմովին:

Հետաքրքրություն է ներկայացնում Պ. Քալանթարյանի բժշկարանին կցված դեղամիջոցների բառարանը, ուր բերվում են դեղաբույսերի նկարագրություններ: Աշխատությունը գրված է գրաբարով, սակայն տրվում են բույսերի լատիներեն և հաճախ նաև ռուսերեն լեզվով անունները:

Հովակիմ Օղուլլուխյանի (1773—1815) «Նիւթ բժշկական» գրքում, (Վենետիկ, 1806), նույնպես կան հետաքրքիր կենսաբանական տեղեկություններ: Հ. Օղուլլուխյանը թվարկում է 228 դեղաբույսերի հայերեն և լատիներեն անուններ և տալիս դրանց համառոտակի նկարագրությունը:

Միրայել Ռեստենը (1774—1844) ավարտել է Պիզայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1822 թ. Վենետիկում լույս է տեսել նրա «Բժշկականությունը», որն ընդգրկում է 2500 անուն՝ տարբեր հիվանդությունների, դեղերի, բույսերի, միներալների, ցնդող հեղուկների, որոշ օդային, գետային և ջրային կենդանիների, մարմնի մասերի՝ լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն, արաբերեն, պարսկերեն, տաճկերեն և հայերեն բացատրություններով: Ըստ որում բույսերի անունները՝ 700 են. մանրամասնորեն նկարագրված են բույսերի մասերը, օգտագործվել են բաղմամբիվ նոր հայկական բուսաբանական տերմիններ:

Անտարակույս, կենտրոնական տեղ է գրավում խոշոր հասարակական գործիչ, հայտնի բժշկապետ և բուսաբան Ստեփանոս Շահրիմանյանը (1766—1830), որի կյանքին, գործունեությանն ու ծառայությունները, հատկապես «Տնկարանություն կամ փղորայ Հայաստանի» (1818) մեծարժեք ձեռագիր աշխա-

12 Վ. Թորգոմյան, Բժշկարան Պետրոսի Քալանթարյան, «Հանդես ամսօրյա» 1, 1892, 11:

13 Մ. Օգանեսյան, Նշվ. աշխ., հ. 3, էջ 192:

14 Ա. Արշարունի, Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955, էջ 7—12:

15 А. Лалаян, Первая медицинская книга, переведенная с армянского языка на русский, «Советское здравоохранение», 6, 1958, стр. 50.

16 Ժ. Մանուկյան, Նորահայտ նյութեր հայ-ուսումնական կապերի պատմությունից, Լրագրեր ՀՍՍՀ ԳԱ, 1, 1978, էջ 98—103:

տուժյանը մենք անդրադարձել ենք առանձին հոդվածներով<sup>17</sup>: նա ծնվել է Քիֆլիսում, սովորել Քրիստոմ, ապա Վենետիկի համալսարանում, որից հետո մեկնել է Հունաստան: Ժանտախտի ժամանակ, 6 տարի աշխատելով Կոստանդնուպոլսում, գրել է «Անդեղեայ ժանտախտի» աշխատությունը (Մատենադարան, ձեռ. № 8303):

Ուշագրավ է, որ Ս. Շահրիմանյանը, եվրոպական բժշկական կրթություն ստանալով հանդերձ, 1807 թ. մեկնում է Մոսկվա և հունվարի 30-ին քննություն հանձնում համալսարանի բժշկական ֆակուլտետում<sup>18</sup>: Պետք է ենթադրել, որ այդ անհրաժեշտ է եղել 1801 թ. Ռուսաստանի հետ միավորված Վրաստանում բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունք ստանալու համար: «Տնկարանություն կամ փղորայ Հայաստանի» մենագրությունից պարզվում է, որ Ս. Շահրիմանյանը հաճախ է եղել Մոսկվայում և Պետերբուրգում: Վերջինիս բուսաբանական այգում նա ուսումնասիրել է որոշ դեղաբույսեր և լաջնորեն օգտվել Կայսերական գիտությունների ակադեմիայի գրադարանից, որտեղ ուսումնասիրել է հատկապես ռուսական ֆարմակոլոգիայի վերաբերյալ հին ու նոր գրքեր:

1815 թ. Ս. Շահրիմանյանը ակտիվորեն մասնակցում է վրացահայության ազգային-հասարակական կյանքին: Հայտնի բժշկապետի կյանքի այդ ժամանակաշրջանը կապված է ներսես Աշտարակեցու գործունեության հետ:

1817 թ. Ս. Շահրիմանյանը Քիֆլիսում առնչվել է դեկաբրիստ Ն. Մուրավյովի հետ, որն իր օրագրում գրել է. «Я познакомился с одним армянином, доктором медицины, который 17 лет в Италии учился... 30-го (декабря 1817 г.)... мы пошли к Шериманову. Человек сей занимателен. У него порядочная библиотека, состоящая большей частью из книг химических, ботанических и лечебных. Он знает по-русски, по-латински, по-итальянски, по-французски, по-арабски, по-армянски, по-грузински, по-турецки, по-персидски и по-татарски. Он целый день занимается, живет по-европейски, чудачком—участь всех ученых людей»:

Ն. Մուրավյովը թուրքերին էր սովորում Ս. Շահրիմանյանի մոտ և շատ գոհ էր, ինչպես ինքն է նշում, նրա ուսուցման եղանակից: Ապա նա շարունակում է. «12-го (марта 1818 г.)... после обеда,—գրել է Մուրավյովը,—пошел к Шериманову и начал с ним делать российско-турецкий лексикон...»<sup>19</sup>:

Յավոր, այդ ուս-թուրքերին բառարանը, որ ստեղծվում էր հայ և ռուս մտավորականների համագործակցությամբ, դեռևս չի հայտնաբերվել:

Ինչպես պարզվում է հայր և որդի Գրիգոր և Սիմոն Լոռու-Մելիքյանների նամակագրությունից (Մատենադարան, ձեռ. 9295), Ս. Շահրիմանյանը 1819

<sup>17</sup> Կ. Մարձջանյան, Степанос Шариманян, «Историко-филологический журнал», 3, 19971, стр. 236—246; Կ. Մարձջանյան, Терминологический ботанический глоссарий С. Шариманяна, Тр. IV Закавказ. конф. по истории науки, Ереван, 1974, стр. 448—453. Կ. Մաբաջանյան, Ս. Շահրիմանյանի «Տնկարանութիւն կամ փղորայ Հայաստանի» աշխատության աղբյուրները», Բնագիտ. և տեխնիկայի պատմությունը Հայաստանում: Գիտական աշխատությունների ժողովածու, 6, 1976, էջ 240—248:

<sup>18</sup> Ա. Лалаян, Русско-армянские медицинские связи, Автореферат докт. диссертации, Ереван, 1966, էջ 6—8:

<sup>19</sup> В. Парсамян, Декабристы в Армении, Ереван, 1975, стр. 42—43.

թվականից պրադվել է մանկավարժական գործունեությանը թելափում, տեղի ճեմարանում դասավանդելով բժշկություն և բուսաբանություն:

Ս. Շահրիմանյանը, որպես բժշկապետ, համակովկասյան հոչակ էր ըստացել: Այդ իրողությունը հաստատվում է վերը հիշատակված նամակների մեջ առկա մի շարք փաստերով, որոնցից են, օրինակ, հետևյալները. «Նորին դերագանցութիւն Շահրիմանով տակաւին կայ ի Շուշի, և ջանայ բժշկելի զՄենհախուլի խանն՝ վարակեալն յափրողիտական» կամ «Տէր բժշկապետ Շահրիմանյան տակաւին կայ ի Ղարաբաղ, և գնացել կայ անդի ի սուրբ ուխտս Տաթևոյ՝ առ միարապօլիտ նորայ, ի բժշկելի զնա ի կաթուածահարութեանց»<sup>20</sup>:

Ս. Շահրիմանյանը մահացել է խուլերայից՝ 1830 թ. հոկտեմբերին, Թիֆլիսում: «Եւ ինքն բազմաշխատ տէրն ձեր, հայր և վարժապետ բարեացապաշտն Շահրիմանով ամսոյս 18-ին լքեալ զերկաւոր դիր կեանս, վերնայնոյն արժանաւորեցաւ, որոյ զհոգին Տէր լցցէ ողորմութեամբ իւրով, և այն կօլեր ցաւօք, որ սկիզբն առաւ ամսոյս սկզբանն և տեւաց մինչև ց25 կամ ց24, անհնարին կտորածս արարեալ, որոց զհաշիւ տակաւին ոչ է յայտնի: Տուն վարժապետիդ կնքեցաւ մինչև ցգալ նորին փեսայի՝ Ալեքսանդր Իւանիչի, որ է Սղնախու լեկաոն, առ որ դու գրեցիր զթուղթ, որ այժմ ստացաւ աստ դօկտորութիւն և գնացեալ կայ ի Լանքորան, որ է միանգամայն և ժառանգ նորա: Գոյր ոչինչ գոյին նորա, միայն գրեանքն, մեկ բաղ և մեկ դուրան. տան կայքն և երկու հարիւր թուման դրամ»: Այսպես է գրում Գրիգոր ԼսոուՄելիքյանը իր որդուն:

Մեծ է Ս. Շահամիրյանի դերը Հայաստանում բուսաբանության զարգացման գործում: Նրա «Տնկարանություն կամ փղորայ Հայաստանի» (Մատենադարան, ձեռ. № 6267) աշխատությունը հանդիսանում է XIX դ. սկզբի բուսաբանական տվյալների մի հարուստ շտեմարան: Նկարագրելով պատմական Հայաստանի 800 տեսակ դեղաբույսեր, հեղինակն իր ժամանակի ամենաբարձր մակարդակով մեկնաբանում է դրանց անունները, և բացի բուսաբանական տեղեկություններից, բերելով նաև լեզվաբանական, պատմական, նույնիսկ բանասիրական տվյալներ դրանց ծագման, տարածման ու օգտագործման եղանակների մասին:

Կովկասում առաջին անգամ Շահրիմանյանն է իր մենագրության մեջ կիրառել հանձարեղ Կ. Լիննեյի բույսերի դասակարգությունը<sup>21</sup>:

Ս. Շահրիմանյանի երրորդ աշխատության՝ «Նոտերի և դեղաբույսերի կրճատ բուսաբանական բառարանի» մասին, որը գրվել է հայերեն լեզվով և թարգմանվել վրացերենի, առայժմ չունենք բավարար տեղեկություններ<sup>22</sup>:

Գոյություն է ունեցել նաև Ս. Շահրիմանյանի մեկ այլ աշխատություն՝ «Բառգիրք բժշկական բառից՝ արաբացի, պարսկական, տաճկական, հայ և

<sup>20</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9295, էջ 173 և 186:

<sup>21</sup> Յ. Мулкиджанян, К. Марджанян, Первая на Кавказе монография по флоре (1818). Тезисы докл. XIII Международного конгресса по истории наук. Мат-лы по истории химии и биологии. Москва, 1971.

<sup>22</sup> К. Марджанян, Степанос Шариманян «Историко-филологический журнал», 3, 1971, стр. 245.

լատին թարգմանութեամբ» խորագրով, որի մասին տվյալներ են պահպանվել Գալուստ Շիրմազանյանի մոտ պահված ձեռագիր գրքերի ցուցակում<sup>23</sup>։

Ամփոփելով արժարժված իրողությունները՝ դժվար չէ եզրակացնել, որ Հայաստանի միացումը Ռուսաստանին նպաստավոր պայմաններ ստեղծեց կենսաբանության և բժշկության առավել զարգացման համար։ Այն մասնագիտական գրականությունը, որ ստեղծվեց հիշյալ ժամանակամիջոցում, անվերապահորեն ունի ճանաչողական նշանակալի արժեք։

К. МАРДЖАНИЯН

## ЭТАПЫ РАЗВИТИЯ БИОЛОГИИ В АРМЕНИИ В ПЕРВОЕ ПЯТИДЕСЯТИЛЕТИЕ XIX ВЕКА

(Резюме)

Вхождение Восточной Армении в состав России создало благоприятные условия для развития естественных наук, в том числе медицины и биологии. Началось активное исследование растительного и животного мира Армении, предпринятое русскими учеными (И. Шопен, Гамель).

В Армении в этот период переводятся некоторые естественно-научные книги с русского языка на армянский (Н. Максимовича-Амбодика). Появляется разнообразная медицинская и биологическая литература, написанная армянами, получившими образование в Европе и России и проживающими за пределами своей родины (П. Калантарян, И. Огуллухян, М. Рестен-Патканян, С. Шариманян). Первые представители армянской молодежи отправляются в Москву и Петербург с целью получения медицинского образования и среди них—первый дипломированный врач С. Акимов.

В тесной связи с медициной стала развиваться биология, в частности ботанические знания, которые в Армении, как и в России, в начальный период носили описательный характер. В дальнейшем началась систематизация и классификация существующего материала. В Армении этот период связан с именем С. Шариманяна, о жизни и деятельности которого в статье приводятся некоторые малоизвестные данные.

К. МАРДЖАНИЯН

## LES ÉTAPES DU DÉVELOPPEMENT DE LA BIOLOGIE EN ARMÉNIE À LA PREMIÈRE MOITIÉ DU XIX<sup>e</sup> SIÈCLE

(R é s u m é)

Le rattachement de l'Arménie Orientale à la Russie a créé des conditions favorables pour le développement des sciences naturelles, de la

<sup>23</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 17։

médecine et de la biologie entre autres. Les savants russes (I. Chopen, Hamel.) ont commencé l'étude active du monde végétal et animal de l'Arménie.

Certains ouvrages relatifs aux sciences naturelles ont été traduits en arménien à cette époque (N. Maximovitch-Ambodik). Une littérature médicale et biologique variée a paru, écrite par les Arméniens ayant fait leurs études en Europe ou en Russie et vivant à l'étranger (P. Kalandarian, H. Oughoulloukhian, M. Resten-Patkanian, S. Chahrimanian). Les premiers représentants de la jeunesse arménienne sont allés à Moscou ou à Pétersbourg pour y faire des études de médecine et parmi eux le premier médecin diplômé S. Akimov.

En contact étroit avec la médecine la biologie commence à se développer, en particulier la botanique qui en Arménie, comme en Russie, avait au début un caractère descriptif. Par la suite commencent la systématisation et la classification du matériau existant. En Arménie cette période est liée au nom de S. Chahrimanian, sur la vie et l'activité duquel l'auteur de l'article fournit certaines données peu connues.

ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՎՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ  
ԱՐՎԵՍՏԻ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ\*

Հայ-ուսական մշակութային կապերը գրեթե մեկ հազարամյակի պատմություն ունեն<sup>1</sup>: Մասնագետների կողմից աղերսներ են նկատված նաև արվեստի ասպարեզում: Հ. Խ. Խալիֆախյանի<sup>2</sup>, Ա. Լ. Յակոբսոնի<sup>3</sup>, Ն. Ն. Ռոզովի<sup>4</sup> ուսումնասիրությունների շնորհիվ ի հայտ են բերված որոշակի ընդհանրություններ երկու ժողովուրդների ճարտարապետական շինությունների, դրանց կառուցողական եղանակների, բնդհանուր արտահայտչամիջոցների և այդ կառույցների հարդարանքի միջև: Թեև այդ երևույթը նկատվում է սկսած դեռևս XII—XIII դդ., բայց այն ավելի ակնհայտ է դառնում XVI—XVII դդ., երբ Հայաստանի և Ռուսաստանի միջև ամրապնդվում և զարգանում են առևտրական, բաղադրական և մշակութային բազմակողմանի կապեր: Հայ վաճառականների միջոցով Ռուսաստան էին հասնում ոչ միայն տարբեր ապրանքներ, այլև արվեստի գործեր: Ռուսաստանում հաստատվում և իրենց գործունեությունն էին ծավալում հայ ճարտարապետներ, բարտաշներ, նկարիչներ, ոսկերիչներ և այլն: Ա. Լ. Յակոբսոնը, խոսելով Մոսկվայում զարգացող արվեստի մասին, նշում է այն աղբյուրները, որոնք նոր լիցք և թարմություն էին հաղորդում նրան՝ «Այդ աղբյուրներից մեկն էր, — գրում է նա, — ըստ երևվույթի, Մերձարևելյան, մասնավորապես Անդրկովկասյան՝ Վրաստանի, զլխավորապես Հայաստանի և Ադրբեջանի արվեստը: Այդ աղբյուրների նրշանակությունը Մոսկվայի XVI դարի գեղարվեստական մշակույթի ձևավորման ընթացքում մինչև այժմ գրեթե հաշվի չէր առնվում, մինչդեռ այդ երևույթը արտացոլող հռչարձանները զգալի մեծ խումբ են կազմում»<sup>5</sup>:

\* Ձեկուդու՝ կարգացված Մաշտոցի անվան Մատենադարանի հորեկյանական նստաշրջանում՝ նվիրված Ռուսաստանի Հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:

1 Լ. Մ. Մ. Լիքսեթ-Բեկ, Древняя Русь и Армения, Ереван, 1946; Մ. Ներսիսյան, Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956; Армяно-русские отношения в XVII в., Сборник документов, тт. I, II, Ереван, 1953; Армяно-русские отношения в XVIII в., Сборник документов, Ереван, 1967; Присоединение Восточной Армении к России, т. I, Ереван, 1972.

2 Օ. Ք. Խալախչյան, Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1967; նույնի՝ Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении, М., 1977.

3 Ա. Լ. Եակոբսոն, Художественные связи Московской Руси с Закавказьем и Ближним Востоком в XVI в., «Древности Московского Кремля», М., 1971 գրքում:

4 Ն. Ն. Րոզով, О русско-армянских книжных связях древнейшего периода, «Историко-филологический журнал», 1978, Ереван, № 3 (82), стр. 207.

5 Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 231:



XVI դարի ռուսական մանրանկարչության մասին խոսելիս Ա. Ն. Սվիրինը ևս նկատում է հայկական արվեստի ազդեցության փաստը. «XVI դարի սկզբի մի շարք ռուսական ձեռագրերի զարդարվեստում,— գրում է նա,— նկատվում են մոտիվներ, որոնք հատկանշական են հին Հայաստանի ձեռագրային արվեստին»<sup>6</sup>: Հեղինակը այստեղ նկատի ունի երեք ռուսական ձեռագրերի նկարազարդումները. Կիրիլո-Քելլոզերսկ վանքի Ավետարանը, Քիրյովի Ավետարանը և 1507 թ. Քեոզոսի Ավետարանը: Խոսելով վերջինի մասին, հեղինակը գրում է՝ «Հարկ է ընդգծել այն, որ հատկապես այս վարպետի (այսինքն Քեոզոսի) մոտ նկատվում են ռուսական գրքային արվեստի համար նոր զարգացումներ և հորինվածքներ: Իր հոր բազմակողմանի ընդունակությունները և քաջ ծանոթությունը զարդարվեստի ասպարեզում ստանում են հատուկ նշանակություն, երբ իմանում ենք, որ XV—XVI դդ. նկարիչների այդ ընտանիքին հայտնի են եղել հայկական և իտալական ձեռագրերը»<sup>7</sup>: Այդ կապը հեղինակը բացատրում է հատկապես Ղրիմից բերված հայկական ձեռագրերի ազդեցությամբ<sup>8</sup>: Հայկական մանրանկարչության ազդեցությամբ, ըստ երեվույթին, պետք է բացատրել նաև ռուսական ձեռագրերում հանդես եկող լուսանցազարդերը (նկ. 1)<sup>9</sup>, որոնք ռուս վարպետների վրձնի տակ ստանում էին գեղարվեստական այլ ձևավորում:

Հայտնի է, որ XVII դարից սկսած Ռուսաստանում ապրել և ստեղծագործել են օտարազգի շատ վարպետներ, որոնց թվում նաև հայեր: Դժբախտաբար այժմ դժվար է որոշել, թե որքան հայ վարպետներ են աշխատել Ռուսաստանում XVII—XIX դարերում: Բացի հանրահայտ Քոզոան Սալթանովից, կային մի շարք նկարիչներ, ոսկերիչներ և այլ վարպետներ, որոնք տեղափոխվելով Ռուսաստան, այնքան էին փոխում իրենց անուններն ու ազգանունները, որ ստույգ գրավոր տեղեկությունների բացակայության պայմաններում՝ անհնարին է լինում պարզել նրանց ազգությունը: Ն. Մ. Մուկան հատուկ աշխատություն է նվիրել Քելլոզի ազգանունը կրող հայ նկարիչների մի ամբողջ գերդաստանի, որի անդամները ապրել և աշխատել են Մոսկվայում XVII—XVIII դարերում<sup>10</sup>: Եվ իրոք, այնպիսի անուններ և ազգանուններ, ինչպիսիք են՝ Իվան և Եֆիմ Քելլոզիները, Մատյուշկա և Իվաշկա Քոզոանովները, Աֆոնկա Ֆիլիպովը, Այոշա Իվանովը<sup>11</sup> և ուրիշներ, շատ հեռու են հայկական լինելուց: Սակայն պահպանվել են արխիվային ստույգ նյութեր դրանց հայկական ծագման մասին: Աշխատելով Մոսկվայի Օրուծելնայա պալատում, նրանք շոշափելի լուծա են մուծել Ռուսաստանում զարգացող արվեստի մեջ:

Կան և հակառակ օրինակներ, երբ ռուս վարպետների գործերն օգտագործվում էին հայերի կողմից: Այդպիսի օրինակներ են հանդիսանում Մատենադարանում պահվող մի շարք հայկական ձեռագրերի կազմերը, որոնք

6 А. Н. Свирин, Древнерусская миниатюра, М., 1950, стр. 90.

7 Ա. Ն. Սվիրին, նշվ. աշխ., էջ 91:

8 Նույն տեղում, էջ 90:

9 Նկարը վերցված է Ա. Ն. Սվիրինի նշված աշխատությունից, 104 և 105 էջերի միջև:

10 Н. М. Молева, О художниках Бельских, «Лраբер», 1974, Երևան, № 8, էջ 38: Նույնի Иван Салтанов и его школа, «Лраբер», № 10, Երևան, 1977: Սույն ուսումնասիրության վրա մեր ուշադրությունը հրավիրեց Լ. Ս. Խաչիկյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

11 Н. М. Молева, О художниках Бельских, стр. 40.



Նկ. 1

ունեն առասկան արձանագրութիւններ: Նման կազմեր՝ ունեցող ձեռագրեր հասել են մեզ Նոր Նախիջևանից:

Ինչպես հայտնի է, Նոր Նախիջևանը հիմնադրվել է XVIII դարի վերջին՝ Ղրիմից արտագաղթաց հայերի կողմից, որոնք իրենց հետ բերել էին նաև հին

ձեռագրեր: Նոր Նախիջևանի ստեղծման և գաղթած ժողովրդի կենսապայմանների կարգավորման գործում մեծ ջանք է գործադրել արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Վերջինիս անմիջական մասնակցությամբ նոր հիմնադրված քաղաքում կառուցվեցին վանքեր և եկեղեցիներ, հաստատվեցին հոգևոր դատարանը և Մազիստրատը<sup>12</sup>: Եվ այդ ամենի հետ միասին Հովսեփ Արղությանը մեծ ուշադրություն դարձրեց նաև Ղրիմից բերված ձեռագրերին: Երվանդ Շահադիզը այդ առիթով գրում է. ամենամեծ հիշատակը, որ թողել է Արղությանը նոր Նախիջևանում՝ դա «գրչագիր գրքերի հավաքածուն է, որ խնամքով ժողովել, կազմել և ժառանգություն է թողել մեզ հետնոցս»<sup>13</sup>: Արղությանի անմիջական հոգածությամբ մի քանի ձեռագրեր ստացել են նոր, գեղեցիկ կազմեր: Այդպիսիներից է Մատենադարանի N 7631 ձեռագրի արձաթյա քանդակադրոշմված կազմը (նկ. 2): Կազմի վրա դրվագված են հորինվածքներ Քրիստոսի կյանքի վերաբերյալ տեսարաններով: Առաջին փեղկի վրա՝ կենտրոնում պատկերված է Քրիստոսի Հարությունը, իսկ անկյուններում՝ շորս ավետարանիչները: Երկրորդ փեղկում՝ կենտրոնում Աստվածամայրը Քրիստոս մանկան հետ, իսկ անկյուններում՝ Ավետումը, Ծնունդը, Տյառնընդառաջը, Մկրտությունը: Կողքի փակիչի վրա՝ տեսարաններ Քրիստոսի շարշարանքներից: Կազմի վրա կան նաև դրոշմներ, որոնցից պարզվում է, թե երբ և որտեղ է պատրաստվել ավյալ կազմը: Մի դրոշմի վրա տեսնում ենք սուրբ Գևորգին ձիու վրա և պարտված վիշապին: Այդ պատկերը Մոսկվա քաղաքի գերբն էր, որը դրվագվում էր բոլոր տիպի թանկարժեք մետաղյա շինվածքների վրա, սկսած 1714 թ. մինչև 1896 թվականը: Անմիջապես սուրբ Գևորգի պատկերի տակ դրվագված է թվականը՝ 1783 (երբ պատրաստվել է կազմը): Նույն կազմի վրա կա ևս մի դրոշմ A. O. B. անվանատառերով, որոնք պատկանում են մի անհայտ վարպետի՝ ապրած և աշխատած Մոսկվայում XVIII դ. վերջում: Այդ մասին տեղեկանում ենք Պոստնիկովա-Լոսևայի աշխատությունից, որտեղ կա բնդարձակ ցուցակ սուսական թանկարժեք մետաղի շինվածքների վրա հանդիպող դրոշմների<sup>14</sup>: Ձեռագրում պահպանվել է այդ նույն 1783 թ. գրված Արղությանի հիշատակագրությունը՝ «Ես սրբոյ աթոռոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ, Ռուսաց երկրի ամենայն Հայոց ազգին առաջնորդ, նոր Նախիջևանայ հիմնադիր և երանելի սուրբ Սիմեոն հայրապետին Երևանցոյ ձեռնասուն աշակերտ, Սանահնեցի Արղութեանց Շիրշեզի որդի՝ Յովսէփ ապարդին արքեպիսկոպոս, սուրբ Աւետարանս այս արձաթապատ առնել հոռու իմով սեպհական արդեամբ և նուիրեցի ի դուն նախիջևանու ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցոյն, զոր ես հիմնարկեցի ի 1783 թուին...»: Նույն ձեռագրի մեջ կա նաև Արղությանի 1792 թ. հիշատակագրությունը, ձեռագիրը Սբ. Լուսավորիչ եկեղեցուն՝ նրա օձման հանդեսի առթիվ նվիրաբերելու մասին: Ի դեպ, նույն թվին օձվել են նոր Նախիջևանի ևս մի քանի հայկական եկեղեցիներ, որոնց Արղությանը նվիրաբերել է ձեռագրեր: Այդ ձեռագրերի մեծ մասը Ավետարաններ են, ճոխ դարգարված

12 Առ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թիֆլիս, 1902: Երվանդ Շահադիզ, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903:

13 Երվանդ Շահադիզ, նշվ. աշխ., էջ 74:

14 М. М. Постникова-Лосева, Ювелирное русское искусство, М., 1974, стр. 227—344.

Ճանրանկարներով: Նրանց թվում նաև Կիլիկյան այսպես կոչված ութ նկարիչների փառահեղ Ավետարանը և Սմբատ Գունդատարլի Ավետարանը, որոնց արժաթյա կազմերը այժմ պահպանվում են Հայաստանի Պետական Պատկերասրահում (966 և 967 գույքահամարների տակ): Այդ կազմերը, թե՛ կա-



Նկ. 2

տարման հղանակով, թե՛ ներկայացված տեսարաններով՝ նման են վերը նրկարագրված կազմին: Ինչպես նշեցինք, կազմերից մեկը պատկանում էր ութ նկարիչների Ավետարանին, որը հնում նույնպես ունեցել է արժաթյա կազմ: Այդ մասին վկայություն է պահել մի հիշատակագրություն, որտեղ նշված են

սակերիչ վարպետների անունները՝ Սիրեր, Վասիլ, Մոմեղեն և Ասարպակ: Այդ ձեռագիրը նոր նախիջևան է հասել զրկված իր արծաթյա հին կազմից, այդ պատճառով նրա համար պատրաստել են նորը: Զեռագրի 272ա թերթում պահպանվել է ևս մի հիշատակագրություն՝ «Ար Աւետարանի երծաթեայ կոստղի երծաթի քաշն է շորս ֆունթ թամամ, բոլորն կերտել ավող նուաստ բժիշկ Պետրոս որդի Յովհաննէսի, թուի փրկչին 1788-ին ի Մոսկով մայրաքաղաքին Ռուսաց»: Իսկ 1792 թ., երբ օծվել է ն. նախիջևանի սբ. Լուսավորիչ եկեղեցին, այդ ձեռագիրը նվիրաբերվել է նրան Արղուսթյանի կողմից՝ հետևյալ հիշատակագրությամբ. «Յովսեփ Արքեպիսկոպոս. շնորհեցի նոր նախիջևանու սբ. Լուսաւորչի եկեղեցոյն զսբ. Աւետարանս 1792 թ. նոյ. 30-ին»:

Հ. Արղուսթյանի պատվիրած կազմերի մի մասը զարդարված է արծնապատ մեղալիտոններով: Այդպիսի մի կազմ ունի Մատենադարանի № 6341 ձեռագիրը (նկ. 3): Կազմի մետաղյա մասերի վրա կան դրոշմներ՝ մեկի վրա Մոսկվայի գերբը և կատարման ժամանակը (1790 թ.), մյուս երկուսի վրա վարպետների անվան և ազգանվան սկզբնատառերը, որոնցից մեկը՝ Կուզով Սեմյոն Պետրովն է: Այդ վարպետը աշխատել է Մոսկվայում 1780—1798 թվականներին<sup>15</sup>: Ինչ վերաբերում է արծնապատ մեղալիտոններին, նրանց վրա մեծ մասամբ վարպետների ստորագրություն չի լինում: Կարելի է միայն ենթադրել, որ դրանք նույնպես պատրաստվել են Մոսկվայում, որտեղ գոյություն են ունեցել գեղազարդ արծնապատ շինվածքների արհեստանոցներ: Ինչպես հայտնի է, գեղազարդ արծնապատման արվեստը զարգացում է ապրել Ռուսաստանում սկսած XVII դարի վերջից, և առավել տարածվել XVIII դարում, երբ գեղազարդ արծնապատ իրերի արհեստանոցներ բացվեցին տարբեր քաղաքներում՝ բացի Մոսկվայից և Պետերբուրգից, նաև Սուզդալյան Ռուստովում, Ուստյուգում, Սոլվիչեգոդսկում և այլուր<sup>16</sup>: Այդ արհեստանոցների տարբեր շափերով և նպատակներով պատրաստած արտադրանքը տարածվում էր Ռուսաստանով մեկ: Քանի որ այդ արվեստով զբաղվող վարպետները չէին թողնում ստորագրություններ իրենց գործերի վրա, շատ դժվար է թվագրել այն կազմերը, որոնք շունեն մետաղյա մասեր: Այդպիսի մի կազմ ունի Մատենադարանի № 2630 ձեռագիրը (նկ. 4): Նման դեպքերում օգնության են գալիս ձեռագրի մեջ պահպանված հիշատակագրությունները: Սույն ձեռագրում գտնում ենք Հ. Արղուսթյանի 1792 թ. հիշատակագրությունը, ուստի կազմը պետք է պատրաստված լինի այդ թվականից առաջ:

Ովքե՞ր էին այն վարպետները, որոնք Մոսկվայում կատարում էին Արղուսթյանի և մյուս հայ պատվիրատուների խնդրանքները: Անկասկած, նրանց մեջ կային նաև հայազգի մասնագետներ, որոնք սուս վարպետների հետ միասին աշխատում էին նույն արհեստանոցներում: Տարբեր ազգերի վար-

15 Պոստմիկովա-Լուևա, նշվ. աշխ., էջ 264:

16 Գեղազարդ արծնապատման առական արվեստի մասին կա հարուստ գրականություն, նշենք մի քանի աշխատություն. Ի. Մ. Суслов, Ростовская эмаль. Ярославль, 1951; В. А. Никольский, Древнерусское декоративное искусство, Петербург, 1923; А. Титов, Финифтяники в городе Ростове Ярославской губернии, М., 1901; Симони, Собрание изображений окладов на русских богослужебных книгах XII—XVIII вв., СПб., 1910; Б. А. Рыбаков, Ремесла древней Руси, М., 1948; Т. М. Разина, Русская эмаль и скань; М., 1961, А. Н. Свирин, Ювелирное искусство древней Руси, М., 1967; А. Николаева, Древнерусская мелкая пластика XI—XVI вв., М., 1968 и др.


պետների համագործակցությունը հանդեցնում էր այն բանին, որ նրանց ստեղծագործություններում ազգային տարրերությունները հետզհետե ջրնշվում էին: Հայ վարպետները ուսանելի համար դժվար արտասանվող անունները փոխում էին և, ինչպես արդեն նկատվեց, դժվար է լինում շատ ան-



Նկ. 3

գամ կուսակց, թե ինչ ազգութային վարպետի հետ գործ ունենք այս կամ այն դեպքում: Այդպիսի պայմաններում անգնահատելի օգնություն են ցույց տալիս հազվագեղ պատահող հայկական արձանագրությունները գեղազարդ արձնապատ իրերի վրա: Այդպիսիներից է Մատենադարանի № 6773 ձեռագրի կազմի մեղալիտներ, որի վրա հարություն առնող Քրիստոսի կողքին տես-

նում ենք «Հս. Քս» (աշխերն՝ Հիսուս Քրիստոս) հաշերեն տառերը (նկ. 5): Տվյալ կազմի արձնապատ մեղալիտնի վրա պատկերված ֆիգուրները առանձնանում են մի փոքր կարճեցված համաշափություններով և մեղմացված գունաշորով, որով բավականին տարբերվում են մյուս կազմերի վրա եղած պատկերներից:



Նկ. 4

Նոր Նախիջևանի ձեռագրերից մի քանիսը ստացել են նոր կազմեր նույնպես Մոսկվայի արհեստանոցներում XIX դարի առաջին տասնամյակներին: Այդպիսիներից է Մատենադարանի № 7547 ձեռագիրը: Կազմի մետաղյա մա-

սի վրա կա Մոսկվա քաղաքի գերբը (սբ. Գևորգը՝ ձիու վրա), և դրոշմ՝ Ա. Կ. անվանատառերով և 1843 թվականով: Այդ անվանատառերը պատկանում են Կովալսկի Անդրեյ Անտոնովիչին, որը, ինչպես հայտնի է, աշխատում էր Մոսկվայում 1827-ից մինչև 1856 թվականը<sup>17</sup>: Նույն վարպետի ձեռքով պատ-




Նկ. 5

րաստված է նաև Մատենադարանի № 7780 ձեռագրի կազմը (նկ. 6), որը պատվիրել է ոմն Կարապետ Քայալով: Այդ մասին իմանում ենք ձեռագրի մեջ պահպանված հետևյալ հիշատակագրությունից. «Յիշատակ է սբ. Աւե-

<sup>17</sup> Պոստնիկովա-Լուկա, նշվ. աշխ., էջ 315:





Նկ. 6

տարանս արժաթապատ յանուն սր Ածածնայ վերափոխման եկեղեցւոյ, արդեամբ աղայ Կարապետ Ստեփանեան Քաչարովի և իւրեանց կենդանի հոգւոյն և յանուն ննչեցելոց ծնողացն յամի տիւառին 1844, ամսեանն ապրիլի 27, ի Նախիջևան»:

Գեղազարդ արձնապատ արվեստը, ըստ երևույթին, շատ էր դուր գալիս հայ արվեստասերներին: Կարելի է մտածել, որ կային նաև ոչ քիչ թվով հայ նկարիչներ, որոնք յուրացնում էին այդ բարդ արվեստի տեխնիկան Մոսկվայում: Անշուշտ, նրանց մեջ կային նաև ոսկերիչներ, որոնք զարգեր էին պատրաստում թանկարժեք նուրբ իրերի, ինչպես նաև ձեռագրերի կազմերի համար: Պոստնիկովա-Լոսևան, ուսական ոսկերչական արվեստի հմուտ ուսումնասիրողը, գրում է՝ «Ամբողջ XVIII դարի ընթացքում, և հատկապես նրա երկրորդ կեսին, ցարական պալատի համար ներգրավվում էին բազում ոսկեգործ և արծաթագործ վարպետներ, որոնց ծագումը և ազգային պատկանելությունը շատ տարբեր է եղել»<sup>18</sup>: Այդ հեղինակի նշված գրքում տրված է ցուցակ՝ ոսկերիչ և արծաթագործ վարպետների անունների: Նրանց մեջ, անշուշտ, կան նաև հայ ծագում ունեցող վարպետների անուններ: Կարելի է կուսհել, օրինակ, որ հայեր են եղել Վահանովը, Բոգդանովը և Նազարովը: Հետագա ուսումնասիրողները ձեռքի տակ ունենալով և այլ նյութեր, հավանաբար կբացահայտեն ևս մի շարք հայազգի վարպետների անուններ, որոնք ապրել ու ստեղծագործել են Մոսկվայում և Ռուսաստանի այլ քաղաքներում:

Э. М. КОРХМАЗЯН

## ОТРАЖЕНИЕ АРМЯНО-РУССКИХ КУЛЬТУРНЫХ ВЗАИМОСВЯЗЕЙ В ОБЛАСТИ ИСКУССТВА

(Резюме)

В данной статье впервые описывается и публикуется ряд металлических окладов армянских рукописей, имеющих клейма с гербом города Москвы (святой Георгий на коне, поражающий дракона), русскими буквами (инициалами мастеров) и датой исполнения. Некоторые оклады снабжены также эмалевыми медальонами, на подавляющем большинстве которых также имеются русские надписи.

Исследование показало, что все эти оклады заключают в себе армянские рукописи, хранившиеся в Новом Нахичеване, реставрированные там и снабженные новыми переплетами на протяжении от конца XVIII до середины XIX в. Наиболее ранние из них заказаны на средства настоятеля армянских церквей в России, архиепископа Овсепя Аргутяна (Иосифа Аргутинского). Согласно сохранившимся клеймам удается уточнить имена некоторых мастеров, выполнявших заказы Аргутяна. Имеющаяся на эмалевом медальоне одного из окладов армянская надпись позволяет заключить, что среди этих мастеров были и армяне. Манера последних менять свои фамилии и имена на русский лад весьма затрудняет вопрос уточнения национальной принадлежности некоторых из них.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 156:

E. KORKHMAZIAN

LA RÉPERCUSSION DES RELATIONS CULTURELLES  
ARMÉNO-RUSSES DANS LE DOMAINE DE L'ART

## (R é s u m é)

Dans cet article l'auteur décrit et publie pour la première fois un certain nombre de reliures métalliques de manuscrits arméniens portant une marque aux armoiries de la ville de Moscou (Saint Georges à cheval terrassant le dragon), des caractères russes (initiales des artistes) et la date de l'exécution. Certaines reliures sont décorées également de médaillons émaillés, dont la plupart portent des inscriptions russes.

L'examen a montré que toutes ces reliures renferment des manuscrits arméniens conservés au Nouveau-Nakhitchévan, restaurés et reliés là-bas de la fin du XVIII<sup>e</sup> siècle jusqu'au milieu du XIX<sup>e</sup>. Les plus anciennes reliures ont été commandées avec les moyens du prieur des églises arméniennes de Russie, de l'archevêque Hovsep Argoutian (Iossif Argoutinski). Grâce à certaines marques conservées il est possible de préciser les noms de certains artistes ayant travaillé à la Salle des armes. L'inscription arménienne conservée sur le médaillon émaillé de l'une des reliures permet de conclure que parmi ces artistes il y avait également des Arméniens. La manière qu'avaient ces derniers de russifier leurs noms et leurs prénoms complique considérablement la détermination de l'appartenance nationale de certains d'entre eux.

А. Я. КАКОВКИН

СЕРЕБРЯНЫЙ ПЕРЕПЛЕТ 1663 г. МАСТЕРА  
ТЕР-ОВАНЕСА БАГИШЕЦИ

Данная работа посвящена одному из многочисленных памятников армянского художественного серебра XVII в.—переплету евангелия 1475 г. из собрания Публичной библиотеки в Бостоне (США)<sup>1</sup>. В 1950 г. Сирарпи Тер-Нерсисян опубликовала эту рукопись—«Прекрасный образец искусства XV в.»—приведя выдержки из хишатакаранов, бегло описав ее серебряный переплет и воспроизведя его оборотную сторону<sup>2</sup>.

Евангелие заключено в кожаный переплет, на лицевой и оборотной сторонах которого укреплены две довольно толстые серебряные пластины с чеканными изображениями. С обреза эти пластины скрепляются двумя оригинальными металлическими застежками в форме кистей рук.

На верхней пластине (рис. 1) в поле, образованном сужающимися и закругляющимися на концах крыльями креста, представлено Распятие. По сторонам распятого на четырехконечном кресте Спасителя—предстоящие: Мария и Иоанн Богослов. Над верхней перекладиной креста—солнце и луна; у подножия—череп Адама и кости. Крест венчает свиток с гравированной надписью: «Յ[իսուս] Ն[ազարեացի] Հ[րէից] Թ[աղաւոր]», т. е. «Институт Назорей иудейский царь». На втором плане условно переданы городская стена и постройки Иерусалима.

В углах пластины изображены сидящие евангелисты с символами. Вверху—Матфей с ангелом (слева) и Иоанн с орлом (справа), внизу—Марк со львом (слева) и Лука с тельцом (справа).

Центральную часть нижней пластины (рис. 2), образуемую крестом, аналогичным по форме и размерам кресту на крышке, занимает Воскресение. Христос в облаках, благословляя десницей и держа в левой руке стяг, вылетает из гроба; слева—ангел, поддерживающий плиту саркофага, справа и внизу—два спящих воина.

Изображенные в верхних углах ангел с лилией в руке и коленопреклоненная перед подставкой с раскрытой книгой Мария, к которой летит голубь (дух святой), образуют Благовещение.

<sup>1</sup> Инв. № MS 1327.

<sup>2</sup> *S. Der Nersessian*. An Armenian Gospel of the Fifteenth Century. Reprinted from the January 1950 issue of the Boston Public Library Quaterly, p. 3—20, fig. 1—14. О переплете см.: p. 17, fig. 14.

В нижних углах по фигуре в рост. Пояснительных надписей нет, но в левом персонаже во власянице, со стягом-крестом и агнцем в руках



Рис. 1. Лицевая сторона переплета.

без труда можно опознать Иоанна Крестителя. Справа—фигура в диаконском облачении, с кадильницей в правой руке и артофорием (пиксидой для хранения св. хлеба-тела господя)<sup>3</sup> в левой. С. Тер-Нерсисян

<sup>3</sup> G. de Jerphanion. L'attribut des diacres dans l'art chrétien du moyen âge en Orient. „Εἰς μνήμην Σπυρίδωνος Λάμπρου“, Ἀθήναι, 1935, p. 403—416.



Рис. 2. Обратная сторона переплета.

приняла эту фигуру за женскую и не идентифицировала ее<sup>4</sup>. Нам кажется, что это изображение очень популярного в Армении святого—первомученика-архидиакона Стефана<sup>5</sup>.

Выбор композиций и персонажей для украшения оклада евангелия вполне традиционен. Благовещение, Распятие, Воскресение—одни из

<sup>4</sup> S. Der Nersessian, op. cit., p. 17.

<sup>5</sup> На первый взгляд несколько удивляет отсутствие у Стефана нимба—символа святости. Но венца нет и у Марии в Благовещении. В поздних памятниках (как и очень ранних) подобные явления встречаются довольно часто.

Близкие Стефану на переплете изображения диаконов см.: J. Carswell. New Julfa. The Armenian Churches and other Buildings. Oxford, 1968, p. 14, fig. 2.

основных и глубоко символических событий христианской истории. Благовещение рассматривалось как весть о будущем приходе Спасителя мира. В Распятии видели акт искупления Христом человеческих грехов. Воскресение толковалось как залог спасения людей. Евангелисты-провозвестники слова божьего—изображены рядом с событием, о котором они повествовали. Предтеча и Стефан—первые мученики христианства, связавшие Ветхий завет с Новым. К тому же, Предтеча, «величайший между рожденными женами», крестил Христа; Стефан, принадлежавший к семи первым диаконам, считался одним из столпов христианства.

Но в данном случае есть факты более конкретные. Монастырь, в котором была закончена рукопись, возник в конце XIII в. в память сына Тер-Гусика—монаха Стефана<sup>6</sup>—тезки архидиакона-первомученика. Из хишатакаранов евангелия узнаем, что святая обитель «находилась под покровительством св. Богородицы, св. Воскресения, св. Предтечи»<sup>7</sup>. К тому же один из заказчиков памятника—архиепископ Тер-Ованес теозоименен Крестителю.

Изображения лицевой стороны выдержаны в традициях восточнохристианского искусства. Распятие представлено, как на абсолютном большинстве армянских памятников среброделия, по сокращенной схеме: лишь с двумя предстоящими, без ангелов вверху. Евангелисты в углах—мотив так же обычный, прослеживаемый на армянских переплетах с середины XIII столетия<sup>8</sup>.

Особо остановимся на образе Иоанна Богослова. Как апостол он всегда изображался юным, как евангелист—зрелым, бородатым мужем. С. Тер-Нерсисян на материале греческих миниатюр X—XI вв. установила, что безбородый Иоанн Богослов в типе евангелиста неизвестен искусству Византии<sup>9</sup>, но встречается в ряде ранних латинских кодексов<sup>10</sup>, а так же в грузинских<sup>11</sup> и армянских памятниках<sup>12</sup>.

<sup>6</sup> S. Der Nersessian, op. cit., p. 4.

<sup>7</sup> S. Der Nersessian, op. cit., p. 18.

<sup>8</sup> Ранний пример—чеканные изображения евангелистов в рост по углам лицевой стороны серебряного переплета, исполненного в 1254 г. в Ромкле (Антилиас, собр. Католикосата Киликии, № 1)—S. Der Nersessian. Le reliquaire de Skevra et l'orfèvrerie cilicienne aux XIII<sup>e</sup> et XIV<sup>e</sup> siècles. REArm., t. I. Paris, 1964, p. 134, pl. X (fig. 12).

<sup>9</sup> R. Blake, S. Der Nersessian. The Gospels of Bert'ay: An Old-Georgian MS. of the Tenth Century. „Byzantion“, XVI (1942—1943), p. 262.

<sup>10</sup> Например, в евангелии Гутберхта 770 г. (K. Zimmermann. Die volkarolingische Miniaturen. Berlin, 1916, Taf. 300); в евангелии Кёргберта (или Дергемское) VIII в. (K. Верман. История искусств всех времен и народов, т. II. СПб., 1896, илл. на стр. 114); в евангелии (около 800 г.) из аббатства Сен-Медар в Суассоне (H. Holländer. Kunst des frühen Mittelalters. Stuttgart, 1969, № 37); в евангелии (около 810 г.) из Ксантена H. Holländer, op. cit., № 52); в евангелии (около 980 г.) из St. Chapelle в Париже (H. Holländer, op. cit., № 119); в „Луксейльском евангелии“ XI в. („История западноевропейского искусства (III—XX вв)“. Л.-М., 1940, рис. 34) и др.

<sup>11</sup> См. Адишское 897 г. и Первое Джручское 940 г. евангелия—Ш. Я. Амиранашвили. Грузинская миниатюра. М., 1966, илл. 1 и рис. на стр. 16.

<sup>12</sup> Рукопись, исполненная в 1057 г. в Мелитене—Т. А. Измайлова. Истоки серии

Относительно изображений на оборотной стороне переплета С. Тер-Нерсисян отметила, что они соответствуют западноевропейскому иконографическому канону. Однако и здесь налицо характерная для армянских памятников тяга к архаизации некоторых изображений, приверженность к старому приему символического параллелизма изображений<sup>14</sup>.

Надписей, обычных для большинства армянских памятников сереброделия, на интересующем нас переплете нет. Но данные хишатакаранов, приводимые в работе С. Тер-Нерсисян, позволяют с уверенностью говорить не только о месте и времени изготовления переплета, но и о его заказчике и мастере.

На листе 316 рукописи читаем: «Помяните во Христе—надежде всех людей—переплещего это св. евангелие Тер-Ованеса Багишечи, а так же его родителей и детей, а особенно владельца рукописи почтенного главы семейства Харипа (Gharip) из Кыртагома (K'rdagom), вложившего в евангелие заработанные честным трудом деньги... Помяните так же Тер-Багдасара, по совету которого было куплено это святое евангелие и сделан переплет к нему. В 1112 [+551=1663] году армянского летоисчисления»<sup>14</sup>.

Из приведенной выдержки и других хишатакаранов рукописи можно заключить, что в 1663 г. золотых дел мастер Тер-Ованес Багишечи<sup>15</sup> украсил евангелие 1475 г. серебряным переплетом. Скорее всего это со-

---

евангелистов в группе армянских малоазийских рукописей.—«Историко-филологический журнал АН АрмССР», № 1 (40), 1968, рис. 3.

Безбородым Иоанн Богослов изображен на триптихе «Хотакерац сурб ишан» 1300 г. (Эчмиадзин, музей при кафедральном соборе)—«Декоративное искусство средневековой Армении». Л., 1971, илл. 149 (крайняя справа фигура в рост); на лицевой стороне переплета 1651 г. из собр. Сан-Ладзаро (Венеция). Издавший этот памятник А. Курдян (*Հին հայ արձաթագրությունների վրայ. «Գեղարվեստ» Վեներիկ, 1950, էջ 80, № 5*) считал, что он был исполнен венецианским мастером по заказу армянина.

<sup>13</sup> Изображение Стефана на переплете перекликается с изображением этого святого на мощехранильнице XI в. из Эчмиадзина—Բ. Աստվծյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում Բ-ժԳ դդ., I, Երևան, 1958, էջ 174—175, նկ. XXIա*. На обоих памятниках святой предстает перед нами одновременно архидиаконом и первомучеником. Одежда и кадильница определяют его диаконское достоинство, артофорий (как и потир, с которым Стефан представлен на мощехранильнице) воплощает идею жертвенности и указывает на него как на мученика. Подробно этот вопрос рассмотрен в моей статье «Мощехранильница первомученика Стефана из Эчмиадзина» (в печати).

На переплете, как и на скеврском триптихе 1293 г. (Эрмитаж, № V<sub>3</sub>—828), Предтеча и Стефан изображены рядом с Благовещением—S. Der Nersessian. *Le reliquaire de Skevra...*, pl. II (fig. 2).

<sup>14</sup> S. Der Nersessian. *An Armenian Gospel...* p. 18.

<sup>15</sup> Из литературно-исторических источников нам известны имена нескольких других ювелиров родом из Багеша (Битлиса). В хишатакаране рукописи 1460 г. (Матенадаран, № 3494) упомянут золотых дел мастер Каримадин (*Քարիմադին*)—Լ. Խաչիկյան. *Ժեղաբերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, II, Երևան, 1958, էջ 141*. Под 1502 г. фигурирует «Шагубат Багишечи, сын ювелира Аствацатура» в рукописи, упомянутой Р. Ачаряном—Հ. Աճառյան. *Հայոց անձնանունների բառարան, Գ. Երևան, 1948, էջ 121*.



бытие имело место в городе Муше (Тарон), рядом с которым находилось сел. Кыртагом (родом из него был владелец рукописи—некий Харип).

Техническое исполнение памятника очень высоко. Благодаря одинаковому принципу оформления пластин, прекрасной вкомпонованности фигур в отведенные для них пространства и трактовке их по законам монументального искусства—общо, четко, выразительно,—мастер добился композиционной цельности. Тер-Ованес, как и большинство его предшественников—ювелиров XI—XV вв., тонко чувствовал свойства материала (серебра): он не «рвал» поверхность пластин слишком высоким рельефом; по-разному обрабатывая отдельные участки пластин, он добивался декоративного эффекта за счет разнообразия фактуры металлических листов.

В этом памятнике нет характерных для некоторых поздних художественных изделий из серебра насыщенности орнаментом, «окомканного» рельефа, дробности форм, дотошной проработки деталей. По старой традиции в переплете мастера Тер-Ованеса Багишечи фон оставлен гладким, тактично введены растительные побеги, плоскости не перепружены изображениями, пластически выразительные фигуры хорошо смотрятся и издали и с близкого расстояния.

Все вышеизложенное с полным основанием позволяет отнести переплет мастера Тер-Ованеса Багишечи к числу лучших образцов армянского среброделия XVII столетия.

Ա. Յ. ԿԱԿՈՎԿԻՆ

ԼԵՆԻՆԳՐԱԴ

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂԻՇԵՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ  
1663 թ. ԱՐՄԱԹՅԱ ԿԱԶՄԸ

(Ա մ փ ո փ ո լ մ)

Աշխատությունը նվիրված է 1475 թվականին ընդօրինակված և այժմ Բոստոնի հանրային գրադարանում պահվող մի ձեռագրի արժաթյա կաղմին, հրատարակված 1950 թ. Ս. Տեր-Ներսիսյանի կողմից: Կաղմը պատրաստված է 1663 թ. Մուշում, Տեր-Հովհաննես Բաղիշեցի ոսկերչի ձեռքով: Կատարման ոճի ու եղանակի առանձնահատկությունները և հաշարձանը դարձրող պատկերագրական միջոցները այն դասում են XVII դ. հայ արժաթագործության լավագույն նմուշների շարքը:

A. KAKOVKINE

LA RELIURE D'ARGENT DE 1663 DE L'ARTISTE  
DER-HOVHANNES BAGHICHÉTSI

## (R é s u m é)

L'article est consacré à la reliure du manuscrit de 1475 de la Bibliothèque publique de Boston (U. S. A.) publié en 1950 par S. Ter-Nersessian. La reliure a été exécutée en 1963 à Mouch par le joaillier Ter-Hovhannes Baghichétsi. Les particularités du style et de la technique d'exécution, de même que l'iconographie des images décorant le monument le mettent au rang des meilleures oeuvres de l'argenterie arménienne du XVII<sup>e</sup> siècle.

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

«ԳՈՎԱՆՔ ԹՈՒՉՆՈՅ» ՏԱՂԱՇԱՐՔԸ, ՆՐԱ  
ՀԵՂԻՆԱԿՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿՐ

Աշխարհականացման հունի մեջ բնկած միջնադարյան հայ բանաստեղծությունը X—XIV դարերում հրապարակ հանեց ինչպես ձևով, այնպես էլ շոշափած հարցերով մի նորորակ հարստություն, որի ամբողջությունը դեռևս լրիվ չի ներկայացված: Այդ հարստության մեջ առանձին ուշադրություն են դրվում այն փոքրածավալ ստեղծագործությունները, որոնց համար բնորոշ են համանման միավորներից կազմված շարքերը: Այդպիսիներից են, օրինակ, հանելուկները, հայրենները: Նման ստեղծագործությունների ուժը ամենից առաջ նրանցից կազմված շարքերի մեջ է, որովհետև դրանք այդպիսի ամբողջությամբ է, որ մեծ ներգործություն են ունենում: Եթե մի միավորը բերում է մի մտքի, մի տրամադրության, մի խոսքի նորություն, ապա մի քանի տասնյակից ավելի միավորներն ստեղծում են համակողմանի և բնդհանուր տրամադրություն, անգամ ուղղություն: Եվ միանգամայն բնական է, որ ժամանակի խոշոր բանաստեղծներ ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին, Ֆրիկը, Խաչատուր Կեչառեցին և ուրիշներ մեծապես օգտվեցին բանաստեղծության այդ տեսակից, ստեղծելով բարձրարվեստ և բազմարժանողակ շարքեր:

Բանաստեղծների այդ խմբի ներկայացուցիչներից մեկն էլ ցարդ մոռացության մատնված Կիրակոս Եպիսկոպոսն է: Վերջինս, օգտվելով բանաստեղծության նշված տեսակից, գրել է մի բացառիկ կարևորություն ունեցող շարք՝ նվիրված թուշունների գովքին: Մեզ հայտնի է այդ շարքի երկու բնգործություն. մեկը՝ բնդարձակ՝ XV դարից<sup>1</sup>, իսկ մյուսը համառոտ՝ XVI—XVII դարերից<sup>2</sup>:

Ուշադրով է, որ համառոտ օրինակում կան այնպիսի միավորներ, որոնք չկան բնդարձակում: Օրինակ, բնդարձակում չկա համառոտի հետևյալ միավորը.

Բազան թևաքն էր սուր և սայր,  
Երթար զամէն հաւերտ որսայր,  
Երբ ինք թռչէր սարէ ի սար,  
Նա սասանին հաւերտ հաւսար<sup>3</sup>:

<sup>1</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 3595, թերթ 69ա—79բ:

<sup>2</sup> Նույն տեղում, ձև. № 738, թերթ 113ա—116բ:

<sup>3</sup> Տե՛ս կից ներկայացվող բնագրի 49—52-րդ տողերը: Տե՛ս նաև 57—60-րդ տողերը, որոնք չկան բնդարձակում:

Երկու շարքերի միջև առկա են նաև այնպիսի տարբերակներ, որոնք հրքեմն հասնում են ղգալի հեռավորության: Ընդարձակ շարքում կարգում ենք.

Ձիւնձիւնիկ հաւուկ մի կայր,  
Որ ինքն յամէն աշուն կու գայր,  
Գայր ու հանց խապար կու տայր,  
Թէ՛ ո՛վ տուել կապա ի կար՝  
Ատոր ցուցէք ձիւնն կու գայր:

Համառոտ օրինակում այս 5 տողի փոխարեն ունենք հետևյալ 4 տողերը, որոնք ավելի հարազատ են թվում բնագրին.

Ձիւնձնուկն ձայն ածէր  
Վասն ձմռան, էփ ձունըն գայր,  
Թէ՛ ո՛վ կապայ ունի անկար,  
Թող շուտ կարէ, որ չցրտանայր:

Վերջում կարելի է նկատի առնել նաև մի շարք այլ տվյալներ, որոնք խոսում են շարքի XIII—XIV դարերում ծնված լինելու օգտին:

Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանված երկու շարքերի մեջ էլ իշխում է ոչ թե «օ»-ն, այլ «աւ»-ը: Դա ցույց է տալիս այն ժամանակները, երբ դեռ «օ»-ն լայն օգտագործման չէր արժանացել: Այդպիսին էր վիճակը XIII—XIV դարերում:

Հիշված երկու ընդօրինակությունների մեջ էլ իշխում են գրաբարյան «գայր», «կայր», «վերանայր» և նման ձևերը՝ «գար», «կար», «վերանար» ձևերի նկատմամբ: Դա ևս մեզ հուշում է XIII—XIV դարերի իրականությունը:

Առանձնահատուկ նշանակություն ունի նույնահանգության պարագան. «Գովանք թռչնոցը» ծայրից-ծայր ստեղծված է միևնույն՝ այր, ար, առ հանգով, որը մեզ տանում է դեպի Ֆրիկյան նույնահանգության ժամանակները:

Կարելի է ուրիշ տվյալներ էլ հիշել, սակայն կարծում ենք, որ վկայակոչված փաստերն էլ լի ու լի բավարար են համոզվելու մեր առաջ քաշած կարծիքի հավաստիության հարցում:

Նման փաստերը համոզում են, որ համառոտ օրինակը գալիս է մի ավելի հին շարքից, քան XV դարի ձեռագիրն է: Նրա նկատմամբ էլ, սակայն, անհամեմատ մեծ առավելություններ ունի ընդարձակ օրինակը՝ ենթադրել տալով առավել հին նախահիմք: Բայց որ այդ բոլորի հիմքում ընկած հեղինակային օրինակն էլ XIII—XIV դարերից հին լինել չի կարող, դա անվիճելի է, որովհետև այդ շարքում կա ակնարկ թաթարական բանությունների մասին.

Ուրուրն ի շէնըն կու կենայր՝  
Ձեզ հարամի կամ ղեզ թաթար,  
Առնոյր ղհաւձագն ու բարձրանայր,  
Թէ հազար մարդ կանգնած կենայր:

Այսպիսով, մնում է ենթադրել, որ «Գովանք թռչնոցը» ծնվել է XIII—XIV դարերում:

Հեղինակի մասին տեղեկանում ենք բանաստեղծության հենց առաջին տնից, ուր ասվում է.

Տէր Կիրակոս՝ հոգով տկար,  
Եպիսկոպոս՝ յերկիր աւտար,  
Կամիմ գովել զհար հաւասար՝  
Յուրախութիւն մարդկան համար:

Այս տունը հայտնում է ոչ միայն հեղինակի անունը (Կիրակոս), կոչումը (Եպիսկոպոս), այլև նրա պանդխտած և «յերկիր աւտար» ապրած լինելը: Ո՞րն է այդ երկիրը, տեղեկութուն չկա. սակայն գովքի մեջ հիշվում է Լիրանանը և առայժմ ենթադրել տալիս այդ երկրի մասին.

Արման մեծ էր ու անհնար,  
Հայէր ծովուն յատակն ի վայր,  
Շալկէր շատ փայտ և վերանայր՝  
Լիրանանու լեռնէն ի վայր:

Կիրակոս Եպիսկոպոսի «Գոգանք թռչնոցի» երկու շարքերն էլ ցարդ անտիպ են, հիմք են տալիս ստեղծել բնական բնագիր և այդպես հրատարակել այն, ուստի ստորև ներկայացնում ենք այդ բնագիրը:

Մեր ասելիքը թերևս այսքանով էլ ավարտվեր, եթե նշված ստեղծագործության հետ կապված չլինեին թյուրիմացություններ: Բանն այն է, որ դեռևս XVII դարում նրանից օգտվել է Ստեփանոս Լեհացին և հիմք տվել իր անվան հետ կապելու այդ շարքից նրա արտածած տողերն ու տները: Հետո ձեռագրերում գտնվել են տաղի ուրիշ օրինակներ, այս անգամ՝ Տէր Հովհաննեսի անունով, որոնց համաձայն այդ ստեղծագործությունը վերագրվել է նրան: Այդպես էլ ընդունված է այժմ: Այս թյուրիմացությունը պարզելու նպատակով նախ փորձենք ծանոթանալ հարցի ամբողջական պատմությանը, որը ինքնին հետաքրքրական է:

Դեռևս 1852 թ. Ղ. Ալիշանը, խոսելով Ստեփանոս Լեհացու մի անտիպ բառարանի մասին, ուշադրություն դարձրեց նրա մեջ առկա չափածո տողերի վրա և արտածելով տպագրեց դրանք որպես թռչուններին նվիրված գովքի փշրանքներ: Ղ. Ալիշանի ենթադրությամբ դրանք կարող էին Ստեփանոս Լեհացու գրչի արդյունքը լինել<sup>4</sup>: Շուտով այդ շարքը վերահրատարակեց Մ. Միանսարյանը՝ նույն կարծիքով<sup>5</sup>:

Բայց ահա 1879 թ. Ն. Բյուզանդացին հրատարակեց «Ճաղ թռչնոց» խորագրով մի ընդարձակ շարք, որն սկսվում է այսպես.

Ես Յովհաննէս հոգով տկար,  
Եւ վարդապետ յերկիր օտար,

<sup>4</sup> «Բաղմավէպ», 1852, էջ 95:

<sup>5</sup> Մ. Միանսարյան, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 426—427: Ո՞չ Ղ. Ալիշանը, ո՞չ էլ Մ. Միանսարյանը չեն նկատել, որ այդ շարքից առաջ զետեղված տողերի մեջ ևս կա համանման մի տուն («Սարեկիկն սարսափէր...»), որը նույնպես նույն շարքին է պատկանում:

Կամիմ գովել զհաւք հաւասար  
Ուրախութիւն մարդկան համար:

Այս հիման վրա էլ նա իր հրատարակած բնագիրն ու խոսքը զետեղեց հետևյալ խորագրի ներքո. «Յովհաննէս վարդապետի Տաղ թոչնոց հանեալ ի Մատենադարանէ գրչագրաց Յ. Յ. Անտոնեան հայոց յՕրբաբէջոյ»:

Ճիշտ է, այս բնագիրը մասամբ պակասավոր է, սակայն տները համարակարգված են (Ա—ԿԱ), որով և հնարավոր է լինում պարզել, թե՛ ամբողջ շարքի տնաքանակը (61) և թե՛ պակասող տների քանակը (շուրջ 10 տուն՝ Գ—ԺԳ):

Ն. Բյուզանդացին միաժամանակ ուշադրութիւն դարձրեց Ղ. Ալիշանի տպած տողերի վրա՝ ցույց տալով այդ և իր հրատարակած շարքերի նույնական ծագումը, ինչպես նաև Ստեփանոս Լեհացուն հեղինակ ճանաչելու անհիմն լինելը: Այստեղ նա տաղին կցեց Ստեփանոս Լեհացու բառարանում գտնվող բոլոր հատվածները՝ համապատասխան մեկնաբանութիւններով<sup>6</sup>:

Այս տպագրութեանը մասնավոր նամակով 1880 թ. անդրադարձավ Սուրվարդ. Պաշտնյանը՝ Ն. Բյուզանդացուն գրելով. «Կարի ախորժով ընթերցայ ի Մասիս օրագրին զՏաղ թոչնոց, գիտ ցանկալի»: Ապա նա փորձեց այդ տաղի մեջ հիշված Հովհաննեսին նույնացնել մի ուրիշ Հովհաննեսի հետ, որից ներքան հայտնի էր «26 տուն քառասող զիւրոյ կենաց քանահիւսութեան և սկսանի այսպէս»:

Ի Յովհաննէ առաջնորդէս  
Եւ ի բանից աշակերտէ...»<sup>7</sup>:

Պետք է ասել, որ այս Հովհաննեսը ոչ մի անշուքութիւն չունի «Տաղ թրոչնոցի» մեջ հիշված Հովհաննեսի հետ, ուստի այդ տեղեկութիւնը մնաց անհետևանք:

Շատ շանցած, Հովհ. քահ. Մկրչանը հրապարակ հանեց թոչնոցներին նվիրված տաղի մի այլ տարբերակ, որը նույնպես սկսվում է «Ես Յովհաննէս հոգով տկար» տողով: Այն շնայած բաղկացած է 19 տնից, բայց վերջին երկու տները ոչ այլ ինչ են, քան խրատական հայրեն, որը չի նկատել հրատարակողը: Ընդհակառակը, այն զրվատված է որպես տաղի ամենաարժեքավոր մաս:

Հով. քահ. Մկրչանի տպագրած օրինակն ունի այսպիսի խորագիր. «Տաղ և գովասանութիւն ամենայն հաւոց գոր ասացեալ է Յովհաննէս վարդապետէ»: Հասկանալի է, որ այս և նման ուրիշ խորագրերն ստեղծվել են շարքի սկզբը նատողերի հիման վրա.

Ես Յովհաննէս հոգւով տկար  
Եւ վարդապետ երկիր օտար...»<sup>8</sup>

6 «Մասիս» (օրաթերթ), Կ. Պոլիս, 1879, №№ 2478—2482:

7 Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվի բաժին, Ն. Բյուզանդացու արխիվ. թղթ. 235, վավ. 99:

8 «Երկրագունտ», Կ. Պոլիս, 1884, էջ 316—320: Հետագայում այս օրինակը վերահրատարակվեց Լ. Բյուրաջանի կողմից («Հայաստանեայց եկեղեցի», 1841, էջ 115):

Հաշորդ բանասերը Կ. Կոստանյանցն է, որ 2 այլ ձևազրեբից (մեկը 1680, իսկ մյուսը՝ 1965 թթ.) քաղելով՝ հրատարակել է մի ուրիշ շարք՝ տարբերությունների նշումներով: Այդ շարքը բաղկացած է 19 տնից<sup>9</sup>: Նա նախորդ հրատարակությունների մասին չի խոսում: Հեղինակի մասին էլ կատարում է մի թուցիկ նշում. «Ահա Հովհաննէս եպիսկոպոսը օտար երկրում նկարագրում է երգով իւր հայրենիքի թռչուններին»<sup>10</sup>: Հետագայում այդ օրինակը վերահրատարակվեց Մ. Մկրյանի կողմից<sup>11</sup>:

Թռչունների գովքին հատուկ ուշադրություն է նվիրել Ա. Չոպանյանը: Նա ծանոթ է ինչպես Ն. Բյուզանդացու, Հով. քահ. Մկրյանի, Կ. Կոստանյանցի հրատարակություններին, այնպես էլ Երուսաղեմում գտնվող 2 անտիպ շարքերի, որոնց բոլորի օգտագործմամբ հրատարակել է խմբագրված մի նոր շարքի թարգմանությունը՝ Ֆրանսերեն լեզվով<sup>12</sup>: Այն բաղկացած է 62 տնից և գուցորդված է մանրանկարչական թռչնազարդերով: Հեղինակի մասին նորություն չկա:

Իրերի այս դրույթյան մեջ էր ահա, որ 1940 թ. մենք Մատենադարանի երկու ձեռագրերում (№№ 3595 և 738) հանդիպեցինք քննվող տաղի վերոհիշյալ երկու նոր շարքերին, որոնց սկզբի տան մեջ հիշված է ոչ թե Հովհաննեսի, այլ Կիրակոսի անունը: Այդ մասին այն ժամանակ մենք կատարեցինք գրավոր հաղորդում, որը լույս տեսավ 1941 թ.<sup>13</sup>: Այնտեղ գրել ենք. «Համեմատությունից պարզվում է, որ Տեր Հովհաննեսի տաղը Կիրակոսի տաղի զանազան տների խառնիխուռն դասավորության մի հատվածն է»<sup>14</sup>:

Նույն 1941 թ. թռչունների գովքին անդրադարձավ բանասեր Հ. Քյուրտյանը, շրջանառության մեջ դնելով նորահայտ մի շարք փաստեր: Դրանցից ամենատուշագրավը Փարիզի Նուպարյան Մատենադարանի ձեռագրերից մեկում նրա հայտնաբերած մի բանաստեղծությունն է՝ այսպիսի խորագրով. «Տաղս է ս[ր]բ[ո]յ զատկին, Կիպրացի վարդ[ա]յ[ե]տի ասացեալ»: Տաղի վերջում հիշված է հեղինակի անունը՝ «Տէր Յովաննէս»: Ըստ այդմ, Հ. Քյուրտյանը նրան կոչում է Կիպրացի Հովհաննես: Եվ հենց այս հեղինակին էլ նա, իրավացիորեն, նույնացնում է թռչունների գովքում հիշվող Տեր Հովհաննեսի հետ: Բանն այն է, որ Կիպրացի Հովհաննեսի այդ նորահայտ տաղում առկա են մի շարք տներ՝ նվիրված թռչունների գովքին, որոնք ստեղծագործական ատաղծով առնչվում են մեզ հետաքրքրող գովքի հետ: Ուստի հիմք է ստեղծվում մտածելու նրա հեղինակի և Տեր Հովհաննեսի նույնությունից մասին: Դա, հիրավի, նոր ու հետաքրքրաշարժ փաստ է:

Հ. Քյուրտյանը միաժամանակ տպագրել է թռչնոց գովքի երկու նոր շարք. մեկը՝ իր անձնական ձեռագրերից, իսկ մյուսը՝ Երուսաղեմի № 1133 ձեռագրից: Նա այդտեղ վերահրատարակել է Հով. քահ. Մկրյանի տպագրած շարքը՝ «Երկրագունտ» ամսագրից<sup>15</sup>:

9 Կ. Կոստանյանց, նոր ծոգովածու, Ա, Թիֆլիս, էջ 42—45:

10 Նույն տեղում, էջ Դ:

11 «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն», Երևան, 1938, էջ 199—201:

12 A. Tchobanian, La roserate d'Arménie, III, Paris, 1929, էջ 165—179:

13 Մատենադարանի «Գիտական նյութերի ծոգովածու», № 1, Երևան, 1941, էջ 165—176:

14 Նույն տեղում:

15 «Հայաստանեայց եկեղեցի», 1941, հուլիս-փետրվար: Նկատենք, որ այն ժամանակ Հ. Քյուրտյանը չէր կարող տեղյակ լինել մեր հաղորդմանը, որը փաստորեն հրատարակ հան-



Թաշունների գովքին հետագայում անդրադարձել է Ա. Տ. Պողոսյանը՝ տալով դիտական (թաշնարուծական-կենդանարանական առումով) ուշագրքավ ուսումնասիրություն<sup>16</sup>։ Նա այդտեղ, հենվելով մեր հաղորդման վրա, թաշունների գովքը դիտել է որպես Կիրակոս Եպիսկոպոսի ստեղծագործություն, շնայած ավել է նաև Տեր Հովհաննեսի անվան հետ կապվող փոփոխականների գնահատականը։ Այս գրքի կապակցությամբ թաշունների գովքին վերադարձավ Հ. Քյուրտյանը, կամենալով հերքել մեր հաղորդումը և նրա վրա հենված Գ. Տ.-Ավետիքյանի կարծիքը՝ Կիրակոս Եպիսկոպոսի հեղինակության օգտին<sup>17</sup>։

Վերջերս Ն. Պողարյանը հրատարակել է Երուսաղեմի ՆՆ 1133<sup>18</sup> և 1236<sup>19</sup> ձեռագրերում պահպանված այն օրինակները, որոնք օգտագործված էին Ա. Չոպանյանի կողմից և որոնցից առաջինը հրատարակել էր Հ. Քյուրտյանը։ Ն. Պողարյանը բանասիրական հարցեր չի շոշափել, իսկ նրա տպագրած օրինակներն էլ սկսվում են Տեր Հովհաննեսի անունով։

Այսպիսով, փաստորեն հրապարակի վրա են լռիկ Հովհաննես Եպիսկոպոսի անունով հայտնի շարքերը, և իսկական հեղինակն էլ համարվում է նա։ Պատկերացում, որը միանգամայն սխալ է և կարոտ արմատական վերանայման։ Եվ հենց դա է սխալմամբ, որ մենք շուրջ 40 տարի անց, նորից ենք մոտենում Կիրակոս, քե՞ Հովհաննես հարցադրմանը։

Հարցի պատշաճ լուծման նպատակով մենք «Գովանք թաշնոցի» վերևում հիշված բնագրից բացի, ծանոթացել ենք նաև ձեռագիր վիճակում գտնվող հետևյալ բնօրինակություններին.

1. Ձեռ. № 695, թերթ 239—240 (1664 թ.)
2. Ձեռ. № 5954, թերթ 20 (ԺԸ դ.)
3. Ձեռ. № 7717, թերթ, 109 (1695 թ.)<sup>20</sup>
4. Ձեռ. № 8448, թերթ 128—130 (1697 թ.)
5. Ձեռ. № 9598, թերթ, 95—99 (1691 թ.)
6. Ն. Բյուզանդացու արխիվ, վավ. 235, թղթ. 55ա
7. Նույն տեղում, վավ. 55գ

Նկատենք, որ ձեռագիր այս օրինակների մեջ էլ առկա է նորից Տեր Հովհաննեսի անունը։ Բայց, թե իրոք, «Գովանք թաշնոցի» իսկական հեղինակը Կիրակոս Եպիսկոպոսն է և ոչ թե Հովհաննես Կիպրացին, դա անվիճելի է դառնում հետևյալ փաստերի շնորհիվ.

Ա) Որքան էլ որ շատ են Տեր Հովհաննեսի անունով հայտնի շարքերը, այնուամենայնիվ դրանք, իրենց հնությունով, XVII դարից այն կողմ չեն անցնում, մինչդեռ Կիրակոս Եպիսկոպոսի անունով շարքերից մեկը գտնվում

վեց ոչ թե 1941, այլ 1942 թվականին։ Մենք էլ ծանոթ չէինք Հ. Քյուրտյանի հոգվածաշարին, որովհետև մեր հաղորդումը տպագրության էր հանձնվել դեռևս 1940-ին։

16 Ա. Գ. Տ.-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 467—477։

17 «Հասկ», 1968, էջ 74—77։

18 Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, Երուսաղեմ, Գ, 1969, էջ 206—207։

19 Նույն տեղում, Ձ, 1972, էջ 327։

20 Այս օրինակը հավանաբար Կ. Կոստանյանցի օգտագործած վերահիշյալ երկու օրինակներից մեկն է։

է XV, իսկ մյուսը՝ XVI—XVII դարերում ընդօրինակված ձեռագրերի մեջ։ Ինչպես տեսանք, այդ ձեռագրերն էլ ծագել են ավելի հին աղբյուրներից, այն էլ ոչ անմիջապես, այլ միջնորդաբար, որով և հեղինակը կապվում է XIII—XIV դարերի հետ։

Իր առարկությունների և փաստարկումների ժամանակ Հ. Քյուրտյանը ևս ելակետ է ունեցել ժամանակի պարագան, սակայն, ընկնելով թյուրիմացության մեջ։ Ըստ որում, այդ թյուրիմացությունը կրկնակի հիմք է ունեցել. այսպես, նախ նրան այնպես է թվացել, թե Կիրակոսի անունով հայտնի շարքերը գտնվում են XVI—XVII դարերի ձեռագրերում, իսկ Հովհաննես Կիպրացին իր վերոհիշյալ տաղը գրել է 1480 թվականին։ Իրականում, սակայն, այդ երկու տեղեկություններն էլ ճիշտ չեն։

Առաջին թյուրիմացությունն ստացվել է Ա. Տեր-Պողոսյանի անգգուշության հետեանքով։ Նա նշել է, թե Կիրակոսի անունով շարքերը գտնվում են XVI—XVII դարերի ձեռագրերում։ Պետք է ասել, որ այս նշումը վերաբերում է լոկ № 738 ձեռագրին, բայց ոչ № 3595-ին, որովհետև այն ընդօրինակված է XV դարում։ Ճիշտ է, նրա ժամանակի մասին կոնկրետ տվյալ չի պահպանվել, սակայն բոլոր մասնագետները վաղուց ի վեր, հնագրագիտական տվյալների քննությամբ այն համարել են XV դարի ընդօրինակություն։ Այդպես է արձանագրված բոլոր մատյաններում, քարտերում և այդպես է ներկայացված ձեռագրացուցակներում ու հետազոտությունների մեջ<sup>21</sup>։ Այժմ էլ ոչ մի հիմք չկա այդ թվագրումը վերանայելու, որովհետև ձեռագիրն անվիճելիորեն XV դարից է գալիս։

Ժամանակի առումով հաջորդ շփոթությունը կապված է Հովհաննես Կիպրացու տաղի հետ։ Նրա հրատարակված օրինակում, որը կատարել է Հ. Քյուրտյանը, կան այսպիսի տողեր.

Հայոց մեծաց ի թվ[ա]կ[ա]նին

Զ-ի և Թ-ին (1480)

Բանս ասացաւ ի շափ տաղին<sup>22</sup>։

Այստեղ փակագծում զետեղված «1480»-ը Հ. Քյուրտյանի վերծանությունն է։ Բայց որքան էլ որ շանալու լինենք՝ «Զ-ի և Թ-ին» տվյալից ոչ մի դեպքում նման տարեթիվ չենք կարող ստանալ։ Շփոթությունն ակնբախ է։ Բարեբախտաբար այդ աղաղակող շփոթությունը հետազայում նկատել է նաև ինքը՝ Հ. Քյուրտյանը և աշխատել ուղղել այն, տալով այդ տվյալի նոր վերծանություն.

Հայոց մեծաց ի թվականին

Ռ. Հ. և Թ.-ին (1480)

Բանս ասացաւ ի շափ տաղին<sup>23</sup>։

Այստեղ արդեն, իրո՞ք, առկա է իսկական փաստ, որի համաձայն Հովհաննես Կիպրացին հայտնում է, թե ինքն իր այդ բանաստեղծությունը գրել է

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ, «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Ա, Երևան, 1965, էջ 1046։ Տե՛ս նաև «Պատմութիւն Ֆարման Մանկանն», Երևան, 1957, էջ 6, 50 և այլուր։

<sup>22</sup> «Հայաստանեայց եկեղեցի», 1941, էջ 125։

<sup>23</sup> «Հասկ», 1968, № 2, էջ 75։

ՌՀԹ, այսինքն, 1079 + 551 = 1630 թվականին: Հ. Քյուրաթյանը, սակայն, այստեղ էլ նորից անփութոխ է պահել իր սխալ վերծանությունը ստացած «1480» թվականը, որը ոչ մի հիմք չունի նաև այստեղ: Ուստի կարող ենք ասել Հովհաննես Կիսրացին, եթե այդ ժամանակ (1630 թ.) լիներ առավել 50—60 տարեկան, ապա նրա ծնունդը պիտի որոնեինք 1570—1580 թվականների միջև:

Այսպիսով միանգամայն անվիճելի է այն փաստը, որ Կիրակոս Եպիսկոպոսը շուրջ 300 տարով ավելի վաղ է ծնված, քան Հովհաննես Եպիսկոպոսը, իսկ նրա «Գովանք թռչնոցը» № 3595 ձեռագրում բնօրինակվել է վերջինիս ծնունդից առնվազն մեկ դար առաջ:

Բ) Հաջորդ խոշոր փաստը, որ խոսում է մեր կարծիքի օգտին և որի մասին նշել ենք դեռևս մեր վերսհիշյալ հաղորդման մեջ, շուրջ 40 տարի առաջ, Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանված շարքերի բնագրական անհամեմատ անաղարտ վիճակն է: Գրա երևում է բննվող շարքերում գովերգված թռչունների թվարկման կարգից: Վերևում հիշված բոլոր բնօրինակություններն այդ ավյարով, ինչպես տեսանք, բաժանվել են երկու խմբի.

ա) Ըստ հայոց այբուբենի գրված շարքեր:

բ) Խառն դասավորությամբ շարքեր:

Առաջին խմբի բնօրինակությունները պահպանված են Կիրակոս Եպիսկոպոսի անունով, իսկ երկրորդ խմբինը՝ Տեր Հովհաննեսի: Ըստ որում, առաջին խմբում գործ ունենք մտածված ու բանիմաց անձնավորության ստեղծած շարքի հետ, իսկ երկրորդ դեպքում՝ խառնիխուռն և շատաճառարանված դասավորության: Եվ քանի որ թե՛ ըստ հեղինակի և թե՛ ըստ բնօրինակման ժամանակի առաջինը դարեր բնդգրկող ժամանակամիջոցով կանխում է երկրորդին, ուստի միանգամայն անվիճելի է առաջինի նախնականությունը:

Այս առումով կարևոր նշանակություն ունի նաև շարքերի ծավալը: Ուշագրավ է, որ ամենաընդարձակ շարքը ամենահնագույն շարքն է՝ պահպանված № 3595 ձեռագրում և գրված ըստ այբուբենի տառերի հաջորդականության:

Ինչպես երևում է, Տեր Հովհաննեսի արտածումներն էլ հետադաշում իրենց հերթին են ենթարկվել վերագասավորումների: Այդպիսի միտք է ծագում, օրինակ, Հովհ. քահ. Մկրչյանի տպագրած շարքի բնությունից: Այստեղ առաջին տանը հաջորդում են «Քաջ արծուին», «Արծին», «Արման», «Անկղն», «Արօսն» թռչունների գովերգը: Համեմատությունից պարզվում է, որ Կիրակոս Եպիսկոպոսի շարքում «Քաջ արծուին» տունը գտնվում է շարքի վերջում, իսկ այստեղ՝ սկզբում՝ «Արծին» տնից առաջ: Պարզ է, որ այդ տեղափոխություն կատարողը, հետևելով հանդերձ այբբենական կարգին, փորձել է թռչունները խմբել նաև ըստ տեսակների, ուստի «Քաջ արծուին» տունը շարքի վերջից բերել է սկիզբ՝ «Արծին» տան մոտ: Այս եղանակով նույն շարքում միմյանց մոտ են բերված «Գայլագուան» ու «Ազուավը», «Մունդուր բաղէն» ու «Շահէն բաղէն» և այլն: Նկատելով այս օրինաչափությունը, միաժամանակ շարքում շենք տեսնում բնդհանուր միասնականություն. այնտեղ վերստին առկա են խախտումներ:

Այս բոլորը նորից են համոզում, որ Կիրակոսի անունով պահպանված շարքերը ավելի հին են և ավելի հարազատ հեղինակային կորած ինքնագրին:

Գ) Որ Հովհաննես Եպիսկոպոսը կամ Կիսրացին բննվող շարքի իսկական հեղինակը չէ, այլ հետադաշում նրանից օգտվող անձնավորություն, դա երևում

է նաև հետևյալ փաստից: Թռչունների գովքը Հովհաննես Կիպրացու անվան հետ կապված է երկու ճանապարհով: Առաջինը՝ վերևում թվարկված շարքերն են «Ես Յովհաննէս...» կամ «Տէր Յովհաննէս...» սկսվածքով: Այստեղ գործունենք ուղղակի «Գովանք թռչնոցից» անվամբ տների հետ՝ որոշ մշակումներով: Երկրորդը՝ Հ. Քյուրտյանի հայտնաբերած բանաստեղծությունն է՝ «Տաղս է ս[Ե]ր[ո]յ զատկին, Կիպրացի վարդ[ա]յ[ե]լի ասացեալ» խորագրով: Այս ստեղծագործությունը ոչ այլ ինչ է, քան Մուրատ Խիկարի հայոց զատկին նվիրված հանրահայտ գովքը: Միայն թե այստեղ այն հարստացված է Կիրակոս Եպիսկոպոսի «Գովանք թռչնոցի» որոշ տների վերամշակումով, ինչպես նաև այլևայլ տների շարակցումով: Հետաքրքրական է, որ բոլոր տների մեջ էլ որպես կրկնակ օգտագործված է «Յորժամ Հայոց զատկին գայր» տողը՝ առնրված Մուրատ Խիկարից<sup>24</sup>:

Որպեսզի ընթերցողին փոքր-ինչ տեղեկություն տված լինենք Հովհաննես Կիպրացու այդ տաղի և Մուրատ Խիկարի նշված բանաստեղծության առնչության մասին, ընդօրինակում ենք առաջինի սկզբի երկու տները.

Մարտն կու գայ ծաղկըներով,  
Յերկնից հաւերն կարդալով,  
Հրեշտակապետ փառս տալով,  
Յորժ[ա]մ Հայոց զատկին գայ:

Ամբն ի երկինսն խիստ գոռաց,  
Զողորմութեան ցօղըն ցօղեաց,  
Լոյս գերազանց դերկիր ծագեաց,  
Յորժամ Հայոց զատկին գայ...

Ամեն ինչ այնքան ակնբախ է, որ ավելորդ ենք համարում զուգահեռաբար վերհիշել Մուրատ Խիկարի տաղը<sup>25</sup>:

Այսպիսով տեսնում ենք, որ Հովհաննես Կիպրացին իր «Կիպրացի վարդ[ա]յ[ե]լի ասացեալ» տաղում փաստորեն օգտագործել է ոչ միայն Կիրակոս Եպիսկոպոսի «Գովանք թռչնոցի», այլև Մուրատ Խիկարի՝ Զատկի գովքը: Նա դրանք (ըստ երևույթին նաև ուրիշ տաղերի որոշ մասեր) միմյանց է ձուլել և ստացել մի նոր ու ընդարձակ տաղ: Թո՛ղ որ այդ համաձուլվածքի տերը համարվի ինքը՝ Հովհաննես Կիպրացին, սակայն բանասիրական միտքը պիտի կարողանա պաշտպանել նախ և առաջ այն հեղինակների իրավունքները, որոնցից օգտվել է նա: Ուստի ճիշտ չի վարվել Հ. Քյուրտյանը ոչ միայն Կիրակոս Եպիսկոպոսի նկատմամբ, այլ նաև Մուրատ Խիկարի, երբ Հովհաննես Կիպրացուն է հատկացրել նաև Մուրատ Խիկարի տաղը՝ տպագրելով նոր օրինակներ<sup>26</sup>: Միաժամանակ չենք կարող շնկատել, որ Հովհաննես Կիպրացին ունեցել է նաև բանաստեղծական որոշ շնորհք և կարողացել է քաղածո ու սեփական տներից ստեղծել մի մեծածավալ բանաստեղծություն, որն օտար և հե-

24 Հ. Քյուրտյանը բնականաբար նկատել է Մուրատ Խիկարի անունը, սակայն ոչ միայն կարևորություն չի տվել դրան, այլև հրատարակել է նրա տաղի («Գովք զատկի») նոր տարբերակներ՝ դարձյալ Հովհաննես Կիպրացու անունով:

25 Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ, էջ 5—7:

26 «Հայաստանեայց եկեղեցի», 1941, հունվար-փետրվարի համարներում:

ուսման ամբողջում հնչել է որպես հայրենի աշխարհի, նրա գարնան ու բնության կարոտալից գովերգություն: Այս առումով Հովհաննես Կիպրացու ջանքերը կարոտ են բնության և գնահատման:

Այսպիսով, տեսնում ենք, որ մեր միջնադարյան պոեզիայում հանդիպող այն բոլոր մեծ ու փոքր շարքերը, որոնք վերաբերում են թուրքերի գովքին, պատկանում են ոչ թե Հովհաննես Կիպրացուն կամ Տեր Հովհաննեսին, այլ Կիրակոս Եպիսկոպոսին և գրված են XIII—XIV դարերում:

Ասվեց, որ այդ շարքից առաջ ու հետո նման շարք չի գրվել, շնայած, թուրքերի թեման տարբեր ձևերով մշակվել է: Այսպես ասելով, նկատի ունենք, օրինակ, Հովհաննես Սարկավազի հայտնի քերթվածը՝ նվիրված սարյակ թուրքին, վարդի և սոխակի գովքը՝ տարբեր հեղինակների մոտ և դանազան թուրքների առկայությունը՝ այլաբնույթ երգերի մեջ: Այստեղ առանձնապես ուշագրավ են ներսես Շնորհալու հանելուկներում տեղ գտած թուրքները, որոնց մեղ հասած և ստուգված քանակը հավասար է շուրջ երկու տասնյակի: Նույնիսկ հիմք կա մտածելու, թե Կիրակոս Եպիսկոպոսը իր տաղաշարքը մշտադաշտ է այդ հանելուկների ազդեցությամբ<sup>27</sup>: Այդ տպավորությունն ենք ստանում, երբ համեմատում ենք նրանց, հիմնականում, քառատող լինելը, յամբական 8 վանկանի տողերը, նույնահանգությունը եղանակը, թուրքների անվանումները, խոսակցական լեզուն, ժողովրդական ոճը և այլն: Մեր կարծիքն ավելի համոզիչ է դառնում, երբ հիշում ենք, որ հենց նույն XIII—XIV դարերում Հովհաննես Մործորեցին, Տիրատուր Վարդապետը և ուրիշներ, ներսես Շնորհալուն հետևելով, գրում էին համանման հանելուկների նորանոր շարքեր:

Իրերի այս դրության մեջ նպատակահարմար ենք գտնում առայժմ տալ միմիայն Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանված շարքերի քննական բնագիրը: Ինչ վերաբերում է Տեր Հովհաննեսի անունով տարածված շարքերին, ապա դրանք կարոտ են առանձին բնության:

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ X—XIV դարերում սկզբնավորված և զարգացման հունի մեջ ընկած հայ նոր գրականության լավագույն նմուշներից մեկը «Գովանք թուրքին» է: Այն մեղ հայտնի միակ ու լիարժեք ստեղծագործությունն է՝ հայրենի բնության թևավորների՝ թուրքների մասին: Նրա հեղինակը ոչ Ստեփանոս Լեհացին է և ոչ էլ Հովհաննես Կիպրացին,

27 Ահա ներսես Շնորհալու հանելուկներում տեղ գտած թուրքների անունները. սիրամարգ, խօսող, արագիլ, տատակ, բուրբախ, ծիծառ, ցօխարիկ, դուռն, շնոր, հարալ, շիտ, անձեղն, արտուտ, բրնձ, բոբ, սագ, կախա, ազուս (4 հանելուկ), համաու, խի (օգտվել ենք 1321 թվականի ընդօրինակությունից՝ պահպանված Մաշտոցի անվան Մատենադարանի № 2961 ձեռագրում):

Մաշտոցի անվան Մատենադարանի № 771 ձեռագրում (թերթ 437ա), XVIII դարի գրություն, թվարկված են թուրքների հետևյալ անունները. «Աւմաւ, անկղ, արօս, սագ, սիրամարգ, կոռնկ, մարի, հաւալուսն, աղավնի, խշառնուլս, կասկամ, խի, անկուլ, շնօստ, արագիլ, կաշաղակ, կնկաուց, տատակ, կովհարուսիկ, ծիծեն, հոփոփիկ, ծիտ, խսօզ, արտուտիկ, անձղ, բուրակ, նուննունակ, լծկլ, մանօղակ, պիլպիլ, եզնարուսիկ, բու, յովանակ (Յովանահա՛ւ), սարեկ, պղպիղ»:

Նույն ձեռագրի 198ա թերթում ներմուծված է «Բառ գիտելիք ի դիպող ժամու ուրուեֆից» խորագրով փոքրիկ բառացանկ, ուր կան թուրքների անուններ. Յին, անգղ, հապար (հաւատօրիկ), եղամաղ, Բաշահաւ, տխակ, հաւալուսն, կարպ, Բաւարդ, յապոպ, շիղջ, ցուրեան (ցախտորե՛կ)»: «Չիղջ»-ը՝ շղթիկն է՝ դասված թուրքների շարքը:

որոնք ապրել են XVII դարում: «Գովանք թռչնոցը» պատկանում է XIII—XIV դարերում ապրած Կիրակոս Նսիսկոսյոսի գրչին:

Որպես շափածո ստեղծագործություն «Գովանք թռչնոցը» արժանի է հատուկ բնության: Ասենք միայն, որ այն XIII—XIV դարերից մեզ հայտնի սակավաթիվ այն ստեղծագործություններից մեկն է, որոնք ամբողջապես աշխարհիկ են և լիովին ազատագրված կրոնական տուրքից ու անշուքությունից: Հեղինակը նկատի է ունեցել սոսկ բնությունը և նրա անաղարտ գովքը՝ հենց սկզբից ասելով.

Կամիմ գովել զհաւր հաւասար՝  
Յիրախութիւն մարդկան համար...

Ներկայացվող բնագիրը բաղկացած է 91 բառատող տնից: Կան 2 տներ, որոնցից մեկը՝ 5, իսկ մյուսը 6 տողանոց է (193—197 և 346—351-րդ տողեր). դա հավանաբար հետադայի փոփոխության արդյունք է: Որպես կանոն ամեն տան մեջ գովերգված է մեկ թռչուն, բացի առաջին տնից, որն ունի հիշատակարանային բնույթ: Մնացած 90 տներից 8-ում կրկնված է նույն 8 թռչունների (ազոաւ, անձեղն, գուգու, կաքաւ, ճնճղուկ, շահէն բազէ, շիտ, պլպուլ) գովքը, իսկ սիրամարդ թռչունին նվիրված է 3 տուն (302—314-րդ տողեր): Փաստորեն 91 տնանոց շարքում տրված է 80 թռչունի գովք: Բոլոր տներն ավարտվում են այբ, աբ (առ) հանգով՝ շահչված առանձին տողերում նկատվող մասնակի շեղումները: Միայն 2 տան (37—40 և 206—209-րդ տողեր) հանգերն այլ են. իսկ դա ենթադրել է տալիս, որ այդ տները հետո են մուծվել շարքի մեջ:

Քննական բնագիրը կազմելիս, միօրինակության նպատակով կատարել ենք հետևյալ մասնակի ու անհրաժեշտ միջամտությունները.

ա. Պահելով մասսայաբար օգտագործված «աւ» ձևը, մեկ-երկու դեպքում հանդիպող «օ»-ն դարձրել ենք «աւ»:

բ. Սակավ հանդիպող վերա, զեա, եփ, երփ և բաա ձևերը ճշտել ենք տաղաշարքում իշխող վերայ, զեդ, երբ և բադ ձևերով:

գ. Առավելություն ենք տվել մասսայաբար հանդիպող կայբ, զայբ, կաբաւտանայբ և նման ուրիշ բայաձևերին՝ ավելի սակավ օգտագործված կաբ, զաբ, կաբաւտանաբ ձևերի նկատմամբ:

Կետագրությունը, տնատուժը և տողակալուժը՝ մերն են:

## ԿԻՐԱԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

### ԳՈՎԱՆՔ ԹՌՉՆՈՅ

Տէր Կիրակոս՝ հոգով տկար,  
Եպիսկոպոս՝ յերկիր աւտար,  
Կամիմ գովել զհաւք հաւասար՝  
Յուրախութիւն մարդկան համար:

- 5 Արծիւն իջնէր շառանչելով,  
Գայր ի լերանց բարձանց ի վայր,  
Առնէր զորսն և վերանայր,  
Երթայր նստէր այլ վայր ի քար:

- 10 Արման մեծ էր ու անհնար,  
Հայէր ծովուն յատակն ի վայր,  
Շալկէր շատ փայտ և վերանայր  
Լիրանանու լեռնէն ի վայր:

- 15 Անկղն իմաստուն էր և խիկար,  
Նայ զմեռնելու մարդն իմանայր,  
Երբ մարդն ի յինքն հոտոտայր,  
Նայ հոտն զար մուշկ ու ամբար:

#### Աղբյուրներ

A=Ձեռ. № 3595, Թերթ 69ա—79բ: ԺԵ դ.:

B=Ձեռ. № 738, Թերթ 113ա—116բ: ԺԶ—ԺԷ դդ.:

#### Խորագիր

B Անխորադիր:

#### Բնագիր

- 1 A Եւ Կիրակոս:  
3 B զհաւերտ:  
4 B Ուրախութեանն:  
5 B շառնչելով:  
7 A ըզորսն:  
9 A անհունար: B մեծ է:  
10 A Հայէր ընդ ծովուն ատակն:  
11 B Շալկել:  
14 A իմանար: B Զմահականացու մարդն իմանայր:  
15 A յինքն:  
16 A յամբար: B Եւր հոտն զայր:

Արաւարն մեծ էր քան զոչխար,  
 Զաւրն ի դաշտերդ կու կենայր,  
 Երբ կու թռչէր՝ նայ ցած կերթայր,  
 20 Զեդ գէր մարդուն հետուն գայր:

Աղանին ոսկի փետուր,  
 Քան զամենայն հաւերն՝ արդար.  
 Նոքա կապեն երամ հազար  
 Եւ մի կամաւք վարին յաւժար:

25 Ազոան ի նոյի տապանն կայր,  
 Երբ ջրհեղեղն կու ծփար՝  
 Ի դուրս ելաւ խապրի համար,  
 Ի յետ շղարձավ. անէծք էառ:

30 Ազոան խեռ էր ու յարար,  
 Զաւրն բարի խապար կու տայր.  
 —Տիկին, յարի ձուածեղ եփէ,  
 Քեզի բարի հիւր մի կու գայր:

Արտուտիկն էր դրել վեղար,  
 Զեդ հաբեղայ աղաւթարար,  
 35 Առաւատուն երբ լուսանայր,  
 Գոզեր քաղէրն բարերար:

Արագիլ մեծ հաւ ու հով,  
 Երկայն ու բարակ ճրվերով,  
 Ի ձոր ի վայր գայր խաղալով,  
 40 Գորաներ ու խըլիզ քաղիլով:

17 B Արաւան մեծ է գէտ:

18 A Երբ կու թռչէր նայ ցած կերթար: B դաշտերդ կու կենայր:

19 A Զաւրն յարտերն կու կենար: B Երփ:

20 A մարդու հետունն: B Զէտ: հետն գայր:

21 A Աղանի:

22 B հաւերա:

23 B նոյ յըզարկեց, թէ բեր խապար:

24 B նա երթայր կանանչ տերեւ առնէր ու գայր:

25 B տաճարն կայր:

26 A ծրփար: B Երփ ջրհեղեղն կու ծփայր:

27 A դուր: B նոյ յըզարկեց թէ բեր խապար:

28 A գանեծք: B նայ փխ Ի:

29 B 29—32 շիֆ:

31 A ձուածեղ փխ ձուածեղ եփէ:

33 A 33—36 այսպէս.

Արտուտիկն երբ հովրոար,

Առաւատուն երբ լուսանայր,

Անդադար փառարանէր գմեր տէրն,

Որ յիւսին երկինքն կար:

35 B եփ լուսանայր:

37—40 B շիֆ:



Անձեղն գիտէր զբարին և զչար,  
 Ամէն մարդոյ կայնէր խապար,  
 Զամէն երթայր նստէր ի ծառ  
 Ու կու մատնէր զինչ կու տեսնայր:

45 Անձղան ազին էր խիստ յերկար,  
 Ինքրն թռչէր ի ծառէ-ծառ,  
 Երբ որ բարի խապար լըսեր,  
 Նայ գայր յերդիքրն կարկըջայր:

Բազան թևաւքն էր սուր և սայր,  
 50 Երթայր գամէն հաւերտ որսայր,  
 Երբ ինք թռչէր սարէ ի սար,  
 Նա սասան'ին հաւերտ հաւսար:

Բրբռէճի աչին՝ շաղար,  
 Զարեգական լոյսըն շտեսնայր.  
 55 Ինքրն գիշերն ի շուռ կու գայր,  
 Զգողն ու գտառ մարդն յիմանայր:

Բուն կու շրջէր գիշերավար,  
 Յորժամ լինէր մութն ու խաւար.  
 Երբ առաւառն մաւտենայր,  
 60 Նա կուրացել բնկնէր ի վայր:

Բաղիճոնին ասեմ այլ վայր,  
 Որ ինքն ի բող նման լինայր,  
 Հետ բաղերուն ի շուռ կու գայր.  
 Էր ինքն փոքրիկ ու խիստ ախմար:

65 Գուգուն յամէն գարուն կու գայր.  
 Ի վերայ գազթան՝ ծաղիկ մի կայր.  
 Նայ անիծանէր զՅուդայ ու զՊեղատոս  
 Եւ զանհաւատքն հաւասար:

Գուրպարարն էր խիստ բանրար,  
 70 Զեղ գտակրար կամ գուրպարար,

41 B զչարն: Այս տունը՝ «Անկղն...» (13—16-րդ տողեր) տնից հետո:

42 B մարդոս:

43 A նքստէր:

45—46 B շիֆ:

49—52 A շիֆ:

53—56 B շիֆ:

57—60 A շիֆ:

61—65 B շիֆ:

66 A Ի վերայ գազթանն ծակ մի կայր: B մին կայր:

67 A Տանէր զՅուդայ ու զՊեղատոս: B զՈւգա:

68 A Ու զանհաւանքն:

70 A կուրպարար: B Զետ:

Զրոյնն զրել ի տեղ զրժար,  
Ներքերն՝ ծով, վերերն՝ ծառ:

Գայլագոռաւուն բերան էր գայլ,  
Զեղ սատանայ սե կու փայլայր,  
75 Խիստ գիշակիբ ու խիստ յայար,  
Խա՛յ կու կանչէր երբ քաղցենար:

Գուգուն առեմ, հաւիկ մի կայր,  
Մով ու ի ցամաք ի շուռ կու գայր,  
Զմեռն՝ խիստ լիղառանայր  
80 Ի ամառն խաւշ գէր կու կենայր:

Գարարն գայր գետովն ի վայր,  
Հանց լայն ու մեծ գինչ նաւ կու գայր,  
Յանձն է հագել սպիտակ պայծառ  
Ի ի կտուցն մեծ ճոթոն մի կայր:

85 Եղկիանոս քաղուկ մի կայր՝  
Միրանավիզ կանաչկայփայլ,  
Դէմ արևուն՝ վիզրն փայլայր,  
Որպէս զոսկի ծիրան կու տայր:

Եղնարաւտիկ հաւն է տրուառ,  
90 Հեռ աղաւտին ի շուռ կու գայր,  
Քաղէր զորդունքն և կշտանայր  
Ու իր ձագերուն՝ առնուր, զրնայր:

Զմկրնչիտն Սողոմոն գեսպան արար,  
Թէ գնա փայտ բեր, որ ոչ ծուռ է ու ոչ ճարտար.  
95 Նայ ի խարձերն ի շուռ կու գայր  
Ու ի հետ կասէր, թէ փայտ շկայր:

Ըռանահաւն է պայծառ,  
Իր ձայն անուշ որպէս շաքար.  
է գեղեցիկ ու խիստ պայծառ,  
100 Սպիտակագոյն ուղղայարմար:

71 B Զրունն զնէր:

72 B Ներքերն: վերերն:

73—80 B շիֆ:

81 A վար:

82 A գար:

83 B Անձն սպիտակ էր աննշմար:

84 A կար: B 'Վ ի:

85 B մի քալ:

86 B Միրանավիզ կանանչկայփայլ:

87 B փայլար:

88 A կրտայր:

89—100 B շիֆ:

Թութակն ի մեծ դարպասն կայր,  
 Չթողոյր զխաթունն, որ բողանայր.  
 Թէ խաթունըն շնանայր,  
 Չայն պարոնին խապար կու տայր:

106 Թանկագուան է խիստ յայար,  
 Հետ ձմռանն ի շուռ կու դայր.  
 Էր ինք գիշակէր ու խիստ յայար.  
 Ղայ կու կանչէր երբ քաղցենայր:

110 Ժրուպոուն ձայնիկն դայր  
 Չեղ զերգեհոն, որ կու ցընծայր,  
 Գարրիէլի փողոյն նրման,  
 Որ մեռելոցն ձայն կու տայր:

115 Իթալկուն էր խիստ ճարտար,  
 Փոքրիկ ու խիստ կու վերանայր,  
 Մեծ հաւեր բերէր ի վայր,  
 Ամէն մէկ՝ շորս-հինկ լիտր կենայր:

120 Իշտրոմզուն թէն էր նկար,  
 Ըղտու կողոան նման լինայր.  
 Չիւր ձուն կանխէն յամէն տաճար,  
 Յիւր ծիրան՝ ալմաս-երկաթն կայր:

Լըծէ-լծէն ի շուռ կու դայր,  
 Շինակներուն խըրատ կու տայր,  
 — Լծէ՛-լծէ՛, ճարտա՛ր Լծէ. —  
 Խոփն ի յոսկին ի ներս կերթայր:

125 Լորիկն դայր անմեղարար,  
 Ի գրիւ երթայր ու հետկրտայր.  
 Երբ ի յակներքըն մաւտենայր,  
 Ընկնէր ի վիզն ու թովոայր:

100 A ուղայարմար:

101 B դարպաս կենար:

102 B Պա՛ւէր զխաթուն, որ շպողանայր:

103 A Չինչ որ տիկինըն կու աչնէր:

104 B Ասէր ընդ պարոնն ու շամշնայր:

105 B 105—116 շիֆ:

106 A ձրմրոանն:

117 A Իշտրոմզուն թենքըն կայր:

118 A կողոփ: B Ուղտու:

119 A Չիւր: B ամէն:

120 B Իւր: յալմաս:

121—124 B շիֆ:

125 B անմեղարար:

126 A Ու ի: B Ու գրիւ:

127 B Երփ:

128 A Թրովոայր:

130 Լուսկն փոքր էր և անկար,  
 Զթուզրն ծակէր ու ի ներս կենայր.  
 Երբ ուզան սպրարէր՝ ազին վերնայր՝  
 Մքտնէր ի յոսն, որ շիմանայր:

135 Խիւն ի մորին մասխարանայր,  
 Ի ծառէ-ծառ կու պոռթկտայր,  
 Զեղ ու պառչէր, զեղ տղայ կու լայր,  
 Ամէն մարդու բանիւ լինայր:

140 Խաւսաւզն ի տունն կու կենայր,  
 Գիշերն երթայր ելներ ի թառ,  
 Երբ կուկրուէր, ծափուցն տայր,  
 Ի հրեշտակաց անու բարբառ:

Խուփու խաթունն երբ բաղցննայր,  
 Նա կու ճորայր ու զբրդբրայր.  
 Երբ որս այնէր ու կըշտանայր,  
 Լուկ զեղ ըզմարդ կու բբրբրոայր:

145 Ծառկտուցն ի ծառն երթայր,  
 Զբոյն փորէր ի ծառն ի վայր,  
 Զփայտն կոփէր զեղ ըզնաճար,  
 Որ սղոց ու երկաթն շղիմանայր:

150 Ծիծեռնիկն ելել ու եկել  
 Յիւր հայրենի տուն և տաճար,  
 Ի տաճարին վերայ նստէր,  
 Սաղմոս ասէր ինքն անդադար:

155 Կարնկինն երամ կապին  
 Եւ հետ իրաց երթան ի շար,  
 Կանչեն մէկ զհետ մէկի,  
 Ի շարկամաց կենան բեկառ:

Կարան ի բարրն կու կենայր,  
 Կու կարկըճէր ի բարուիրար,

129—132 B շիֆ:

133 B Խիթն:

134 A պորթփկայր:

135 A պոչէր: տղա կու լար: B դու:

136 B Ու ամէն:

137—148 B շիֆ:

149 B Ծիծրոնիկն:

150 B Իւր հայրեն տունն ու տաճարն:

154 AB հետ:

157 B 157—168 շիֆ:

160 Զքաջ արծրու շաշունն առնէր,  
Մէջքն բեկէր ու ընկնէր ի վայր:

Կարան է խայտիւ շինելու,  
Զինքըն խայտուել է խիստ պայծառ,  
Զոտքն ու զկտուցն հինայել  
'Ի ի լերանքն ի շուռ կերթար ու գայր:

165 Կովկորոյսն են քոյր ու եղբայր,  
Կովն կորել ու ի շուռ կու գայր.  
Քոյրըն հարցնէր, թէ «զկովն գտա՞ր».  
Նա եղբայրն ասէր, թէ «Հան չկայր»:

Կեռ կտուցիկ հաւուկ մի կայր,  
170 Հագնէր կապուտ ու պարծենայր,  
Թէ՛ գայդ հաւերա որ գովեցէր՝  
Զեղ զիմ փետուրս իսկի չկայր:

Կիվին է զինչ գարեղայ,  
Վեղար դրել զխոյն վերայ,  
175 Զաւրն ի ճղանքն կու կենայր  
Զգողն ու զտրուտ մարդն յիմանայր:

Կանչուկ հան երբ ցրտանայր,  
Զուրա կուզէր իր մանտրկար,  
Երբ որ կոնակն ջերանայր,  
180 Նայ ոչ ջուրայ՛ւ ոչ մանտրկար:

Կասկամն կախուել ընդ ծառն ի վայր,  
Յաշիցն արին կու կաթկթայր,  
Կու կանչէր հազար զինահար.  
Մէկ մի շերթայր՝ առնոյր ի վայր:

185 Հաւալասան հաւիկն ողբայր՝  
Որ ի Դաւթեան Սաղմոսն կայր,

163 A հինակի:

166 A հօն:

169 B Կոսյկոսայ հաւուկ մին կայր:

170 B Հագել կանանչ ու պարծենայր:

171 B թէ այտ ամէն հաւերտ որ կայր:

172 B գետ:

173—160 B յի՛ք:

181 A Կասուկամն: B կախուել ի ծառն: Այս տունը «Կեռ կտուցիկ»-ից (169—172-րդ տողեր) առաջ:

182 B Յաշիցն:

183 B զէնհար:

184 B Մէկ մին: առնէր ի վայր:

185 A Հաւալասան հան է պայծառ:

186 A Ինքն ի Դաւթայ: կար:

Ինքն յանապատն կու կենայր,  
Աւրինակ էր գՔրիստոս արդար:

190 Հորալն մեծ հաւ կերենայր,  
Ի շուռ կու գայր բուշնի համար,  
Կապոյտ հագել էր և կու լայր,  
Զեղ սգաւոր անմխիթար:

195 Զիւնձիւնիկ հաւուկ մի կայր,  
Որ ինքն յամէն աշուն կու գայր,  
Գայր ու հանց խապար կու տայր,  
Թէ՛ ով տուել կապա՛ ի կար,  
Ատոր ցուցէր՝ ձիւնն կու գայր:

200 Զրկնկլուն ըռասմն կայր,  
Որ դարբն ձուկն կրլանէր,  
Զիր ժամանակն շկշտանայր,  
Փարն որդնած, և հոտն գայր:

205 Ծնճղուկն ի շէնքն կու կենայր,  
Յամէն ցվիք կու ճվճվայր,  
Ինքն ապրէր տարիք հազար,  
Ով զինքն ուտէր՝ խիստ շնանայր:

210 Ծրնճրղկիկ, բարակ ճրվիկ,  
Իր կերակուրն երկու հատիկ,  
Երթայր մրտնէր ի նեղ ծակիկ  
Ու այնով այնէր դարբն դատիկ:  
Ծայնկն ի յաւորն վերանայր,  
Բոլոր երկնաւորն գան ի սար,

187 Ա աստուած փխ արդար:

188 Ա Զմեր տէրն որ յեալին երկինքն կար:

189 Ա Հարալն: Ե կու երենայր:

191 Ե Կապոյտ: ու:

192 Ա սգաւոր ու անմխիթար:

193—197 Ե Այս հինգ տողի փոխարեն ունի.

Զինձնուկն ձայն ածէր  
Վասն ձմտան եփ ձուներն գայր,  
Թէ՛ ո՛վ կապայ ունի անկար,  
Թող շուս կարէ, որ շքրտանայր:

198—201 Ե չիք:

202 Ա Ծրնճղուկն: կենար: Ե [Ծ]նճղուկն:

203 Ա ցվիք իր ձայնքն գար: Ե Ամէն:

204 Ա Ինք ապրի տարի հազար:

205 Ա Ով զնա ուտէր խիստ շրնանար: Ե նա փխ խիստ:

206—217 Ե չիք:

210 Ա յաւորն:

Երթան խաղան մարգեր ի վայր,  
Տանին գիրենց սէրն ի կատար:

- Մանկղաթևին պիտի խղճալ,  
215 Ինքըն չկարէր նըստիլ ի վայր,  
Քաւ էլ թէ բարձրը տեղ լինայր,  
Որ ինք թըռչէր յայնկից ի վայր:

- Մեղվընքաղին մեղքն էր յերկար,  
Թողել զմորեխն, որ չէր շահարար,  
220 Զմեղուն քաղէր անխղճարար,  
Մեղուն դատէր մեղրի համար:

- Մաշկաթևին փետուր չկայր,  
Զինչ որ գործէ զսէկըն կաշկար,  
Ունի ականջ ու ազին ի վայր,  
225 Յիստակ զեղ մուկն է ոստըւար:

Յոպոպիկն էր զարդարեալ,  
Ի գլուխն ունէր թագ և կատար,  
Ինքն յեզր շինին կենայր  
Եւ ի պարիսպ քաղքին ձայն տայր:

- Յովանահան փրչէր սաֆար,  
230 Զեղ զեղեզան իր ձայնըն գայր,  
Հագել է լուրջ ու զեղին շար,  
Ի պաղչանին ի շուրջ կու գայր:

- Շահէն բազէն էր շահարար,  
235 Ինքն յամէն դարպաս կենայր,  
Յուր որ աղուոր պարոնըն կայր՝  
Ի վերայ բազկին ի շուռ կու գայր:

- Շահեն բազէն համլայ զընէր,  
Ինքն զհաւերն ի վայր կու տայր,  
240 Զեղ ըզթուխ ամպ ինք գիզանայր,  
Կարկուտ ածեր ու կայծկտայր:

218 B [Մ]եղվըրդուն մեղքն է:

219 B չէ:

220 B Կուտէ զմեղուն անխղճարար:

221 B Որ կու դատի մեղրի համար:

222—225 B լիք:

226 A Յուպուպիկն է: B [Յ]ոպոպիկն էր զարդարել:

227 A Ու ի գլուխն ունի թագ:

228 A Ինքն կենայր յեզր ի շինի: B էրակ փխ Ինքն:

229 A Կամ ի պարիսպ քաղքի:

230 B 230—273 լիք:

- Շաշորդ հաւուն լեզու շկայր,  
 Զիր ժամանակն մունջ կենայր,  
 Այլ իրք շուտէր ինք, քան զմուրտար  
 245 Կամ մեծ ոսկոր-որ կրլանայր:
- Շնարարն զերդ ներկրրար,  
 Կարմիր երեսք, դեղին աստառ,  
 Ի շամբերըն կու կենայր,  
 Շընլակոտի պէս կաղկընձայր:
- 250 Շալամ, ասեն, հաւուկ մի կայր,  
 Որ յըզտու կողեոն նմանէր,  
 Զեղ ըզխաւաւղ ինք ձայն ածէր,  
 Երբ ծափ զարկնէր՝ ինքըն խաղայր:
- 255 Ուրուրն ի շէնըն կու կենայր՝  
 Զեղ հարամի կամ զեղ թաթար,  
 Աննոյր զհաւձագն ու բարձրանայր,  
 Թէ հաղար մարդ կանկնած կենայր:
- 260 Ոսկրրկուլն էր խիստ խիկար,  
 Զափով զոսկորն ի կուլ կու տայր,  
 Թէ աւելի քանց զհաղն երթայր,  
 Նայ լուկ մեռնիլն էր նորա ճար:
- 265 Զոր Յակոբին պիտի խըղձալ,  
 Վիզն է բարակ ու անձն է նիհար,  
 Զարն ի գետափըն կու կենայր,  
 Զողջն արն ու մէկ ձկան համար:
- 270 Զբտիկ փոքրիկ հաւիկ մի կայր,  
 Իր բոյն ի մէկ մաղէ լինայր,  
 Երբ որ հարաւ քամին շնչայր,  
 Իր ձագերուն սա մահ կու տայր:
- 270 Զիտն ուսել էր հայնց հունար,  
 Հաւկոյթ ներկէր ինքն ճարտար,  
 Առանց տարուն ՚ւ առանց ժանկառ,  
 Հաւկիթ ներկէր զատկի համար:
- 275 Խաղող ջրովն ինք գիրանայր,  
 Խաղող ջրովն ինք հարբենայր,

252 A քղկաւաւղ:

274 B [Զ]իտն ի խաղող գիրանայր:

275 B Հաղող ջրովն հարբենայր:



- Ելներ, նստէր ի վերայ ճղին,  
Ու տայր զամէն շոր թուզն ի վայր:
- Պլպուզն ի վարդն կարաւտնայր,  
Զինչ որ սիրեն երկուք զիրար.  
Քանի զնա կու հոտոտայր,  
Սիրոյն լինէր խն ու խումար:
- 280
- Պլպուզն ասէր խաղ ու խաղալ,  
Զվարդն ու զնոճէսն զովէր յիրար,  
Ինքն խաւսէր խիստ անդադար,  
285 Զեղ զինէհար մարդ ու խումար:
- Պրզպրդուն զըլուխն է քար,  
Ինքն ի Հրնդկաց աշխարհըն կայր,  
Ի գլուխն ծեծեն երկաթ ու քար,  
Նայ իսկի շասէ, թէ ցաւ կու տայր:
- 290
- Զահրիկն փոքր էր զեա ծրար  
Ու զընդընայր զեղ մանծրրար.  
Շաբաթն ի բուն ինքըն ջանայր  
Ու Կիրակին՝ մանած չը կայր:
- Զարուն ասէր արուեստարար  
295 Զեղ զհհենի պէս կու ցուայր,  
Զեղ Գաբրիէլ զփողըն զոչէ,  
Յանեն մեռեալքըն հաւասար:
- Սընդուր բազայն երբ բարձրանայր,  
Զիւր շուքն ի ջուրըն տեսընայր,  
300 Գիտէր, թէ հաւ էր կրոտարար,  
Իջնոյր խեղդէր ի ջուրն ի վայր:

276 B Զեա հարբած մարդ ասեր ընդ ալ:

277 B Զիտն թուէր լուկ հոփայր:

278 [Պ]լպուզն: կարաւտնայր:

280 A նա: B վարդն թավէր ու հարբենայր:

281 B Սիրուն դառնայր:

286—289 B չիք:

290—293 B տունն է.

Զախրիկն փոքր է զեղ ծրար,  
Զընդըն այնէ զեղ մանծրրար,  
Մանէր զարն ու զզիշերն ի ծարէ-ծար,  
Յետեն իսկի մանած չկայր:

294—297 B չիք: Ապա՝ «Սաղգրիկն», «Սարիկիկն», «Սանդուր բազան»:

298 B Սանդուր բա[...] մլայ զնայր (հալանարար՝ բազան էամլայ):

299 Զիւր: Տեսընոյր: B ջուր [...] այր:

300 B Գիտէր, թէ որս է ու զնայր:

301 B [եկ]խտէր ընդ ջուրն ի վայր:

- Սիրամարգ հաւն էր թագ յարմար,  
 Ի գլուխն՝ երեք փետուր պայծառ,  
 Երեքճղին մարգարտաշար.
- 305 Իւր անձն ամէն՝ ակն ու գաւհար:  
 Կուրծքն ու շըլնիքն էր դար ի վայր,  
 Լուրջ ու կապոյտ ծիրսն կու տայր,  
 Թևերն ամէն զըմբութ ու լալ,  
 Ոսկի ակունք՝ արծաթափայլ:
- 310 Ագին յերկայն, շառուեղք ու լար,  
 Զեղ գերկընուց կարմիր կամար,  
 Լուսրնկայն բուրէր ի նայ  
 Կամ զարեգակն, որ գայր ի մայր:
- Սազն ի յարաւտ երթայր ու գայր,  
 315 Զեղ ըզպախրէ կամ զետ ոչխար,  
 Սղոց ունէր զեղ գանկըրար,  
 Երբ գողըն գայր՝ շոյտ յիմանայր:

- Սախայ հաւն ընդ վիզն ի վայր  
 Տըկճոր՝ շըրով ու ի շուռ կու գայր,  
 320 Յանջըրդիքըն շուր կու տայր  
 Այլ ձագերուն, որ շճարեկնայր:

- Սաղգրին երթայր ընդ սազն ի վայր,  
 Շատ մի ճանպահ ու շխոնջենայր,  
 Բուրբ ծովուն առնու շամբար.  
 325 Մարդ ի յիրեանց հոգըն շկայր:

- Սարեկն ասէր ու գողղայր,  
 Զեղ սարսըփոտ կամ դիւահար,  
 Զեղ ըզխաղցաւղ շալփալազարկ,  
 Ինքըն գարնէր ու ինքըն խաղայր:

- 330 Սալամն անգէտ էր ու յիմար,  
 Հայէր ի մարդն ու փախշենայր.  
 Երթայր մտնէր ի ծակն ի վայր,  
 Ագին ու թերն ի դուրս կենայր:

302—321 B շի:

314 A Սարն:

323 B շխոնճենար:

324 B առն շամբար:

325 B յիրենց:

326 B Սարիկիկն ասէր ու ի գող ելնէր:

327 B Զեղ սարսափոտ կամ դիւայհար:

328 B Զե[տ] զխաղացող շալփալայզարկ:

329 B Ինքն: ու ինքն: գարնէր շի:

330—333 B շի:

- Վարժնակն գայր զեղ մնջնայրար,  
 335 Զարկնէր զձագոց երամն ի վայր,  
 Փախչին հաւերն, ընկնին ի վայր,  
 Ներքև թրփին՝ երեսք ի վայր:

- Տատրրկիկն աւետարեր  
 Քաղցրը խաւէր ինքն և ցնծայր,  
 340 Ի վերայ վիմի բարձրը նրատէր,  
 Գուշակ լինէր գարնան համար:

- Տէր Գրիգորիկ հաւիկն արդար,  
 Զեղ վարդապետ քարոզ կու տայր,  
 Ի վերայն հազել կապոյտ շուրջառ,  
 345 Զեղ քահանայ հանդարտարար:

- Տան հան ի տունն կու կենայր,  
 Զեղ կուրատոր խիստ կու ճոխայր,  
 Դեղէր ըզտունն ու շամշրնայր  
 Ու երբ կու աւելին, այլ կու լնայր,  
 350 Սիրտ հանէր զտէրն, որ խիւնայր,  
 Բայց հաւկթով մի հեշտենայր:

- Բարիլ, ասնն, հաւուկ մի կայր,  
 Որ ի Հընդկաց աշխարհըն կայր,  
 Ի քթէն ընկնէր ակն ու գահար,  
 355 Քան ըզծովու այլ աղէկ շահար:

- Քրթակնիկ հաւուկ մի կայր,  
 Սև հաւի փուշըն կու կենայր,  
 Թըովզք այնէր, ոտաւքն երթայր,  
 Ինքն յանջրրդիքըն կու կենայր:

- 360 Քարրղղին բոյնն է դրժար,  
 Որ է շինել երկաթ ու քար  
 Ու է դրրել ի խիստ դրժար  
 Եւ ի ներքերն ծով էր և քար:

334 A մնջնար: B զերդ:

336 A ու ընկնի: B Հաւքն զոզան: վար:

337 B ներքև թրփին:

338 B աւետարեր:

340 B վիմին նատէր: Բարձրը շիւ:

342 B Տէր Գրիգոր հաւուկն:

343 B զեղ վարդապետ:

344 A շրջառ: B Անձն հազել կապուտ:

345 B հանդարտարար: Այստեղ ընդհատվում է. սկսվում է այլ նյութ. «Ման, որ պատուն ի վայր գայ, Գ խաշափառ կախէ, այլ վայր շգայր...»:

355 A ջահար:

358 A ոտաւքն:

365 Քաջ արծուուն նման շկայր,  
 Երբ շառնչէր յաւղից ի վայր,  
 Նայ սասանին հաւր հաւասար,  
 Հապրատակունք, վայրի ոչխար:

А. Ш. МНАЦАКАНЯН

## СТИХОТВОРНЫЙ ЦИКЛ «ВОСХВАЛЕНИЕ ПТИЦ», ЕГО АВТОР И ВРЕМЯ СОЧИНЕНИЯ

### (Резюме)

Начиная с XVII в., в армянских средневековых рукописях обнаруживаются многочисленные варианты стихотворного цикла, посвященного восхвалению птиц и связанного с именем Тер Ованеса. Многие из них так и печатались и распространялись как разновидности творчества Тер Ованеса. В настоящей статье приводятся аргументы в пользу того, что автором «Восхваления птиц» является не Тер Ованес, а епископ Киракос, а также в пользу того, что последний жил в XIII—XIV вв. В качестве основания использованы рукописи Матенадарана им. Маштоца № 3595 и 738, первая из которых переписана в XV в., а вторая—в XVI—XVII вв. Обе они не опубликованы, здесь впервые представлен их критический текст. Выясняется, что «Восхваление птиц» было первоначально написано в порядке армянского алфавита (U—P), затем были беспорядочно выведены отдельные строфы как принадлежащие перу Тер Ованеса. Этот Ованес отождествлен с Ованесом Кипреци, жившим в XVII в.

Стихотворный цикл епископа Киракоса «Восхваление птиц» принадлежит к числу тех уникальных образцов секуляризирующей армянской литературы X—XIV вв., которые совершенно свободны от дани религии и проповеди. Этот цикл очень важен с точки зрения литературоведения. Велико его значение и с точки зрения естествознания и зоологии, ибо в девяносто одной его строфе восхваляются и характеризуются 80 птиц.

A. MNATSAKANIAN

## LE CYCLE POÉTIQUE „LOUANGE DES OISEAUX“, SON AUTEUR ET L'ÉPOQUE DE SA CRÉATION

### (Résumé)

A partir du XVII<sup>e</sup> siècle dans les manuscrits arméniens on découvre de nombreuses variantes du cycle poétique consacré à la louange des oiseaux et lié au nom de Ter Hovhannes. Beaucoup d'entre elles ont été publiées comme des variantes de son oeuvre. Dans cet article l'auteur

développe des arguments en faveur de ce que le poète des „Louanges des oiseaux“ n'est pas Ter Hovhannes, mais l'évêque Kirakos et de ce que ce dernier a vécu aux XIII<sup>e</sup>—XIV<sup>e</sup> siècles. L'auteur de l'article a utilisé comme base les manuscrits du Maténadaran Machtotz Nos. 3595 et 788, dont le premier a été copié au XV<sup>e</sup> siècle et le second aux XVI<sup>e</sup>—XVII<sup>e</sup> siècles. Aucun d'eux n'est publié et leur texte critique est présenté ici pour la première fois. Il apparaît que la „Louange des oiseaux“ a été rédigée d'abord dans l'ordre de l'alphabet arménien (*Ա-Բ*), puis des strophes séparées ont été introduites en désordre comme appartenant à la plume de Ter Hovhannes. Cet Hovhannes et Hovhannes Kiprutsi, qui a vécu au XVII<sup>e</sup> siècle, sont identiques.

Le cycle poétique de l'évêque Kirakos „Louange des oiseaux“ est au nombre des rares spécimens de la littérature arménienne sécularisée des X<sup>e</sup>—XIV<sup>e</sup> siècles qui sont absolument libres de tout tribut à la religion et aux sermons. Ce cycle est très important du point de vue de l'histoire de la littérature. Son importance est grande également du point de vue des sciences naturelles et de la zoologie, car dans ses quatre-vingt-onze strophes l'auteur loue et décrit quatre-vingts oiseaux.

ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ 1823 Թ. ԲՈՂՈՒՐԱԳԻՐԸ

Արևելյան Հայաստանի Ռուսաստանի հետ միավորման բախտորոշ իրադարձությանը նախորդող տասնամյակների պատմությունը, դեռևս XIX դ. կեսերից իր վրա է սեեռել հայ, ռուս և այլազգի հետազոտողների ուշադրությունը:

Ուշադրավ են հատկապես միավորմանը հաջորդող տասնամյակներում կատարված տնտեսական կյանքի, հողատիրության և ագրարային հարաբերությունների, բնակչության էթնիկական և սոցիալական կազմի վիճակագրական ուսումնասիրությունները, որոնք ժամանակագրորեն ավելի մոտ լինելով հիշյալ շրջանին, առավել ճշգրիտ պատկերացում են տալիս երկրում տիրող բնդհանուր իրավիճակի մասին:

Այդ հետազոտությունները, սակայն, մեծ մասամբ կոչված էին պարզելու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ստատիկ պատկերը, այսինքն այն, ինչ որ վաղ ժամանակներից և՛ մահմեդական իրավունքով, և՛ սովորույթային օրենքներով, ավանդաբար կիրառվում էր Իրանում, տվյալ դեպքում Անդրկովկասի խանական տիրապետություններում:

Իրողությունն այն էր, սակայն, որ աշխատավորական զանգվածների և ամբողջապես վերցրած հայ ազգաբնակչության տնտեսական և արտատնտեսական ճնշումները, հարստահարություններն ու կրոնական և ազգային խրտրականությունը, հարյուրամյակներ շարունակվելով, Անդրկովկասի տարբեր հատվածների Ռուսաստանի հետ միավորմանը նախորդող տասնամյակներում արդեն, առօրյա երևույթներ էին դարձել:

Նախորդ դարի վերջերից նոր թափ առած Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումներն ու Ռուսաստանի հետ միավորվելու ուղղությամբ կատարված գործնական քայլերը, ղուգորդված ռուսական զինքի պարբերական հաջողությունների հետ, XIX դարի սկզբներին արդեն նշանավորվեցին պատմական նոր հեղաբեկումներով և սոցիալ-քաղաքական արձատական տեղաշարժերով: Այս իրադարձությունները եկան երկրի ներսում առավել ևս սրելու ներքին հակասությունները, տեղի տալով արևելյան բռնատիրությանը բնորոշ անձի և գույքի մինչ այդ էլ անհանդուրժելի անապահովության սաստկացմանն ու բնակչության կողոպուտի և հարստահարության սանձադեղմանը:

Հայկական պատմողական և գիվանական աղբյուրներին ղուգահեռ, երկրում տիրող ծայրահեղ ծանր կացության և բնակչության անապահով վիճակի վերաբերյալ ուշադրավ տվյալներ են պարունակում նաև պարսկալեզու գիվանական վավերագրերը: Այդ վավերագրերի մեջ մեծ թիվ են կաղմում, մի կողմից հայ հոգևոր առաջնորդների և աշխարհիկ գործիչների, և մյուս կողմից

Նրևանի Մուհամմադ խան Կաշարի (1784—1805), Հուսեյնկուլի խանի (1807—1827) կամ նրա եղբոր՝ Հասան խանի և հատկապես գահաժառանգ և փոխարքա Աբբաս-Միրզայի միջև փոխանակված պաշտոնական փաստաթղթերն ու առաքված գրությունների պատճենները:

Այս ուշագրավ վավերագրական նյութի քննական-համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հավաստելու, ինչպես դարասկզբին, այնպես նաև 1804—1813 թթ. պատերազմական գործողություններին, Գուլիստանի պայմանագրին հաջորդած տարիներին իրանական իշխանությունների կողմից ազգաբնակչության տարբեր խավերի նկատմամբ Արևելյան Հայաստանում և հատկապես Արարատյան երկրում սանձազերծված հարստահարությունների զանգվածային բնույթը:

XIX դարի առաջին քառորդի մի քանի հարյուր դիվանական վավերագրերի մեջ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ներսես Աշտարակեցու գրությունները, հատկապես 1823 թ. Աբբաս-Միրզային ներկայացված բողոքագիրը, որտեղ մանրամասն նկարագրված են 1798—1822 թթ. Նրևանի սարգար Հուսեյնկուլի խանի, նրա եղբոր՝ Հասան խանի և նրանց ստորադասների կողմից էջմիածնի միաբանության նկատմամբ դրսևորված ոտնձգությունները, պարբերաբար կրկնվող ինչքի և ունեցվածքի հափշտակումներն ու մեծագումար դրամական բռնագանձումները, որոնք այդ տարիներին աննախընթաց շափերի էին հասել, վանքին կանգնեցնելով ահռելի պարտքերի առաջ:

Մանոթանալով վավերագրի բովանդակությանը, սկամա հիշում ես Խ. Աբովյանի անմահ երկի այն տողերը, երբ էջմիածնի հոգևորականները, պատմելով իրենց վիճակի մասին, եզրակացնում են. «Ախր, մեզ որ էդ են անում, ձեզ ինչ կանեն»: Իրոք, եթե այդպիսին էր դարեր շարունակ սեֆյան արքաների հրովարտակներով, իսկ առավել ևս ժամանակակից արքայի և գահաժառանգ ու փոխարքա Աբբաս-Միրզայի հրամանագրերով, իբրև թե բարձրագույն հովանավորությանը ենթակա, Ամենայն Հայոց կաթողիկոսության կենտրոնը հանդիսացող էջմիածնի վիճակը, ապա պարզ է, թե ինչքան ծանր են եղել հարկատու ժողովրդի և աշխատավորական զանգվածների ուսերին բարդվող հարկապահանջության ու կեղեքումների լուծն ու որքան ապերասան ընչաքաղց խանի և նրա մերձավորների ու ստորադաս ոհմակի բնություններն ու կամայականությունները:

Նրկրում մոլեգնող անիշխանության և կամայականությունների, ինչպես նաև էջմիածնի վանքի և միաբանության նկատմամբ գործադրվող բռնությունների վերաբերյալ տեղեկություններ կան ցրված պատմողական և դիվանական աղբյուրներում, որոնց ճշմարտացի գեղարվեստական արտացոլումը գտնում ենք Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում: Ներսես Աշտարակեցու սույն բողոքագիրը, սակայն, հանդիսանալով ժամանակի խոշորագույն ազգային, եկեղեցական և հասարակական-քաղաքական գործչի կողմից շարադրված պաշտոնական փաստաթուղթ, ուր մանրամասնորեն նկարագրված են նշված տասնամյակներին վանքում տեղի ունեցած դեպքերը, որպես առավել հավաստի սկզբնաղբյուր, ավելի ամբողջական պատկերացում է տալիս այդ թվականներին Արևելյան Հայաստանում տիրող սոցիալ-քաղաքական ծանր իրադրության մասին:

Բողոքագիրը շարադրված է դիվանագիտական ոճով, արքունի գրագրությունների էտիկետին համապատասխան: Նույն այդ թվականներին, ծավալե-





լով բուռն քաղաքական գործունեություն և լայնորեն համագործակցելով Անգլիական ռուսական հրամանատարության և պետական գործիչների հետ, իրանական բռնակալության լծից Հայաստանի ազատագրման և Ռուսաստանի հետ միավորման համար զինված պայքարի կոչ անող Ներսես Աշտարակեցին, հարկադրված էր ծայրից ծայր իրանական իշխանությունների դաժանության, բռնությունների ու հարստահարության մասին պատմող իր բողոքագրում, Ֆաթհ-Ալի շահին և Աբրահամ-Միրզային հիշելիս, ակամա նրանց անվանել «ողորմած և բարեխնամ», վանքի և հոգևորականության նկատմամբ «հոգատար և բարյացակամ» և այլն: Արտահայտություններ, որոնք զիվանագրական (զիպլոմատիկական) ձև են միայն, և, ինչպես ասվեց, տրամադծորեն միանգամայն հակառակ՝ բողոքագրի ոգուն ու բովանդակությանը և հեղինակի մտածողությանն ու քաղաքական աշխարհայացքին:

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական զիվանում պահպանվել է բողոքագրի պատճենը՝ բաղկացած երեք թերթից: Առաջին թերթի սկզբում մակագրված է՝ «Յրինակ խնդրագրոյ Ներսէս արքեպիսկոպոսի առ արքայորդին պարսից, յամի 1823 հոկտեմբերի» և ապա պարսկերեն, միայն از نرسیس از کبار بشاهزاده (Ներսես արքեպիսկոպոսից — արքայորդուն): Ընդօրինակությունը կատարված է ոչ հմուտ պարսկագետի ձեռքով, բաղմաթիվ քերականական և ուղղագրական սխալներով:

Բողոքագրում առկա փաստական նյութը հայագիտական լայն շրջանակներին մատչելի դարձնելու նպատակով, ստորև հրատարակում ենք վավերագրի հայերեն թարգմանությունը:

### Ներսես Աշտարակեցու 1823 թ. Իրանի փոխարքա Աբրահամ-Միրզային ներկայացրած բողոքագրի հայերեն թարգմանությունը

(Մատենադարան, կաթողիկոսական զիվան, թղթ. 1 ե, վավ. 707)

Շատ տարիներ էջմիածնի վանքը գտնվելով Իրանի արքաների հովանավորության ներքո ազատորեն զոյատևել է ու պահպանվել, իսկ նրա հոշակը տարածվել է բոլոր ժողովուրդների մոտ:

Սակայն հիշքեթի 1212 (1797—1798) թ. Երևանի Մուհամմադ խանը, շանսալով նորին արքայական մեծության հրամանին և առանց հաշվի առնելու նախկին արքաների կողմից էջմիածնի վանքի հարկային արտոնությունների և հայկական համայնքների իրավունքների վերաբերյալ տրված հրովարտակաները, ինչպես նաև արհամարհելով այլ պետությունների հովանու տակ ապրող հազարավոր հայերի կամքը, վանքի հարստությունը հափշտակելու նպատակով, բռնացավ հայ հոգևորականների ու ժողովրդի վրա և, հակառակ ընդունված կարգի, բոլորի կաթողիկոսի ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով Իրանի, Քուրքիայի և Ռուսաստանի սահմաններում բնակվող բոլոր հայերի ցանկությունն ու միաձայն որոշումը, և հաստատվում է հիշյալ երկրների արքաների ու կայսրերի հրովարտականերով, կրկնված զինվորների միջամտությամբ, իր ցանկացած մարդուն դարձրեց էջմիածնի կաթողիկոս և, յուրացնելով էջմիածնի հարստությունը, նրան ետին թշվառության մատնեց:

Եթե շինիք Ռուսաց կայսրի հոգատարությունը իր երկրում ապրող հայ հպատակների և Օսմանյան կայսրության մեջ կամ այլուր գտնվող հայերի

նկատմամբ, ինչպես նաև մեծազոր Ֆաթհ-Ալի շահի և բարձրապատան Արքայորդու և փոխարքայի ցուցաբերած հովանավորությունը, որ հակադրվեց Մուհամմադ խանի շարամտությանը, երբեք հնարավոր չէր լինի վերստին փոխել կաթողիկոսին և հեռացնել նրա մերձավորներին: Նորին մեծություն Շահի և Արքայորդու բարեխնամ ողորմածության շնորհիվ էր, որ զսպվեց Մուհամմադ խանի անհնազանդությունը և ողջ հայոց ազգի ընտրյալ Դանիել կաթողիկոսը Մարաղայից ետ ուղարկվեց ու նստեցվեց իր գահին: Դրանից հետո էր, որ վանքը նորից սկսեց հետզհետե բարեկարգվել և վերագտնել իր նախկին պայծառությունը:

Սակայն այս վիճակը մեկ տարուց ավելի շտեկեց: Շուտով Երևանի տիրակալները նորից սկսեցին բռնություններ գործադրել և ստնձգություններ թույլ տալ և վանքի հետ վարվել այնպես, որ հակասում էր մեր վանքի նկատմամբ նորին գերազանցություն Արքայորդու ունեցած ազնիվ և բարեխնամ վերաբերմունքին:

Որպես էջմիածնի միաբաններից մեկը ես շեմ կարող շմտահոգվել վանքի ներկա անմխիթար դրությանը և վեհափառ կաթողիկոսի ու հայ ժողովրդի, ինչպես նաև մեր հոգևորականների՝ իմ եղբայրների վիճակով, շմտածելու նրանց նկատմամբ գործադրվող բռնություններն ու ստնձգությունները կանխելու և Ձեզ հայտնի պարտքերից ազատելու մասին:

Իմանալով Ձերդ գերազանցության էջմիածնի նկատմամբ ունեցած հոգատարության մասին և համոզված որ Դուք միայն ի զորու եք պաշտպանության տակ առնել և ազատել վանքը հսկայական պարտքերի ծանր բեռից ու անընդմեջ ստնձգություններից, Տաթևի գերաշնորհ առաջնորդ, դարաբաղցի Մարտիրոս արքեպիսկոպոսին ուղարկում եմ ներկայանալու Ձերդ գերազանցությանը և հանձնելու սույն խնդրագիրը, որով Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում էջմիածնի վանքի և անձամբ վեհափառ կաթողիկոսի ու միաբանության նկատմամբ վերջին 15 տարիների ընթացքում կատարված բացահայտ բռնությունների ու ստնձգությունների մանրամասն նկարագրությունը՝ հուսալով, որ այն նորին գերազանցություն Արքայորդու արքայական բարեխնամությանն ու հոգատարությանը կարժանանա:

Հիշրեթի 1224 (1809) թ., երբ լուրեր էին տարածվել, թե սուսաց զորքը շարժվում է դեպի Երևան, և երբ Դանիել կաթողիկոսը ծանր հիվանդ էր, Երեվանի սարգարը էջմիածնի վանքից ավելի քան 12500 թուման կանխիկ դրամ և մի քանի ժամացույց է վերցրել, իսկ երբ կաթողիկոսը վախճանվեց և սուսաց զորքը վերադարձավ, սարգարը նորից ավելի քան 1000 թուման դրամ վերցրեց էջմիածնի վանքից: Հասան խանն էլ իր հերթին մի քանի կըզըլբաշ հարկահանների ձեռքով որոշ հոգևորականների կալանքի տակ վերցրեց: Ստիպված եղանք ավելի քան 500 թուման վճարել և մեծ դժվարությամբ ազատել նրանց: Հասան խանը միաժամանակ վանքում եղած ամբողջ ցորենն ու գարին, որ մանր 47 փարայով մեծ դժվարությամբ ու շարշարանքով գնվել և բերվել էր հեռու վայրերից, վերցրեց, խոստանալով, իբր սուսաց զորքի հեռանալուց հետո յուրաքանչյուր մանի դիմաց 5 ման վերադարձնել, և այսպիսով վանքը մինչև նոր բերքը զրկվեց հացահատիկի պաշարից:

Հիշրեթի 1226 (1811) թ. Քաղի խանի եղբայրն իր խմբով բռնանալով վանականների վրա, պահանջեց, որ որբանոցի կույս աղջիկներից մեկին ուղարկեն իր տունը և այնպիսի բռնություններ գործեց, որ Երևանի խաներից ոչ մե-

կը երբեք չէր համարձակվել: Այդ ժամանակ սարդարը Քավրիզում էր գտնվում: Մինք էլ բողոքեցինք Հասան խանին, իսկ խանը փոխանակ վանքն իր պաշտպանութեան տակ վերցնելու և Քաղի խանի եղբորն հեռացնելու, նախ գաղտնաբար վանականներից մեկին զխատել տվեց, իսկ հետո ինձ 16 օր մի սննյակում արգելափակեց՝ սպառնալով հրանոթի բերանին կապել: Այնուհետև մի այլ վանականի, վանքի երկու սպասավորների հետ, մեծ նեղութունների ենթարկելով, հանցագործներին հատկացված բանտում բանտարկել տվեց և 400 թուման անձամբ, 50 թուման էլ յուրայինները ստանալուց հետո միայն ազատ արձակեց:

Սակայն, երբ այս դեպքերն էին տեղի ունենում, էջմիածինն առանց կաթողիկոսի էր մնացել և վանքի միաբաններն ու հոգևորականները այն հույսն ունեին, որ կաթողիկոսի ներկայութեան դեպքում, Նորին մեծութուն Շահն ու մեծափառ արքայորդին, Իրանի նախկին արքաների ժամանակներում եղածից ավելի հոգատարութուն կցուցաբերեն և էջմիածնի նկատմամբ թույլ տրվող բռնութունները, անիրավութուններն ու ոտնձգութունները վերջ կգտնեն:

Երբ կաթողիկոսը Նորին գերազանցության պայծառափայլ ընդունելութեանը արժանացավ, պատշաճ շնամարեց անցյալում տեղի ունեցած բռնութունների ու անիրավութունների մասին զեկուցել: Մինք գոհացանք միայն այն հույսով, որ այսուհետև և՛ վանքը, և՛ մենք բոլորս միշտ հովանավորյալ ու ապահով վիճակում կլինենք: Հատկապես որ Նորին գերազանցությունն իր արքայական բարի և ճշմարիտ խոսքով, անձամբ կաթողիկոսին հավաստեց էջմիածնի վանքի և բոլոր հոգևոր և աշխարհիկ առաջնորդների նկատմամբ իր կողմից ցուցաբերվելիք հարատև հովանավորութեան և բարյացակամ վերաբերմունքի մասին: Հատուկ հրովարտակով նաև էջմիածնի վանքի գյուղերն ու այլ գանձագին կալվածները արբունի հարկերից ազատ հռչակվեցին, և դեռ ավելին, պետական գանձարանից տարեկան 400 թուման կաթողիկոսին ոռճիկ նշանակվեց: Նորին գերազանցությունը իր մոտ կանչեց սարդար Հուսեյն խանին և կաթողիկոսի ներկայութեամբ հանձնարարեց ուշադիր լինել նրա նկատմամբ և այնպես պահպանել վանքը, որ էջմիածնի վրայով թռչուն անգամ չբահամարձակվի թռչել: Այս բոլորից հետո մոռացվեցին անցյալում վանքի և մեր դեմ թույլ տրված բռնութուններն ու անարդարութունները և պատճառած վնասները:

Իրողութունն այն է, սակայն, որ այդ օրվանից մինչև օրս և՛ անձամբ կաթողիկոսը, և՛ մյուս հոգևորականներն ու հայոց ազգը բախտ չեն ունեցել անմիջապես Նորին գերազանցության հովանու տակ գտնվելու, կամ գործադրված տեսնելու բարձրապատան արքայորդու բարեխնամ կարգադրութունները: Նորին գերազանցության կողմից սարդարին արված այդպիսի որոշակի հանձնարարութունից հետո, իհարկե օգում թռչող թռչուններից էջմիածնի վանքը վնասներ չկրեց, սակայն Նորին գերազանցությունը մոռացել էր սարդարին հանձնարարել, որ թռչուններից ավելի անհրաժեշտ էր զգույշ լինել վիշապներից և թույլ չտալ, որ նրանք ներխուժեն վանք և կաթողիկոսի և բոլոր հոգևորական ու աշխարհիկ մտավորականության ոսկորներն ու ողնաշարը ջարդուփշուր անեն և դրանով ավելի մեծ ավերածության ենթարկելով էջմիածնի վանքը, ծանր վիշտ պատճառեն հազարավոր հայերի:

Այս բոլորի արդյունքն եղավ այն, որ էջմիածնի վանքը չկարողացավ ազատվել անընդհատ ոտնձգութուններից ու նեղութուններից և ոչ միայն

կորցրեց իր ազատութիւնն ու անդորրը և զրկվեց եկամուտներից, այլ նաև հեռու մնաց նորին գերազանցութիւն փոխարքայի հոգատար, բարեխնամ և բարեբախտ ուշադրութիւնից:

Հիշրեթի 1226 (1811) թ. նորին գերազանցութիւնը, ելնելով էջմիածնի վանքի նկատմամբ իր դժբախտ և բարեխնամ վերաբերմունքից՝ հարգելով կաթողիկոսի խնդիրքը, իր մեծազոր հրովարտակով հրահանգեց վանքին վերադարձնել, ի բնե վանքի սեփականութիւնը հանդիսացող զանձագին Աշտարակ գյուղը, որը ժամանակին Մուհամմադ խանի հայր Հուսէյն-Ալի խանը բռնի սեփականել էր: Սարգարը խոստացավ վերադարձնել, պահանջելով, սակայն, որ դրա համար իրեն 1000 թուման փիշրաշ (նվեր) տրվի, և, բանի որ, առ այսօր վանքը չի կարողացել այդ գումարը վճարել, ուստի սարգարը գյուղը վերադարձնելու ցանկութիւն չի ցուցաբերում: Այսպիսով ահա, 13 տարի է, որ վանքն սպասում է նորին գերազանցութեան բարեբախտ հրամանի իրագործմանը, իսկ այդ ընթացքում հիշյալ գյուղից ստացվող եկամուտը սարգարն է յուրացնում:

Հիշրեթի 1228 (1813) թ. սարգարը բերեց ուսյաթներ բնակեցրեց Եղվարդ գյուղում, իսկ այդ գյուղի վեց դանդի (մաս) 4,5 դանդը էջմիածնի վանքին է պատկանում: Սակայն սարգարը սեփականել է գյուղի ամբողջ եկամուտը և վանքին ոչ մի բաժին չի տալիս:

Նույն թվականին էջմիածնի դպրեվանքի աշակերտներից Հարունին սարգարը կանչեց տարավ իր տունը և բռնի թլպատել տվեց:

Հիշրեթի 1231 (1816) թ. նորին գերազանցութիւնը էջմիածնի վանքի նրկատմամբ իր հոգատարութիւնը արտահայտելով, հատուկ հրովարտակով վանքապատկան բոլոր գյուղերն ազատեց արքունի հարկերից: Սակայն սարգարը, արհամարհելով այն, ամեն տարի կապալաչին կարգով, էջմիածնի վանքից 400 թուման է վերցնում, իսկ զանազան պարհակների ու մուրհակների (հավալե) ձևով, հիշյալ գյուղերի բնակիչներից 400 թումանից ավելի գումար է գանձում:

Հիշրեթի 1232 (1817) թ. էջմիածնի վանքի հոգևորականների և միաբանութեան կողմից խնդիրք ներկայացվեց, որպեսզի մուղանլուեցիները հեռանան վանքապատկան հողերից և այդ հողերը նորից հանձնվեն վանքի ժողովրդին: Սակայն սարգարը այդ բանին համաձայնվեց միայն վանքից 500 թուման ստանալուց հետո:

Հիշրեթի 1234 (1819) թ. խիստ հրահանգով, սարհանգ (գնդապետ) Մուհամմադ խանը մտել է էջմիածին և ցանկացել է մի բանի անվանի, բարձրատիճան հոգևորականների և գյուղի ավագների մի տան մեջ արգելափակել և դուռը քարով շարել, որպեսզի նրանք այնտեղ մեռնեն, պատճառաբանելով, իբր իրեն տեղեկացրել են, որ նրանք կաթողիկոսին շնորհակալութիւն են քանդակում: Չնայած այն բանին, որ կաթողիկոսն ու շատ ուրիշներ թախանձագին խնդրելով պընդել են, որ նրանց նման արարքի մասին ոչ ոք ոչինչ չի լսել և նման բան չի եղել, սարհանգը ոչ մի կարևորութիւն չտալով, մեկ ամսից վերադարձնելու խոստումով, 1000 թուման է վերցրել և, որպես խիղմաթանե (ծառայութեան վարձ), այն բանի համար, որ հոգևորականներին ազատ արձակի, բռնագանձել է ևս 100 թուման:

Հիշյալ թվականին, նույն վանքի որոշ մարդկանց, իրենց ցանած բամբակը վաճառելու համար, խանը բռնել էր և գանակոծման ենթարկել և որպեսզի

Տույլատրի իրենց խանութներից օգտվել, նրանցից 200 թուման էր բռնագանձել:

Հիշրեթի 1236 (1821) թ., կաթողիկոսը ուսաց մեծագոր Կայսրի համալիով և շքանշանով ներկայացել էր սարգարին. մի շքանշան, որի ստացման ժամանակ, նախկին սարգարի ներկայացմամբ, նորին գերազանցությունը մեծ սրբախոսությամբ, հատուկ հրովարտակով արտոնել էր, որ կաթողիկոսն այն իր վզից կախի: Հաշվի շառնելով այն փաստը, որ ուսաց մեծագոր Կայսրի զորավարներ՝ նորին գերազանցություն նիկոլայ Ֆետոդորովիչ Ռաիշչևն ու Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովը և ուսաց բանակի այլ գեներալներ ու աստիճանավորներ, մեծագոր Կայսրի ենթակաները լինելով, Իրանի մեծաշուք արքա, նորին մեծություն Ֆաթհ-Ալի շահի համալիլներն ու շքանշանները ընդունված կարգով կախում են իրենց վզից, երբ կաթողիկոսը վանք էր վերադարձել, սարգարը հանձնարարել էր հայտնել նրան, որ եթե մի անգամ ևս նա այդ շքանշանով ու համալիլով իրեն ներկայանա, թող հաստատ իմացած լինի, որ ներս մտնելուն պես այդ լանջակապով նրան խեղդամահ անել կտա:

Հիշրեթի 1237 (1822) թ., երբ կաթողիկոսը Ղարաբաղում էր գտնվում, էջմիածնի վանքի մեծ վանականներից երկուսը՝ գանձատան պետ, գերաշրնորհ Գրիգոր Եպիսկոպոսն ու Փիլիպոս Եպիսկոպոսը, որոնք Իզմիրից նոր էին եկել, և նրանց հարստության մասին լուրեր էին տարածվել, վախճանվեցին: Վաղ ժամանակներից վանքում ընդունված կարգ կա, որ այսպիսի դեպքերում, ճանաչված վանականներից ոմանք նրանց սենյակը կնքում են և մի քանի օրից, ընտրված հարգարժան վանականների ներկայությամբ, նորից բացում են և ինչ որ նրանցից հարստություն կամ անձնական իրեր է մնացած լինում, ցուցակագրում են և վերցնում ու պահում որպես էջմիածնի վանքի սեփականությունը: Այս դեպքում, սակայն, երբ սարգարն իմացավ հիշյալ երկու վանականների մահը, անմիջապես Ջաֆար խանին ուղարկեց և հանդուցյալ վանականների սենյակը իր կնիքով կնքել տվեց: Մի քանի օր հետո սարգարն անձամբ եկավ էջմիածին և հիշյալ Ջաֆար խանին կարգադրեց բացել հանդուցյալ վանականների դուռը և այնտեղ եղած հարստությունն ու անձնական իրերը ցուցակագրել և ցուցակը ներկայացնել իրեն: էջմիածնի վանականները թախանձագին խնդրելով փորձեցին բացատրել, որ նախկինում երբեք տեղական իշխանությունները վանքի այս կարգի գործերին չեն միջամտել և կարգադրություններ չեն արել, և որ այդպիսի միջամտությունը ստորացուցիչ է և անհանդուրժելի մեր հոգևորականության և ամբողջ հայ ազգի համար, քանի որ այդ լուրը կտարածվի ամենուրեք:

Ջաֆար խանը այս բողոքներն ու խնդրքները հաղորդեց սարգարին: Իսկ նա բոլորովին հաշվի շառնելով վանքի շահն ու վնասը և հոգևորականության ու հայ ազգի ակնկալությունները, կարգադրեց, որ կամ վանքի վերականգնությունը ի դիմաց հանդուցյալ վանականների ունեցվածքի և իրերի 15000 թուման վճարեն և ապա նրանց սենյակի դուռը բացեն, կամ էլ սարգարի կարգադրությամբ Ջաֆար խանը դուռը բանա և եղածը ցուցակագրի:

Երբ Ջաֆար խանը իր բոլոր ծառաների հետ գնաց հանդուցյալ վանականների սենյակը բացեց, նախ բոլոր ոսկեղենն ու արծաթեղենը հավաքեց երկու արկղիկների, իսկ մատանիները, ժամացույցները և այլ ականակուռ իրերը մի այլ արկղի մեջ և ապա մնացած ապրանքների մի մասը գաղտնի, մյուս մասը բացահայտ կերպով, ինքը և իր ծառաները վերցրին և նոր միայն ինչ

որ մնացել էր, ցուցակագրեցին և հայերին ու պարսկերին առանձին արձանագրութիւններ կազմեցին: Դրանցից հետո վանքի վերակացուներին կարգադրեց զնալ իրենց տները, իսկ հիշյալ երեք արկղերը, առանց նրանց միջի եղածները ցուցակագրելու, ինքը՝ Ջաֆար խանը վերցրեց տարավ իր տունը: Այնտեղ նա նախապես դրանք բացելուց և ցանկացածը վերցնելուց հետո, գիշերը վանքի վերակացուներին կանչել տվեց իր մոտ և որպէս թե առաջին անգամն է արկղերը բացում, նրանց ներկայութեամբ բացեց դրանք և ինչ որ այնտեղ մնացել էր, ինչպէս ոչխարից միայն սկանչները մնացած լինէր, արձանագրեց և հաշորդ օրը դրանք հանձնեց վերակացուներին:

Այնուհետև այն պատրվակով, թե իբր հանգուցյալ վանականների սննդակում ինչ որ բաներ պակաս են եղել, գիշերաժամին իր մոտ կանչեց Բզմիբից եկած հանգուցյալ վանականի ենթականերից Ստեփան վարդապետին և երկու ծնկների արանքը բար ղեկով, ոտքերը պարանով այնքան ձգել տվեց, որ ծնկների հատվածները իրարից անջատվեցին և ապա երեսի վրա պառկանելով փայտով խիստ ծեծել տվեց՝ պահանջելով, որ նա ասի, թե վախճանված վանականի իրերից ինքը շատ բաներ տվել է վանքի վերակացուներին: Հետո կարգադրեց շամփուր տաքացնել և նրա մարմինը խաբանել, բայց երբ նրանից 40 թուման կանխիկ գրամ և 60 թումանի մուրհակ վերցրեց, կարգադրեց շխարանել և ազատ արձակեց:

Ջաֆար խանը այնուհետև մտավ տաճարը և կարգադրեց բացել ներքին խցի դուռը, որտեղ պահվում են Լուսավորչի աջն ու Ս. Սարգսի մատուցներն ու այլ սրբութիւններ, և ցանկացավ մտնել այնտեղ և ներսում եղած իրերը վերցնել: Նրան ասացին, որ բացի կաթողիկոսական տեղապահից ուրիշ ոչ ոք իրավունք չունի այդ խուցը մտնել և թախանձելով ու խնդրելով, մեծ դժվարութեամբ կարողացան համոզել նրան, որ ներս չմտնի և քանի որ նա շարունակում էր պնդել իր ուղածը, ի վերջո համաձայնվեց, որ իր բարեկամ վանականներից մեկը ներս մտնի և այնտեղ պահվող արկղը դուրս բերի: Երբ արկղը բերին, նա բացեց և միջից մի զանգով ժամացույց վերցրեց և մնացած իրերի մեջ իրեն վայել բան չգտնելով, թողեց ու հեռացավ:

Հիշքեթի 1228 թ. զիհաջջա ամսի 7-ին (1813 թ. դեկտ. 20) սարգարի մրտերիմներից Միրզա-Ջարբարը մտել է վանք և ձեռքն անցածը հափշտակելուց հետո, իր ծառաներին հրամայել է այնտեղ եղածներին բոլորին կոտորել, երկու վանականների՝ մեկին երկու տեղից, մյուսին մեկ տեղից ծանր վերքեր են հասցրել: Մի ուրիշին էլ սրով հարվածել են զլխին, վեղարը պատռել և միայն տակից ծածկած բամբակյա զլխարկն է նրան մահից փրկել: Մի վանականի էլ փայտով ծեծելով ջարդուփշուր են արել, իսկ մի ուրիշի այնքան են ծեծել, որ շունչը կտրվել է: Հետո ուղել են նրան սպանել, սակայն այդ պահին սարգարի ծառաներից մեկը եկել է ու նրանց ձեռքից ազատել: Վանքի դռնապաններից մեկին էլ այնքան են ծեծել, որ շունչը փչել է:

Պետք է ասել, որ նման բացահայտ բռնութիւններն ու ստնձգութիւնները և վանքի ավերման դիտավորութիւնները երբեք չեն նվազել: Այսպէս օրինակ, արդեն քանի տարի է, որ Ջաֆար խանը, իր սեփական գինին վաճառելու համար, էջմիածնի վանքի փոքր կարավանատանը 13 խանութ է դրադեցրել և վանքի մարդկանց արգելել է իրենց այգիների գինին անձամբ վաճառել, որպէսզի ինքը առյաթներից շնչին զնով զնի և երկու-երեք անգամ ավելի թանկ իր խանութներում վաճառի: Այս պատճառով էլ էջմիածնի վանքի հոգևորա-

կանությունն ու ամբողջ միաբանությունը տարեկան շուրջ 1500 թուման վնաս է կրում, քանի որ գինու վաճառքը նրա մենաշնորհն է դարձել:

Նման անարդար կարգերի հետևանքով, էջմիածնի վանքն, ընդհանրապես, այս հինգ տարիների և հատկապես վերջին երկուսուկես տարիների ընթացքում, մինչև կաթողիկոսի փախուստն այնտեղից, 33684 թուման 5900 դինար պարտքի տակ է ընկել: Այս միջոցում թեպետ պարտատերերին վճարված է 35536 թուման 3500 դինար\* և սակայն այժմ էլ վանքը 32000 թումանից ավելի պարտք ունի, քանզի վեց ամիսը մեկ, մուրհակներին 10-ին 3 տոկոս է բարդվել, բացի շատերի կողմից հարուցված զանազան վեճերը: Ինչպես երևում է ներկայումս մեր ձեռքում գտնվող մի մուրհակից, սարդարը նույնպես նպաստել է, որպեսզի վանքի պարտատերերը ավելի մեծ կորուստ և վնաս պատճառեն վանքին, որով և բացատրվում է վանքի պարտքերի և ներկա անմխիթար վիճակի պատճառը:

Բոլորին հայտնի է, որ հայոց վանքի եկամուտները գոյանում են հայ համայնքների կամավոր նվիրատվություններից, ինչպես նաև սեփական գանձադին կալվածներից ստացվող արդյունքներից, որոնցով հոգում են բոլոր ծախսերը, և առկա պահանջները բավարարելուց հետո վանքը միշտ ունևոր վիճակում է լինում: Ներկա պայմաններում, այդ եկամուտները ծախսերը չեն փակում, և վանքը մեծագումար, ծանր պարտքերի տակ լինելով, կաթողիկոսն ու հոգևորականությունը դժվարին ու անելի վիճակի են մատնված: Կաթողիկոսը հիմա մեր կողմերն է եկել, որպեսզի այդ պարտքերի ծանր բեռից ազատվելու միջոցներ գտնի ու ետ վերադառնա և շարունակի իր շանքերը վանքը վերոհիշյալ ոտնձգություններից ու ճնշումներից ազատելու ուղղությամբ:

Բայց ահա, երբ կաթողիկոսը զնաց Ղարաբաղ, դրանից անմիջապես հետո բոլոր հայերն ու մյուս ազգերը իմացան, թե ինչպես հիշյալ երկու վանականների մահից հետո սարդարը վանքից 15000 թուման է պահանջել և թե ինչպես Ջա'ֆար խանը եկել է նրանց խուցը և յուրացրել ունեցվածքը և ինչպիսի բռնությունների ու տանջանքների են ենթարկվել վանքում գտնվող հոգևորականներն ու բոլոր վանականները:

Լսելով այս մասին, ինչպես հայերը, այնպես նաև մյուս քրիստոնյաները, եկան այն համոզման, որ այս պայմաններում էջմիածնի վանքը հավիտյան պարտքերից չի կարող ազատվել և չի կարող հիշրեթի 1212 (1798) թ. առաջ ունեցած իր պատիվն ու փառքը վերականգնել:

Ներկայումս, երբ բոլորը մեկուսացել են ինձանից և շեն ցանկանում որևէ ձևով օժանդակել, աղոթարարս, որ այս գործերի առնչությամբ իմ ուժերի առավելագույն շափով ջանացել եմ էջմիածնի վանքին և կաթողիկոսին օգտակար լինել, սույն խնդրագրի հետ Նորին գերազանցությանն եմ ներկայացնում նաև Ջա'ֆար խանի ինձ գրած նամակի պատճենը, որից Ձեզ պարզ կդառնա էջմիածնի դարեթի (հարկերի կասպալառու) մտադրությունն ու ցանկությունները և վերաբերմունքը կաթողիկոսի և ընդհանրապես բոլոր հոգևոր ու աշխարհիկ գործիչների, այդ թվում նաև աղոթարարիս նկատմամբ, որ երկար ժամանակ է, ինչ նրանցից հեռու եմ գտնվում:

Իսկ եթե, աստժո ողորմածությամբ, Նորին գերազանցություն Արքայորդին բարեհաճի էջմիածնի վանքի, կաթողիկոսի, հոգևորականության և աղո-

\* Բնագրում սխալմամբ՝ շահի:

թարարիս մասին, իրեն հետաքրքրող մանրամասնություններ իմանալ, որպիսությունը ամենայն ճշգրտությամբ Մարտիրոս արքեպիսկոպոսը կպատմի:

Ելնելով նորին գերազանցության էջմիածնի վանքի նկատմամբ ցուցաբերած բարեխնամ վերաբերմունքից, Ձեր աղոթարարը լիահույս է, որ նկատի ունենալով մինչև այժմ տեղի ունեցած ոտնձգություններն ու բռնությունները, միջոցներ ձեռք կառնվեն, որպեսզի վանքն ազատվի վերոհիշյալ պարտքերից:

Միշտ եղել և մնում ենք նորին վսեմության կենաց և իշխանության հարատևման համար աղոթողներ:

А. Д. ПАПАЗЯН

ПИСЬМЕННЫЙ ПРОТЕСТ НЕРСЕСА АШТАРАКЕЦИ,  
1823 г.

(Резюме)

В фонде «архив католикоса» Матенадарана им. Маштоца сохранилась копия пространного письменного протеста на персидском языке видного церковного и общественно-политического деятеля Нерсеса Аштаракеци. В протесте, направленном в 1823 г. наместнику Ирана, наследному принцу Аббасу-Мирзе, подробно описаны посягательства и акты насилия, которые совершали в 1797—1822 гг. ханы Еревана Мухаммад хан (1784—1805), сардар Хусейнкули хан (1807—1827), брат последнего Хасан хан и подчиненные им чиновники в отношении Эчмиадзинского монастыря и его братии. Периодически повторявшиеся хищения и насильственное взывание больших сумм денег привели к огромной задолженности монастыря.

Написанный хорошо осведомленным и авторитетным лицом этот архивный документ является достоверным историческим источником и представляет как таковой определенную источниковедческую ценность, пополняя наши представления об анархии и произволе, которые царили в Восточной Армении накануне ее присоединения к России.

Целью настоящей публикации является ознакомление широких кругов научной общественности с содержанием этого интересного документа.

H. PAPAZIAN

LA LETTRE DE PROTESTATION DE 1823 DE NERSES  
ASHTARAKETSI

(Résumé)

Les „Archives du catholicos“ du service des Archives du Maténadaran Machtotz conservent la copie d'une longue lettre de protestation écrite en 1823 par le célèbre ecclésiastique et homme politique Nerses



Achtarakétsi au vice-roi et héritier du trône de l'Iran Abbas-Mirza, où il donne une description détaillée des attentats et des persécutions perpétrés par les khans Mouhammad (1784—1805) et Sardar Houssein Kouli (1807—1805) d'Erévan, le frère de ce dernier, Hassankhan, et leurs subordonnés contre le monastère et la congrégation d'Etchmiadzine, de même que les vols périodiquement renouvelés et les énormes sommes d'impôts exigées qui à cette époque avaient atteint des dimensions sans précédent réduisant le monastère à des dettes exorbitantes.

Ecrit par une personnalité compétente et bien informée, ce document historique est digne de foi et présente une valeur déterminée du point de vue de l'étude des sources; il vient compléter nos notions relatives aux abus de pouvoir et à la tyrannie régnant en Arménie Orientale aux décennies précédant son rattachement à la Russie.

Dans le but de rendre les faits contenus dans la lettre de protestation accessibles à un plus large auditoire scientifique l'auteur de l'article publie la traduction arménienne du document.

ՄԻՇԵԼ ՎԱՆ ԷՍԲՐՈԿ

Բեկգիտ

ԼԵՆԻՆԳՐԱԳԻ Մ. Ե. ՍԱԼՏԻԿՈՎ-ՇՁԵԴՐԻՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԿՐԿՆԱԳԻՐՐԸ (ՆՈՐ ՇԱՐՔ, № 14)

Դարասկզբին, Հանրային գրադարանի խնդրանքով, Ն. Մառք հրատարակեց 1897 թ. գնված մի ձեռագրի համառոտ նկարագրությունը<sup>1</sup>: Ձեռագիրը պարունակում է բազմասպատկման աղյուսակ, սաղմոս, աղոթքներ, տոմար, պատարագամատույց և այլն, ընդօրինակվել է 1554 թ. Մարասի վանքում «ի չերկիրն Քոչիզու, ի գեաւղաբաղաբս էրեր», Ստեփաննոս եպիսկոպոսի կողմից<sup>2</sup>: Բուն ձեռագիրը կազմող մագաղաթյա 244 թերթերը, ինչպես նաև մագաղաթյա պահպանակը՝ կրկնագիր են. թերթերի մեծությունը 20,7×16 սմ: Ն. Մառքի կարծիքով հին գրությունը Ժ/ԺԱ դարի է, մեզ թվում է, սակայն, որ ավելի շուտ Թ/Ժ դարի է: Եվ իրոք, հասպավումները սակավաթիվ են, ամենայն բանը՝ երբեք չի հասպավում: Ինչպես գիտել էր Ն. Մառք, ամենուրեք հանդիպում են ընթեռնելի բառեր: Ձեռագիրը բովանդակելիս է հղել նոր կտակարան և ներկայիս վիճակում կազմված է երկու տարբեր գրչագիր մատյանից:

Գրչագրի մանրադնին ուսումնասիրությունը հնարավորություն տվեց վերականգնել երկու ամբողջական թերթ: Ժամանակին այդ թերթերը պատկանելիս են հղել այն երկու գրչագիր մատյաններին, որոնք գրանյութ են հայթայթել 1554 թ. ընդօրինակված ձեռագրի համար: Առաջին հատվածի (Մնունդք) գիրը հատուկ է թերթերի մեծամասնությանը, երկրորդ հատվածինը (Թուղթք առաքելոց) հանդիպում է միայն 293—294, 297—298, 299—302, 307—310, 311—312 և 315—316 էջերի վրա: Այդ 16 էջերը համապատասխանում են օգտագործված մատյանի միայն 2 թերթին: Պահպանակի վրա նույն գրությամբ մնացել է ևս մի հատված, թերթիկի մի զգալի մասը կտրված է, պահպանվել է ընդամենը 25 տառանիշ (9 տող), սակայն գիրը շնչված չէ և հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել երկրորդ կրկնագրի հոյակապ ոճի մասին:

Վերականգնված առաջին թերթի վերին մասը այժմ կազմում է ձեռագրի 125 և 136 էջերը, իսկ ստորին մասը՝ 334 և 323 էջերը. բովանդակում է Մնն. Ե, 20—31: Գրությունը երկսյուն է, սյունակների միջև հղած տարածությունը՝ 2 սմ, յուրաքանչյուրն ունի 20 տող, մեկ տողում միջին հաշվով՝ 22 տառանիշ:

<sup>1</sup> Отчет Императорской Публичной библиотеки за 1897 год, СПб. 1900, стр. 161—162.

<sup>2</sup> Ամբողջական նկարագրությունը տե՛ս Կ. Ն. Юзбашян, Армянские рукописи в собраниях Ленинграда (№ 26) ձեռագիր ցուցակում, որը, հասոզ էնք, շուտով կհրատարակվի: Այժմ խորին շնորհակալությունս եմ հայտնում Կ. Յուզբաշյանին այն օգնության համար, որ նա ցուցաբերեց հոգվածս ձևավորելիս:

Գրված է ընտիր, գեղեցիկ երկաթագրով, ոչ ուշ, քան ժ դարը: Սյունակի լայնությունը մոտավորապես 10 սմ է, բարձրությունը՝ 25,5 սմ: Լուսանցքները եղել են շափազանց լայն: Վերին մասում, որը հավանաբար կտրված է, պահպանվել է միայն 4 սմ (էջեր 125 և 136), մինչդեռ ձախ լուսանցքը ունեցել է 7,5 սմ լայնություն (էջեր 125 և 334), իսկ ներքևինը՝ 9,8 սմ (էջեր 136 և 323): Աջ լուսանցքից մնացել է միայն 2 սմ (էջեր 136 և 323), սակայն 47 էջում պահպանվել է 8,3 սմ. հավանաբար, դա թերթի շիտակ կողմն է: Ազատ մնացած տարածությունը սկզբնապես ունեցել է գրեթե նույն շափերը, ինչ և գրադաշտը:

Երկրորդ ձեռագրում, որը նյութ է հայթայթել 1554 թ. մատյանին, մագաղաթը օգտագործվել է առավել շոայլությունը: Թերթի վերին մասը այժմ կազմում է 293 և 316 էջերը, իսկ ստորինը՝ 308 և 301 էջերը, բովանդակում է Ա Տիմ. Գ, 1—4: Երկու սյունակները 9,5 սմ լայնությամբ գտնվում են մեկը մյուսից 4 սմ հեռավորության վրա: Եվ ահա, վերին լուսանցքն ունի 5,2 սմ լայնություն, իսկ ստորինը՝ 11 սմ: Սկզբնապես լուսանցքները համաչափ են եղել, անտարակույս, այն զգալի տարածությունը, որն ազատ է մնացել 308 և 301 էջերի ստորին մասում: Գրությունը շատ խիտ է, տառանշանները ունեն 0,8 սմ բարձրություն, տողերի միջև եղած տարածությունը հավասար է 1 սմ: Յուրաքանչյուր սյունակն ունի ընդամենը 15 տող: Տառանիշերի քանակությունը տողում 12-ից երբեք չի անցնում և իջնում է անգամ մինչև 9: Գրիչը ձգում է գրությունը գեպի աջ, ընդ որում սյունակի աջ սահմանը կազմված է վերջին բառերի ոչ միայն վերջին, այլ երբեմն միջին տառերից:

299-րդ էջը բովանդակում է Ա Տիմ. Ա, 18—19: Այսպիսով, խնդրո առարկա ձեռագիրը պարունակել է Առաքելոց Թղթերը: Նշենք, որ գրանյութի օգտագործման նման պայմաններում միայն Առաքելոց թղթերի համար հարկավոր է 351 թերթ: Իսկ եթե դրանց կցվեն նաև Գործք առաքելոցը, ինչպես դա, հավանաբար, տեղի է ունեցել ավյալ դեպքում, ապա ձեռագիր մատյանը պիտի ունեցած լիներ մոտ 490 թերթ:

1554 թ. օգտագործված երկու ձեռագրերը վկայում են ժ դարում տիրող բարգաւաճման մասին, որը և հնարավոր էր դարձնում գրանյութի օգտագործման այդպիսի շոայլություն:

Ստորև տալիս ենք խնդրո առարկա թերթերի բնագիրը. ըստ որում Ա բնագիրը համապատասխանում է 125, 136, 334 և 323 էջերին, իսկ Բ-ն՝ 293, 316, 308, 301 էջերին: Անընթեռնելի տառանիշերը, մասնավորապես նրանք, որոնք ծածկված են կազմով, շարված են փոքրատառ.

Բնագրային առումով, այստեղ գտնվում են մի քանի տարբերակներ. որոնք արդեն նշված են եղել Զոհրապյանի կողմից: Մնն. Ե, 22՝ ավելացվում է եւ եկեաց Ենով: նկատելի են մի շարք ազավաղումներ կամ գրության ձևերի պարզեցում. Մնն. Ե, 23 երկաբիւ. Ե, 26՝ ուք փոխանակ եւքն, իսկ եւ երկու՝ բացակայում է. Տիմ. Գ, 4 գուրեամբ փոխանակ գոհուրեամբ, արգելոյց ընթերցումը (Գ, 2) նոր է: Համբերատար և երկարատև աշխատանքի ընթացքում հնարավոր կլինի թերևս ընթերցել բազմաթիվ այլ թերթեր: Մենք բավարարվում ենք նրանով, որ ցույց ենք տալիս այստեղ մի հին ձեռագիր մատյանի հարստությունը. նշենք, որ նման մատյաններ ժ դարում այնքան էլ բազմաթիվ չեն եղել:

Ա բնագիր

ՀԱՐԻԻՐ ՎԱԹՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ  
 ԵՒ ՄԵՌԱԻ  
 ԵՒ ԵԿԵԱՅ ԵՆՈՎՔ ԱՄՍ ՀԱՐԻԻՐ  
 ՎԱԹՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԼԷ ԾԸ  
 ՆԱԻ ԶՄԱԹՈՒՍԱՂԱՅ ԵՒ  
 ՀԱՃՈՅՆ ԵՂԵԻ ԵՆՈՎՔ ԱՅ ԵՒ  
 ԵԿԵԱՅ ԵՆՈՎՔ ՅԵՏ ԾՆԱՆԵ  
 ԼՈՅ ՆՈՐԱ ԶՄԱԹՈՒՍԱՂԱՅ  
 ԱՄՍ ԵՐԿԱՐԻԻՐ ԵՒ ԾՆԱԼ ՈՒ  
 ՍՏԵՐՍ ԵՒ ԴՍՏԵՐՍ ԵՒ ԷՂԵՆ  
 ԱՄԵՆԱՅՆ ԱԻՈՒՐՔ ԵՆՈՎՔԱՅ  
 ԱՄՔ ԵՐԵՔԱՐԻԻՐ ՎԱԹՍՈՒՆ  
 ԵՒ ՀԻՆԳ ԵՒ ՀԱՃՈՅՆ ԳՆԱԿ  
 ԵՆՈՎՔ ԱՅ ԵՒ ՈԶ ՈՒՐԵՔ ԳՏԱ  
 ՆԵՐ ԶԻ ՓՈԽԵԱՅ ԶՆԱ ԱՅ  
 ԵՒ ԵԿԵԱՅ ՄԱԹՈՒՍԱՂԱՅ ՄՄՍ  
 ՀԱՐԻԻՐ ՈՒԹՍՈՒՆ ԵՒ ԵԻԹՆ  
 ԵՒ ԾՆԱԻ ԶՂԱՄԷՔ  
 ԵՒ ԵԿԵԱՅ ՄԱԹՈՒՍԱՂԱՅ ՅԵՄ  
 ՅՆԱՆԵԼՈՂ ՆՈՐԱ ՂՂԱՄԵՔ

ԱՄՍ ՈՒԹ ՀԱՐԻԻՐ ԵՒ ՈՒԹ  
 ԵՒ ԾՆԱԻ ՈՒՍՏԵՐՍ ԵՒ ԴՍՏԵՐՍ  
 ԵՒ ԵՂԵՆ ԱՄԵՆԱՅՆ ՄԱՈՒՐՔ  
 ՄԱԹՈՒՍԱՂԱՅ ԶՈՐՍ ԵԿԵԱՅ  
 ԱՄՔ ԻՆՆ ՀԱՐԻԻՐ ՎԱԹՍՈՒՆ  
 ԵՒ ԻՆՆ ԵՒ ՄԵՌԱԻ  
 ԵՒ ԵԿԵԱՅ ՂԱՄԵՔ ԱՄՍ ՀԱՐԻԻՐ  
 ՈՒԹՍՈՒՆ ԵՒ ՄԹ ԵՒ ԾԸ  
 ՆԱԻ ՈՐԳԻ ԵՒ ԱՆՈՒԱՆԵԱՅ ԶԱ  
 ՆՈՒՆ ՆՈՐԱ ՆՈՅ ԱՍԷ ՍԱ ՀԱՆ  
 ԳՈՒՅԵ ԶՄԵԳ Ի ԳՈՐԾՈՅ  
 ՄԵՐՈՅ ԵՒ ՏՐՏՄՈՒՔԼԱՆԿ  
 ԶԵՌԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ ԵՐԿՐԷ  
 ԶՈՐ ԱՆԵԾ ՏՐ ԱՅ ԵՒ ԵԿԵԱՅ  
 ՂԱՄԵՔ ՅԵՏ ԾՆԱՆԵԼՈՅ ՆՈ  
 ՐԱ ԶՆՈՅ ԱՄՍ ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ  
 ՎԱԹՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԵՒ ԾԸ  
 ՆԱԻ ՄԱԹԵՐԱ ԵՒ ԴՍՏԵՐՍ  
 ԵՒ ԵՂԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԱԻՈՒՐՔ ՂԱ  
 ՄԵՔԱՅ ԱՄՔ ԵԻԹՆ ՀԱՐԻԻՐ

Բ բնագիր

ՑԻՆ ՈՄԱՆՔ Ի  
 ՀԱԻԱՏՈՅՆ ԵՒ  
 ՀԱՅԵՍՑԻՆ ՅԱՅ  
 Ս ՄՈԼՈՐՈՒԹԵԱ  
 Ն ԵՒ Ի ՎԱՐԳԱ  
 ՊԵՏՈՒԹԻՐՆ  
 ԴԻԻԱՅ ԿԵՂՈՒՒՈ  
 ՐՈՒԹԵԱՄՔ Ս  
 ՏԱՐԱՆՔ ԽԱ  
 ՐԵԱԼՔ ԻՐԵԱՆՅ  
 ԽՂՃԻՐՆ ՄՏԱՅ  
 ՈՐ ԱՐԳԵԼՈՅՅ  
 ՅԱՄՈՒՍՆԱՆԱ  
 ԼՈՅ ԵՒ ՄԵԿՆԻ  
 ՅԵՆ Ի ԿԵՐԱԿՐՈՅ

ԶՈՐ ԱՅ ՀԱՍՏԱ  
 ՏԵԱՅ Ի ՎԱՅԵԼԵԼ  
 ՀԱԻԱՏԱՅԵԼՈՅ  
 ԵՒ ՈՅՔ ՀԱՍԵԱԼ Ի  
 ՅԵՆ Ի ՃՇՄԱՐ  
 ՏՈՒԹԵԱՆՆ ՎԵ  
 ՐԱՅ ԶԻ ԱՄԵ  
 ՆԱՅՆ ԱՐԱՐԱԾՔ  
 ԱՅ ԲԱՐԻ ԵՆ ԵՐ  
 ԶԻՔ ԻՆԶ ԽՈՏԱՆ  
 ՄԱՆԱԻԱՆԴ ՈՐ  
 ԳՈՒԹԵԱՄՔ ԸՆ  
 ԴՈՒՆԻՑԻՆ ԶԻ  
 ՍՐԲԻ ԲԱՆԻԻ ԱՅ  
 ԵՒ ԱՂԱԻԹԻԻՔ

МИШЕЛЬ ВАН ЭСБРОК

Брюссель, Белгия

АРМЯНСКИЙ ПАЛИМПСЕСТ ИЗ СОБРАНИЯ ЛЕНИНГРАДСКОЙ  
ПУБЛИЧНОЙ БИБЛИОТЕКИ им. М. Е. САЛТЫКОВА-ЩЕДРИНА  
(новая серия № 14)

## (Резюме)

Рукопись переписана в 1554 г. в Марасском монастыре епископом Стефаном. 244 пергаменных листа, а также пергаменные защитные листы этой рукописи являются палимпсестом. Старое письмо Н. Марр датирует X/XI в., однако по-видимому оно относится к IX/X в. Детальное изучение этого памятника показывает, что в нем в качестве писчего материала использованы листы двух рукописей, одна из которых содержала Ветхий Завет, другая Послания апостолов. В статье дана реконструкция двух страниц из этих рукописей (Бытие 5, 20—31 и Тимофей 4, 1—4).

MICHEL VAN ESBROECK

Bruxelles-Belgique

LE PALIMPSESTE ARMÉNIEN DE LA COLLECTION DE LA  
BIBLIOTHÈQUE PUBLIQUE SALTYKOV-CHÉDRINE DE  
LÉNINGRAD (NOUVELLE SÉRIE № 14)

## (R é s u m é)

Le manuscrit a été copié en 1554 au monastère Maras par l'évêque Stéphan. Les 244 pages en parchemin de ce manuscrit, de même que les feuilles de garde en parchemin, sont palimpsestes. L'écriture ancienne est datée par N. Marr des X<sup>e</sup>—XI<sup>e</sup> siècles, cependant elle remonte probablement au IX<sup>e</sup>—X<sup>e</sup> siècles. L'étude détaillée de ce monument montre qu'on y a utilisé comme matériau les feuillets de deux manuscrits, dont l'un contenait l'Ancien Testament et l'autre les Epîtres des apôtres. Dans l'article l'auteur donne la reconstitution de deux pages de ces manuscrits (Genèse, 5, 20—31 et Timothée, 4, 1—4).

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԵԹՈՒՄ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ՌՈՍԼԻՆՅԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԻ  
ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՍՈՒՆԵՆԵՐԸ

Ա

Մեր ձեռագրերը իրարից տարբերվում են նաև իրենց ճակատագրով. «...Իսկ զսա մերկացեալ ի հարսնագեղ վայելչութեանց եւ յոսկիակուռ պայծառութեան, կողոպտեալ յանարինաց եւ արհամարհեալ տեսողաց, թաւալեալ աճիւն մոխրակուտաց եւ կար աջ կարկառման ձեռին ընթերցողաց, գրեթէ լոկեացն լայր, ձայն տալով ստացողին եւ ոչ ուրեք դտաներ...»<sup>1</sup>: Փրկության այս հիշատակարանը պատկանել է սելջուկյան արշավանքների ժամանակ թալանված ու դեն շարտված մագաղաթյա, երկաթագիր մի մատյանի, որից մեզ է հասել հիշատակարանի սույն պատառիկը, որպես պահպանակ XV դարի մի ձեռագրի:

Հեթում Ա թագավորի Ավետարանը, շնայած այլազգիների ձեռքից փրկվել է 1900 թ. և Մատենադարան է մուծվել Աղթամարից բերված ձեռագրերի հետ Մեծ եղեռնի տարում, իր եղեռնը ապրել է դրանից ուղիղ հինգ հարյուր տարի առաջ՝ 1400 թ., Լենկ-Քեմուրի երրորդ աշխարհավեր արշավանքի ժամանակ: Եվ նա ոչ միայն «մերկացված» և «կողոպտված» է եղել օտարազգի հրոսակներից, այլ խոշտանգվել է բարբարոսաբար, թրատվել ու կորատվել է թերթ առ թերթ, նկար առ նկար: Երբ վասպուրականում Հովհաննես քահանան տեսել է «զայսպիսի ահարկու և սոսկալի Աւետարանս այսպէս փեռակտած անկեալ ի ձեռս այլազգեաց, որպէս զգառն ի գայլոյ ձեռն մատնեալ»<sup>2</sup>, — ավելի քան շորս հարյուր թերթանոց փառահեղ ձեռագրից միայն հարյուր տասնյոթ թերթ էր մնացել, որից ութսունմեկը՝ կորատված ու կիսապատառ, իսկ երեսունվեցը՝ թեև ամբողջական, բայց՝ դաշունահար:

Մագաղաթյա, երկաթագիր, հարուստ և շքեղ նկարազարդված ձեռագիրը իր խոշտանգված թերթերի էջերում պահել էր լուսանցադարդեր, զարդագրեր, երկու լուսանցանկար և հիշատակարանի սկզբնավորութունը, որից իմացվում էր, որ այն գրվել է 1266 թ. Հռոմկլայում, թագավորի հրամանով և ծախսով: Տարիներ անց ձեռագրի փրկող Հովհաննեսը անմիջապես ձեռնամուխ է լինում Ավետարանի նորոգմանը՝ «գի թագաւորական յիշատակս, որ աստ գրեալ կա, ոչ խափանեսցի»<sup>3</sup>: Իսկ գրիչի և նկարչի մասին պետք է իմացվեր նրա օտեղծումից շուրջ յոթ հարյուր տարի հետո և ձեռագրից հետո, հայ ձեռագրական

1 Մատենադարան, ձեռ. № 10147, պահպանակ:

2 Մատենադարան, ձեռ. № 5458, էջ 100ա:

3 Մատենադարան, ձեռ. № 5458, էջ 100ա:

մշակույթի մեծ երախտավոր Գարեգին Հովսեփյանի շանքերով: Անվանի գիտնականը, ուսումնասիրելով աշխարհասփյուռ հայերեն մանրանկարչական ձեռագրերի մեծ մասը, հանգեց այն եզրակացության, որ Հեթում Ա թագավորի Ավետարանը, որի մնացորդները գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում 5458 համարը, գրված և նկարազարդված է եղել հռչակավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ձեռքով: «Ռուբինյանց մեր թագավորներն ու թագուհիները, իշխաններն ու իշխանուհիները, գրեթե բոլորն էլ իրենց հիշատակներն ունեն գրչության և մանրանկարչության մեջ... բայց շունենք նման հիշատակներ Հեթում Ա-ի կողմից: ...Սպասելի էր, որ Հեթում Ա, նաև իր բարեպաշտ թագուհին Զապել, իրենց հիշատակն ունենային այդ մարզում:

...Թիվ 5458 Ավետարանի մեջ պահված են Հեթում Ա-ի գրել տված մի ձեռագրի բավական մնացորդներ, որոնցմով կարող ենք գաղափար կազմել նրա գրչության և մանրանկարչության մասին, նաև որոշել գրիչն ու նկարիչը»<sup>4</sup>: Այս Թորոս Ռոսլինի մի քանի ձեռագրերի և Մատենադարանի № 5458 ձեռագրերի մագաղաթյա թերթերի մանրանկարչության և գրչության, ինչպես նաև հիշատակարանների համագրությամբ և քննությամբ, Գ. Հովսեփյանը ցույց է տալիս, որ Մատենադարանի № 5458 ձեռագրի 38 (պետք է լինի 39) մագաղաթյա թերթերը Հեթում Ա թագավորի համար գրված Ավետարանի մնացորդներն են և որ նրանց գրիչն ու նկարիչը Թորոս Ռոսլինն է<sup>5</sup>: Հայ մանրանկարչության խոշոր գիտակ Սիրարփի Տեր-Ներսեսյանը Վաշինգտոնի Ֆրեերի<sup>6</sup> և Բալթիմորի Վալթերսի<sup>7</sup> հավաքածուներին (որոնց մեջ համապատասխանաբար №№ 3218 և 539 ձեռագրերը Թորոս Ռոսլինին են) նվիրված աշխատություններում, խոսում է նաև Մատենադարանի № 5458 ձեռագրի մագաղաթյա թերթերի մասին՝ որպես Թորոս Ռոսլինի գրչի և վրձնի գործ, և գտնում է, որ Ֆրեերի պատկերասրահի Ավետարանը (հիշատակարան չունի), որը պատկանել է Վասակ արքաներին, շափերով, գրելաձևով, նկարների դասավորությամբ, լուսանցազարդերով և այլն, ավելի նման է Հեթում Ա-ի Ավետարանին և ժամանակով մոտ է նրան<sup>8</sup>:

Մ. Տեր-Մովսիսյանը<sup>9</sup>, Գ. Հովսեփյանը և Ս. Տեր-Ներսեսյանը, ինչպես նաև Լ. Ազարյանը<sup>10</sup>, Լ. Խաչիկյանը<sup>11</sup> և Ա. Գևորգյանը<sup>12</sup> իրենց աշխատություններում և հոդվածներում ավելի ճանաչելի դարձրին Թորոս Ռոսլինին, և նա այլևս դադարեց անհարկի կերպով այս կամ այն նշանավոր նկարազարդ ձեռագրի հեղինակ համարվելուց: Այս բանին օգնեցին նաև վերջին տարիներին

<sup>4</sup> Գ. Հովսեփյան, Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները, «Պայքար», 1949, էջ 7—8:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 8—11:

<sup>6</sup> *Starpie Der Nersessian*, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Վաշինգտոն, 1963 թ.:

<sup>7</sup> *Նույնի* Armenians Manuscripts in the Walters Art Gallerie. Բալթիմոր, 1973 թ.:

<sup>8</sup> Սիրարփի Տեր-Ներսեսյան, նշվ. աշխ., էջ 31, 42—43:

<sup>9</sup> Մ. Տեր-Մովսիսյան, Հայ մանրանկարներ, «Ազգագրական հանդես», 1910, № 2:

<sup>10</sup> Լ. Ազարյան, Կիլիկիայի մանրանկարչությունը XII—XIII դդ., Երևան, 1964 թ.:

<sup>11</sup> Լ. Խաչիկյան, Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը, «Գարուն», Երևան, 1976, № 4, էջ 56—62:

<sup>12</sup> Ա. Գևորգյան, Լեոն III թագավորի Ավետարանը, «Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 143—156:

Մատենադարանին նվիրաբերված Թորոս Ռոստիկի 1256 և 1268 թվականներին գրած և նկարագրագրած ձեռագրերը:

Պրպտումների ընթացքում մեզ հաջողվեց հայտնաբերել Հեթում Ա թագավորի ոստիկան Ավետարանի հիշատակարանից մասունքներ, որոնց հրատարակումը կրկին առիթ տվեց անդրադառնալու Մատենադարանի № 5458 ձեռագրին: Բանն այն է, որ քննողների ուշադրությունից վրիպել է ձեռագրի նորոգման հիշատակարանը, որի հետևանքով սույն ձեռագիրը համարվել է ոչ թե Հեթում Ա-ի Ավետարան, որը նորոգվել է հետագայում, այլ որպես հետագա դարերում գրված ձեռագիր, որի մեջ օգտագործվել են Հեթում Ա թագավորի Ավետարանի մնացորդները: «Հեթումի Ավետարանի մնացորդները, բոլորն էլ Հովհաննու մասեր, — գրում է Գ. Հովսեփյանը, — օգտագործված են համապատասխան տեղերում, ընդամենը 38 թերթ<sup>13</sup>, բայց ոչ իրար շարունակություն... օգտագործող գրչի անձն ու ժամանակը անհայտ է, կարող է ժԵ—ժՁ դարում լինել... Մարկոսի կեսից սկսած՝ մանրանկարչական գլխագրերը և լուսանցքի զարդերը կպցված են համապատասխան տեղերում Հեթումի Ավետարանից առնելով»<sup>14</sup>:

Դեռևս 1928 թ., նույն կարծիքն է հայտնել Ե. Նիկոլսկայան Հովհաննես Խիզանցուն նվիրված ուսումնասիրությունից մեջ<sup>15</sup>: Այդ կարծիքին է նաև Ի. Գրամփյանը<sup>16</sup>:

Հիշյալ հանգամանքի անտեսումը անհասկանալի է դարձնում ձեռագրի այժմյան վիճակը (ինչո՞ւ են կտրատել լուսանցազարդերը և փակցրել թղթի վրա) և կոծկում նրա պատմությունն ու ճակատագիրը:

## Բ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5458 ձեռագիրն ունի 23×32,3 սմ մեծություն 312 մագաղաթյա և թղթյա թերթ, որոնց մեջ են մտնում նաև սկրզբից և վերջից երկու պահպանակները: Մագաղաթյա 39 թերթերը 19 տողանոց երկսյուն գրություն ունեն, 24×6,5 սմ սյունակներով:

Ընթերցվածները սկսվում են զարդագրերով և լուսանցազարդերով կամ լուսանցանկարներով<sup>17</sup>, իսկ առաջին երեք տողերը սակեզոծ են: Ոսկեզոծ են նաև բոլոր գլխագրերը, պատվագրված տերունական բառերը, «Հայր» բառը,

13. Թերթերից մեկը՝ սկզբում, մյուսը՝ վերջում գրված են, որպես ձեռագրի պահպանակներ, ընդ որում Մարկոսի Ավետարանից պահպանված միակ թերթը վերջին պահպանակն է, որը, հավանաբար, անտեսել է Գ. Հովսեփյանը:

14. Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 11:


15. E. Никольская, Рукописи мастера Ованеса из Гизана, Խարկով, 1928, էջ 43:

16. И. Драмшан, Об одном киликийском Евангелии круга Тороса Рослина, Երևան, 1978, Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումի նյութերից:

17. Երեսուներեք թերթերի վրա նկարված են բառե լուսանցազարդ և զարդագիր միասին՝ ընթերցվածների սկզբում, մի զարդագիր և մի սյունամիջյան զարդ առանձին: Ահա այդ թերթերի տեղը ձեռագրում. թերթ 1 (1), 249—254 (6), 256—258 (3), 260—262 (3), 277 (1), 279—282 (4), 284 (1), 286—296 (22), 298—301 (4), 306 (1), 308—310 (3), 312 (1), ընդամենը 39 թերթ: 1, 250 և 253 թերթերը մասամբ լրացված (կարկատված) են թղթով: Ահա լուսանցազարդերը և զարդագրերը միասին. թերթ 249, 250, 254, 257, 258, 260, 261, 277ա, բ, 279, 220ա, բ, 282ա, բ, 284, 287, 288, 299, 306, 309: Մի զարդագիր գտնվում է 289 թերթի և մի սյունամիջյան 262 թերթի վրա:




համարարբանների թվերը, լուսանցքներում նշված որոշ բաների թարգմանությունները և առաջին տողի զլխագրին կից զարդագծերը: Մագաղաթյա թեր-



Թերից Երեսունութը Հովհաննու Ավետարանի տարբեր մասերից են, որն ափարտվում է 310ա էջում: Թերթի մյուս Երեսուն ձեռագրի թերի հիշատակարանն է:


Չեռագրի թղթյա մասում է գտնվում նորոգման հիշատակարանը.

«Քրիստոս Աստուած քո սուրբ աւետարանչաց բարեխաւսութեամբս ողորմեա Յովանէս քահանային և ծնաւդաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն՝



կենդանեացն և հանգուցելոցն, որ յոյժ եռափափագ սրտիւ ետ նորոգել զսուրբ Աւետարանս, վասն զի ոչ ծուծեաց տեսանել զայսպիսի ահարկու և սոսկալի Աւետարանս այսպէս փեռակտած անկեալ ի ձեռս այլազգեաց, որպէս զգառն

ի գալլոյ ձեռն մատնեալ, ետ վերստին նորոգել զսա, զի թագաւորական յիշա-  
տակս որ սստ գրեալ կա, ոչ խափանեցի:



...զԱստուածատուր քահանայն և զծնողսն իւր յիշեցէր ի Քրիստոս, որ  
զայն դատարն զինչ ոսկովն է, ձրի շնորհեաց: Եւ դսուտանուն գրիչ, որ անուամբ  
չեմ յիշման արժանի, և զծնալոսն իմ և զամենայն արեան մերձաւորս աղաչեմ

ձեզ յիշելի ի Տէր, և Աստուած ողորմի ասել, և Աստուած զձեզ տացի զիւր առատ ողորմութիւնն»<sup>18</sup>:

Ավետարանը նորոգել է ավելի Հովհաննես քահանան, իսկ Աստվածատուր քահանան նրան օգնել է: Չեռագրի սկզբից 116 (2—117), այնուհետև տարբեր տեղերում 87 դեղնավուն և հաստ թերթ է ավելացված<sup>19</sup>: Պահպանելով մագաղաթյա թերթերի սյունակների շափն ու տողերի քանակը, զրիչը ավելացված թերթերը գրել է խոշոր բոլորգրով, գլխադրերը՝ կարմիր երկաթագրով, իսկ ընթերցվածներն սկսել է միագույն զարդագրերով և լուսանցազարդերով: Նրկարել է շորս ավետարանիչների նկարները<sup>20</sup> և ավետարանառաջների կիսախորանները՝ գլխազարդով, զարդագրերով և լուսանցազարդերով: Այս ամենը կատարել է Հովհաննես Խիզանցին, 1401 թվականին:

Սակայն նորոգողների կատարածը միայն այն չի եղել ինչ այժմ տեսնում ենք հականէ: Հաջորդ նորոգումը, որ կատարվել է XV դարի վերջին, «սրբագրել» է առաջինների աշխատանքը:

Չեռագրում մագաղաթյա և առաջին նորոգման թերթերից բացի գտնվում են նաև սպիտակ, ավելի ամուր 77 թղթյա թերթեր, գրված բոլորգրով<sup>21</sup>: Տողերը անհավասար են, ջանացել են արտադրվող նյութը տեղավորել նույն թերթերի վրա<sup>22</sup>: Ընթերցվածների սկզբում սոսնձել են բուն մագաղաթյա ձեռագրի թերթերից կտրած լուսանցազարդերը և զարդագրերը, իսկ երբ նրանք միասին շեն պահպանվել, իրար մոտ են բերվել տարբեր տեղերից մի զարդ և մի զարդագիր:

Առաջին նորոգողները հռչակված ձեռագիրը նորոգել են ամբողջությամբ, այսինքն ավելացրել են պակաս թերթերը, և լրացրել կիսատ թերթերը<sup>23</sup>: Իսկ երկրորդ նորոգողները ձեռագիրը արտաքնասկս ավելի կոկ տեսնելու ցանկությամբ, ձեռագրից անջատել են թղթով լրացված մագաղաթյա թերթերը և նրանց փոխարեն ավելացրել նոր թուղթ համապատասխան բնագրով: Անջատված թերթերից կտրել-հանել են միայն ամբողջական զարդագրերը, լուսանցազարդերը, սյունամիջյան զարդերն ու նկարները և ամրացրել նոր մուծված թերթերի համապատասխան տեղերում<sup>24</sup>:

18 Մատենադարան, ձեռ. № 5458, էջ 106ա:

19 Չեռագրում այդ թերթերն ունեն այսպիսի տեղադրություն. թերթ 2—117 (116, 1 թերթը մագաղաթյա պահպանակն է, որ համարակալվել է), 141—176 (36), 196—217 (22), 236—243 (8), 302—304 (3) և ինը մեկական թերթ (255, 259, 269, 270, 276, 278, 283, 297, 307):

20 Մաթևոս 2բ, Մարկոս՝ 100բ, Դավիթ՝ 155բ, Հովհաննես՝ 242բ:

21 Ահա նրանց տեղադրությունը. թերթ 118—127 (9), 130—140 (11), 177—195 (19), 218—235 (18), 244—248 (5), 263—269 (6), 271—275 (5) և 4 մեկական թերթ (144, 201, 285, 305), ընդամենը՝ 77 թերթ:

22 էջ 201ա (22՝ ա սյունակ, 23՝ բ սյունակ) 201բ՝ 28 տող:

23 Այդպիսի երեք նմուշ պահպանվել է ձեռագրում. 253-րդ մագաղաթի թերթի ամբողջ մի սյունակ լրացված է թղթով և բնագիրը գրված, 250-ի՝ մի սյունակի կեսը, 1-ի ստորին լուսանցը՝ երկու տողով: Ուրեմն առաջին նորոգողները աշխատել են փրկել թագավորական հիշատակը, ջանալով պահպանել նրանից փրկված ամեն մի թերթ ու պատասիկ, գիր ու զարդ: Բընականարար, այդ յոթանասունյոթ սուլիմյան թերթերի վրա եղել են և կտրված զարդ ու զարդագիր և աղհատված լուսանցանկար, որոնք, սակայն, շեն պահպանել երկրորդ նորոգողները:

24 Այդ ժամանակ թղթյա թերթերին ամրացվել են սուլիմյան զարդերից 53 լուսանցազարդ (որից 4-ը հետագայում պոկել են), 63 զարդագիր, 5 սյունամիջյան զարդ, որոնք փակցվել են զարդագրերին կից՝ որպես լուսանցազարդ, և սյունակի մեջ արված մի նկար: Ահա նրանց տեղադրությունը. ա. լուսանցազարդ և զարդագիր, միասին. թերթ 118ա, 120բ, 121ա, 122ա, 124բ,

Ամենայն հավանականությամբ, երկրորդ նորոգման ժամանակ ձեռագրից անջատվել են նաև բուն հիշատակարանի բեկորները, և օգտագործվել որպես պահպանակներ, որոնք հետագայում անջատվել և տարբեր ճանապարհներով հասել են Մատենադարան: Սույն թերթերի որպես պահպանակ օգտագործելու պարագան ենթադրել է տալիս, որ երկրորդ նորոգման ժամանակ անջատված մագաղաթյա թերթերից շատերը, հնարավոր է, որ նույնպես օգտագործվել են այդ նպատակով: Ուրեմն չի բացառված Հեթում Ա թագավորի Ավետարանի նոր մասունքների հայտնաբերումը:

## Գ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 1454 պատառիկը մագաղաթյա ձեռագրի հիշատակարանի մաս է, ունի 21,5×13 սմ և 21,8×15,8 սմ մեծության երկու թերթիկներ, որոնք ժամանակին առանձին-առանձին երկատվել են և դարձել փոքր չափսի ձեռագրի սկզբի և վերջի պահպանակներ: Հետագայում անջատվել են ձեռագրից: Մատենադարանի պատառիկների հավաքածու է մուծվել որպես Ճաշոցի շորս թերթանոց պատառիկ: Թերթիկներից մեկի վրա կա այսպիսի մի գրություն. «Այս թերթերն ետ ինձ Մանուկ աղա էնկեջեան, ի Բաղէշ, 1881, յուլ[իս] 17»: Գրությունից երևում է, որ գրողը Ղևոնդ Փիրղալիմյանն է: Հիրավի. 1881 թ. հուլիսի 1-ին Փիրղալիմյանը Բաղեշի Ամրդոլու վանքում էր գտնվում և արտագրում էր վանքի ձեռագրերի հիշատակարանները<sup>25</sup>:

Թե ինչպես է այն բնկնում էջմիածնի Մատենադարան, հայտնի չէ: 1898 թ. «Նումայում» «Պատառիկ» խորագրով տպագրվում է նրա բովանդակությունը, այսպիսի ծանոթագրությամբ. «Մատենադարան, մագ. 4 թերթ, առաջին և վերջին թերթերի մասերը պատուված, փոքր երկաթագիր»: Պատառիկը հրատարակված է ոչ ճիշտ հաջորդականությամբ և որոշ բառերի ոչ ճիշտ վերծանությամբ<sup>26</sup>:


Ուրեմն Մատենադարանի № 1454 շորս թերթանոց պատառիկը՝ երկու թերթ է, չուրաբանչյուրը՝ երկսյուն գրությամբ, և տասական տողերով: Պատա-

125ա, 130ա, 130բ, 132ա, 133ա, 134բ, 135բ, 138բ, 140ա, 177բ, 178ա, 181ա, 182ա, 183բ, 185ա, 186բ, 189ա, 190բ, 192ա, 193բ, 196բ, 219ա, 222ա, 223բ, 227ա, 228ա, 229ա, 229բ, 231բ, 235ա, 244ա, 244բ, 245ա, 245բ, 247ա, 247բ, 248ա, 263բ, 264ա, 265ա, 267ա, 267բ, 272ա, 273բ, 274բ: Հետագայում պոկոտված են 123ա, 162բ, 225ա, 266բ, էջերի լուսանցազարդերը: Սյունամիջյան զարդերը օգտագործվել են որպես լուսանցազարդ 177ա, 137ա, 137բ, 193ա, 265բ էջերում: Միայն զարդագիր ունեն 119բ, 226բ, 227բ, 267բ էջերը, միայն լուսանցազարդ՝ 178ա էջը և նկար՝ 235բ էջը:

<sup>25</sup> Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 85: Մատենադարանի № 5317 ձեռագրի 88ա էջում, սովորական մատիտով, գրված է հետևյալ հիշատակագրությունը. «Յամի Տեանն 1881, ի յունիս 5, յաւուր հինգշաբթի, մինչ զնայի բնդ արժանապատիւ Արիստակէս վարդապետի ի Բաղէշ, հանդիպեցաք ի Սպիտակ անուն վանս, որ է շինեալ յանուն Սրբուհոյ Աստուածածնի ի զաւտի Ռշտունեաց: Արժանապատիւ վանահայրն ուխտին հիւրասէր տէր Մխիթար վարդապետ Պատակենց զմեզ հիւրասիրեալ պահեաց աստ զայն գէշեր: Արդ մինչ բնթեանուք, յիշեցէք զնուստ Ղևոնդ վարդապետ»:


<sup>26</sup> «Նումայում», 1898 թ., դիրք Բ. էջ 247—248: Հրատարակվում է ոչ թե պատառիկի էջի սկզբից, այլ երեք տող հետո, և ոչ թե թերթի ա էջից, այլ՝ բ: Փոփանակ «հասութեան», տպված է «հանութեան», և այլն:

որինները երկու տարրեր թերթերի մասեր են, առաջինից պակասում է ստորին, երկրորդից՝ վերին կեսը, ուստի նրանք անմիջապես իրար շարունակություն



են կազմում: Սյունահյների լայնությունը 7,3 սմ է, տողագծերի հեռավորությունը միմյանցից 1,3 սմ, իսկ տառերի բարձրությունը՝ 0,4 սմ: Գիրը՝ գրչագիր է, դեպի աջ շատ աննշան թերվածությամբ: Օգտագործված է կետ և ստո-

բակետ՝ միասին-տողի ներքևում, զույգ գծիկ՝ տողի վերջում, մի կետ տողի վերևում, նաև վերջակետ և ստորակետ:



Մագաղաթը նուրբ է, բայց քանի որ օգտագործվել է որպես պահպանակ՝ կոշտացել է, տեղ-տեղ սևացել: Առաջին թիրթի վերին մասը պատռված է:

Պատասիկն այսպես մանրամասն նկարագրեցինք, որովհետև բոլոր տրվյալները հար և նման են վերը նշված № 5458 ձեռագրի հիշատակարանի տրվ-

յալներին. նույն գրչությունն ու կետագրությունը, սյունակների, տողերի ու տառերի նույն շափսերը, բովանդակության նույնությունը: Այնտեղ, ուր ավարտվում է Հեթում Առաջինի Ավետարանի հիշատակարանի թերթը և նախադասութունը թերի է մնում, պատահիկը այդտեղից լրացնում և շարունակում է միտքը: Այսպես (ձեռագրում), «Հրամանաւ եւ ծախիւք աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին (պատահիկում) Հայոց Հեթմոյ, որ եւ ըստ մեծ յուսոյն իւրոյ, զոր ունէր առ Աստուած, յաւել եւ զայն գրասէր եւս լինել եւ սիրող կարգաց եւ կրանից եկեղեցւոյ եւ նորին խորհրդոց...» և այլն:

Պատահիկում կա նաև ժամանակը հավաստող երկու իրողություն. «Եւ որդին սուրբ արքային զծիրանածին պարոնն Լեոն, որոյ մնանք Աստուծով փրկութեան նորա, եւ զմեծազգի կենակիցն իւր զսրբասէրն Կերան, եւ զդեռաբոյս մանուկն սոցա Հեթում եւ զԲՈՐԲ ԻՐ»: Ընդգծված առաջին նախադասությամբ ակնարկվում է Լեոնի գերությունը, որը տեղի է ունեցել 1266 թվականին<sup>27</sup>: Երկրորդ նախադասությանից երևում է, որ մանուկ Հեթումը այդ ժամանակ մեկից ավելի բույր ուներ: Հեթումի մեծ բույրը՝ Լեոնի և Կեռանի առաջնեկը, ծնվել էր 1262 թվականին, Հեթումը՝ 1265 թ., 1266 թ. ծնվել էր մյուս բույրը՝ Յիմին, իսկ 1269-ին՝ Սպիլը<sup>28</sup>: Այս վերջինս չէր կարող նկատի առնվել, քանի որ 1268 թ. արդեն Լեոնը գերությունից ազատվել էր և ձեռագիրը գրվել էր մինչև ազատվելը: Պատահիկը գրվել է, ուրեմն, 1266—1268 թվականներին: Բայց հայտնի է, որ Թորոս Ռոսլինը «Հրամանաւ և ծախիւք երջանիկ հայրապետին Հայոց տեառն Կոստանդեա» 1267 թ. սկսում և 1268 թ. ավարտում է մի Ավետարան և այդ թվականին «մեծ Լեոն, ժառանգ Հայոց զերծեալ եղև խնամաբն Աստուծոյ երկաթի հալոցացն ի ծառայութենէ և ի ձեռաց արքային Եգիպտացւոց, եւ բազում պատուով և ընծայիւք եկն յաշխարհն և ի հայրենի աթոռ իւր... ի սոյն աւուրս եղև զրաւ գրչութեան սորա, զանազան նիւթաւք և երանգերանգ գունաւք»<sup>29</sup>:

Այսպիսով, 1268 թ. Լեոնի ազատման թվականին Ռոսլինը ավարտում է սույն Ավետարանը, որ սկսել էր 1267 թ., իսկ 1266 թ. երբ ավարտում էր Հեթում Ա թագավորի Ավետարանը, գերել էին Լեոն արքայորդուն: Ուրեմն պատահիկը, ուր ակնարկվում է Լեոնի գերությունը, Հեթումի Ավետարանի մասն է, գրված 1266 թվականին:

Որ այդ այդպես է, ավելի լավ համոզում է ձեռագրի հիշատակարանի և պատահիկի միասին ընթերցումը.

### Ձեռագիր № 5458

էջ 310բ  
I սյունակ  
Փառք եւ երկրպագութիւն, պատիւ եւ զոհութիւն համագր  
Սուրբ Երուզղութեանն եւ միոյ աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ  
եւ Սուրբ Հոգւոյն:

Շնորհիւն Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ  
ելեալ աաւրտեցաւ մատեանս այս աստուածախաւս, աստուածու-  
նակ, երկրպագելի եւ պաշտելի սուրբ Աւետարանս, յամի երն-

27 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հատոր Ա, կազմեց Վ. Ա. Հակոբյան-Երևան, 1951, էջ 83:

28 Նույն տեղում, էջ 83:

29 Մատենադարան, ձեռ. № 10675, էջ 330ա, 330բ:



- հարիւր եւ հինգետասներորդի (1266) քառաբերութեանս Հայկազեան տումարի, յաստուածատան դղեակս եւ յաշխարհամուտ արոսս Հոռմկլա, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին եւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Կոստանդեայ կաթողիկոսի, որ եւ զսրբազան վարուցն իւրոց անհամեմատ ունէր զմաքրութիւն, հրամանաւ եւ ծախիւք աստուածաւէր եւ բարեպաշտ քազաւորին Հայոց Հեթմոյ, որ եւ ըստ մեծ յուսոյն իւրոյ զոր ունէր առ Աստուած, յաւել եւ զայն գրասէր եւս լինել, եւ սիրող կարգաց եւ կրանից եկեղեցոյ եւ նորին խորհրդոց, տանից տերունականաց եւ սրբոց վկայից:
- II ս.* Որ եւ <sup>30</sup> [յ]առաւած [իւ]րոպէս <sup>31</sup> որութիւն յամենայնի: Ուստի եւ իմ անարժանութիւն, քեպէտ եւ ըստ նորին արժանեաց եւ մեծի երախտեացն, զոր ունէր առ իս, ոչ էր բաւական հատուցանել, սակայն ըստ հասութեան <sup>32</sup> [պննազար]դեալ ծաղկ [երանգ բազմա] <sup>33</sup> կերպ պատ [կ]երագրութեամբ, որպէս զի ընդ լսելոյ զուր բանին կենաց, տեսցեն իբրեւ աշաւ իմն զտիպ նախահարցն եւ զփրկագործ տնարէնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ վասն <sup>34</sup> առաւել ի բազում եկեղեցիսն իւր, յորս ինքն կանգնեաց:
- Վասն զի յատուս սորա եղեւ խաղաղութիւն մեծ աշխարհիս Կիլիկեցոց եւ հանգիստ քրիստոնէից, մինչ զի ի բազում աշխարհաց ի սրոյ եւ ի գերութենէ <sup>35</sup>:
- 2ա, I ս.* Եւ <sup>36</sup> եւս որպէս յիմարեալ ընդ կերողս եւ ընդ արբեցողս ընթացայ անառակութեամբ, եւ զի՞նչ ունիցիմ պատասխանի ի գալստեան Տեառն իմոյ, վասն որոյ զխոստովանութիւն իմ գրով արձանացուցանեմ եւ աղաչեմ զժառանգատուս <sup>37</sup> սրտի նորա, ասելով. երանի ում քողութիւն եղեւ մեղաց եւ որ զկնի պատշանի: Եւ յիշեցէք աղաւթիւք ի Տէր զարժանատուսն ամենայն բարեաց յիշատակի յաստուածաւէր քազաւորն Հեթում, եւ զբարեպաշտ քազունին նորա Զապիլ, զուստը Լեւոնի արքայի <sup>38</sup> եւ որդի սուրբ արքային զԹիրանածին պարոնն Լեւոն, որոյ մեանք Աստուծով փրկութեան նորա, եւ զմեծագգի կենակիցն իւր

<sup>30</sup> Այստեղ ավարտվում է առաջին սյունակը, թերթի ստորին մասը կտրված լինելու պատճառով: Շարունակություն մեջ թվարկվելու էին Հեթում թագավորի բազմամասնությունները, որ և ավարտվում է երկրորդ սյունակի սկզբում:

<sup>31</sup> Թերթի վերին ծայրը պատռված է. երկու տող թերթ է կարդացվում:

<sup>32</sup> Ստորին մասը կտրված է, ուր Ռոսլինը, ինչպես երևում է հաջորդ էջի սկզբից, նշած պետք է լինի, թե ինչու և ինչպես է զարդարելու ձեռագիրը:

<sup>33</sup> Թերթի վերին մասը պատռված է, լրացնում ենք ենթադրարար:

<sup>34</sup> Պակասող սյունակը Հեթումի մասին է, ինչպես երևում է շարունակությունից:

<sup>35</sup> Այստեղ ավարտվում է պատասխանի առաջին թերթը:

<sup>36</sup> Ի տարբերություն առաջին թերթի, որի երկրորդ կեսն էր պակասում, երկրորդ թերթի վերին մասն է կտրված, պահպանվել է երկրորդ կեսը:

<sup>37</sup> Շարունակությունը հաջորդ սյունակի սկիզբն է, որը կտրված է:

<sup>38</sup> Բացակա մասում Լեւոն Բ թագավորի բարեմասնություններն էին թվարկվելու:

զորքաւէր Կերան, եւ զդեռարոյս մանուկ սոցա Հեթում, եւ զբոբի իւր:

II ս. Այլ զբարեպաշտունիքի եւ զաւրիորդի ///<sup>39</sup> [զԿոստան]դին, աստուածապարգեւ, աստուածապատիւ զաւակաւ իւրաւ, ուստեբաւ եւ դստեբաւ եւ ամենայն ծննդաւ իւրեանց, որոց նրնջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն պարգեւեցէ Քրիստոս Աստուած, եւ զկենդանիսն անխոռով խաղա[ղութիւն]///»:

Ձեռագիրը և իր հիշատակարանը երկուսն էլ բզկտված, հինգհարյուրամյա անջատումից հետո, վերստին միանում են իրար, ընդ որում նրանք անջատանջատ միշտ գտնվել են Վասպուրականում, իսկ վերջին վաթսունամյակում՝ Մատենադարանի ձեռագրատանը՝ նույն հարկի տակ:

Սույն պատճառիկները<sup>40</sup> ոչ միայն մասամբ լրացնում են հիշատակարանը, այլև բացահայտում են ձեռագրի ստացող Հեթում թագավորի և ծաղկող Քորոս Ռուսիների հետ առնչվող մի շարք կարևոր իրողություններ:

Դ

Հաստատելով, որ Հոռմկլայում 1266 թ. Հեթում Ա թագավորի համար գրված Մատենադարանի № 5458 ձեռագրի գրիչն ու նկարիչը Քորոս Ռուսիներն է, Գ. Հովսեփյանը գրում է. «...միայն որոշել շինք կարող, թե ինչ առթիվ էր գրված Ավետարանը: Զապել թագուհին շատ վաղուց էր մեռած, 1252 թ., իսկ 1266 թ., «մերձ յաշնան եղանակն» սկսած, սգո տարի էր Հեթումի համար», և ակնարկում է մամլուքների արշավանքը դեպի Կիլիկիա, Երկրի ավարն ու ավերը, և որդիներից մեկի կորուստն ու մյուսի գերությունը<sup>41</sup>:

Սակայն 1266 թվականը հիշարժան էր: Այդ տարի լրանում էր Հեթում Ա-ի ամուսնության, գահակալության և, հետևաբար, Կիլիկիայի Հեթումյան հարստության հիմնադրման քառասուն տարին: 1226 թ. հունիսի 14-ին Կիլիկիայի թագավորության թագապահ Կոստանդինը իր տասնմեկամյա որդի Հեթումին ամուսնացնում է Լևոն Բ թագավորի տասնամյա դստեր Զապելի հետ և հռչակում Կիլիկիայի Հայոց թագավոր: Սկսվում է Հեթումյանների հարստության տիրապետության շրջանը: Եվ ահա, հիանալի թագավորը, այս, իսկապես հիշարժան, քառասնամյա հորելյանն էր պատվում այդ շքեղ Ավետարանով:

Հեթում Առաջինը պատվերը հանձնարարել էր ժամանակի ամենահռչակ-

<sup>39</sup> Խոսվել է Հեթումի հարազատների և հոր՝ Կոստանդինի մասին, որի անունից միայն երեք տառ է պահպանվել:

<sup>40</sup> Պատճառիկները պատճառառվել են ձեռագրի հետ միասին, և ամենայն հավանականությամբ պահպանվել առաջին նորոգողների կողմից: Երկրորդ նորոգման ժամանակ, երբ միայն ամբողջական թերթերն էին պահում և լրացված թերթերը անջատում ու նորերն էին գրում, երբ նույնիսկ ամբողջական մագաղաթյա թերթը հանվում էր իր տեղից՝ ամբացվում որպես պահպանակ, իսկ նրա փոխարեն նորն էր գրվում, կիսատ-պոստ հիշատակարանը չէին պահ. մանավանդ որ գտնվում էին ձեռագրի վերջում (Ավետարանի լրացված թերթերը լրացվում էին նաև բնագրով, հիշատակարանը՝ չէր լրացվում): Այդ թերթերը, ինչպես նաև առաջին նորոգման ժամանակ լրացված մագաղաթյա շատ թերթեր կարող էին լինել պահպանակներ, կամ լվացվելով՝ կրկնագրվել: Պահպանակ գտնալու բախտին են արժանանում նաև Հեթումի Ավետարանի հիշատակարանի մասերը:

<sup>41</sup> Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 10:

վածված և իրեն շատ լավ ծանոթ, թերևս մտերիմ, արվեստավորին, Թորոս Ռոսլինին: Վերջինս իր հերթին, աշխատել է իր թագավորի և նրա հարստության քառասնամյակը հավերժացնել բացառիկ շքեղ Ավետարանով: Այստեղից էլ Հեթում Առաջինի Ավետարանի արտակարգ զարգարվածությունը, որի մասին լսում ենք միայն իրենից՝ Թորոս Ռոսլինից, և համոզվում պահպանված սակավիկ թերթերից և վասակ արքեղբոր Ավետարանից:

1265 թ. իշխան Կոստանդին Լամբրոնացու դստեր, տիկին Կեռանի (Կիր Աննա) համար գրված Ավետարանի հիշատակարանում Թորոս Ռոսլինը Հեթում արքային հիշում է որպես «մեծ երեխտեւորի ամենայն Հայոց եւ ազգաց բաղմաց»: 1268 թ. ավարտված Ավետարանում՝ «երախտազործ Հայոց եւ ինձ անարժանիս»<sup>42</sup> ժամանակով դրանց միջև գրված Հեթումի Ավետարանում գրում է. «Ուստի եւ իմ անարժանութիւն թեպէտ եւ քստ նորին արժանեաց եւ մեծի երախտեացն, զոր ունէր առ իս ոչ էր բաւական հատուցանել»: Ուրեմն Հեթում թագավորը առանձին վերաբերմունք է ունեցել Թորոս Ռոսլինի նկատմամբ, գնահատել և հովանավորել է նրան: Թորոս Ռոսլինը պետք է նույնպիսի վերաբերմունք ցուցաբերեր իր երախտավորի նկատմամբ և արքայական վերաբերմունքին արժանի հուշարձան ստեղծեր: Եվ նա ստեղծում է այդ հուշարձանը «քստ հասութեան», այսինքն, «տիրապէս հասու լինելով», քստ պատշաճին:

Սակայն մինչև ձեռագրի ավարտելը Կիլիկիան մեծ աղետի է ենթարկվում: Մամլուքների դեմ<sup>43</sup> Մառի ճակատամարտում Հեթում Ա. թագավորի Թորոս որդին զոհվում, իսկ անդրանիկ Լեոնը՝ գերվում է<sup>44</sup>:

Թորոս Ռոսլինի երախտավորի արքայական փառքին ավելացել էր մեծ վիշտ, «քստ հասութեան» հուշարձան է կերտում «[պճնազար]դեալ ծաղկ- [երանգ բաղմա]կերպ պատ[կ]երագրութեամբ», որպեսզի «ընդ լսելոյ զլուր բանին կենաց, տեսցեն իբրև աշաւք իմն զտիպ նախահարցն եւ զփրկագործ տնարէնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ վասն [փրկութեան ազգի մարդկան]»:

Թորոս Ռոսլինը իր նախորդ և հետագայի, մեզ հայտնի ձեռագրերից ոչ մեկի հիշատակարանում այսպիսի խոստովանություն չի անում: Լավագույն

<sup>42</sup> Ն. Պողարյան, Յուցակ ձեռագրաց Երուսաղէմի, հատոր. 2, էջ 529:

<sup>43</sup> «Մահմեդական բանակը հետապնդեց փախստականներին, շարդելով և գերելով բոլոր նրանց, ում բռնում էր և ամեն կողմ հրդեհ էր տարածում... նա գրավեց մի շատ զորեղ ամրոց... տղամարդիկ բոլորն էլ խոզխոզվեցին, գերի առնված կանայք բաժանվեցին զինվորների մեջ... մտան Սիս քաղաք, հիմնահատակ քանդեցին այն: Այդ գավառում զորքը մնաց մի քանի օր, ամենուրեք տարածելով նախճիր ու հրդեհ, և վերցնելով բազմաթիվ գերիներ»: Այնուհետև մամլուքների բանակի մի մասը գնում է դեպի հյուսիս, մյուսը՝ Սիս, Աղանա, Այաս և Տարսոն, «զարդեցին բնակիչներին, գերիներ վերցրին, մեծ թվով բերդեր ավերեցին և ամեն ինչ հրդեհի մատնեցին», — գրում է արաբ պատմիչը («Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», թարգմ. Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 273):

<sup>44</sup> «Եւ արքայն Հեթում եմուտ ի սուգ և խոցեցաւ ի սրտի, և անկեալ ի ճանապարհ շոգաւ ի խանն մեծ և յանշափ ինչ արար, զի առեալ էած զնա ընդ իր արամբք երկերիւր հազարօք ընդդէմ սուլթանին»: Վճռական ճակատամարտում պարտվում են մամլուքները, բայց մոնղոլական խանը կաշառվում է ընծաներ ընդունելով «էլառ զբանակն, և դարձաւ երկիր իւր, կուրացեալ ի պարզեաց և յընծայից անախ աորերելոց, որպէս սովորեալ է դիպել յաճախ և այլոց բաղմաց»:

Եւ արքայ Հեթում դարձ արար յաշխարհ իւր ի Հայաստան» («Հավիանենս Դարդել, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 19—21):

դեպքում «դանազան նիւթաւք եւ երփն երփն գունաւք վայելչացուցանել»<sup>45</sup> են պատվիրել նրան «կամ դանազան նիւթաւք, ընտրելագոյն ոսկով եւ երանգ երանգ գունով» ավարտել է ինքը<sup>46</sup>:

Հեթումի Ավետարանում Քորոս Ռոսլինը լայն լուսանցքներ էր թողել ազատ և անկաշկանդ լուսանցազարդեր նկարելու համար<sup>47</sup>: Ձեռագիրն ունեցել է սկզբում 26×36 սմ մեծություն, ուր գրադաշտի զբաղեցրած մասը հավասար էր լուսանցքների տարածքին: Էջի այս շափսերը հնարավորություն են տվել արվեստագետին ամեն մի գրվագի մասին գրելիս, նաև համապատասխան նկար կերտել ցանկացած մեծությամբ, «ծաղկերանգ բազմակերպ պատկերագրութեամբ», սկսած լուսանցանկարից մինչև ամբողջական էջերը: Իսկ թե ինչու մնացած 39 թերթերում այդպիսի մի էջ կա միայն, հասկանալի է, որովհետև, նախ, միշտ էլ Հովհաննու Ավետարանը աղքատ է նկարազարդվում այն պատճառով, որ նախորդ Ավետարանների նույն գրվագները արդեն նկարված են, և երկրորդ, Ավետարանը հոշոտողները հետևողականորեն ոչնչացրել են առաջին հերթին նկարները և նկարազարդ թերթերը:

Սիրարփի Տեր-Ներսիսյանը Հեթում Ա-ի Ավետարանը կապում է Վասակ արքաների Ավետարանի հետ և գտնում, որ դրանք նման են շափերով, գրատեսակով, գրչությամբ, թերթերի դասավորությամբ: Հեթումի ձեռագրում պահպանված երկու մանրանկարները նույնպես հիշեցնում են Վասակի Ավետարանի նկարազարդումները. «ուստի մենք կարող ենք վստահ լինել, որ մեր ձեռագիրը Հոսմկլայում գրվել է համարյա միևնույն ժամանակ, ինչ Հեթումի Ավետարանը, թերևս 1268 թ. հետո, Վասակի՝ ողջ-առողջ Կիլիկիա վերադառնալու առիթով»<sup>48</sup>:

45 Ն. Պողաբյան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի, հատոր Բ, 1967, էջ 18:

46 Ն. Պողաբյան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի, հատոր. 2, էջ 529:

47 Այժմ մազազաթյա որոշ թերթերում պահպանված ստորին լուսանցքների ամբողջությունից և արտաքին լուսանցքների կտրված ցարդերի շափումներից, հնարավոր է լինում վերականգնել ձեռագրի նախնական շափերը: Երկրորդ անգամ նորոգողները թերթերի լայն լուսանցքները ավելորդ շռայլություն են համարել և իրենց ավելացրած թղթի շափսերը մազազաթյա թերթերի համեմատությամբ փոքր են վերցրել: Կազմելուց հետո եզրահատել են ձեռագիրը, որին զոհ են գնացել համարյա բոլոր լուսանցազարդերը, որոնք գտնվում էին մազազաթյա ամբողջական թերթերի վրա, մինչդեռ անշատված մազազաթյա թերթերի վրայից կտրված և թղթի վրա ամրացրած լուսանցազարդերը ամբողջական են: Եզրահատման ժամանակ, բնականաբար, կարվել են նաև Հովհաննես Հիզանցու ավելացրած թերթերի եզրերից:

Արմատի լուսանցքը՝ 4, սյունամիջյանը՝ 3, արտաքին լուսանցքը՝ 6 սանտիմետր են, որոնց գումարը 13 սմ է: Սրան ավելացնենք գրադաշտի ընդհանուր լայնքը 13 (լուրաբանչուր սյունակը՝ 6,5 սմ) կստանանք թերթի լայնքը 26 սմ: Այսպիսով էջը Ռոսլինը բաժանել է երկու հավասար բաժինների՝ գրադաշտի և լուսանցքի:

Ստորին լուսանցքը՝ 6 սմ է: Հավանաբար նույնքան է եղել նաև վերին լուսանցքը: Գրադաշտի բարձրությունը 24 սմ է, ուրեմն թերթի երկարությունը՝ 36 սանտիմետր է:

48 Ս. Տեր-Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 42—43:

Վասակի Ավետարանը, անշուշտ, գրվել է Հեթումի Ավետարանից հետո: Գ. Հովսեփյանը հավանական է համարում Հեթումի «Ավետարանի ծագումը նշանակել 1266 թվի առաջին կիսամյակում» (էջ 10): Այդպես չէ, իհարկե: Ձեռագիրը մամուլների արշավանքից հետո է ավարտվել: Առն արքայորդին գերվել է 1266 թ. օգոստոսի 24-ին, որից ոչ այնքան ուշ պիտի ավարտված լիներ Հեթում Ա-ի Ավետարանը, որովհետև մինչև տարեվերջը Քորոս Ռոսլինը, Հոսմկլայում, ծաղկում է Ավետիք գրիչի Ստում գրած Մաշտոցը (ճիշտ է, հարուստ նկարազարդված չէ, ունի առանձին մազազաթի վրա ամբողջական 5 նկար, 4 գլխազարդ, 9 խորանազարդ):

Հաջորդ (1267) տարվա սկզբից, կաթողիկոսի պատվերով Թ. Ռոսլինը ձեռնարկում է մի

Այս ավետարանների նմանությունը հաստատելու համար շատ կարևոր է նորահայտ պատահիկներում «զտիպ նախահարցն» արտահայտությունը, որը վերաբերում է Քրիստոսի տոհմածառի նկարազարդմանը: Կոստանդին կաթողիկոսի 1262 թ. Ավետարանում նախահայրերը նկարված են ամբողջ էջով մեկ կլոր շրջանակների մեջ՝ վերից վար շորս շարքով, յուրաքանչյուրում վեց նրկար: Այդպես է և՛ Մաթևոսի, և՛ Ղուկասի Ավետարաններում: Այդպես չէ, սակայն, Վասակի Ավետարանը: Նախահայրերից յուրաքանչյուրը նկարված է լուսանցքում, բնագրի իր անվան դիմաց, դարձյալ կլոր շրջանակների մեջ: Նշանակում է նախահայրերի նկարելու այս կարգը Քորոս Ռոսլինը առաջին անգամ կիրառել է Հեթում Ա-ի Ավետարանը նկարազարդելիս, և երբ գրում է «տեսցին իբրև աշար իմն զտիպ նախահարցն», այս նկարազարդումները պետք է հասկանալ:

Կոստանդին կաթողիկոսի Ավետարանի հիշատակարանում ոչ մի հիշատակություն չկա նախահայրերի նկարների մասին, որովհետև սովորական է եղել նրանց նկարելու եղանակն այստեղ, իսկ ահա Հեթումի Ավետարանում Քորոս Ռոսլինն առաջին անգամ յուրաքանչյուր նախահոր նկարը տեղադրում է բնագրի համապատասխան հատվածի դիմաց (ուր հիշատակված է տվյալ նախահայրը): Նկարների այդ շարքը, որ դրադեցրել է մի քանի էջերի լուսանցքները, ծառի տպավորություն է թողել և առանձին շուք է տվել լայնալուսանցք Ավետարանին:

Հեթումի և Վասակի Ավետարանները նման են նաև գրչության մեջ: Երկուսի մոտ էլ ընթերցվածները սկսվում են երեք տող ոսկեգրով, այնինչ Կոստանդին կաթողիկոսի Ավետարանում միայն երկու տող է: Երկուսում էլ չկա բառանջատում, անջատումը կատարվում է միայն կետեր դնելուց հետո: Իհարկե, բառանջատումը շուրջ երկու հարյուր տարի կիրառվում էր հայ գրչության արվեստում, և Քորոս Ռոսլինի բոլորգրված ձեռագրերում այդպես է: Դեռ ավելին, Քորոս Ռոսլինը հիանալիորեն կիրառում է գրադարձի օրենքները, և կանոնավոր են բոլոր տողադարձերը: Հեթումի Ավետարանը երկաթագրով գրելու հետ միասին, նա աշխատել է պահպանել նաև հին գրելաձևը, ավելի հարգի դարձնելու արքայական Ավետարանը, նմանեցնելով Հայոց նախորդ թագավորների երբևէ ստացած ավետարաններին (գուցե ձեռքի տակ ունեցել է այդպիսի օրինակ), և բնականաբար, խախտել է նաև գրադարձի կանոնը:

Այդպես է նաև Վասակի Ավետարանում:

Քորոս Ռոսլինը հայ գրչության արվեստի կարկառուն ներկայացուցիչներից է: Արտակարգ ներդաշնակ են նրա ձեռագրերում գիրն ու նկարը, գիծն ու գույնը: Հիշատակարանից վերը բերված հատվածը, ձեռագիրը գեղարվեստորեն ձևավորելու անհրաժեշտության մասին Ռոսլինի ըմբռնումների արտահայտությունն է: Երևույթը ըմբռնելուն ինչքան շատ զգայարաններ մասնակցեն՝ այնքան ամբողջական և լիակատար կլինի ճանաչողությունը: Երբ լսելու հետ միասին տեսողական զգայարանն է մասնակցում, իսկ երբ նկարը բազմերանգ է և ներգործուն, ճանաչողությունը ավելի կատարյալ է:

Ավետարան (ապրիլի 9-ին մահանում է կաթողիկոսը): Ձեռագիրն ավարտվում է 1268 թ. հունիսի 24-ին, Ասոնի գերությունից վերադառնալու օրը («Ի սոյն աւուրս եղև դրաւ գրչութեան սորա զանազան նիւթաք և երանգ երանգ գունաք», Մատենադարան, № 10675): 1268 թ. հունիսից հետո միայն Քորոս Ռոսլինը կարող էր կատարել Վասակ արքայի օրով: Վասակի Ավետարանը ավարտվել է, հավանաբար, 1269 թվականին:

Թորոս Ռոսլինը այսպիսին է ոչ միայն մանրանկարչության, այլ նաև գրչության մեջ: Բոլոր տերունական բառերը նրա ձեռագրերում ոսկեգոծ են, որով շեշտվում, առավել ակնառու է դառնում նշված մատյանի բովանդակությունը: Ավետարանը՝ Սուրբ, Յիսուս, Քրիստոս, Աստուած, Տէր, Իսրայէլի, Նրուապէսի մասին է: Հեթումի Ավետարանում ոսկեգոծ է գրված նաև Հայր բառը:

Մանրանկարչությունը օժանդակելու է գրին, ավելի ընկալելի դարձնելով միտքը, գաղափարը. «Վասն այնորիկ իմոյ անարժանութեան փցուն և ախմար գրչի Թորոսի, մականունն Ռուսլին կոչեցելոյ ըստ նախնեաց, հրամայէր զգործի գրչութեան ի կիր արկանել յաստուածային այս մատեան, որ և զարդարեալ ոսկով գտով և պատուական նիւթաւք»<sup>49</sup>:

Բոլորգրի մեջ մեծ վարպետ էր գրիչը. նրա էջերը թեթև են և դյուրընթեռնելի, տողերը՝ ազատ, գրերը հյութեղ: Ազատորեն օգտագործում է մյուս գրատեսակները: 1256 թ. Ավետարանում բոլոր ընթերցվածների առաջին տողերը ոսկեգոծ գրչագիր է: Նույն գրով են գրված նաև շատ նկարների մակագրությունները և ոսկեգիր հիշատակագրությունները: Օգտագործում է, շատ հազվադեպ, նաև շղագիրը, որպես նկարների մակագրություն՝ գրված վրձինով, իսկ բազմատեսակ զարդագրերը գրչությունը կապում են մանրանկարչության հետ: Փաստորեն Թորոս Ռոսլինի ձեռագրերում մենք տեսնում ենք օգտագործված շորս գրատեսակ, այսինքն՝ բոլորը, ինչ այն ժամանակ գոյություն ունեւ հայ գրչության արվեստի մեջ: Բոլորգրի համատարած գերիշխանության պայմաններում, երբ երկաթագիրը զաղարել էր գրչության մասսայական գիր լինելուց, որով այլևս ամբողջական ձեռագրեր չէին գրում, այլ օգտագործվում էր որպես զխագիր և զարդագրի հենք, և գեղեցկության համար առանձին տողեր ու հիշատակագրություններ էին գրում, Թորոս Ռոսլինը XIII դարի երկրորդ կեսին երկաթագրով ամբողջական ձեռագրեր էր գրում: Եվ գրում էր՝ պահպանելով երկաթագրի գրչության հնագույն կանոնները:

Թորոս Ռոսլինը իրավացիորեն իրեն համարում է գրիչ՝ ներկայացուցիչ գրչության արվեստի: Մանրանկարչությունը գրչության ընդհանուր արվեստի մի մասն էր, որը պետք է ծառայեր գրին, բանին, ինչպես ինքը բառացի ասում է. «Որպէս զի ընդ լսելոյ զլուր բանին կենաց, տեսցեն իբրև աշաւք իմն զտիպ նախահարցն...»:

Գևորգ Սկևռացու աշակերտները նրան, որպես գրչության արվեստի տեսական և գործնական վարդապետի զրվատում են, որ նա միաժամանակ օգտագործում է հայրենի բոլորգրի հետ միասին նաև հին աղյուսակ գիրը կամ գրչագիրը, ինչպես և երկաթագիրը և զարդագիրը: Այդ բոլորը մինչ այդ մենք տեսնում ենք Թորոս Ռոսլինի մոտ: Գևորգ Սկևռացու ղեկավարությամբ գրված Հեթում Բ-ի ճաշոցի ընթերցվածների առաջին երեք տող ոսկեգիրը նույնպես առնված է Թորոս Ռոսլինի Հեթում Ա-ի և Վասակի Ավետարաններից, միայն ճաշոցում երեք տողը հաճախ գրվում է երեք տարբեր գրատեսակներով՝ երկաթագիր, գրչագիր և բոլորգիր:

Թորոս Ռոսլինից առաջժամ հայտնի են շուրջ տասը ձեռագիր, սրոնցից վեցում հիշվում է Թորոս Ռոսլին անունը, յոթերորդում՝ միայն Թորոս անունը, մյուս երեքը հիշատակարան չունեն, սակայն ըստ մանրանկարների ոճի կարե-

<sup>49</sup> Մատենադարան, ձեռ. № 10450, էջ 403ա:

լի է վերագրել թորոս Ռոսլինի դպրոցին. դրանք Հեթում Ա. թագավորի (Մատենադարան № 5458), Վասակ արքաներո (Ֆրեերի № 3218) և Մատենադարանի № 8321 Ավետարաններն են: Տասը ձեռագրերից երեքը գրված են այլ գրիչների կողմից, մյուս յոթի գրիչն ու նկարիչը թորոս Ռոսլինն է, ընդ որում գրանցից երեքը գրված են երկաթագրով, մյուսները՝ բոլորգրով: Մեկական ձեռագիր ստացել են Հեթում Ա., Լևոն Գ թագավորները, Վասակ արքաներայրը, Կիրաննա իշխանուհին և Վարդան եպիսկոպոսը. մնացած հինգը ստացել են Կոստանդին կաթողիկոսը և նրա եղբորորդի թորոսը և նվիրել են ուրիշների:

Հոռմկլայի Հայոց կաթողիկոսարանը մեծ և հարուստ մատենադարան ուներ, որ գոյացել էր ոչ միայն տեղի գրչության դպրոցի ստեղծագործություններից ու ընդօրինակություններից, այլ թագավորների, իշխանների և այլոց առատ նվիրատվություններից: Բնականաբար Հոռմկլայի մատենադարանում շատ պետք է լինեին տեղի դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ թորոս Ռոսլինի ստեղծագործություններից:

Հովհաննես Երզնկացին նկարագրելով 1292 թ. մամլուրների կողմից Հոռմկլայի կործանումը, գրում է, որ թշնամիները մանրեցին «զբար բերդին իրրե զհող. առին զգեղապաճոյճ ամուրն պանծալի, սպանին... զինուորսն բերդին, գերեցին և աստուածային սուրբ Կտակարանսն, որ ի բազում ամաց ամբարեալ էր ամենայն կաթողիկոսացն և թագաւորաց... և զԱւետարանսն ոսկեառուփ մանրեալ փշրեցին...»<sup>50</sup>:

Անկասկած է, որ գրանց մեջ էին նաև թորոս Ռոսլինի ոսկեառուփ Ավետարանները:

А. А. МАТЕВОСЯН

## ВНОВЬ НАЙДЕННЫЕ ЧАСТИ ЕВАНГЕЛИЯ ЦАРЯ ГЕТУМА I, ПЕРЕПИСАННОГО И ИЛЛЮСТРИРОВАННОГО ТОРОСОМ РОСЛИНОМ

(Резюме)

Рукопись № 5458 Матенадарана им. Маштоца была включена в фонды хранилища в 1915 г. и очень скоро привлекла к себе внимание специалистов. Дело в том, что 274 листа (из 312-ти) этого Евангелия, написанные болоргиром на бумаге и украшенные портретами евангелистов, маргиналами и орнаментированными инициалами, были дополнены тридцатью девятью листами Евангелия, переписанного в 1266 г. в Ромкла на отборном пергамене; часть этих листов снабжена замечательными орнаментированными инициалами, маргиналами, золотыми буквами и двумя иллюстрациями на полях. Как явствует из дефектной памятной записи, заказчиком был католикос Константин, а получателем—царь Гетум I. Г. Овсепян опубликовал статью о рукописи лишь в

<sup>50</sup> Տ. Պալյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ա. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կոստանդնուպոլսի, 1963, էջ 57:

1949 году, когда у него под рукой было достаточно материалов об армянской миниатюре и доказал, что Евангелие царя Гетума I, часть которого составляют эти 39 пергаменных листов, переписано и иллюстрировано Рослином. Тер-Нерсисян также считает, что иллюстрации на тридцати девяти пергаменных листах принадлежат кисти Рослина. Е. Никольская, обратив внимание на бумажную часть рукописи, уточнила, что иллюстратором ее был Ованнэс Хизанци, живший на рубеже XIV и XV вв.

Среди фрагментов Матенадарана под номером 1454 занесены половинки двух листов, считавшихся памятной записью Служебника. В конце прошлого века эти фрагменты были доставлены из Васпуракана и включены в фонды хранилища. Исследование показало, что они являются частями памятной записи не Служебника, а Евангелия, именно Евангелия царя Гетума I. Изучение рукописи и памятной записи вновь подтвердило, что переписал Евангелие царя Гетума I и иллюстрировал его Торос Рослин. Оно было посвящено сорокалетию воцарения Гетума, а следовательно и основанию династии Гетумидов и было выполнено с искусством, достойным юбилея и юбиляра. Эта рукопись—наиболее великолепное творение пера и кисти Рослина; приблизительным его повторением, как справедливо замечает С. Тер-Нерсисян является Евангелие Васака—брата царя.

Царская рукопись была разодрана и изрезана мечами во время третьего нашествия Тамерлана в 1400 г. Ее выкупил чернец Ованнэс, а в 1401 г. писец и художник Ованнес Хизанци произвел ее реставрацию в Хизане. В это время рукопись имела 35 целых, 80 залатанных и 187 бумажных листов. В конце XV в. залатанные листы (кроме трех) были удалены из рукописи; они были заменены бумагой, к которой приклеены маргиналы и орнаментированные инициалы отделенных пергаменных листов. В таком виде рукопись дошла до нас. По-видимому, в то же время были отделены обе части памятной записи, которые затем использовались в качестве защитных листов. В середине XIX в. они были вновь отделены от рукописи, и в таком виде существовали до последнего времени.

A. MATHÉVOSSIAN

LES PARTIES NOUVELLEMENT DÉCOUVERTES DE L'ÉVANGILE  
DU ROI HÉTOUM IER COPIÉ ET ENLUMINÉ PAR  
THOROS ROSLINE

(R é s u m é)

Le manuscrit № 5458 du Maténadaran Machtotz a été inclus dans les fonds du dépôt en 1915 et il a tout de suite attiré l'attention des spécialistes. Il s'agit du fait que 274 feuillets (de 312) de cet Évangile,



écrits en bolorguir sur du papier et décorés des portraits des évangélistes, de marginaux et d'initiales ornementées, ont été complétés par trente-neuf feuillets d'un Evangile copié en 1266 à Hromkla sur du parchemin de choix; une partie de ces feuillets sont décorés d'étonnantes initiales ornementées, de marginaux, de lettres d'or et de deux enluminures dans les marges. Comme on l'apprend du colophon défectueux le commanditaire en a été le catholicos Constantin et le réceptionnaire le roi Hétoum I<sup>er</sup>. G. Hovsépian n'a publié un article sur ce manuscrit qu'en 1949, quand il disposait de suffisamment de matériaux relatifs à la miniature arménienne et il a démontré que l'Evangile du roi Hétoum I<sup>er</sup>, dont ces 39 feuillets en parchemin constituent une partie, a été copié et enluminé par Rosline. S. Der-Nersessian considère aussi que les enluminures des 39 feuillets de parchemin appartiennent au pinceau de Rosline. E. Nikolskaya, ayant étudié la partie en papier du manuscrit, a précisé que l'enlumineur en a été Hovhannes Khizantsi qui a vécu à la limite des XIV<sup>e</sup> et XV<sup>e</sup> siècles.

Parmi les fragments conservés au Maténadaran sous le numéro 1454 on garde les moitiés de deux feuillets tenus pour le colophon d'un Missel. A la fin du siècle dernier ces fragments ont été apportés du Vaspourakan et versés dans le fonds du dépôt. L'examen a montré qu'ils sont une partie du colophon non d'un Missel, mais d'un Evangile et plus exactement de l'Evangile du roi Hétoum I<sup>er</sup>. L'étude du manuscrit et du colophon a confirmé que l'Evangile du roi Hétoum I<sup>er</sup> a été copié et enlumine par Thoros Rosline. Il était consacré au quarantième anniversaire du règne de Hétoum et, par conséquent, de la fondation de la dynastie des Hétoumides et avait été exécuté avec un art digne du jubilé. Ce manuscrit est l'oeuvre la plus splendide appartenant à la plume et au pinceau de Rosline: comme le note légitimement S. Der-Nersessian l'Evangile de Vassak, frère du roi, est sa répétition approximative.

Le manuscrit royal a été déchiré et coupé en morceaux à l'époque de la troisième invasion de Tamerlan en 1400. Le moine Hovhannes l'a racheté et le scribe et enlumineur Hovhannes Khizantsi l'a restauré en 1401 à Khizan. A cette époque le manuscrit avait 35 pages entières, 80 pages racommodées et 187 pages en papier. A la fin du XV<sup>e</sup> siècle les pages racommodées (sauf trois) ont été enlevées du manuscrit; elles ont été remplacées par du papier sur lequel on a collé les marginaux et les initiales ornementées des feuillets en parchemin. Dans cet état le manuscrit est arrivé jusqu'à nous.

C'est probablement à cette même époque que les deux parties du colophon ont été séparées et par la suite utilisées comme feuilles de garde. Vers le milieu du XIX<sup>e</sup> siècle elles ont été à nouveau séparées du manuscrit, sont devenues des fragments et de cette manière elles sont arrivées jusqu'à nous.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

## ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԱՅ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՉԱՆՑ

Մեր հանրապետության սահմաններում և նրա սահմաններից դուրս կազմակերպված գիտական արշավների ժամանակ, Մատենադարանի աշխատակիցները նկարագրել են մասնավոր անձանց պատկանող մի շարք ձեռագրեր: Այդ նկարագրությունները, ինչպես և հետազոտում նկարագրվելիքները, «Բանբերի» սույն համարից սկսած, մաս առ մաս կհրատարակվեն «Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց» ընդհանուր խորագրի տակ:

Նկարագրությունների ներկա խումբը (24 ձեռագիր), որ կատարել են Օ. Եզանյանը (№№ 1—11), Ա. Մնացականյանը (№ 12), Բ. Զուգասզյանը (№№ 13—14), Լ. Խաչիկյանը (№ 15), Փ. Անթարյանը (№ 16), Ա. Մատթևոսյանը (№№ 17—22) և Ա. Զեյթունյանը (№№ 23—24), մի ընդհանուր սկզբունքով վերամշակել ու խմբագրել է Օ. Եզանյանը:

### 1

#### Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ԺԸ—ԺԹ—XVIII—XIX

Թերթ՝ 16: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 14,5×11: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրգիր, սև թանաքով, խորագրերն ու սկզբնատողերը՝ կարմիր: Տող՝ 11—15: Կազմ՝ չիք:

Վիճակ՝ սկզբից, միջից և վերջից՝ պակասավոր, թերթահան և քայքայված:

Ծանոթ. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1 ա—1 բ. Տող սուրբ Աստուածածնին ողբակերպ (ժայռակապ՝ Ի ՂԱՉԱՐԷ)—Ի քէն հայցեմ, ո՛վ տիրածին, |Ամէնօրհնեալ Աստուածածին...

բ. 2 ա—3 ա. Տող սուրբ էջմիածնի. Ղազարու (ժայռակապ՝ Ի ՂԱԱՐՈ)—Ի տունս Հայոց կառուցելոյդ զարմանամ, |Ահեղահրաշ մեծի փառացդ յոյժ սոսկամ...

գ. 3 ա—3 ա. [Շարական. Կանոն Շողակարին]—էջ Միածին ի Հօրէ և յոյս փառաց ընդ նմա...

դ. 3 բ—4 ա. [Տող սուրբ Աստուածածնին (ժայռակապ՝ Ի ՂԱՔԱՐԷ)]—Իսկուհի մայր կոյս Տալիթայ Մարիամ, |Բերկրեալ սրտիւ առ քեզ դամ...

ե. 4բ—4բ. Տաղ Վարագայ, ասացեալ է Մանասէէ (ծայրակապ՝ ՄԱՆ)—  
Մեծաձայն եղանակաւ գովարանեմք լեառն Վարագայ, Որ կանգնէր Վասրու-  
րական հանդէհ քարին... (Միայն 3 տուն. թերթ ընկած լինելու հետեանքով  
մնացած տները թափված):

զ. 5ա—5ա. [Տաղ, սկզբից թերի]—...Եւ զանց ուխտաւորց կաթն բղխէ/  
նոցին ի ստեանց կոյս, կոյս Մարինոս...

է. 5բ—6բ. Տաղ Վարդանան[ց], Ղազարէ ասացեալ (ծայրակապ՝ Ի ՂԱ-  
ՉԱՐՈՒԵ—Իսկասլէս եկայք լացցուք աղէհարշ սրտիւ ողբերգական, Վայ և  
եղով կարդասցուք ի վերայ աղգիս Հայկական... (թերթ ընկած լինելու հետե-  
վանքով մնում է թերի):

բ. 7ա—7բ. [Տաղ, սկզբից թերի, պահպանվել է միայն վերջին երեք տնե-  
րը՝ ԵՄՈ ծայրակապով—...] Խնդրեմք առատ բարերարէն, [Երկոցտասան սին  
լուսնդէն, Քալիլիայ գլխույն վերէն հոտն...]

բ. 7բ—8բ. Երգ Աւետեաց աուր Յարութեան Քրիստոսի Աստուծոյ—Յըն-  
ծայ այսօր եկեղեցի, աւետիս, Սուր Զատիկիս, սուրբ պասեքիս, աւետիս...

ժ. 9ա—9ա. [Գրիգորի նարեկացոյ Տաղ Վարդավառին (սկզբից թե-  
րի)—...] Հով հարեալ գոհար շուշանին, Սյն հարաւա[յ]ին լեռնէն քաղցր  
օղով ցօղեր զշուշանին...

ժա. 9բ—10բ. [Տաղ զղջման (ծայրակապ՝ Ի ՂԱՉԱՐԷ)]—Ի սէր կենցա-  
ղոյս խաբեցա, Ունայնութեանց հետեցա...

ժբ. 10բ—10բ. Շարական ԳԿ—Ընդ անառակին որդոյ կեշեմ (գոշեմ) առ  
Հայրըդ գթած...

ժգ. 10բ—11բ. Տաղ Ղազարու ասացեալ է (ծայրակապ՝ Ի ՂԱՉԱՐԷ)—  
Իսկակից Հօր ծնունդ անեղ, Սմենագօր արբայդ ահեղ...

ժդ. 11բ—11բ. Շարական ԳԶ—Ողորմեա ինձ, Քրիստոս, ողորմութեամբ  
քո...

ժե. 12ա—13բ. Տաղ Վարագա, որ խ... (ծայրակապ՝ ՂԱՉԱՐԷ)—Ղամբա-  
րաշար անհամեմատ լուսով լցեալ լեառն Վարագայ Սե սին լուսոյ երկոյ-  
տասան անդ կառուցեալ լեառն Վարագայ...

ժզ. 13բ—13բ. Շարական ԳԸ—Որ բղլոյս անճառելի...

ժէ. 13բ—15բ. [Տաղ անխորագիր]—Պարգևատուն ամենեցոյն Աստուած  
Որդին Սե փառակից Հօր և Որդոյ շնորհաց Հոգին...

ժը. 16ա—16բ. [Տաղ գինոյ]—Աստուածաստեղծ ծառ անուն որթ, Յոյժ  
գինաբեր, առատ և յորթ, Մեղ սեպհական, այլոցն խորթ, Մեղաց քաւիշ,  
մարդկանց միջնորդ. Քինի, գինի, մեղ գինի անուն ստուգարանի...

## 2

## Հ Մ Ա Յ Ի Լ

ժե—XV

Ստացող՝ Գրիգոր:

Թերթ՝ 1 (ժապավենածէ): Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 160×5,5: Գրութիւն՝  
միասյուն: Գիր՝ բոլորգիր, գեղեցիկ և համաշափ: Վիճակ՝ սկզբից և վերջից՝  
թերի, թանաքը զուսթափված:

Ծանոթ. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. (Սկզբից բերի)—...հատանես, թէ զուժն տանես, թէ ընդ այր և ընդ կինն ատելութեան, արկանես...

բ. Աղօթք վասն պահպանութեանն, Առաքել վարդապետէ ասացեալ է (ծայրակապ՝ ՏէՐ ԱՌԱՔԵԱԼ)—Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս, լճօր ճառագայթ և լոյս փառաց...

գ. Այլ և նորին Աղօթք առ Երկնային զօրսն—Սուրբք և սիրեցեալք յամենասուրբ Երրորդութենէն հոգիք հարկաւորք...

դ. (Աղյուսակ՝  $18 \times 5 = 90$  վանդակներով. Ա վանդակի մեջ՝ «Նալվատարա», Դ վանդակի մեջ՝ «Սէ շահի»):

ե. Բ. Յուլին և իւր աստղն Զորհանն է, յօրն յուրբաթ...

զ. Աղօթք գկնի ազատութեան—Աղաչեմ զքեզ, Տէր Աստուած ամենակարող... (անավարտ):

է. Աղօթք զորաւոր և ախոյեան ընդդէմ շար դիւաց... և պահապան ծառայիս Աստուծոյ Գրիգորին—Կարգամք առ քեզ, Տէր, հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... (վերջից պակասավոր):

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Աղոթքների վերջում՝ «Գրիգոր»:

## 3

## Հ Մ Ա Յ Ի Լ

Թաղ (Շառախ)

ՌՃՄՁ—1707

Գրիչ՝ Ստեփանոս սարկաւազ: Ստացող՝ Արօ:

Թերք՝ 1 (ժապավենաձև): Նյութ՝ թուղթ: Մեծություն՝  $651 \times 10,5$ : Գրություն՝ միասյուն: Գիր՝ բուրգիր, խոշոր:

Մանրանկարչություն՝ Կիպրիանոս և Ուստիանե, Մարիամ Աստվածածին, Գրիգոր Նարեկացի, Հրեշտակապետներ, Պողոս և Պետրոս, Հիսուս, Գեորգ Զորավար: Ծակատազարդ և զարդադրեր՝ կարմիր, կապույտ և դեղին գույներով:

Ծանոթ. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. (Սկզբից պակասավոր)—...հաւատացին յանուն նորա: Ոյք ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ...

բ. Աեաաւրան ըստ Մատ[թ]էոսի—Եւ մտեալ ի Կափառնայումն...

- զ. Աւետարան ըստ Մարկոսի—Մինչև նա դայն խօսէր...
- դ. Աւետարան ըստ Դուկասու վասն բժշկութեան—Եւ եղև ի միւսում շաբաթուն...
- ե. Աղօթք սրբոյն Կիպրիանոսի և Յուստիանէ կուսին— Ես Կիպրիանոս...
- զ. Մաղբանք առ ամենասուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն— Ո՛վ ամենասրբունհի Աստուածածին...
- է. Աղօթք սրբոյն Գրիգորի նարեկայ վարդապետին, զոր ասացեալ է վասն կախարդաց...—Որդի Աստուծոյ կենդանոյ...
- ը. նորին սրբոյն Գրիգորի Մաղբանք զօրաւորք [զ]արհուրանաց գիշերոյ— Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հօրք, զգառնացողիս զաղաշանս...
- ր. Այս են անուանք սուրբ հրեշտակապետացն...—Յիշեա զսուրբ Աստուածածինն, զի նա է դեղ զլիսացաւի...
- ժ. Գիր քաղի... —Սուրբն Պետրոս և սուրբն Պօղոս և սուրբն Շիղաթ...
- ժա. Տէր Առաքել վարդապետի ասացեալ զաղօթս... —Տէր և փրկիչ Յիսուս Աստուած, լճօր ճառագայթ և լոյս փառաց...
- ժբ. Գիր վասն կարմիր քամու... —Եւ Յիսուս արհնեաց ըզԱրգար...
- ժգ. Գիր վասն խոցի... —Երդմնեցուցանեմ զքեզ ի շորս զլուխ Աւետարանն...
- ժդ. Գիր շոր խոցի... —Տէր Աստուած մեր երթար յերուսաղէմ...
- ժե. Գիր ղօլքնչի... —Յամբար, յամբար, փարւարդիզար...
- ժզ. Գիր գլխացաւի... —Տէր մեր Յիսուս Քրիստոս էառ զՅովանէս...
- ժէ. Գիր շար աշիչ... —Գայր գետն Յորդանան...
- ժը. Աղօթք առ ամենայն սուրբ[ս]ն... —Բարեխօսութեամբ սուրբունոյ Աստուածածնին...
- ժր. Աղաչանք առ սուրբ Խաչն... —Բարեխօսութեամբ անբարբառ բարեխօսին...
- ի. Գիր քաղցրութեան աւագաց և պարոնաց— Մամիլ խաթայ, շամիթայ, աշումիթայ...
- իա. Գիր ջերման այս է... —Ասէ Միանոս. Թող վասն Աստուծոյ...
- իբ. Գիր յորժամ կինն շատ յերկարի ի ծննունդն... —Ունահատ և հուրազդայ և մարուդարայ...
- իգ. Գիր քաղցրութեան և երեսրախտութեան—Որպէս Հայր Աստուած յառարումն Որդոյ քաղցրացաւ...
- իդ. Գիր վասն կահարդաց և աղանդաւորաց—Յանուն սրբոյն Սարգսի Զօրայվարին և որդոյ նորայ Մարտիրոսին...

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. (Վերջում, գրչի ձեռնով). Կպրանոսս յիշատակ է Արօին, ծնողացն՝ Յուսէփին, Կալիվարդին, կնոջն՝ Եղիսին, որդոցն՝ Յակօրին, Մարուսանին, Մարհասին. ամէն: Գրեցաւ սուրբ Կպրիանոսս ձեռամբ Ստեփանոս սարկաւազի, յերկիրս Շատախ, ի քաղաքն Թաղ, թվին ՌՃԾԶ (1707): Որ կարդայք, ասացէք զԱստուած սղորմին. ամէն:

բ. (Սկզբում, այլ ձեռնով). Փրկեսցէ... զժառանգն Աստուծոյ ըզԱրօն, կոչակցուն՝ Եղիսին, որդոց՝ Մարուսանին, Մարհասին. ամէն:

## ՀՄԱՅԻԼ

ԺԸ—XVIII

Սաացող (հետագայի)՝ Հայրապետի որդի Յարութին:

Թերթ՝ 1 (ժապավենածե): Նյութ՝ թուղթ: Մեծություն՝  $472 \times 8,8$ : Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր:

Մանրանկարչություն՝ Ավետում, Ծնունդ, Ս. Ներսես, Քառասունօրյա գալուստ, 12 առաքյալներ, Խաչելություն, Մարիամ Աստվածածին, Գարրիել հրեշտակապետ, Իսահակի զոհաբերումը, Գեորգ Զորավար, Սարգիս Զորավար, Հիսուսի փորձությունը սատանայից:

Վինակ՝ վնասված և վերջից պակասավոր:

Մանր. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձևազրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Աղոթք սրբյն ներսեսի հայրապետի ասացեալ—Հաւատով խոստովանիմ...

բ. Աղոթք վասն կապանաց դիաց... —Թագաւոր հզօր, ապաւէն ծարաւելոց...

գ. (Բարեխօսութիւնք սրբոց Յովհաննու կարապետի, Ստեփաննոսի նախավկայի և Գրիգորի Լուսաւորչի):

դ. Աղոթք հրեշտակաց— Գարրիէլ, Միքայէլ, Ռափայէլ...

ե. Մաղրանք սրբոց զօրականացն—Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ...

զ. Մաղրանք սրբոյն Սարգսի Զօրայվարին—Երջանիկ մեծ զօրականն...

է. Կապք թղթի—Սուրբն Սիովն, սուրբն Սիսի և սուրբն Սիսիանէ...

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Աղոթքների վերջում այլ ձևերով). Հայրապետի որդի Յարութին:

## Ո Ի Ր Բ Ա Թ Ա Գ Ի Ր Ք

Քառականց գյուղ (Ռշտունիք)

ԺԷ—XVII

Գրիչ՝ Ստեփաննոս կղերիկոս: Սաացող՝ Յովհաննէս:

Թերթ՝ 142: Պրակ՝ Ա—ԺԲ $\times$ Յ (ԺԲ՝ 5)+Թ—Ի $\times$ Յ (ԺԳ՝ 5): Նյութ՝ թուղթ, մահիկանշան լուսադրոշմով: Մեծություն՝  $11,2 \times 8$ : Գրություն՝ միասյուն: Գիր՝ բուրգիր, խորագրերն ու սկզբնատողերը՝ կարմիր: Տող՝ 11: Կազմ՝ դրոշմազարդ սև կաշի, կաշվե դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ շիբ, դռնակի աստառը՝ կարմիր կտավ: Ա. փեղկի կենտրոնում արծաթե փորրիկ խաչ՝ «ՇուշԱն» մակագրութեամբ: Պահպանակ՝ սկզբում 2 (Ա—Բ) և վերջում 4 (Գ—Զ)

թերթ թուղթ, հետագայի հիշատակագրություններով և հավելագրություններով:

Վինակ՝ թրջված, կեղտոտված, տեղ-տեղ թանաքի ազդեցությամբ զրազաշար գունափոխված:

Մանր. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձևագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանարևակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1ա—16ա. Ուրբաթ և կամ շոբեզարաթի օր տանին զհիւանդն ի դուռն եկեղեցոյն... — Կարդամբ առ քեզ, Հայր Տեառն մերոյ...

բ. 16ա—22ա. [Աղօթք]—Անսկիզբն Աստուած, Հայր սուրբ...

գ. 22բ—42ա. Երդումն և բժշկութիւն հոգոյ և մարմնոյ—Յանուն մերոյ Յիսուսի Քրիստոսի...

դ. 42ա—57ա. Աւետարան Մա[տ]րէոսի—Եւ մտեալ Կառափնայումն...

ե. 57ա—63ա. Պատմութիւն սուրբ կուսին Յուստիանէ—Յայնժամ կայր ի յԱնտիոք քաղաք...

զ. 63ա—69ա. Մաղբանք առ ամենայն սուրբսն—Բարեխօսութեամբ սըրբութեոյ Աստուածածնին...

է. 69բ—71բ. Վերստին յաւելուած կրկին (Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկայ վարդապետին... վասն կախարդաց...)—Որդի Աստուծոյ, կենդանի արհնեալդ ամենայնի, Հօրդ ահաւորի...

ը. 72ա—83ա. Աղօթք սրբոյն Փոկասու հայրապետին—Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, Տէր իմ և Աստուած...

ր. 88ա—91ա. Գիր ամենայն ցեղ զանի—Առ պաւաղա դանակի, Գ սերէն և Գ բեռէն...

ժ. 91ա—91ա. Ամենայն ցառց վերայ—Այլ պահպանութիւն... ի վերայ պիտոյն ծառայիս...

ժա. 91բ—96բ. Մաղբանք առ սփանչելագործ Սուրբ Նշանն Քրիստոսի—Բարեխօսութեամբ սուրբ և աստուածային Նշանացն Քրիստոսի...

ժբ. 96բ—105ա. Գիր ամառի կարգայ—Ես Պօղոս հալածիչ...

ժգ. 105բ—108բ. Ի յաուրս ուրբաթի, որ զՏէր մեր խաչեցին—Աստուածածին ի դէմ խաչին լկայր, հառաչէր կողկողագին...

ժդ. 109բ—111բ. [Աւետարան ըստ Մարկոսի]—Եւ եղև նմա ի շաբաթու...

ժե. 112ա—116բ. Մաղբանք զարհուրանաց գիշերաց Գրիգորի Նարեկացոյ—Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հղօրս...

ժզ. 116բ—118բ. Այս Աստուծոյ անուն է՝ ՀԹ լեզու է—Մերնիթոյս, Ակիաւասթէր, Միսիա, էմանուէլ...

ժէ. 119ա—120բ. Աւետարան ըստ Մատթէոսի—Մինչդեռ նա դայն խօսէր...

ժը. 120բ—122բ. Աւետարան ըստ Մարկոսի—Մինչդեռ անցանէր ընդ այն...

ժր. 122բ—131ա. Աւետարան ըստ Մարկոսի—Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս Տիրոսի...



ի. 131բ—134բ. Վերստին յաւելուած կրկին հեծուրեան (Աղօբ Գրիգորի Նարեկացոյ)—Տէր Աստուած գթութեան...

իա. 134բ—138բ. Վերստին յաւելուած (Աղօբ Գրիգորի Նարեկացոյ)—Բժշկական կրթութիւն...

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

### 1. Գրչի

138բ. Փա՛ռք...

139ա. Արդ, գրեցաւ սուրբ Ուրբաթագիրքս ի լաւ և ըստոյզ Բ (2) օրինակէ՝ ձեռամբ յոգնամեղ, արուպ և անիմայ և յամայի յիմաստութենէ, ի շքնչին և անպիտան ի Ստեփաննոս կղերիկոսէ տոմիս գծագրողի: Արդ, շնորհիւ տեառն (139բ) սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի զսա յերկիրն Ըորշաունեաց, ի գիւղն Բառականց, ընդ հոգանեաւ Սուրբ Աստուածածնին և Յակոբայ Սրբոյն՝ դէմ աստուածապահ՝ կղղոյն Աղբամարայ մեծ Աթոռոյ Արամեանս տոխմի, և ի (140ա) կաթողիկոսութեան սրբոյ տեառն Գրիգորի գիտապետի, Ամենայն Հայոց երկրորդ լուսաւորչի, և ի քահանայութեան մերումս եկեղեցական զնդի և սրբոյ տաճարիս սպասաւորի Տէր Աւետիսի սրբասիրի, Տէր Ստեփաննոսի՝ գրքիս ստացողի, (140բ) Տէր Գրիգորիսի խոհեմականի, Տէր Կարապետի մեծի... (մեկ բառ անընթեռնելի), Տէր Սարգսի յոյժ աշխատողի, Տէր Յովանիսի արագ բնթերցողի, որք կան ի սպասաւորութիւն սրբոյ տաճարիս, զոր և Տէր Աստուած մեր ընդ ԻԴ (24) քահանայիցն դասակից (141ա) արասցէ զսոսա. ամէն: Այլ և ցանկացող եղեալ այսմ աստուածատունկ բուրաստանիս հաւատարիմ այրն Աստուծոյ Յովանէսն և կողակիցն իւր՝ Ասլխանին, որ ըստացաւ զսուրբ գիրքս ի հալալ վաստակոց իւրեանց՝ յիշ (141բ) ատակ հոգոց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց նոցա. ամէն: Ո՛վ լուսնդեալ երամ դասք քահանայից, և որք հանդիպիք սմա կարդալով և կամ օրինակելով, յիշեցէք և Աստուած ողորմի ստացէք մարտկան Յովանէսին, կողակից Հանրէկուն, հօրն՝ Նախապետին, մօրն՝ Գարիսանի, կողակցուն՝ Ասլխանին, որդոյն՝ Խլղաքին, եղբօրն՝ Տէր Ստեփաննոսին, կողակցուն՝ Շաղզաղին, որդոյն՝ Մարտիրոսին, միւս եղբօրն՝ Փոխանին, կնոջն՝ Մանուշակին, որդոյն՝ Մանուկին, միւս եղբօրն՝ Մուրատին և կնոջն՝ Կիմաքին, և որդոց և դստերաց նոցին, և Սիմօն. ամէն: Արդ, ես Յովանէս ետի զսուրբ գիրքս յիշատակ ի դուռն Սուրբ Աստուածածնին, և թէ որ ծախէ կամ գրաւ դնէ, նայ զանէժքն Յուդայի և Կայենի աոցէ. ամէն:

### 2. Հետագայի

(Պեպնկ Ա). Վեցհազարեակ Սողոմոնի: Գրեցաւ զայս Սողոմոնին Վէնէղիկ քաղաքն: Յերուսաղէմայ զամենայն շար, պիղծ ցաւոց քննութիւն առաւ շարաց զնդից և բանից զամենայն շարացն և պահից տաճարի Սողոմոնի, մինչև զալլուստն] Քրիստոսի: ՌՃԾԴ (1705) ամի, 5 օգոստոսի:

## Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ԺԵ—XV

Գրիչ՝ Գրիգորիս:

Քերթ՝ 175: Նյութ՝ թուղթ: Մեծուքյուն՝  $8,8 \times 6,2$ : Գրուքյուն՝ միասյուն: Գիր՝ բուրդգիր (1—14, 19—175), նոտրգիր (15—18), սև թանաքով, խորագրերը, սկզբնատողերը՝ կարմիր, մեծատառերը՝ կարմիր և կապույտ: Տող՝ 17: Կազմ՝ սև կաշի, միջուկը՝ տախտակ, աստառ՝ թուղթ:

Մանրանկարչություն՝ 14բ, 54բ, 83բ, 149բ, բոլորն էլ եղծված. ճակատագարդ՝ 15ա, 55ա, 84ա, 118ա, 150ա. լուսանցազարդ և զարդագիր՝ բազմաթիվ:

Վիճակ՝ սկզբից և վերջից պակասավոր, գունաթափ և հիվանդ: Մանրանկարները անձանաչիտրեն եղծված, կազմի կաշին քայքայված:

Ծանոթ. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—175բ. [Սաղմոս Դարի: Սկ. ԻԸ, 8—Չայն Տեանն շար] Ժէ դանասյատն...

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

54ա. Չանարժան Գրիգորիսս աղաշեմ չիշել ի Տէր Քրիստոս Աստուած:

## Ո Ի Բ Բ Ա Թ Ա Գ Ի Բ Ք

ՌՃՀԹ—1730

Քերթ՝ 16: Նյութ՝ թուղթ: Մեծուքյուն՝  $8 \times 5,4$ : Գրուքյուն՝ միասյուն: Գիր՝ բուրդգիր (1—15), նոտրգիր (16ա), սև թանաքով, խորագրերը, սկզբնատողերն ու մեծատառերը՝ կարմիր: Տող՝ 10: Կազմ՝ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառ՝ բամբակե գործվածք. Ա փեղկի աստառը ծածկված սպիտակ թղթով, Բ փեղկի աստառը՝ ձեռագրիս 16-րդ թերթով: Մանրանկարչություն՝ 10ա, 11ա:

Վիճակ՝ սկզբից, միջից և վերջից պակասավոր և թերթահան. եղած թերթերը խառնված, գրությունը խունացած, նկարները եղծված:

Ծանոթ. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թերթերը խառնված լինելով, տեղում հնարավորություն չունեցանք վերադասավորելու և բովանդակությունը պարզելու:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրչի

16ա (նոսրգրով, սկզբից բերի).

////////////////////// զսա արցէ,  
Խաղաղութիւն վայելեսցէ,  
Որ շարն իւր պատահեսցէ,  
Խորհուրդ բարին կատարեսցէ,  
Ի խորին ծերութեան հասցէ,  
Յարբայութեան ժառանգեսցէ. ամէն:

Գրեցաւ Հմայիլս Թւին ՌՃՀԹ (1730)-ին է:

8

Ո Ի Ր Բ Ա Թ Ա Գ Ի Ր Ք

ԺԷ-ԺԸ—XVII-XVIII

Թերք՝ 13: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 7,2×4,8: Գրութիւն՝ միաստուն:  
Գիր՝ նոսրգիր, սև թանաքով, խորագրերը՝ կարմիր: Տող՝ 11: Կազմ՝ չիք, զըր-  
ված № 7-ի կազմի մեջ:

Մանրանկարչութիւն՝ մի քանի թռչնազրեր:

Վիճակ՝ սկզբից, միջից և վերջից պակասավոր, մնացյալը թերթաձև:

Մանր. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում  
է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ա-  
լոյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թերթերը խառնված լինելով, տեղում հնարավորութիւն չունեցանք վե-  
րագասավորելու և բովանդակութիւնը պարզելու:

9

ՄԱՍՈՒՆՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԺԳ—XIII

Թերք՝ 38: Նյութ՝ մազաղաթ: Մեծութիւն՝ 20×15: Գրութիւն՝ երկստուն,  
Գիր՝ մանր, համաչափ բոլորգիր, սև թանաքով, խորագրերն ու սկզբնատողերը  
կարմիր և ոսկի: Տող՝ 22: Կազմ՝ մոմլաթ:

Մանրանկարչութիւն՝ լուսանցազարդեր և զարդագրեր, կարմիր, կապույտ  
կանաչ և ոսկի:

Վինակ՝ սկզբից, միջից և վերջից պակասավոր. պահպանված թերթերը քայքայված, սեւացած, գունաթափված և թերթերը խառնված:

Ծանոթ. Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերից: Այժմ պատկանում է նրա ավագ որդուն՝ Երևանաբնակ (Շիրակի փողոց, № 13) Եղիշ Գեղամի Ալոյանին:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 13աբ. [Գործք Առաքելոց. ԺԶ, 10—24—...] *Խոնս*, վաղվաղակի խրնդրեցար Էլանելի ի Մակեդոնիայ... զնոսա ի ներքին բանտն:— 20աբ [Գործք Առաքելոց. Ի, 4—20—...] և Սեկունդոս, և Գայիոս Գերբեցի... շպատմել ձեզ և ուսուցանել:— 1ա—12ա. [Գործք Առաքելոց. Ի, 38—ԻԸ, 32—... տե] սանելոց են զերեսս նորա... ամենայն համարձակութեամբ:

2. 12բ. Յառաջարան Երանեցունցն Կարողիկեայց— Ի փորձունս փորումբ... աղաչեմ շի[նել]:

ա. 14ա. [Նախադրութիւն Կարողիկեայ քղբոյն Յակորայ]— Քանզի ինքն իսկ Յակորոս գրէ. ուսուցանէ յաղագս զանազան փորձութեանց:— 14ա—15բ. Թուղք Յակորայ (Ա, 1—26)— Յակորոս Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ... Եթէ որ կամիցի կրանաւոր լինել և ոչ սան[ձահարեցէ]:— 16ա—19բ. [Թուղք Յակորայ. Բ, 12—Ե, 14]—Այնպէս խաւեցարուր... կոչեսցեն զերիցունս և կեղե[ցւոյն]:

բ. 21ա—27ա. [Թուղք Պետրոսի առաջին. Ա, 3—Ե, 44—...] Աւրհնեալ է Աստուած... խաղաղութիւն ընդ ձեզ ամենիսեան՝ որ էք ի Քրիստոս Յիսուս... ամէն:

գ. 27ա—28ա. Գլուխք Երկրորդ քղբոյն Պետրոսի—Վասն կոչման հաւատովբ... առաքինութեամբ:— 28աբ. Նախադրութիւն Երկրորդ քղբոյն Պետրոսի— Զայս դարձեալ... կատարէ զթուղքն:— 29ա—32ա. [Թուղք Պետրոսի Երկրորդ. Ա, 13—Գ, 18—...] Համարիմ մինչդեռ եմ ի մարմնի աստ... նմա փա՛ռք և այժմ և յարն յաւիտենից. ամէն:

դ. 32աբ. Գլուխք առաջին քղբոյն Յովհաննու— Աւետարանական աստուածախաւսութիւն... իւրաքանչիւր հասակաց:— 33ա—34բ. [Թուղք Յովհաննու առաջին. Ա, 3—Բ, 24—...] մեզ և մեր հաղորդութիւնն իցէ... իսկ զբանէն լուարուր:

3. 35ա—38բ. [Յայտնութիւն Յովհաննու. Բ, 16— Գ, 13—... վաղ]վաղակի և պատերազմեցայ... և աստեղբ Երկնից թաւ[թափեցան]:

Ստացող՝ Մաղաքիա:

Թերթ՝ 1 (ժապավենածե): Նյութ՝ թուղթ. Մեծութիւն՝ 646×8,1: Գրութիւն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր:

Մանրանկարչություն՝ Հիսուս Քրիստոս, Մարիամ և Հիսուս, Խաչելություն, Հովհաննես Մկրտիչ, Ստեփաննոս Նախավկա, Գրիգոր Լուսավորիչ, Գաբրիել և Միքայել հրեշտակապետներ, Սարգիս Զորավար, Աստուած և տասներկու առաքյալներ: Գեորգ Զորավար, Մատթեոս ավետարանիչ, Աբրահամ և Իսահակ, Բժշկություն դիվանարի, Քրիստոս և սատանա (փորձություն):

Վիճակ՝ բավարար: Սկզբից և վերջից պակասավոր:

Մանր. Պատկանում է նույնի քաղաքի բնակիչ Վասիլի Սարգիսովիչ Մուրադյանին: Նկարագրման պահին գտնվում էր իր փեսայի՝ Յուրիկ Եվզենևիչ Պոսոխովի մոտ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Սովորական հմայիլ է, սկզբից և վերջից պակասավոր: Սկ. «[հրե]շտակաց և մարդկան և ամենյան եղևոց, և ողորմեա թո արարածոց»:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

(Աղոթքների վերջում). Մաղափա:

11

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Արգրում

ՌՃԹ — 1660

Ստացող՝ Աւետիս:

Թերթ՝ թերթակալված չէ: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ ? : Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բուլղարի: Տող՝ ? : Կազմ՝ անդարդ սև կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ սպիտակ կտավ (միայն Ա. փեղկը՝ պատված ձեռագրի թղթով): Ա. փեղկի վրա ամրացված 1 խաչ՝ 5 ակով, 4-ը՝ բալագույն, 1-ը՝ կապույտ և բազմաթիվ փլաքներ, որոնց մեջ 1 խաչ՝ 5 ակով, 3-ը՝ կանաչ, 2-ը՝ կարմիր:

Մանրանկարչություն. Խորան՝ 10 Եվսեբիոսի թղթով և համարաբարու կանոններով: Ավետարանիչներ՝ 4, կրսախորան՝ 4: Լուսանցազարդեր և զարդազրեր: Գույներ՝ միագույն կարմիր:

Վիճակ՝ բավարար: Սկզբից թերի: Խոնավությունից լուսանցային մասերը զուեմափոխված, տեղ-տեղ փոքրիկ պատռվածքներ և զանազան բծեր: Կազմի երկրորդ փեղկի տախտակը կիսով շափ կտրված բնկած:

Մանր. Նախապես պատկանել է Սպիտակի շրջանի Սարահարթ գյուղի բնակչուհի Գայանե մայրիկին, այժմ գտնվում է նույն գյուղում՝ Շաշու (Սաշու) տատիկի մոտ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Թուղթ Եսեբի առ Կարպիանոս:

բ. Համարաբարու կանոն Ա.—Ժ:

գ. Աւետարան ըստ Մատթէոսի (սկ. Ե, 45. «[բա]րեաց և ածէ անձրև...»):

դ. Աւետարան ըստ Մարկոսի (սկզբում՝ «Գլուխք» և «Նախադրութիւնք», վերջում՝ «Յարուցեալ Յիսուս»):

ե. Աւետարան ըստ Դովասու (սկզբում՝ «Գլուխք» և «Նախադրութիւն»):

զ. Աւետարան ըստ Յովհաննու:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## 1. Գրչի

(Վերջում). Յիշեսչիք ի մարրափայլ յաղօթս ձեր զստացող սուրբ Աւետար[ան]ին՝ զբարեմիտ կին զՇահգառեն, և զհայրն իւր՝ զԳիլան, և զորդին իւր՝ զԷլիբեկին, Ղուկասն, Յովանէսն, զՀայրանն, Շահրիստանն, Խանգառանն, զՅարութիւնն, Շահգառան, Միրին, Այլախարունն, Սառան և ամենայն արեան մերձաւորքն իւր: Ո՛վ որ կարդայք կամ արինակէք, մէկ լի սրտիւ ողորմի սասցէք Շահգառին և իւր ննչեցելոցն. ամէն: Եւս առաւել անմեղ բրիստոնեան զԱւետիսն, որ եկեալ ի գեղեցկաշէն քաղաքս Թէոդուպոլիս, որ այժմ Արզումասի, եղև պատճառ բարութեան՝ գնեաց զսուրբ Աւետարանս յիշատակ Շահգառին հոգւոյն, և տարեալ եղ իւրեանց գեղն՝ յԵրիախօնուխ, յերկիրն Բասենոյ, ի թվականիս ՌՃԹ (1660): Ո՛վ որ հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս:

## 2. Հետագայի

(Կից գրչի հիշատակաբանին, նոտրգիր). Որ տվաւ Յակոբն ի Տէր Պետրոսին յիշատակ յիւրանց հոգոյն Յակոբին, յոր կողակցին՝ Սառին, որդի՝ Կօրկին, յեղբայր՝ Վարսիմի: Ո՛վ որ ծախէ կամ գարավէ, ԳՃԿԶ հայրապետաց նզոված եղիցի, մաս Յութայի աոցէ և զպատեհիոս Կայսեն յառ|||

12

Մ Ա Ս Ն Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի

ԺԵ—XV

Թերթ՝ 4: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 19×13: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բողորգիր: Տող՝ 26:

Վիճակ՝ բավարար:

Ծանոթ. պատկանում է Ախուրյանի շրջանի Զրառատ գյուղի բնակչուհի ութսունամյա կանում Արենի Մինասյանին: Բերված է Մուշից 1915 թ. գաղթի ժամանակ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—4բ Աւետարան քառ Յովհաննու (ԺԵ, 17—20):

13

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Աղբամար

ՊՂԸ—1449

Գրիչ և ծաղկող՝ Գրիգոր: Ստացող՝ Մկրտիչ:

Թերթ՝ թերթակալված չէ: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 25,7×16,6: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բողորգիր: Տող՝ ? : Կազմ՝ կաշեպատ տախտակ. առաջին փեղկի վրա մետաղյա 7 խաչեր: Պահպանակ՝ 2+2, մագաղաթ:

Մանրանկարչություն՝ Ավետում, Ծնունդ, Քառասնորյա գալուստ, Մկրտություն, Պայծառակերպություն, Հարություն Ղազարու, Մուտք Երուսաղեմ, Վերնատուն, Մատնություն, Խաչելություն, Հարություն, Համբարձում, Հոգեգալուստ: Ավետարանիչներ՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես: Խորաններ՝ 10, կիսախորաններ՝ 4, լուսանցազարդեր և զարդարքեր:

Վիճակ՝ բավարար:

Ծանոթ. Պատկանում է Հրազդանի Զրառատ Յաղամասի բնակիչ Վազգեն Համազասպի Բեգլարյանին: Վ. Բեգլարյանը ձեռագիրը ժառանգել է իր պապերից, որոնք գաղթել են Պարսկաստանի Խոյի շրջանի Աղաշուղ գյուղից անցյալ դարի սկզբներին: Հայտնի է «Կարմիր Ավետարան» անունով:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ.

### 1. Գրչի

Եւ արդ, ես յետինս ի որչաց և անարժանս ի կարգաւորաց՝ սուտանուն Գրիգոր, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. Յոր կոչումն կոչեցար, ի նմին կացչիք: Եւ արդ, իմ ոչ բերելով գայսպիսի վրտահոսութիւն, այլ ունայն յամենայն բարեաց և թափուր, այլ յուսամ ի մարդասիրութիւն Աստուծոյ, զի յիմ բազում մեղացն թողութիւն արասցէ:

Արդ, գրեցաւ Աւետարանս ի կղզիս Աղբամար, ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս և Սուրբ Նշանացս, ի հայրապետութեան Տեառն Զափաթայի և ի թուին Հայոց ՊՂԸ (1449), ձեռամբ յոգնամեղ Գրիգոր սոսկանուն բահանայի: Եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղացն ցնորիւր պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատանաւք գրեաց անարժան ձեռօք իմովք, կենաւք տառապանաւք և բազում պանդրխտութեամբ ի դառն և ի վշտաբեր ժամանակիս:

Արդ, որ ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ և ընթերցմամբ, յիշեսչիք յաղաթս ձեր գյառաջ յիշեցեալ ստացող զՄկրտիչն, և զեղբայրն իւր՝ զՄելիքէսէք, զհայրն իւրեանց՝ զԲաղդասարն, և զմայրն՝ Շնոհատրն, և զթոռունք իւրեանց՝ զՍարգիս սարկաւազն, և զեղբայրն իւր՝ զՅովանէ, և զհաւրեղբաւք որդիքն իւր՝ զԿիրակոսն և զԹումայ, և զամենայն արեան մերձաւորս առ հասարակ յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ յիւր միւս անգամ գալուստն. ամէն:

Ընդ նոսին և զանպիտան ա||| Գրիգոր գծագրող սորա, և ծնօղին մեր՝ զԽաչիկ... (մեկ էջ անուններ):

### 2. Հետազայի

ա. (Առաջին էջի վրա ՌՃԿԹ (1713) քվականի անընթեռնելի հիշատակագրություն):

բ. (Վերջին էջի վրա). ԶՎերջին ստացող սուրբ Աւետարանիս՝ զՄերիչան, որ ազատեաց դսուրք Աւետարանս ի յանաւրինաց՝ յիշատակ իւր և ծնօղացն. հարն՝ Մանուկին և մաւրն Մեղուշին, կնոջն՝ Գաւգալին, որդոցն՝ Մաւատին...

գ. ... Կա[ղ]մեցօ սուրբ ուխտս ի Գարամանաց Սուրբ Աստուածածնայ  
և Սուրբ Գեորգա հայրապետութիւն Տէր Հէրապեան, թվ. ՌԿԸ (1619):

դ. Ես յՈրմու Գարդապատու անարժան Տէր Ներսէս, որ փախար Սումայ  
ի գիւղն Գուլանիկ: Գիրեցիմ թվին ՌՃՂԶ (1746)-ին եր, մայիսի 2 (6) ամ-  
սուն եր. ամէն:

## 14

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Գրնդրանց գյուղ

ՌՃԺ—1667

Գրիչ Վարդան: Սաացող՝ Տէր Մելքէսէթ:

Թերթ՝ թերթակալված շէ: Նյուր՝ թուղթ: Մեծութուն՝ 13×9,8: Գրութուն՝  
երկսյուն: Գիր՝ բուրբուր: Տող՝ 22: Կազմ՝ արծաթապատ, վրան 2 խաշ՝ մա-  
կազրությամբ:

Պատառիկ-պահպանակ՝ սկզբից 4 թերթ մազազաթ լատիներեն բնագրով  
և 4 թերթ թուղթ՝ սրբերի տպագիր պատկերներ, հետագայում գունավորված  
(S. Augustin, S. Eloy, S<sup>te</sup> Elisabet Reine, Sauueurs du Monde, Iesus  
Chrstus, Mater Dei, S<sup>t</sup> Iacinte, S<sup>t</sup> Pierremartin, Iesus Maria, Agnus Dei,  
S<sup>te</sup> Helene, S<sup>te</sup> Agnes, Bonus Pastor, Sainct Iosep): Վերջից 2 թերթ  
հունարեն բնագրով մասն Ավետարանի:

Մանրանկարչություն—Ավետարանիչներ՝ 4: Կիսախորաններ՝ 4: Լուսան-  
ցազարդեր և զարդագրեր:

Վիճակ՝ բավարար:

Ծանոթ. Պատկանում է Հրազդանի շրջանի Կաքավաձոր գյուղի բնակիչ  
Գրիգոր Սարգսի Գրիգորյանին (81-ամյա): Մնողները գաղթել են Ալաշկեր-  
տից: Փառանգել է իր հողերական եղբորից: Գրիգորի տղան՝ Ռազմիկ Սար-  
գրսյանը, բնակվում է Երևանում (Թամանցիների փողոց, № 17, մուտք № 10,  
բնկ. № 129, հեռ. № 46—15—36): Չեղագիրը հայտնի է «Շեկ Ավետարան»  
անվամբ:

## ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Աւետարան ըստ Մատթէոսի:

բ. Աւետարան ըստ Մարկոսի:

գ. Աւետարան ըստ Դովասու:

դ. Աւետարան ըստ Յովհաննու:

## ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆ

## 1. Գրչի

(Վերջում). Շնորհօք Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի աւարտեցաւ սուրբ  
Աւետարանս ձեռամբ բազմամեղ Վարդան կրօնաւորի, ի գիւղս, որ կոչի  
Գրնդրանց, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Յովանիսին, ի



լրնաիր օրինակէ, որ է ժածկանց սուրբ Աւետարան, ի հայրապետութեան Հայոց Յակոբ կաթողիկոսին, ի թվականիս Հայոց ՌՃԺ (1661): Ո՛վ որ հանդիպի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զբստացող սուրբ Աւետարանիս՝ զանարժան բահանան զՏէր Մելիքէք և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ զալուստն. ամէն: Հայր մեր:

## 2. Հետագայի

ա. (Գրիշի հիշատակարանից հետո). Կրկին անգամ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Չիբաբեց մօր ||| (2 բառ եղծված) միւսին ի[ւր]ոյ՝ Սալիւնասն և զորդիք՝ Քամալն, Մեսոբ, Շաղօն, || որ զԱւետարանս կրկին նորոգեց և եզ յիշատակ հոգոյ ի[ւր]ոյ և ի ծնողաց՝ Վարդանին և Շաղբէզուն, Նազարին և ի[ւր]ոյ ամենայն արեան մերձաւորաց, որ կացցէ անջինջ յիշատակ ի դուռն Մղակոյ Սուրբ Աստուածածին և Սուրբ Յակոբին: Ով որ յանտէնի ծախելով կամ գրաւելով, թէ՛ մերոց, թե՛ յոտարաց, պատոյհասն յԱստուծոյց առցէ. ամէն: || Գարցեալ մուս ա[ն]գամ յիշեցէք ի Քրիստոս զՄուրաղ և զիոր որդիք, որ եզ մի եղ ի դուռն Սուրբ Աստուածածին, Սուրբ Յակոբին անվաղջան յիշատակ: Թէ՛ զող տանի, գէլն ո[ւ]տայ՝ մէկ էլ տայ, թէ դախան զէն բերէ՝ մէկ էլ տայ, թէ չբերէ՝ շեմ ի տար:

բ. (Կազմի գույգ խաչերի վրա). «Մարգարիտ» և «Խանփարի»:

15

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕԹԻՑ

Յղիագարու վանք

ՌՉԿ—1635

Գրիշ՝ Կարապետ եպոս.: Սաացող՝ Մխիթար բճյ:

Թերթ՝ 238 (ամբողջական վիճակում ունեցել է առնվազն 312 թերթ):  
Նյութ՝ թուղթ: Մեծութուն՝ 11,8×9,2: Գուրջուն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր:  
Տող՝ ? : Կազմ՝ զրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ, աստաղ՝ ? :

Մանրանկարչություն—Կիսախորան՝ 5ա, 31բ, 52բ, 98բ, 125ա, 166բ, 182ա, 195ա, 227ա: Լուսանցազարդեր և զարդազրեր (վերնագրերը՝ կարմիր):  
Վիճակ՝ շատ թերթեր պատուված հանված են, այլը՝ մասամբ, 201 և 202 համարակիր թերթերից մնացել են ներքին եզրերը միայն:

Մանր. Պատկանում է երևանարնակ (Կամոյի փողոց, № 44) բժիշկ Սամսոն Սուրենի Մելիք-Իսրայելյանին: Ժառանգել է հորից՝ պրոֆ. Սուրեն Սամսոնի Մելիք-Իսրայելյանից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 1ա—151ա. [Գիրք Սաղմոսաց. սկ. 1թ, 20]. «Անձինք մեր համբերեցին Տեառն...»:

ա. 151ա—153ա. Խոստովանութիւն Մանասեր քազաուրին, որդու Սեղեկիայ, որ ողորմեաց զմարգարէն Եսայի—Տէր ամենակալ, Աստուած Աբրահամու...:

բ. 153բ—156բ. Աւրհնութիւն երից մանկանց. զկնի այսմաւորացն աւել  
երեցն—Աւրհնեալ ևս Տէր Աստուած հարցն մերոց...

գ. 156բ—157բ. Աւրհնութիւն Մարիամու Աստուածածնին—Մեծացու-  
ցէ անձն իմ զՏէր...

դ. 157բ—158բ. Աւրհնութիւն Զաբարիայի՝ հօրն Յովհաննու Մկրտչի—  
Աւրհնեալ Տէր Աստուած Իսրայելի...

ե. 158բ. Աղաւթ և աւրհնութիւն Սիմէոնի Ծերունոյն—Արդ, արձակեա՛  
ղ ծառայս քո...

2. ա. 158բ—166բ. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղ[եց]եաց  
Հայաստանեաց, որ կատարի ի մէջ գիշերի՝ ի դէմս Հօր Աստուծոյ. արարեալ  
Լուսաւորչին Գրիգորի և Սահակա հայրապետին և Մեսրոպա վարդապետին  
և Գիտա և Յովհաննու Մանդակու[նոյն...] (բնկած մեկ թերթ):

բ. 166բ—181բ. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից սոսուտու ժա-  
մուն, որ կատարի ի դէմս Որդոյն Աստուծոյ, յորմէ ըմբռնեալ եղև ի հրեից—  
Լցար սոսուտու ողորմութեամբ քո...

գ. 181բ—185ա. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից արևագալի ժա-  
մուն, որ կատարի ի դէմս յարութեանն Քրիստոսի և երևման աշակերտացն—  
Նղիցի անուն Տեանն արհնեալ...

դ. 185ա—188բ. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն,  
որ կատարի ի դէմս Հոգոյն Աստուծոյ հոգման, և ի դէմս Նախամօրն հա-  
շակման և ազատութեան Քրիստոսի—Աւրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճըշ-  
մարիտ...

ե. 188բ—191բ. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից վեցերորդ ժա-  
մուն, որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, այլ և ի դէմս շարշարանացն և խա-  
շելութեան Որդոյն Աստուծոյ—Աւրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ...

գ. 191բ—195ա. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից իններորդ ժա-  
մուն, որ կատարի ի դէմս Որդոյն Աստուծոյ, այլ և մահուանն և բանական  
հոգոյն աւանդման—Աւրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ...

է. 195ա—223ա. Աւրհնեալ արկանելոյ սպաս եկեղեցոյ—Յորժամ կամեսցի  
բահանայն պատարագ մատուցանել...

բ. 223ա—227ա. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից խաղաղական ժա-  
մուն, որ կատարի ի դէմս Որդոյն Աստուծոյ, այլ [և] ի դէմս բանին, որ եղաւ  
ի գերեզմանի և էջ ի դոնխն և խաղաղութիւն արար հոգոյն—Աւրհնեցէք  
զՏէր յամենայն ժամ...

բ. 227ա—237բ. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից հանգստեան ժա-  
մուն, որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, զի պահպանողական աջով... պա-  
նեսցէ զմեզ խաղաղութեամբ ի խաւար գիշերին—Առաքեա՛, Տէր, զլոյս քո և  
զճըշմարտութիւն քո...

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

### 1. Գրչի

ա. 98բ. Գրեցաւ Երզարանս մարգարէին Դաւթի աստուածախաւս և քաղց-  
րահամ սաղմոս ձեռամբ փծուն գրչի՝ նուաստ Կարապետ եպիսկոպոսի, ի դուռն

Սուրբ Առաքելոցն, յիշատակ Տէր Մխիթարին, և ծնաւդացն՝ Մելիսեօն և Շուշանին, և սնուցողին իւրոյ՝ Շահումին: Ի թվին ՌՁԴ (1635):

բ. 130ա. Ո՛վ ընթերցող, զգրող սորա յիշեա ի Տէր:

գ. 153ա. Գրեցաւ Սաղմոսարանս ձեռամբ մեղսաներկ Կարապետ եպիսկոպոսիս ի դուռն Եղիազարու վանացն յերկոտասան Սուրբ Առաքելոցն, ի թվին ՌՁԴ (1635), փետրվարի ԻԸ (28), Յովհաննու Երուսաղեմա հայրապետի տօնին:

դ. 158բ. Աւարտեցաւ Սաղմոսս Դաւթեան Քաղոցի Ի (20) և հոռմայեցոց մարտի Բ (2), ի թվականութեանն Հայոց ՌՁԴ (1635) ամեն, ի դուռն Սուրբ Առաքելոցն, յիշատակ Տէր Մխիթարին.

ե. 166ա. Ո՛վ ընթերցողք, զգրողս յիշէք և քստացողն:

զ. 181բ. Յարութիւնն Քրիստոսի, որ եղև փրկութիւն աշխարհի, փրկեացէ զմեզ և զստացող սորին:

է. 223ա (Խորագրից հետո). ՌՁԴ (1635):

ը. Փա՛ռք... որ ետ զօրութիւն տկարութեանս իմոյ հասանել յաւարտ Սաղմոսարանիս՝ հոգնուագ երգույս Դաւթի, ի լուսաւորութիւն հոգւոց և ի պայծառութիւն մանկանց եկեղեցւո, ի խնդ|| (238ա) բոյ բարեմիտ և հեղահոգի բահանային Մխիթարի, որ ստացաւ [զսա ի] յընչից իւրոց և յայլոց տուողաց, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ և որդւոց նորին: Գրեցաւ սա ի թուականութեանն Հայոց ի ՌՁԴ (1635) ամին, ի դուռն Եղիազարու վանացն, որ Երկոտասան Սուրբ Առաքելալ ասի, ձեռամբ յոգնամեղ և մեղսաթաւալ անձինս Կարապետ եպիսկոպոս, յիշատակ Տէր Մխիթարին և կենակցին իւրոյ՝ Շահապահին, և դեռարոյս որդւոյն... (տեղ է թողնված՝ լրացնելու համար), և զորանչին իւրոյ՝ Կուլին և կոշի բուերն՝ Շահրեկան, եղբորն՝... (այլ ձեռով):

Արգ, որք հանդիպիր սմա ուսանելով կամ արինակելով, յիշեսչիր սրբալի մտօք ի մարբափայլ յաղաթս ձեր|| (238բ) ||| կինն Շահումն, և այլ արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զննչեցեալսն առ Քրիստոս, [ևս ...] զեղկելի գրողս զԿարապետ եպիսկոպոս, և զհայրն իմ՝ զԶատիկն և զմայրն իմ՝ զՇալիստան, և զայլ ամենայն մերձաւորսն՝ զկենդանիս և զհանդուցեալս ամենայն ննչեցելովք. յիշեսչիր առ Քրիստոս եւ Քրիստոս որ առատն է ի տղրս ողորմութեան, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալուստն իւրում. ամէն: Հայր մեր որ յերկինս:

Կնեաղբոյձ՝ 52բ, 237բ «Քրիստոսի ծառայ Տէր Սարգիս, ՌՃԽ (1691)»:

## 2. Լուսանցագրութիւններ

1. 150բ (Ներքին լուսանցում). Բանն ի բանաւորէն բան ||| ի մախաղէն ||| շու:

2. 151ա Անձն ի շուրջ կու գայր, բարն երկաթն կու ծակէր:

3. 199բ (Պատոված ներքին լուսանցում պահպանվել են երկտող գրութեան աշակողմյան բառերը). ||| զի յառաջ. Տէր Աստուած մեր, կեցո: ||| այլ արինակ է. լաւ միտ դիր:

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Յոհանավանք

ՌԼԲ—1583

Գրիչ՝ Ովանէս, Ղուկաս արեղայ: Մաղկող՝ Ղուկաս արեղայ (գրիչը): Սաա-  
ցող՝ Պարոն Միրզայջան:

Քերք՝ 308. շորված՝ 17բ—18ա, 100բ—102ա, 155ա, 244ա, 307: Պրակ՝  
 $1 \times 4 + Ա - ԻԵ \times 12$  (ԻԵ՝ 7)  $+ 1 \times 4$ : Նյութ՝ թուղթ: Մեծուքյուն՝  $25 \times 18,5$ : Գրու-  
քյուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21—22: Կազմ՝ դրոշմազարդ շագանակա-  
գույն կաշի, միջուկը տախտակ, Ա. փեղկին մետաղյա խաչ՝ 5 կոստղերով, Բ  
փեղկին 2 կաշվե ելուստ, աստառը՝ նարնջագույն թավիշ:

Մանրանկարչություն— տերունական նկարներ՝ 20 և խորաններ՝ 10 (1ա—  
17ա), ավետարանիչներ Մատթեոս՝ 18բ, Մարկոս՝ 102բ, Ղուկաս՝ 155բ, Հով-  
հաննես՝ 244բ, կիսախորաններ, լուսանցազարդեր, զարդագրեր: Գույներ՝ կար-  
միր, կապույտ, կանաչ, դեղին, սև, մանուշակագույն:

Վիճակ՝ բավարար, խունացածության և ցեցակերության բազում հետքե-  
րով:

Մանր. Ավետարանս պատկանում է Մեծամոր (Նախկին Ղամարլու)  
գյուղի բնակչուհի Աստղիկ Աղաջանյանին: 1918 թ. գաղթել է Սուրմալուից և  
հաստատվել այստեղ: Ըստ նրա վկայության, Ավետարանս եղել է իր ամուս-  
նու՝ Սուրմալուի Հյուսեյն գյուղի բնակիչ Դավիթ Գաբրիելյանցի (այժմ հան-  
գուցյալ) նախնիների սեփականությունը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ա. 19ա—100ա. Աւետարան ըստ Մաթթեոսի:  
բ. 103ա—154բ. Աւետարան ըստ Մարկոսի:  
գ. 156ա—243բ. Աւետարան ըստ Ղուկասու:  
դ. 245ա—302բ. Աւետարան ըստ Յովհաննու:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## 1. Գրչի

- ա. 10ա. Զանպիտան գրիչս և նկարիչս Ղուկաս յիշեցէք առ Տէր:  
բ. 19բ. Վա՛յ ինձ, թանաքիս համար թքանէք զիս, թէ հայհոյէք:  
գ. 23բ. Վա՛յ ինձ, Քրիստոսս, քեզ մեղայ (նման՝ 26ա, 37ա):  
դ. 36բ. Վա՛յ ինձ, Քրիստոսս, ողորմեայ ինձ՝ Ովանէսիս:  
ե. 44ա. Թուխսք լաւ չէ կոկած, անմեղադիր լեր:  
զ. 49ա. Վա՛յ զիս, որ չեմ բաւական այս բանիս, մեղաւոր Ովանիսիս:  
է. 58ա. Վա՛յ ինձ, թէ ո[ն]ց լինիմ Վ (գ)երիս,  
Ճանճերն առին ի հողիս,  
Այլ չթողին ոսկերացս միս,  
Միթէ Աստուած անէ մեզ լիս:

Պարոն Զատիրեկն է:

- բ. 59ա. Պարոն Շահումաղէն յիշեցէք, որ բազում սովացուց մեզ:  
բ. 59բ. ԶՈւնպրիշատն յիշեցէք, բազում ճշաշ էրեր:

ժ. 61բ. Ովանէս:

ժա. 64ա. Պարոն Զատիրէկի[ն] յիշեցէր: Վա՛յ զիս, Ովանէս, զրիշս յիշեցէր:

ժբ. 64բ. ԶՅուհանէսն յիշեցէր, որ իմ է հայր:

ժգ. 65բ. Ես Ովանէս, որ եմ յՈւրծա Սալարսզ, մեղար:

ժդ. 73բ. Վա՛յ զիս, մի՛ մեղադրէր, մոնթ հենց արաւ զուս տանելիս: Պարոնաէր Ոսկան էրեկ հաց մեծաց ած. փաւ է:

ժե. 79ա. Վա՛յ մեզ, որ Պահարուլուն խիստ ա նեղել զմեզ:

ժզ. 79բ. Մեղ թանարին չէ, թիթիայ ու նշշիտին:

ժէ. 100ա. Պարոն Զատիրէկի մեղքն բարձցէ ի դառն աշխարհէ. ամէն: Պարոն Շահումաղէն յիշեցէր: Ովանէս զրիշս յիշեցէր:

ժը. 117ա. Թուխթս չէ լաւ, անմեղադիր[ր]: Ովանէս, վա՛յ իսև Ովանէս, իմ հայրն Ոհանէս:

ժր. 120բ. Վա՛յ թխթիս դարան:

ի. 124ա. Աստուածատուրն, որ մեզ Ա (1) ճաշ էրեր, աւրհնեա՛:

իա. 173բ. Տէր Յիսուս Քրիստոս, ըս աստուածային մարդասիրութեամբ որսպէս զարդարեցեր ԲԺ-ան վարդապետքն ի սուրբ արքայութեան ըս և արժանի արարէր, այնպէս արժանի արասցես զՄիկայէլ վարդապետն ԲԺ-նից, որպէս մայր ի վերայ որդոյ խնամս արկէ, այնպէս ի վերայ մեր զբրգուեսցէ, և բազում անգամ ճաշակեաց մեզ սիրով ի վերայ Աւետարանիս:

իբ. 302բ Փա՛ւր...|| 303 ա) Շնորհիւ Տեառն Աստուծոյ և ողորմութեամբ նորին սկսայ և Սուրբ Հոգովն կատարեցի զշորեքեան Աւետարանս, որ է բան Աստուած և սուրբ անարեքնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ նուաստ և բազմավէր անյիշելի Ղուկաս ի յանկ և ի յաւարտ հանի զսուրբ Աւետարանս ի յընդիւր արինակէ լաւ, ի յայսմ դառն և ի շար ժամանակիս, զոր արինակ անարեքն յազգն Աւսմանեցոյն եկեալ յերկիրն յԱյրարատեան և բազում վնաս արար և բազում սրախողխող եղեալ և ԿՌ (60000) հոգի գերի և սուրն տարեալ:

Եւ արդ, շորից Աւետարանացս բազում արինակաւ ցուցանի, զԴ գեաւ Ելանէ...|| (304ա) Ուստի տեսեալ սմա անճառ փրկագործ անարեքնութեան խորհուրդ, զովելի և մարբամիտ արքայ արքայիդ, իշխան իշխանաց, պարոն պարոնաց պարոն Միրզաչան և ամուսին իմ՝ պարոն Խատիճայ Սալքան, և որդին իմ՝ Նարինթէկ, և կողակիցն իւր՝ Գուլաղէն, և կ[րտ]սեր որդին՝ Ատիրէկ, կողակից Խոնձխարուն, և զուստր իմ՝ Գուլթէղէն, և կ[րտ]սեր եղբարն իմ՝ պարոն Գալուստն <Գալուստն> և կողակից Մարիանն, և միւս եղբայրն՝ պարոն Յոհանէս, ամուսին՝ Ատիփաշէն, որդին՝ Թաղբիգուլին, և միւս եղբար՝ Նեւսէս, <կողակից> կողակից՝ Խոնքիփաշէն, որդիքն՝ Ղուլիջան, Սիմոն-բէկ, էլաղէն, որդին՝ Սատաղէն, եւ թոռներն իմ՝ Ամիրբէկն, Ազիզբէկ, Աբգումբէկ, Անիրբէկ, և ըսյրն իմ՝ Գալուր, Սալքան, Եղիսաբէր, որ աւարտեցաւ սայ ի դառն և ի նեղ ժամանակիս և ի || (304բ) թվականիս Հայոց ՌԼԲ (1583): Եւ գրեալ էր Մաթէոս գլխէն մինչև Մարկոս գլխի այն տեղն, որ ասէ. [Զին]չ տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ, և զմնացեալն Գ զլուխ ետ գրել պարոն Միրզաչան ձեռամբն Ղուկաս արեղանին. ամէն:

Գարձեալ յիշեցէր պարոն Միրզաչան և պարոն Գալուստն, որ չերմեռանդ սրտի[ւ], հաստատուն յուսով, կատարեալ հաւատով ցանկացան ի այս աստուածախաւս և վարդափթիթ բուրաստանիս: Եւ կատարեցաւ սուրբ Աւետարանս:

րանս ի դուռն հոյակապ և գ[մ]բեթաձև և կաթողիկաշէն Յոհանավանուց Սուրբ Կարապետիս, Սուրբ Վարշամակիս, Սուրբ Ստեփանոս Եսայավկային և այլ ամենայն սրբոց, որ ա[ս]տ կան հա[ւ]աքեալ, բերեալ սուրբ Աւետարանս ի գիւղայքաղաք Կարբի և ետ ի դուռն Սուրբ Աստուածածնին՝ յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց՝ կենդան[ե]աց և ննչեցելոց. ամէն:

Գարձեալ յերես անկ[ե]ալ աղաշեմ զձեզ, որք հանդիպիք սմայ տեսութեամբ, արինակելով կամ զաղափարելով, յիշեցէք զվերայգրեալս՝ պարոն Միրզազան և պարոն Գալուստն, որ ցանկացան ի յայսմ վարդափթիթ, լուսափայլ Աւետարանիս, ետ յիշատակ ի դուռն Կարբոյ Սուրբ Աստուածածնին՝ յիշատակ ինձ և ծնաւդ[ացն] և ամենայն արեան մերձաւորացն. ամէն: Աստուած զէն քահանայն և ժողովուրդն արհնէ, որ ուղիղ սրտիւ, լի բերանով Աստուածողորմի ասէ, և Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալստ[ե]անն. ամէն: Յիշէք զՄիքայէլ վարդապետ, որ բազում աշխատանք արաւ ի գրելն Աւետարանիս վերայ մեր:

Վա՛խ, վա՛խ, խիստ նեղացայ ի գրելն և ի նկարելն Աւետարանիս, ի դառն և ի նեղ ժամանակիս Ռ (1000) տեղ փոխեցի: Վա՛յ հաց, վա՛յ հաց, բանի՛ թողուս:

## 2. Հետագայի

ա. 305բ. Զվերջին գրնաւդ սուրբ Աւետարանիս՝ ըզբարեմիտ և աստուածասէր տանուտէրն Մարտիրոսն, որ ստացաւ ըզսայ ի հալալ վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր և ծնողացն, հարն՝ Զանաղին, և մարն՝ Մէլիփին, Մարտիրոսին, և եղբարն՝ Կիրակոսին: Արդ, աղաշեմք զձեզ, սուրբ քահանայք, յորժամ կարդէք զսրբազան Աւետարանն, յիշեցէք ի մարբափայլ յաղաթս ձեր ըզգծաւդ սուրբ Աւետարանիս՝ զՄարտիրոսն և զծնաւդան իւր՝ զԶանաղէն և զմայրն իւր՝ զՄէլիփն, և զկողակիցին իւր՝ ըզՔամամն և որդիքն՝ զՊօղոսն և Պետրոսին, և մեծ եղբայրն իւր՝ զԿիրակոսն, [որ] առ Աստուած հանգուցեալ է, և փոքր հանգուցեալ է Կիրակոսն. արարիչն Աստուած երկայն աւուրս, հանգուցեալ է, երկայն աւուրս պահէ. ամէն (այսպես):

Գրեցաւ սուրբ Աւետարանս < յիշատակարան սուրբ Աւետարանս > յիշատակ Մարտիրոսին և ծնողին, հօրն՝ Զանաղին և մօրն՝ Մէլիփին, և եղբարցն՝ հանգուցեալն Կիրակոսին, և հանգուցեալն Կիրակոսին. ամէն:

Թվականին (աղճատված, հավանաբար՝ ՌՃԼԶ (1687)):

բ. 306ա. Այլ և կրկին և վերստին յիշեսցուք վերջի նորոգող սուրբ Աւետարանիս, այլ և ի նոյն ազգեն ||| ի Սարգիս, մեծ որդին՝ Յովակիմն, կողակիցն՝ Հուրիսանն, միւս որդին՝ Գանէլն, կողակիցն՝ Գարանն (լուսանցքում), թոռն՝ Արզումբէկ, եղիպարն, դուստրն՝ Նուպարն, նա ևս Գանէլ, կողակիցն՝ Գօլուաթն, բուրն՝ Վարդիթ[ե]րն, Մայրանն և Գեարանն:

Յիշեսցուք կր[տ]սեր որդին՝ պարոն Գրիգորն, կողակիցն՝ Խանգաւէն և Հէրիֆնազն, անդրանիկ որդին՝ Պետրոս խոհեմամիտն և Սարգիսն, Սանյրոսն, դուստրն՝ Մարգարիտն, Հօսօմսիմէն, Յաննէն, Մայրանն: Սուրբ Աւետարանս օրհնէ զՊետրոս շարպին (շալապի՞ն). նա նորոգեալ ետ սուրբ Աւետարանս: Օրհնեալ լինի Պետրոսն և կողակիցն՝ Գեարան խաթունն:

Թվին ՌՃԶԳ (1734) յունիս ամսո ԻԳ (24). երանելիք հայրք իմ և եղբայրք, յիշեցէ[ք] զմարբափայլ յաղօթս ձեր թուական գրող և վերակացու

կազմող սուրբ Աւետարանիս՝ Աստուածատուր տխմար իբր քահանայ ևս յիշէք ի Տէր Քրիստոս. ամէն: Հայր մեր որ: ժամանակն առատ է, բայց հայք՝ գերիք բազումք ի ձեռս Փաբաւոնի: Վա՛խ, վա՛խ, հայք կան ի մէջ տարակուսի:

Ղզլբաշն դեռևս ջանայ [դ]առնալ ի յերկիրն իւր, զի ազատեսցէ:

306 բ. Հայրք մեր և եղբարք, գիտասցիք վե՛հ ունիմք հոգևորական մխիթարանք առ հայրն մեր սրբազան կաթողիկոսն Տեառն Արաքսամ զարդարեալ հոգի հովիւն մեր, և սուրբ Երուսաղէմայ յառաջնորդ Տեառն Գրիգոր աստուածաբանութեան վարդապետաց վարդապետն, և բից երանեալն և Կոստանդնուպօլսոյ պատրիարդ Յովանէս վարդապետ քաջ բարունին Բաղիշեցի, և սուրբ գահին մերոյ և յառաջնորդ Յակոբ աստուածաբանութեան հեղահոգի վարդապետի՝ քաջ և հոնորի յիշեցչիք ի մաքրափայլ յաղօթս ձեր ի Տէր. ամէն:

Յիշեցէք Կարբու Սուրբ Աստուածածնի եկեղեցո քահանա աւաքէրէց Տէր Աստուածատուրն, Տէր Ազարիէն, Տէր Յարութիւնն, Տէր Ղևվոնդն, Տէր Սարգիսն, Տէր Կիրակոսն, լուսար[ար] Տէր Սարգիսն, ժամկոչ Գանէլն. յիշեսցիք ի սուրբ և մազուր յաղօթս ձեր. ամէն:

306բ. Աւետարանիս կազ[մ]ող և նորոգող Յոհաննավանցի վարդան արեղայս [յիշեցէք], և դուք յիշեալ լիջիք յառաջի Քրիստոսի:

17

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՁԺԸ—1469

Գորի

Գրիչ՝ Գրիգոր:

Թերք՝ 302: Պրակ՝ Ա.—ԻԵ+4 թերթ: Նյութ՝ մագաղաթ: Մեծութուն՝ 14×20,5: Գրութիւն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր, գլխագրերը՝ սակի: Տող՝ 20: Պահպանակ՝ մագաղաթ 2: Կազմ՝ սև թավշով պատված դրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ, մետաղյա անկյունակալներով և զարդերով:

Մանրանկարչութիւն՝ Ավետարանիչներ, խորաններ, լուսանցազարդեր և զարդագրեր:

Մանր. Ձեռագիրս պատկանում է Արթիկ քաղաքի բնակիչ Տիգրան Հակոբյանին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Գրչի

ա. 97ա. Կամաւ ամենակալին Աստուծոյ Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, ևս անարժան Գրիգորս, անուամբ միայն արեղա, ետու յաւժար կամաւք զիմ հոգոյ յիշատակ սուրբ Աւետարանս ընծա ի դուռն Սուրբ Աստուածածնին Քումանենց Կարողիկէիս, ձեռամբ պարոն Զաբաբիային, զի որք կարգան կամ արինակեն, միով Աստուած ողորմախ աւգնական լինին վերայգրելոյն ի վերջի յիշատակարանն: Եւ որ ոք հեռացնէ զսուրբ Աւետարանս ի դրանէ Կարողիկէիս, կամ զողանալով, կամ ծախելով, կամ գրավելով, կամ յաշխարհականաց, կամ եկեղեցականաց՝ մեր մեղացն պարտական լիցի:

Ի թվին 269 (1469): Եւ էին ի ժամանակիս կարգաւորք ի դուս սուրբ եկեղեցոյս՝ Բարսեղ, Յովանէս, Մարգարէ ծերք, և փորունք, բարիք և հլուք՝ Ներսէս, Աստուածատուր, և Խաչատուր, և սարկաւազ Մարտիրոս և Յովանէս, զոր Աստուած բարով վայելել տացէ, և յետ աստեացս զերկնից արքայութիւնն պարգևեցէ. ամէն: Հայր մեր:

Յիշեցէք զբարի հոգի վարպետն զՇահրիարէն, որ Աւետարանիս զսեկն շընորհեաց: Քրիստոս զիւր արքայութիւնն շնորհէ Շահրիարին:

բ. 298ա. Փա՛ռք...// (300բ) Գրեցաւ սայ ի թվականութեանս Հայոց 269 (1469) ձեռամբ մեղսաներկ և փցուն գրչի Գրիգորի՝ անուամբ միայն արեղայի, ի զեղարաղարս Գորի, ընդ հովանեաւ զմբեթարդ Կարողիկէի Սուրբ Աստուածածնի, վասն յիշատակութեան հոգոյ իմոյ, հօր իմոյ՝ Չարեասի, և մօր իմոյ [յ]՝ Վարդեաիկնա, և եղբարց և ամենայն արեան մեր [ձ]աւորաց իմոց, և ամենայն երախտաւորացն, տեանն իմոյ Տէր Ատեփանոս արքեպիսկոպոսին՝ աթոռակալի Սուրբ արաբելոյն Բարդուղիմէոսի, և վարդապետացն իմոց՝ Յովանէս կուսակրօն արեղայի, և Ատեփանոսի, և Յակոբի, և այլ մեծի և փոքու: Եւ երախտաւորացն մերոց, որք ուտելով և ըմպելով, սգեցուցանելով և հանգուցանելով աշխատեալ են վասն մեր՝ որք հանգուցեալք և որք կան այժմ, ողորմեացի Տէր և շնչեցէ զյանցանս նոցա, և երկնից արքայութեան արժանաւ// (301ա) որս արասցէ. ամէն:

Այլ և զՏէր Դուկաս արքեպիսկոպոս Հախրատու, որ բազում սիրով ընկալաւ զմեզ ի յարկս իւր և մխիթարեք զմեզ առատապէս, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեցէ զնա հանդերձ պարոն եղբարքն իւրով՝ պարոն Մուրադովն, պարոն Զաֆարիովն և պարոն Քարիմշաովն, եւ յետ աստեացս ելանելոյ՝ զերկնից արքայութիւնն պարգևէ ամենեցուն. ամէն:

Նա և զեղբայրս իմ ըստ հոգոյ զՅոհանէս սրբասէր արեղա և բաշ քարտուղար, որ մինչև ի խորին ծերութիւնն ընդ աստուածաին դրոց դատեցաւ, յիշեցէք ի Տէր, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն:

Այլ և Զաֆար էրէց և զփակակալ սուրբ Կարողիկէիս զԲարսեղ սրբասէր քահանայն, և զՅովանէս մաքրամիտ քահանայն և զայլ մինդէն եղբարքս յիշեցէք ի Տէր, և Աստուած զձեզ յիշէ. ամէն: Նա և զդեռաբուսիկ ձեռնասուն աշակերտս իմ// (301բ) զՄարտիրոս դպիրն, որ բազում աշխատութեամբ ծառայեր մեզ, և ձեռնատու լիներ ի գործ արուեստիս, զոր Տէր Աստուած պահանեցէ զսայ ամենազօր աջովն իւրով մինչև ի խորին ծերութիւնն. ամէն:

Այլ և զիս՝ զանպիտան ծերունիս միք մոռանար, զխախտեալս և զտառապեալս, զի պակասեալ էր աշքս ի լույսոյ, և անձս ի յուժոյ, այլ վասն թախանձանաց սրտիս սկսա, և այսչափ էր կար իմ: Այլ թողութիւն արարէք վստահութեան և ամենայն յանցանաց իմոց և միով Աստուած ողորմիւ աւգնական եղբուրք տառապեալ անձին իմոյ, և ողորմութիւնն Աստուծոյ ի վերայ ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս եղիցի. ամէն: Հայր մեր:

## 2. Հետագայի

ա. 301բ. Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս Առաքել էրէց, որ զստացայ զսայ և ազատեցի ի ձեռաց անարիւնաց վասն հոգոյ փրկութեան և վասն// (302ա) ազատութեան սուրբ Աւետարանիս, և վասն հոգոյ յիշատակ և ծնողացն իմ, հարն իմոյ՝ Կարապետին և մարն՝ Շահպէկին, Մարգարտին, և եղ-



բարցն իմ՝ Իգնատիոսին, Գասպարին, Պօղոսին, և եղբորորդոցն իմ՝ Պետրոսին, Մելիումին, և կենակիցն իմ՝ Յեքարին, և հարսին իմ՝ Թուրվանդին, Կուլվարդին, և հանգուցեալ քվերացն իմ՝ Հանձրեարդին, Իբրիսիներն, և ամենայն արեան մերձաւորացն հանգուցելոցն. ամէն:

Եւ վասն աշխատելոց] և կամակից եղ[ել]ոց, որ կամակից եղաւ վասն ազատութեան Աւետարանիս շատու և փոքու, և դաւակն իմ Հստեքանոս և սարսն Բարսեղն, դուստրն՝ Հանձրեվարդ, և դանքաշ իմ՝ Սուլբան, և որդի՝ Զազարէն, և հարսն իմ՝ Բիկիսիան, և դուստր Դզլարեկին՝ Նազուլիան, և սանայմեր իմ՝ Թանկումն, և վարպետն իմ՝ Տէր Ոսկանն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և մեղաւոր Յունջան:

302բ. Ո՛վ սուրբ քահանայք և ընթերցողք սուրբ Աւետարանիս, կարդալով կամ արինակելով, տեսանելով յիշեցէք զՏէր Առաքելն և ծնողսն իւր, և աներն իմ՝ Վարդան. յիշողքն՝ յիշեալ լիցի առ Քրիստոս. ամէն:

բ. 302բ. Ես Միրախս և եղբայրս իմ՝ Յոհանէսս, միաբանեցաք և զնեցինք զսուրբ Աւետարանս և մեր խաւարեալ հոգւոյս ի լոյս փրկութեան ի հալել վատակոց մերոց՝ յիշատակ հոգւոյս մերոյ և մեր ծնաւդացն, հարն՝ Մատուրին և մարն՝ Շնամուրին, և եղբայրն իմ, որ հանգուցեալ եմ առ Քրիստոս, Յաւանիսին, և կողակիցն իմ՝ Հոսումսիմին, և որդին իմ՝ Բեկումին, դուստր իմ՝ Ուլումին, էվազին, և եղբար՝ Անկողին, Սուլբանին, և որդին իմ՝ Մատուրին, Գարին, Ատին, Մելիսեղեկին, և դուստր իմ՝ Խանաղին:

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ քահանայք, որ հանդիպէք զսուրբ Աւետարանիս, յիշեցէք զսրբահոգի Մերախս, Յոհանէսս և լիաբերան ողորմի աս[ա]յցէք: Եւ Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի. ամէն: Թվ[[ին] ՌՄԷ (1608): Հայր մեր, որ...

գ. 302բ. Աստուած ողորմի պարոնին Պէնանին, որ նորայ ձեռարքն իլաւ, որ ինքն վկայ էր: Խորեն Տէր-Յակոբեան:

դ. 2ա. Խորեն քահանա Տէր-Յակոբեանս 1900 թ., մկրտութեանս անունը Պարսամ Գասպարի, տասն և եօթ տարի մնացի Սուրբ էջմիածնի ճեմարանում, ստացա քահանայական կոչում վերն յիշեալ թվին:

ե. 3բ. Մնվեցի 1870 թվին: Սովորեցի ճեմարանում ևս Պարսամ Տէր-Յակոբեանս: Վեց տարի սովորելուց ետոյ ստացա սարճավաճի կոչում, մինչև մի տասնեակ տարի ետոյ ձեռնադրվեցի քահանա 1900 թ. Մկրտիչ կաթողիկոսի ուրուք և անվանեցին Խորեն քահանա Տէր-Յակոբեան:

զ. 10ա. Նվեր այս Աւետարանս Մկրտիչ կաթողիկոսից Խորեն քահանա Տէր-Յակոբեանին, 1901 թ., էջմիածին:

է. 14ա. Այս Աւետարանս կոչվում է «Ոսկի Աւետարան»: Ձեռնադրվեցի քահանա 1900 թվին, Մկրտիչ կաթողիկոսի ուրուք: Խորեն քահանա Տէր-Յակոբեան: Մնվեցի 1870 թ., ձեռնադրվեցի 1900 թ., Սուրբ էջմիածին:

Տարև

Գրիչ՝ Յովաննէս կր.: Մաղկող՝ Մարկոս սրկ.: Ստացող՝ Յակոբ արքեպս.: Թերթ՝ 243: Պրակ՝ Բ—ԻԲ: Նյութ՝ թուղթ: Մեծուրյուն՝ 18,5×21: Գրու-

ըյուն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Կազմ՝ դրոշմազարդ կաշի, միջուկը՝ աախտակ, անկյունները մետաղյա եռանկյունիներով ամրացված:

Մանրանկարչություն—Մարկոս ավետարանիչ՝ 69բ, կիսախորաններ Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի, լուսանցազարդեր և զարդազրեր:

Վիճակ՝ անբավարար. պակասում է Ա պրակը. լուսանցային մասերը խոնավությունից փտած, կազմի թիկունքը քայքայված և հետագայում մասնակիորեն նորոգված:

Ծանոթ. Ձեռագիրս պատկանում է Արթիկ բաղաբի բնակիչ Տիգրան Հակոբյանին:

#### ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Աւետարան ըստ Մատթէոսի (սկզբից թերի):

բ. Աւետարան ըստ Մարկոսի:

գ. Աւետարան ըստ Ղուկասու:

դ. Աւետարան ըստ Յովհաննու:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

##### 1. Գրչի

240ա. Փա՛ռք...|| (240բ) Գծագրեցաւ վսեմական, անբաղդատելի, [ա]-մէնանուշակ աստուածահրաշ և <և> գերափայլ, տիեզերալուր, շորեթագեան, մշտահոս վտակս՝ քառաբուխդ ի պէտս ծարաւեաց զՔրիստոս աստուածադաւան ժողովրդեան, յաղագս փրկութեան յաշխարհի, որ կերակրէ և արբուցանէ զհոգևոր հացն անմահութեան և զշուրն կենաց յեղեմական վտակացն, և երկնից իջեալն, ի զովացումն և ի խրախութիւն պասքեալ և կարաւտեալ անձանց: Եւ է սայ բան Աստուծոյ, որ և խաւսի [անս]ուտն Աստուած, ցանկ և հանապազ յուրախութիւն՝ տրտմեցելոց, բժ[ի]շկ՝ հիւանդաց, խոստովանութիւն՝ ճշմարիտ զՔրիստոս Աստուած դաւանողաց, քաւութիւն՝ մեղաւորաց, յոյս՝ մեղուցելոց, լոյս՝ խաւարելոց, լուծիչ՝ կապելոց, աղատիչ՝ գերելոց, դաստիարակ՝ մանկանց, սփոփանք՝ երիտասարդաց, դարձուցիչ՝ մոլորելոց, հաստատութիւն՝ ծերոց, կենդանութիւն՝ մահացելոց, սրբիչ՝ ամենայն ախտից հոգոյ և մարնոյ, հալածիչ՝ դիւաց: Եւ որք ուղիղ || (241ա) հաւ[ատ]ով խոստովանին զՅիսուս Քրիստոս Աստուած [հաւ]ասար Հաւր և Հոգոյն Սրբոյ մի Տէր, մի Քրիստոս, մի դէմ, մի բնութիւն համայն Աստուած և Բան մարմնով անբաժանելի, զԲանն եղեալ մարմին, զԾնաւղն Աստուածածին, և զխաշն, և զմահն Աստուծոյ խոստովանի, նորա ո՛չ տեսանն զմահն յաւիտենից, և ո՛չ դատապարտին ի դատաստանին, թէպէտ և բիւր անգամ մեղուցեալ իցեն, այլ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ արժանի լինին ընդ Քրիստոսի ուրախանալ, և ընդ սուրբս նորա, որպէս ինքն ասաց, թէ՛ Ուր եսն եմ, անդ և պաշտունայն իմ եղիցի:

Եւ արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՌԺԷ (1568), ձեռամբ մեղուցեալ և անարժան, անպիտան և մեղաւոր Յովաննէս սուտանուն կրանաւորիս, որ անուամբս միայն եմ և զործովս ոչ, ի դուռն մեծահռչակ և անուանի սուրբ Աթոռոյս Տաթևոյ և բաղմահաւաք սուրբ նշխարացս, որ աստ

կան հաւարեալ, և ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տեսուն Գրիգորիսին և արհեսպիսկոպոսութեան սուրբ ուխտիս՝ Ստեփաննոսին, որ էր լուսարար // (241բ), ի երկիրս Մաղրնջուխ, որ կոչի Ղափան, իշխանութիւնն Շան Քահմանին, ի խնդրոյ երջանիկ և ընտիր արհեսպիսկոպոսին Յակոբայ, սուրբ ուխտին Շախկախոյ, որ լուեալ ի սուրբ գրոց, թէ երանի որ ունի զաւակ ի Սիոն և ընտանի յԵրուսաղէմ Վերինն, և բարեխաւէ առաջի Աստուծոյ յաւուրն ահեղին. վասն այն պատճառին ըստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իւրոց՝ յիշատակ հոգոյ իւրոյ (այստեղից գիրը և թանաքը փոխվում են) և իւր որդոյ՝ Տէր Յովանէսին, հաւրն իւրոյ՝ Վալարէն, և մարն իւրոյ՝ Շահալամէն, և բուերն իմ՝ Գուլսանամէն, և եղբարն՝ Սանուալէն, Զաք//էսին /// [մեր] ձաւորաց /// [կենդ] անեաց և մեռելոց:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք սմայ կարդալով կամ արինակելով, յիշեսցիք ի մաքրափայլ յաղաթս ձեր զվերոյ գրեալսդ և զՅովանէս զանարժան գրիչս, և լի սրտիւ թողութիւն խնդրեցէք մեր բաղում մեղացն, և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ զալստեանն իւրում. ամէն: Հայր մեր: Ընդ նմին յիշեցէք և զՅուսափանէն, որ էր տնտես վանիցս:

## 2. Մաղկողի

69բ (Մաաթեոս ավետարանչի նկարի տակ). Չեռամբ ծաղկեցաւ Մարկոսի սարկաւագի: Անարինակ սղալանացս թողութիւն հայցեցէք:

## 3. Հետագայի

ա. 242բ (Բոլորգրով). Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն:

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ փրուն և բազմամեղ գրչիս՝ սուտանուն Սալար (ջնջված և գրված՝ Յովանէս) արեղաս, ի խնդրոյ բարեմիտ և հեղայհոգի Մարկոս էրէցս, [որ ըստացաւ զսա] (գրված է վերևում) անջինջ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն, հաւրն իմ՝ Պապայջան, մայրն իմ՝ Ղաղամին, և եղբարց իմոց՝ Սարգիսին, Մուրաթին, Մարիոս, որ է Քրիստոս փոխեալ, և քեւրացն իմոց՝ Մարիանին, Խանաղին, Ուսափանին, Խարունին, որ է Քրիստոս փոխեալ, և պապն իմ՝ Մեքսուայ, և կողակցին իմ՝ Խանաղին, և եղբարայ կողակցին՝ Պահալուին, Սիմին, և հայրեղբայրն իմ՝ Ախիանին, Ովանիսին, Ռեանիսին, Քանումին, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և նրնջեցելոցն. ամէն: (Երկու տող անուններ նույն գրով գրված և ջնջված. «Վաչիգանին, Ղասումին, Ովանէսին, Հիւանիարին, Փանոսին, Պախին, Յոհաննիսին»): Արդ, աղաչեմ զամենեսեան, կարդալով կամ արինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաթս ձեր. ամէն: Հայր մեր:

բ. 243ա. Ես Սարգիսս գիր տուի իմ [եղբա]ւր Տէր Մարկոսին, երից աւանակ, որ մեք դուս ելանք, մեր ապրանքն բաժանեցինք, գր[ե]անքն ընկաւ նորայ բաժին. մեք ուրիշ ապրանք կալանք մեզ, իմ այլ բան չկայ գրե[ե]անքին հետ անպատճառ, այլ նշան չկայ:

Յոհանէս քաւխան վկայ, Մարտիրոսն վկայ, Սարգիսն վկայ, Մէլիքն վկայ, Ղուկասն վկայ, Իրիցու վանքայ մեծ ու փոքր ամէն վկայ, որ հնցի լաւ էն էզուց այլ տաւի շինի:

գ. 242բ. Այս է Պալ [||] փոքր հսպան՝ Դ (4), Յակոբն՝ ԲՌԺԶ (2016), Զաֆարն՝ ԻԳ (23), Աւաֆն՝ Ի ՉԱ (701) շայ[ի], Գալաֆն՝ ԱՌ (1000), Գաւօն՝ ԼԳ (33) շայի, Մկրտումն՝ ԱՌ (1000), Մեսրոբն՝ ԶՌ (6000), Քաջալն՝ ԳՌ (3000), Ակակն՝ ԲՌ (2000), Օվանն՝ ԲՌ (2000), Ոսկանն՝ ԱՌ (1000), Եսային՝ ԴՌ (4000), Յարութիւնն՝ ԼԴ (34) շայ[ի], Գալուս[տ]ն՝ ԼԵ (35) շայ[ի], Տէր Ալեքսն՝ ԳՌ (3000):

դ. 243ա. Այս է մե[ր] վարպ[ե]տի մեռացի դամն թվին ՌՄԼԴ (1785)-ին: Այս է մեր տիրացու Ավետի հարս[ն]քի թիւն ՌՄԼԵ (1786)-ին: Այս է Ավետիս մի մօր մեռացի թ[վ]ին ՌՄԼԹ (1790)-ին: Եւ այ[ս] է մեր հայր լուսահոգին թվին ՌՄԽԳ (1794)-ին:

ե. 243բ (Նաւրգիր). Գրեցաւ [գ]իրս Երեմիտքանին միջումն ձեռամբ սարկաւար Սաղաքել, թուականի յայոց ՌՃԺԷ (1668):

զ. 243բ (Շղագիր). Աւետարանիս գինն տել են մենն ձի՝ ԲՌԷՃ (2700), մենն մեղար՝ ԵՃ (500), մենն աղի քսակ՝ Խ (40) շահի, Ճ (100) մարջան հատեկ, մենն ԼԳ (33) մրջ[ան], մենն ԺԷ (17) մրջան, է բմէն:

է. 243ա (Շղագիր). Աւղ, աղաչեմ դամենեսեան, ո՛վ քա[հա]նայք, կարողալով կամ արինակելով, Քրիստոսի սիրոյն համար մի Աստուած ողորմի աւել[ք] Հայրապետին և իւր ծնողացն. ամէն:

բ. 68ա (Ստորին լուսանցում, շղագրով). Աստուած ողորմի Հայրապետին (Նույնը՝ 112բ, 235բ):

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՌԺ—1561

Գրիչ՝ Թորոս երէց:

Թերթ՝ 283: Պրակ՝ Ա—ԻԲ: Նյութ՝ թուղթ: Մեծութուն՝ 15,7×21,6: Գրութուն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Կազմ՝ դրոշմաղարդ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կարմիր մետաքս:

Մանրանկարչութիւն՝ Հովհաննես ավետարանիչ, խորաններ, կիսախորաններ, լուսանցաղարդեր և զարդագրեր:

Մանր. Ձեռագիրս պատկանում է Արթիկ քաղաքի բնակիչ Տիգրան Հակոբյանին:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## 1. Գրչի

ա. 5ա (տուրանի մեջ). Խոնար[հ] ծառա Թորոս, հրամանաւ մահտեսի Նահապետ[ի], մահտեսի Կարապետն Մանառեան ամիրայի արքեամբ և ծախիւ[ք] գրեցաք ի թվին ՌԺ (1561), որ և ընթեռնանի, ի սուրբ եկեղեցին [յ]ի-

շատակ մատենցի (?), գտարին ի մի շաբաթով <ունի> ունի, և ընծայս մեծագինս Աստուածամայր եկեղեցին քան սա Ժ (10) տարի առաջ:

բ. 92ա. Ո՛վ սուրբ ընթերձաւ, զՔրոսս էրեցս գրիչս յիշեայ և Աստուած զձեզ յիշէ:

գ. 222ա. Սոսկամ պտեղաերզս՝ Քրոսս էրեց վասն անարէնութեան իմոց գործոց, որս ասէ սրբոց. եւ ես եմ անկեալ յանդունդս խորոց: Մեղա Տեառն, մեղա Տեառն, մեղա Տեառն:

դ. 282բ. Զխորհեմ ընթերձողս, աղաչեմ յիշման արժանի առնել զբազմայմեզ զծող սորա՝ զՔրոսսս, ու անկանի ոտս ձեր, զի ձմեռ էր և ցուրտ, և սկիզբն արարաք յունվարի Ժ (10) և վերջ՝ փետրվարի ԻԶ (26):

## 20

## Մ Ա Շ Տ Ո Յ

ԺԶ—XVI

Թերթ՝ 148: Պրակ՝ Ա—ԺԳ: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 10,2×14,3: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտագիր: Տող՝ 21, Կազմ՝ դրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ: Վիճակ՝ բավարար:

Մանր. Զեռագիրս պատկանում է Արթիկ բաղաբի բնակիչ Տիգրան Հակոբյանին:

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

—1ա Ցանկ:

1. 1բ—130բ [Մաշտոց ձեռագր]:

2. 131ա—147բ [Տաղք և զանձք]:

ա. 131ա [Տաղ Առաքել վարդապետի (ծայրակապ՝ ԱՌԱՔԵԼ)]—Այսօր Եհաս հրաման արարչէն...

բ. 132բ. Տաղ կորիւնի ասացեալ— ես գիտէի թէ աշխարհս ինձ մուլք էր տրւած...

գ. 133բ. Տաղ կրտորնի, լաւ ասա (ի Մսփին Քերովրէէ)— Յէրէկ հողբորդ անցա...

դ. 135ա. Տաղ տղայի է, լաւ, անուշ ասէ (ի Նաղաշ եպիսկոպոսէ)— Արարիչն արարածոց մեզ բարկացա...

ե. 136բ. Տաղ մեծի է, լաւ ասա—Ո՛վ բահանայք և վարդապետք...

զ. 138ա. Ողբ վասն մեռելի, լաւ ասա—Ինձ ումէտ կայր և կուման...

է. 139ա. Տաղ դարիպի ասացեալ (ի Նաղաշ եպիսկոպոսէ)— Ղարիպի կեանքն է լալի, ողբերկական...

բ. 141բ. Գանձ վասն տղայի, լաւ ասա—Նայիմ, ողբամ ծընող տղայիս...

բ. 142բ. Երգ նրնջեցելոցն—Արարիչ և մարդասէր, անոխակալ և բարեգութ...

ժ. 144ա. Երգ նրնջեցելոց է—եւ ասացի [ի] վերանալ յինէն...

ժա. 146բ. [«Տաղ ի վերայ նորաշէն տան և այգի ունեցողի և լալու»]—Ցամեն առաւոտ և լոյս...

Ժբ. 147բ. [«Ողբ ի վերայ մանկանց»]—Եկայք, սիրելիքս զամձէն, զեղկելի գերիս ողբացէք...

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

#### 1. Հետագայի

ա. 148ա. Կեսարացի Տէր Պողոսին է այս Մաշտոցըն. թվին ՌՃԿԵ (1716) առի:

բ. (Սկզբի կազմաստառի վրա). Այս եղև թվին ՌՄԽԴ (1795), սեպտեմբերի Ը (8). Ես Տէր Գալուստրս ըստացայ զայս Մաշտոցս, որ վայելեմք որքան կենդ[անի] եմք:

գ. (Պահպանակ Աա). Ի թվին ՌՄՄԲ (1803)-ին ևս նորընծայ Տէր Մարէնսրս առի վայելիլ, յիշատակ մահտեսի Պետրոսին, որդոյն՝ պարոն Քերօփին, վարձս Աստուծոյ առցէ:

դ. (Պահպանակ Աբ). Հակոբ քահանա Ասլանյանը ձեռնադրվել է 187[0] թ., մահացել է 1952 թ.:

ե. 12ա. Խորեն քահանա Տէր-Հակոբյան Ձիթիհանֆոլցին՝ 1917 թ., էջմիածին:

զ. 130բ. Ձիթիհանֆոլցի Խորեն քահանա Տէր-Հակոբյանը ծնվել է 1870 թ., ձեռնադրվել է 1902 թ., Սևան, Սարգիս եպիսկոպոսի ձեռքով:

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

#### Ա. Յոճան

ՁԺԹ—1470

Գրիչ, ստացող՝ Աբէլ:

Թերթ՝ թերթակալված չէ: Պրակ՝ Ա—Ի×12: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 18,5×27,5: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 25: Կազմ՝ դրոշմադարձ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կարմիր կտավ: Պահպանակ՝ մագաղաթյա թերթ, ուղղագիծ և բոլորգիծ երկաթազրով, մասն Ավետարանի:

Մանրանկարչություն՝ ավետարանիչներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր և զարդագրեր:

Մանր. Ձեռագիրս պատկանում է Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ գյուղի բնակիչ Արիստակես Տերտերյանին:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Թուղթ Եսեբի առ Կարպիանոս:

բ. Համարաբառ կանոնք Ա—Ժ:

գ. Աետարան ըստ Մարտիոսի:

դ. Աետարան ըստ Մարկոսի:

ե. Աետարան ըստ Դուկասու:

զ. Աետարան ըստ Յովհաննո:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## Գրչի

Այսմ անմահ <մահ>ական ըմպելոս և անգիւտ մարգարտիս և ամենա-  
զով արինակիս փափագաւոյ եղէ՝ ես անարժան և սուտանուն Արէլ գրիչս, գր-  
րել ըզսայ ի ժամանակիս վերջինն՝ ի թուականութեան Հայոց ԶԺԹ (1470)  
[այլ ձեռքով՝ «ի դաւաոս Գուգարաց, ի թվին Ռե» (1591)] ի դաւաոս որ կոչի  
Խախոյ, ի դեաւոս որ կոչի Սուրբ Յոհան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածա-  
նիս և Սուրբ Յովհաննու, և այլ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որ ընթեանուր զսուրբ Աւետարանս զայս, յի-  
շեսջիբ ի սուրբ յաղաթս ձեր զփցուն գրիչս՝ սուտանուն Արելս // և հայրն իմ՝  
զՅեսային, և ըզմայրն իմ՝ զՇուշանն, և զեղբայրն իմ՝ զՍիմէոնն: Դարձեալ  
յիշեցէք ըզԱզաան տանտիկին և խնդրեցէք մեղաց թողութիւն: Դարձեալ զՂա-  
գար տնտեսն և խնդրեցէք զմեղացն թողութիւն:

Մանր. Ունի նաև Ռե (1591), ՌՄԱ. (1602) և ՌՄԶ (1757) թվականների  
հիշատակագրութիւններ, որոնք հնարավորութիւն չունեցանք ընդօրինակելու:

22

## Ա Ղ Օ Թ Ա Գ Ի Բ Ք

Հալիձոր

ՌՃԼԹ—1690

Ստացող՝ Մարիան ապաշխարող:

Թերք՝ 96: Պրակ՝ Ա—Ը×12: Նյութ՝ մագաղաթ (1—68), թուղթ (69—96):  
Մեծութիւն՝ 8,2×10,8: Գրութիւն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ դրոշմա-  
զարդ կաշի, միջուկը՝ տախտակ:

Մանրանկարչութիւն՝ ճակատազարդ, լուսանցազարդ և զարդագրեր:

Մանր. Ձեռագիրս պատկանում է Ապարանի շրջկենտրոնի բնակիչ Գուր-  
գեն Քոչարյանին:

## ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

1. Սրբոյն Եփրեմի Խո[ւոյն]. Ոյք ընդ Աստուծոյ—Տե՛ս, Տէր, զտա[ռա-  
պանս] իմ և զցաւս... (Եփրեմի աղոթքները շարունակվում են մինչև Զ պրակի  
4-րդ թերթը, որից հետո գալիս են հետևյալ աղոթքները):

2. Նորին աղոթք առ Տէր վասն գիշերոյ—Աղաչեմ զքեզ, Տէր Աստուած ա-  
մենակալ...

3. Եւ իւր խցումն, քէ որտեղ լինի: Խաշականք է շորս կողմն, այսպէս  
ասա—Հայր սուրբ, Աստուած ճ[շմարիտ]...

4. [...] ի մօրէ—Աստուած որ զհայր և զմայր պատուեալ...

5. Այ[լ] աղոթք—Տէր իմ Յիսուս Քրիստոս, քեզ աւանդեմ...

6. Աղոթք առ պահապան հրեշտակն—Ո՛վ հրեշտակ Աստուծոյ...

7. ա. Աղոթք Գառնեցոյ ասապեալ ի կիրակին—Յաւիտենից և Աստուած  
և արարիչ...

- բ. Աղօբք երկուշարքի ատուր—Ո՛վ ամենակալ Տէր իմ...  
 գ. Աղօբք երեքշարքի ատուր—Վերջին վայելչութեանցն վերանորոգող...  
 դ. Աղօբք չորեքշարքի ատուրն—Անկանիմ առաջի քո և աղաչեմ...  
 ե. Աղօբք հինգշարքի ատուրն—Ներող և ներգործող բազմից...  
 զ. Աղօբք ուրբարի ատուրն—էապէս բարի և ամենակարող զօրութիւն...  
 է. Աղօբք շարքի ատուրն—Սուրբ Երրորդութիւնն անբաժանելի...  
 8. Աղօբք զկնի հաղորդութեան—Հոգի Քրիստոսի, սրբեա՛ զիս...  
 9. Աղօբք առ Յիսուս—Ո՛վ բարի Յիսուս...  
 10. [Տաղ]—Անթիւ շարեօք անցա ես, |Մեղօք բանիւ մեղուցեալ եմ ես...  
 11. Տաղ Աստուածածնին առ խաչին ասացեալ—Ո՛վ իմ սիրեկան որդի,  
 | Սիրտս իմ այրեալ կսկծի...

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## 1. Գրչի

(Զ պրակի 11-րդ քերքի ա էջ). Փա՛ռք... գրեցաւ բաղցրաճաշակ սուրբ Աղօթքս, որ է Խօսք Եփրեմի ընդ Աստուծոյ, ի յանապատն Հալիժոցու, ի դուռն Սուրբ Աստուածածնի, ձեռամբ... (անունը ջնջված և անընթեռնելի) ապաշխարողի, ի/ վայելումն քոյր Մարանին, յիշատակ իւրն // և ծնօղացն. ամէն:

Ձեռքս փրտի և հողանա,  
 Մոխիր, փոշի, զազախ դառնա,  
 Գիրս յիշատակ առ ձեզ մնա,  
 Յիշէք առ Տէր զծող սորա:

Աւարտեցաւ թվին ՌՃԼԹ (1690): Աղաչեմ ձեզ, ո՛վ սուրբ յաղօթողք, յիշէք զմեզ յաղօթս ձեր յորդոր, և դուք յիշեալ լիցիք առաջի Քրիստոսի. ամէն:

Գրիչ՝ Յովհաննէս: Ծաղկող՝ Առաքել: Մտացող՝ Աստուածատուր: Թերք՝ 311 (թերթակալված չէ): Պրակ՝ 26 (Ա.—Պ)×12 (Պ 11): Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 24,5×18: Գրութիւն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 20: Կազմ՝ դրոշմազարդ շագանակագույն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ: Ա փեղկին մետաղի 5 խաչ (2-ը՝ ականակուռ, 1-ը՝ մակազրությամբ) և 2 հմայիլ:

Պատառիկ—պահպանակ—Աւետարան Ղուկասու: ԺԱ.—ԺԲ դդ.: 1 (Ա.)+1 (Բ): Մագաղաթ, երկայուն, ուղղաձիծ երկաթագիր, եզրահատված: Կարգալ՝ Բար «նոյնպէս արասցէ... որ Յովհաննայն» (Գ, 11—27): Աւր «եթէ անկեալ երկիր պագանիցես...դոր արարեր» (Գ, 7—23):

Մանրանկարչութիւն—Ավետում, Եղիսաբեթ և Մարիամ, Ծնունդ, Քրիստոսի լվացումը, Քառասնօրյա գալուստն, Հովհաննէս Մկրտիչ և Հիսուս, Մը-



կրթութիւն, Ղազարի հարութիւնը, Ծաղկազարդ, Քրիստոսի առակներից, Ունկվա, Խաչելութիւն, Յուզարեւր կանայք, Քրիստոսի պատանումը, Պայծառակերպութիւն, Դժոխքի ավերումը, Համբարձում, Հոգեգալուստ, Վերջին դատաստան, Փողհարութիւն: Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես և Պրոխորոն: Խորան՝ 7: Կիսախորան՝ 4: Լուսանցազարդեր և զարդագրեր: Գույներ՝ կարմիր, կապույտ, կանաչ, նարնջագույն, սև:

Վիճակ՝ բավարար: Տերունական նկարների ներկերը մասամբ թափված: Վերջին պրակից 1 թերթ ընկած: Կազմի 3 փականներից 1-ը պոկված:

Ծանոթ. Պատկանում է Ախալցխայի շրջանի Մեծ Պումաճ գյուղի բնակչուհի Նոյեմզար Ներսիսյանին (ծնվ. 1889 թ. Ախալքալաքի Լոմատուրց գյուղում), որը կտակել է իր աղջկան՝ նույն գյուղի բնակչուհի Սաթենիկ Լեոնի Գյումուշյանին: Ձեռագիրս ունեցել է ևս վեց «եղբայր», որոնք գտնվել են Ախալքալաքի և Ախալցխայի Մուղղութ, Ճալա (Չեչերեկ), Ճանճղա, Դամալա, Սուֆլիս, Փորթ Պամաճ գյուղերում: Ձեռագիրս տեսել է Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և առաջին էջում գրել՝ «ԺԵ դ., Մ. Մ.»:

#### ԲՈՎԱՆՑԱԿՈՒԹՅՈՒՆ

- ա. Համարաբառ կանոնք (Ա—Գ, Ե—Զ, Ժ, նաև՝ լուսանցային):
- բ. Աւետարան ըստ Մատթեոսի:
- գ. Աւետարան ըստ Մարկոսի:
- դ. Աւետարան ըստ Ղուկասու:
- ե. Աւետարան ըստ Յովհաննու:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

##### 1. Գրչի

ա. (Հովհաննու Ավետարանի վերջում). Փա՛ռք փրկչին, յիշատակ գրչի՝ Յովանէս անարժ[անի]:

բ. (Փողհարութիւն նկարի տակ). Առաքել նկարաւղան աղաչեմ յիշել ի Տէր:

գ. (Մարկոսի Ավետարանի վերջում). Արդ, որք հանդիպիք այս աստուածային գանձուցս, յիշեսչիք ի մարբափայլ յաղաւթս ձեր զառ ի Հոգոյն Սրբոյ լցեալն՝ զԱստուածատուր քահանայն, որ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց: Եւ ունէր պակասութիւն՝ զցանկն և զնշանագիրն, և սա լցոյց զպակասումն սորա՝ ի վայելումն անձին իւրոյ, զոր Տէր Յիսուս վայելիալ տացէ յիկար ամաւք. ամէն:

##### 2. Հետագայի

ա. (Մարկոսի Ավետարանի սկզբում, Ժէ դ.). Սառային հոգուն ԻԱ (21) ստակն. յիշեցէք:

բ. (Մարկոսի Ավետարանի վերջում, Ժէ դ.). Աստուած ողորմի Մովիկին հոգոյն բշ—ես (այսպես):

գ. (Յովհաննու Ավետարանի վերջում, կարմրագիր, Ժէ դ.). Աստուածային գանձիս փափ[ագ]էր սիրտ իմ, սուրբ Աւետարանիս փափագ առ ես սուտա-

նուն քահանայ Կարայպետ ի յարդար վաստակոց, սուրբ Աւետարանս առի ի յիշատակ ինձ մեղուցելուս և ծնաւդաց իմոց և զաւակաց իմոց՝ Պետրոսի և Քարենոսի: Աղաչեմ զամենեւեան, որք հանդիպիք սուրբ Աւետար[ան]իս, զմեզ յիշման արժան աչոնեք, Աստուած ինքն[ւ]լաւ զիտէ, որ այլ որ յիշատակ ի վերայ աշխարհի չէ ունիմ ես: Երես անգեալ աղաչեմ զսուրբ քահանայքա, որ զմեզ յիշման արժանի աչոնէք: Ո՛վ զմեզ յիշէ, Աստուած զինքն յիշէ յիւր միւսանգամ զալուստն, զինքն յիշէ, որ է յուս ամենեցուն. ամէն:

24

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Կրկնագիր)

Ուխտեց քաղաք (Տայք)

ՁԼԹ—1490

Գրիչ՝ Մելքիսէթ երէց: Կազմող՝ Յակոբ Արաբկիրցի, Վարդ[ա]ն երէց. Ստացող՝ Սարգիս քհն: Թեր՝ 280—5 (թուիչք՝ 6, 7, 50, 78, 202). շարված 83բ—84բ, 130բ—131բ, 213բ—278բ: Պրակ՝ Ա—ԼԵ×8 (Ա, Բ, Իէ 7, ԼԵ 6): Նյութ՝ մագաղաթ, կոշտ: Մեծութուն՝ 27×19,5: Գրութուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 20—23: Կազմ՝ գրոշմազարդ շաքանակագույն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կապույտ կտավ, դոնակով: Մետաղե զարդերը հանված, 3 փականներն ու ելուստները բնկած:

Մանրանկարչութիւն—Կիսախորան՝ 2ա, 85ա, 132ա, 214ա: Լուսանցազարդ՝ բուսական, տաճար: Զարդագիր՝ հանգուցագիր: Գույներ՝ կանաչ կապույտ, դեղին, դարչնագույն:

Վիճակ՝ բավարար: Որոշ թերթեր կտրված-հանված:

Ծանոթ. Պատկանում է Ախալցխայի շրջանի Փոքր Պամաճ գյուղի բնակիչ Տերտերանց Աղասի Սահակյանին: Տիրոջ բարեհաճութեամբ, ձեռագիրը 1976 թ. սեպտեմբերին բերվել է Մատենադարան, ախտահանվել, վերանորոգվել և կրկին վերադարձվել: Ձեռագիրս տեսել է Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և 1ա էջում գրել՝ «ՁԼԹ—1490. Մ. Մ.»:

## ԲՈՎԱՆԳԱՌԻԹՅՈՒՆ

Ձեռագիրս կրկնագիր է:

1. Հինը՝ երկսյուն բոլորագիծ երկաթագրով գրված Ավետարան է, հավանաբար Ժ—ԺԱ դդ.: Լուսանցքներում կան գլխանիշ տառեր: Լվացված գրութունն՝ բնթեռնելի:

2. Նորը՝

ա. 2ա—83ա Աւետարան ըստ Մատթէոսի:

բ. 85ա—130ա Աւետարան ըստ Մատթէոսի(=Մարկոսի):

գ. 132ա—213ա [Աւետարան ըստ Գովհասու]:

դ. 214ա—276ա [Աւետարան ըստ Յովհաննու]:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## 1. Գրչի

ա. 276բ. Փա՛ռք... || (277ա) Արդ, այսմ անմահական բմպելո եւ անգիտ մարգարտիս եւ ամենագով արիւնակիս փափարաղ եղեալ սրբասէր քահանայն Սարգիս եւ ետ գաղափարել զսա յիշատակ իւր եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց, ի ժամանակս վերջինս, ի թուականութիւնս Հաոց ՋԼԹ (1490), ի դաւաոս Տաոց, ի քաղաքս Ուխտեց, առ դռան Սուրբ Կառապետիս եւ || (277բ) այլ սրբոցս, որ աստ կան հաւարեալ: Այլ աղաչեմ ամենայն, որք ընթեռնուր զսուրբ Աւետարանս, լի սրտիւ ողորմի ասացէք Տէր Սարգ[ս]ին, եւ հարն՝ Գարիին, եւ մարն՝ Խէրխարունի, եւ եղբարձն, եւ հարսներոյն, եւ փցուն զրչիս՝ սուտանուն իրիցուս Մէլփիսէքիս, եւ Աստուած զձեր մեղքն ոչ յիշէ:

բ. 1ա. Քրիստոս Աստուած, Տէր Յիսուս, տո՛ւր կարողութիւն ինձ հասանել յաւարտ:

## 2. Հետագայի

ա. 277բ (ԺԵ—ԺԶ դդ.). Վերջին ստացող սուրբ Աւետարանիս Կիրակոսն եւ զիւր կողակիցն՝ Մխմուրին, որդոյն՝ Խաչատուրին, Պետրոսին, Թումանին, եւ կազմող սորա՛ յԱռապիւեցի Յակոբ եւ Վարդ[ա]յն երէցն:

բ. 1ա. Թվին ՌՃՀԸ (1729) ասրելի Ժ (10) օրն շահն էկաւ յեջմիածին, Ե (5) օր կացաւ, դարձաւ զնաց:

գ 1ա. Թվին ՌՃՀԸ (1729-ին), մարտի Ժ (10)-ին ես՝ Ասատուրի որդի, ես անառժան Տէր Ունանէս քահանայ զորշմեցայ Աստուծոյ:

դ. 1ա. (1729). Յիշատակ է սուրբ Ավետարանքս Ասատուրին, ի[ւր] որդուն՝ Պետրոսին, Կիրակոսին, Համպարին եւ Տէր Յունանին:

ե. 1ա. Թվին ՌՃՁԳ (1735)-ին էկաւ Թամագն յերէվան յունիսի ԺԳ (14) օրն, կովեցաւ Ավտուլայ փաշի հետ, կոտորեցի Ավտուլայ փաշին, էնոր հետեվ բերդերն ըռահի տվին, դուս էլ Օսմանլուն է:

զ. 1ա. Թվին ՌՃՁԵ (1736)-ին, որ մահն ընկաւ յերէվան, մինչեւ Զ (6) ամիսն ջառգեց, էնոր հետեվ Աստուծոյ ողորմութիւն հասաւ խըլսսաք ի մահէն:

է. 1բ. Թվին ՌՃՂԳ (1745) Թամաս եկաւ Երէվան, Յէկան փաշան կօտորվեցաւ, օսմանլուն փախան, բազում մարդիք գերի արաւ:

բ. 1բ. Թվին ՌԲՃ Եօթանասնուն եւ ինն (1830) ուռումն էկաւ, Կարնոյ քաղաքն առ, մէկ տարի նստաւ. Ա (1) տարվան յետեւ բօվանդակ քաղաք եւ երկիր վերուց, իւր հետեւ բերեց լցուց Ախրլցըխայ, Չլուր, Զաւախէք, երկիրն ամենայն լցուց: Աստուած այսպէս էր կամեցել, օսմանին ձեռացէն մեզ աղայտեց: Աստուած Հայոց թագաւորին կիանք տայ. ամէն:

Ես, անարժան Տէր Սահակս գրեցի: Ով որ կարգալով զմեզ յիշէ, մէկ Հայր մեղայիւ զմեզ յիշէ, Աստուած իւր մեղքն չիշէ:

Գիրս մնայ, ձեռս զնայ,

Մատունքս ամէն ի հող դառնայ:

Աստուած իւր տեսութեանն արժան առնէ: Բաւ է:

բ. 277բ (ժԸ դ.). Իրիցակին Սայխուլբան:

ժ. 277բ (ժԸ դ.). Եւ ալ վերջի ըստացողի Յակոբին, կողակուն՝ Անաին, իզրթոն՝ Աւետիսին, եւ ծնողաց՝ Համպարի, եւ մօրն՝ Գուլլատին, յԱրզուխանին, Վարդխարու[ն]ին, զարմից եւ զաւակաց նոցին մէկ Հա]յ[ր մեղախ յիշէք, յիշեալ լիշի[ք] առաջ[ի] Աստուծոյ, ամէն:

ժա. 277բ. Օվ ոք այս սուրբ Աւետաւան ծախէ, պատիշն Յուսէ եւ Կայէն առցէ. ամէն: Տվի յիշատակ Վերբեղ Սուրբ Աստուածածին թվին ՌՃՄԾ (1751):

ժբ. 278ա. Պա[տ]ճառ ազատութեան սուրբ Աւետարանին ի ձեռացէ անհաւատից մեղաւոր եւ անառժան, գծուց Տէր Գրիգորս եւ Յակոբս մէկ Հայր մեղախ յիշէք, յիշեալ լիշի[ք] յառաջի Աստուծոյ, ամէն:

ժգ. 279ա. ||| Շողակաթ ||| կիրայկի, Հոգէզալուստ, մայիս 10:

ժդ. 279ա. 1857 հուլիսի 15, օրըն կիրայկի, Վարբէվառ Ղազարոս ծնաւ: Տանուտէրն Այծեղջուրն էր, այն տիրոջն:

ժե. 279ա. Հազար ութ հարուր 4-ինկին (1865), ունվար ամսոյ մէկին Մարինոս ծնաւ:

ժզ. 279ա. 1867-ին օգոստոս ամսոյ 28-ին Սահակ ծնաւ: Աստուած բարի վաշելում տա. ամէն:

ժէ. 279ա. 1869 (1869)-ին սեկտեմբ[ե]րի 15 (15) Արէֆնազան ծնաւ, Մինաս |||

ժր. 279ա. Կէ տան և ութակին (1868 թ.),

Ամսեան մետաւանին,  
Որոմ գրեցաւ օգոստոսին...  
Աստուածութիւնըն յաշողեաց,  
Փափաքանօք հայրըն խնդրեաց  
Ի վեհապետ սրբազանէ՛  
Սայրիսք անուն վարդապետէ,  
Մարկավարկութիւն տիրացուին,  
Եվ շնորհեաց զուրար նորին:  
Փա՛ռք, գոհութիւն պարբևողին,  
Արժանացուց Ռհաննեսին:

ժք. 279ա. Ի թիւն հազար ութ հարուր վացընըմէկին (1861) և ունվարի բսանին տիրացու Ռհանէս ուրարակիր և քահանայու Պաման գիւղի, շառավիղ Տէր Սահակին որդի Մինասեան առ Աստուած փոխեցաւ:

ի. 279բ. Հազար երեք հարուր տասնըշորին (1865), ունիսի տասնըմէկին, օրըն շափաթ, Միւսեանն առ Աստուած փոխեցաւ, Միւսայելին մայրն:

իա. 279բ. Ուրարակիր Ղազարոս տիրացու Յովհաննեսեան Տէր Սահակեան ծառանալ է Փոքր Պաման գեղջ Սուրբ Խաչ յեկեղեցոջ ընդ Կարապետ քահանայի, Տէր Մարտիրոսին առեալ է զուրարակրութիւնն ի սրբազան Թաղէսու կախակոպոսէ 1876 թուին, ի 6-ն ապրիլ ամսոյ: Ուսեալ է զուսումն ի Վարդանեան հոգևոր դպրոցին յԱխալցխա քաղաքին, ունի զվկայագիր ուսման իւրեանց:

իբ. Մերունի տիրացու Մինասս կտու զխընդիրն սարկաւարզութեան Ղազարու Տէր-Սահակեանց 1877 թիւին 25-ն նոյեմբերի:

իգ. 279բ. 1878 թիւին ի 20-ն մայիսի առ Աստուած փոխեցաւ Մովսէս Ալէքսանեանը, նագօն ալ 85 օր առաջ:

իդ. 280ա. Հազար ութ հարուր եօթանասունըրորս (1874) ամի ի տասն մարտի, օրն Դատաւորի կիրակին քառասներորդ պարբի եղև օծումն Բարդուղիմէոս քահանայի Տէր Նահապետեանց զարմի:

իե. 280ա. Եղև օծումն Տէր Գեորգայ Սահակեանց,

Օծեաց Գրիգոր արքեպիսկոպոս Սահիբեանց,  
 Որ կոչեցաւ ի կարգ քահանայ սրբութեանցն  
 Չեռամբն արհի Վարդանայ Վարդանեանց:  
 Օծեալ եկեղեցւոյ կոչեալ է ի Սուրբ Նշան  
 [Հ]ընումն կոչեալ էր ի լեառն Սուրբ Նշան,  
 Եղև քրիստոնէիցս ի բազմանշան.  
 Ընդհանուր եկեղեցին ունի եօթը նշան:  
 Օրուա համարն էր առաջին ամսոյ տասին,  
 Հազար ութը հարուր եօթանասընըրնին (1879),  
 Եղև տնօրէնական օրն շաբաթին  
 Աստուած կարողութիւն տայ նորընծային:  
 Աստուած վայելումն տայ իւր ծառային,  
 Տալցէ փափագողաց ըզսէրն արժանի,  
 Սրբութեամբ և պահօք սէրն է գովելի,  
 Բայց մեղաւոր մարդ ևս գիտեմ կ'ապտակի:  
 Գրեցաւ ձեռամբն ուրարակիր Ղազարէ,  
 Ուսեալ է ի Վարդանանց հօգէոր զպրոցէ,  
 ||||| փոքր համառօտ և սակաւ է,  
 ||||| յանարժանէ.  
 ||||| Սահակեանց:

իգ. 280ա. ||| վեցին ||| դ մտուն քսանըութին հայր իմն Տէր Սահակ Տէր-Գրիգորեան առ Աստուած փոխեցաւ:

իէ. 280ա. Հազար ութը հարիւր ունցուներկուսին (1882), փետրվարի քսան և վեցին, քառասներորդացի մեծ պահքին առ Աստուած փոխեցաւ Մարիամ Տէր-Ղազարոսեանցը:

իբ. 280բ. Հասարակ խօսքով, յուշիմ մտքով էր սոյն մարդ,  
 Կարնից գաղթած՝ Պաման գիւղիս դարձաւ զարդ.  
 Հայրոյր ամաց ծեր հասակովն պահպանեց  
 Եկեղեցի, թէ ժողովուրդ, տան էրէց,  
 Իսկ ի վերջոյ սոյն կենակցի հետ ննջածս,  
 Տէր Սահակի որդի Մինասն էր յիշածս:

1882:

իբ. 280բ. Այ այս տապանի տքնի յակն դահանակ  
 Արի երէցն հայոց զգօն տէր է Սահակ,  
 Եօթանասունմէկ ամ սա քահանա էր,

Հարիւր քսան ամաց առ հարսն աւելաւ,  
 Եթող իւր յիշատակ գովելի համբաւ:  
 Արդ, աստ հանդիպիք, բարի մաղթեցէք,  
 Զփափագ սրտի իմոյ այսու աուցէք:

18  $\frac{8}{28}$  46:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԽՏԱԿ

№	Բովանդակութիւն	Ժամանակ	Վար	Գրիչ	Մողկող	Ստացող	Հասցե
1	Տողարան	ԺԸ/ժԹ	—	—	—	—	Երևան, Ե. Գ. Ալոյան
2	Հմայիլ	ժԵ	—	—	—	Գրիգոր	Երևան, Ե. Գ. Ալոյան
3	Հմայիլ	1707	Թաղ (Շատախ)	Ստեփանոս	—	Արօ	Երևան, Ե. Գ. Ալոյան
4	Հմայիլ	ժԸ	—	—	—	Յարութիւն	Երևան, Ե. Գ. Ալոյան
5	Ուրբաթադիրք	ժԷ	Բատականց	Ստեփանոս	—	Յովհաննէս	Երևան, Ե. Գ. Ալոյան
6	Սողմոսարան	ժԵ	—	—	—	—	Երևան, Ե. Գ. Ալոյան
7	Ուրբաթադիրք	1730	—	—	—	—	Երևան, Ե. Գ. Ալոյան
8	Ուրբաթադիրք	ժԷ/ժԸ	—	—	—	—	Երևան, Ե. Գ. Ալոյան
9	Նոր կտակարան	ժԳ	—	—	—	—	Երևան, Ե. Գ. Ալոյան
10	Հմայիլ	ժԸ	—	—	—	Մաղաբխա	Նուխի, Վ. Ս. Մուրադյան
11	Աւետարան	1660	Արզրուձ	—	—	Աւետիս	Սարահարթ, Շաշու, տատ
12	Աւետարան	ժԵ	—	—	—	—	Ջրատատ, Խ. Ա. Մինասյան
13	Աւետարան	1449	Աղթամար	Գրիգոր	Գրիգոր	Մկրտիչ	Հրազդան, Վ. Հ. Բեգլարյան
14	Աւետարան	1661	Գրնդրանց	Վարդան	—	Մելիսեօկ	Կաբաձաձոր, Գ. Ս. Գրիգորյան
15	Սողմոսարան	1635	Եղիազարու վանք	Կարապետ եղս.	—	Մխիթար	Երևան, Ս. Ս. Մելիք-Խարախիլյան
16	Աւետարան	1583	Յոնանաձոր	Ովանէս	Ղուկաս	Մերկայձան	Մեծամոր, Ա. Ազաղանյան
17	Աւետարան	1469	Գորի	Գրիգոր	—	—	Արթիկ, Տ. Հակոբյան
18	Աւետարան	1568	Տաթև	Յովաննէս	Մարկոս	—	Արթիկ, Տ. Հակոբյան
19	Աւետարան	1561	—	Քորոս	—	—	Արթիկ, Տ. Հակոբյան
20	Մաշտոց	ժԶ	—	—	—	Յակոբ արք.	Մեծ Մանթաշ, Ա. Տերտերյան
21	Աւետարան	1470	Ս. Յոնան	Երէլ	—	—	Ապարան, Գ. Բոչարյան
22	Աղօթադիրք	1690	Հալիձոր	Յովհաննէս	Առաքել	—	Մեծ Պաման, Ն. Ներսիսյան
23	Աւետարան	ժԵ	—	Մելիսեօկ	—	—	Փոքր Պաման, Ա. Սահակյան
24	Աւետարան	1490	Ուխտեց	—	—	—	—

ՎՐԵԺ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ՉԵՌԱԳՐԵՐ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Բրիտանական գրադարանի հայկական բաժնի վարիչ, երիտասարդ հայագետ դոկտ. Վրեժ Ներսիսյանը ձեռնամուխ է եղել Բրիտանական գրադարանի (նախկին Բրիտանական թանգարան) և Մեծ Բրիտանիայի մի շարք գիտական այլ հաստատություններում ու մասնավոր անձանց մոտ պահվող, և ցարդ չնկարագրված, հայերեն ձեռագրերի նկարագրությանը:

Ստորև տպագրում ենք 1978—79 թթ. լոնդոնում աճուրդով վաճառված և տեղի հայերի կողմից գնված երեք ձեռագրերի նկարագրությունը:

ԽՄԲ.

1

ՇԱՐԱԿՆՈՑ

[Գայլու ո՞վաւ]

ԶԿԸ—1319

Գրիչ՝ [Գրիգոր դպի՞ր]:

Թերթ՝ 293: Նյութ՝ մազաղաթ և թուղթ: Մեծություն՝ 17×12,7: Գրություն՝ միասյուն: Գիր՝ մանր բոլորգիր: Տող՝ 23: Մանրանկարչություն— ճակատազարդեր՝ 81ա, 142բ, 170ա, 235բ, բուսական լուսանցազարդեր և թռչնազիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, գրոշմազարդ վեցթևյան աստղ և փոքրիկ վարդյակ աստղի կենտրոնում: Վիճակ՝ սկզբից և վերջից պակասավոր: 217ա և 254բ թերթերի ճակատազարդերը մկրատված և հանված:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—293բ [Շարակնոց]:

Բաղկացած է 2 մասից՝ 1ա—275ա և 276ա—293բ: Երկրորդ մասն սկսվում է «Կանոնովն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի» շարականով և ավարտվում «Ճանապարհ բարի Քրիստոս» Արևազալի ժամերգության երգով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրչի

275բ Փա՛ռք... Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականիս Հայոց ԶԿԸ (1319), ի թագաւորութեանս Հայոց Աւշնի որդւոյ արքային Հայոց երկրորդ Լեւնի և ի... (շար. թափված):



Չեռագայի

291բ Սարգիս բանին սպասաւոր, աշխարհօ [S]ա[րա]ւնացի, բաղաբօ Մշեցի, աշակերտե[ա]լ մեծ հոգտոր և անկյաղթ փիլիսոփայի Գրիգորի մակա- նուամբ Մշեցի կոչիւր, և յետ վաղջանի նորա աշակերտս նորա Մաղափայ Դե- //նեցոյ, որ անկեղծ սիրով և հայրական խնամով [կրթեք զմեզ] յիմաստս աս- տուածային հանճարոյ, և ի թուարերու[թեան Ար]ենթական տումարի 226 (1526) ամին, ի թագաւորութեան Սուլքան Սուլէմանին և ի պարո[նու]թեան Տարաւն գաւառին Ամիր Շարափն, և ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Գլա- կա[յ] Սանիանոս արքեպիսկոպոսին զնեցի Շարակնոցս ի վայելումն և յի- շատակ անձին իմոյ, և ծնողաց իմոց, և ամենայն արեանառու մերձաւորաց իմոց: Եւ ով որ որ հանդիպէք այս գրոցս տեսանելով կամ զաղափարելով կամ աւկտելով, յիշեցէք ի Քրիստոս զերախտաւոր վարդապետին իմ զԳրիգոր և զՄաղափա, և զիս՝ զՍարգիս բանի սպասաւոր, և զճնաւդսն իմ, զամենայն ե- րախտաւորս իմ, և զուր յիշեալ լիցից ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, և ձեզ յի- շողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի: Ի վայելումն անձին իմոյ՝ յիշատակ Սարգիս բանի սպասաւորի, որ է լցեալ իմաստութեամբ՝ շնորհաւք Սուրբ Հոգւոյն. ամէն:

Կնքադրոշմ՝ 7ա «Մ. վ. Ս» (կրկ.):

Չեռագրին կցված է Հ. Ն. Ակինյանի Բեյրութ, 5 հունիս 1945 թվակիր մի նամակը՝ հասցեագրված պրն. Մ. Սերոբյանին, ուր ենթադրում է, թե այս Շարակնոցը պետք է գրված լինի Երուսա- ղեմի № 2354 Շարակնոցի գրիչ Գրիգոր զպրի ձեռքով՝ նույն Գայ- լու ուխտում և մեջ է բերում հիշատակարանը (տե՛ս «Մայր ցու- ցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. է, էջ 494):

2

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բարերդ

ՌՀԲ—1623

Գրիչ՝ Թորոս սարկավագ: Մաացող՝ Ալեքսանոս վարդապետ:

Թերթ՝ 224 (չգրված՝ 221բ—222բ): Նյութ՝ թուղթ: Մեծուքյուն՝ 14×10,5: Գրուքյուն՝ միասյուն: Գիր՝ բուլղոգիր: Տող՝ 18: Մանրանկարչություն— ճակա- տազարդեր՝ Յա, 119ա: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ հյուսածո շրջանակով և վարդյականման զարդերով: Պատառիկ-պահպանակ՝ սկզբում և վերջում երկու թերթ թուղթ, միասյուն, նոտրդիր, մասն «Թղթին Յովհաննոս»: Վիճակ՝ ԺԹ և ի պրակները թափված, կազմի փականներն ընկած, պատառիկ- պահպանակի սկզբի թերթերը պոկված:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Յա—118բ Աղամգիրք է տեառն Առաքել Սիւնեցոյ: Ասացեալ ի վե- րայ Վցեօրեա[յ] արարչութեան—Նախ բան զեղեալքս ամենեքեան՝ |Երրորդու- թիւնն անեղական... |Արհնեալ Հայրն և Որդին և Սուրբ Հոգին [Տէր]:

Միայն Ա և Բ հատորները: Ա հատորն ունի 1907 թ. հրատարակության 26 գլուխներից 20-ը (1—8, 11—19, 21—23) և 2 հավելյալ գլուխներ՝ գլ. 17. «Վասն յէ՞ր այսպիսի պատճառաւ աւձն և բանսարկուն խարեցին զնախնին Ադամ», գլ. 21. «Վասն երրորդութեան», իսկ Բ հատորը՝ տպագրի 8 գլուխներից 3-ը (1, 4, 8) և 1 հավելյալ գլուխ՝ գլ. 3. «Վասն զգուշանալո զմեզ ի մեղաց»: Տարբեր է նաև Ա հատորի հիշատակարանը (տե՛ս ստորև):

—[Յիշատակարան Ա հատորի]

Այսբան խորհուրդ յատուկ բանի,  
Որ յայտնեցաք յայսմ տառի,  
Չեզ աղաչեմք, լսողք բանի,  
Յիշման առնէք զիս արժանի:

Թվականս մեր ութ հարիւրի,  
Յիսուներեք յարարարդի (1404),  
Սա ասացաւ Առաքելի՛  
Անուամբ միայն վարդապետի:

ԶԴաւիթ՝ հայրն իմ գովելի,  
Եւ զՄելիք՝ մայրն իմ նազելի,  
Ըզաէր Բարսեղն և զաէր Գրիգոր՝  
Մեծ ճգնազգեացն յոյժ պանծալի:

Չձեզ աղաչեմք աղերսալի,  
Յիշման առնէք զմեզ արժանի,  
Յարքայութեան լինիք որդի,  
Ի գալըստեան Տեառն Յիսուսի:

Բ 119ա—220ա [Բանք զանագանք]

1. 119ա—220ա [Յովհաննու Թուլկուրանցոյ Մեկնութիւն Աբարածոց]: Մովսէս խաւսի բնդ Աստուծոյ և ասէ— Սկըսաւ ի ըսկիզբն ըսկըզբան՝ |Արարիչ Աստուածն յաիտեան... |զԹուլկուրանցիս միշտ յիշեցէք, հայրք պատուական:

2. 161ա—169բ Ոտանատես Կարապետ վարդապետի [Բաղիշեցոյ] ասացեալ ի վերայ Աբարածոցս այս ուր գովի: Բաժին է Քամա[յ]—Եկայք, Ադամա[յ] որդիք, ամէն միտքան արհնեմք զարարիչն Աստուած... |Ինքն հարիւր և ութսունինըն թիւ այլ ի հետ նորայն (1540): |Ողորմելի Կարապետ վարդապետ և խիստ անպիտան...| Տունըս համարով նըսուն, և է սա բան իմաստութեան:

3. 170ա—187ա [Վարդանայ Արեւելցոյ] Աշխարհացոյց է այս և աշխարհաց պատմութիւն (համառօտ խմբագրութիւն)—... (180ա) Սեաստ՝ Սերաստիայ է, ուր կան սուրբ Քառասուրն և գեան Ալիս... և այնպէս առնէին Հայք մինչև ի ժողովրն Քաղէկոնի...

Հմմտ. «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1960, էջ 23, տող 213—223:

4. 187բ—203բ Պատմութիւն Յովսիմոսի վարդապետի գնալ ի յԱքէնս ի մայր իմաստութեան և հանդիպումն վարձկանինն (վերջից սլակասավոր):

5. 204բ—210բ [Ղուկասայ վարդապետի կեղեցոյ] Սա տումար գեղեցիկ և օտանաւոր— Պատճէն Հրոսմա մեծ տումարին՝ Պարզեալ հարցրն մեր նախնի... (սկզբում ունի բանալի-աղյուսակ՝ 204ա):

6. 211ա—215ա [Առաքելի Սիւնեցոյ Յիշատակարան Աստուածաշունչ կոակարանաց]— Տէր Առաքէլ զիտող Սիւնեաց, Ղուրկ և թաբուր յամէն շրնորհաց...

7. 215բ—219բ Տաղ գեղեցիկ ի Տարսունեցի եաշատուր վարդապետի. աւսացեալ է վասն հոգոյ—... ի հազար թվականին. Եւ ի ու վեց թիւ աւելին (1577) Յարմարեցաւ բան կարգին, Մեր կարեացս որչափ և էին:

8. 219բ—220ա Մոլորական [աստեղ] այսպէս իմացեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրչի

220ա—221ա Փա՛ւր... Արդ, գրեցաւ յԱղամգիրքս ձեռամբ անարժան և անիմաստ սուտանուն սարկաւազ Թորոսի, ի թւականիս Հայոց ի ՌՀԲ (1623) ամի, ի խնդրոյ բարեմիտ և հաւատարիմ Ալէքսանոս վարդապետին, որ է դա եախտեաց գաւառէն, որ այժմ Բաբերդ կոչեն, որ ետ գրել ըզսա յիշատակ իւր և ծնողացրն, հարն՝ Պաղոսին, մարն՝ Ելիսարունին, իրիցկնոջն՝ Արզուխանին, մահտեսի Լուսիարունին և իւր եղբարցն՝ Առաքելին և Աւագին, հարեղբարքս՝ Մատուրին և որդոյն՝ Թաղեոսին. ամեն:

Եւ արդ, երես անկեալ աղաչեմ զամենեանդ յիշել ի Տէր զանարժանս, որք հանդիպիր սմա կարդալով կամ արիւնակելով, աղաչեմ յիշել ի Տէր զանարուեստ գրիչս՝ Թորոս սարկաւազս, և ծնողս մեր, որ փոխեալ են առ Քրիստոս, յուսուցիչն իմ՝ տէր Մարութեն, որ փոխեալ է առ Քրիստոս, և այլ ամենայն երախտաւորքն մեր, որ հոգևոր խրատ են տրել մեզ, և ձեր յիշողացդ և մեր յիշեցելոց առ հասարակ ողորմեացի փրկիչն մեր Քրիստոս. ամեն:

Գրեցաւ գաւառս եախտեաց, ի դուն Սուրբ Աստուածած[ն]ին և Սուրբ Կարապետին, յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Պետրոս եպիսկոպոսին և միաբանիցս. ամեն:

Դարձեալ կրկին աղաչեմ յձեզ՝ զհանդիպողդ սմա, անմեղադիր լիբուր խոշորութեան գրիս և սղալանացս, զի կար մեր այս է ի դառն և ի նեղութեան ժամանակիս, որ երերուն և տատանն[ա]լ կան ազգն քրիստոնէից ի ձեռն դատաւորաց և անիրաւ պահանջողաց, որ Ապաղայ փաշան Արզում զապտ արաւ զարով:

Հետագայի

169բ Սարգիսըս Բաբերդացի

|| || || || || || || || || ||  
|| || || || || || || || || ||

Եւ որդի Սուրաա հասըլին:

Եկեալ ի Բիւզանդիա,

Զարինակս այս գրքիլ տրւի,  
 Զի սայ ինձ յիշատակ լինի  
 Ի յանցման յաւո[ւ]րն իմ յետնի:  
 Յետոյ տուաք ի վանք երկու ի դուռն Սրբոյն Գէորգայ,  
 Ով հանէ՛ անի[ժեալ] լինի հոգի և մարմին նորա:  
